ՅՈՎՍԷՓ ԳԵՂԵՑԻԿ

ԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ Ս. ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1849

ՅՈՎՍԷՓԱՅ ԳԻՐԳԵՑԻ

ԶՐՈՑՑԲ

ԸՍՏ ԱՈԱՍՆԹԱՅ ԱՄՈԽՍՆՈՅ

ԻԻՐՈՅ

ՅՈՎՍԷՓԱՅ ԳԵՂԵՑԿԻ

ԶՐՈՅՑՔ

ԸՆԴ ԱՍԱՆԵԹԱՅ ԱՄՈՒՍՆՈՅ ԻՒՐՈՅ

ՅՕՐԻՆԵԱԼ

ՏԵԱՌՆ ԻՍԱՀԱԿԱՅ ՆՈԱՅՐԱԳՈՅՆ

ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՆԿԻՒՐԱՑՒՈՅ

ԵՒ ՄԻԱԲԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ԳՈՐԾԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1849 — ՌՄՂԸ

ՅՈՒՂԵՐՁ

ԱՌ ՄԵԾԱՊԱՏԻՒ ԵՒ ԲԱՐԵՀԱՄԲԱՒ

ԱՂԱՅ ՅՈՎՍԷՓ

ԱՂԱԲԷԿԵԱՆ

Ի ԿԱԼԿԱԹԱ

ԶԱՌԱՋԻԿԱՅ բանից հիւսուած, որ զԳե-ղեցկին Յովսեփայ զհրաշալի նահապետի վարուցն բերկրողաբանէ, 'ի ճահ ուրեմն դատի նուիրել 'ի լոյս յանուն մեծապատիւ Ազնուականիդ. քանզի և ընդ Ձերովդ իսկ կղիմայիւք ծնաւ սա 'ի հան-ճարեղ երկանց մեծավաստակ Տռնս, վասն որոյ՝ և իբր սեպհական ինչ Ձեզ մատուցանի: Ըստ որում և նոյն իսկ հեղինակն հանդերձեալ էր 'ի պատիւ Ձեր արձանացուցանել 'ի տիպ, եթէ չէր օրհասին կանխեալ առ նա տարաժամ: Եւ այսու զհամբաւ իմաստախնդիր Անձինդ ընդ ողջախոհ Անուանակրի Ձերում ձգեսջիք 'ի յաւիտեանս անմահակցեալ փա-ռացի դրուատանօք. նա՝ զիւրոց հրաշափառ ազու-նիցն առաքինութեանց քաղելով ցանկ 'ի սկզբանէ զանմահ յիշատակ, իսկ Դուք զոյգ ընդ նմին և զազգասիրական և զուսումնասիրական ջանիցդ ըն-դունիջիք պսակս զգովեստից յամենայն բանաւոր

չըլթանց ։ Որով և ցուցջիք զՁեր ջերմեռանդն և զքաղցրաբար փոյթ խնամոց առ Սուրբ Գահս, ըստ օրինակի Հօր Ձերոյ բազմավաստակ հոգաբար-ձուի Աթոռոյս. որոյ զհետ շաւղացն պնդեալ և Ձեր որդիական հարազատութեամբ, յոչ ինչ ան-խայէք 'ի քաղցրացուցանել զյիշատակ Նորին Ձե-րովդ լաւակամ և երախտաւոր որդեամբք ։

Արդ՝ ընկալջիք զայն երկասիրութիւն բարե-ջան Անձս և Ձերդ Սիրելւոյ, հաշտ ակամբ հայե-լով 'ի սա. յոր ամենայն բանասէրք Ազգիս վայե-լեալ 'ի Ձեր առատ շնորհս, լիաշուրթն դրուատիս Ձեզ յորդեսցեն, և պատիւ պարծանաց յաւելցի բարեյիշատակ Վաստակաւորիս, և հանօրէն միաբա-նութեան Գահերէց Սուրբ Ուխտիս ։

ՊԱՏՐԻԱՐՔ
Առաքելական Ս. Աթոռոյս Երուսաղէմի
ԿԻՐԱԿՈՍ Արքեպիսկոպոս ։

Ա.Զ.Դ.

Որք զկեանս կեցին աշխարհիս, և լուսաւոր մտօք և արդիւնաշատ հանճարովն փառս անձանց կորզեցին 'ի կենդանութեան իւրեանց, գտան միշտ նախանձելիք յաչս մարդկան. մանաւանդ՝ որոց զմի և զնոյն ժամանակ կենցաղակցեցան, և վկայք նոցին գիտութեանն և բարեկարգ մարդավայելուչ արդեանցն եղեն. Իսկ որք և յետ յաստեացս ելանելոյ՝ նշանս իմն և յիշատակս իւրեանց իմաստութեան և կենցաղօգտակարագոյն արգասեաց թողին յաշխարհիս, յիշատակս ասեմ գրաւոր վաստակոց և բազմաշահ երկանց բեղմնաւոր մտաց, այնպիսիք՝ առաւելագունի իմն տարան յինքեանս պարծանաց և փառաց յաղթանակ. և զամենայն ազգ կանանցածին՝ որք մինչ 'ի սպառիլ յաւիտենից յաշխարհիս կեցցեն, նախանձախնդիրս և գովողս անձանց կացուցին.

Մի է յայսպիսեաց աստի և մերս շնորհընկալ Հ. Իսահակ Ո. վարդապետն, որդի Տէր Գրիգորի երիցու Ընկիւրացւոյ. Ոչ բաւականացեալ սորա կենդանի՝ հոգեբուղխ բանիւն քարոզել զբանն կենաց. և յանկուցիչ՝ պերճախօս և քաղցրողոք լեզուաւն ձգել զամենեցուն զսիրտս և զմիտս 'ի բանս իւր, և բարոյականապէս վարդապետութեամբն կրթել զամենեսին 'ի բարեպաշտութիւն և 'ի համեստ վարս, այլ և անխոնջ և ծայրալիր պարապմամբն իւրով՝ աշխատասիրեաց 'ի նուիրակութեան իւրում 'ի Հնդիկս զառաջիկայս երկասիրութիւն յօգուտ և 'ի շահ Հայաստան մանկտւոյն. Ի սոյն գովանի վաստակոց ոչ միայն խակքն տիօք, այլ և որք կատարեալքն են և չափ հասակաւ, գիտեն անձանց պտուղս գանձել հոգեպարար՝ բարեաց խրատուց. Հարք ուսանին կիրթ տալ զորդեակս իւրեանց 'ի բարեմոյն վարս և յառաքինութիւն. և պաշտել զսուրբ ամուսնութիւն. Որդիք ուսանին պատկառ կալ ակնածութեամբ խրատուց հօրն. և կանայք՝ սիրել զայր իւրեանց իբրև զկէս մարմնոյ, որով և սուրբ պահել

զաւագաստին զխորհուրդ ։ Միով բանիւ՝ ամենայն ոք , եթէ յաւագորերոյն իցէ և եթէ ՚ի կրտսերագունից և յաննշանից , ուսանի սովոր յարգել զեղբայրսիրութի՛ , զարիութիւն ՚ի վիշտս , զհամբերութիւն , զհնազանդութիւն , զանտարբերութիւն ՚ի բարձ աւագութէ ։ և որ մեծն է՝ զողջախոհութիւն , կնիք ամենայն առաքինութեանց՝ որք փայլեցան ՚ի սիրելի որդին սքանչելոյն Յակոբայ ։

Դարձ արարեալ ապա բարեշնորհ Ալուս ՚ի նուիրակութենէ իւրմէ , և հասեալ ՚ի Տիրոնէ քաղաք յԱրաբիա առ կարմիր ծովու՝ ոչ հեռի յԵգիպտոսէ , ժամանեալ ՚ի Սուրբ Աթոռս , կենախուզ մրրիկ անդորրմ Եւրոպեայ տարաժամ կորեալ զկենաց նորին թել , ՚ի 10 մայիսի 1847 , փոխելով զնա յանանց բարիսն , ընդունել զվարձս յոգունց տաժանակիր քրտանց՝ զոր թափեաց ՚ի պաշտաւութիւն տանն Աստուծոյ ։ Վան որոյ արգելաւ զվերջին իւր ձեռն դնել յայս գործ , այլ ևս ինչ յղկել և ՚ի կատարելութիւն ածել յոյժ անվթար՝ որպէս և խորհէրն ։ Աւստի ՀՐԱՄԱՅԵՑԱՒ ինձ նուաստիս սրբագրել զսա , և որչափ մարթ էր ողորկել՝ առանց փոխելոյ զիմաստս բազմաջան հեղինակին , ուր ուրեք եւեթ յաւելեալ և յապաւեալ առ ՚ի պարզութիւն բանիցն ։ Յուսամք զի հաճոյական իմն խորտիկս սեղանաւորեմք ըմբոշխնելեացն քմաց և բանասիրաց Ազգիս ։ Ես և անդատապարտ զմեզ համարիմք եթէ ՚ի հանդուցեալ բարեյիշատակ հեղինակէն և եթէ ՚ի քննաբանից մերոց ։ Իսկ փոխարէն ոչ այլ ինչ խնդրի յուսումնասիրաց , բայց եթէ անմեղադիր կացուցանել զմեզ , և ընդունել զսա ՚ի փառս միոյն Աստուծոյ և ՚ի պարծանս Պերճագահ սրբոյ Ուխտիս , որոյ ՚ի պատիւ գուն եդեալ աշխատաւոր մերս Անահիւս , նուիրէ զառաջինկայս աշխատասիրութիւն իւր ամենասիրելի Ազգիս ։

Սրբագրող Գործոյս
Յ․ Հ․ Թ․ Սահալանեանց
Դասապետ Սրբոյ Աթոռոյս ։

ՅԱՂԱԳՍ ԳԵՂԵՑԿԻ

ԶՐՈՅՑՔ

ԸՆԴ ԱՍԱՆԵԹԱՅ ԱՄՈՒՍՆՈՅ

ԻՒՐՈՅ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ԱՄԵՆԱՄԱՔՈՒՐ է չքնաղ բարք և սրբասուն վարք Գեղեցկին Յովսեփայ՝ յայտնի է որոց զԱստուածաշունչ մատեանս ընթեռնուն. Քանզի հովանաւորութեամբ աջոյ Ամենակալին կարգեցաւ նա յայն պանծալի փառս՝ լինել երկրորդ Փարաւոնի արքային Եգիպտացւոց. Փրկեաց զանհամար բազմութիւն մարդկան ՚ի սովալլուկ նքթութենէ անտի՝ իւրով գերահանճար իմաստութեամբ. զամենեսեան զհեռաւորս և զմերձաւորս կերակրեաց յաւուրսն յայնոսիկ. Եւ իբրեւ ըստ օրինի աշխարհի եմուտ ընդ լծով ամուսնութեան, առեալ ՚ի կնութիւն զԱսանէթ զդուստր Պետափրեայ հռչակաւոր քրմապետին, նախ առաջին՝ գուն գործեաց օրինակաւ անձին իւրոյ տարրացուցանել զա̃ծապաշտութեան զշնորհաբոյս արմատն և զսերմանիս ՚ի սրտի նորա, որով և տալ պաշտել նմա զՃշմարիտն Աստուած երկնի և երկրի, խլելով և արտաքսելով ՚ի մտաց նորա զԵգիպտացւոցն կրօնասիրութեան զաւելորդ և զանպիտան մոլութիւն. Այն զի՝ անհաճոյ իսկ էր և անախորժ Գեղեցկին Յովսեփայ, խոստակցութիւնք

անխմաստք և զրոյցք անհանճարք և անաղէք. յորոց փութալով մեծաւ փափագմամբ զսիրելին իւր զամուսին զերծ կացուցանել, պատուիրեալ էր նմա ընաւ և ոչ հանել 'ի բերանոյ իւրմէ բան անպիտան և անօգուտ, այլ պարապել յիմաստալիսն և զօգտակարացն եւեթ առնուլ բան. Յայսմանէ պարտաւորեալ՝ մանաւանդ զի ամենայօժար հաճութեամբ ընդգրկեալ իմաստնախոյզն Սանեթայ, 'ի հարց առնու յիւրաքանչիւր գիշերի զանցս անցեալս ընդ Յովսեփ այր իւր և ընդ հարս նորին՝ առեալ զթել հարցուածոյն օրինակ զայս.

ԳԻՇԵՐ ԱՌԱՋԻՆ

ԱՍԱՆԷԹ

Աղաչեմ պատմեա ինձ, եթէ ո՞ւր են հայրենիք քո, և ո՞րպէս եղեւ գալուստ քո յԵգիպտոս և մտանել 'ի կապանս բանտի.

ՅՈՎՍԷՓ

Պատմել զհայրենեաց իմոց. ո՛հ, յոյժ դժուարին է. այլ զիա՞րդ հնարաւոր իցէ ինձ խնայել 'ի քէն զայդ. Քանզի՝ եթէ զանց արարից կարճ 'ի կարճոյ վճռելով՝ երկնչիմ, զի ընդդէմ է ամուսնական սիրակալ միաւորութեան, յորում պարտին միասիրտ լինել և սրտակից. գիտել և ճանաչել ո՛չ միայն զցեղ և զտոհմ միմեանց, այլ և զհայրենիս՝ ամենայն

Հարկաւոր պարագայիւք · ապա ո՛չ է արժան գողել և ծածկել ՚ի քէն զայդ · Իսկ եթէ զթել պատմութեանս առից ՚ի ճառ արկանել, անհնարին է լեզուի իմոյ յօդել զբանս · զի հուր բոցակէզ սիրոյ հայրենեաց իմոց՝ այրէ զերիկամունս իմ, և գետք արտասուաց իջեալ յաչաց իմոց՝ ընդմիջեսցեն զբանս իմ... Ո՜հ հայրենիք իմ, քաղցրագոյն հայրենիք... աւա՛ղ, զիա՞րդ տարագրեցայ անտի · որպէս տարանջատեցայ · աղեկիզի սիրտ իմ, քաղին ոգիք իմ. չնչասպառ առնեն զիս հեկեկանք իմ. Ո՜չ վասն այսորիկ առանձնանամ յայն նիշ սենեակ միայնութեան, ուր առաջի ամենատես աչաց Աստուծոյ միայն կարող եմ բանալ զիմ սիրտ վշտահար · եթէ կայլակք արտասուաց ոչ ծորեն յաչաց իմոց, պապակիմ հրատոչոր, տագնապիմ յանհնարին ջերմութենէ սրտիս · ողբալ ողբամ զեղկելի և զդառն բաժանումն իմ, յիշելով զսէր և զգորով ծնողին իմոյ՝ անմխիթար սուգ առեալ լամ. Աւա՛ղ, նորոգեցեր զկսկիծս իմ. Ո՛վ ամենակալ Աստուած, տուր ինձ զօրութիւն, որով կարողացայց վճարել առ ՚ի տեղեկութիւն ամուսնոյդ իմոյ · բայց որպէս, և զիա՞րդ հնարաւոր . . . . Մինչ խօսէրն զայս Յովսէփ, հառաչանք գորովալից սեղմեալ զսիրտն, հատին զթել բանից նորա, և ոչ թողին հեկեկանացն անընդհատ յաջորդութիւնք՝ շարժել զլեզուն ՚ի վէպ պատմութեանն · վասն որոյ սկսաւ լալ բարձր, և արտասուքն թանային զողջախոհ այտս Գեղեցկին ·

ԱՍԱՆԷԹ

Օրէ քեզ այսքան դառնաղէտ ողբ, և կականք չնչարգել հեկեկանաց · ո՛չ ապաքէն ՚ի հնա-

զանդական պարտաւորութենէ քումմէ հարկեցայ 'ի հարց գալ ընդ քեզ, զի յամենայնի պատուիրես հետեւիլ օգտակարաց. և զի՞նչ օգտակարագոյն և վայելուչ ինձ քան զտեղեկութիւն զհայրենեաց տեառնդ իմոյ. և այս զրոյց իցէ՞ ինչ անհանճար և տարադէպ. Արդ՝ ընտրելագոյն ի՞նչ իցէ երկիր ծննդեան քո, քան զայս արգաւանդահող աշխարհ Եգիպտոսի. Յուշի կալ միանգամ և տես, թէ որպէս փառաւոր արար զքեզ արքայն Եգիպտացւոց, զորոյ զանհամեմատ բարիսն յիշելով՝ խորհեա՛ց բարեպէս, զի ազատեաց զքեզ 'ի խաւարայլն բանդէ. ընկալաւ զքեզ այր մի խորհրդատու. փոխեաց զանուն քո 'ի գերագոյն անուն մականդրական, Փրկիչ աշխարհի (1) կոչելով զքեզ. և չի՞ք ոք մեծ և փառաւոր իշխան քան զքեզ. և զղեկ կառաւարութեան համակ թագաւորութեան իւրոյ տուաւ 'ի ձեռս քո. Արդ՝ ո՛ տէր իմ իմաստնախոհ, քննեա միանգամ և տես, թէ ո՛ շնորհեաց քեզ զայս ամենայն բարիս. ոչ ապաքէն Աստուածքն Եգիպտոսի. որոց ոչ ըստ արժանւոյն մատուցանելով քո յարգանս մեծարանաց, ջերանիս 'ի ներքուստ տրտմութեամբ. Աղաչեմ զքեզ թող 'ի բաց զայս օրինակ ողբարկութիւն, և զմտաածեալ զբարերարութիւն երախտաւոր դիցն, փառս մատո նոցա. զոհեա՛ զոհս 'ի պարարտ զուարակաց, ոչ միայն ձիւնափայլ սպիտակս և անարատ հարիւրաւորս, այլ և հազարաւորս և բիւրաւորս ընդ կարմիր պարարակաց. և ուրախութեամբ անցո զկեանս քո, զի մի երբէք զարթիցի սրտմտութիւն դիցն, և շարժեսցեն 'ի վերայ քո 'ի զայրոյթ բարկութեան.

(1) Այս է Մեկնութիւն Եբրայական բառին՝ Փսոմփթոմփանէ.

ՅՈՎԱՍԱՓ

Ո՛հ, առաւել ողբալի են բանք քո․ զի ոչ միայն կրկին տրտմութեան և անմխիթար կոծոյ լինին ինձ առիթ, այլ և ՚ի խոր խոցեալ վիրաւորեն զսիրտ և զերիկամունս իմ․ և չիք ինչ բան քան զայս անմոռագոյն և վնասակար՝ անմեղութեան մարդկային հոգւոյ։ Ո՛չ այնքան վտանգաւորք են ՚ի լայնալիճ և յուժգնապիրկ աղեղանց բո՛ւռն ոստուցեալ նետք, որքան քաղցրամոք այն յորդորմունք ՚ի կռապաշտական զոհագործութիւն․ զի հնար է ՚ի հարուածոց նետից բուժիլ, բայց յոյժ դժուարաւ չասացից անհնարին՝ ՚ի կռապաշտութեան թունիցն թափիլ և ազատիլ անվտանգ։ Յորում միանգամ թակարդեալ անկեալ ուրուք, անյոյս անակնկալ ընթանայ ՚ի կորուստ և ՚ի գլորումն անկանգնելի․ քանզի պղծի տուամբք հեշտախտականաց, և քրմացն բանք փաղաքշականք և համոզակեր՝ գերեալ համբուն զսիրտ և զհոգի նորա, ՚ի խորս խաւարին իջուցանեն։ Ահա այսպէս է իղձն այն անսասանուած մոլորութեան Եգիպտացւոցդ, և կրօնասիրութիւն անուանեալ կռամոլ պաշտօնն․ զորոց իբրև պատմեցերն, վէրս եբաց ՚ի սրտի իմում կարեվէր, թունաւորեալ միանգամայն քաղցրամոք բանիւքդ։ Այլ զի՞նչ․ ոչ կարաց ՚ի խորս ներգործել, որպէս երեքթեւեան նետն այն Հայկայ թափանցեալ շեշտակի ընդ երկաթամած տախտակս լանջաց սկայազօրին Նեբրովթայ, անդէն յերկիր կործանեաց։ Ո՛չ այսպէս և ինձ․ քանզի միտք հաստատեալ յԱստուած ճշմարիտ, պնդագոյն են քան զերկաթ․ անգծելի իբրև զադամանդ, և անվեհեր կան մնան յերեսաց նետիցն և սլաքաց։ Թէպէտեւ տրտմութեամբ նուաղեալ և անզօր երեւեալ, այլ ՚ի նմին զօրանան,

արիական յԱմենակարողէն. և զնոյն ինքն ուժգնութեամբ արձակեալ նետս (1) թռչունս 'ի տուընջեան, անդրէն յետս դարձուցանեն առ 'ի սատակել զսկըզբնահայրն մոլորութեան զնեսար. վասն որոյ վերջին բանիցդ միայն այժմ պատասխանի տալ յօժարիմ.

Օ՜ ինչ ասես ո՛ կենակից իմ. զիա՞րդ հնարաւոր է ինձ՝ անշունչ և անզգայ տարերաց պաշտօն մատուցանել և զոհս նուիրել, որք արարածք են Արարչին. Ո՜չ յիշես զբոցակէզ բորբոք և զանշիջանելի նախանձն Փարաւոնի ընդդէմ Ադադ թագաւորին Սադիամու, որ կամէր ըստ կանխագոյն ժամանակաց՝ զանկախութիւն յանձին բերել, ընդվզելով 'ի հարկացն Փարաւոնի. այլ նա առ 'ի խոնարհել զԱդադ, զօրս անթիւս գումարեաց, և 'ի սահմանակից թագաւորաց անգամ վարձեաց զօրականս քաջամարտիկս, որով ել 'ի վերայ նորա և կործանեաց զեղջիւր նորա՝ սահմանափակ կապարաւ ամփոփելով զիշխանութեան նորա զվիճակ. Արդ՝ եթէ թագաւորք, որք մարդիկ են անցաւորք և մահկանացու, գուն գործեն ընդդէմ իշխանութեան զբարձրավիզ վէսն խոնարհեցուցանել, ո՞րքան ապա 'ի նախանձ շարժիցի ամենակարողն Աստուած ընդդէմ ապերախտութեան մարդկան, որք թողեալ զՃշմարիտն Աստուած, արարածոց և ձեռագործաց պաշտօնատար լինին. Վասն որոյ պատժեալ պատժին արդարապէս 'ի նոյն ինքն Ամենակալէն՝ կանուխ և կամ անագան. Երանի թէ զպատիժ պատուհասի յանցուածոյն իւրեանց՝ յայսմ աշխարհիս միայն կրեալ և վերջանայր.

Կուռք ձեր յերկուս բաժանին. յարարածս շն-

(1) Ոչ երկիցես դու յերկիւղէ գիշերի, և ոչ 'ի նետէ որ թռչի 'ի տուէ. (Սաղմ. Ղ. 6).

չաւորս, և 'ի ձեռագործ արձանս. Թողում յիշել այժմ զլուսաւորս երկնից. Թուի և համար առաջնոցն' անգիտելի է քրմապետաց իսկ ձերոց. զի ամենայն գազանք, սողունք, լողակք Թեփամորթք, և ճճիք պաշտին յԵգիպտացւոց. չիք 'ի նոսա ոք մնացի և խորախորհուրդ որ զհետ լիցի քննել զայս անկարգ և անտեղի պաշտօնատարութիւն. Զի եթէ 'ի մէջ գազանաց, սողնոց, լողակաց, և ճճեաց գտն ոխերիմ ատելութիւնք և դժնդակ Թշնամութիւնք, որով ոչ կարեն իւրաքանչիւր անհատ իւրոյ տեսակին' բարեպէս վարիլ ընդ միմեանս, զորոց անփոյթ առնեմ մանրաքնին դեգերել, քանզի յայտ իսկ է' որոց միտք 'ի խելապատակս կայցէ. Ապա ուր չիք բարութիւն 'ի միջի իւրեանց և առ իրեարս, զիա՞րդ այլոց կարեն մատակարարել զբարիս. յորմէ յայտնապէս երեւի անհնարին կուրութիւն Եգիպտացւոց. Նա՛ զի' ուր գտն բազում Աստուածք, չիք անդ և ոչ մի Աստուած, զի զեղծումն հեռեւեցուցանէ բազմաստուածութիւն գոյութեանն Աստուծոյ. Այլ ամենակալ Աստուած մի է և ընդ ամենայն տեղիս, և չիք վայր ուրեք, ուր ոչ իցէ նա. որոյ խնամք տարածեալ սփռւին գեր 'ի վերոյ քան զճառագայթս արեգական 'ի վերայ արարածոց և մարդկան, աստուածածան առաքինեաց և անբարիշտ անաստուածից. Ապա պարտական են ամենայն մարդիկ' որք բանականութեամբ պերճացեալ են, 'ի վեր քան զամենայն ինչ պաշտօն մատուցանել Ճշմարտին Աստուծոյ. որով ոչ միայն զերծ գտանին յապերախտութենէ, այլ աւուրց յաւուրս լիանան աստուածապարգեւ բարութեամբ.

Իսկ ձեռագործ արձանք, կամ անձեւ անօրինակ և աննման միում յարարածոց կերտեալ, և կամ դիւցազնական սկայից կերպաւորութեամբ են. որոց

ռաջինքն ոչ այնքան գերագոյն պատուով պաշտին յազնուականաց ձերոց․ վասն որոյ զանց զնոքօք արարեալ՝ յառաջեմ յերկրորդսն , յորոց ոմանք նօճաձեւ բարձրութեամբ երկարեալ ; և ոմանք իբրեւ կորիւն կապկաց յերկիր ընդարմացեալ․ ոմն ազազուն և այլ ոմն հաստալիր իրանօք․ և 'ի վերայ այսր ամենայնի՝ ունին զկերպ և զոխս մարդկան ։ Որոց աչքն (1) բաց են և շրջանկատ կերպաւորեալ , սակայն չիք տեսողութեան ձիր և լուսաւորութիւն ։ Ունկն նոցա երբեւի պատրաստական առ լսողութիւն , սակայն անպիտանագոյն են քան զխոռոչս լերանց , որք ընկալեալ զուժգին ձայնարձակութիւնս ; անդրէն դարձուցանեն յետս արձագանգօք ։ Շարք ատամանց յեռեալ մարգարտօրէն ; և վայելչութիւն բերանոյ՝ զխարդ բարուք չափաւորեալ նկարին , այլ անշարժ են և անբացիկ ․ ոչ ճաշակումն , ոչ ծեքումն , և ոչ յօդաւորութիւն խօսից զօրեն երբեք կապել ։ Նոյնպէս են և այլ ամենայն յօդուածք մարմնոյն ․ զի ձեռք նոցա են անշարժուն և ոտք նոցա անգնայուն ․ որոց 'ի դէպ գայ ասել զայն չարամաղթ հայցուած ; թէ այնպէս անզգայ և անշարժ եղիցին որք արարին զնոսա և կերտեցին (2) ։ Աւաղ որոց պաշտեն զպաշտօն սնոտի չաստուածոցս , զի առաւել քան զանբանս անբանագոյնք են , մանաւանդ՝ որք այսպիսի մոլորութեան եղեն առիթ արծարծանաց ։ Արդ՝ ո՞ւր ես հայր իմ Աբրահամ ․ արի՛ հանդիսացիր առ մեզ 'ի յանդիմանել զկռամոլիցն սէր և զինչ , որպէս երբեմն անաչառապէս

(1) Բերան ունին և ոչ խօսին , աչս ունին և ոչ տեսանեն ։ (Սաղմ․ ՃԺԳ․ 13) ։

(2) Նման նոցա եղիցին որք արարին զնոսա ։ (Սաղմ․ ՃԺԳ․ 15) ։

յանդիմանեցեր զՀօր քո զԹարայի զդրօշագործ մոլորութիւն, և զընչաքաղց սէր նորա. Կամ ո՛ ամենակարող Աստուած, տո՛ւր և ինձ զնոյն ճշմարիտ զօրութիւն, զի կարողացայց սերմանել 'ի սիրտ սիրակապ լծակցին իմոյ զաստուածպաշտութեան զսերմն և զգիտութիւն, որով անբասրելի մնացից առաջի ամենատես աչաց քոց.

ԳԻՇԵՐ ԵՐԿՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Օ՜ ինչ ասես ո տէր իմ, Աբրահամ հաւ քո իցէ, որոյ մեծութեանն համբաւ և անզուգական արդարութեանն վէպ՝ ընդ ամենայն տեղիս հռչակ հարկանէ. Աբրահամն՝ զորմէ խօսիդ, նոյն ինքն Աբրահամ իցէ, որ զմիակ զորդին իւր հանդերձեր զոհել 'ի սէր Աստուծոյ իւրոյ. Աղաչեմ պատմեա ինձ նախ զյանդիմանութիւն վասն դրօշագործութեան հօր իւրոյ.

ՅՈՎՍԷՓ

Հաւ էր պանծալին Աբրահամ հօր իմոյ Յակոբայ, ծնեալ 'ի քաղդէական աշխարհի, սերունդ Սեմայ նահապետին և որդի Թարայի. Իսկ սերունդք Սեմայ քաջավարժ էին 'ի գիտութիւն աստեղաբաշխութեան, որպէս և Աբրահամ նախահաւն իմ. այլ հայր նորա Թարայ՝ Թէպէտեւ գիտել գիտէր զայս

ուսումն, բայց վասն ընչաչափ ագահութեան և բազմաշխատ քննութեան զանց արարեալ զայնու, մոլեալ և զակատեալ էր ՚ի գործ դրօշուածոց և կռոցն քանդակեալ։ Այլ Աբրահամ հեռի յայսցանէ կացեալ, փութայր յառաջանալ ՚ի քննութիւն լուսաւորաց. զորս ՚ի զննելն յաւուր միում, մինչ սքանչացեալ հիանայր ընդ գերազանց վայելչութիւն աստեղազարդ կամարի երկնից, երեւեցաւ նմա անդէն երկուց հակառակ առարկայից դիմամարտութիւն. լուսաւորացն ասեմ սքանչելի կարգաւորութիւն և կռապաշտիցն յարգանք առ անզգայ արձանս կերտեալս ՚ի հօրէն իւրմէ։ Քանզի անդստին ՚ի տղայական հասակի տեսանէր զարհեստն արձանաց, զորս է՛ զի ձուլածոյս և է՛ զի կռանահարութեամբ յօրինէր հայրն իւր Թարա, յարծաթոյ կամ յոսկւոյ։ Եւ մինչ պատրաստէր և կերպարանէր, անփոյթ էր զյարգանաց նոցին. որք երբեմն կոխան ոտից լինէին, և յանշուք և յանսուրբ տեղիս դիզեալ մնային. իսկ իբրեւ ՚ի կատար հասանէր յօրինուած նոցին, յարգանօք և շքով մեծարէր պատուէր և նազելի ցուցանէր զայնոսիկ, ահիւ և դողութեամբ մերձենալով առ նոսա։ Եւ որք կամէին գնել ՚ի նոցանէ, մատչէին ամենայն յարգանօք. և որ ինչ միանգամ որոշէր գին արժողութեան, իսկ և իսկ ընդունելի լինէր, համարելով ազդեցութիւն ՚ի դից անտի.

Այսպիսիկ ամենեքեան առարկայք էին խոկման և բաղդատութեան Աբրահամու ընդ միւս զարմանասքանչ լուսաւորս՝ զորս խորհէր ընդ միտս իւր և ասէր. Արդ՝ կուռքն հօր իմոյ՝ զոր յօրինէ և վաճառէ, չունին շողշողումն փայլմանց հանգոյն լուսնի. ոչ գոյ պայծառութիւն, ջերմութիւն և գերազանց ազդեցութիւն որպէս յարեգակն. Թէպէտեւ յարծաթոյ

և յոսկւոյ շքեղին, բայց ոչ համեմատին երկնային լուսաւորաց. և զի՞նչ բաղդատութիւն կայ ընդ անձեռագործ հոյակապ և սքանչելի կամարն երկնային, յորում վայելչական կարգաւորութիւնն լուսատեսիլ աստեղաց՝ անչափ հիացումն պատճառէ. Բայց ո՛ խելագարիցի կոչել և զերկնայինսն՝ Աստուած, որք կանոնաւոր շարժումն ունելով, ակներեւ ցուցանեն եթէ կարգադրեալ իցեն յումե՞քէ ՚ի նոյն, որով անփոփոխ պահեն զսահմանաւոր ընթացս և զշարժմունս. և որ շարժէն զնոսա, հարկ է ինքեան գոլ անշարժ և անփոփոխ. և ահա նա է տիրապէս Աստուած և արարիչ ամենեցուն.

Մինչդեռ Աբրահամ ընդ հարուստ ժամս զայս օրինակ տրամաբանելով խորհէր, լուսաւորեցան միտք իւր գերազանց իմն ներգործութեամբ, որպէս այն թէ երեւակայութիւնն ՚ի ներքուստ տայր ազդումն, և ճշմարտէր զխոկմունս իւր. Եւ որքան հաճ և հաւան լինէր ընդ այս, այնքան առաւել պայծառանայր միտքն և սիրտ. մինչ զի գիտակցութիւն հոգւոյն ազդ առնէր ՚ի ներքուստ անդ խորհրդաբար, եթէ ճշմարիտ են խոկմունք քո, և ուղիղ է դատաստան մտացդ. չէ ՚ի խաբս անկեալ երեւակայութիւն քո, զի ոչ են սոքա Աստուած. այլ պարտ է լինել ումն արարիչ և յ[illegible]նիչ սոցա.

Թուէր իմն Աբրահամու, եթէ ոչ միայն աստեղք և երկնային լուսաւոր մարմինք, այլ և ամենայն արարածք համաձայնէին ինքեան, և հաստատէին զլուսաւոր խոկմունս նորա. և այսու խորհրդով զամենայն գիշեր կրթէր զմիտսն. և որչափ առաւելոյր ՚ի խոկմունս, այնչափ առաւել լուսաւորէր.

Իբրեւ կամք եղեն Թարայի հօր նորա փոխել զերկիր իւր ՚ի կողմն Խառանու, զի յագեսցի ագա-

հութիւն նորա գնովք արծաթոյ դրօշուածոցն՝ զոր վաճառէր, խոկմունք բարեպաշտութեանն Աբրահամու՝ ոչ ինչ փոխեցան անդ, առաւելու ևս ներգործութիւնն այսմ լուսաւորութեան, և եդ ՚ի միտ գտանել զԱրարիչն զայն, հեռացեալ ՚ի քաղդէական երկրէ, ուր սկիզբն եղեւ կռապաշտութեան. Որչափ և քանի երջանկութեան արժանաւոր գտանէր զանձն, ՚ի հասանել ըղձից իւրոց և ՚ի գտանել զԱրարիչն ամ արարածոց. խորհրդածութիւնք իւր միայն՝ անզուգական խնդութեամբ լնոյր զսիրտ իւր. Իսկ ընդ այն՝ արժան վարկաւ փորձ իմն փորձել, զկուռսն՝ զոր յօրինեալ ՚ի յարգի ունէր հայրն, խորտակեալ. որպէս զի դուռն բացցի հետաքրքիր հարցման իւրոյ, և ծանիցի թէ ուստի՞ արդեօք սկիզբն կալաւ կռապաշտութիւնն. Իսկ եղեւ իբրեւ եգիտ ժամ պարապոյ, յորում հայր իւր հեռացեալ էր ՚ի տանէ, առեալ զկուռսն եհար զգետնի և խորտակեաց. և ետես զի էին անզօր և անզգայ. Յետ այնորիկ սկսաւ հարցանել զհայր իւր և ասէ. Հա՛յր, աւա՜ղ զի ձեռակերտ աստուածք քո ոչ կարացին պահել զինքեանս, ուստի և մանրեալ փշրեցան. արդ՝ եթէ զանձինս իւրեանց ոչ կարեն պահել, զիա՞րդ այլոց օգնեսցեն.

ԹԱՐԱՑ. Օ՜ ինչ գործ գործեցեր որդեակ, զիա՞րդ համարձակեցար փշրել զարձանս. մի՞ գուցէ սերունդքն Հայկայ ուսուցին քեզ, որք ուսան ինքեանք ՚ի նահապետէն Նոյէ պաշտել զԱստուած ոմն բնակեալ յերկինս աներեւոյթ, և մնացին յայնմ տեղւոջ անբաժան, ուր էջ տապանն Նոյի. իսկ հսկայքն տիտանեանք մեկնեցան անտի ՚ի տեղիս տեղիս, և արարին իւրեանց քաղաք բնակութեան, և զհաճոյս սրտից իւրեանց պաշտելով՝ հնարեցին զարձանս զայսոսիկ զաստուածս մեր. Այլ դու՝ ըստ որում սերունդ ես

Սեմայ, պարտաւորիս հետեւիլ պաշտաման նախահարց քոց եւ յարգել զկուռս.

ԱԲՐԱՀԱՄ. Ո՛չ ոք եկաց ինձ ուսուցիչ. այլ միտք իմ ՚ի խորոց վկայէ, եթէ չեն նոքա Աստուած, զորս դու շինեալ յառնապատկերս կերպարանես՝ որպէս եւ կամիս. այլ որովհետեւ է Աստուած յերկինս՝ որպէս ասեսդ, նմա երկրպագցուք եւ զնա պաշտեսցուք. Որպէս որդիքն Հայկայ պաշտելով զնոյն Աստուած, զօրաւորք են եւ անուանիք ՚ի մէջ աշխարհի. քաջաբազուկ եղեն քան զմեծն սկայից, զոր յերկիր խաբսխեաց ուժգնակի հարուած նետին Հայկայ, եւ զօրացաւ ՚ի վերայ ամենեցուն. Եւ ուստի՞ էր նմա հզօր զօրութիւնս այս. ոչ ՚ի յաղթանդամ իրանաց, ոչ ՚ի բարձրութենէ հասակին, այլ միայն ՚ի ջերմ պաշտելութենէ զնոյն Ճշմարիտ Աստուած երկնի եւ երկրի. Վասն զի Նոյ ոչ միայն հայր եղեւ երկրորդ սերնդոյս ազգի մարդկան, այլ եւ աստուածպաշտութեամբ իւրով զօրացոյց զորդիս իւր եւ զթոռունս՝ ՚ի նոյն Ճշմարիտ կրօնասիրութիւն. Նոյնպէս եւ մեք պաշտօնատար լիցուք Աստուծոյն այնմիկ երկրպագութեան, եւ առժանասցուք գթութեան եւ ողորմութեան նորին.

ԹԱՐԱՅ. Արդարեւ Աստուածն երկնից՝ Աստուած է ամենեցուն, եւ վրէժխնդիր փառաց իւրոց. պատժէ զանհնազանդս իւր եւ որք ոչ պատկառ կան պաշտաման նորին. որպէս պատժեաց զմարդն առաջին, եւ զկնի անհնազանդութեան նորին՝ կարճեաց ՚ի նմանէ զկեանս իւր, արտաքսեալ զնա ՚ի վեհափայր երկրէն փափկութեան. Վասն որոյ՝ կոյր զկուրայն գնային եւ սերունդք նորա, որք ապախտ արարեալ զմարդկութեն կանոնաւ եւ զօրինօքն բնութեան, զամենայն մեղանչական զգործսն կատարեցին, անձնատուր լեալ յուլիկ եւ ՚ի կեր եւ ՚ի գործս աղտեղիս խառն ընդ ամենայն

հասակի և սեռի. Ընդ որս բարկացեալ սրտմտութիւնն Աստուծոյ, ընաջինջ կորոյս զամենեսին ջրհեղեղաւ, բաց ՚ի Նոյէ և յորդւոց նորա, զորս տապանաւն ապրեցոյց, վասն չխառնակելոյն նոցա ընդ նոսա. Յետ այնորիկ ՚ի սերնդոցն Նոյի բազմացան մարդիկ, և զահ և զերկիւղ ջրհեղեղին յիշատակեալ, բուռն հարին կանգնել զաշտարակ բարձրաբերձ և յաւիտենական ՚ի դաշտին Սենաարայ, զի եթէ որդիք իւրեանց պատուիրանազանցութեամբ յանցաւոր գտանիցին, ՚ի նոյն աշտարակ ապաւինեալ անձնապուր գնայցեն, և անուանք իւրեանց մնասցեն անջնջենաւորապէս. Իսկ Աստուած դարձեալ պատուհասակոծ արար զայնոսիկ որք զաշտարակն բարձրացուցանէին. զի եհան հողմն սաստիկ՝ որ կործանեաց, հիմն ՚ի վեր արար զշինութիւնն, ցրուեաց զարսն, և խառնակեաց զլեզու նոցա՝ յազգս ազգս բաժանեալ.

ԱԲՐԱՀԱՄ. Հա՛յր, ընդէ՞ր ապա հակառակ կամացն Աստուծոյ երկնից գործեմք, յուզեալ զցասումն բարկութեան նորա ՚ի վերայ մեր. քանզի վրէժխնդիր է Աստուած, ապա պարտ է մարդոյ հնազանդիլ նմա. որ զհնազանդեալսն փրկէ, և պահէ յամենայն վտանգից, որպէս զՆոյ և զտունն նորա. և պատիժ խառնակութեան լեզուին՝ ոչ եղեւ ՚ի վերայ նոցա, զի խօսին զլեզու զառաջին. Նաև մեզ, զի պատժակից լեալ զրկեցաք յաստուածապարգեւ լեզուէն և ՚ի բարբառոյ նախաստեղծ մարդոյն. Ի սոյն յայս շնորհ սեփականն ադամախօս բարբառոյն՝ վայելեն միայն որդիքն Հայկայ ՚ի սերնդոցն Յաբեթի. Արդ՝ հա՛յր իմ, թող զայս արհեստ արձանագործութեան քո, և ըստ պատուիրանացն Աստուծոյն երկնից՝ հողագործութեան հետեւեսցուք, և զմիտս մեր ուղղեսցուք առ նա, որ քննելով զսիրտս և զգործս մեր՝ հաղորդս առնէ

զմեզ բարութեան իւրոյ, և շնորհէ արդասիս պտղոց անդոց մերոց, և միանգամայն հեռի լինիմք 'ի պատժական ցաւոց այտի.

ԹԱՐԱՅ. Ո՜ հա՞րդ կարելի է ինձ թողուլ զգործ իմ, որոց շահաւէտութիւնք՝ առաւել են աստ քան յերկրին Քաղդեացւոց. Քանզի որպէս տեսանես, զիա՞րդ ջերմ են բնակիչք Խառանու 'ի գնել զկուռս. վասն որոյ՝ անհնարին է ինձ թողուլ զայս գործ.

ԱԲՐԱՀԱՄ. Որովհետև հակառակ են գործք քո ճշմարտին Աստուծոյ, արժան է իսպառ թողուլ լքանել զայն, և հեռանալ յայնպիսի մեղանչմանց: Քանզի Աստուածն այն պարգևեաց մեզ բաւական պարէն պիտոյից, որով կարեմք քան զայժմուս առաւելուլ 'ի պէտս կենաց: Այլ արդ գործ քո՝ հիմն և արմատ է մոլորութեան, զոր աղաչեմ հայր՝ 'ի բաց թողուլ զայն.

ԹԱՐԱՅ. Որդեակ, այս էր հետաքրքրութեան քո վախճան. կամիս զիս զրկել 'ի փառաց և յերջանիկ վիճակէ իմմէ, յորում կեամք անդորր, և առանց մեծի աշխատութեան գտանեմք քան զամենեսեան առաւել ճոխութիւն ընչից և ապրանաց, զորս անհնարին է մեզ խնդրել յերկրագործութեան և 'ի հովուութեան: Վասն որոյ յօժարիմ յաւէտ կալ և կերտել զկուռս՝ թէպէտև ոչ հաւատոս ընծայեալ նոցա.

ԱԲՐԱՀԱՄ. Արդ՝ եթէ ոչ հաւատաս, է՞ր ոչ թողուս զգարշելիդ. ոչ ապաքէն վրէժխնդիր է Աստուածն երկնից՝ փառաց և փառաւորութեան անուան իւրոյ. Դու զչնչին կուռսդ՝ անարգ և նիւթական, տաս փառաւորել մարդկան, վասն որոյ պատիժք նորա հանապազ զմեօք յաճախեն. Այս ինքն ետ մարդկան արհամարհել զձեռագործս քո. քանզի յերկրին Քաղդեացւոց բազմացան քանդակագործք դից, և անկան վաճառք քո 'ի գնոյ. իսկ դու ոչ զգաստացար

այսու, այլ առաւել բորբոքեցաւ 'ի քեզ ախտ արծաթսիրութեան և ագահութեան. Յետ այնորիկ յաւել խրատել զքեզ այլով իմն պատուհասիւ, վաղամեռիկ թառամեցեալ մանկութիւն Առանայ եղբօր իմոյ կրտսերոյ. Ապա պարտ է զգաստութիւն յանձին բերել, զի մի մեծագոյն ևս պատժովք տանջիցիմք. Աճապարեսցուք ընդառաջ նորա յերկրպագութիւն. դարձցուք առ բարեխնամ Արարիչն, որ ամենայն բարութեամբ լցուցանէ զարարածս իւր, յորմէ տկարանայ և ոչ ինչ, և ակնարկութեան հրամանաց նորա անսան ամենայն ծագք աշխարհի. Ո՞չ նա հողմով բռնութեան ցրուեաց զմեծագործ շինուած հսկայիցն ամբարտաւանութեան. ո՞չ նա ջրահեղձ ջրակործոյս զրաւեաց զանօրէնսն. արդ եթէ հողմն և ջուր և ամենայն արարածք հնազանդին ակնարկութե̄ նորա, զիա՞րդ դու կարիցես ազատիլ և փրկիլ 'ի ձեռաց նորա: Ո՛ի միայն հնար փրկութեան մերոյ և մեծագոյն ճոխութեան՝ այս է, հեռանալ 'ի գործոյդ, և ուսուցանել զմարդիկ՝ եթէ գոյ ճշմարիտ Աստուած երկնի և երկրի. և նմա միայն պաշտօն մատուցանել.

Հայեաց յամենայն արարածս, որք անլռելի ձայնիւ քարոզեն զգոյութիւն Աստուծոյն ճշմարտի. Տես զիա՞րդ գեղեցիկ կարգաւ լուսաւորէ արեգակն և ջերմացուցանէ զաշխարհս. ակն 'ի վեր ամբարձ, և ուշի ուշով զննեա զկամարս աստեղաց և լուսնի, որք 'ի փաղփիւն պայծառութեան իւրեանց՝ անբարբառ ձայնիւ քարոզեն միշտ զԱրարչին մերոյ՝ զգերափայլ լուսոյն, և զգեղեցկութենէ նորին: Օ՜ն ապաշխարեսցուք, և նմա մատուսցուք երկրպագութիւն, որ իւրով անբաւ զօրութեամբ և իմաստութեամբ գիտէ տալ մեզ զպէտս կարեաց մերոց. Եթէ ոչ կամիս բարձրացուցանել զգլուխ քո յերկինս 'ի վեր, հայեաց

ապաքէն 'ի գեղածաղիկ խոտս , որք առանց մարդկային դարմանոց՝ որպէս զարդարուն գործեն զերեսս դաշտաց և լերանց , որոց գեղեցկութիւն զաչս մեր պարարեալ զուարճացուցանէ , և ամենաբոյր հոտ անուշութեանն ինքնին գոչէ և ազդ առնէ մեզ , զի թէ և մեք զգործ մարդկութեան արժանապէս յարդարեսցուք , ծաղկիմք ըստ նմանութեան նոցա և հոտ անոյշ բուրեմք առաջի մարդկան .

Գործ մարդոյ է աշխատիլ և պարապիլ 'ի հողագործութիւն կամ 'ի հովուութիւն , և կամ առանց ինչ խաբէութեան հետևելի արհեստից՝ որք օգտակարագոյնք են մարդկան և անմեղ , որով հասանի մեզ օրհնութիւն և գթութիւնն Աստուծոյ . Ապա թէ ոչ ընդունայն է ասել քո , թէ ոչ հաւատամ կռոցն՝ զորս չինես . Արդ եթէ ոչ հաւատաս , ընդէ՞ր յորինես . Եթէ հաւատաս թէ է Ճշմարիտ Աստուած , վասն ո՞յր ոչ համաձայն առնես զգործ քո ընդ հաւատոյդ . զի որո՞վ կարելի իցէ հաւատոյս լինել հաստատուն և օրինաւոր , որովհետև գործովք քո հեռի ես յոյժ 'ի նմանէ . Ապաքէն եթէ ոչ գիտէիր թէ գոյ Ճշմարիտ Աստուած , չէր այնքան մեղանք . այլ ըստ որում մարդիկ բանականութեամբ զարդարեալ են , և գիտեն որոշել զչարն և զբարին , զանազանել զանպիտանն 'ի պիտանւոյն , պարտին հետևիլ Ճշմարիտ աստուածգիտութեան . Մանաւանդ զի՝ իւրաքանչիւր ոք յիւրմէ անձնէ կարող է գուշակել զգոյութիւն Աստուծոյն Ճշմարտի , 'ի քնին առեալ զամենայն անձին իւրոյ զզօրութիւն , և գտանել 'ի նմանէ զգերազանցութիւն քան զանբան կենդանիս և քան զանզգայ արարածս . Նա յորժամ տացէ ոք զանձն յայսպիսի լուսաւոր խորհուրդս , Արարիչն ամենախնամ ոչ խընայէ ծագել ընդ միտս նորա զլոյս գիտութ̃ն իւրոյ .

Իսկ որ կամաւ հրաժեշտ տայցեն ’ի պաշտել զգերագոյն Ճշմարտութիւն նորա, հարկաւ պատժեսցին. Արդ՝ եթէ թողուցուս զգործ քո զայդ, բարւոք է. ապա եթէ ’ի նմին յամառեալ կացցես մնասցես անազգական բանիւդ քով, ես հեռացեալ մեկնեցայց ’ի քէն, որով և առաւել մերձեցայց առ արեգակն Ճշմարտութեան և լուսաւորեցայց.

ԳԻՇԵՐ ԵՐՐՈՐԴ.

ԹԱՐԱՑ. Ո՛հ որդեակ, ո՞ խաբեաց զքեզ. և զիա՞րդ հնար իցէ որդւոյ հեռանալ ’ի հօրէն. միթէ ընդ մա՞հն իմ խնդրիցես, և օրինակ նո՛ր ընծայել աշխարհի. զի ամենայն որդի պարտի հնազանդիլ հօրն, և մնալ առ նմա մինչեւ ցմահ, և ձեռամբ իւրով ամփոփել զմարմին նորա ’ի քնարան շիրմի. Իսկ դու կենդանւոյն կամիցիս իջուցանել զալիս հօր քո տրտմութեամբ ’ի դժոխս՝ օտարանալով քո յինէն.

ԱԲՐԱՀԱՄ. Արդ՝ ես ոչ հեռանամ առ ’ի տրտմեցուցանել զքեզ, և ո՛չ նոր օրինակ տալ աշխարհի. քանզի դու ինքն օրինակ եղեր մարդկան՝ ջերմ հետեւելով ’ի կերտել դրօշուածս դից. Ագահութիւն որ ’ի քեզ՝ ոչ կամի մեկուսանալ ’ի չար և յայպանելի գործոյդ. Ո՛հ, զիա՞րդ դժուարին իցէ, որում դիտացեալ զմեղանչականութիւն գնացիցն իւրոց և ընդմոլորութիւնն, ոչ կամիցի հեռանալ անտի, և ապաշաւանօք սրբել զխիղճ մտաց իւրոց. Ո՛հ ունակութիւն, չի՛ք արդարեւ քան զքեզ զօրաւոր՝ եթէ ’ի բարիս և եթէ ’ի չարիս՝ ժամանակին հնութեամբն նպաստաւորեալ, մանաւանդ եթէ և ընչասիրութեանն ախտ քեզ ընկերակցիցի, որով ոչ տեսանէ մարդ զօգուտն իւր,

և ոչ 'ի բանի ունի զպատիժ պատուհասին՝ զոր կրէ մահուամբ սիրելւոյն իւրոյ. Մանաւանդ ագահութիւնն 'ի սէր երկրաւորաց՝ մթագնէ զլոյս մտացն և խաւարաւ պաշարէ. զի եթէ որդիք պարտին հնազանդիլ հօր իւրեանց, որպէս օրէնք են Ճշմարիտ, որչափ առաւել օրէն իցէ և պարտք մարդոյ հնազանդել ամենակալին Աստուծոյ, և ամենաբարի կամացն ընդդէմ ոչ ձեռնամուխ լինել 'ի հակառակ գործս և 'ի մեղանչական.

Արդ՝ եթէ որք հակառակին՝ պատժին, իսկ որ ուրանայ զնա, քանի՞ նախատական տանջանօք պատուհասակոծ դատիցի. Քանզի միապէս պատժին՝ որ ուրանայ զնա, կամ գիտէ և հաւատայ, և գործով հեռանայ 'ի նմանէ. Ո՛հ, երանելի ես էր եթէ ոչ գիտէիր, կամ ոչ հաւատայիր նմա. վասն զի անպիտան և անօգուտ են հաւատք, եթէ գործքն ոչ վկայիցեն այնմ. Արդ զայս ամենայն ոչ ինչ զմտաւ ածելով քո, տակաւին հնազանդութիւն յինէն պահանջես. կարի իսկ քաջ այո՝ հնազանդ եմ մահու չափ. և յամենայնի փոյթ եմ չտալ ինչ քեզ ցաւ և տրտմութիւն. Նաքովր եղբայր իմ և ես՝ արդար վաստակօք մերովք հոգամք զհայթայթանս պիտոյից տանն. Հանգիր դու 'ի գործոցդ, և անձն քո լցցի ամենայն բարութեամբք. միայն այս գործ մեղանչական հեռի եղիցի 'ի բնակութենէս մերմէ. և փառաւորեսցուք զՃշմարիտն Աստուած յամենայն 'ի կեանս մեր. Ոչ ապաքէն 'ի նախատինս եղաք առաջի մարդկան, և ծածկեցան երեսք մեր ամօթով. զի ցորչափ գործք անաստուածութեան քո ընդ մակարդաւ մերով յամեսցէ, ոչ ծնցի կին իմ. և չիցէ՞ այս և քեզ նախատինք, զի զրկեաց զքեզ Աստուած 'ի թոռանէ, և զիս եթող անզաւակացեալ.

ԹԱՐԱՅ. Ո՛ն որդեակ, մի՛ ստիպեր զիս թողուլ զարդիւնաւոր զայս շահավաճառ. Զի եթէ կամք իցեն ձեզ ոչ լինել ինձ գործակից յարուեստիս, և պահել զնոյն յետ իմոյ վախճանի, ես յամենայն 'ի կեանս իմ՝ դիզեցից ձեզ արդիւնս սատի, յոր և անաշխատ վայելեսջիք զկնի վախճանի կենաց իմոց, և մի՛ ընաւ բաժանեսջիք յինէն.

ԱԲՐԱՀԱՄ. Տեսանե՞ս ո՛ հայր իմ, քանի՜ տարադէպս և անճահս բարբառիս, և անխմաստ ձեռնարկութիւնս յօդեալ՝ նկրտիս հաստատել զսին խոկմունս քո. Զի՞նչ են արդիւնք հարց՝ առ որդիսն թողեալ. Աշխարհային մեծութիւնք և հարստութիւնք՝ զոր դիզեալ աղխաղխիցէ հայր վասն որդւոց իւրոց, անպիտան՝ տի՛նա և վնասակար գանձք են. զի որովհետև անաշխատ և անվիշտ հասանէ նոցա գտանել զայնոսիկ, փութով փութանակի առեալ վատնեն 'ի զեղխութիւնս, և շռայլութեամբ իւրեանց չար օրինակ լինին աշխարհի. Թողումք 'ի մէջ բերել զանհամար առիթս մոլութեանց, յորս ձեռնամուխ անձնատուր լինին 'ի գործել. յայսմանէ յաճախեն թիւք անառակաց, արբեցողաց, իգացելոց և այլոց եղեռնագործ ապիրատութեանց. Նա և փարթամութիւնք և ինչք՝ զորս թողու հայր, հնարք գողոց և ընաւորաց քաջ գիտեն խլել և յափշտակել զայնս, և 'ի յետին վիճակ թշուառութեան տագնապեցուցանել. Թող զբազմադիմի պատահմունս ժամանակաց, Վասն որոյ այնպիսիքն 'ի հարց՝ որ միայն փութան երկրաւոր ընչիւք զորդիսն ճոխացուցանել՝ առանց կրթութեան և աստուածպաշտութեան, չեն արժանի կոչելոյ հայր, այլ՝ այր բորբոքիչ մոլութեան և կամ սայր սուսերի որդեկոտոր սպանութեան.

Իսկ ճշմարիտ և բարեխնամ հայր՝ անդստին 'ի տիս

մանկութեան խլէ քանզի ընջովլին ’ի սրտէ նոցա զառիթս նախանձու և զագահութիւնն ընչաքաղց. կրթէ զնոսա ճշմարիտ աստուածգիտութեամբ, և զերկիւղն Աստուծոյ տնկէ ’ի սիրտս նոցա. Հեռացուցանէ ըզնոսա յաւթէ մեղաց. հաճելի ցուցանէ նոցա զառաքինական բարեմասնութիւնս. ուսուցանէ նոցա զբաւականութիւն, և սիրտ գոհ՝ լինել թագաւոր աշխարհիս, և յամենայնի գոհանալ զԱստուծոյ. Տայ հետեւիլ արդար վաստակոց և շահու, կարճել զձեռն յանիրաւէն, և յամենայնի պատուիրէ փոյթ յանձին ունել՝ լինել օրինակ բարի և հայելի անստգիւտ վարուց առ ամենայն մարդիկ. որով աջն ամենաբաւական էութեանն Աստուծոյ հովանաւորեալ նոցա՝ աւուրց յաւուրս ճոխանան և բազմանան որդւովք և թոռամբք. Ահա այս է ճշմարիտ հարստութիւն, և գանձ անկողոպտելի. քանզի մեծագոյն շահավաճառութիւն՝ աստուածպաշտութիւնն է,

Արդարեւ պարտին որդիք հնազանդութեամբ բերել առ հայր իւրեանց, և ոչ օտարանալ ’ի հօրէ՝ ցորչափ ժամանակս կենդանի իցէ նա, այլ վայելել ընդ հովանաւորութեամբ խնամոցն զբարիս՝ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ ամենայն հպատակութեամբ. Իսկ եթէ հայր՝ ստգիւտ յանձին կրիցէ, և ’ի գործս մեղանչական անխիղճ անխնայ թաթաւիցի, չէ պարտ որդւոց զնոյն նմանութիւն հարց յինքեանս կերպարանել, և զհետ անօրէնութեան շաւղաց նոցին ընթանալ. Որպէս Այսենն եղբայրազրաւ՝ հեղինակ եկաց մարդասպանութեան, որ է գործ ատելի Աստուծոյ և մարդկան. այլ որդիք նորա ոչ հետեւեցան այնմիկ. զի չարութիւնն ինքնին գարշահոտ բուրէ այնոցիկ՝ որք չիցեն հակամիտեալ ինքեանք ’ի նոյն. Արդ՝ եթէ եղբայրասպանութիւն Այսենի կամ մարդասպանու-

թիւնն չար է, որ և է ճշմարտապէս, ապա ո՛րչափ առաւել չիցէ չար և արծարծումն կռապաշտութեան. զի որ կռապաշտն է՝ հեռացեալ է յԱստուծոյ. և որ հեռանայ յԱստուծոյ, տիրէ նմա թշուառութիւն. իսկ որ թշուառն է, եղկելի է քան զամենայն մարդ.

Տես ապա ո՛վ հայր իմ, քանի՛ չարիք յառաջանան 'ի շահավաճառ արուեստէ քումմէ, որով եղկելիս և ապերջանիկս յարդարես զմարդիկ, հեռացուցանելով զնոսա 'ի ճշմարիտ Աստուծոյն, և զքոյ ձեռագործ տաս նոցա 'ի պաշտել. Թէպէտեւ թելադրութեամբ և սադրանօք բանսարկուին հնարեցաւ չարութիւնս 'ի ձեռն ամբարտաւանին Նեբրովթայ, իսկ որ առաւել տարածութեան նորա սատար լինին, անիծապարտք են. Զի բնութիւնն ինքնին ուսուցանէ ամենեցուն՝ անհետ գլխովին 'ի միջոյ առնել զգարշելի ժահահոտութիւն. և զի՞նչ քան զկռապաշտութիւնն ժահահոտութիւն խոհերական կայցէ յաշխարհի, զոր դու առաւելապէս ծաւալեալ հրապարակես, 'ի սէր անիրաւ շահու մոլեալ. Աստի եթէ զհեղինակ նորին արժան է անիծանել, ապա քանի՛ առաւել և զոր բազմացոյցն՝ ընդ անիծիւք գրաւիցի. դուն ինքն մտախոհ լեր, և սրբեա զոտուն մեր յանիծիցս աստի.

ԹԱՐԱՅ. Ո՞ր որդեակ, մի՛ այսչափ խստիւ վարեաջիր ընդ իս. դու միայնդ առանձին կամիցիս աստուածապաշտ լինել, և կամակատար Աստուծոյն ճշմարտի. ո՞չ ահա արդ ամենայն մարդիկ զնոյն առնեն՝ զոր և մեքս. և փոյթ մեծ ունին զդից, և հաճելի են գործք ձեռաց մերոց. ապա բարւոք է մեզ հետեւիլ պաշտամանս. զի ոչ եթէ 'ի մէնջ ինչ սկիզբն կալաւ այս, այլ զոր տեսաքս 'ի հարց մերոց, զնոյն և վարիմք.

ԱԲՐԱՀԱՄ. Յոյժ տգիտաբար են բանքդ, և միանգամայն ընդդէմ բնութեան մարդկան, որ ճոխացեալ

բանիւ և անձնիշխանութեամբ՝ պարտի մտօք և ընտրողութեամբ քննել և կշռել զամենայն, և ոչ իբրեւ զանբան անասունս ազդման բնութեանն հետեւիլ։ Քանզի քննել, տեղեկանալ, խորհել, և ըստ այնմ տրամաբանել և դատել, գործ է մարդոյ. իսկ կոյր-ջկուրայն զկնի բնական ազդմանն ընթանալ, անմտաց է և կուրացելոց։ Արդ՝ յետ ճանաչելոյ զվնասակարն և զանպիտան գոլ իրին, և տակաւին 'ի նոյն գործ յաճախել կամ առնել, ոչ է մարդոյ, և ոչ իսկ անասնոյ. զի և անասունք և անբան կենդանիք՝ յորժամ զգան ինչ յուստեքէ վնաս, անդէն յետս քաշին անտի։ Ապա վատթարագոյն ևս քան զանբա՞նս լինիցիմք, գիտելով չափ զվնասակարն, տակաւին 'ի նոյն կամակար յամառիլ։

Այս ապաքէն բարւոք համարեցաւ ամենեցուն՝ օրէնքն այն, զոր հաստատեաց քաջն Հայկ. քանզի՝ և քաղցր է ինձ արդարեւ յամենայն 'ի բանս իմ՝ զանուն դիւցազնոյս արձանացուցանել 'ի մէջ յարացոյց 'ի հաստատութիւն. Յորժամ հարկ եղեւ 'ի մարտ մտանել ընդ Բելայ, ոչ ինչ խնայեաց յանձն իւր և յորդւոցն իւրոց սիրելեաց, դիմագրաւ լինել յամենայն վտանգս՝ զմահ 'ի բուին եդեալ, որով ուսոյց եթէ հարկ է վասն հայրենեաց մեռանել, զոր և ամենայն ոք առ անստելի ճշմարտութիւն ունին. Արդ՝ եթէ օրէնք իցեն առ 'ի պաշտպանութիւն հայրենեաց զմահ սիրով յանձն առնուլ, ապա քանի ևս առաւել պարտաւոր է մարդ՝ քան զամենեսին 'ի վեր սիրել զԱստուածն բարերար, զարարիչն երկնի և երկրի, որոյ գործք բարերարութեան անբաւ են յամենայն վայրկենի և յամենայն տեղիս. զի նա արար զամենայն, և չիք այլ Աստուած բաց 'ի նմանէ, որում պարտին մարդիկ երկրպագութիւն մատուցանել և փառաւորել,

հեռանալով յամենայն գործոց մեղաց. Եւ եթէ հարկն պահանջիցէ՝ մահու չափ ջանել վասն նորա և ոչ զկեանս նախադասել սիրոյ նորա, այլ արեամբն վկայել զփորձ աստուածպաշտութեանն հանդիսին.

Իսկ արդ կռապաշտութեանն անուն թէպէտեւ մի է, սակայն գործքն 'ի բազում տարածեալ՝ բազմադիմի են տեսակաւ. Կռապաշտութիւն է հպարտութիւնն. զի որ հպարտն է՝ զկամս իւր պաշտէ, և առ անպիտանս ունի զայլ մարդիկ, որք են արարածք ձեռինն Աստուծոյ. վասն որոյ որ զարարածսն արհամարհէ, արհամարհէ և զարարիչն, որ է չար քան ըզկռապաշտութիւնն. Կռապաշտութիւն է պաշտօն մատուցանել ձեռագործաց, որոց վրէժխնդիր ինքն իսկ Աստուած է. զի զբանական միտս՝ զոր պարգևեաց մարդկան, ոչ գիտացին արժանապէս 'ի գործ դնել, յարարածոց անտի զարարիչն գուշակեալ. որք եթէ քննէին զկուռս, քաջ իսկ ճանաչէին զանպիտանութիւն նոցա. Կռապաշտութիւն է ագահութիւնն. զի որ ընչասիրութեան ախտիւն զգածեալ է և տիրեալ առ 'ի նմանէ, գերի է ընչից իւրոց. առ որում առաւել են ընչիցն յարգ՝ քան զամենայն փառք. Ի սկզբանէ թէպէտեւ առ բաւականութեան անձինն ցուցանէ զինքն հետամուտ լեալ հարստութեան և ընչից, այլ 'ի բազմանալ նոցին միանգամ, մոռանայ զբաւականութիւն և զչափ և ցանկայ անյագ կուտել կուտակել զգանձս. Երանի թէ 'ի գիտել իւր զմեծութիւնս փարթամութեանց՝ ազատ լինէր անձն նորա. Քանզի ընչասիրութեանն ախտ՝ նախ զսիրտն գրաւէ և բանտարկէ, ապա զինչս. և ուր սիրտն է՝ անդ է և միտք և խորհուրդք իւր. Ապա յիրաւի ոչ կարէ ընչաքաղցն բաժանիլ յընչիցն. զի ոչ եթէ ինքն ինչ ունի զհարստութիւնսն 'ի բուռն, այլ հարստութիւնք

կալեալ և կապեալ ունին զմիտս նորա յանլուծանելի կապանս, որպէս և գործք քո յանդիման կացուցանեն. Զի ագահութիւնն կաշկանդեալ զքեզ` ոչ թողու զքեզ 'ի բաց կալ յարհեստէդ, որ ատելին է յաչս Աստուծոյ. Վասն որոյ` որդիական համարձակութբ աղաչեմ զքեզ` հրաժեշտ տալ անտի, և մի ինչ հոգալ զմարմնաւոր պիտոյից, այլ կերակրեսցէ զմեզ Աստուածն այն Ճշմարիտ. Ես և եղբօրորդի իմ Պօղոս քրտամբք և աշխատութեամբ հայթայթեսցուք զաւուրն պարէն, և 'ի բերոց երկրի և խաշանց մերոց լցցուք զտուն մեր. Հանգիր դու 'ի գործոյդ, մանաւանդ խլեա և 'ի սրտէ քումմէ զախտ ընչասիրութեան, և զղջացիր ընդ անօրէն գործսդ` որով բազմաց լինիս պատճառ յաւիտենական կորստեան, և զսրտմտութիւն բարկութեան Աստուծոյ շարժես 'ի վերայ մեր.

ԹԱՐԱՅ. Դու և Պօղոս միաբանեալ հակառակ կայք իմոյ շահաբեր արուեստիս. Որոշեցէք զտարեկան շահ ձեր 'ի գլուխ տարւոյն և բաժանեցայք յինէն. զի դուք երկոքեանքդ 'ի միասին, և ես և որդին իմ Նաքովր 'ի միասին աշխատեսցուք.

Տեսեալ Աբրահամու եթէ ոչ կամի հայր իւր հրաժարել յունակացեալ մոլութենէն իւրմէ, որում ոչ աղաչանք պաղատանաց, և ոչ խրատութիւնք բանից ճշմարտութեան ազդեն նմա ինչ, եդ 'ի մտի ելանել և մեկնել անտի 'ի պատճառս հովուութեան և երկրագործութեան. Յորում ժամանակի առաւել հեշտին եղեւ նմա. զի զամենայն գիշեր ստէպ ստէպ քըննէր զերկնակամարն աստեղաց, և արտասուօք խնդրէր յԱստուծոյ` յայտնել ինքեան զկամս հաճութեան իւրոյ, որպէս զի արժանապէս ծառայեսցէ նմա, և հետեւելով կամաց նորին` օրինակ լիցի ամենեցուն, հեռանալ իսպառ 'ի մոլեկան ախտից կռապաշտութենէ.

Իբրեւ յայս խորհուրդ հաստատեցաւ Աբրահամ, յորում նրբանկատ քննութեամբ կանխէր յամենայնի և առաւել ջերմանայր, յաւուր միում՝ մինչդեռ ՚ի բազում տքնութենէ ծանրացեալ արտեւանաց նիրհէր զքուն քաղցրութեան, և ահա լուէ ՚ի խորոց սըրտին ձայն իմն ազդու՝ զի ասէր. Ճշմարիտ են բանք խորհրդոյդ, և հաճոյ է սէր քո որ առ իս. Արդ եթէ կամիս գտանել զիս, ել ՚ի տանէ հօր քո, զի պըղծեալ է պաշտամամբն դիւց. եւ յերկրէ Խառանու, յորում աղտեղի պաշտօն կռոցն կատարելով՝ ապականեցաւ. եւ յազգէ քումմէ՝ յորդւոցն Սեմայ, որք թէպէտ իմաստութեամբ զարդացան ՚ի սկզբան և լուսով գիտութեամբն գտակ եղեն աստեղաբաշխութե̄, բայց ո՛չ որպէս հարկն էր՝ փութացան կանխել ՚ի պաշտօն և ՚ի ծառայութիւն իմ, այլ կամակար մոլութեամբ ստամբակեալ յինէն՝ հնարեցին զբազմաստուածութի̄. Արդ՝ մինչչեւ ելանիցես ՚ի միջոյ ամբարշտութեանցդ՝ ոչ կարես գտանել զիս. զի գիտեմ զանձն քո ծարաւի գոլ արդարութեան՝ որ է փառք անուան իմոյ, վասն որոյ ուղղութեամբ խրատեցեր զհայր քո զմոլորեալն ՚ի Ճշմարտութեան շաւղաց.

Տեսանեմ ո՛ կենակից իմ, զիա՛րդ աստուածապաշտն զօգնութիւն գտանէ յԱստուծոյ, և իբր զի արդարապէս յանդիմանէ զհօրն ընչաքաղցութիւն. Արդ՝ պարտ է և մեզ հետեւիլ նմա ՚ի շաւիղս Ճշմարիտ աստուածպաշտութեան, որով յամենայնի անդորր կեանս գտանեմք.

ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Որպէս եթող Աբրահամ զհայր իւր և զտուն հօր իւրոյ. և ուր կամեցաւ գնալ առ ՚ի գտանել զԱստուած, ուրում փափագէր անձն իւր.

ՅՈՎՍԷՓ

Եւ նա հեռանալ ՚ի տանէ հօր իւրոյ, որպէս պարտաւորէր զնա ձայնն, որ էր ազդումն ինչ մտաց նորա յաստուածուստ կուսէ. զի ուր միտք՝ անդ և խորհուրդք. Քանզի առ Աստուած ուղղեալ սիրտ և կամք Աբրահամու, ՚ի նա հաստատեցան և միտք. վասն որոյ թուէր նմա ազդու և բարձրագոյն ձայնն. Յետ այնորիկ ոչ ևս էր նա ՚ի վերայ երկրի. այլ ըստ ո-րում միտք նորա յերկինս բեւեռեալ պշուցեալ կային, բարձրանայր և ինքն յերկրաւորացս, և զաչսն իւր ամբարձեալ յաստեղատունս՝ ՚ի կամարն լուսեղէն, հիանայր, սքանչանայր և յապշութիւն հարեալ զննէր զլուսալիր և զշողշողուն աստեղս, զլուսինն արծաթա-փայլ և զամենայն երկնային մարմինս, որոց գեղեցիկ կարգաւորութիւն այնպէս հաճելի երեւէր նմա, մինչ յորդորել զնա աճապարել փութալ ՚ի կատարումն հրամանին, և ելանել ՚ի ճանապարհ. Եւ եղեւ ընդ-աւուրսն ընդ այնոսիկ անկանիլ Թարայի հօր իւրոյ ՚ի մահիճս ցաւոց, և ՚ի նոյն մեռանել. Թէպէտեւ մահ նորա մեծապէս ՚ի սուգ տխրութեան համակեցոյց զԱբրահամ, քանզի ոչ բաժանեցաւ ՚ի մոլորութենէն

իւրմէ, յորմէ մահն միայն կարաց խլել կարծեալ զնա 'ի կենաց, այլ մխիթարեցաւ այնու՝ զի արձակեցաւ և ինքն յազատութիւն. վասն որոյ փութացաւ ելանել 'ի տանէ հօր իւրոյ, թողլով զամենայն հարըստութիւնս Թարայի՝ Նաքովրայ եղբօր իւրոյ 'ի ժառանգութիւն, բաւականացեալ ինքն 'ի վաստակս քրտանց իւրոց: Յարեաւ նա փութալ սլանալ ըստ օրինակի միեղջերուի, որ արագընթաց արշաւմամբ վազս առնու, 'ի փախուստ խուճապէ 'ի հոտոյ մարդկան՝ արհամարհեալ զծարաւ իւր, և հեռանայ 'ի նոցունց մինչեւ գտանէ վտակ ականակիտ և պարզ՝ ուստի շիջուցանել զծարաւ իւր: Այսպէս և Աբրահամ հեռանայր 'ի մարդկանէ ապականելոց և պոռընկելոցն զհետ գարշելեաց, զի նեխեալ և ապականեալ էին ամենայն գործք նոցա, և սրանայր հապ ընդ ճեպ գտանել զականակիտ և զգեղեցիկ ջուրն կենդանութեան, որով հատանել շիջուցանել զպապքեալ հոգի իւր:

Յարեցաւ ընդ Աբրահամու և Ղովտ եղբօրորդի իւր. քանզի և նա 'ի սէր ճշմարտութեան վառեալ՝ համաձայն էր միօք ընդ աստուածպաշտութիւն Աբրահամու: Ելին ապա և պանդխտեցան յերկրին Քանանու, և շրջէին անդ վրանաբնակ. զի ոչ կամէր Աբրահամ ունել ինքեան վայր հաստատուն առ 'ի բնակութիւն՝ մինչեւ գտցէ զըղձալին իւր: Լերինք բարձրաբերձք էին օթարան նորա, զի հեշտին՝ լիցի պարապել 'ի քննութիւն աստեղաց. ընտրէր ինքեան վայր առանձնական, զի մի խառնիճաղանճ մարդիկ խոչընդոտ լիցին խորհրդոց իւրոց: Բայց 'ի վերայ այսր ամենայնի՝ մարդասէր էր նա և հեզահամբոյր բարք նորա, հիւրասէր և առատաձիր. անմարթ էր ումեք անցանել զվրանօք նորա՝ առանց վայելելոյ յաստուա-

ծապարգեւ բարութիւնս նորին . և որք ժամանէին առ նա , աստուածազգեցիկ բանիւքն Աբրահամու՝ հանգչէին միտք նոցա ։ Տրտմութիւն մեծ էր նմա , յորժամ ոչ գտանէր հիւր 'ի վրանս իւր , և ոչ զոք ինքեան սեղանակից , որով առաւել ևս քաղցրանայր համեստ և աղքատիկ կերակրիկն իւր . վասն որոյ յամենայն ժամ ակնդէտ սպասէր մնայր , և զորս գտանէրն՝ մեծապէս հիւրասիրութեամբ պատուէր մեծարէր , համարելով զնոսա յաստուածուստ առաքեալ ։ Աւասիկ գործք աստուածպաշտութեան Աբրահամու , որով հաղորդէ ամենեցուն զիւրն բարիս , և օրինակաւ անձինն քարոզ լինի Ճշմարտութեան , ուղղել զամենայն մարդ առ Աստուածն կենդանի ։

Տեսանես ո՛ սիրելի ամուսին իմ . այսպէս պարտ է և քեզ վարիլ, ունել յարացոյց քեզ արդարութեան և աստուածգիտութեան զհաւն իմ զԱբրահամ . Թողեալ զկռապաշտութիւնն և հետեւել Ճշմարտին Աստուծոյ . որով օրհնութիւն նորին կեցուցանող և պաշտպանութիւնն հասեալ առ մեզ , հանգուցանէ և յանդորրու պահէ զկեանս մեր ։

ԳԻՇԵՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Հաւատամ և ես՝ զի ո՛չ լուսաւորք երկնից , և ոչ կենդանիք և ոչ ձեռագործքն՝ զորս մարդիկ յօրինեն , են աստուածք . բայց միթէ և սրբազան գետն "Նեղոս չիցէ՞ Աստուած , որ մի միայն պատճառ է կենաց մարդկան՝ լցուցանելով զամենայն բարիս նոցա ։

ԱԲՐԱՀԱՄ

Չէ՛ արդարեւ Աստուած և ոչ իսկ գետն Նեղոս․ քանզի ջուրն է մի ՚ի տարերաց, Թէպէտ եւ Եգիպտացիք անհմուտ գոլով սկզբան նորա ՚ սրբազան ինչ համարեալ՝ աստուածացուցին զայն․ Նեղոս գետ բղխէ ՚ի բարձրագոյն լերանց Եթովպիոյ, և միաւորութեամբ առուաց և վտակաց բազմաց՝ լինի գետ մեծագոյն և յաղթաջուր․ և ըստ սահմանաւոր ժամանակի աճման և նուազման՝ լցուցանէ զամենայն պակասութիւն համօրէն թագաւորութեանն Եգիպտոսի և այլոց․ Նա՛ զի՝ անծանօթ է Եգիպտացւոց գոյութիւն այլոց ջուրց և կենդանի ջրհորոց, որք ՚ի ներքուստ երկրի բղխեալ՝ զկարօտութիւն մարդկան և անասնոց լցուցանեն․ և այսպիսի ջրհորք և աղբերք ոչ գտանին յերկրին Եգիպտացւոց․ գուցէ և յայսմանէ պատճառ և սկիզբն էառ մոլորութիւն նոցա, պաշտել զՆեղոս՝ իբրեւ սրբազան ինչ․ Ջուրն՝ զոր հաստատեալ որոշեաց Աստուած ՚ի յարարչագործութեան անդ, է ՚ի զովացումն համօրէն բնութեանս և մարդոյ և անասնոյ և խոտոյ․ լինել պատսպարան և ընդունարան ազգաց Թեփամորթից, յորոց և համանն իսկ․ ծառայել ամենեցուն ՚ի պիտոյս, ՚ի վանել զաղտեղութիւն, ՚ի հաստուցանել զպտուղ, և ՚ի սնուցանել զտունկս աճեցականս․ Ծառայ և սպասաւոր մարդկան կարգեաց զայն Արարիչն, որպէս և հուրն, հողմ և օդ․ Արդ՝ եթէ Աստուած է, ընդէ՞ր արկանէք ՚ի նա զլուալիս և զամենայն աղտեղութիւնս․ վասն է՞ր չիցէ պայծառ և ջինջ․ յո՞յր սակս ոչ միաչափ տեւէ յորդութիւն նորա․ դուք ինքնին ականատես եղէք ո՞րպէս առատացաւ զամս եւթն, և բեղմնաւորս գոր-

ծեաց զերկիրն · իսկ արդ տեսանէք՝ զի ոչ որպէս զա-
ռաջինն առատանայ, այլ պակասելով պակասի օր քան
զօր, որ և տեւեսցէ ամս եւթն · առաջին երկու ամք
անցին, և մնայ տակաւին հնգամեայ ժամանակ, յորս
ոչ տացէ գետն զբեղմնաւորութիւն իւր՝ գործել
զերկիրն բարեբեր · Այլ արդ՝ այսպիսի նուազութիւն
և առատութիւն՝ նշան է փոփոխականութեան · բայց
Աստուած անփոփոխ է · զի որպէս էրն 'ի սկզբան,
նոյն է և այժմ, նոյն եղիցի և յաւիտեանս ժամանա-
կաց մշտնջենաւորապէս · Նոյն գերագոյն Աստուածն
անփոփոխ՝ ամենակարող զօրութեամբ և անհուն ի-
մաստութեամբն իւրով այց արար երկրիս այսմիկ, և
ծանոյց զապագայ զդէպսն երազովքն Փարաւոնի ·
'ի ձեռն որոց եհան և զիս 'ի բանդէ · քանզի ինքն է
տնօրէնիչ և կառավար ամենայն աշխարհի · որոյ կամաց
ոչ ոք է՝ որ հակառակ կայցէ · Առաքեաց և զիս
վասն այսորիկ պաշտօնատար, զի փրկեցից զԵգիպտոս
և զաշխարհ ամենայն 'ի սովէ · Նա ինքն է Ճշմարիտ
Փրկիչն տիեզերաց · Թէպէտեւ Փարաւոն զնոյն անուն
անուանեաց զիս, այլ այն պիտակաբար առնու 'ի վե-
րայ իմ · զի Աստուած է ներգործող ինեւ, և նա ինքն
է տիրապէս Փրկիչ, և զիս տկար սպասաւոր և գործի
կարգեաց փրկութեան իւրոյ · Ուստի 'ի կոչել զիս
մարդկան Փսոմփթոմփանէ՝ սասանիմ, ահիւ պակու-
ցեալ զդողանի հարկանիմ; զի մի ինչ հակառակ կա-
մացն Աստուծոյ գործեցից · Ապա և դու՝ որ վիճա-
կեցարդ ինձ 'ի տիկնութիւն, հաստատեալ ուղղե-
ջիր զմիտս և զսիրտ քո առ նոյն Ճշմարիտն Աստուած,
հայցելով 'ի նմանէ աղերսախառն՝ զի փրկեսցէ զքեզ
և զմեզ 'ի յաւիտենական դատապարտութենէ ·

ԳԻՇԵՐ ՎԵՑԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Տէ՛ր իմ, գիտութիւն քո՝ գերազանց իմն կատարելութիւն ունի· զի այնչափ ազդեցին յիս բանք քո, մինչեւ զմիտս եւ զսիրտ իմ գերել 'ի հաւանութիւն յաղթահարիչ բանիցդ։ Այո՛ հաւատամ ճշմարտապէս՝ զի կուռքն մեր եւ Թարայի նախահաւուն քո եւ այլոց դիցապաշտ ազգաց, չեն աստուածք ճշմարիտ· այլ նա միայն է՝ որ արար զերկինս եւ զերկիր եւ զոր 'ի նոսա ամենայն արարածք։

Զարմանամ տէ՛ր իմ յոյժ ընդ այս գերագոյն գիտութիւն քո։ Կարծէի իմն եթէ ընդ համօրէն աշխարհին Եգիպտացւոց չիցէ ոք իմաստուն քան զհայրն իմ Պետափրէս· որ յաղագս լայնահանճար մըտացն խոհեմութեան եւ վսեմապանծ իմաստութեանն՝ արժանացաւ լինել քուրմ Արեգ քաղաքին· յորմէ ուսեալ եմ եւ ես։ Բայց արդ խորհիմ տրամաբանեմ ընդ միտս իմ եւ իմաստասիրեմ զայս, եթէ գիտութիւն նոցա ճամարտակութիւն իմն է, հիմնեալ 'ի վերայ պատիր ձեռնարկութեանց, եւ յաւէտ կեղծիք դիւրապատիր՝ ընդ որ ոչ թափանցեն անցանեն միտք խաւարեալք 'ի ճշմարիտ լուսոյն, հնարեալք 'ի քըրմապետաց անտի, առ 'ի կարթել կախարդել զմիտս թիւրաթեք թիւրահաւան մարդկան, եւ լնուլ 'ի նոցունց զչար կիրս անյագ շահասիրութեան իւրեանց։ Արդ՝ խնդրեմ 'ի քէն լուսաւորել զիս, եւ պատմել ինձ եթէ ո՛ւր ուսեալ է քո զճշմարիտ գիտութիւնն աստուածպաշտութեան։

ՅՈՎՍԷՓ

Որդի եմ ես Յակոբեայ աստուածապաշտի և երկիւղածի, և Թոռնորդի Աբրահամու. Հայր իմ պաշտէր զԱստուածն երկնի և երկրի. վասն որոյ և Աստուած ցոյց զնա ամենայն բարութեամբ, ճոխացոյց զնա ամենայն ընչիւք և ստացուածովք, բեղմնաւորեաց զծնունդ նորա երկոտասան որդւովք և միով դստերաւ չքնաղ և գեղեցիկ. Թիւ ծառայից և աղախնայց ոչ անկանէր ընդ համարաւ. քանզի էին ումանք 'ի նոցանէ կարգեալ կուտպանք 'ի վերայ ուղտուց, ձիոց և իշանց, զորս արածէին 'ի ջոկերս ջոկերս. ոմանք անդէորդք և խաշնարածք՝ 'ի վերայ հօտիցն արօտականաց սփռելոց ընդ ընդարձակութիւն մարգագոյն դաշտաց, կանաչագեղ մարմանդիցն. և ոչ գոյր թիւ օդեաց և այծեաց կթանաց. քանզի տասնեքին եղբարք իմ քաջ և արիական ոգւոյ վիճակեալք՝ հազիւ բաւէին 'ի վերակացութիւն հովուաց. Բնակութիւն մեր էր յընդարձակագոյն տեղիս, ընդ քաղցր և բարեխառն կլիմայիւք և առ ափամբք հեղասահ առուակաց խոխոջելոցն տաղաւարեալ. և 'ի տեղափոխիլն՝ բանակս բանակս լինէին անցք մեր.

Եղբարք իմ տասնեքին՝ մեծ էին քան զիս. Թէպէտ եւ միոյ հօր ծնունդ, այլ ոչ համամայր. զի մայր իմ երկուս միայն ծնաւ որդիս յերկանցն իւրոց, զիս և զեղբայրն իմ զկրտսեր, որոյ ընդ ծնանիլն՝ մահուամբ պակասեաց մայրն իմ ապերջանիկ. Եւ ըստ որում եղբարք իմ երիցագոյնք քան զիս, 'ի սպասաւորութիւն տան և 'ի կառավարութիւն հովուաց պարապեալ կային հանապազօր. իսկ ես ընդ ասուն՝ ոչ բաժանէի 'ի հօրէ իմմէ. հնազանդ էի յամենայնի ակնարկութեան

ծնողին իմոյ · վասն որոյ՝ կոչեալ զիս միշտ առ իւր , պատմէր ինձ զամենայն , ուսուցանէր զիս և խելամուտ առնէր իմաստութեամբն իւրով ամենայն պարտաւո-րութեանց բնական և բարոյական , որչափ ինչ տանէր հասակն իմ մանկական , որով և լուսաւորեցան միտք իմ յանտխական տիոց · Քանզի հասակն տղայութեան և նորաթեք միտք նորա ենթակայ գոլով առ ամենայն ազգ գիտութեան , դիւրաւ ըմբռնէ և անջինջ յուշի կալնու · Հետաքրքիր բազմանօք հարցանէի զհայրն իմ · նա ուսոյց ինձ՝ եթէ գարշելիք են կուռք և ա-տելիք Աստուծոյ , և որ պաշտօն հարկանէ նոցա , ան-շուշտ կրեսցէ զարժանին զպատուհաս ·

Հայր իմ առեալ էր իւր կանայս ՚ի դստերացն Լաբանու · և աներ իւր էր այր խիստ և դաժան , և անյագ ընչասէր , մինչ զի կամէր առանց վարձուց ծառայեցուցանել զհայրն իմ և զեղբարս · Վասն որոյ պահանջեաց ՚ի նմանէ հայր իմ ըստ արդարութեան և ըստ հաւատարմութեան իւրոյ որոշել վարձս · Իւ-նա առ ամօթոյն երեսս առեալ իրաւացի Թախան-ձանաց հօր իմոյ , պարտաւորեցաւ վարձատրել , այսու դաշամբ՝ զի ամենայն խայտաբղէտք ծնեալ յոչխարաց և յայծեաց , եղիցին հօր իմոյ · Զայս որոշեաց Լաբան , այլ ՚ի միտս խոկայր նենգել նմա , և մոռան լինել դա-շանցն · Իսկ Աստուած ողորմութեամբն իւրով , քանզի ոչ թողու զարդարն կոխան լինել ոտից անօրինաց , ծագեաց ՚ի միտս նորա դնել յաւաղանին գաւազանս դալար շեր՝ սպիտակացեալ ՚ի կեղեւաց , առ որս հայելով խաշանց՝ զկծեալ զդայլն և ծնանէին խայ-տաբղէտս · Այս գիւտ հնարից՝ գործ իմն բնական է , այլ կատարումն նորին յԱստուծոյ գոլով , բեղմնաւո-րեցան ոչխարք և այծք հօր իմոյ , և ամենեքեան գրեա՛ թէ խայտս և գորշախարուս ծնանէին · Իբրեւ ետես

Կայեան զբազմանալ պիսակախայտ համակ հօտիցն, զչարեցաւ ընդ միտս իւր. և զի չունէր ինչ ասել ընդ այս ցհայր իմ, կամեցաւ փոխել զդաշինսն, զի յետ այնորիկ ինքեան լիցին ամենայն խայտաբղէտք. և ամենայն աննշանք և որ առանց պիսակաց էին 'ի գեղմնաբարձից օգեաց` եղիցին հօր իմոյ. քանզի ակն ունէր եթէ 'ի պիսակախայտից համատիպս ծնանիցին. Հաճեցաւ և ընդ այս հայր իմ. զի գիտէր քաջ, եթէ օրհնութիւն 'ի Տեառնէ է, և 'ի նմանէ է ամենայն բեղմնաւոր առատութիւն, և բազմածինս առնել զծնունդ ոչխարաց և այծեաց. Այսու բարեյոյս ակընկալեօք վառեալ հօր իմոյ, կանխէր առ Աստուած. և ըստ յուսոյն իւրոյ` բազմացան միագոյնք. Ընդ այս ևս քան զևս զչարեցաւ Կայեան. այլ զի ինքն ընտրեաց և փոխեաց զդաշինսն, լռեաց և ասաց ինչ ոչ.

Իբրև ծանեաւ հայր իմ զչարանենգ միտս և ըզդիտաւորութիւն նորա, խնդրէր յԱստուծոյ այց առնել ինքեան. և բազում անգամ առեալ զիս միայնակ ընդ իւր առանձնանայր, և հեռացեալ 'ի բնակութեանց մերոց, զոհս մատուցանէր և արտասուօք հայցէր յԱստուծոյ պահել զինքն և զամենայն որդիս իւր ընդ հովանեաւ ամենախնամ աջոյն իւրոյ. Ոչ ինչ բնաւ 'ի միտ առնուի ինչ յայնժամ, զի մանուկ էի հասակաւ. բայց երբ տեսանէի զլալ աչաց հօր իմոյ, արտասուէի և ես ընդ նմա, ձայնակից լինէի ամենայն բանից բերանոյ նորա. կրկնէի զբանսն առանց իմանալոյ զզօրութիւն ձայնիցն. ամբառնայր նա զձեռս իւր յերկինս, և ես հետևէի նմա, և զամենայն զշարժմունս նորին` կերպարանէի յանձին իմում. աչք նորա յերկինս 'ի վեր, և աչք իմ 'ի նա անքթիթ. Ով աւուրք բարեբաստիկք. Այս գունակ էր բարեպաշտութիւն ծնողին իմոյ, և ըստ այնմ պարտէին լինել ամենայն հարք. Եթէ ցանկան

օգտակարս առնել զորդիս իւրեանց յաշխարհի և հա-
ճոյ Աստուծոյ, կրթեսցեն զնոսա երկիւղիւ Տեառն.
ուսուսցեն նոցա զառաքինութեան զվարժս, որ դիւ-
րաւ տպաւորին 'ի տիս տղայութեան և աճել աճեն
ընդ հասակին. Եւ որ միանգամ քաջակիրթ հանդի-
սանայ յայսպիսի ուսմունս, ոչ եւս յուսահատեալ
ընկճի 'ի փորձութեանց վշտաց. ոչ տխրի յուսակտուր
'ի ձախող պատահարաց.

Արդ ցուցից քեզ, ո՛վ սիրեցեալդ իմ Ասանէթ,
Թէպէտ եւ արտաքոյ ելանիցեմ կարգի բանից իմոց,
եթէ զի՞նչ և քանի՞ք են պատահմունք վշտաց և փոր-
ձութիւնք տառապանաց, զի գիտացեալ քո՝ կարաս-
ցես տոկ ունել եթէ ուրեք երբէք պատահիցի քեզ
կրել. Արկնակի պատեն նոքա զմարդկամբ, ներքուստ
և արտաքուստ. ներքուստ՝ անծոյժ և անսանձ կիրք,
որ առ պակասութեան կրթութեան և իմաստութեան
յաճախակի պատահեն 'ի մեզ, ոչ կարացեալ տոկալ
անըմբերելի գործեն զաղէտս դիպուածոց յուսահատ
բողոքանօք. և որ դոյզն համբերութեամբ մարթ էր
անցանել, տարադէպ խորհրդովք, հոգածութեամբ և
յուզմամբք սրտի զայրագնելոյ՝ մշտնջենաւորէ բազ-
մադիմի վնասուք. Իսկ արտաքինք են յայտնի տեղաց-
մունք նետից Թշնամութեան, ընդ որս և սովորաբար
զուգընթաց են խնծղանք և չարակնճիռն ժպիտ Թըշ-
նամեաց, կեղծուպատիր ծաղրաբանութիւնք անհաս-
տատ բարեկամաց, որք արդարեւ անողորմ կսկծեցու-
ցանեն և ցաւագին դառնացուցանեն զսիրտս այնոցիկ՝
որք ոչ գիտեն համբերութեան զինուն ընդդէմ մաքա-
ռիլ նոցա. Արդ աշխարհս է տուն փորձանաց, ուր
անպակաս են պատահարք և դէպք աղետից, որք ե
թէ չիցեն յառաջ եկեալ 'ի Թերութենէ մարդկ.
և 'ի յանցաւոր գործոց, համբերելիք են գլխովին,

պարգեւս իմն վարկուցեալ զայնոսիկ յերկնուստ․ զոր սիրով եւ երկայնամիտ ոգւով ընդգրկեալ զայնոսիկ մարդկան, գանձէ եւ ժողովէ զպտուղս առաքինութեան եւ զվարձս կրկին ճոխութեան՝ երկրաւորի եւ երկնայնոյ․ Ապա պատահարք եւ վիշտք բարեաց են պատճառք արանց առաքինեաց․ այլ ուրախութիւնն թալկացուցիչ է մարդկային ոգւոյ․ զի բազումք ոչ գիտելով զժամանակն ուրախութեան եւ յաջողութեան առաքինութեամբ անցուցանել, ողորմելիք եղեն եւ եղկելիք, անձանց շրջեցուցեալ զայն ՚ի վնաս․

Իսկ մեք՝ ո՛վ քաղցր կենակից իմ, շնորհս մատուցուք անհուն երախտեաց Արարչին՝ հանդերձ երկիւղած սրտիւ, զի նա պարգեւեաց մեզ զուրախութիւնս զայս, ամբարձեալ զմեզ յայս գերագահ աստիճան փառաւորութեան իշխան ՚ի վերայ Եգիպտացւոց լինել, զորոց համարս ունիմ տալ ինքեան, եթէ ոչ բարւոք ՚ի գործ եդայց զիշխանութեանն իմոյ զհանդէս եւ զպարտս․ Ամենայն ոք՝ յորում հասակի եւ վիճակի եւ իցէ, եթէ սպիտակափայլ ալիք ծերութեան, եթէ թերահասակ աշխոյժք պատանեկութեան, ամենեքին առհասարակ ըստ ազատասէր բարուց իւրեանց՝ ըղձան իշխօղ լինել այլոց, քան ընդ իշխանութեամբ․ եւ ամենայն ճգամբ ՚ի նոյն թեւակոխեն․ Զ սոյն զայս իշխանութիւն ապաքէն օրհնութեամբն Աստուծոյ հասանէ մեզ ՚ի ձեռս բերել․ զի նա հրամայեաց իշխել եւ տիրել ՚ի վերայ արարածոց, եւ իւրոյ անձին տէր եւ իշխան զնոյն ինքն զԱստուած ճանաչել․ Իսկ անհնազանդութիւնն ՚ի մարդկանէ սկիզբն էառ, որք ընդվզեցան յիշխանութենէ Արարչին, հակառակ գործելով կամաց նորին․ վասն որոյ՝ յանհնազանդիլ մարդկան յԱստուծոյ, հետեւեցաւ հարկաւ եւ անհնազանդութիւն ամենայն արարածոցս ստորնայնոց, զորս հը~

պատակս եդ Աստուած 'ի սկզբան իշխանութեանն մարդոյ. որով կորեաւ անհետ եղեւ իշխանական այն պարգեւ, բնութիւն փոխանակ ընդ հնազանդութեան տիրեալ 'ի նոսա. Արդ միայն 'ի պատիժ և 'ի դատապարտութիւն անհնազանդ բարուց նոցա, մնաց 'ի նոսա միայն իշխանութեան իղձ. Քանզի յայն աստիճան ազնուութեան հասին, մինչ անբաւական գոլ իշխել անձանց իւրեանց իսկ. Գիտութիւն մեծ և աստուածային պարգեւ այն իսկ է՝ իշխել 'ի վերայ անձին, ցանկութեանն, ըղձից, բարկութեան և այլ ամենայն անդոսնելի կրից. Եթէ այսու կատարելութեամբս կրթիցին մարդիկ, գիտութիւն նոցա համարի պարգեւ յաստուածուստ, և աշխարհ ամենայն զխաղաղութիւն համբուրէ.

ԳԻՐՔ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Տեսանելով հօր քոյ զնախանձ աներոյն իւրոյ՝ ընդէր ոչ հեռանայր 'ի նմանէ. զի լաւ է փոքր ինչ պատառ ուրախութեամբ սրտիւ, քան զբազմախորտիկ սեղան լի նենգութեամբ և դժտութեամբ. նա զի՝ օրհնութիւն Աստուծոյ ակներեւ երեւեալ 'ի վերայ հօր քո, պարտ էր փութալ հեռագնաց լինել 'ի միջոյ կռապաշտից.

ՅՈՎՍԷՓ

Այո՛, կամէր հեռանալ անտի հայր իմ. այլ քանզի յամենայն 'ի գործս իւր յԱստուած ապաւինեալ՝ նմա յանձն առնէր զամենայն, և յինչ ոչ ձեռնհաս լինէր առանց հաճութեան նորին, որ միայն է փրկիչ և խնամիչ իւրոց ծառայից. վասն որոյ յաճախէր 'ի նուէրս զոհից, առ 'ի ճանաչել գիտել զկամս նորա, որ ըստ ողորմածն գոլոյն և բարեխնամ, գիտէ և զայցելութեանն զժամանակ՝ թիկունս լինել օգնականութեան կարեաց նոցին.

Մինչ պատրաստէր դեռ Լաբան երթեալ 'ի կտուրս խաշանց, զորս որդիքն իւր արածէին հեռի 'ի մէնջ զերից աւուրց ճանապարհ, պահանջեաց և 'ի հօրէ իմմէ զբաժինն ոչխարաց իւրոց, և էառ զամենայն որ ինչ անկանէր նմա ըստ դաշանցն հաստատելոց.

Ընդ աւուրսն ընդ այնոսիկ ազդումն եղեւ յերկնուստ առ հայր իմ Յակոբ, ելանել յերկրէն Խառրանու և գնալ զկողմամբք Քանանու. և 'ի մեկնել աներոյն իւրոյ յարեւմուտս առ խաշինս իւր, եւ հայր իմ անդէն ուղղոյ լինել յարեւելս կոյս շտապ տագնապաւ. և կուռքն Լաբանայ մնաց առ մօրն իմում, զոր գաղտագողի պահեալ էր առ իւր՝ չպաշտել զնա հայրն. Քանզի յամենայն ժամ սաստիւ ահ արկանէր 'ի վերայ մեր հայրն իմ բարեպաշտօն, և ցուցանէր մեզ զձեռագործացն զստութիւն, և թէ չեն նոքա Աստուած. Այլ զկուռսն Լաբանու խորհելոյ 'ի մօրէն իմմէ՝ չէր ինչ ծանօթ հայր իմ. թէպէտ եւ խայթ խղճի իմոյ ստիպէր զիս բանալ նմա զայն և յայտնել, զի մի՛ չարիք եկեալ ժամանեսցեն մեզ 'ի նորին սակս,

սակայն վասն ուղեգնացն լինելոյ մեր խուճապանօք և արագաքայլ վազիւք, զի մի Լաբան զհետ մեր կըրթիցի, ոչ գտանէի զմիջոց ժամանակի պատմել նմա, և հեռացուցանել ՚ի մէնջ զգարշելիսն զայնոսիկ.

Այն ինչ ՚ի խորհուրդս կասկածանաց յուզեալ ծփէաք յընթացս ճանապարհին յահէ յերկիւղէ յարձակման չարախտավատին Լաբանայ, և ուխտիւք խընդրէաք յԱստուծոյ այցելու օգնական լինել մեզ, և ահա եկն երևեցաւ նա յանկարծ յեղակարծ բազմութեամբ մեծաւ հանդերձ, ՚ի հող և ՚ի փոշի սըրընթաց արշաւմամբ. զոր ՚ի տեսանելն մեր, յերկիւղ մահու պաշարեցաք. Զոր օրինակ արծիւ սրաթռիչ հասեալ սլացեալ յանկարծուստ ՚ի խումբս թռչնեկաց, յերկիւղէ տագնապին՝ սառնացեալ պաղի արիւն նոցա, և ոչ կարացեալ ՚ի թռիչսն ապաստան փախստեամբ զերծանիլ, ճռուողեալ ՚ի մնչիւն ողբոց ՚ի ծերպս և ՚ի փապարս սորամուտ լեալ թաքչին, և նուաղեալ անդէն յոգւոց հանեն. Ի սոյն տիպ նմանութեան՝ տեսեալ և մեր յանակնկալ պահու զհասանել, դիմել, խոյանալ, յարձակիլ նորա ՚ի վերայ մեր, տեղի թաքստի որոնէաք ՚ի վրանս մեր՝ յորում օթագայեալն էաք. և ամենայն եղբարք իմ և ես դիմեալ գամ մի ՚ի գիրկս հօրն մերոյ, փարէաք զպարանոցաւ նորին. Անդ էր լսել լալումն և ողբումն անճիչ և անաղաղակ. զի ոգիք մեր պակասեցան, ցամաքեցաւ արիւն յերակս մեր, զի տեսանէաք հասեալ առաջի մեր օրհաս դառնութեան. Իսկ հայր իմ՝ որ քաջ գիտէր ՚ի վերջին ճիգն արիական ոգւով ընդդէմ ելանել, և ՚ի ճակատ կացուցանել զանձն անվեհեր ամենայն արկածից վտանգաց, յանդիմանեաց զվատասրտութիւն մեր յասելն. Զի՛ վեհերոտիք էք վատք՝ և վատասրտեալ լքանիք. և զի՛ է ձեզ փո-

խնամակ առ Աստուած դիմելոյ, և զերեսս նորա աղերսելոյ, յորմէ միայն մարթ է մեզ փրկութիւն գտանել, դիմեալ կայք ՚ի վերայ իմ իբրու մանկտեակք անտէրք և անհայրք. Ո՛ն ՚ի բաց կացէք յինէն, զի Աստուածն իմ՝ յոր յուսացեալն եմ, որ և բազմիցս փրկեաց զիս ՚ի բազում վտանգաց, փրկէ նա և այժմ զմեզ, եթէ հաճոյ իցէ կամաց նորա. Իսկ եթէ է մեզ լինել ճարակ վարազացեալ բարկութեան աներոյն իմոյ, և ընդ սրովն նորա անկանել յերկիր դիտապաստ, եղիցի և յայնմ կամք բարեհաճութեանն Աստուծոյ.

Ապաքէն ամենագութն Աստուած, որ նա միայն է Տէր և իշխան երկնի և երկրի, պաշտպանէ զարդարն, ոչ տայ զնոսա ընդ ոտս արանցն անօրէնութեան, խընամոտ սիրով հոգածէ անմեղաց, և զչարագործսն խորտակէ և յանդիմանէ. նոյնպէս և Լաբանայ՝ որ կընճռալի երեսօք, դաժանացեալ սրտիւ և յոխորտանօք հետամուտ էր զկնի մեր՝ ՚ի սուր սուսերի մաշել զմեզ, երեւեալ նմա Աստուծոյ, սաստէ նմա, և սպառնայ չարաչար՝ եթէ անզգամութեամբ ինչ վարիցի ընդ հօր իմում. Յայնժամ հրացեալ եռանդն արեան Լաբանայ, որ ընդ երակս նորին վառէր ՚ի բոց ատելութեան և անհնարին ցասման, շիջեալ զնստանի, և ՚ի դողման լեալ տատանի. երեսք նորա մռելատիպ և տժգոյն երկիւղիւն դալկացեալ. Թուլացեալ լքեալ էին ջիղք ոտիցն, և ոչ կարէր ոտն փոխել յոտանէ, այնպէս անձայն անշշունչ և անբարբառ արձանացեալ կայր.

Հայեաց և տես ո՛վ անուշակ կենակից իմ սիրելի՝ զգութ հայրագորով ամենազօր Արարչին. զիա՛րդ պաշտպանէ զճշմարիտ ծառայս իւր. ո՛րպէս զի ՚ի թիկունս օգնականութեան հասեալ անվնաս զնոսա համբուն ՚ի մօտալուտ վտանգէն չհաւատալի զերծուցանէ. զի այնպէս յահ և յերկիւղ պաշարեալ կայաք,

մինչ անհնարին էր մեզ կենդանւոյն փրկիլ, կամ մա-
քուր լինել։ Բայց որովհետեւ ողորմութիւն նորա
յայսպիսի անզերծանելի վտանգս առաւելապէս ե-
րեւի, արիասցուք ապա եւ մեք ըստ օրինակի Հօր ի-
մոյ՝ լինել Ճշմարիտ ծառայս Աստուծոյ։ Եւ յամենայն
ժամ խնդրեսցուք ՚ի նմանէ հովանի ունել զաջ իւր
՚ի վերայ մեր։ Եւ այս՝ յորժամ ամբիծ եւ մաքուր վարս
յանձին ստանայցեմք, եւ յամենայնի զկամս նորա կա-
տարել փութայցեմք, ՚ի բացեայ լինելով ցանկ ՚ի կը-
ռամոլ ամբարշտաց։ Զմիտ մեր եւ զամենայն անձն
նմա ընծայիցեմք։ Յաւուր անդորրութեան արտասուօք
պաղատելով եւ հայցելով զշնորհս նորա, որպէս զի ՚ի
ժամանակի նեղութեան փրկեսցէ զմեզ։ Իսկ բազումք
անդորր եւ ուրախաւէտ աւուրց դիպեալ, ստուարա-
նան լայնանան անփոյթ գլխովին զԱրարչէն ՚ի բաց
գնացեալ, զաղօթսն եւ զպաղատանս պահէն միայն ա-
ւուրց վշտաց իւրեանց։ Եղկելիք են արդարեւ որք
զայսպէսն գնան։ Քանզի յաշխարհի աստ անբաժան
ընկերք են միմեանց ուրախութիւնն եւ տրտմութիւն,
անդորրութիւնն եւ վիշտք, եւ զմիմեանս միահետ ծը-
գեալ փոխանակեն։ Զի արագահաս թեւօք հասանէ
տրտմութիւնն զուրախութեան կնի։ Բայց յետ տրտ-
մութեան յոյժ դժուարաւ յաջորդէ ուրախութիւնն։
Ուստի որք ոչն են ուսեալ կենցաղոյս խաբէութեան
եւ պատրանաց, յաւուր տրտմութեան եւ ցաւոց՝ յու-
սաբեկ յուսահատ լքանին, որով եւ բազում անգամ
հասանէ նոցա վաղաթառամ շիջանիլ։ Արդ մեք
ջան ՚ի գործ դիցուք, ՚ի բարեբաստիկ աւուրս եր-
ջանկութեան մերոյ, ոչ միայն անմոռաց յուշի ունել
զգառնութեան աւուրսն ձախողանաց, այլ եւ արտա-
սուախառն մատչիլ առ Աստուած, եւ խնդրել ՚ի նմանէ
մի թողուլ զմեզ ՚ի բարեգութ հովանաւորութենէ իւրմէ։

ԳԻՇԵՐ ՈՒԹԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Լաբան՝ որ այնչափ սաստկեալն էր երկիւղիւ, զօրացոյն առնել ինչ չարիս հօր քում, եթէ անդէն յետս ընդ կրունկն դարձաւ ամօթապարտ պակուցեալ.

ՅՈՎՍԷՓ

Թէպէտ եւ սաստկեալ և դողդոջուն անձամբ գայր մերձենայր առ հայր իմ, որ իսկոյն եւ ընդառաջ նորա քաջասիրտ արիութեամբ, բայց ոչ ինչ այնուհետեւ մատնութիւն անզգամութեան ընդ միտսն հարկանէր, թող թէ հասուցանել հօր իմում. Նա և պատճառանս իւրոյ յարձակմանն կարկատէր զգաղտագնացն լինել նորա, և ասէ. Ոչ ապաքէն արժան էր ձեզ ազդ առնել ինձ գնալոյդ, զի համբուրեալ զդստերս և զթոռունս իմ՝ հանդերձ օրհնութեամբ առաքէի զձեզ յերկիր հայրենեաց քոց. Պատասխանի արար նմա հայր իմ ազնուական իմն համեստութեամբ. Գտի զքեզ այր փոփոխամիտ և յեղյեղուկ յամենայնի, և երկեայ, մի գուցէ արգելուցուս զիս յուղւոյ իմոյ երթալ առ հայր իմ. վասն որոյ 'ի վճարել քո ըզհաշիւ մեր, ոչ ևս կամելով թարթափել աստէն, ելի 'ի ճանապարհ ամենայն փութով. Երկնեալ անդէն Լաբանայ ասէ. Զիմ ընդէ՞ր ապա դողանայ քեզ զաստուածս իմ զթերափիմս. Բայց սիրեցեալդ իմ Ասանէթ, քանի՜ արհամարհելի է կռապաշտութիւն և ծաղու արժանի. զի եթէ որք զինքեանս չկարեն պահել

աստուածք և պաշտպանել, զիա՞րդ այցելու մարդկան լինիցին. և քանի՞ մեծ անմտութիւն է դնել զյոյս իւր ՚ի նոցա օգնականութիւն. Զի եթէ մարդիկ կարօղ ինչ են խորհել և գողանալ զնոսա, ապա մեծ է կարողութիւն մարդկան քան զաստուածսն զայնոսիկ. Մեծի ողբոյ և բեւր արտասուաց արժանաւոր է վիճակ և խաւարային գործք կռապաշտից համօրէն. բայց մի՛ և մի՛ ընաւ զարմանայցես. զի որ հակառակ Աստուծոյն ցանկ կռուի՝ սատանայ, ամենայն հնարիւք պնդութեան ջանախնդիր լինի, և խաւարաւ պատէ զմարդկան միտս և զոգիս, զի մի՛ ինչ կարողասցին գիտել ճանաչել զդիցն տկարութիւն, և հրաժարիցին առ ՚ի նոցանէ. Վասնզի ամենայն մարդիկ՝ ըստ որում մտաւոր և բանական, կարօղ իսկ են խելամուտ այնմ լինել և զզարշելի զկուռսն արհամարհել՝ զհետ լինելով միոյն Աստուծոյ ճշմարտի. Որպէս և հայր իմ, որոյ ՚ի հանդէս աստուածպաշտութեան կրթեալ վաղժեալ անդստին ՚ի մանուկ տիոց, իբրև լուաւ զսոյն ՚ի Լաբանայ, իսկ և իսկ վճռեաց և ասէ. Ու որում և գտցի կուռքն, մեռցի անձն այն. Տեսանեմ թէ քանի՛ խոտելի և արհամարհելի են առաջի աչաց հօր իմոյ կուռքն և կռոցն երկրպագուք, զի անդէն ըզվճիռ մահուն բարբառի. վասն որոյ փառաւոր արար Աստուած զհայր իմ ՚ի վերայ երկրի ամենայն իշխանապանծ մեծութեամբ, և նախանձելի առ մարդիկ.

Իբրև զայս օրինակ յանձին վստահանայր Լաբան ընդ բանս հօր իմոյ, և զի գիտաց ընդ միտս իւր եթէ ոչ առ մեզ կայցեն կուռքն, սակայն չարակնութեամբն իւրով կամեցաւ խուզել որոնել զամենայն զկահ և զկարասիս մեր և գտանել ինչ. Եմուտ ապա նախ ՚ի վրանս հօր իմոյ, որ յատուկ տեղի առանձնութեան էր նորա. յետոյ և զմիւս տաղաւարսն յուզեալ, հուսկ

ուրեմն գայ 'ի վրանս մօր իմոյ. Այլ նա հնարագէտ գոլով յոյժ և ծանրաբարոյ, գիտաց անդէն անդ հնարս գտանել պատրուակելոյ զգողութիւն իւր. և առեալ զկուռսն՝ եդ 'ի ներքոյ համետի ուղտու, և նստաւ 'ի վերայ նորա, պատճառելով ինձ թէ եմ 'ի կանանց օրինի. ուստի և ոչ ել յոտին առաջի հօր իւրոյ. Եւ Լաբան ոչ ինչ ստիպէ զնա ելանել անտի, որովհետեւ սիրելի էր յաչս նորա յոյժ, և չունէր 'ի նմանէ կարծիս գողանալ զաստուածսն իւր. վասն որոյ ձեռնունայն յետս նահանջի 'ի կուռոցն. զի ընդ համետիւք պատատեալ կայր. Բա՛րէ գեղեցիկ պատուոյ աստուածոցս. Յո՞ր աստիճան մեծի փառաւորութեան հասեալ կայ. 'ի ներքոյ համետին պարածածկեալ և զտէրն իւր համետեալ ունի ըստ օրինակի անբան անասնոց 'ի թշուառելի հոծ տգիտութեան, որոց ընդ կորուստն մոլմոքեալ վշտանայ.

Յետ այնորիկ կամեցան ուխտ դնել և դաշինս կռել. զի մի ինչ հակառակ միմեանց թշնամիս յարիցեն ազգաց յազգս. ուստի կարկառս քարանց կուտեալ դիզեալ բլրաձեւ իմն բարձրութեամբ, վկայ կանգնեցին 'ի միջի իւրեանց. Ապա հայր իմ՝ ըստ առատութեան սրտին և մարդասիրութեան իւրում, որում ըղձալի էր սիրել և զթշնամիս իւր, պատուասիրեաց զանէր իւր և զորս ընդ նմա, մեծաւ պատրաստութեամբ խրախճանս յարդարեալ և սեղան հացալից յօրինեալ. Տեսեալ Լաբանայ զվկայութեան բլուրն առաջի աչաց իւրոց և զհանդերձանս ճաշոցն ազնուասիրտ հօրն իմոյ, ոչ եւս կարէ զուսպ ունել զանձն, և զզեղմունս կրիցն՝ զոր 'ի ժամուն կրէր. խոստովան լինի զանցեալսն բարեմիտ վստահութեամբ և ասէ. Յերիկեան առուր՝ մինչ խաւար գիշերային զերկիրս ունէր, և իմ հասեալ սրավար ընթացիւք

յայս նիշ տեղի , հաստատեալ զերեսս իմ՝ սրոյն իմոյ զքեզ ճարակ կացուցանել , և զզատերս իմ՝ ամենայն աղխիւքն և որդւովք յետս ՚ի բաց դարձուցանել . Խորհէի ընդ միտս իմ՝ զամենայն չարիսն , և ընդ աճեալ քննէի զամենայն հնարս մեքենայից՝ որով ընդ քեզն վարեցայց ահարկութեամբ մեծաւ . Այն ինչ գիշերն ընդ միջէր , լռութիւն զաշխարհաւս պատեալ կայր , եկն ՚ի վերայ աչաց իմոց թանձրութիւն քնոյ , և ծանրացաւ ՚ի վերայ արտեւանաց իմոց , և ընկողմանեցայ ՚ի լերին յայնմիկ . զի այս երեք աւուրք՝ և քուն հատեալ էր յաչաց , անկայ անդէն գետնախշտի յերկիր . Եւ ահա ոչ ՚ի քուն երազ և ոչ յարթմնի տեսիլ , ձայն իմն յանկարծ պակուցանողական եհար զլսելիս իմ՝ . կոչէր զիս յանուանէ և յանդիմանէր զիս . Բաւական են չարիքդ , ասէ , զոր ցարդ գործեցեր առ փեսայն քո . Թող ՚ի բաց զանզգամութեան խորհուրդդ , և մի ինչ խստիր ընդ նմա վարիցիս . զի նա ծառայ իմ՝ է . ապա թէ ոչ՝ ՚ի մահ չարաչար զքեզ դատեցայց . Այս բարբառ ահեղագոչ՝ դողումն կալաւ զիս . և համարիմ՝ լսել դեռ յունկն իմ՝ , զի խորագոյն յիս ազդեցին բանքն . Յարուցեալ անդէն յոտին՝ աստ և անդ տարաբերեալ լինէի , գիտել ո՞ արդեօք և ուստի՞ ձայնն ահագին հատանիցի ՚ի լերին յայնմիկ . այլ սաստկութիւն քնոյ բուռն տիրեալ ինձ և թմբրեալ համակ , կրկին կալաւ զիս նինջ . քանզի և խոր աղջամուղջ գիշերոյն զոտիւք իմ՝ պատեալ՝ չտայր ինձ արձակել քայլս . աստեղք համայն ծածկեալ կային ՚ի մէնջ՝ ընդ մառախլապատ ամպովք . և մինչև ծանրացեալ յիս թմբրութեան , կրկնեաց ձայնն քան զառաջինն ահաւորագոյն և զարհուրեցոյց զիս , և համարէի իմն քաղել ոգւոց իմոց . Թուէր ինձ լինել յայնպիսի տեղւոջ ՚ի լերինն , վիհ

մեծ անդնդախոր առաջի իմ ունելով. և իբրև յայն զաչս իմ ուղղեցի տեսանել, երեւէր ինձ ձեւն աներեւոյթ խլել քեցել զիս և գահավիժել ընդ վախման 'ի վայր. Ընդ այս տեսիլ զարհուրելի և քստմնելի սթափեցայ 'ի քնոյս, և տեսի և ահա երազք էին. այլ խիղճ մտաց իմոց յանդիմանէր զիս 'ի ներքուստ, եթէ ողորմութեան է ձայնս, ազդ առնել ինձ զչարեացն որ ունին պատիլ զինեւ, և 'ի չանսալ իմ ձայնին՝ անդունդք զիս անդէն կենդանւոյն կլանել.

Թէպէտ եւ կամէի 'ի բաց զերկիւղն յինէն մերժել, ցնորս իմն գիշերայինս վարկուցեալ, այլ դողդոջումն անդամոց իմոց և սասանութիւն մտաց, վկայէին ինձ եթէ վասն չարանենգ խորհրդոցս, զոր 'ի սկզբան գիշերի խորհէի, յանդիմանութիւն իցեն ինձ յաստուածուստ. Բայց որովհետեւ այլք ամենայն ուղեկիցք իմ 'ի քուն կային, ես միայնութեամբ առաւել զահի զերկիւղի հարեալ, մատեայ լռութեամբ իմն դողդոջուն ձեռօք ձայն տալ նոցա և յարուցանել. որոց իսկ և իսկ ընդոստ 'ի քնոյ լինել հարցանէին տագնապաւ զպատճառ երկեղախառն ամբոխման իմոյ. Քանզի և յօդել իսկ բանն՝ ծանր էր լեզուի իմոյ. վասն որոյ հազիւ ուրեմն խեցբեկագոյն շրթամբք պատմեցի նոցա զահաւոր զբանսն՝ զոր լուայ երկիցս. Լուեալ նոցա զայս օրինակ ամբոխումն երազոց իմոց և զասասանութիւն իմ, անդէն անդ յարեան 'ի գնալ հրաժարել յինէն. մանաւանդ քաջս այս և արիս, (զմին յընկերացն մատնանիշ ցուցեալ) արդարապէս էառ յանդիմանել զիս և ասէ. Անիրաւ էին գործք քո, վասն որոյ յիրաւունս եհաս 'ի վերայ քո այդ. զի քանի՜ դաժանութիւն է և անօրէնութիւն զհետ լինել փեսայլին ձախողակ դիտաւորութեամբ, 'ի վնաս նորին նկրտեալ. Ո՜հ ապաքէն օրէնք են աշխարհիս

յարգել զփեսայն, ցուցանել զամենայն կարօտութիւն նորա ուրախութեամբ, և 'ի ձախորդ պատահարսն ձեռնտու և օգնական լինել նմա. իսկ եթէ 'ի մոլութիւն ինչ կրթեալ իցէ, ջանալ ուղղել զնա 'ի ձեռն բարեաց խրատուց և աղերս բանից. Զի եթէ համոզակեր և քաղցրամոքք իցեն խրատք յորդորանաց, գիտեն բազմիցս օգտեցուցանել զմարդ պատկառանօք ածեալ յուղղութիւն. ո՞չ ապաքէն և յամեհի գազանս է տեսանել, ընդելանալ և քծնիլ առաջի բարերար ձեռին. Արդ` փեսայն քո և ոչ մի պակասութիւն պարսաւելի յանձին ունէր. յամենայնի կատարեալ էր. դու բազմիցս անիրաւեցեր նմա. զի նա փոխանակ կրտսեր դստերն քո ծառայեաց քեզ, դու զերէցն` որ տգեղն է երեսօք և գիջակնեայ, ետուր նմա ընդդէմ դաշանց քոց. Ապա յաւել ծառայել քեզ այլ ևս եւթն ամ վասն կրսերոյն, որ սիրելի էր յաչս նորա. Յետ այնորիկ վասն խաշանց դաշինս եդեր. և դարձեալ միանգամ և երկիցս եղծեալ զայնս յօգուտ քո շրջեցեր. Իսկ արդ` ո՞չ այս ամենայն անիրաւութիւն էր զոր արարեր. նա զի` վկայեմք մեք ամենեքեան, մինչչև եկեալ նորա առ քեզ, ոչ էին քեզ հարստութիւնք ընչից, զոր և դու քաջ իսկ խոստովանեցար երբեմն, յոտին նորա օրհնել զքեզ Աստուած, և լնուլ զտունն քո ամենայն բարութեամբ.

Օ՛ն ապա, եթէ թողուս 'ի բաց զչարանենգ անզգամութիւն քո, եկեսցուք ընդ քեզ, եթէ ոչ` դառնամք յետս գնալ 'ի բաց ուստի եկաք. Ասաց` և առին հեռանալ յինէն. Ձայն եդի զկնի նոցա աղաղակաւ, և խնդրեցի պաղատանօք չթողուլ զիս առանձինն մեկնակ. խոստացայ ևս չառնել ինչ չարիս, այլ զկուռսն իմ առնուլ զգողացեալս, և տալ դըստերաց իմոց ողջոյն հրաժարական.

Յետ բանիցս այսոցիկ՝ հառաչանօք իմն յոգւոց հանեալ Լաբանայ ասէ ցհայր իմ. Այսպէս զօրաւոր իցէ պաշտպանութիւն Աստուծոյ քո, ո՛ փեսայդ իմ քաղցրիկ. որոյ ձեռն ծանրացաւ ՚ի վերայ իմ մերձ ՚ի սատակել. Գնա՛ այսր ողջամբ զճանապարհ քո, և մի՛ ընաւ երկնչիր. զի եթէ աշխարհ ամենայն ՚ի վերայ քո կուտեալ գումարեսցին, ոչ կարասցեն սպանանել ինչ զքեզ. որովհետեւ պաշտպան կայ քեզ Աստուածն քո ճշմարիտ, զորմէ գոհանամ և ես և շնորհս ունիմ. և օրհնեցից զնա զամենայն աւուրս կենաց իմոց, զի զգուշացուցեալ ազատեաց զիս յահագին վհէն, որ ակնադէտ սպասէր ակնարկութեան հրամանաց նորա կլանել զիս. Յայս կնքեաց զբանս իւր Լաբան, և տուեալ զողջոյն հրաժարական բաժանեցաւ ՚ի մէնջ գնալ ՚ի տեղի իւր.

Տես ո՛վ քաղցրիկ կենակից իմ Ասանէթ, եթէ ո՛րպէս պատժէ Աստուած զանիրաւս, և զիա՛րդ ըզԼաբան յահ և ՚ի հոյն պարանեաց սասանմամբ մեծաւ, և այն յերազի. Եւ զի՞նչ արդեօք հասանիցէ այնոցիկ, որոց գիտացեալ զճանապարհս անօրէնութեան իւրեանց, և զանվրէպ պատիժ պատուհասի յանցուածոցն՝ զոր յարդար դատաւորէն ունիցին կըրել, տակաւին ոչ հրաժարին յետս կան. Նախատինս և թշնամանս դնեն որոց բարեացն խրատտու ինքեանց ընդառաջ մատիցեն, և աղէբար յանդիմանութիւնս ածիցեն անուղղայ գնացից իւրեանց. ոչ այսչափ, այլ և թակարդս եւս չարանենգս փութան լարել նոցա, և ընդ աղը և ընդ խաղը կացուցանել զնոսա. Այլ դու մի՛ զարմասցիս և մի՛ ապշեսցիս ընդ այսպիսեացս. զի անզգամութիւնն սովորոյթ իմն լինեալ թուի նոցա, և արմատացեալ ՚ի սիրտս նոցա՝ զընութեան ունի զզօրութիւն. յաղագս որոյ ջանան միշտ վնասել,

բամբասել , վատահամբաւել զնմանիս իւրեանց , քինք և մատնիչք լինել պատուոյ ընկերին . և եթէ ձեռնհաս գտանիցին և առիթ ձեռնպատրաստ ունիցին , հնարին իսկ կործանել զնոսա առ 'ի մահ . Եւ պատճառ այսորիկ զի՞նչ . ոչ մի ինչ այլ՝ բայց եթէ ունակութիւն նոցա զոր 'ի չարիսն ստացան . Արդ՝ որպէս պաշտպանեաց Աստուած հօր իմում , պաշտպանէ և ամենայն անմեղաց և փրկէ 'ի ձեռաց հզօրին և անիրաւին . և որպէս առերեւոյթ վհաւն զարհուրեցոյց զԼաբան , որ ունի զոխս և զօրինակ դժոխոց , նոյնպէս և զանօրէնսն արկանէ 'ի յատակս անդնդային սանդարամետական խորոց , ուր տանջին յաւիտեան .

ԳԻՐՔ ԻՆՆԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Ո՞ւր եղեն կուռքն Լաբանայ , զոր առեալ գաղտագողի պահեաց մայր քո .

ՅՈՎՍԷՓ

Թաղեցաւ 'ի ներքոյ երկրի 'ի կողմն Սիկիմացւոց . ՙՔանզի մինչ անդորր կայաք 'ի Թշնամւոյ , ոչ եւս ըստ առաջին օրինակի շտապաւ զՃանապարհն մեր չուէաք գնայաք . այլ յամենայն մարգագետինս և 'ի գեղեցիկ ծաղկաւէտ դաշտսն՝ ուր ոտք մեր հա-

սանէին, անդ զտեղի կալեալ հանդիստ տայաք վաստակաբեկ անձանց մերոց. և զխաչինս և զանասունսն՝ որ բազում էին ընդ մեզ թուով, արձակէաք յարօտսըն ճարակել. Յայնմ ժամանակի դուռն բացաւ ինձ պատմել հօր իմում զԼաբանայ կուոցն, եթէ առ մօրն իմում գտանիցին այնք թագուցեալք, զորս ՚ի խուզելն՝ հնարեցաւ պահել ՚ի ներքոյ պատատի ուղտուն. Զայս իբրև լուաւ հայր իմ, ժողովեաց, խմբեաց, ակըմբեաց զամենայն որդիս, զկանայս և զտուն իւր, յանդիմանեաց կշտամբեաց զամենեսին զմեզ, և ասէ. Յիրաւունս ապա եկն ուրեմն եհաս ՚ի վերայ մեր պատիժս այս. զի եթէ ոչ առ ձեզ իսկ էին կուռքն Լաբանայ, և յօժարամտութեամբ հատեալ կործանեալ էր ձեզ ՚ի գարշելիսն յայն, ոչ երբէք կարէր գտանել նա զմեզ. և ոչ յերկիւղ անհնարին զձեզ համակէր. Իսկ մայր իմ յղի գոլով կրտսեր եղբարբն իմով, առաւել լռութեամբ յայտնեաց նմա հայր իմ զիրաւացի բարկութիւն իւր. Եւ եղբարք իմ ամենեքեան պատկառանօք իմն կացեալ առաջի նորա, չիշխէին և ոչ զնեղուս իւրեանց շարժել յաղերս ապաբանութեան, առ ՚ի զնստուցանել զզայրոյթ սրտմըտութեան հօր իմոյ. քանզի ահ մեծ էր ՚ի վերայ մեր ամենեցուն յաստուածակոյս կողմանէ.

Այս օրինակ էր աստուածպաշտութեանն կրթութիւն հօր իմոյ. քանզի հայր էր նա, միանգամայն և քահանայ. վասն որոյ յամենայն գիշերի առանձնանայր նա միշտ արտաքոյ բանակին մերոյ, և յետ երրորդ պահու գիշերոյն ապա դառնայր, տալ հանգիստ բնութեանն. Աչք իւր ճնշեալ զարտասուս, որոց կաթիլք թանկագինք դեռ զայտիւքն իւրովք և զակամբք բբացն գարանէին, զհոգւոյն իւրոյ ցուցանէին զաստուածային զեղմունս և զյուզմունս. Քանզի կան֊

խէր նա առ Աստուած 'ի գուճս խոնարհեալ, և խնդրէր 'ի նմանէ ներել անգիտութեան գործոց ընտանեացն իւրոց. Որովհետև հայր էր նա որդւոց, և կամէր օրինակաւ անձին իւրոյ կրթել զնոսա 'ի բարի վարս և յաստուածպաշտութիւն. Զի հայր ոք հայր՝ եթէ հայելի առաքինութեան որդւոցն իւրոց լինիցի, և որդիքն անկարծիս զնոյն վարս յանձին փութան վերածել, որպէս գառն մատաղօրեայ որ զհետ մօր իւրոյ կրթիցի. Թէպէտ եւ բազում այն է՝ զի յոլովք 'ի մանկանց յանհարազատից գուցէ եղելոց, ոչ ջանան զնմանութիւն հօրն իւրեանց յանձին կերպարանել, 'ի չար ընկերացն թելադրեալք, որոց թոյնք սաստկագոյն քան զքարբեից և քան զվիշապացն ազդէ 'ի հոգիս իւրեանց.

Ծնողք՝ եթէ կամիցին ունել որդիս կատարեալս, աստուածապաշտ, խոնարհ, և պատուիրանապահ, իւրեանք նախ պարտին օրինակ լինել նոցին, ոչ միայն բանիւ խրատու, այլ և արդեամբք իսկ. որով կատարելապէս 'ի լաւութիւն աճեալ զնոսա և 'ի բարի կրթանս, յիշատակ բարեաց թողուն յաշխարհի յետ վախճանի իւրեանց. Իսկ եթէ չար օրինակ լինելով որդւոց մոլութեամբ իւրեանց, ոչ կազմեսցեն զանհարթութիւն բարոյից նոցին բարի դաստիարակութբ, այնպիսիք չեն արժանի կոչել հայր, այլ ցուցակ մոլութեան. յորոց ուսեալ և որդւոցն, և հետզհետէ յաճախեալ 'ի նոյն և 'ի բազում առաջս և 'ի ճիւղս բաժանեալ վայրագն մոլութեանց, հրդեհ արկանեն 'ի բարոյական աշխարհիս, խամրացուցանել և տոչորել անդէն զամենայն զմատաղերամ տունկս մանկութեան.

Համայն ով կենակից իմ սիրասուն, ջանասցուք և մեք օրինակ բարի լինել ոչ միայն աստուածապարգև որդւոց մերոց Եփրեմի և Մանասէի, այլ և ամենայն

քաղաքիս և աշխարհիս ․ Քանզի 'ի բարձրագոյն աստիճան իշխանութեան գոլով մեր , իբրու 'ի բարձր դիտանոցէ ակն յանդիման ամենեցուն տեսանին վարք մեր և քննին գործք մեր ամենայն ․ Ուստի եթէ օրինակ չար տացուք աշխարհիս՝ կրկնակի պատժիմք ․ մի վասն անկիրթ և անուղղայ զորդիսն մեր թողլոյ ․ երկրորդ՝ սակս պատճառելոյ մեր գայթակղութիւն հասարակութեան ․ որք յամենայնի զհետ լինին նըմանիլ վարուց և գործոց մերոց ․

ԳԻՐՔ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Յաղատիլ ձեր 'ի ձեռաց աներոյ հօր քո՝ քանզի ուրախութեամբ զերկայնութիւն ճանապարհին հատեալ գնայիք ․ քանզի 'ի բառնիլ թշնամութեան և կասկածանաց , զուարթադէմ յաջորդէ ցնծութիւն սրտապատար ․

ՅՈՎՍԷՓ

Օկնի զերծանելոյ մեր 'ի չարութենէ Լաբանայ և հաշտութիւն ընդ նմա խօսելոյ , ուրախալի պարտ և արժանէր արդարեւ ճանապարհորդութեանս մեր լինել , այլ ոչ այնպէս ․ քանզի հայր իմ առաւել քան զառաջինն մտախոհ կայր , և թուէր իմն ունել յանձին տխրութիւն ինչ , այնչափ 'ի յոյզս ծփանաց

ամփոփեալ կայր ։ Արմունկք համապազորդեայ աղօթից էին ՚ի բերանի իւրում, զոր արտասուախառն առաքէր ՚ի վեր ՚ի բարձունս, հայցելով յաներեւոյթ զօրութենէն փրկել զանձն նորա և զբովանդակ դերդաստանին իւրոյ ՚ի մօտալուտ արկածից վտանգէ ։ Իսկ իմ՝ անհաս գիտելին այսց խորհրդոց, և զամենայն երկիւղ կասկածանաց հօրն իմոյ համարելով իմն ծագեալ ՚ի սիրտ նորա յահէ աներոյն իւրոյ, մի գուցէ դարձեալ վերստին յարձակիցի ՚ի վերայ մեր, տղայական իմն համարձակութեամբ վստահացեալ մատեայ առ հայր իմ խաղաղապատեալ զնովաւ և ասեմ ։ Հա՛յր, անօրէնութիւն Լաբանայ հաւուն իմոյ այսքան դառն և անզեղջ իցէ ։ և յետ վկայ կանգնելոյ զԱստուած և կարկառ քարանց դիզելոյ ՚ի հաստատութիւն ուխտին, և այնչափ ՚ի մեծի ահի լեալ ՚ի տեսլեան իւրում յԱստուծոյ անտի, կրկի՞ն ունիցի յարձակիլ գալ դիմել ՚ի վերայ մեր և վտանգել զմեզ ։ Արդ եթէ վտանգ մեծ հասեալ կայցէ մեզ յերեսաց նորա, արագ արագ չուեսցուք, որպէս յելն մեր ՚ի Խառանայ, զի հեռացեալ ազատեսցիմք ՚ի նմանէ ։ Ասէ ցիս յայնժամ հայր իմ ։ Որդեակ իմ անմեղ, ՚ի ձեռաց փոքու թշնամւոյ անվտանգ թափեցաք զանձինս մեր մարտակցութեամբ ամենազօրին Աստուծոյ, այլ կայ մնայ մեզ այսուհետեւ թշնամի մեծ ոխերիմ առաջի մեր, վասն որոյ աղաչեմ զԱստուած փրկել զմեզ ՚ի զօրութենէ նորա ։ Եւ ո՞վ այն իցէ, կրկնեցի ես, միթէ զօրաւոր քան զԼաբա՞ն ինչ իցէ և ահարկու ։ Եթէ ախոյեան անպարտելի է նա, և որդի զօրութեան, ընդ այլ ճանապարհ խոտորեսցուք ։ զի լաւ է դեգերանօք զուղի բազմապտոյտ հատանել գնալ, քան ՚ի ձեռս թշնամւոյ անկանել ։ Կարի իսկ քաջ, պատասխանեաց հայր իմ, կամէի իմն և ես հեռանալ ՚ի նը-

մանէ և զարտուղել, այլ որդիական սէր իմ՝ զոր 'ի սրտի իմում տածեմ, տոչորէ զիս, և փութացուցանէ տեսանել միւսանգամ զհայր իմ բազմախնամ և զմայր իմ գորովագութ, անկանել միւսանգամ 'ի գիրկս նորա, յորում գգուեալ սնաւ մանկութիւն իմ. համբուրել զբարերար ձեռս նոցա և վայելել յօրհնութիւնս նոցին. Իսկ թշնամին՝ յորմէ երկնչիմ, է եղբայրն իմ հարազատ Եսաւ անուն նորա . . . . Ընդդիմեալ անդէն զթել բանից նորա՝ ասեմ. Հա՛յր, եղբայր քո թշնամի՞ յարուցեալ իցէ 'ի վերայ քո, և ո՞րպիսի ոք իցէ նա. ո՞չ չար և դժնդակագոյն է եղբարց համահարց և համամարց թշնամի և ոսոխ 'ի վերայ յառնել եղբօրն. Բա՛րբէ եղբայրատեաց բնութեանն և անհնարին անմարդութեան. Խնդրեմ 'ի քէն հա՛յր, պատմեա՛ ինձ ուստի՞ ատելութիւն նորին, և թշնամութեանն օճառ զի՞նչ. Լցան անդէն արտասուօք աչք հօր իմոյ, և ոչ զօրեաց պատմել ինձ մի յանընդհատ հեկեկանաց անտի. Քանզի և արփին եթերաճեմ, որոյ ճառագայթք լուսափիւռ ծաւալեալ փողփողէին 'ի վերայ բնութեանն գոյնզգոյն ներկանելով զամենայն, ծածկէր տակաւ զնշոյլ իւր, խաւար գիշերոյն ընդ նորա փոխանակեալ սեւաթոյր մթութբն. որպէս և 'ի միտս և 'ի խորհուրդս իմ տիրեաց տրտմութիւն տարակուսանաց վասն թշնամութեան հօրեղբօրն իմոյ Եսաւայ.

Ժամանակ ընթրեացն եկեալ հասեալ՝ ոչ ետ մեզ թոյլ երկարագոյնս զբանիւք անկանել. վասն որոյ հատեալ հօր իմոյ զթել պատմութեան իւրոյ, որում սիրտ 'ի բերան յակճիռս կայր 'ի լսելութիւն. և ժողովեալ եղբարց իմոց 'ի յատկացեալ վրան կերակրոյ, զտեղի կալաք զսեղանով. Օրէն էր հօր իմոյ նախ քան զկերակուրն կանգնել իւրաքանչիւր ումեք 'ի

տեղւոջ խորում ըստ երիցութեան կարգին, և ինքն բացեալ զբերան իւր օրհնէր և գոհանայր զԱստուծոյ. զի արժանի արար վայելել և յայսմ աւուր ՚ի պարգևս իւր հանդերձ ամենայն ընտանեօք իւրովք. և ասէր այսպէս. «Աստուած իմ քո են պարգևքս՝ զոր առատապէս շնորհեցեր մեզ, և բարութեամբքս այսու լցուցեր զմեզ. Ո՜վ բարեգութ Տէր, օրհնեա և այժմ զկերակուրս զայս անհուն գթութեամբ քով, և սփռեա զշնորհս քո ՚ի վերայ սեղանոյս, զի ընդ ծայրել մեր և ճաշակել զկերակուրս, ընդ նմին և զքաղցրութիւն մարդասիրութեան քո գտցուք ծաքեալ և ճաշակեալ. Ընդ՛ զքաղց սովոյ մարմնական ախորժակացս մերոց. առաքեա ՚ի մեզ Տէր զօրհնութիւն և զբան քո, որք միայն սնուցանեն և կեցուցանեն զմեզ. Պահեա զմեզ ընդ աջոյդ պաշտպանութե անդորրաւէտ կենօք, զի յամենայն ՚ի կեանս մեր յօժարափոյթ կանխեսցուք ՚ի համբոյր կամացդ հաճութեան. և քեզ միայնոյ մատուսցուք գոհութիւն և փառս, այժմ և յաւիտեանս յաւիտենից ամէն».

Զսոյն երգ փառաբանութեան իւրաքանչիւր ոք ՚ի մէնջ գիտէր ՚ի բերան. զի ՚ի ճիղմ հասակի անդմանկութեան, մինչև արձակեալ կապ լեզուի մերոյ, զսոյն զայս ուսուցանէր մեզ հայրն մեր, զոր դժուարութեամբ իմն թոթովելով կցկցէաք ձայնակից լինեալ զուարթինն հայրենի շրթանցն.

Լուա՞ր ո՛ քաղցրիկ կենակից իմ զհանդէս բարեպաշտութեան ծնողին իմոյ, և զկրթութիւն նորա յօրհներգութիւնս գոհաբանութեան, յորում և զմեզ անդանդաղ փութայր կամակար ընձեռել ՚ի պարապումն, որք յոլովագոյն մեզ ՚ի նեղքս ածեն զօգուտ. Այսպիսի իմն էր ՚ի փոյթ աղօթից, ջերմ վառեալ ՚ի սէր Աստուծոյն, և յերկիւղ նորին ընդ-

միտամ բեւեռեալ, ո՛չ ճաշակէր, ըմպէր, ննջէր և ոչ յինչ ձեռնամուխ լինէր առանց աղօթից և գոհութե. Քանզի 'ի նմին իսկ վրանի, յորում զսեղանն ճաշակէաք, անդ և 'ի ժամ պաշտաման աղօթիցն գումարէաք. Նուիրական էր վայրն, վասն որոյ ոչ համարձակէր ոք խօսել անդ այլ ինչ, բայց միայն ձայնք օրհնութեան և երգք գոհայողականք լսելի լինէին. Ո՛չ հանդիսարան խրախճանութեան էր վայրն, որպէս Եգիպտացւոցն այն, որք զժամ սեղանոյն ուրախութեամբ կամելով անցուցանել և բերկրանս իմն զուարթացուցիչս 'ի ներքս բերել, 'ի շաղփաղփանս և 'ի զաւեշտաբար խօսս հատանէին, և է զի՝ երգս անմաքուրս 'ի բերան առեալ ընդդէմ համեստութեան խենեշաբար 'ի վեր վազէին. Կագ և կռիւ անպակաս լինի 'ի նոսա, զի 'ի ջերմանալ նոցին բաժակաւն անապակ՝ անծանօթանան զանձինս իւրեանց, զեղխութիւնն անչափ և ումպն անյագ զգայազիրկ համակ զնոսա արարեալ. բոց հնոցի ատելութեանն, որ 'ի սրտին առկայծեալ թաքուցեալ կայ, վառ առնու բորբոքի, ցայտէ արտաքս և զմերձակայսն այրեալ տոչորէ, և զնոսա պատեալ ածէ 'ի հոծ և 'ի խիտ թշուառութիւն. այս է գործ և վախճան զեղխութեան. Իսկ մեր ոչ այնպէս ինչ էր սեղանն. յամենայնի չափաւոր և պարկեշտ էաք. Արիւն որթոյ անապակ մշկախառն կայր 'ի վերայ սեղանոյ մերոյ, այլ վայելէաք յայնմիկ՝ իբրև յօրհնութիւն Աստուծոյ. ուստի ոչ ոք անդ արբշիռ, և ոչ առաւելապէս տենչացող յումպ նորա. զի ամենեցուն չափով էր բաժինն ըստ առաւելութեան հասակին. Թէպէտ եւ չէր զարդարուն սեղան մեր զանազան խորտկօք և բազմատեսակ խահիւք, որպէս որկրամոլ Եգիպտացւոցն. քանզի առաւելութիւն տեսակացն կերակրոց՝ դժնդակագոյնս պատճառէ 'ի

մեզ ցաւս ախտաբերս ․ Զուարթք էին սիրտք մեր յայն սեղան անպաճոյճ ․ ուրախութիւն հոգեպարար կենակից էր մեզ միշտ , զի աստուածային շնորհիւն վայելէաք յայնմիկ ․ Նա մանաւանդ սակաւութիւն տեսակի կերակրոցն՝ դիւրացուցանէ զմարսումն յըստամոքսին , առաւելու զզօրութիւն մարմնոյն , զմեղկութիւն և զնուաղութիւն ՚ի բաց վճարէ , պնդէ ըզջիղս ․ ոչ ջերմացուցանէ զյորդութիւն արեանն , որով և ոչ իսկ կարօտի զովարար ըմպելեաց ․ Զի քանի՞ մեծ յիմարութիւն է խճողել զորովայնն յոլովագոյն կերակրովք , և ջերմացեալ ստամոքսին՝ փափաքել հով ըմպելեաց առ ՚ի հատանել զտապ ծարաւոյն , յորմէ բազում անգամ պատճառին հիւանդութիւնք անբուժելիք , և ՚ի դուռն մահու իջանել ․ Զորոց զառաջս առնուլ փութացեալ , և ոչ գիտելով՝ ուստի այն ամենայն ախտք և խօթութիւնք ՚ի ներքս դիմեն յինքեանս , երթեալ անկանին առ ոտս բժշկաց , յուսով՝ ապաստանեալ նոցին նըպաստից ․ Նաև փոխանակ բժշկութեան դիպելոյ ․ դառնագոյն դեղորայիւք զցաւս իւրեանց գտանին խարխարեալ ․ և կամաւ մատն լինին անձանց առողջութեան ․ Ոչ գիտեն եղկելիք եթէ առաջին պատուէր և կանոն առողջութեան է ՚ի բաց զանձն տանիլ ՚ի բազմախորտիկ սեղանոյն , չափաւորապէս վայելել ՚ի պարգեւսն Աստուծոյ , թէ և առատօրէն ընդ մեզ վարիցի բարութեամբք ․ գիտել պարկեշտանալ ՚ի կերակուրս և յըմպելիս ․

Արդ՝ ո՛ ամուսին իմ սիրասունդ , այսոցիկ ամենից քաջ իսկ կիրթ և հմուտ էր հայր իմ , յաղագս որոյ և զսեղան իւր ՚ի չափաւորութեան միշտ ունէր ․ Ո՜հ , քանի՜ երջանիկ լինէին մարդիկ , եթէ զայս օրինակ յաշխարհի վարէին ․ գոհութեամբ մատուցեալ

յաստուածապարգեւ բարութիւնս . ոչ զրկելով զաղ-
քատս 'ի սեղանոյ իւրեանց , այլ բարձակից զնոսա ին-
քեանց արարեալ , որով քաղցր և կամակ կերակուրն
նոցին պատահիցի . և մի՛ լցեալ որովայնիւքն անտես
զքաղցելոցն առնել , և շանթիւ յերկնուստ պատուհաս
անձանց կուտել . Իսկ արդ ջանասցուք մեք օրինակ
լինել մարդկան պարկեշտութեան և չափաւորութե՟ .
զի որոց գամ մի 'ի մեզ տեսանեն , ջանան նոցին նը-
մանող լինել . ոմանք առ 'ի հաճոյականս մեզ , և ո-
մանք 'ի բարիսն նախանձեալ կրթիլ . Քանզի ամենայն
չարիք և խակութիւնք յաւագորեար արանց սկզբնա-
ւորին . և առաւել ազդեն քաջակիրթ օրինակք ,
քան խրատք ապարդիւնք .

ԳԻՐՔ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Օ այդ ամենայն կարի իմաստութեամբ խօսեցար ,
ո՛վ ամուսին իմ սիրելի . քանզի զնոյն և ես խոստովա-
նիմ մեծ լինել պահոցն պնդութիւն , և օգտակարա-
գոյն առողջութեան՝ պարկեշտութիւնն յուսմ և 'ի
կեր . Այլ մնայ ինձ գիտել և ցանկամ յաւէտ , զինչ
պատճառ թշնամութեան էր հօրեղբօր քո Եսաւայ
ընդ հօր քո . պատմեա ինձ եթէ գիտես ինչ .

ՅՈՎՍԷՓ

Այր գիտեմ ուսեալ 'ի հօրէ իմմէ․ քանզի և զխա՞րդ հնար էր ինձ զանց առնել, և ոչ հարցիւ և փորձիւ լուծանել զհետաքրքրութիւն իմ, լուեալ զեղբօր ընդ եղբօրն ոխակալութիւն և զթշնամութի՛ն, որ ինձ արտաքոյ բնութեան իմն թուէր 'ի բաց վարել․ փոխանակ սիրելութեան և 'ի գութ եղբօրն ջերմաբար գորովելոյ, դառն և մահացու սպառնալեօք ընդդէմ նորա փքալ․ Վասն որոյ 'ի լսել իմում զառաջինն զեղբայրական ատելութիւն, սարսուռ ցրտութեան ընդ ոսկերս իմ խաղայր․ քանզի էին և իմ եղբարք, ուստի կալաւ զիս ահ և հոյն, մի՛ անձամբ զնոյն փորձ ուսանել․

Պարտ և արժան է մարդկան օգնել միմեանց, և սիրով ընդ միմեանս կենակից լինել․ յորոց և կրթե֊լոյն ուսեալ՝ զօրինակ նոցա կանոն գնացից իւրեանց ունիցին, և ըստ այնմ զվարսն ուղղեսցեն․ Իսկ եթէ ոչ սիրաշաղկապ միաւորութեամբ և բարեյարգար ընկերութեամբ ընդ միմեանս վարիցին մարդիկ, ըն֊թանալ ընթացից արտաքոյ մարդկային բնութեան, և գազանք դժնդակք զանձինս կացուցանեն․ Որ օրինակ որ չարագոյնն է 'ի գազանս, վասն առաւել կատաղութեան և անտառասուն բարուցն առանձ֊նացեալ 'ի խորշս ուրեք մայրեացն բնակի, ոչ խառ֊նելով 'ի ջոկս իւրոյ տեսակին․ Եւ բազմիցս իսկ այն է՝ զի յոլովագոյն դաժանութիւն նորին, պատ֊ճառ լինի սովամահ կորստեան անձինն․ քանզի ամե֊նայն կենդանեաց զգուշացեալ 'ի նմանէ, և 'ի սոս֊կալի մռնչելոյ նորին 'ի բաց ոստուցեալ խուսափին, և 'ի գիշատիչ ժանեաց նորա զանձինս գողանան․

Այսպէս է ամենայն ոք՝ որ վայրագութեամբ և ան-
հնարին դըժանօք ընդ ընկերացն և ընդ նմանիւն վա-
րեցի, ոչ մարդ բանական, այլ չարագոյն քան զան-
բան պատճառաւ արդեօք կոչիցէ ոք։ Ոչ մի ինչ խըռ-
րութիւն գիտէ նա 'ի մէջ բերել ընդ եղբարցն և
ընդ օտարս. մոռանայ զմարդկութեան օրէնսն, որ
պարտաւորէ հարկ առնէ ընկերութեամբ կենցաղա-
վարել, և միաբանութեան յօդիւն ծակցեալ՝ զկենաց
զծանրութիւն 'ի բաց դնել, կամ մեղմել։ Իսկ մինչ-
դեռ մոլեկան այս ատելութիւն բունեալ դադարի-
ցէ 'ի սրտի ուրուք, դժոխք զնորա զսիրտն յարդարէ.
յորում հուրն չարատանջ՝ քան զգեհենոյն բոց կիզա-
նողական բունութեամբն խռովեալ զնա 'ի ներքուստ,
անհանգիստ զանձն նորա կացուցանէ։ Իսկ կարծէ իմն
եթէ ատելութեամբն իւրով և քինախնդրութեամբ
չէջանիցի բոցոյն սաստկութիւն. այլ նա ևս քան
զևս այրի, բորբոքի, ծաւալի ընդ ամենայն ներքինսն,
և տանջեալ տոչէ զամենայն անձն նորին։ Ոչ ջրոյն
բնութիւն զօրէ շիջուցանել զատելութեանն բոց.
այլ խոնարհութեան և եւթ աղբիւրն իւրով մշտահոս
զեղմամբն կարէ խամրել զայն, սպառելով զնիւթ
նորա. առանց որոյ չէ հնար երբէք։ Քանզի գահոյս
արկեալ ատելութեան 'ի սիրտ մարդոյ։ յեցեալ 'ի
գաւազանն բարկութեան, ծուխ թանձրութեան հը-
րացեալ նախանձուն առաքէ 'ի դուրս, իբր սուր
երկսայրի՝ կամացն իւր գործադրիչ. որոյ գոլորշիք ընդ
ունգունս և ընդ բերանն ջերմախառն ելեալ՝ զտեսու-
թեանն գողանայ զզօրութիւն, որով բառնի 'ի միտաց
նորին արդարութիւն և իրաւունք, Իսկ բազում ան-
գամ ընկճեալ լքեալ յաւէտ 'ի հակառակամարտէն
իւրմէ, մահու խայտառակութեան զատելութեան
իւրոյ լուծանէ զբոց, և ընդ առաջ ելանէ նմին յա-

ւիտենականն հուր դժոխային հնոցին, մշտնջենաւորել զնորին տանջանսն.

Արդ՝ եթէ ոք կամիցի ատելութեան յաղթել, առցէ 'ի ձեռն զսուրն խոնարհութեան, համբերութեան վահանաւն զանձն պարսպելով. հեռասցի յամենայնէ՝ չտալ զէն 'ի ձեռն հակառակորդին. և առաւելապէս ջանալ բարեաւն յաղթել չարին, սիրելութիւն փոխանակ ատելութեան ցուցանել, հեզութիւն և ցածութիւն ընդդէմ մախանաց. Այլ ըստ որում ատելութիւնն յաւէտ իմն 'ի մէջ սիրելեաց և եղբարց գոյացեալ բուսանի, որք 'ի ժամանակս սիրելութեան մոռանան զչափ սիրոյ, վասն որոյ 'ի փոքրիկ կայծէ դառնայ մտերմութիւնն 'ի սուր ատելութեան, մինչեւ 'ի կորուստ միմեանց յանիշխելիսն ձեռնարկել, և լինել մատն փոխադարձ կենաց. Ուստի պարտ և արժան է 'ի կենցաղավարութեան ընդ սիրելիսն առաւել զգուշանալ, և զմէտ կշռոյ խոհականութեան ոչ թողուլ հակիլ 'ի հակառակ կոյս. քըննել նախ զբանսն 'ի միտս իւր, և մի զանսանձ լեզուն ընդդէմ օրինաց սիրոյ շարժիցէ, յորմէ և ատելութի̅ ծագիցի. զի յետ այնորիկ չիք եւս հնար ամոքել զնա 'ի քաղցրութիւն սիրոյ, և զառաջին մտերմութիւն ընդգրկել.

Իսկ պատճառ ատելութեան հօրեղբօր իմոյ ոչ մի ինչ յայսպիսեացս է, այլ տարօրինակ և անլուր. զի 'ի սակս որկրամոլ անժուժկալութեան կամովին դաշինս հաստատէ, ուխտ դնէ ընդ հօր իմոյ վաճառելով նմա զանդրանկութեանն օրհնութիւն և զպատիւ, որում յամենայն անձնէ իւրմէ բաղձայր փափաքէր հայր իմ. Այլ այս տուրեւառիկ փոփոխումն հաստատեալ հաճութեամբ կամաց երկոցուն, քանի՞ տարաբաղդիկ վախճանի դիպեցաւ, զոր ահաւասիկ

պատմեցից քեզ եթէ փոքր ինչ երկայնամտիցես ։

Հայր իմ ընդ ասուն իբրեւ զիս` ոչ հեռանայր բնաւ 'ի տանէ, այլ ընդ յատուկ խնամոք մօր իւրոյ 'ի բարեկեցիկ կեանս վայելէր, որոյ գութքն մայրենի առաւել ջեռնուին 'ի վերայ նորա` քան 'ի վերայ եղբօրն ։ Իսկ Եսաւ, քանզի անձնեայ էր և կորովի և արիական ոգւոյ տէր, դիպաղեղն և նետաձիգ, յորսորդութիւն պարապէր, և միշտ 'ի լերինս և յանտառամէջս զհետ երէոց թափառէր ։ Եւ եղեւ օր մի յաւուրց և ոչ գտաւ որս, և դարձաւ 'ի տուն ձեռնունայն ։ Հայր իմ, քանզի սիրելի էին նմա և քաղցր ընդեղէն կերակուրք, սիրող միշտ պարզութեան կենաց, ունէր առաջի իւր ոսպնաթան և ընթրէր ։ Եմուտ Եսաւ 'ի ներքս քաղցեալ. թէպէտ և ատելի էին նմա ընդեղէնք, այլ քաղցն ստիպէ և խնդրէ 'ի չիկաթանէ եղբօրն ։ Ասէ ցնա հայր իմ. Անախորժ են քեմաց քոց ոսպնաթանն իմ. մնա վայրիկ մի և ճաշակեսցես 'ի խորտկաց` զոր հանդերձէ մայր իմ վասն հօր իմոյ զենեալ ուլս պարարակս. կեր անտի և թող ինձ զչիկաթանն իմ ։ Տաց քեզ փոխանակ չիկաթանիդ զոր ինչ և խնդրեսցես, ասէ ցնա Եսաւ, միայն թէ կերայց անտի ցյագ ։ Տեսեալ հօր իմոյ և 'ի վերայ հասեալ բանից նորա, զի ոչ կեղծեօք, այլ անձկաւ բաղձայր ուտել 'ի թանէն, ասէ. Եթէ տացես ինձ զպատիւ անդրանկութեանդ, թողից քեզ ճաշակել 'ի չիկաթանէն ։ Եսաւ իսկ և իսկ, քանզի առ ոչինչ ունէր զանդրանկութեան փառսն, տայ նմա զայն պատիւ հանդերձ զգեստուքն ։ Իսկ հայր իմ գիտելով զբարս նորա, երդմամբ ետ նմա հաստատել զդաշինսն, և վկայ կացուցանել զԱստուած 'ի միջի իւրեանց, զի անդրժելի կացցէ մնասցէ ։

Մինչ այս մինչ այն և մայր նոցա մտեալ 'ի ներքս

՚ի նմին պահու, և տեղեկացեալ զբանէն, սաստէ նոցա. յանդիմանէ զԵսաւ թողուլ զշիկաթանն ցեղբայր իւր, և ճաշակել ՚ի խորտկացն զոր վասն ընթրեաց ունէր պատրաստեալ, և մի երդնուլ վայրապար յաղագս չնչին դաշանց. Յայնժամ ասէ Եսաւ ցմայր իւր. Ոչ են ինչ չնչին դաշինք մեր. ստուգապէս վաճառեցի զանդրանկութիւն իմ հանդերձ պատուովն եղբօր իմում Յակոբեայ՝ փոխանակ ոսպնաթանին իւրոյ, որոյ ՚ի հաստատութիւն վկայ կոչեցի զԱստուած, վկայ կոչեմ և զքեզ. մի ես այսուհետև ինձ ընձեռեսցես զհանդերձն, որ անդրանկաց և եթ սեպհականեալ է զգենուլ. Տուր զայն Յակոբեայ եղբօր իմոյ. նա է յայսմհետէ անդրանիկ որդի քո. զի քան զփառս անդրանկութեան՝ նախամեծար վարկանիմ զայս ոսպնաթան. Եկեր նա զթանն ցյագուրդ, և հայր իմ զգեցաւ զպատմուճանն գեղազարդ և ոսկեշուք. Յիշեաց յայնժամ Ռեբեկայ զբանսն՝ զոր նախագուշակեաց Աստուած ՚ի յղութեան նորին, եթէ՝ երէցն կրտսերոյն ծառայեսցէ.

Տեսանես սիրելի կենակից իմ, զտուրևառիկ փոփոխմունս, քանի՜ փափաքանօք և ջերմ յօժարութեամբ ՚ի նոյն բերին, և քանի՜ անդրժելի կայ հաստատեալ. զի ուր և միանգամ վկայ Աստուած մերձ դնիցի, ո՛չ ինչ է որ զնա ջնջեսցէ. Քանզի մին անյագ տենչանօք դիմէ ՚ի կերակուրն և յղփացեալ անտի ՚ի բաց ելանէ, և միւսն խնդութեամբ զանձամբ զպատմուճանն արկեալ, անդրանկութեան պատուոյն ստացմամբ ՚ի վեր ընթանայ. Այսպիսի էր հաճութիւն երկոցունց կողմանցն ընդ դաշինսն փոխանորդութեան, այլ քանի՞ դառն և ցաւագին վախճան նորին. Մի՛ ինչ զարմանար դու, զի որ ոչ գիտէ խոհական դատողութեամբ և կիրթ մտօք վարիլ, բազմիցս սխալի.

և անբաւական յուղղել զխալանսն . սրտմտի . կար-
ճամտի , և զայրացեալ ընդդէմ իրաւանցն անիրաւի .
Արդ իցէ՞ ինչ յաշխարհի տուրեւառ հաստատագոյն
քան զայս , ըստ որում վկայ է նորա Ճշմարտութիւնն
անստելի , որ զանիրաւսն պատժէ պատուհասէ , եթէ
դրժեսցեն դաշանց իւրեանց . Ապա որքան ուշիմութիւն
և խորագիտին տեսողութիւն հարկ է ունել յերդնուլն ,
զի մի՛ ստութիւն ընդ այնմ խառնեսցի . Զի եթէ
զգուշութիւն բազում պարտ է ունել մարդկան 'ի
դաշինս հաստատել վկայութեամբ այլոց . վասն
պատուոյ և յարգանաց իւրեանց , զի մի՛ արատ ինչ
անուն անձանց բառնայցեն , ապա որքան առաւել մեծի
զգուշութեան է՝ երդմամբ կապել դաշինս առաջի Աս-
տուծոյ , և վկայ զնա բանիցն կացուցանել . Քանզի
երդումն է՝ հաւատարմացուցանել զանհաւանսն ընդ-
ստուգութիւն իրացն հաստատելոց , կոչմամբ 'ի վկայ-
ութիւն զԱստուածն Ճշմարիտ . Ուստի եթէ ոք 'ի
սնոտի իրս զանուն Աստուծոյ 'ի մէջ բերցէ , անշուշտ
կրեսցէ զպատիժն , զի արհամարհեաց զամենօրհնեալ
անուն նորա . Զոր օրինակ , եթէ ոք վասն չնչին իրաց
'ի վկայութիւն իւրոյ շաղփաղփանացն զանունն Թա-
գաւորի 'ի մէջ արձանացուսցէ , իսկ և իսկ պատժի
'ի սպասաւորացն արքունի , զի ոչ ծանեաւ զարժա-
նաւոր պատիւ Թագաւորին . Որչափ եւս առաւել
մեծագունի պատժոյ չիցէ արժանի նա՝ որ վասն դուզ-
նաքեայ և չնչին իրաց զԱստուած կոչէ 'ի վկայութիւն .
և յումպէտս զանուն սուրբ նորա 'ի բերան առնու .
Ըստ սմին օրինակի պատժապարտ և համարապարտ
Ճանաչի և նա՝ որ յետ 'ի վկայութիւն բողոքելոյ զա-
նուն Աստուծոյ 'ի Ճշմարտութիւն բանից իւրոց , ապա
հակառակ դաշինն ինքն Թշնամի յառնէ , և զընդդէմն
նկրտի գործել . Ահա զերկուս զայսոսիկ տեսակս

մեղաւ Յեսաւ․ ոչ յիշեաց զերդումն իւր, և ոչ ուշ 'ի կուրծս արար զպայմանադրութիւնն․ անիրաւեցաւ ընդդէմ այնորիկ, և առաւել ևս քան զոյնս մխեցաւ նա յանօրէնութիւնս։

Արդ՝ ո՛ սիրեցեալդ իմ Ասանէթ, ջա՛ն 'ի գործ դիցուք և մեք սիրել զճշմարտութիւն, և 'ի բաց ըղստութիւն 'ի բանից մերոց արկանել, և փոյթ ունել զորդւոց մերոց զՅովսեփայ և զՄանասէ ճշմարտախօսս զնոսա յարդարել․ մի՛ երդմնակուռ, մի՛ երդմնազանց, ստերդումն և ստասաց, մի՛ երկմիտ և մի՛ անհաստատ․ Զի եթէ 'ի տիս մանկութեան սովորիցին միանգամ լինել ճշմարտաբան, ոչ ևս այնուհետև հարկ առնէ նոցա երդումն առաջի առնել 'ի բանս առ 'ի հաստատութիւն․ և ամենայն որք լոկ բանից նոցա իբրու երդման ընծայիցեն հաւատս․ Ապա աջալուրջ զգուշութեամբ մի՛տ դիցուք վարուց և բարուց նոցին, հեռի կացուցանել զնոսա յամենայն պարսաւելի ունակութեանց, կրթել 'ի բարիս, և կազմել անդամն պիտանիս հասարակութեան։

ԳԻՇԵՐ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ.

Ողջե՛մ զքեզ տէր, պատմել ինձ զի՛նչ փառք անդրանկութեանն իցեն,

ՅՈՎՍԷՓ

Փառքն անդրանկութեան՝ ոչ միայն երեւելի էին արտաքին պատմուճանաւ, այլ եւ անուանի եւ փառաւոր յեղբարսն հանդիսանայր անդրանիկն. եւ ՚ի մեռանել հօրն, զհայրականն յանձին ունէր զպատիւ. յորմէ ակն ածէին բովանդակ գերդաստանն իբրեւ ՚ի հօրէ. Իսկ ՚ի ժառանգութենէ հօրն, կրկնապատիկ քան զմիւս եղբարսն անդրանիկն ընդունէր զբաժին. Ի վերայ այսորիկ՝ ՚ի հասանել ծնողին ՚ի կէտ վերջին կենացն իւրոց, քան զամենեսին առաւել անդրանիկն վայելէր յօրհնութիւնս նորին, հայրաբար իշխելով ՚ի վերայ համօրէն գերդաստանին. Այլ հայր իմ ոչ բնաւ ցանկացաւ ինչ այսմ՝ փառաւորութեան, լինել քան զեղբայրն իւր մեծանուն, եւ գեղազգոյն իմիք պատուոյ աչս արձակել, կամ ՚ի վերայ եղբօրն իշխանաբար վարիլ. եւ ոչ իսկ զերեւելի եւ զոսկեհուռ պատմուճանն առ յարգի ինչ ունէր. Բայց հեռի էր ՚ի բնաւորութենէ հօր իմոյ պճնասիրութիւնն, ՚ի յարդ եւ ՚ի զարդ գեղափայլ զգեստուց զանձն փողփողեալ յօրինեալ, սիգաճեմ սիգաքայլ ընծայեցուցանել զինքն առ ամենեսին. Հանդերձք՝ ՚ի պաճուճանութիւն մարմնոյ հնարեցան, պատսպարել ՚ի ձմեռայնոյն եւ ՚ի ծածկոյթ մերկութեան. զի մի եւ նոյն օգուտ գտանէ որ, եթէ որ ոսկեհուռն ձգիցէ զանձամբ զդիպակ, եւ եթէ անզարդ եւ անհարթ ունիցի զկտաւակ. նոյն է երկոցունցն պաշտպանութիւն, ոչ առաւելեալ միոյն քան զմիւսոյն ջերմութիւն ընդդէմ սառնամանեաց ցրտութեան.

Իսկ որք զհետ լինին փափկութեան հանդերձից, պճնասէրք ոմանք զօրէն կանանց շփացելոց ՚ի պճրանս

և 'ի դեղ անձինն զարդուց, փառահեղ զգեստուք երևել, որ առաւել քան զարժանաւորութիւն վիճակին իւրոյ իցէ, զմտացն իւրոց զաղամարութիւն և զըրտութիւն յայտ առնէ. զի տգիտաց է և շամփշելոց՝ տարապարտ բաղձալ գեղաշուք և զարդարուն զգեստուց, որովք քան զամենեսեան գերազանց գոլ զանձինս իւրեանց վարկանին. Իսկ եթէ ոք ցանկանայցէ և փափաքիցի երևելի զինքն ընծայեցուցանել, զարդարեսցէ զմիտս իւր խոհական խորհրդովք, իմաստութեամբ, ընտիր գիտելեօք. և ջան 'ի գործ դիցէ յամենայն կեանս իւր զհետ լինել առաքինական գործոց, նախանձելի բարեմասնութեանց, որովք հաճոյ և պատուական զանձն կացուսցէ առաջի Աստուծոյ և մարդկան.

Զսոյն գործեն և մանկունք և բազմագոյնք 'ի մանկամիտ երիտասարդաց, որք անդստին 'ի ծնողական սիրոյ և 'ի փաղաքշական գգուանացն ուսեալ, ասպարէզ գտեալ արձակ համարձակ զփառասէր կիրս իւրեանց հաճեցուցանել, զարդարին և պճնին աւելորդ պաճուճանօք, յակն անկանել ամենեցուն, և փառաւորեալս զանձինս համարին. Իսկ որ իմաստունն իցէ և խոհական, տեսեալ զայնպիսիսն յայն իղձ փափաքանաց, ճանաչէն զնոցին զանկատարելութիւն մտացն՝ զվայրօքս յածեալ. որոց պարտ և արժան իսկ էր իղձ լինել հետևել իմաստութեանն զարդուք զհոգւոյն պաճուճել գեղեցկել, և զմիտսն յարդարել ծաղկանկար գիտելեօք.

Իսկ պճնասիրութիւն առաւել կանանց են ձիրք. որք և նոքին իսկ եթէ չափազանց 'ի նոյն ձկտիցին և բազում հոտոտանօք և պչրանօք զանձինս պաճուճեսցեն, կարծիս ինն տեսողաց տան չհաւատարիմ առամուսինս իւրեանց լինել. և զգաստումն միապէս գեղջ

անձանց և մանկաւդէմ տեսոյն արարեալ, մոգեալ զնոցին միտսն 'ի հրապուրանս. և վտանգեալ զողջախոհութիւն նոցին ցուցանիցին. Նաւ այն իսկ է գեղեցիկ զարդ կանանց, զոր 'ի բնութենէ ունիցին շնորհեալ ինքեանց և ոչ որ արուեստակեալ գեղովն վառիցին. Համեստութիւն բարուցն՝ Ճշմարիտ զարդ է կնոջ, և հանդերձ չափաւոր առանց փառացի պաՃուՃանաց՝ զպարկեշտութիւն անձինն ցուցանէ. պսակ է այնպիսին առն իւրում. իսկ եթէ քան զչափն զանցանիցէ 'ի պՃնութիւնս, գայթակղութիւն բազմաց լինիցի, և ինքն ըստ արժանւոյն զպատիժ յԱստուծոյ ընկալցի.

Ատելի են կանայք որք անառակաբար զգենուն. զաչսն դեղեն, 'ի ծարիր և 'ի սնգոյր շպարին, յերինագեղս զայտսն ներկանեն, կամելով յակն անկանել. որ գուսանաց և չամիչելոց է յանպիտան համակեյունայնասիրութեան կիրս. Իսկ դու համեստափայլ և ծնկասէր կենակիցդ իմ, յայսոցիկ ամենից 'ի բաց զանձն վՃարեալ, միայն փութաս սիրելի զքեզ ընծայեցուցանել յաչս իմ. քան զամենայն երկրաքարշ փափկութիւնսն և քան զպերՃանս զարդասէր կանանց. նախամեծար զհամեստութի և զհլութիւն պատուեալ. Արթեւմէր և զմիամօր դուստրն իմ յառաքինութեանս յայամիկ, զհետ գեղեցիկ շաւղացդ քոց ընթանալ. որով յարդարեալ զսիրտ և զհոգի նորա յանպաՃոյՃ պարզութիւն, արժանաւոր զնա կացուսցուք ողջախոհ խրախանաց առագաստին.

ԳԻՇԵՐ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Որի՞նչ այն օրհնութիւն իցէ, զոր հայր մերձ ՚ի վախճան կենացն ընծեռէ որդւոցն իւրոց.

ՅՈՎՍԷՓ

Օրհնութիւնն բարեմաղթութիւն իմն է ուղղեալ առ Աստուած վասն ուրուք, խնդրելով զշնորհս նորին ՚ի բարեմասնութիւնս հոգւոյ և մարմնոյ. յորանալ յղփանալ երջանկութեամբ և ամենայն բարեաց լնութեամբ. բարգաւաճիլ ՚ի սերունդս պանծալի, այլովքն հանդերձ. Քանզի ՚ի նախնեաց անտի աւանդութեամբ պահի սովորութիւնս այս գովանի ՚ի մէջ բարեպաշտից. որպէս ՚ի սկզբան արարչագործութեանն Աստուծոյ, օրհնեաց Աստուած զնախաստեղծ մարդն, իշխել ՚ի վերայ ամենայն արարածոց, աճել և բազմանալ և լնուլ զամենայն երկիր. Այսու արարչական օրհնութեամբս բազմացան մարդիկ. այլ վասն պատուիրանազանցութեանն արտաքսեալ յեդեմական դրախտէն, անկան յայս երկիր անիծապարտ. և որքան զօր մտեալ հաստատեալ ՚ի խնամս չարին և մեղաց, ՚ի բարկութիւն շարժեցին զԱստուած. Իսկ նա ջնջեաց զանօրէնս համօրէն աշխարհաւեր ջուրցն հեղեղաւ, զՆոյ միայն զաստուածապաշտ, որ ըստ օրհնութեանն և ըստ պատուիրանին Աստուծոյ զընթացս իւր կատարէր, փրկեալ ապրեցոյց փայտիւն տապանին. Եղեւ նա հայր աշխարհիս, զարդարեաց կրկին

զերկիրս, զորմէ կանխագոյն քեզ նախաձայնեցի. այլ
աստէն կամիմ զօրհնութեանն Աստուծոյ զներգոր֊
ծութիւն յայտնի առնել.

Այն սա զօրացեալ աջովն Աստուծոյ, աւանդեաց
որդւոց իւրոց զնոյն բարութիւնս օրհնութեամբ.
զոր և ժառանգեալ որդւոյ նորին Յաբեթայ, մնաց
՚ի գաւառին Արարատայ, անդ ուր հրամանաւ ամե֊
նակալին հանգեաւ Նոյեան տապանն. և սերունդք
նորա կորովիք և ՚ի նահատակութիւնս քաջընտիր.
Այս գովելի սովորութիւնս աւանդութեամբ եհաս
և ՚ի նախահարս մեր, որք բաղձային այսու օրհնու֊
թեամբս և երկնաւոր բարութեամբս լցուցանել
և ձոխացուցանել զորդիս իւրեանց. Իսկ զբարեացն
լնութիւն, զոր օրհնութեամբ հօրն ժառանգէր ան֊
դրանիկն, ոչ ՚ի լոկ բանից ծնողին ընդունէր, այլ ՚ի
հասանել հօրն՝ բարեպաշտութեամբ զարգացեալ.
յօրհաս մահուն իւրոյ, աստուածային ազդմամբն ա֊
ցեալ, աղաչէր զնա և հայցէր ՚ի նմանէ օրհնել զան֊
դրանիկ որդին ըստ ամենայնից բարութեան իւրում. և
ուր այս օրինակ բարեմաղթութիւնք լինէին յանուն
Ճշմարտին Աստուծոյ, անշուշտ և օրհնութեանն նո֊
րին արգասիք յորդեալ զեղանէին ՚ի նոսա. Քանզի
առաւել քան զբանս օրհնութեան և առուս արտա֊
սուաց հոսեալ՝ ջերմաջերմ խնդրէ յԱստուծոյ զանե֊
րեւոյթ զօրութիւն իւր հովանի առնել ամենայն տան
նորա և որդւոց. և զհայրական իշխանութիւնն շնորհէ
անդրանկի իւրում, ընդ նորին ձեռամբն ստորակար֊
գեալ զեղբարսն ամենայն. Ահա այս իսկ է օրհնու֊
թիւն՝ զոր օրհնէ հայր զորդիսն իւր.

Հայր իմ և Եսաւ եղբարք երկուորեակք էին.
իսկ որ ինչ մանկաբարձին են զրոյցք, զարմանալի իսկ
են ապաքէն, այնու զի և արգեամբք իսկ վճարեցան.

ՙՔանզի պատմէ նա զերկոցունց մաքառիլ ընդ մի-մեանս յարգանդի մօրն իւրեանց՝ զառաջինն լուծա-նել կամելով զերկունսն մայրենի. յառաջելն Եսաւայ լինել նախածին, բուռն արձակեալ հօր իմոյ զայն՝ ունի զգարշապարէ եղբօրն. այլ Եսաւ կանխէ քան զնա ՚ի ծնունդ, առեալ զանդրանկութեանն անուն, զոր ապա կամաւ վաճառէ հօր իմում.

Յետ ժամանակաց ինչ տեսեալ հաւուն իմոյ Իսահակայ զրկեալ զանձն ՚ի տեսութենէ աչաց, զօր-հաս մահուն իւրոյ մերձ ՚ի դրունս վարկուցեալ՝ կոչէ զԵսաւ առ ինքն, և հրամայէ նմա պատրաստել կե-րակուր յորսոյ, և առնուլ զօրհնութիւն իւր վերջին. Դիմէ սլանայ Եսաւ յորս ՚ի լերինս, և ոչ զմտաւ ածէ եթէ ոչ ևս ունի նա մասն յօրհնութենէ ան-դրանկութեան՝ զոր վաճառեաց եղբօր իւրում, ոչ ըզ-վկայութիւնն Աստուծոյ զոր կոչեաց ՚ի հաստատու-թիւն ՚ի մէջ իւր և ՚ի մէջ եղբօրն, և ոչ զերդումն անդրժելի. զի եթէ ընդդէմ դաշանց իւրոց յանդգ-նեալ յանձին գրաւէր զօրհնութիւնն հօր, կայծա-կունս հրոյ ՚ի գլուխ իւր կուտէր կուտակէր. Վասն որոյ արհամարհեալ անարգեալ զերդումն և զերկիւղ վկայութեանն, փութայր ձեպ տայր ՚ի կատարումն հրամանին յորս երէոց.

Իսկ Իսահակ հաւն իմ ՚ի դուձս խոնարհեալ. արտասուագին պաղատանօք յիշատակէր զխնամս անբաւ մարդասիրութեան Աստուծոյ. և հեկեկանօք հեծութեան նորին հասեալ յականջս կնոջ իւրոյ Ռեբեկայ, մտանէ առ նա. և ուշ եդեալ ՚ի վերայ հասանէ բանիցն օրհնութեան, զոր Եսաւայ կամէր ընձեռել. քանզի և եռանդագին ձեպ ընթացիցն Եսաւայ՝ զկարծիսն իւր հաստատէր. Յաղագս որոյ փութացուցեալ անդէն զհայր իմ բերել ուլս պա-

բարոս, պատրաստէ խորտիկս հաճոյ քմաց հաւուն իւրոյ. և տայ նմա ուտել առ հայրն, և կանխել առնուլ զօրհնութիւնս նորին. Յապուշ հարեալ Իսահակայ ընդ շուտութիւն հանդերձանացն, և հարցեալ զհայրն իւր, պատասխանի լսէ. այսպէս պատրաստեաց Տէր. Վասն որոյ գոհանալով զմարդասիրութենէն Աստուծոյ, և ճաշակեալ ՚ի խահլիցն, օրհնէ զհայրն իւր ամենայն օրհնութեամբք, իշխան կարգեալ զնա ՚ի վերայ եղբօրն. Մտանէ յետ սակաւուց և Եսաւ առ հայր իւր, բերելով նմա յորսոյն, և զամենայն օրհնութիւնսն գտանէ կատարեալ ՚ի վերայ հօր իւրոյ ըստ անդրանկութեանն իրաւանց. Ճիչ բառնայ, ողբաւանու, յարտասուս հարկանի. Ես եմ որդի քո անդրանիկ Եսաւ, գոչէ ողորմագին. Հիացեալ սքանչացեալ Իսահակայ ընդ իրսն, ոչ ինչ դժուարի ը̄ հայրն իւր, ոչ սասանէ և ոչ անէծս փոխանակ օրհնութեանցն կապէ ընդ գլուխ Յակոբայ. զի ոչ ինքն է տուիչ օրհնութեանն, այլ Աստուած, որ ըստ բարեհաճութեան կամացն օրհնէ զոր կամի. իսկ մարդն միջնորդութեամբ իւրով յանձն առնէ միայն ՚ի շնորհս և յօրհնութիւնս աստուածայինս. և Աստուած՝ որ քննօղն է սրտից և երիկամանց, ըստ ամենիմաստ գիտութեան և գթութեան իւրոյ լցուցանէ զմարդիկ ակսպէս պարգևօք և օճանաւ անհուն բարութեանն.

Ուստի եթէ որ միջնորդն լինել օրհնութեանն պատրաստիցի, և եթէ որ ընդունող օրհնութեանցն, պարտին երկոքեան իսկ ջերմեռանդն սրտիւ և աղօթիւք մատչել առ Աստուած, և այնպէս բաղխել զդուռն ողորմութեան նորին. Որպէս, օրինակ իմն, անձրեւ առատապէս իջանէ ՚ի դաշտս արդաւանդահողս և յակօսաբեկս դալարազուարճ կանաչացեալ, և ըստ ձգելոյ յինքեանս զտամկութիւն թօնիցն, տոհ-

մնկանօք հանդերձ զարդիւնս բեղմնաւորս ընձեռեն. Իսկ ուր վիմուտ և քարեայ վայրքն իցեն, ոչ այնչափ յաճախեն անձրեւք. և զոր ընդունիմն իսկ՝ ոչ արդիւնաւորեն, խստութիւն երկրին հակառակ ելով բուսոյն աճման, և մնան չոր և անբեր. Նոյնպէս և որք աստուածային օրհնութեանն ցանկան, պարտին նախ առաջին հերկել զսիրտս իւրեանց խոնարհութեան և ցածութեան արօրով. սրբել մաքրել զփշաբեր բոյսն մոլութեանց, որք հեղձուցիչք են բարեացն տնկոց, և անընդունակ կամաց Արարչին. և յետոյ ուրեմն ներկայացուցանել զանձինս յընդունելութիւն երկնային շնորհաց և օրհնութեան. Քանզի ընդ սիրտ խստացեալ իբրեւ զվէմ և զադամանդ, ոչ թափանցեն ներգործեն շնորհքն աստուածային, այլ ՚ի հեզահամբոյրս և ՚ի խոնարհամիտս եւեթ հանգչին՝ և յորս դողանն ՚ի բանից նորին.

Հապա ո՛ կենակիցդ իմ Նանէթ, ջան դիցուք և մեք արժանաւորս կացուցանել զորդեակս մեր ըղմատաղահասակս օրհնութեանն Աստուծոյ. Սրբեսցուք այժմէն զսիրտս և զմիտս նոցա ՚ի վնասակար ունակութեանց. մի՛ տեղի տացուք մոլութեան մուտ գտանել ՚ի միտս նոցա, և խամրել զանմեղութիւն հասակին. Կրթեսցուք զնոսա լինել հեզ, գթած և մարդասէր. Մի՛ ներեսցուք բնաւ երբէք անմարդի գործոցն և անհարթ գնացից նոցին. յամենայնի յօրինակ ՚ի մէջ բերցուք նոցա զառաքինի գործս, զորս ուսեալ և ինքեանք՝ ընձիւղեսցեն ծաղիկս առաքինութե՛, բուրել հոտ անուշարար ՚ի քիմս մարդկան, և հասուցանել պտուղս բարեմասնութեանց յօրինակ նախանձելի համօրէն աշխարհիս. Եւ այս իսկ է արժանաւոր մերումս մեծափառութեան, որդիս ունել կատարեալս, և զարդացեալս յօրհնութիւնս և ՚ի շնորհս Աստուծոյ.

ԳԻՐՔ ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Ընդէ՞ր ոչ յայտնեաց Հայր քո զկամօքն վաճառումն անդրանկութեանն Եսաւայ, և զերդմունս նորա և զհաստատութիւն դաշինն վկայութեամբն Աստուծոյ, որով յայտնի լինէր անիրաւութիւն նորա.

ՅՈՎՍԷՓ

Ի նմին պահու տեսեալ Հօր իմոյ զհեծութիւն, զողբ և զաշխարումն եղբօր իւրոյ վասն զրկելոյն յօրհնութեանցն, խոյս տայ, երկուցեալ ՚ի կատաղի բարկութենէ նորին, և դիմէ ՚ի խորան անդր՝ ուր աղօթք առ Աստուած մատչէին. անկանի ՚ի վերայ երեսաց իւրոց, խնդրէ յԱստուծոյ արտասուօք և ասէ. "Աստուած բարերար և ամենագթած, երկայնամիտ և բազումողորմ, դու միայնդ ես քննօղ սրտից և երիկամանց. ոչ ինչ ցանկացայ ես օրհնութեան Հօր իմոյ առ ՚ի խլել ՚ի վերայ եղբօր իմոյ, զի դու միայն ես որ օրհնես զամենեսին. Ցանկանալով ցանկացայ ես առաւել քան զկեանս իմ՝ օրհնութեան քում, զոր ՚ի ձեռն միջնորդութեան Հօր իմոյ պարգեւեցեր ծառայի քում, վասն որոյ փութով ՚ի նոյն աճապարեցի կանխել և վայելել. Ո՜ ամենամեծ և ամենառատ Տէր, օրհնեա՛ աստուածային օրհնութեամբդ և զեղբայրն իմ. զի դու ես Տէր և իշխան ՚ի վերայ մեր երկոցունցս, և ամենայն աշխարհիս լրութեան. Հեռի է յինէն իշխանութեանն փափաք՝ տիրել ՚ի վերայ եղբօր իմոյ.

ըստ օրհնութեանն զոր օրհնեաց զիս հայր իմ, թէպէտ և իրաւամբք ինձ անկանէին այնք վասն անդրանկութեան իմոյ, զոր 'ի նախատինս անձին իւրոյ վաճառեաց ինձ եղբայր իմ. Աւանի Տէր իմ և Աստուած իմ, զոր միանգամ արարի՝ ըստ հրամանի քում էին. զի դու վճռեցեր յարգանդի անդ՝ կրսերոյն լինել երէցն 'ի ծառայութիւն: Արդ 'ի քումդ ազդմանէ և 'ի պարտաւորութենէ դաշանցն վստահացայ բերել այսմ. այլ խնդրեմ ներողամիտ լինել ինձ, և պահել զիս 'ի բարկութենէն Եսաւայ ».

Տեսանեմ սիրելի կենակից իմ, զբարեպաշտ ջերմեռանդութիւն և զցածութիւն սրտի հօր իմոյ, զիա՛րդ զերկրաւ առաջի Աստուծոյ բերի յաւուր նեղութե, բոլորանուէր զինքն ընծայելով կամաց և ողորմութեան նորին. Ոչ չարիս վասն եղբօրն մաղթէ. ոչ զարտմնութիւն բարկութեան Աստուծոյ կոչէ 'ի գլուխ նորա. ոչ զանիրաւութիւն նորին և ոչ զերդմնազանցութիւնն յիշէ ինչ, և ոչ իսկ խնդրէ զօրութիւն իշխել 'ի վերայ եղբօրն ըստ արդարութեան օրհնութեանցն հայրենի, այլ միայն զի զանձն 'ի չարութենէ նորին 'ի բաց վճարեսցէ. Քանզի Եսաւ 'ի սաստիկ կիրս բարկութեան իւրում՝ սպառնալիս մահուան կապէր ընդ գլուխ իւր վասն օրհնութեանցն զոր յառաջեաւ քան զնա անձինն ունէր սեփականեալ, և զրկանս լինքեան զնոյն համարէր.

Եկ դու ինձ աստանօր Ասանէթ, և երեւակայեա 'ի միտ քում զվայրն՝ յորում այս ամենայն հանդիպեր, և տեսջիր ողորմ՝ տեսարան արժանաւոր կարեկցութե. Ծ՛ի հաւն իմ Իսահակ տեսեալ զդոյժ աղաղակի անդրանկի իւրում, որ սիրելին էր ըբացն իւրոց, և կամէր օրհնել զնա. այլ բարեխնամն Աստուած դարձոյց զօրհնութիւնսն առ հայր իմ. Աբրահամեայ ընդ

այս Իսահակ և յապուշ հարկանի, լուեալ զմեծա-ձայն ողբումն նորին, և զկոծելն, առաւել ևս 'ի լռութիւն համակի. նոյնպէս լաց և զձայն Յակոբայ՝ զոր առ Աստուած յերկինս բարձրացուցեալ, զգթութի՛ նորին հայցէր. Իսկ մայր նոցա զերկոսին որդիսն իւր յայն վիճակ ընդդիմամարտելի նկատեալ, չգիտէ զո՛րն սաստել և զորն մխիթարել. երկոքին ևս գորովք աղեացն իւրոց. զմին տեսանէ 'ի սուգ անմխիթար զա-ռածեալ, և զմիւսն 'ի խինդ՝ խառն ընդ տխրութեան. 'ի խինդ՝ վասն օրհնութեանցն, և 'ի տխրութիւն՝ վասն վշտաց եղբօրն. Վասն որոյ ոչ գտանելով ելս իրացն՝ նուաղեալ անկանի մայրն եղկելի առաջի հաւուն իմոյ. Աղետալի էր տեսիլն. զի և սպասաւորք անգամ և խաշնարածք գարշ արարեալ ընդ երեկս 'ի տուն, և զպատճառ ողբոցն և տխրութեանն անգիտացեալ, զորդիսն և զտիկինն 'ի յուսահատութեան և յանմխի-թարութեան գտեալ, զրկեալ զանձինս համարին 'ի բարեգութ խնամոց Արարչին. վասն որոյ փոխանակ զաւուրն զքրտնաջան վաստակս երկոցն լուծանելոյ առտնին խնդութեամբ, ողբակից և տրտմակից զին-քեանս նոցին կացուցանեն.

Տեսանես զի՛նչ պատճառ ողբերգութեանցս լցէ և անհնարին վշտացս. անհաւատարմութիւնն եւեթ ընդդէմ երդման. Իա՛րէ, քանի՛ մեծամեծ անիրա-ւութիւնք յառաջ գան 'ի յանդուգն կամաց և յան-ընտրօղ մտաց. զի եթէ ոչ զարդարութիւն նախ քան զձեռնարկելն 'ի գործ՝ քննիցէ և ընդաճեալ խոկայցէ. գիտէ զաւաղս ունել որոց առ 'ի նմանէ անիրաւու-թիւնքն իցեն. և Ճշմարտութեան ձայնին կամակար ունկն մատուցանէ, և ոչ մթագնեալ ակամբ և խա-ւարեալ մտօք՝ ջան տանի չարիս ինչ հասուցանել ո-տոխի իւրում, եթէ ոչ իրաւամբք ինչ յաղթել նմա

մարթանայցէ, և հաւատայ՝ 'ի մահ նորա զանձն մխիթարել.

Ահա ըստ այսմ անխրաւութիւն 'ի սրտի իւրում խորհեցաւ Եսաւ. և առ 'ի կատարել զնոյն՝ սպասէր մահուան հօր իւրոյ, զի ընդ նմին և զեղբայր իւր կենդանւոյն իջուսցէ 'ի դժոխս. Վասն որոյ և Իսահակ հաւն իմ, թէպէտ եւ զառաջինն անգիտութեամբ օրհնեաց զհայր իմ, այլ ապա զխորհուրդս չարութեան սրտին Եսաւայ իմացեալ, և 'ի վերայ հասեալ մտաց նորին, գիտութեամբ և կամաւ օրհնէ կրկին և ասէ. Օրհնելով օրհնեցի զնա. և եղիցի օրհնեալ. ցուցէ զնա Աստուած ամենայն բարութեամբք երկնից և ճոխութեամբք երկրի, և իշխեսցէ 'ի վերայ եղբօր իւրոյ. Այլ զիջեալ և յարտասուս Եսաւայ և յոլովագոյն թախանձանացն՝ օրհնեաց և զնա ասելով. Պարարտ երկիր եղիցի բնակութիւն քո, և ցօղք երկնից տացեն զհաց քո. և սրով քով կեցցես, և ծառայեսցես եղբօր քում. Ո՛հ քանի մեծ զանազանութիւն է 'ի մէջ օրհնութեանցս և օրհնութեան. զմին երկնաւոր բարութեամբք և երկրաւոր փարթամութեամբք ճոխացուցեալ, ընդարձակէ զիշխանութիւն նորա, ձըգեալ մինչեւ ցեղբայր իւր. իսկ միւսոյն՝ ոչ եթէ զերս պարարտութեան լիաբուռն հրամայէ երկրին նմա մատուցանել ինչ, այլ հարկ 'ի վերայ կապէ նորա բազմաքիրտն երկամբք 'ի խնդիր լինել արդաւանդահող երկրի, և 'ի նմա ունել զբնակութիւն. և անդաստանք նորին 'ի ցօղոյ տարափոյ երկնից ըմպել ըզջուր, որ նուազութիւն բեղմնաւորութեան ցուցանէ. վասն որոյ՝ պիտի նմա սուր, իբր ոչ եթէ առ 'ի իշխել ինչ, այլ առ 'ի հայթայթանս աւուրն պարէնի. քանզի այն իսկ է իշխան՝ որ զօրհնութիւնն ընկալաւ, իսկ սա ծառայ նմին կարգեցաւ.

Այսոքիկ էին ամենայն արարողութիւնք ծերոց յօրհնելն զորդիս իւրեանց, սեփականեալ նոցին զպաշտօնն և զվիճակս. իսկ մատակարար օրհնութեանցն էր բարեխնամն Աստուած. Յաղագս որոյ և ըստ օրհնութեան ծնողին լցաւ լիացաւ և հայր իմ ամենայն երկնաձիր բարութեամբք. իսկ Եսաւ աստանդական թափառ առնոյր բազմաշրջիկ տեղափոխութեամբք, զսուր իւր պաշտպան ունելով անձին իւրում.

Յետ այսր ամենայնի պատուէր հրամանի տայ Իսահակ հօր իմում՝ տեղի տալ առ ժամանակ ինչ և հեռանալ 'ի նմանէ, զի հրացեալ նախանձ և չարութիւն սրտմտութեանն Եսաւայ շիջեալ զնստանիցի.

ԳԻՐՔ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Յո՛ր կողմն դէմ եղեալ գնայր վտարանդի հայր քո յերեսաց վայրագն սրտմտութեան և անհնարին վրէժխնդրութեան եղբօր իւրոյ.

ՅՈՎՍԷՓ

Ի կողմն Խառանու առ ազգակից մօր իւրոյ Լաբան. զի բարիոք վարկան ունել որդի կենդանի 'ի նժդեհութեան, քան առ իւրեանս՝ 'ի վտանգի մահուան և փորձանաց. Նա զի՝ և որ զօրհնութիւնն ծնողական ընկերակից իւր ունիցի յօտարութեանն,

Մեծի արգասաւորութեան և բարեաց է այն նշանակ. զի յամենայն ուրեք զանդորրաւէտն համբուրեալ ըզ-վիճակ, տոհմականօք հանդերձ վերադառնայ 'ի հայ-րենիսն 'ի գիրկս ծնողաց իւրոց, յանբաւ խնդութիւն գորովական սրտից նոցին. որպէս և է իսկ տեսանել զայս 'ի հայրն իմ Յակոբ. Քանզի պարգեւատու-օրհնութեան, որպէս ասացաք, նոյն ինքն Աստուած է. ուստի յօտարութեան անդ ունի զամենայն, ըստ ո-րում ընդ նմա է Աստուած. և ուր Աստուած է, անդ է ամենայն բարեաց լնութիւն. Յաղագս որոյ հայր իմ ըստ հնարագիտ համճարեղութեան մօրն իւրոյ, որ յամենայնի զամենայն դժուարագոյն իրացն գտանէր զելս, հեռանայ 'ի հայրենեացն, հնազան-դեալ կամակար հրամանի նոցին.

Կին Եսաւայ, որ էր 'ի Քանանացւոց անտի դըս-տերաց, էր կռապաշտ և անթլփատ ազգաւ, որք էին և ատելիք յոյժ յաչս ազգատոհմին իմոյ. զի արտաքոյ ամենայն օրինացն ընթանայլն՝ վայրենասունք գոլով և անմարդիք, չարք և յանդգունք. Մինչ զի ձանձրա-ցեալ և պժգեալ երբեմն Ռեբեկայ հանւոյ իմոյ 'ի դստերաց նոցին, քրթմնջէր զնոցանէ առ այր իւր Իսա-հակ. առաւել համարէր զմահ խաղաղական, քան առնուլ կին յայնցանէ որդւոյ իւրում սիրելւոյ Յակո-բայ. Ո՛ւի զի՞նչ այնուհետեւ լինիցի մեզ, ասէր, եթէ յազգացն անթլփատից և անօրինացն ածիցեմք մեզ հարսն, և խնամութիւն ընդ այնպիսեացն կապի-ցեմք. զի՞նչ ապա և որ 'ի նմանէ ծնունդքն լինիցին. զի այնպիսւոյ մօր՝ նոյնպիսի և դստերքն և ուստերքն ապաքէն իցեն. Քանզի առաջին դաստիարակ ման-կանց՝ նոյն ինքն մայրն է. իսկ եթէ մոլեկան ախտիւ, անհարթ և անմարդ բնութեամբ իցէ զգածեալ նա, այնպիսիք ոմանք անշուշտ և որդիքն նորա եղիցին.

որպէս գառն նորածին զհետ մօրն իւրոյ կրթիցի, և ՚ի նոյն վտանգ՝ յոր մայրն անկեալ, և ինքն անկանիցի, մինչև տակաւին զփորձ վտանգացն ուսեալ. Այն լպիրշ և անհամեստ ժանտախտ է մարդկային ընկերութեան, և դստերք նոցա առաւել քան զարածութիւն խամրեալ թարշամեցուցանեն զանմեղութիւն պարմանեաց, թունաւորեալ դեղեալ զանդին քաղցրութիւն աշխոյժ կենաց և առողջութեան նոցին, և բազմիցս իսկ վաղամեռիկ յաշխարհէ ՚ի բաց լուծեալ. Արդ՝ զխա՞րդ համարձակեսցուք, որպէս յանդգնեսցուք ածել որդւոյ մերում կին ՚ի դստերացն Քետայ, որ զայսպիսի վարս յանձին ունիցի. ապա լաւ է զի աւաքեսցուք զնա ՚ի Խառան առ Բաթուէլ եղբայր իմ, ածել անտի ինքեան կին. Քանզի հեռացեալ նորա առ ժամանակ մի ՚ի մէնջ, գուցէ և բարկութիւն Եսաւայ, որ չարիս և մահունս փքայ նմա, խաղաղիցի և լուծցի ՚ի ցասմանէն.

Յանկուցեալ Իսահակայ ընդ համոզակեր բանս կնոջ իւրոյ, հարկեցուցանէ զհայր իմ տեղի տալ ՚ի նոցանէ և գնալ ՚ի Խառան, առնուլ անդ ինքեան ՚ի կնութիւն ՚ի դստերացն Բաթուէլի. և լինել անդ ժամանակս ինչ. Յուշ ածեն նմա փոյթ ՚ի մէջ առնուլ արժանի զանձն օրհնութեանցն կացուցանել, զի պտղաբերեալ արդիւնաւորեսցեն յանձին իւրում. ապսպարեն նմա պինդ կալ յաստուածպաշտութեան, և մի խոտորիլ յաջ կամ յահեակ, յամենայնի զուղղորդն կալեալ զշաւիղ, որով լցցիս ասեն ամենայն բարեաց լիութեամբ, փառօք և գովութեամբք. և զիցիս հայր ազգաց բազմաց, և յորդւոյ քումմէ օրհնեսցին ամենայն լեզուք.

Ելանէ հայր իմ ՚ի Ճանապարհ առանց հանդերձանաց, ՚ի կերպարանս մուրեալ աղքատի՝ անինչ և աղ-

կաղկ. ո՛չ յերկնավառ աշտանակեաւ, ոչ ձի ոսկեսար և ոսկեսանձ կազմեալ, ոչ ՚ի լկտիս և ՚ի նստիս բազմեալ, ոչ զէն և աղեղն կրեալ. այլ հետիոտս ընթացիւք, ցուպ ունելով միայն ՚ի ձեռին, զի մի ՚ի մախանս բերեալ Յեսուայ, պնդեսցի զհետ նորա, և զոր երկնէրն ՚ի մտի՝ զմահուն վէրս ՚ի վերայ դիցէ նորին. Իսկ հայր իմ թէպէտ և տխուր և տրտում վասն ՚ի ծնողացն բաժանման, այլ ուրախ էր վասն օրհնութեցն. Ի սկզբան անդ՝ դառն և դժուարին երեւեցաւ նմա միայնակն Ճանապարհորդութիւն, այլ ՚ի յանձնել զայն ամենայն՝ կամաց և տնօրէնութեան Աստուծոյ, դիւրեցան նմա ամենայն առապարք. Յանձն առնէր նա զանձն իւր Արարչին, որ ո՛չ երբէք թողու անխնամ զյուսացեալսն ՚ի գթութիւն իւր. և որ զօրհնութիւնս իւր ոչ ինչ անխնայեաց շռայլել նմա, զի՞արդ յարդասիս օրհնութեանցն ագահիցէ, նա որ առատն է միշտ ՚ի բարութիւնս իւր. Այսու բարեպաշտ խորհրդածութեամբք և աղօթիւք հառանէր գնայր հայր իմ զճանապարհ իւր՝ ուրախ և զուարթ դիմօք, և էհաս ՚ի Խառան. և կատարեալ անդ զընթացս սահմանեալ ժամանակին, վերադառնայ ՚ի հայրենիսն բազմութեամբ յոյժ, ո՛չ միայն սպասաւորաց, ծառայից և աղախնայց, այլ և մետասան որդւովք և միով դըստերաւ. Թո՛ղ զյոլովութիւն խաշանց, արջառոց, և ուղտուց, որովք իբրեւ ահագին բանակ մարտացու հանդերձանաց երեւէր չու մեր.

Ահա այսչափ է ներգործութիւն աստուածային օրհնութեանց, ո՛ սիրելի ամուսին իմ, զոր ՚ի ձեռն մարդկան շնորհէ արժանաւորաց. վասն որոյ ըղձալի է ամենեցուն ընդունել զայն. Այլ որպէս ոչ ամենայն ոստրէոք՝ որք ընդունին յինքեանս զցօղ և զանձրեւ երկնից, գոյացուցանեն մարգարիտս, այսպէս և ոչ ամ

մարդ՝ որ զօրհնութիւն ընդունի, գիտէ զօրհնութեանն յարգ. զի որպէս խեցեմորթքն այնոքիկ յետ ընդունելոյ զցօղն և զանձրեւն, փակեն զբերանս իւրեանց, ոչ եւս ճաշակեն ՚ի դառն և յաղի ջուրց ծովուն, և ոչ զհետ ժամանց լինին ուտելոյ. քան զի յընդմիջանելն ՚ի նոսա ծովային ջուրց, կորուսանեն անդէն ըզյստակութիւնն և զպատկութիւն իւրեանց. նոյնպէս և ժամունքն ապականեն զհիւթ գոյաւորութեան մարգարտահատին. Ըստ այսմ օրինակի՝ և որ առնու զօրհնութիւն, պարտի զժուժկալութիւն յանձին ունել և զմեծ զգուշութիւն. ոչ ճաշակել զմեղացն դառնութիւն, որ քան զծովու ջուրսն դառնագոյն է. և զմիտսն պահել անարատ յապականեալ խորհրդոց՝ և ուղղել միայն առ Աստուած, խնդրելով ՚ի նմանէ արդիւնաբերս գործել զօրհնութիւնսն.

Զայն օրինակ ահա յանձին ունէր հայր իմ. ընկալեալ զհայրենի օրհնութիւնսն, ոչ ըստ հաճոյից իւրոց մնացն ընթանայր, վստահացեալ ՚ի նոցին ներգործութիւնսն, և կայր մնայր ինչ ինքն անհոգ. այլ յամենայնի նուիրէր զանձն կամաց Ճշմարտին Աստուծոյ. հայցելով ՚ի նմանէ հանապազ պահել զինքն ընդ ամենաքաղցր հովանաւորութեամբ իւրով, և ոչ անմասն յօգնականութենէ թողուլ. Ոչ տալ սասանութիւն ոտից իւրոց, և ոչ խոտորումն կամաց իւրոց ընդդէմ աստուածային պատուիրանաց. այլ լուսաւորել զմիտս իւր ՚ի լոյս աստուածգիտութեան իւրոյ, և ծագել ՚ի միտս իւր զճառագայթ շնորհացն, որով զօրացեալ՝ կարասցէ արդիւնաւոր առնել զօրհնութիւնս ծնողաց իւրոց, որպէս երկիր բարեբեր և արգաւանդ. Յաղագս որոյ և արժանացաւ իսկ գըտանել զփափաքելին օգնութիւն, ահաւորագոյն իմն տեսլեամբ յերկրէ յերկինս կանգնեալ սանդուղք.

յորում և Աստուած երևեալ նմա, խոստանայր օգնել ինքեան և փրկել յամենայն վտանգից.

Այսչափ էր ջերմեռանդ իղձ հօր իմոյ առ պաշտեւմն Աստուծոյ. ուստի և մեր օրինակի նորին զհետ երթեալ, խնդրեսցուք ՚ի բարեխնամ Արարչէն ոչ թողուլ զմեզ սայթաքել ՚ի մոլութիւնս. այլ ըստ օրինացն իւրոց ուղղել զայնոսիկ, զոր անդստին տպաւորեալ ունի ՚ի միտս մեր, և ամենայն ոք ճանաչէ իւրեւ կանոն գնացից և վարուց իւրոց. Բայց որպէս ոչ կարեմք առանց լուսոյ զառաջօք առարկայս տեսանել, թէպէտ և զաչս մեր միշտ բաց ունիցիմք, նոյնպէս առանց օգնականութեան և շնորհացն Աստուծոյ, որք լոյս տան շաւղաց մերոց, ոչ կարեմք անմոլար ընթանալ յօրէնս նորա. Քանզի շնորհացն Աստուծոյ նշոյլք՝ համգոյն արեգական ճառագայթից ծագեալ ՚ի միտս մեր, լուսաւոր համբուն զմեզ կացուցանեն գիտել ճանաչել զամենայն զկամս նորա, և զօրինացն զօրութիւն, և ընդ նոյն բերիլ անդայթ և անսայթաք. Հապա ցանկասցուք և մեք շնորհաց նորին. կանխեսցուք համապազ խնդրել զնոյն առաջնորդ ընթացս կենաց մերոց, որով լուսաւորեալ մեք արասցուք ըզհաճոյս Արարչին մերոյ, և զորդեակս մեր ՚ի նոյն փութասցուք կրթել ՚ի վարժս.

ԳԻՇԵՐ ՎԵՇՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Օ՛ր ինչ էր աչաւոր տեսիլն զոր ետես հայր քո, սանդուղք յերկրէ յերկինս բարձրացեալ, ընդ որ և զօրք երկնային ելանէին և իջանէին.

ՅՈՎՍԷՓ

Բաժանեալ հօր իմոյ 'ի ծնողաց իւրոց, և հեռա-ցեալ 'ի հայրենեացն, մինչև հասեալ 'ի Բեթէլ, իջանէ արեգակն 'ի մուտս իւր՝ խոյս տալ յետկոյս լերանցն բարձրաբերձից. Վասն որոյ և ինքն անդէն զետեղեաւն երեկօթս առնէ, և կատարեալ զպաշտօն աղօթիցն ըստ սովորութեան իւրում, ընկողմանի՝ վէմ փոխանակ բարձի ընդ սնարիւքն ունելով. և վաստա-կեալ յերկար ճանապարհին՝ քաղցր 'ի քուն մտանէ. Սակայն հոգածութիւնք և ծփանք մտացն իւրոց, չըս-տան նմա անդորրութիւն և անզբաղ ճաշակել զքաղ-ցրութիւն քնոյն, վասն որոյ ընդոստուցեալ զարթչի 'ի վեր, և տեսեալ զգիշերոյն խոր աղջամուղջ և զվայրացն ամայութիւն՝ սարսափի. և զի չէր ուրեք այր կամ փապար ինչ լերանց, ուր սորամուտ լեալ զանձն պատսպարիցէ յարհաւրաց մթութեան, կամ 'ի գազանացն ամէհեաց, ուստի թօթափեալ յանձնէ զմին երկիւղն, քաջալերի սրտապնդի և կայ յաղօթս այսպէս. "Դու Տէր արարիչդ տիեզերաց, յոյս իմ և կեանք իմ. չիք իմ այլ Աստուած բաց 'ի քէն. Դու՝ որ ստեղծեր զամենայն արարածս առանց ուրուք

օգնականութեան , և ոչ թողուս զնոսա 'ի խնամոց պաշտպանութեան քո , պահեա՛ և զիս զնժդեհացեալս և զօտարացեալս 'ի գրկաց մօր իմոյ , յերկիւղէ գի~ շերիս , փարատեա՛ 'ի մտաց իմոց զարհաւրանս , և միայն զերկիւղ քո սուրբ մի՛ հաներ յինէն . զի որք երկնչին 'ի քէն , աներկիւղ կան յամենայնի , և որք յանուն քո յուսան և ապաւինին , անսասանելի կան և մնան յա~ ւիտեան . Աղաչեմ զքեզ Տէր , այց արա ինձ ողոր~ մութեամբ քով , և մի՛ թողուր զիս 'ի գթութենէ քումմէ , զի մի՛ չարիք գտցեն զանձն իմ . և որպէս գթացար 'ի հայրն իմ Իսահակ , առաքելով փոխանակ նորա 'ի զենումն զխոյն 'ի ծառոյն Սաբեկայ 'ի լերինս յայամիկ , գթա՛ և յիս անարժան ծառայի քում , և առաքեա՛ առ իս զօգնութիւն քո , կեցուցանել զիս յերկիւղէ գիշերիս ,, :

Մինչեւ կատարեալ զաղօթսն , թանձրութիւն քնոյ անկեալ կրկին զարտեւանամբք նորին , մտանէ անդրէն 'ի քուն : Եւ ահա տեսիլ սքանչելի առաջի նորա երեւի . վերին երկնաձեմ կամարին բացեալ դրունք հրաշակերտ , ճառագայթարձակ նշոյլք լու~ սաւորութեան հատանէին , առ որովք արեգական պայծառութիւն՝ գիշեր է խոր . և 'ի միջոյ ակնախտիղ լուսոյն սանդուղք լուսեղէն մինչև յերկիր խոնարհեալ ցուցանիւր , ընդ որ հրանիւթ զուարթնոցն ջոկք տար~ մաբար իջանէին , և ելանէին . Ի վերին ծագ աստի~ ճանացն կայր կանգնեալ աթոռ լուսակիզն , յորում հաստատեալ բազմեալ էր Տէրն արարածոց . Նմա զիմ՛րդ՝ որպէս կարելի իցէ մահկանացու աչաց ընդ~ նշոյլ ճառագայթմն 'ի վեր նկատել ակնուլ . քանզի և լուսեղինացն դասք ահիւ պակուցեալ յահէ փառաց աստուածութեանն , թեւաքօղեալ ծածկէին զդէմս իւրեանց . Յանհնարին ափշութիւն կրթեալ հօր իմոյ ,

և ընդարմացեալ իմն գոգցես յահաւոր տեսլենէս , չգիտէ զինչ խորհել . և զինչ տեսիլն իցէ , զորս չէր նորա երբէք տեսեալ յայլ նուագս , և ոչ իսկ լուեալ . վասն որոյ սաստանի յահեղահրաշ տեսարանէս . իբր ոչ եթէ յերկիւղ և յարհաւիրս տագնապեալ , այլ անօրինակ զմայլմամբ զեղեալ յոգի ընդ երևոյթն ՚ի հիացումն նորին կարգեալ , սքանչանայր և ՚ի բուռն կրիցն զարմացման սասանումն և դողդոջ անդամոցն և սրտին պատճառէր . Իբր մինչդեռ յայն ափշութե խորհուրդսն ընկղմեալ կայր հայր իմ , ձայն հատեալ յերկնից հասանէ յունկն նորա , որ ասէ . “ Մի երկնչիր , զի ես ընդ քեզ եմ . օրհնեցից զքեզ և բազմացուցից զզաւակ քո վասն Աբրահամու հաւուն քո , և վասն Իսահակայ հօր քո . և զերկիրդ յորում դուդ-ննջեցեր , քեզ տաց և որդւոց քոց ՚ի ժառանգութի . Բազում եղիցին զաւակք քո իբրև զաւազ ծովու , և ամենայն ազինք օրհնեսցին ՚ի քեզ և ՚ի զաւակի քում ” .

Ընդ այս ձայն ահեղաբարբառ զարթուցեալ Յակոբայ ՚ի քնոյ անտի , ասէ . Տէր է աստ , և տուն Աստուծոյ է տեղիս այս , և ես անգիտութեամբ ննջեցի աստանօր . Իսկ նկարագիր տեսլեանն այնչափ ՚ի խոր գաղափարեալ կայր յուշի նորա , մինչ համարէր յարթնութեան տեսանել . նոյն և բարբառ խոստմանն Աստուծոյ ազդողագոյնս տպաւորեալ էր ՚ի սրտի նորա , առաւել քան զքանդակեալս յերկաթի . վասն որոյ ՚ի սաստիկ փղձկմանէ սրտին յարտասուս ցնդեալ , անկանի ՚ի վերայ երեսաց իւրոց , գոհանայ զՏեառնէ , որ ոչ միայն խոստանայր պաշտպան կալ նմա ՚ի կարեւոր դէպսն , այլ և բազմացուցանել զզաւակ նորա . Յաղագս որոյ ուխտադիր լինի ընդ նմա , ՚ի դարձին իւրում յետս՝ ՚ի զոհ պատարագաց պաշտել զանուն

ստուերք նորին 'ի տեղւոջն յայնմիկ. և 'ի նշանակ անմո-
ռաց յիշատակի քարինն՝ զոր ընդ սնարիւքն ունէր,
կանգնէ զնա, և օծանէ յանուն փառացն Աստուծոյ
իւղաթուրմ խնկաւորութեամբ անուշութեան.

Եւ յիրաւի իսկ, յորժամ զքսանամեայ ժամանակն
աւարտեալ լցեալ 'ի տան Լաբանայ աներոյ իւրոյ,
հանդերձ կանամբք և որդւովք իւրովք և ամենայն
աղխիւքն դարձ արարեալ ժամանեաց եհաս անդր,
փութացաւ ետ ընդ ետ մատուցանել նուիրել զող-
ջակէզ զոհիցն՝ ըստ ուխտին զոր հաստատեաց. Ընդ
պատմեաց, 'ի ճառ արկ մեզ զամենայն զդէպս անցիցս
այսոցիկ, հանդերձ գորովագեղ արտասուօք. և խ-
րատէր եւս զմեզ՝ ոչ անցանել զանցանել բնաւ եր-
բէք զուխտիւք, այլ ամենայն փութով պնդութեան
'ի պսակել ճեպել զնոյն. Քանզի ուխտն, ասէր,
են դաշինք ընդ Աստուծոյ հաստատեալ, զորով եթէ
ոք անփոյթ անցանիցէ, զպատիժ պատուհասի փոխա-
րէն վարձուցն ընկալցի.

Այսչափ էր եռանդն աստուածպաշտութեան
հօր իմոյ, և նոյնչափ անվրէպ ճշդութիւն յամենայն
պարտաւորութիւնս իւր, եւս և 'ի մանունս և 'ի
դուզնաքեայ խոստմունս իւր ընդ մարդոյ, թող թէ
յուխտս իւր՝ զոր ընդ Աստուծոյ դնէր, թէպէտ
եւ 'ի նեղութեան և յանձկութեան ժամանակին.
եւ զմեզ 'ի նոյն յորդորէր հաւատարիմ կալ մնալ.

ԳԻՇԵՐ ԵՕԹՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Օ կնի չուելոյ ձեր ՚ի Լաբանայ, ո՞րչափ ժամանակս դեգերեցայք ՚ի ճանապարհի, մինչեւ հասիք յերկիրն Քանանացւոց. եւ որպիսի գեղեցկութիւն ճանապարհին էր.

ՅՈՎՍԷՓ

Ոչ ինչ շտապեաք մեք ՚ի ճանապարհին՝ որպէս ՚ի սկզբանն յահէ յերկիւղէ Լաբանայ, յորմէ ապահովացեալ այնուհետեւ, հանդարտաքայլ, մեղմընթաց էր չու մեր, հանգիստ եւ դադար տալով խաշանց մերոց յամենայն կանաչազարդ մարգարօտս՝ ուր դիպէին ոտք մեր. քանզի եւ խստութիւն ջերմութեան արեւուն՝ զկորովի ընթացս գրաստուց եւ ուղտուց մերոց լուծեալ լքանէր. Վասն որոյ ընդ այգն ընդ արշալոյսն կանխեալ քան զծագումն արեգական, եւ անկեալ ՚ի ճանապարհ, ՚ի հասարակել աւուրն՝ յորում տօթագին ճառագայթք արեգին ուղղահայեաց ձգեալ արձակէին ՚ի վերայ մեր, դադարեաք ՚ի վայրս ուրեք ջրարբի եւ զուարճալի ծառաստնկօք զարդարեալ, որոց մաքրութիւն եւ յստակութիւն օդոյն՝ զուարթացուցանէր զհոգիս մեր.

Ոմանք թէպէտ եւ քան զցամաքայինն՝ զծովային ճանապարհորդութիւնն նախապատիւ վարկանին, այլ ոչ այնպէս եւ ես, զի ինձ գլխովին հակառակն թուի. Աներկրալի է ցամաքայինն քան զծովագնացն ուղեւորու-

թիւն, յորում միշտ 'ի վտանգի կան մարդիկ նաւաբեկութեան, յալեծուփ 'ի կոհակատանջ յուզմունս խռովութեանց, և ծովամոյն լինելոյ յեղակարծ. Իսկ Ճանապարհորդութիւն ցամաքի նորոգ բերկրութեամբ զուարթացուցանէ զոգիս մարդկան, և զսեւամաղձութիւն սրտին 'ի բաց վարէ. Դաշտորայքն համայն գեղեցիկ ծաղկամբք զարդարեալ, ոչ միայն զանմահութեան բուրեն զհոտ, այլ և ծաղկախառն և դալարագեղ կանաչութեամբ՝ սրեն զտեսութիւն աչաց, և նոր իմն կենդանութիւն և աշխոյժ ընծայեն մարդկան. Զեփիւռք քաղցրասիգք զխրոս զուարճացուցանեն, որոց այլ և այլ են շնչումն և ազդուութիւն. այլ է որ զփափկիկ դալարեօք և զկանաչագեղ սազարթիւք ծառոց դաշտացն քերեալ անցանէ, և այլ որ ընդ ձորամէջս, ընդ լերինս և ընդ ծմակային անտառախիտ վայրսն շնչէ. Եւ զի՝ լերինք և բլուրք, որք անդստին յարարչագործութեան Աստուծոյ հաստատեալ 'ի վերայ երկրի՝ յաւիտենական յիշատակարանք են անհուն զօրութեան Արարչին, մաքրեն զհողմոցն մատակարութիւն, զովացուցեալ հովացուցանեն զօդս.

Յիշեմ տակաւին զգեղեցկութիւն տեսարանին, յորում բնութիւնն զհրաշալին իւր զգործ նկարէր առաջի աչաց մերոց. Հասաք յարտեւան լերին միոյ՝ մերձ 'ի Դամասկոս, որոյ 'ի բարձրութենէ քարաժայռ սեպացեալ սարինն՝ կարկաջասահ խոխոջանօք հոսէր ընդզառ 'ի վայր գետ մինչ յորդահոս, և սողոսկեալ ակոսաձեւ ընթացիւք սաստիկ ուժգնութեամբ թափէր, լճակ իմն բոլորածիր զտեղեաւն յօրինելով. Եւ խոխոջումն ձայնի նորա 'ի բացուստ լսելի լինէր, այլ 'ի մերձենալն մեր նմա, տեսաք զցնցուղ հոսանացն ջուրց մանրամաղ սրսկեալ կամարաձեւ յարձակելով

ընդ ձիգ հեռաւորութիւնս . և արեգական ճառա-
գայթք 'ի հանդիպութենէ երկնից անկեալ կշռակի
'ի վերայ նոցա , իբրու զակն վանի ցոլացուցանէր զպղ-
պջակս ջուրցն . Իսկ յերկուստեք ափանցն ծաղկազարդ-
րոյք և սեզք զցօղս կայլականցն սրսկմանց առեալ
'ի վճիտ լուսոյն , պաղպաջէին նման մարգարտահատի .
և ձիթենիք մշտադալարք քաղցր հովանաւորութեամբն
իւրեանց շուք մեծ ընծայէին . և զոստոսն երկայնա-
ձիգս խոնարհեալ 'ի վայր 'ի հոսանս գետոյն , զպա-
պակ ծարաւուն յերեսաց խորշակին հատանէին . և
ցոլմունք արեւուն թափանցեալ ընդ սաղարթս ոս-
տոցն նոցին , 'ի տիպ զմրխտոյ զերկիրն համակ ցուցա-
նէին . Թող զբաղմութիւն ձկանցն , որ 'ի լճակի անդ
'ի տապոյ արեգական զովանամբք ջուրցն ճախրեալ
կայտռէին , և գոյնք նոցա կարմրախայտ իբրեւ զպա-
պաղակս շողշողէին . ընդ որ ամենեքեանքս յակճիւս
և յաթիւս կացեալ , օրհնեցաք զարարիչն Աստուած ,
որ և 'ի ջուրսն ունի անբարբառ փառաբանիչս և
վկայս իւրոյ ճարտարարուեստ իմաստութեան . Յա-
ղագս որոյ և հայր իմ հիացեալ ընդ իմաստութիւն
նորին , որ առաւելապէս փայլէ 'ի բնութեանն , և ընդ
սքանչելի գործսն նորա ապշեալ , պարտաւորեաց զմեզ
մնալ անդէն աւուրս ինչ , առ 'ի յագեցուցանել զանձ-
շութեան իւրոյ զտենչ ընդ գործսն բնութեան . Անդ-
սկսաւ նա քարոզել մեզ զամենիմաստ կարողութիւն
Աստուծոյ , ցուցանելով զամենայն գեղ սքանչելեաց
բնական աշխարհիս , յորս բացայայտ երեւէին իմաստք
և մարդասիրութիւն իւր . որոյ վասն հարկ դնէր , յոր-
դորէր զմեզ անդուլ անդադար պարապել յաղօթս
և 'ի փառաւորութիւնս , զի բացցէն միտք մեր , և ճա-
նիցուք զերախտիս բարեխնամ տեսչութեան Աստուծոյ .
որ զամենայն ինչ արար և առեղծ վասն մարդկան , և

ետ նոցա ՚ի վայելումն հանդերձ գովութեամբք և փառաբանութեամբք ։

Յարուցեալ անտի շարունակեցաք զճանապարհ դէպ ՚ի կողմն Բանանացւոց . այլ յորժամ զերկայնութիւն ուղւոյն հատեալ մերձենայաք յերկիրն մեր , այնչափ առաւել ՚ի խորին սուգ թախծանաց համակէր հայր իմ ՚ի տագնապ երկիւղի յերեսաց եղբօր իւրոյ Եսաւայ ։ Վասն որոյ յամենայն օթեւանս զոր օթեւանէաք ՚ի ճանապարհին , յանկարծ նա լինէր աներեւոյթ , և երթեալ առանձնանայր ՚ի մենութեան , և յուզէր ՚ի ծփանս մտատանջ խորհրդոց , և պարզէր զշրթունս իւր ՚ի մշտամռունչ աղօթս ։ Եւ եղեւ ՚ի միում երեկոյի գնալ նմա ըստ սովորութեան յառանձնութիւն իւր՝ պարապել յաղօթս , և ես հետեւեցայ շաւղացն յոչ կամաց նորին . և էր ՚ի պահուն՝ յորում արփին եթերաճեմ կշռեալ զչափ վերին ընթացից մթնոլորտին , տեղի տայր ՚ի մէնջ սրընթաց արշաւամբ մտրակեալ զքառաձի կառսն իւր , և խոր մթութիւն խաւարի փոխանակեալ ընդ նորա՝ պատէր զերկրաւս ։ Իսկ ես ունելով զաջոյն հօր իմոյ , աներկիւղ ընթանայի ընդ առապարս երկրին , մինչեւ հասաք ՚ի տեղի մի անքոյթ և առանձինն ։ Ընդ անկեալ հօր իմոյ ՚ի վերայ երեսաց իւրոց , ջերմ պաղատանս առ Աստուած մատուցանէր . այլ ես յեղյեղէի ստէպ զմի միայն զայս աղօթսն՝ զոր առ ՚ի նմանէ ուսեալ էի . "Աստուած իմ փրկեա զմեզ , և պահեա զմեզ ՚ի չարէ" ։ Զնոյն կրկնէի և զտեղի աղօթիցն երկրպագութեամբ և ծնրադրութեամբ ընուլի . և տեսեալ զարտասուս հօր իմոյ , որ գետօրէն վիժէր յաչացն , արտասուակից լինէի և ես ընդ նմա ։

Մինչ զայս օրինակ զգիշերոյն պահ յաղօթս հանէաք , երեւեցաւ ինձ տեսիլ ահաւոր . անթիւ բազ-

մութիւն զօրաց յանկարծակի յապուշակի շուրջ զմեօք պաշարեալ բոլորեցան, համակ սպառազինեալ 'ի պատերազմական զարդս, զրահաւորեալ իբրեւ զքաջամարտիկ զօրս. այլ տեսիլ կերպարանացն ոչ իբրեւ զառն մահկանացուի. Քանզի շառաւիղք լուսոյ հատանէին յերեսաց նոցա, և դէմք իւրեանց ոչ պակուցանողականք և ահագնատեսիլ, այլ զուարթ և խրախամիտ. Միայլիշ յակՁիուս կայր լուսատեսիլ կերպարանաց պատրաստութեանն ժամս ձիգս, և ազդումն ինչ ներգործեալ գտանէի 'ի նոցունց 'ի հոգւոջ իմում. Հետաքրքրութիւն իմ մանկական՝ հարկէր զիս մօտագոյն մերձիլ առ նոսա, և խառնիլ ընդ գունդս նոցին. այլ չգիտեմ ո՛ր այն կիրք, կամ լաւ եւս ասել՝ ձեռն աներեւոյթ, որ անդէն արգելեալ կալ և կապ ունէր զիս, չմերձենալ առ նոսա. Իսկ հայր իմ բնաւ և ոչ ընդհատեալ զաղօթսն իւր, շարունակէր ըղձիւ, և զքանակս նոցին զիւրեւ նկատեալ, առաւել եւս հոսէր յաչաց իւրոց վտակս արտասուաց. Այլ զուարթութիւն դիմացն՝ զսրտին իւրոյ ուրախութիւն յայտնէր. Միանգամ և երկիցս մատուցեալ, և բուռն զդրօշակէ հանդերձին իւրոյ հարեալ, ձայն տայի նմա վասն բանակին. գիտել ո՞յք նոքա իցեն, առ ի՞նչ պատրաստիցին, ընդ ո՞ւմ ճակատեալ մարտադիր լինիցին. Այլ նա, քանզի յաղօթսն դեռ երկարէր, նշանացի պատասխանեաց ինձ լռել, և կալ յաղօթս. վասն որոյ դարձայ միւսանգամ զաղօթից բուռն հարկանել արտօսրաբուղխ ակամբք. քանզի ահ մեծ կալեալ զիս այնուհետեւ յանմռունչ պատասխանւոյն հօր իմոյ. Եւ եղեւ յորժամ աւարտեաց նա զաղօթսն, ջերմ փութացայ առ նա հարցանել ո՞յք իցեն նոքա, վասն ո՞յր եկեալ, և զիա՞րդ լուսատեսիլ համակ զկերպարանս ունիցին. զի եթէ 'ի

խաւարչտին գիշերիս աւանել քան զաստեղս պայծառափայլն, քանի գեղափայլ և լուսաւորագոյն ՚ի տուընջեան ցուցանիցէն. Ճեպեաց հայր իմ, և ասէ ցիս. «Որքա՞ն են բանակք Աստուծոյ կենդանւոյ, զորս առաքեաց ՚ի պահել զմեզ յամենայն վտանգէ. ընդ մեզ կան նոքա յամենայն ժամ, և ոչ երբէք հեռանան ՚ի մէնջ. այլ քո դեռ այն ինչ տեսեալ, համարիս նորոգ եկեալս զնոսա առ մեզ. Ահա վասն այսորիկ պատուիրեմ ձեզ կալ միշտ յերկիւղ Տեառն, և զգոյշ ՚ի պահել զպատուիրանս նորա, հանապազորդել յաղօթս. Քանզի որք զպատուիրանս Աստուծոյ պահիցեն, և յօրէնս նորա գնասցեն միշտ, և զերկիւղն նորին ՚ի սիրտս իւրեանց ցանկ բեւեռեալ ունիցին, բանակք լուսատեսիլք և զօրութիւնք երկնայինք զանձինս նոցա միշտ պատսպարեալ պահիցեն».

Զայս խօսեցաւ ընդ իս հայր իմ, և մնայր տգիտութեանն՝ որ զաչօք իմովք առագաստեալ կայր, խզեալ, ոչ եւս տեսի զգունդս լուսակերպիցն. այլ հետք արփագեղ շաւղաց և կերպարանի նոցա, ՚ի յիշողութեան իմում մնաց անջինջ քանդակեալ.

Զայս օրինակ վառեալ էր հայր իմ ՚ի սէր Արարչին իւրոյ և զնորին երկիւղ կրէր հանապազ ՚ի սրտի իւրում, ահիւ և դողութեամբ զանուն սուրբ նորա ՚ի շրթունս իւր ածեալ մատուցանէր, և ՚ի նոյն երկիւղածութեան զորդին իւր կրթէր. Նոյն արդ՝ որքան ծնողք՝ որ զորդիս ունիցին, փոխանակ զերկիւղ Տեառն ուսուցանելոյ նոցա, և ՚ի բարիսն կրթելոյ, անձամբք զանձինս օրինակ վատ՝ որդւոցն ընծայեն անմարդութեամբ գնացիցն և յանդուգն և յախուռն բարոյիւք իւրեանց. Զեղխութեամբ զան, ՚ի գինեկիզութիւն հատանին, զորովայնն պարարեն, զմարդկութիւնն յիքեանց ՚ի բաց արտաքսեն, որով և բնակութիւն իւ-

րեանց լինի մոլութեանց օթարան ։ Ո՜ բանս փցունս և զզրոյցս բաշխաղանաց, արտավէպս անպարկեշտս և զաւեշտարարս առեալ ՚ի բերան՝ ապականեն զողջախոհ լսելիս որդեկացն, և զբնածին անմեղութիւն նոցին վտանգեն. որոց ուսեալ զայն ամենայն, և զդառնութիւն թունաւոր բանից նոցա անզգալապէս շնչեալ ՚ի հոգիս և ՚ի միտս իւրեանց, չարագոյն քան զծնօղս լինին. Զգեն զանձինս ՚ի զանազան մոլութիւնս, խառնեալ ՚ի նոսա հոգւոյն կարողութեանց, իշխեն ՚ի զգայութեանց իւրեանց, ՚ի ցանկութիւն անձանց թաւալին. որ գիտէ զնոսա ՚ի ծուլութիւն մեղկել, յախտակրութիւնս ծնկել, և զունայնասիրութեան զկնիրան ՚ի սրտին տնկել. փոխանակ ընդ լուսոյն ընդ խաւար ընթանալ, և անձանց իւրեանց կուտել զաւաղանս ։

Ոչ սոյնպիսիս շնչէր ՚ի մեզ հայր իմ, այլ որքան զամենայն գիտութիւնս և զիմաստութիւն կանխագոյնն է՝ յերկնից Տեառն զմեզ սնուցանէր. և ամենայն առաքինութեանց մայր զնոյն գոլ մեզ ուսուցանէր, Ապա հետեւեսցուք և մեք նմին անդանդաղապէս, զպատգամս հրահանգութեանց նորին և զբանս պատուիրանացն մեզ ուսուցիչ և դաստիարակ առնիցուք. և զնոյնս դարձեալ, քանզի օրինակք և խրատք հայրական առաւելապէս ազդեն և շարժեն զմիտս որդւոց, տացուք յաւանդ մերոց զաւակաց. Եւ ըստ որում պարտաւոր իսկ եմք ՚ի նոյն կրթութիւն գովելի զնոցին միտս դերել, տնկեսցուք ապա ՚ի սիրտս նոցին զառաքինութեան սկզբունսն. շինեսցուք զսէրն որ առ Աստուած, յեղբայրսիրութեան զնորին փորձն ցուցանելով. խարսխեսցուք զյոյսն ՚ի հոգիս իւրեանց անընկճելի մնալ յամենայն վտանգից չարեաց, և անդորր և ապահով լինել յամենայն ընթացս կենաց

իւրեանց . կանգնեսցուք նոցա հաստատուն զառ Աստուած հաւատոյն , զի աներկմիտ յուսով դիմեսցեն առ նա յամենայն ժամանակի , և 'ի վիշտս և յուրախութիւնս . Որով աներկիւղ վստահութեամբ զաւուրս իւրեանց կատարեալ յօրէնս և 'ի հաճոյս Տեառն , լինին արժանի երկնային բարեաց , զոր մատակարարէ Աստուած առատապէս .

ԳԻՐՔ ՈՒԹՈՒՏԱՍՆԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Օխանդ , պատմեա՛ ինձ աղաչեմ , վայելչութիւն Դամասկոսին էր . քանզի քաղցր է ինձ , գիտես և դու , գիտել զստորագրութիւն և զհանգամանս քաղաքանւոյն .

ՅՈՎՍԷՓ

Գեղեցկութիւն Դամասկոսի շքեղագոյն և պանծալի իմն երևեցաւ ինձ այո՛ քան զԵգիպտոսին . Յընդարձականիստ դաշտի միոջ զդիրս ունի նա , և տարածութիւն նորա մեծ է յոյժ . Ջրաւէտ է երկիրն և յիւրաքանչիւր տան տեսանի պարտէզս վայելչագեղս և բուրաստանս հոտաւէտ ծաղկանց . քանզի առատութիւն աղբերահոս ջուրց՝ տածէ և դարմանէ բազմազգի բոյսս , և զերկիր անշէն և անապատ ,

դրախտս և ապատս յարդարէ. Այսպէս և Դամաս-
կոս՝ զբազմութիւն մշտահոս աղբերացն յիւր վայել-
չութիւն և ՚ի շինութիւն ՚ի կիր առեալ, իբրեւ նո-
րեկ հարսն գեղափայլ պճնեալ և զարդարեալ զինքն
քան զընաւս ցուցանէ. Եօթն գետակս ընդ այլ և այլ
առաջս բաժանեալ՝ անցանէ ընդ մէջ քաղաքին. Թող
զաղբերակունսն՝ որ ՚ի նոյն գետոյն զարտուղեալ ար-
բուցանեն զբուրաստանս իւրաքանչիւր տանց. Ոչ
տեսանի անդ տուն՝ որ չունիցի յինքեան աղբիւր մըշ-
տահոս. վասն որոյ չունին պէտս իբրեւ զմեզ՝ ջրատանց,
ուր անձրեւացն ջուրք ամբարեալ դիզեալ զկարիս
մարդկան հոգայցեն. Երկիրն է շինադոյն, վասն որոյ
արգաւանդ և բեղմնաւոր. և լիաբուռն զամենայն
ազգս բերոց ընձեռէ յարդանդէ, պիտանիս և կա-
րեւորս մարդկային ընկերութեան. Օդն է յստակ
և պարզ, և չորեքին եղանակք զիւրեանցն ազդեցու-
թիւն չափաւորապէս ներգործեն. Ձմեռն ոչ է երկա-
րատեւ և ոչ դառնաշունչ. նոյնպէս և ջերմութիւն
ամարայնի ոչ է տապախառն, այլ բարեխառնութ̃բն
զուարճալի գործէ մարդկան զբնակութիւնն. Վասն
օդոցն յստակութեան և առատութեան ջուրց և
բեղմնաւորութեան երկրին՝ անթիւ են ծառք պտղա-
բերք ազգի ազգի. պարտէզք և այգեստանեայք
խիտ առ խիտ ուռճացեալ ծաղկեալ պտղատու ծա-
ռովք շուրջ զքաղաքաւն՝ անհամար են, որք ձգին
մինչեւ զերից ժամուց ճանապարհ. Յաղագս առա-
տութեան մրգաց, որկրամոլք են բնակիչք, և բազումք
իսկ յախտակրութիւնս ծնկեալ. քանզի ՚ի պարգեւսն
Աստուծոյ ոչ չափով և կշռով վայելեալ, այլ ան-
յագութեամբ ՚ի ցանկութիւն որովայնին հատեալ,
զառողջութիւն մարմնոցն վտանգեն, ՚ի հիւանդութ̃իս
թալկանան. և բազում այն է՝ զի ՚ի յանկողնոյ անտի

ուր յողն անկեալ դնին խօթագին, փոխարկին 'ի տունն յաւիտենից, յորում Թշնամին մարդկութեան յուղացեալ դիտէ բերանաբաց կլանել զնոսա: Զի որք անասնաբար բերին 'ի կերակուրս՝ հարկաւ վնասեալ զմահուն կրեն տագնապ. և ախտք մահաբերք ոչ երբէք օտարանան 'ի նոցանէ: Զսոյն ախտանան միշտ բնակիչք Դամասկոսի, որոց Աստուած՝ որովայն իւրեանց. և անգիտանան գլխովին զվտանգն զոր վտանգին. զի մահըն զեղխութեամբք կերակրոյն և ցանկութեանցն քաղցրութեամբ՝ որով զկեանս նոցին կարճէ, զըզգայութիւն մտացն գողանայ:

Բնակարանացն շինութիւն երեքձեղուանեայք և չորեքձեղուանեայք ամենայն, որոց արտաքին տեսիլքն Թէպէտ և անշուք և անհարթ, այլ 'ի ներքսն զարդարեալք, գունակ գունակ երանգովք ներկեալ, ոսկեզօծ նկարապերով առաստաղք սենեկացն դրուագեալ. որմունք տանցն գեղայարմար զարդուք ծածկեալ և 'ի ճամուկս յօրինեալ. դրունք սենեկացն խորաքանդակ ճարտարութ̄բ արուեստակերտեալ յընկոյզ փայտէ: Հրապարակ քաղաքին մաքուր և լայնատարած. քանզի առուակք մտահոսք զամենայն խոհերս և զըուալս քաղաքին 'ի բաց վտարեն և մաքրեն: Բնակութիւնք մարդկան բաժանին 'ի Թաղս Թաղս տարաձիգս 'ի միմեանց, և իւրաքանչիւր Թաղ որոշի յատուկ դրամբք և բարապանօք, որք 'ի գիշերի փակեն զդուրս: Ամենայն արուեստից գտանին անդ ընկերութիւնք. այլ յաղագս ընդարձակութեան քաղաքին՝ ոչ ամենայն արուեստակիցք 'ի միում վայրի բնակին, զի անաշխատ ամենայն բնակչացն լիցի գտանել զկարեւորսն: Մաճառանոցն է յընդարձակագոյն փողոցի, և կրպակք մանունք խիտ առ խիտ միմեանց որոշեալ յարկօք: Ի են Թանգարանք և խանութք ամենատեսակ վա-

ճաւօք, ուր 'ի քաղաքաց քաղաքաց լուեալ զբարգաւաճանս առի և տրոյ, խուռն ընթանան անդ բերեալ ընդ իւրեանս վաճառս. վասն որոյ և է տեղին շահաւէտ քան զԷգիպտոս, յորում մի միայն առատութիւն տեսանի ցորենոյ և այլոց ընդեղինաց. Իսկ Դամասկոս լի և առատ է ամենայն հարկաւոր ընչիւք. զի Սիդօնացիք, որ նաւագնաց վաճառականութեամբ երեւելիք են, անդ զամենայն զվաճառս իւրեանց թափեն, և փոխանակ բառնան զայլ վաճառս ազգի ազգի. Ծաղկեալ է անդ քան զամենայն արուեստ կերպասագործութեան, և բազմութիւնք կարաւանաց աւուր աւուր բարձեալ անտի տանին 'ի տար աշխարհս. Ի յարգի և համարի ունին զվաճառականս եկս, որք իջավանին 'ի վանս և յօթեվանս կառուցեալս վասն նոցա, որք և պերճութիւն և գործունէութիւն մեծ ընծայեն առի և տրոյ քաղաքին, անհամար մթերս կերպասուց բարձեալ անտի.

Մարդիկ վասն առատութեան ամենայն իրաց՝ ոմանք չափազանց շռայլք են, և ոմանք առաւել ժլատք և հատեալք յագահութիւն բասրելի. Զգեստք նոցա շքեղ եւս է և բարեգոյն քան զՔանանացիս և զԷգիպտացիս. մանաւանդ արք գլեն զպճնասիրութեամբ կանանց, որով ոգին արիութեան մեղկեալ և թուլացեալ է, կանացի փափկութիւնն տիրեալ 'ի վերայ նոցա. Այս մոլեկան իղձ պճնասիրութեան բռնադատեաց զմարդիկ սպանանել զգազանս և մորթենեօք նոցին զանձինս պճնել, որով կարծեն յարգոյ երեւիլ և փառս անձանց որսալ, բայց վրիպին 'ի կարծեաց. զի փոխանակ այնու երեւելի լինելոյ առաջի մարդկան, զայնոցիկ գազանաց յանձինս ունել ցուցանեն զբարս և զբնաւորութիւն. զգոռոզութիւն առիւծուն, զխարդախութիւն աղուեսուն, և զիւ բա-

քանչիւր դաշանացն զյատկութիւնս .

Կերակուրք նոցա ընտիր են և համադամ, և բազմատեսակ՝ վասն առատութեան ընտանի հաւուց, խաշանց և ձկանց, որովք անյագաբար պարարեն զորովայն իւրեանց .

Ահա այսպիսի իմն է վայելչութիւն Դամասկոսի և բնաւորութիւն հանգամանաց բնակչացն . զորս 'ի կչիռ քննութեան առեալ 'ի մանկութեան իմում, յոյժ գերազանցեալ գտի զնոսա քան զբնաւ քաղաքանիս 'ի մոլութիւնս . Զի եթէ գիտէին նոքա չափաւորել զանձինս 'ի կեր և 'ի յումպ, ոչ այնչափ համատարած գերեզմանատունս ունէին . որոց կանխահաս մահուան միակ պատճառ է անժուժկալութի̄ և որկորամոլութիւն իւրեանց . Դամբարանք նոցա զարդարուն են կամարակապ շինուածովք յօրինեալ, մահարձան 'ի վերայ կանգնեալ, յորս դրոշմին անուանք և գովութիւնք մեռելոց . Ո՛հ աւելորդապաշտութեան մտացս, որք զանուանս մեռելոց արձանագրութեամբք կարծեն անմահացուցանել . զի չիրիմք ոչ եթէ վասն ննջեցելոց՝ այլ կենդանեաց սակս պատրաստին 'ի շահ նոցին, զորս տեսեալ գիտասցեն զյաւիտենական բնակութիւն իւրեանց, և օգտակար խրատս անտի անձանց ընդունիցին . Քանզի գերեզմանացն ձայնք զականջս խլացուցանեն իմաստնոց, և ուսուցանեն ոչ 'ի կառս գգուիլ այսօր, զի վաղիւն պատրաստ ունիցին զգագաղս, անողորմ օրհասին անակնկալ ժամու հասեալ տապարն առ նոսա . Ապա որ կամի մնալ անմահ յետ մահուն, զբարիս գործեսցէ, և առաքինութեան հետեւեսցի, որք միայն թողուն յաշխարհի անմահ զյիշատակ մեռելոց .

ԳԻՇԵՐ ԻՆՆԵՏԱՍՆԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Սխրացայ արդարեւ ընդ ստորագրութիւն քաղաքիդ, որ գեղեցկագոյն յոյժ քան զՀէգիպտոս թուի լինել․ Իսկ այժմ խնդրեմ 'ի քէն խոնարհաբար՝ ասել ինձ, եթէ ուստի՞ ինչ արդեօք զաղօթսն, զոր հայր քո մատուցանէր յաւանձնութեան իւրում առ Աստուած երկնից․

ՅՈՎՍԷՓ

Եւ որպէս մարթ էր ինձ տեսանել հոգեւոր ինչ կրթութիւն 'ի հայրն իմ, և զանց զնովաւ առնել. մանաւանդ փոյթք և խնամք հօր իմոյ ոչ թողուին անճաշակ մնալ որդւոց նորին յաղօթիցն, զոր և մեծաւ հոգողութեամբ ուսուցեալ էր ինձ և եղբարց իմոց․ և ամենեքին ժողովեալ 'ի միասին՝ մատուցանէաք առ Աստուած, որ էր օրինակ զայս․ “ Տէր Աստուած
„ բարեխնամ, արարիչ ամենայն լինելութեանց․ դու
„ ես Աստուած ճշմարիտ, և չիք այլ ոք բայց 'ի քէն․
„ Դու ես Աստուած Աբրահամու և Իսահակայ,
„ զորս ընտրեցեր 'ի մարդկանէ և ցուցեր ամենաբա-
„ ւական աջոյդ բարերարութեամբք և շնորհօք․
„ Ո՛ ճշմարիտ Աստուած, անչափ և անքննին եղեն և
„ 'ի վերայ իմ ողորմութիւն և գթութիւն քո, զոր
„ առատապէս հեղեր յանձն իմ․ գերագոյն և ան-
„ ճառելի է արդարութիւն քո, որով լցեր զիս պէս-
„ պէս բարեօք․ Արդ՝ չեմ բաւական զամենայն

„ խնամն քո ՚ի թիւ արկանել, քանզի ՚ի վեր է քան
„ զկար մտաց իմոց, և անչափօրէն գերազանցեալ.
„ Ընկալ Տէր զխորհուրդս սրտի իմոյ, զոր հեղում
„ առաջի ահեղ աստուածութեան քո. քանզի դու
„ ես քննող գաղտնեաց, քննեա և զերիկամունս իմ
„ ՚ի հուր սիրոյ քո. կիզեալ տոչորեա զամենայն ախտս
„ հոգւոյ և մարմնոյ իմոյ, և զմարդկօրէն սխալանս իմ
„ մի համարիր ՚ի մեղս, զի ոչ կարեմ յամենայնի ըզ-
„ կամս քո կատարել. Այլ իշխողդ ես ամենայն արա-
„ րածոց, իշխեա և իմոցս կամաց, և ուղղեա զնա
„ հետևելով ճշմարտութեան քում, գործել զհաճոյս
„ մտաց քոց. Փրկեա զմեզ յամենայն վտանգից և ՚ի
„ փորձութեանց. զօրացո և արիացո զմեզ տանել այ-
„ նոցիկ ամենայն ժուժկալութբ, որով արժանապէս
„ ծառայեալ քեզ, լիցուք արժանաւոր ժառանգել
„ զխոստացեալ պարգևս բարեացդ. զի դու ես բա-
„ րի իսկութբ և Աստուած բարերար, և պարգևես
„ զբարիս ամենեցուն՝ և որոց գիտեն զփառս անուան
„ քո. Հաղորդս արա և զմեզ Տէր նոցին բարեաց,
„ փրկելով յամենայն վտանգից և ՚ի թշնամեաց,
„ այժմ և յաւիտեանս ամէն „.

Օրինակ զայս կանխէր միշտ հայր իմ յաղօթս առ Աստուած. նոյնպէս և յանցանելն մեր ընդ գետն Յորդանան ամենայն տամբք մերովք, հայր իմ մնաց յայնկոյս գետոյն կալ առանձինն յաղօթս, զոր արտասուալից պաղատանօք առաքէր յերկինս, և զգիշերն ՚ի բուն ընդ հսկումն հանէր. Իսկ եղև իբրև արեգակն ծայր արձակէր յոսկեգոյն դրանց արևելից, անց հայր իմ ընդ գետն, և յընթանալն իւր կաղայր. զոր տեսեալ մեր զահի հարաք, և ապշութիւն արտմութեան գրաւեաց զսիրտ մեր ամենեցուն. Ասէաք ընդ միտս մեր, մի գուցէ ՚ի միայնութեան անդ չարի իմիք

դիպեալ, վտանգեալ իցեն ուռք նորա. վասն որոյ շունչ ՚ի բերան կալեալ ընդառաջ ընթացաք յողջունել զնա, և հարցանել զպատճառ կաղալոյն. Բայց ոչ ոք համարձակեցաւ զառաջինն մատչել ՚ի հարց և ՚ի փորձ, զի դէմք նորա ցուցանէին զնա յամենայնի զուարթ և ուրախ, և գրեա թէ շնորհք ցայտէին յերեսաց նորին. այլ աչք նորա յայտնի իմն առնէր՝ տքնութեամբ համակ անցուցանել զգիշերն ողջոյն, այնչափ ծանրացեալ էին. Իբրեւ եմուտ ՚ի խորան իւր, բակ առեալ խըմբեցաք զնովաւ անձկանօք. և նա բացեալ զբերան իւր պատմէր մեզ զգիշերոյն անցս, և ասէ. "Մինչդեռ յաղօթս կայի առ Աստուած ըստ սովորութեան իմում, և ահա ոմն եկեալ փարեցաւ անդէն յեղակարծումն զինև. և այնչափ ուժգին զօրութեամբ պրկեաց զիս, մինչ փոքր մի ևս և զգետնել զիս ընդ երկիր. Իսկ իմ ժողովեալ անդ որչափ զօրութիւն ուժոյ յերակսն իմ էր, զդէմ կալայ նմին. էր՝ որ թուէր ինձ յաղթել ինքն, և էր՝ զի ես նմա յաղթող ելանէի. այլ սակայն երկոքին ևս անպարտելի մնայաք, զի մեծաւ ուժգնութեամբ գիրկ ընդ խառն և ծոց առ ծոց կապեալ փարէաք զմիմեամբք, և այն ոչ դոյզն ինչ ժամս, այլ յառաջին պահէ գիշերոյն սկսեալ՝ մինչ ՚ի ծագել արեւուն երկարեցաւ գօտէմարտութիւն մեր. Եւ վասն խոր մթութեան գիշերոյն և յանկարծուստ ՚ի վերայ հասելոյ նորին և փարելոյ զինև, տագնապ անհնարին յուզէր զսիրտ իմ, և խռով ունէր զհոգի իմ, զի անակնունելի էին դէպքն. Այլ առաւել ունէր զանձն իմ վարանք և երկիւղ, քանզի թուէր ինձ եթէ և երկինք հակառակ ինձ ելեալ դիմամարտէին. զի աստեղք կորուսին զլուսատեսիլ ցոլմունս փայլմանցն, և լուսինն՝ զլոյս իւր, և ամպք մթագին և թխպայորդպատեալ ունէին զերկնային կամարաւն, և դոդցես

տիեզերք համայն խաւարամած կային, վասն որոյ ոչ կարացի գիտել զնմանէ և ճանաչել. Զօրութիւնն շօշափական ցուցանէր զնա 'ի կերպարանս լինել մարդոյ. իսկ ոգին արիութեան և զօրութիւնն ջղաց նորա, գուշակէր իմն գերագոյն ոմն քան զմարդ լինել. ոչ ձայն էր նորա 'ի բերանին և ոչ ընդհատումն շնչոյն՝ 'ի բազում վաստակելոյն. Եւ իբրև մերձեցաւ արշալուսն ոսկեծղի և վարդամատն բանալ զդրունս արեգին, ձայն արձակեաց նա թողուլ զինքն. բայց ես զահի մեծի հարեալ կայի, և խորհէի ընդ զօրութիւն բազկաց իմոց, որով բազմիցս անկեհեր ոգւով դէմ դնէի անպարտելի զօրութեան առիծուցն, տապաստ յերկիր կացուցեալ զնոսա, որք 'ի սովոյ հարկեալ՝ անհնարին կատաղութեամբ դիմէին 'ի վերայ խաշանց իմոց. Արդ եթէ զօրութիւն առիծու էր 'ի նմա, դիւրին էր ինձ յաղթական գտանիլ 'ի վերայ նորա. բայց նա զօրաւորագոյն քան զառիւծ էր. վասն որոյ 'ի հիացումն յափշտակեալ եմ ընդ այն՝ զի ոչ ես կարողացայ ինչ զգետնել զնա, և ոչ նա զիս. Մինչ յորժամ յայսմ խորհրդի յուզէր միտք իմ, կրկին ստիպեաց զիս թողուլ զինքն. որում պատասխանի ետու՝ օրհնել զիս նախ, և ապա արձակել զնա. Քանզի ոգի իմն աստուածային զօրութեան ներգործեալ յիս՝ զգացի անդէն յանձն իմ, ոչ ծնունդ մահկանացուի լինել այնմ՝ որ ընդ իմ մարտնչէր, այլ անմահ իմն էութիւն, որոյ 'ի տկարացուցանելն զիս՝ և զօրացուցանէր. Զի թէ ոչ կազդուրեալ էր զօրութիւն ուժոյ իմոյ և նորոգեալ, զիարդ մարթ էր ինձ յաւագին պահէ գիշերոյ մինչև 'ի ժամ արշալուսոյն զդէմ ունել նմին. վասն որոյ գուշակելով 'ի նմա անմահութեան իմն գոյութիւն և զօրութիւն գերմարդկային, վառեցայ յիղձ և 'ի գեղձ խնդրել զօրհնութիւն 'ի նմանէ.

Իսկ նա՝ 'ի բաղում թախանձանաց իմոց, փոխանակ օրհնելոյ՝ փոխեաց զանուն իմ, և ասէ. Այսուհետև ոչ եւս կոչեսցի անուն քո Յակոբ, այլ Իսրայէլ. Ընդ այս անուանափոխութիւն իմ՝ անդէն անկաւ ընդ միտս իմ գիտել զանուն նորին, վասն որոյ ընդհատեալ զբան նորա, հարցանէի՝ զի՞նչ անուն է քո. Բայց նա ոչ կամեցաւ զինկութիւն անուանն յայտնել ինձ, այլ օրհնեաց զիս նորոգ անուանակոչութեամբ. քանզի ժուժկալեցեր, ասէ, ընդ Աստուծոյ, զօրաւոր լինիցիր առ մարդիկ.

Իբրեւ լուայ զօրհնութիւնն զոր օրհնեաց զիս, և զի էր նա յաստուածուստ զօրացուցիչ ոգւոյ իմոյ, թէպէտ և յահէ նորա թուլանային ջլուք բազկաց իմոց, բայց մինչեւ գիտացեալ զանուանէ նորին՝ ոչ կամէի արձակել զնա. վասն որոյ բռնադատէի զնա յոյժ յայտնել ինձ զանուն իւր. Իսկ նա 'ի բռունն անդէն առեալ զամոլաջիլ զբստին իմոյ, թմբրեալ ընդարմացոյց, և եղեւ աներեւոյթ.

Ո՜ն ինչ մտայոյզ ծփէի 'ի խորհուրդս ընդ այս զարմանազանց դիպուած, անդէն լուսափիռ ճառագայթ արփւոյն ծագեալ 'ի դիմաց իմոց, փարատեաց վանեաց զթախիծ մռայլ գիշերոյն, և լուսաւորեաց զտիեզերս գեղապայծառ նշողիւքն. ընդ նմին լուսաւորեցան և միտք իմ, որով ծանեայ եթէ այս ամենայն խրախոյս քաջալերութեան էին ինձ յաստուածուստ, առ 'ի մերժել և ջնջել զվիշտակ երկիւղի եղբօր իմոյ Եսաւայ. Յարեայ անդէն յոտին 'ի գնալ, այլ յարձակելն իմ զոտս՝ զգացի և ահա ճմլեալ և ընդարմացեալ էր տախտակ զբստին իմոյ և կաղայի. բայց զի լուսաւորեալ էին միտք իմ, իմաստասիրեցի ոչ 'ի պատիժ ինձ լինել այն, այլ յանմոռաց յիշատակութիւն տեսլեանն Աստուծոյ. Զի ջլուք ոժան-

դակիչ են զօրութեան ոտիցն, որք 'ի քաջարշաւ ըն-
թացիցն ընդարմացեալ վտանգին, կամ յանկմանէ
միասին, յորմէ պատճառի և կաղութիւն. Նա և ընդէր
վճռանալ և որոշիլ մեզ հասանիցէ ընդ այն, եթէ
զզօրութիւնն Աստուծոյ աջակից մեզ ունիցիմք. զի
յայնժամ՝ որ կաղն իցէ՝ առաւել քան զըրընթաց
եղջերուն վազս առեալ վագիցէ. ուստի ոչ այնչափ
ընդ կաղութիւնն իմ, որչափ ընդ խնամարկութիւնն
Աստուծոյ զարմանամ, և անմոռաց 'ի մտի ունիմ
զանբաւ ողորմութիւն և զհովանաւորութիւն ամենա-
կալ աջոյն իւրոյ. Նայա, որդեակք իմ, 'ի միտ ա-
ռէք դուք զգերագոյն խնամս Աստուծոյ. զի ոչ միայն
յետ այսորիկ կոչեցի անուն իմ Իսրայէլ, որ է աս-
տուածատես, այլ և դուք ազգ և տոհմ Իսրայէլեան
անուանելով՝ լինիք ժողովուրդ սեպհական Աստուծոյ.
Ջան դիք ապա գործել զարժանաւորս այսմ գերա-
գոյն անուան, որպէս զի յամենայնի տոհմականօք համ-
դերձ բարգաւաճեալ պերճացեալ, արժանի լինիք
հասանել խոստացեալ պարգեւաց նորին և աւետեաց.

Ոանեա՞ր ո՛ կենակիցդ իմ բարեսուն, զողորմու-
թիւն և զգթութիւնն Աստուծոյ 'ի վերայ սիրելւոյն
իւրոյ. զի հայր իմ յամենայնի հոգ յանձին կալեալ,
ջանէր կենցաղավարիլ ըստ Աստուծոյ կամացն, և մըշ-
տահայց պաղատանօք խնդրէր 'ի նմանէ առաջնորդել
'ի ճանապարհս արդարութե՛, և մնալ ցանկ 'ի ճշմա-
րիտ աստուածպաշտութեան. Վասն որոյ՝ օր քան զօր
ջերմանայր և բորբոքէր հրով սիրոյն Աստուծոյ. և
ուղխք արտասուացն՝ զոր հեղոյր յաղօթել իւրում,
ոչ գիտէին բնաւ երբէք շիջուցանել զհրատոչոր սէր
սրտի իւրոյ, այլ եւս առաւել սաստկացեալ լինէր.
Նոյնպէս և Աստուած ակն յայտնի ցուցանէր նմա
զքաղցրագին ողորմութիւն և զհովանաւորութի՛ իւր.

Զի որպէս նախ քան զայս՝ պաշտպանս կարգեաց մեզ զբանակ անմարմնոց զօրաց իւրոց, նոյն և այժմ յայտ յանդիման երևեցաւ հրեշտակ նորա ՚ի զօրացուցանել, մարտնչելով գօտէկուռութեամբ իբրև ըմբշամարտիկ ոք ընդ հօր իմում. Այլ մի երբէք խորհեսցուք ը̄ միտս մեր, զօրուե̄ հօր իմոյ առաւել լինել քան զնորին, զի ոչ կարաց յաղթել նմա. քաւ լիցի. այլ զի կամք ամենակալին Աստուծոյ՝ էր խորագոյնս տպաւորեալ ՚ի սիրտ հօր իմոյ զայն արիական հանդէս քաջի նահատակութեան, որով մերժէր իսպառ զերկիւղն՝ զոր կրէր յեղբօրէ իւրմէ յԵսաւայ. Զի ընդ որում Աստուած պաշտպան հանդիսացեալ՝ ընդ ականարկութեամբն իւրով ունիցի, ո՞վ է որ զդէմ ունել նմա տանիցի, և կամ ո՞ յանդգնեսցի հակառակամարտ լինել նմին. զի նա է տուիչ և պարգևիչ զօրութեան և կենաց. Ապա ջանասցուք և մեք ստէպ զաղօթից բուռն հարկանել հանդերձ արտասուօք. յանձնեսցուք զմեզ ինքեանս ՚ի խնամս մարդասիրութեան նորա. զօրացի երկիւղ սուրբ նորա ՚ի սիրտս և ՚ի միտս մեր. և յորժամ այս օրինակ հոգևոր վարժութեամբք յարդարեսցուք զմեզ, աներկբայ լինիմք հանդիպել օգնականութեան նորա, փրկելով զմեզ յամենայն վտանգից և յերկիւղէ չարէ.

ԳԻՐՔ ՔՍԱՆԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Յետ ընդունելոյ հօր քո ուժգնութիւն զօրութեան, և զգենլոյ քաջալերութիւն ՚ի բարձանց, երկնչէ՞ր տակաւին վհատեալ յեղբօրէ իւրմէ.

ՅՈՎՍԷՓ

Թէպէտ և տեղի ետ իսպառ ՚ի մտաց հօր իմոյ երկիւղն զոր կրէր, այլ զի պարտաւոր են մարդիկ, որ ինչ բնութեան է անկ՝ ՚ի գործ դնել, ՚ի զգուշութե՛ ունել միշտ զանձն, և ոչ կալ մնալ յաներկիւղութե՛. Թէ և յապահովն կայցէ, և ՚ի զօրութիւն ուրուք յենուցու, չէ պարտ ամենևին հեռի յինքենէ ՚ի բաց զերկիւղն ՚ի սրտէ առնել. Նա մանաւանդ խոհականութիւն մարդոյ՝ առաւելապէս պահանջէ ՚ի կշիռ ունել զանձն և յարթնութեան, և փոխանակ յանձնապաստան գոռոզութեամբ և սիգութեամբ անձին վստահանալոյ, զամենայն զպարագայսն ուշի ուշով նկատել, շրջահայեաց լինել յամենայն կարելի դէպսն, զի մի իւիք սխալմամբ պակասաւոր գտանիցի խոհականութեանն մէտ, և զանձն ՚ի վտանգ դնիցէ. Քանզի Եսաւ այր յանդուգն էր և զայրացկոտ բնութեամբ, անիրաւ և չարակամ. վասն որոյ ՚ի լսել զգալուստ եղբօր իւրոյ յոլովագոյն ճոխութեամբ ստացուածոց և բազմութեամբ զաւակաց, կրկին ունէր բոցանալ բորբոքիլ աճիւնացեալ այն նախանձ չարակնութեան. Նա զի՝ և յայն միջոց ժամանակի զօրացեալ էր և ինքն

բռնութեամբ, և զօրութեամբ բազկի իւրոյ տիրէր ինքնիշխանաբար տեղեաց. յաղագս այնորիկ և Հայր իմ, որ յամենայնի խոհեմութեամբ և իմաստութեամբ վարէր, գիտաց քաջ ամոքել զնա 'ի քաղցրութիւն աղերս բանիւք, և լուծանել յերեսաց նորին զկնճիռն անօրէնութեան և զայրացման. Վասն զի յետ ծանուցանելոյ նմա զգալուստ իւր 'ի ձեռն ոմանց յիւրայնոց յատուկ պատգամաւորութեամբ, փութացաւ կանխել պատուասիրել զնա հնգեակ ազգ պատարագօք և ընծայիւք, որք էին, այծք և քաղք, մաքիք և խոյք, ուղտք՝ հանդերձ կոզաւմբք, կովք և ցուլք, էշք և մորուկք, յորոց առանձինն հօտս կազմեալ՝ յիւրաքանչիւր միջոց պահու բացագոյն 'ի միմեանց առաքեաց առ նա 'ի ձեռն խաշնարածից, պատուիրելով առն առն, և ասէ. Ի ներկայանալ ձեր առ եղբայր իմ, և 'ի պատահիլն նմա առ ճանապարհաւ, ասասջիք՝ եթէ ծառայ քո Յակոբ մատուցանէ զպատարագս զայսոսիկ Տեառն իւրում Եսաւայ.

Իսկ Եսաւ իբրև լսէ զգալուստ եղբօր իւրոյ, անդէն վաղվաղակի 'ի ձի աշտանակեալ հանդերձ բազմութբ արանց, ելանէ ընդ առաջ եղբօրն, ցուցանել կամելով նմա զարիական բազկի իւրոյ զզօրութի և զիշխանական փառս իւր. վասն որոյ չորեքհարիւր արամբք հսկայիւք քաջօք արագընթաց ճեպ տուեալ պնդի ընդ առաջ նորին. Պատահեալ 'ի ճանապարհին արօտական հօտիցն հնգեցունց, մէն մի 'ի նոցանէ լսէ զխոնարհ հպատակութիւն եղբօր իւրոյ. և զընծայսն որ ընդ նոսին տեսեալ՝ տարաբերի յանձն իւր սքանչացմամբ, զի ոչ որպէս խորհէր՝ դէպքն ինքեան հանդիպէին. Քանզի հնգիցս անգամ լուեալ 'ի նոցանէ զցածութիւն բանիցն Յակոբայ, և զանյիշաչարութիւն նորին, հնգիցս ընդհարկանէր սիրտ իւր քարեղէն, և

իբրև նետիւ խոցեալ վիրաւորէր զոգի հպարտութե̅ և զանխրատութեան իւրոյ, և զխայթ խղճին խարխարեալ անհնարին տագնապէր. Վասն որոյ գործախառն արտասուօք լցեալ լիճք լուսոյն, և փղձկեալ ՚ի խանդ սրտաշարժ գթոյ, մտրակ ՚ի կուշտ երիվարին հարկանէ, և աճապարէ սլանալ, դիմել, հասանել առ եղբայր իւր.

Իսկ հայր իմ յետ առաքելոյ զպատգամաւորսն և զընծայս, յերրեակ դասս բաժանեաց զընտանիս իւր. զերկոսին նաժիշտսն հանդերձ զաւակօք իւրեանց և աղխիւքն խաղացոյց յառաջոյ, նախընթաց լինել քան զայլսն, և զհետ նոցա զխումբս արօտականաց ջոկերս ջոկերս ը̅ ազգի իւրեանց. ապա զԼիա որդւովք իւրովք և կիսով չափ ծանրագին ստացուածովք. հուսկ յետոյ զմայր իմ և զիս ընդ նմին հանդերձ նաժշտօք և սպասաւորօք, և ամենայն պատուական և ծանրագին ընչիւք. Եւ այսպէս կազմեալ կարգեալ յօրինեալ զամ̅ ընտանիսն, այն ինչ բանայր զբերան իւր և պատուէր զգուշութեան ՚ի վերայ ածել, և ահա երևեցաւ ՚ի բացուստ խումբ մի հեծելազօրաց հրոսակաց, որք ՚ի հող և ՚ի փոշի երագընթաց արշաւմամբ սլացեալ հասանէին, մինչև անկարելի լինել որոշել զնոսա, արդեօք հողմն մրրկայոյզ իցէ՝ որ զփոշի երկրին ընդ երկինս ամբառնայցէ, եթէ մարդիկ քաջարշաւ քան զթևս հողմոյն ընթանայցեն. Գիտաց անդէն հայր իմ զայրձակումն Եսաւայ եղբօր իւրոյ, քանզի լուաւ եթէ չորեքհարիւր արամբք հեծելովք յառաջեալ խաղայ ընդ առաջ իւր. վասն որոյ եւ ինքնին միայնակ յանդիման նորին, և ըստ բնաբոյս բարուցն հեզութե̅ և խոնարհութեանն՝ մատուցանէր նմին պատիւ արքայական, եօթնիցս անկեալ ՚ի գուճս յերկրպագութիւն նմա. Իբրև ետես Եսաւ զխոնարհամիտ ցա-

ծուլթիւն եղբօրն իւրոյ, էջ անդէն յերկիվարէ իւրմէ յերկնէ, ընթացաւ առ նա գիրկս արկանել զպարանոցաւ նորա. փարեցան երկոքին եւ զմիմեամբք. Հատան բարբառ և բանք բերանոյ նոցա, միայն համբուրիցն շրթանց իւրեանց ձայնք լսելի լինէին, որք արդարեւ քան զարտայայտումն խօսից լեզուին՝ կենդանի նկարագիր և թարգման էն ներքին զգացողութեանց խանդաղակաթ յուզմանց սրտից երկոցունց հարազատաց. Աչկունք նոցա լցեալ գորովախառն արտասուօք սիրոյ, զեղեալ թանային զդէմս միմեանց. իսկ հեկեկանք ոչ եւս, քանզի քաղցրագոյն սիրոյ էին արտասուացն յորդութիւնք. Այսպէս ժամս ձիգս գրկախառն համբուրիւ ճաշակեալ զեղբայրական ոգւոյ զքաղցրութիւն, մնային անձայն և անբարբառ. մինչեւ ոչ կարացեալ ժուժել մի ումն յընկերակցացն Յուսեայ, մերձեալ առ նոսա ջանացաւ լուծանել զնոցին չափազանց կրիցն յուզմունս, որով դոյզն ինչ խաղաղացեալ, արձակեցան կապք լեզուաց նոցին, և լուծան յարտօսր բարձրագոչ աղաղակաւ.

Ո՞ւր ատելութիւնն առաջին, ո՞ւր չարակամ դիտաւորութիւնք եղբայրատեցութեանն Յուսեայ, զոր երկնէր 'ի սրտին 'ի մահ անօրէնութեան դատել զեղբայրն հարազատ. ո՞ւր զայրոյթք բարկութեան սրտի նորա, որով յանդգնեցաւ քսփուս և առունկնճառ լինել զնմանէ առաջի հօրն, և խորհել չարիս. Յուզխայրդ հակառակ նորին այժմ լալումն և ողբումն 'ի մէջ առնու, գգուանք և փաղաքշանք յաճախեն 'ի մէջ եղբարցն երկոցուն. և փոխանակ վայրագն ատելութեան, սէրն կաթոգին տիրէ 'ի նոսա. Մեծ է այս ապաքէն և հիացման արժանի, ոչ միայն որոց գորովաշարժ տեսարանիս պատմութեան ականջալուր գտանիցին, այլ և մեզ գլխովին որդւոց նոցին, զի փոքր

միւս ևս և կեղծիք և ցնորք երեւէին մեզ այս ամենայն դիպուած, եթէ ոգի մեր ո՛չ դրդէր զմեզ 'ի խորոց հաւատալ բանիցս և նշանաց, որք խառն էին ամենևին քաղցրահոս արտասուօք.

Այլ եկ աստանօր 'ի քննութիւն արկցուք, ո՛ քաղցրիկ կենակից իմ Ասանէթ, զպատճառ անակնկալ փոփոխման Յոսեւայ յանհնարին ատելութենէն 'ի սիրելութիւն խանդաղատանաց. Քանզի խոհականութիւնն մտաց և կիրթ դատողութիւն հօր իմոյ, քաջ գիտաց զսիրտ նորին զհնոյն հնացեալ շիջուցանել. գեղեցիկ ունակութի մտացն խոնարհութեան՝ եւ նմա կրել յանձին զծառայի կերպարանս, ոչ ինչ անարգութիւն յաչսն համարեալ զնուաստութիւն անձինն կամաւորապէս և զանունն ծառայական. Նոյնպէս և պատարագացն ընծայաբերութեամբ, և պատգամաւորացն ընդ առաջ նորին կանխմամբ խոնարհական անձնանուիրութեամբ, գիտացին զնորին մտացն զխրատութիւն ածել 'ի կակղանս և յանկուցանել 'ի խաղաղութիւն. Իսկ զի՞նչ պարտ իցէ ասել և վասն ներգործութեան ամենակալին Աստուծոյ, որոյ զօրութիւն բարեխնամ և մարդասիրութիւնն՝ զոր ստացեալ ունէր հայր իմ 'ի ձեռն աղօթիցն օգնականութեան, անդէն վաղվաղակի շրջեաց զսիրտ Յոսեւայ 'ի քաղցրութի. բռնազբօսեաց ընդդէմ բնութեանն. դարձոյց զբարկութիւնն կատաղանաց յամոք հեզութիւն, մինչ ոչ կարել երբէք յիշել ինչ զանցիցն անցելոց, այլ քաղցր և սիրալիր բանիւք մատչէր 'ի հարց որպիսութեան և կենացն վիճակի հօր իմոյ, յայտնելով նմա զսրտին խնդակցութիւն բերկրալի և կամակ զրուցատրութեամբք. Իսկ 'ի հարցանելն զմէնջ՝ եթէ ո՞յք իցեն սոքա, եւ պատասխանի հայր իմ. որդիք են իմ, զորս պարգեւեաց Աստուած ծառայի քում,

Եւ յակնարկել անդ հօր իմոյ առ մեզ, մատուցեալ յառաջ ըստ կարգի երիցութեան՝ խոնարհ երկրպագութեամբ համբուրեցաք զաջ նորա: Որոյ տեսեալ զբազմաթիւ որդիս եղբօր իւրոյ, հրաժարեաց ընդունել զպատարագսն յղեալս առ նա կանխաւ. այլ ասէ՝ են և իմ արջառք և ոչխարք բազումք, վասն որոյ շնորհեմ զայնս որդւոց քոց սիրելեաց: Այլ հայր իմ կրկին թախանձեաց զնա ընդունել, և շնորհ մեծ համարէր անձին՝ ընդունելութիւն նորին. յաղագս որոյ 'ի սէր հօր իմոյ առընկալաւ զայնոսիկ: Եւ կամելով իմն յայտնել նմա զմտերմութիւն իւր, առաջարկեաց հօր իմոյ ընկերանալ նմա 'ի ճանապարհին: Իսկ նա պատճառելով իմն զյամրագնացն լինել վասն մատաղօրեայ մանկտւոյն իւրոյ և բազմութեան հօտիցն և խաշանց, շատ համարեցաւ զշնորհս նորին ընդառաջելոյն. և խոստացաւ գալ զնորա կնի: Զայս օրինակ բաժանեալ 'ի մէնջ Եսաւայ, կալաւ զճանապարհն Սեիրայ երթալ 'ի բնակութիւն իւր. և մեք անդէն օթեւանս կալեալ գումարեցաք 'ի մի խումբ զամենայն զբազմութիւնն, և ուրախացեալ 'ի սիրտ՝ տօն ցնծութեան կատարեցաք. գոհանայր հայր իմ զխնամոցն Աստուծոյ անլուին օրհնութեամբ, և կանխեալ յաղօթս ջերմ սիրով՝ թանայր արտասուօք իւրովք առաւել քան զառաջին նուագս, խոստովանելով զնա Ճշմարիտ Աստուած և փրկիչ, որ փրկեաց զմեզ և յայսմ մեծի վտանգէ:

Այչափ էր խոնարհութիւն հօր իմոյ, որով օրինակ լեալ ամենեցուն, ձգէր զնոսա 'ի համբոյր և 'ի յամօթանս. Արտաքսեալ էր 'ի բնակութեանց մերոց կամապաշտութիւնն խոտելի, որով ջանայ հնարի մարդ զամենեսին բռնադատել յիւր կամս և 'ի հաճոյս սրտին՝ անարդարս և խոտելիս բազում անգամ. այլ անդ-

ամենայն որք զհօրն իւրոյ ունէր առաջի մտացն նպա-տակ զնման․ զի ուր հօրն հայելի վճիտ՝ խոնարհութե և անխեղճ մարուց կայցէ, զի՞նչ հնար է մուտ գը-տանել անդ հպարտութեան․ Յաղթեաց խոնարհու-թիւնն գոռոզութե եղջօրին, և եղծ զպսակն նորին․

Ճամպա զայն զոյս առաքինութի բերցուք և մեք յանձինս մեր․ ուսցուք ՚ի մէնջ, ո՛ կենակիցդ իմ սիրելի, ոչ միայն որդիք մեր, այլ որ ըստ իշխանութեամբս մերով են ամենայն մարդիկ․ Իշխանք՝ եթէ զխոնար-հութիւն յինքեանս ցուցանիցեն, և հեզութեամբ ողւոյ և անուշութեամբ բանիցն՝ համ դիցեն իշխա-նական զաւազանին իւրեանց, սիրելիք և պատկառելիք եւս լինին յաչս մարդկան․ Ամենայն որք՝ որ ՚ի տուայ-տանս ծնդիցի, համարձակ մատչի առ նոսա, և վստա-հութեամբ առաջի առնէ զվիշտս իւր․ Գովեստ իշ-խանաց առաւել պարծանօք հռչակի զխոնարհութ․ Խոնարհութիւնն անդուստ յարդարութենէ զծա-գումն ունի․ և եթէ խորարմատ հաստատեալ լիցի այն ՚ի սիրտս, զայրայթ բարկութեն ոչ գտանէ անդ մուտ, և կարճնոլլն տեղի տան նշանք բարձրաւթեղ հպար-տութեան․ Ի խոնարհութենէ հալածեալ խուսափին մարդելոյզք, երկպառակք և փոխարկուք, որոց գի-տացեալ անյարգի դոլ բանիցն իւրեանց առաջի խո-նարհաց, ոչ համարձակին երեւել նոցա և բանիւք խաղալ, և զվիշտս նոցին մեղկել ՚ի շողոմ շրթանց․ զի մի լեզուք նոցա փշրեալ մանրեսցին ՚ի հեզահամբ ոյր խոնարհութենէ․ Խնամք և շնորհք մարդասիրութեն Աստուծոյ առաւելապէս զեղեալ յորդէ զխոնարհա-մտօքն․ և որք ՚ի նոյն կրթին առաքինութի, յերամոցն լուսեղինաց պահպանին․ Եւ ո՞ր բարիք յաշխարհի կայցէ, յորոյ անմասն գտանիցի խոնարհուն․ Ո՛հ մեծ է պայ-քէն առաքինութիս, և հրեշտակացն գովաբանութեան արժանաւոր․

ԳԻՇԵՐ ՏԱՍՆԵՐՈՐԴ ԵՌԱՋՆԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Ատեւեցաւ հայր քո զհետ շաւղայն Լաբանու · թողում խոստացաւ գալ զկնի իւր ·

ՅՈՎՍԷՓ

Ոչ երբեք · քանզի եռափափաքն իղձ կարօտանայ հօր իմոյ · ստիպէր զնա աճապարել փութալ օր յառաջ առ հայր իւր · և տեսանել զնա · և վայելել յօրհնութիւնս նորին · Իսկ զի խոստացեալ էր նմա Աստուած տալ ինքեան զերկիրն Քանանացւոց · վասն որոյ մինչդեռ մերձենայր ի Քանան · յիշէր զերախտիսն Աստուծոյ · հիացեալ ի սքանչելիս բերկրէր ընդ խոստութիւն առատ պարգևաց բարերարութեան նորին · Իսկ զի գիտէր զարիութիւն ոգւոյ որդւոցն իւրոց · և զաներկիւղ համարձակութիւն սրտի նոցա · որք յամենայն անխղճելին անկեհեր անձամբ ձեռն մխել յընչայ քերեն վտանգից մահուան · մեծապէս ի վայրանս երկիւղի մտեալ տագնապէր · Վասն որոյ յամենայն բանս իւր զոյն զայս առաջին արկանէր նոցա · պարկեշտանալ ի վարս · հմտանալ ամենայն վարժիւք բարիոք կենցաղավարութեան · և բարեզգած սրտիւ պատկառ կալ ամենայն մարդավայելուչ ընթացից և բարեկարգ կենաց տնտեսութեան · ցածուն ի դէմս և անստգտանելի ի բնաւին արարս իւրեանց · որով ինքն և որդիքն իւր զանդորրականն վարեալ զկեանս անվրդով խաղաղութեամբ · նախանձաւոր ինքեանց

զամենայն ակն կացուցանիցեն ։ Իսկ եթէ յստարու-
թեան անդ զցածան և զվայրագասուն բարս զան-
ձամբ զգեցցէն, կեղտ անուն ինքեանց ստանան, անարգ
և անպատիւ զյիշատակ իւրեանց ձգեն յաշխարհի,
և բարկութեան Տեառն արժանապէս հանդիպեալ,
զրկին և 'ի ժառանգութենէ երկրին խոստացելոյ ։
Քանզի ժառանգութի̃ն իբր ոչ եթէ իրաւամբ ինչ
ածի 'ի բռին, այլ հեզութեամբ ոգւոյ և արժանա-
ւորութեամբք անձին ։ Ապա եթէ ոգւով վրէժխնդ-
րութեան վարեսջիք ընդ համասերս, հեռացեալ տա-
րագրիք յօրհնութենէս և 'ի ժառանգութենէս ։ և
Աստուած դժկամակ լինեալ ընդ ձեզ, զամենայն ըզ-
բարութիւնս՝ զոր հանդերձէ մեզ, դարձուսցէ 'ի չը-
հաճոյս ձեր, և խնամք գթութեան նորին հանապազօր
'ի նուազութիւն ամփոփեսցին 'ի վերայ մեր ։

Յայսոսիկ խրատէր զնոսա յամենայն ժամ, և ո՛չ
ներէր նոցին բնաւ դուզնաքեայ պակասութեանց՝ յոր
գթէինն ։ Յաղագս որոյ և նոքա յամենայնի զգոյշ և
արթուն կային ։ Թէպէտ և երբեմն արիութիւն սրտի
նոցա և հրացեալ տապ եռանդեան կրիցն՝ բորբոքեալ
աշխուժութեամբ բուռն լինէր նոցա, և ձգէր զնոսա
խրոխտանս արձակել և սպառնալեօք փքալ 'ի վերայ
այլոց, այլ երկնչէին այո՛ 'ի հօրէ իւրեանց, որ բազմիցս
կարճէր զձեռս նոցա չտալ ինչ ումեք վնաս, և խուել
զոք ։ Վասն այսր խրոխտապանծ ձեռներիցութեանն՝
որով բնաւորեալ էին, բազում յանդիմանութիւնս
և սաստս ընդունէին 'ի հօրէ իւրեանց, որ ջանայր
շիջել զնոսա 'ի խիստ բարուցն և ածել յուղղութի̃,
կրթել հրահանգել 'ի վարս քաղցունս, բարեկեաց
ընդ մարդկան լինել ։ Մանաւանդ յորժամ մերձեցաք
յերկիրն Քանանացւոց, եբաց զբերան իւր առնուլ
զթել սովորական խրատաբանութեան իւրոյ, և խօսել

ընդ ամենեսին ընդ մեզ օրինակ զայս . Որդեակք իմ, ասէր , աւասիկ հասեալ մօտեցաք մերձ 'ի սահմանս Քանանացւոց , յորոց միջի ունիմք կալ պանդխտաբար , մինչեւ այցելութիւն Տեառն տացէ մեզ 'ի պարգեւ զերկիրս զայս . Վասն որոյ երեքկնեմ և չորեքկնեմ առաջի ձեր զոր ինչ մինչեւ ցարդ երկրորդեցի , չխախտել բնաւ զպատուիրանս իմ . Լերուք գթածք , հիւրասէրք , քաղցունք , ջանալով միշտ 'ի շինութիւն ընկերին . որպէս զի բնակիչք երկրիս տեսանելով զգործս և զմարդավայել վարմունս ձեր , պատկառեսցին 'ի ձէնջ , աչառանօք ընդ ձեզ գնայցեն , և յօրինակ ըղձեզ կալեալ վարժեսցին 'ի բարեմոյն կրթութիւնս . Սէրք ձեր եղիցի ձեզ գովօղ , և ամենայն բերան զառաքինութիւնս ձեր 'ի գովեստ առեալ՝ փառաւորեսցի յանուն ձեր բարութիւն Տեառն . Կրթեցէք զմիտս ձեր յերկիւղն Աստուծոյ , զի որ երկնչի 'ի Տեառնէ , զճանապարհս իւր հաստատէ 'ի բարութե̃ . Շնորհք ընթանան ընդ առաջ նորա , և առաքինութե̃ պսակի համբաւ նորին . Առաջի ձեր կայ պարզեալ ասպարէզ ընդարձակագոյն՝ շահատակել 'ի մարզս բարեմասնական վաստակոց , պայծառազգեաց վարուք չքնաղ և հոյակապ հանդիսանալ առաջի ամենեցուն և ամենատես աչացն Աստուծոյ . Քանզի մեծ է և անքննելի ողորմութիւնն նորին , և վաղ հասանէ 'ի թիկունս տկարութեան ձերոյ , զօրացուցանէ և աւուրց յաւուրս յաճախէ զփառս և զբարօրութիւն ձեր . և ըստ խոստման իւրում պարգեւեսցէ ձեզ զերկիրս զայս , զոր խոստացաւ Աբրահամու հաւուն իմոյ և Իսահակայ հօրն իմոյ , տալ զերկիրս զայս 'ի ժառանգութի̃ որդւոց նոցա . Եւ ո՞ք որդիք նոցա՝ զորս անուանէ , եթէ ոչ դուք , պարգեւեալք ինձ յԱստուծոյ . ուստի ձեզ և որդւոց ձերոց լիցի երկիրս

այս ՚ի ժառանգութիւն սեփական. Իսկ և դուք փոխանակ կացջիք բեւեռեալ յօրէնս և յերկիւղ Տեառն, ահիւ և դողութեամբ յամենայն ՚ի կեանս ձեր. յամենայն ժամ գործեսջիք զբարիս առ ՚ի լինել արժանաւոր ժառանգ, և վայելել յաւիտօրէն պարգեւս նորա. Ահա մնայ մեզ առ վաղիւն ժամանել ՚ի քաղաքն Անկիւր, նմին իրի պատուիրեմ ձեզ զբազում անգամ պատուիրեալն իմ, քաղցրութեամբ վարիլ ընդ բնակչացն, և ընդելանալ բարուց նոցա, զի մի ինչ վնաս և վիշտ պատահեսցի ձեզ, և զիս տրտմութեամբ ՚ի մահիճս ցաւոց իջուսջիք.

Աստիկ օրինակ զայս խրատէր զմեզ հայրն մեր, ո՛ քաղցր կենակից իմ. Ո՛չ Թէ և ամենայն հարք ըստ այսմ եղանակի խրատեալ հրահանգէին միշտ զզաւակունս իւրեանց, որով բառնայր գլխովին յաշխարհէ չարիք և Թշուառութիւնք. Քանզի զոր ինչ անհարթութիւնս և չարիս տեսանեմք յաշխարհի գործեալ, պտուղք են անկրթութեան և խակութեան բարուց եռանդուն պարմանեաց. Զի ծնողք չափազանց գԹով սիրելով զորդիս իւրեանց, փափուկ և քնքուշ սնուցանելով, և ոչ կամելով յանդիմանել և խրատել զնոսա, զի մի տրտմեսցին, պատճառ լինին չարեացս, զոր գործեն նոքա, ՚ի լկտութիւնս հատեալ կործանեալ, և զամօԹն յանձանց բոլորովին իբրու զգտակ գլխոյ ՚ի բաց մերկացեալ. Բարիոք դաստիարակութիւնն՝ զընկերութիւնն մարդկային հաստատեալ կազմէ ՚ի շաւիղս ուղղութեան, և բարեկարգ յարդարէ զաշխարհիս ընԹացս.

Տես ապա քանի պատժապարտք և համարատուք գտանին ծնողք, որք խնայելով ՚ի վիշտս և ՚ի տրտմութիւնս զաւակացն, Թողուն զնոսա ՚ի հաճոյս իւրեանց՝ կամասէր, կամագնաց լինել, մինչև ստա-

հակ. որոց և ունակացեալ ՚ի նոյն չարութիւն, ողջոյն քաղաքի միոյ և ազգի իսկ իւրեանց կործանման և անշքութեան լինին պատճառ. Լա՛ւ եւս էր նոցա եթէ չէին ծնեալ երբէք, որք թէ՛ զինքեանս և թէ զծնողս իւրեանց ՚ի նախատինս կործանեն, ընդ պարսաւանօք ածեն. Քանզի՛ և որոց գամ մի ՚ի չմարդի բարս և յանօրէն գնացս խեռւեալ հաստատիցին, և ժամանակս բազումս ՚ի վերայ ձգիցին, այնուհետեւ չկայցէ ակն յուղղութիւն կրթելոյ և բարեզգեաց վարս ստանալոյ. Որ օրինակ ծառ՝ եթէ ՚ի դալարութեան և ՚ի դեռաբոյս աճելութեան անդ խնամոյք մշակին ուղղիցի, լինի ծառ ուղղաբերձ, և ՚ի շինութիւն կերտուածոց օգտակար և ամենայն իրաց կարեւոր. Իսկ եթէ անխնամ թողեալ՝ ծուռ և թեք զհասակն և զբունն ունիցի և այնպէս աճեցեալ ձգիցի, անպիտան յամենայնի մնայ, և ՚ի պէտս շինուածոց անյարմար. այլ միայն ՚ի հուր արկանելի և նիւթ կրակի պատրաստի. Ահա այսպէս և ամենայն որդի ստահակ՝ ընկերութեան մարդկան անպիտան և անօգուտ, այլ միայն հրոյ չարութեան իւրեանց, և զայլս ՚ի նոյն խանձողեն.

ԳԻՐՔ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ.

ՇՍԱՆԻԹ

Ո՞ւր է քաղաքն Սիկիմ, և թէ կա՞յին անդ եղբարք քո ըստ խրատու հօր քո.

ՅՈՎՍԷՓ

Սիքեմ քաղաք է 'ի գաւառին Պաղեստինոյ, մերձ 'ի Սամարիա, 'ի մէջ երկուց լերանց, յստորոտս արեւելեան լերին զդիրս ունելով. Երկայնութիւն նորա ձգի հիւսիսոյ 'ի հարաւ. լայնութիւնն ոչ է հաւասար երկայնութեանն. Ըստ ստորոտով լերանցն անցանեն առուք կարկաջահոսք, որք բղխին 'ի նոյն իսկ 'ի լերանց. դաշտք եւ հովիտք յառուակաց անտի ոռոգեալ, յուռթի եւ բեղմնաւոր զվայրն գործեն, եւ պարտէզք դալարաբոյսք զուարձալի աչաց մարդկան ընծայեալ՝ զբնակութիւն հեշտալի առնեն. Յերկոսին կողմանս քաղաքին տեսանին դաշտք ընդարձակք եւ արգաւանդահողք. օդ նորա քաղցր եւ մաքուր. բնակիչք երկրին՝ վասն բարեխառնութեան օդոյ, ուժեղք են, առոյգանձն, եւ գոյն դիմացն ցորենագոյն. Իսկ լեառն որ 'ի կողմն արեւելից՝ բարձր է քան զարեւմտեանն, եւ կատար նորին զարդարեալ մշտադալար ձիթենեօք. եւ է շտեմարան ականակիտ ջուրց աղբերց. Լի է երկիրն ընդարձակ մարգագետնովք 'ի պէտս արօտականաց. ամենայն ազգ պտղոց գտանին անդ. Ձմեռն ոչ տեւէ սաստիկ, ձիւնապատ զարտօրայսն պահելով, այլ 'ի սակաւ աւուրց միջոցի հալին. վասն որոյ նախ քան զգարունն սերմանեն զարմտիսն. Բնակիչք նորա ըստ մեծի մասին են հողագործք, գոն եւ արուեստաւորք ազգի ազգի.

Յայսմ երկրի գնեաց հայր իմ տեղի վասն խաշանց եւ անասնոց մերոց. եւ մեք միշտ ը̅ վրանաւ կայաք բնակեալք. Իսկ տեղին այն՝ է դաշտ ընդարձակ, եւ անկանի 'ի հիւսիսակողմն արեւելեան լերին, 'ի լանջաց մինչեւ ցստորոտս նորին տարածութեամբ ձգեալ.

ուր և փորեաց ջրհոր , առ 'ի արբուցանել անտի սեփականապէս զխաշինս և զամենայն անասունս մեր . Մանաւանդ զի և բնակիչք տեղւոյն շահեցեալ անտի , բարեկամութեամբ և խաղաղութեամբ կացցեն մնասցեն միշտ ընդ մեզ .

Նստանօր կամիմ իսկ ոչ պատմել զանցս ցաւալի աղետիցս՝ որ պատահեցին մեզ . քանզի ցանկալի առաւել ընդ լռութեան վարագուրաւն սքօղեալ թագուցանել քան զողբալխոհ լսելիսդ քո արտասուորել , այնչափ պատկառանք և ամօթ լից 'ի ներքս ընթանան . այլ յանձն առնում յաւէտ արձանացուցանել 'ի բան 'ի զգուշութիւն նորաթեք և անփորձ դստերաց , որոց գիտացեալ զբազմազգի հաղբս վտանգիցն՝ յորս յոռովագոյն նուագս անկեալ սաղայի կուսութեան նոցին պատուականութիւն , և կապտի յինքեանց անմեղութեան և համեստութեանն գանձ . Ըստ որում և այս որ առաջի կայ իմ՝ առնուլ 'ի ձեռս , յանխոհեմ սիրոյ և յերկրասարդական 'ի բուռն հեշտակիր կրից ծագեալ յառաջացաւ .

Արդ՝ որպէս յանցելումն գիշերի պատմեցաք , երկու էին կանայք հօր իմոյ , Ռաքել մայր իմ , և Լիա՝ որ ընդ այլ որդւոց իւրոց՝ ունէր և դուստր մի Դինա անուն . և զի միածին էր , վասն որոյ փափկութեամբ սնուցանէր զնա մայր իւր . հովասուն էր և 'ի գիրկս մայրենի գրգեալ և գգուեալ . Կամք նորա՝ իշխէին 'ի վերայ կամաց մօրն , զի առաւելութիւն սիրոյն՝ գողանայր զսրտին անաչառութիւն , անգիտանայր զվտանգըն՝ զոր առաջի պատրաստէր դստերն . Խոլթայր այս բացխփիկ հոպոպանօք առաջի երեւել հօրն և բանալ զբերան իւր . զի աճարկութիւն նորա և դէմքն պատկառելի , սասանութեամբ լնոյր զսիրտս ամենեցուն . Հայր իմ՝ քանզի 'ի կրթութիւն որդւոցն և 'ի բազ-

մադլիմի արարման նոցին զբաղեալ կայր անդուլ, ոչ ատրկէր և զդստերն իւրոյ զվարս և զբարս յարդարել և 'ի համեստութիւն կրթել, այլ հաւատացեալ էր զնա 'ի խնամս մօրն, մատուցանել նմին զպատկանաւոր դաստիարակութիւն, և 'ի շնորհս գեղոյ իմաստութեան և առաքինութեան զնորա միտս և զհոգի զարդարել. Նմին իւրոյ դստերն փութայր կատարել զկամս, և լնուլ զհաճոյս նորին. Թախանձէր նա զմայր իւր, և մայրն առ 'ի չտրտմեցուցանել զնա և 'ի խոր խոցել զսիրտ նորին, առեալ զամենայն զարդս պաճուճեալ սեթեւեթէր և փերեւեւտէր զնա աւելագործ պըճնութեամբ.

Իբրև եղեւ օր մի յաւուրց, հրաման առեալ 'ի մօրէն և զարդարանս զանձամբ արկեալ գնալ 'ի Սիկիմ հանդերձ աղախնեօք. Տեսանէ անդ զդստերս Սիկիմացւոց պճնեալս 'ի զարդ և 'ի յարդ, ոչ միայն 'ի հանդերձս, այլ և ծաղկանկար աստղանիշ վէտս գործեալ 'ի վերայ մարմնոյ իւրեանց, 'ի բազուկս, յայտս և 'ի ճակատն. Իսկ տարազ հանդերձիցն և արտաքին զարդքն են օրինակ զայս. շապիկ փորանկեալ վերուստ 'ի վայր ունին արկեալ գոյնզգոյն մետաքսիւք գործ նկարէն. քօղ զգլխովն ծածկեալ յետս կոյս կախ ունելով և փնջազարդ. երեսք նոցա հանդերձ բերանովն և ընչովք պքօղեալ շղղամաթեայ բեհեզով. ձեռք նոցա մատանեօք և բազուկքն արծաթի ապարանջանօք զարդարեալ, զմիջովքն ունելով առասան փոխանակ գօտւոյ ածեալ. Նոյն և 'ի սրունս ոտիցն կրեն օղամանեակս, որով պանծալի և գեղապաճոյճ զինքեանս ցուցանեն, և կարծեն զամենայն ոք միապէս գեղոյ և զարդուց իւրեանց կացուցանել.

Իբրև տեսանէն սոքա զԴինա գեղեցկայարդար պճնեալ զարդարեալ և 'ի գեղ դիմացն և կերպարանին

առաւելեալ յոյժ անհամեմատ շքեղութեամբ, շուրջ պատեալ խունկին զնովաւ. և ըստ հետաքննին բնութեան իւրեանց բան 'ի մէջ արկեալ՝ առնուն ընդ նմա խօսիլ, և հրապուրեալ ձգին խեղդիւք 'ի տես նորին. Քանզի և Պրինա՝ որպէս ասացի, զարդարուն զկերպարանս իւր ունէր, ոչ միայն գեղով մարմնոյն, այլ և արտաքին զարդուքն. տարազ զգեստու նորա ըստ արեւելեան սովորութեան՝ ոսկեճամուկ պճղնաւոր. գօտի նորա մարգարտաշար հիւսուածովք յեռեալ, շղաշար զգլխովն արկեալ՝ ծիրանեգոյն 'ի նուրբ բեհեզոյ, ընդ որ ծամակալ վարսիցն սփռեալ ոսկեփունջ շողշողէր, արտաքս ծաւալեալ զուսովքն սեւաթոյր գիսակքն պաղպաջուն. Օերեսօքն ունէր արկեալ նրբաթել բեհեզ, ընդ որ կարմրութիւնն բոցավառ 'ի բոսորագեղ այտիցն թափանցեալ ցայտէր. Կօշիկս գեղունս յոտս իւր կրեալ, վարտեօք պարկեշտացեալ. քայլ ոտիցն նազելի և սիգաճեմ 'ի գնացս. գեղեցկահասակ և բարձրագեղ անձն նորա իբրեւ զնոճի ուղղաբերձ ճախարակեայ տիօքն. վասն որոյ 'ի մէջ օրիորդացն Սիկիմացւոց բարձրադիտակ գեղով երեւեալ՝ յապուշ և 'ի հիացումն կրթէր զամենեցուն զսիրտս.

Իբրեւ այս օրինակ ապշութեամբ խօսակից լինէին ընդ նմա, և ահա եկն և անցանէր ընդ այն ուղի իշխանի քաղաքին՝ երիտասարդ հասակաւ. որ իբրեւ ետես զժողով դստերացն Սիկիմացւոց յակճիւս կացեալ 'ի տես կուսի միոյ օտարի, մերձեցաւ առ նոսա. և տեսեալ զՊրինա՝ անդէն վառեցաւ 'ի սէր նորա, և հուր մոլեկան տռփանաց բորբոքեալ 'ի սիրտ նորին՝ տոչորեաց անհնարինս 'ի ցանկութիւն. Որոյ վասն հրամայեաց ածել զնա 'ի բնակութիւն իւր. այլ ողջախոհն Պրինա բազմօք ջանացաւ ընդդէմ կալ.

գիտելով չափ զնենգաւոր դիտաւորութիւն երիտա-
սարդին, 'ի չնաս և 'ի վտանգ իւրոյ կուսութե̃ն լինել.
Սակայն զիարդ կարելի իցէ զերծանիլ 'ի ձեռաց
գազանաբարոյ սպասաւորաց նորին, որոց անդէն յար-
ձակեալ 'ի վերայ կուսին, բռնութեամբ առեալ ա-
ծեն 'ի տուն երիտասարդին. որոյ 'ի սաստիկ հեշտակիր
կրիցն իւրոց աներասանաբար վարեալ, բառնայ 'ի նմա-
նէ զկուսութեան կնիք, և պահէ զնա առ իւր.

Տես արդ ո՛ սիրելի կենակից իմ, զանհնարին չա-
րութիւն և զանօրէնութիւն վաւաշոտ շամբուշ երի-
տասարդին իշխանազնոյ, որ յանձին բարձեալ զպար-
տաւորութիւն պահելոյ զքաղաքն յամենայն անիրաւ-
ութեանց, և նախանձախնդիր լինելոյ պատուոյ ամե-
նայն հպատակացն իւրոց, տանջելով և պատժելով
զօրինազանցսն, առ 'ի տալ այլոց օրինակ զգուշութեան
և զգաստութեան. ինքն անօրէն գործովն իւրով 'ի
մոլութիւնս հատեալ՝ ոչ միայն գայթակղութիւն այլոց
պատճառեաց, այլ և ընդդէմ իրաւանց արդարութե̃
ընդվզեալ խիզախեաց. Զի եթէ որ արդարութեան
պաշտպան կայցէ, գործիցէ զայս օրինակ անիրաւու-
թիւն, զիարդ այնուհետև դատեսցէ զայլս իրաւամբ.
և ուր դատաւորք զայն գործեն, տեղի տայ անտի
արդարութիւնն, և մոլութիւնք 'ի ներքս մուծանին.
որոց տիրեալ 'ի վերայ սրտի դատաւորին, խանգարէ
զմիտսն, կուրացուցանէ զաչսն, և զանմեղ անձինս 'ի
զոհ պատրաստէ իւրոցն կրից.

Ապա որ կամիցի ոք լինել իշխան և դատաւոր 'ի
վերայ ժողովրդեան, իշխեսցէ նախ իւրում անձին,
դատեսցէ արդարութ̃բ զանձինն զգործս և զարարս,
քննելով յամենայն վարկենի զխիղճ իւր, և քաջ
'ի միտ առնուլ, զի որով եղանակաւ զայլսն դատիցէ,
նովին և զինքն գտցէ դատեալ յանաչառ դատաւորէն.

Սուտի դատաւորք և իշխանք կարգեալ կան 'ի պաշտպանել զանմեղութիւնն և զարդարութիւնն գործադիր իրաւամբք և անաչառ վճռաւ. պահել զպատիւ, զինչս և զհարստութիւնս մէն մի իւրոց ստրկաց, ոչ տաղտապել տագնապել և քեցել զփարթամութիւնս գոյաւորաց, ոչ առ ոտն կոխել զարտասուս և զիրաւունս աղքատին, և ոչ զհամեստացելոցն գողանալ զսուրբ ամուսնութեանցն զպատիւ և զկուսութեանն պարծանս. Իսկ որք օրինակ զսոյն յանօրէնութիւնս հատեալ կործանիցին, գիտասցեն՝ զի որ ամենայն արարածոցս տէրն է, և տէր անաչառ, ըստ գործոց գնացից նոցին հատուսցէ նոցա սաստ և 'ի հանդերձելումն.

ԳԻՐՔ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Ոչ լուան եղբարք քո զառեւանգութիւն քեռըն իւրեանց Դինայի. և զիա՛րդ, ոչ 'ի վրէժխնդրութիւն անդէն զ՚եռս լալեանց զինեցին ըստ ընդաբոյս բարուց ձեռներէցութեանն.

ՅՈՎՍԷՓ

Եղբարք իմ պատաղեալ 'ի վերակացութիւն խաշանց արօտականաց, կային արտաքոյ, և ուր ուրեմն 'ի տարաժամել աւուրն հասին 'ի տուն. Իսկ որդի իշ-

խանին, որ կալեալ ունէր զկոյսն 'ի տան իւրում, պատգամաւորս առաքեալ էր 'ի հարսնախօսութիւն. Այլ հայր իմ, որ իրազեկ լեալ էր և 'ի վերայ հասեալ ամենայն անցից յիւրոցն աղախնեայց, 'ի տրտմութի անհնարին մածեալ ընդ քստմնելի տարօրինակ պատահմունսն, պատասխանւոյ անգամ չհամարեաց արժանի զպատգամաւորսն. այլ մտեալ 'ի ներքսագոյն վրանն, տարածեաց զանձն իւր ընդ գետին առաջի Աստուծոյ կեղերջական ողբովք և զլալ հարեալ խնդրէր 'ի նմանէ այցելու լինել ինքեան, և մի իսպառ ընդ աղբ և ընդ խաղբ զանձն կացուցանել, և զպատիւ իւր յինքենէ 'ի բաց մերկանալ. Քանզի Սիւքեմ թէպէտ և որդի իշխանազնի, այլ գործք նորա զանիրաւութենէ անձինն բողոքէին. Զի թէ որ տեսեալ զառաջինն զկոյսն 'ի մէջ դստերացն Սիկիմացւոց, խնդրեալ էր զնա 'ի տիկնութիւն իւր, մինչև բարձեալ 'ի նմանէ զպարկեշտ անկողնոյն զանբծութիւն, գուցէ երբէք հաւան գտեալ հօր իմոյ՝ խոնարհէր 'ի համեստ հայցուած նորին 'ի շնորհս ազնուականութեան ազգատոհմին. Իսկ յետ կապտելոյ 'ի նմանէ զկուսական հանդերձն, և կատարելոյ զհեշտութիւն կամացն իւրոց, և խնդրել զնա դեռ 'ի կնութիւն, ոչ միայն կեղծիք էին, այլ և իսկ անօրէնութիւն, զոր ոչ էր մարթ ծածկել և գողանալ 'ի խոհական մտաց. քանզի բռնութեամբ առեւանկեալ և լցեալ ունէր զկիրս քարշութեանն.

Այլ պատգամաւորքն եկեալք 'ի հարսնախօսութիւն, յերկիւղէ որդւոյ իշխանին ո՛չ թողին զվրան մեր. և երդուեան չմեկնիլ անտի 'ի բաց, մինչև առեալ զպատասխանի օրինաւոր ամուսնութեանն. Յայնմ պահու միջոցի հասին եղբարք իմ 'ի տուն, և ոչ տեսեալ զհայր իւրեանց յիւրում տեղւոջ

բաղձալ, խռովեցան. և զդէմս ամենայն ընտանեաց մերոց 'ի խոր տխրութեան և 'ի թախիծս անհնարին սգոյ գտեալ, 'ի կասկածանս տարակուսանաց անկան. և աւրին 'ի ձեռս սաստիկ պնդութեամբ հարցանել զինչ անցք դիպուածոյ ընդ նոսա անցեալ իցէ. Նա մանաւանդ զհեկեկանս արտասուախառն լալեացն տեսեալ, յաւաւել տրտմութիւն սիրտ նոցին զաւածան, և գուշակ եղեն անցիցն Դինայի, քանզի զնա ոչ առ աչօք ունէին. Եւ մինչ կամէին ընդ պատգամաւորացն խօսել, և դեռ բանքն 'ի բերանսն էին, եմուտ 'ի ներքս իշխանն քաղաքին և որդի իւր Սիւքեմ ընդ նմա. Աղաչէին կողկողագին տալ զԴինա 'ի կնութիւն Սիւքեմայ, յանձն առեալ հատուցանել որքան ինչ օժիտս ընծայից փոխանակ ընդ նորա պահանջեսցեն, ցուցանելով յինչ ոչ ագահել բնաւ որչափ 'ի ձեռին բաւականութիւն իցէ. Նա՝ յետ այսորիկ եղիցի, ասեն, օրէնք հաստատութեան 'ի միջի մերում, մի գրեսջիք դուք յօտարս և 'ի պանդուխտս յաչս մեր. այլ առջիք 'ի դստերաց քաղաքիս որդւոց ձերոց, և տաջիք զդստերս ձեր որդւոց ազնուականաց մերոց, որպիսի ոք է և որդի իշխանիս. Աւասիկ ամենայն քաղաքդ և գիւղք առաջի ձեր կան, ուր և հաճոյ իցեն յաչս ձեր՝ կալջիք զբնակութիւն. և ուր կամք իցեն ձեզ արկանել սերմ և վարել և զխաշինս և զամենայն զխոտաճարակ կենդանիսդ ձեր արածել, ահաւասիկ պատրաստ կան առաջի ձեր, գրեսջիք իբրև զք 'ի բնակաց քաղաքիս.

Շմաւօն և Ղեւի՝ որդիք Լիայ, պատասխանի արարին և ասեն. Ոչ կամիմք տալ զքոյր մեր առն անթլփատի, և խնամենալ ընդ մարդկան՝ որք ապստամբք են 'ի մերոց օրինաց, զի նախատինք են մեզ այն. Արդ՝ եթէ կալջիք յանձին ձերում թլփատել զամ

արու քաղաքիդ, եղիցուք ձեզ բնակակից, և տացուք ձեզ զդստերս մեր, և զդստերս ձեր առցուք 'ի մեզ.

Այս առաջարկութիւն թէպէտ և դժուարին թուեցաւ նոցա 'ի սկզբան, զի հայէր առ ամենայն այր քաղաքացի, այլ տեսեալ զի 'ի հրամայել իւրեանց և 'ի դժկամակել ընդ բանս նոցին, ոչ կարեն առնուլ զԴինա, առ որ մեծական տռփանօք հալեալ էր երիտասարդն վաւաշ, և բռնացեալ ունէր զամենեցուն զսիրտս, խոստացան և զիջան յակամայս 'ի խնդիր նոցա, թլփատել զամենայն արու որ 'ի քաղաքին էին, և նմանիլ նոցին. Եւ զայն առանց ինչ ընդ բանս ածելոյ, հապ ընդ ճեպ փութով ձեռն 'ի գործ մխեցին թլփատելով զանթլփատութիւն իւրեանց 'ի միում աւուր. Եւ մինչ նոքա 'ի ցաւս դեռ վարակեալ կային, Շմաւոն և Ղեւի յափշտակեալ ըղսուրս իւրեանց՝ ամենայն պատրաստութեամբ մտին 'ի քաղաք, և զամենայն արու՝ որ անդր կային, ետուն ճարակ անողորմ երկսայրոյն, բարձին և զորեւ իշխանին և որդւոյ նորա Սիւքեմայ, 'ի բաց առեալ զԴինա զքոյր իւրեանց. Եւ ոչ այսու շիջաւ կատաղութեան նոցին բոց, այլ անդր եւս 'ի վեր ընթացան, առին զամենայն զառ և զաւար քաղաքին, և յափշտակեալ 'ի ստրկութիւն վարեցին զամենայն զոր ինչ գտին 'ի նմա.

Տես ինձ արդ՝ սիրեցեալդ իմ Ասանեթ, զիարդ չարիքն մի զկնի միոյ հասին 'ի վերայ. զմտաւ ած. յիշեա զինչ էր պատճառ նոցին. Քանզի եթէ բարիոք դաստիարակութեամբ կրթեալ էր Լիայ զԴինա զդուստր իւր, բնաւ իսկ ոչ ունէին երբէք տեղի դըժբաղդութիւնքս այս, և ոչ տեսարան այսպիսի աղետալի և ողորմ ծագէր բնաւ, զոր 'ի յիշատակէն իմ արդ՝ քստմնին հերք իմ և դողումն զանդամս իմ ունի.

Կնոջ՝ մայր եղելոյ ուստերց և դստերց, անհրաժարելի պարտք են՝ պատկան և պատշաճ կրթութեանք հրահանգել զդստերս իւր, ո՛չ միայն 'ի համեստ և յաստուածապաշտ վարս կիրթ տալ, այլ ընդ նոյին տնկակից տունել և զհեզութիւնն, զցածութիւն, զամօթխածութիւն. ջերանիլ 'ի գութ նոցին, այլ ոչ զանցանել քան զհամոյսն և քան զչափոյն. Օ՜ի եթէ ցանկ և անխտիր զսիրով գայցեն ընդ նոսա, և չգիտիցեն չափ և համ՝ դնել մայրենի գորովոյն, և 'ի գըրկացն ոչ երբէք բաժանիցեն, լկտիս և անպատկառս զնոսա կացուցանեն. և զօրէն գուսանաց և վարձկանաց զամօթն երեսաց 'ի բաց մերկացեալ, 'ի լրբութիւնս հաստանիցին, և յանպարկեշտ վարս բացխփիկ խաղայցեն. Արդ և Դինա, թէպէտ և չէր անկեալ 'ի սոյն վտանգ, այլ չափազանց գութ ծնողին՝ պատճառս ետ համարձակութեան նորա, որով 'ի սակս զբօսանաց ելանէ 'ի տանէ, առանց աջակից ինքեան զմայրն ունելոյ, և կորուսանէ զգանձ կուսութեան իւրոյ, զոր աշխարհ ամենայն ոչ կարէ հատուցանել.

Օրիորդք կոյսք անարժան զանձինս կացուցանեն, եթէ առաւել քան զվայելուչն բերիցին 'ի զարդարանս, և 'ի հանդերձս փափկութեան ընդոզնիցին. քանզի սեփական զարդք իւրեանց է համեստութիւնն բարուց և կամակատար հլութիւն առ ծնողս, որով միայն մարթին կորզել անձանց պատիւ և գովեստ. Ապա եթէ զհետ հետաքրքիր բնութեան և նորասիրութեան ձգեալ, առանց հրամանի և պաշտպանութեան մարցն դիմեսցեն 'ի զբօսանս, 'ի տեսարանս և 'ի հանդիսական տեղիս յաճախեալ անխտիր կաքաւիցեն, կորուսանեն զզգաստութի̃ և զպատիւ իւրեանց. Թէպէտ և ոչ միշտ այսպիսի յանդուգն մոլի և անառակ մարդկան հանդիպիցին, այլ բանս ընդդէմ

պարկեշտութե̃ խենէշս և աղտեղիս լուեալ՝ վտանգի ողջախոհութիւն լսելեացն և ամբողջութիւն մտացն. Քանզի կոյսք բազումս գիտեն առթել ինքեանց թշնամիս և տարփածուս, յորոց միջի գործ մեծ է անկողոպտելի պահել զանմեղութիւն և զանարատութիւն իւրեանց. Ապա լաւագոյն է կուսից չըհեռանալ բնաւ երբէք 'ի ծնողաց, և չտալ տեղի կամաց և ցանկութեան երիտասարդաց.

ԳԻՐՔ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՉՈՐՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Որքան ուրախ եղեւ արդեօք հայր քո ընդ իրաւացի վրէժխնդրութիւնն Շմաւոնի և Ղեւեայ վասն քեռն իւրեանց Դինայի.

ՅՈՎՍԷՓ

Ոչ երբէք ուրախացաւ հայր իմ ընդ անխոհեմ արարս նոցա, այլ մանաւանդ բարկացեալ սրտմտութեամբ 'ի վերայ նոցա՝ ասէր. Ատելի արարէք զիս 'ի մէջ ազգաց. Քանզի վրէժխնդիր լինել չարեաց՝ չէ գործ մարդոյ. և կարի իսկ քաջ. զի մարդիկ՝ միանգամ շարժեալ կրիցն ցասման, ոչ կարեն 'ի չափու ունել զկատաղութեանն զայրուց. և վարեալ

զինու քինախնդրութեան , յանդգնին անձնամուխ լինել և յայլ անիշխելի չարիսն , և անցանեն զանցանեն ըստ չափ արժանաւոր պատուհասի , ընդդէմ մեղանչելով արդարութեան և իրաւանց դատաստանի ։ Արդ լաւ է յանձն առնել զամենայն իրաւունս արդարութեանն Աստուծոյ , զի նա միայն է վրէժխնդիր անաչառ , որ ոչ առնու ակն երեսաց ուրուք ։ և կամ արդարադատ և իրաւասէր դատաւորի առ ՚ի նմանէ կարգեցելոյ ։ որոյ յետ մանրակրկիտ խուզողութեամբ քննելոյ զամենայն արարս անիրաւութեանն , օրինօք պատժէ զյանցաւորն ։ Այլ և Աստուած՝ յետ բազում երկայնմտութեան , եթէ ոչ ուղղիցի յանցաւորն ընդ զեղջ և ընդ ապաշաւ եկեալ , պատիժ պատուհասի ըստ արդարութեան օրինացն կապէ ընդ գլուխ նորին ։ Արդ ո՛ ոք որ զերկայնմտութիւնն թշնամանեալ՝ ոգւով վրէժխնդրութեան յախուռն գործիցէ , սխալի ։ Քանզի՝ եթէ վասն անձինն շահու և օգտի վառեալ ինչ իցէ ՚ի վրէժխնդրութիւն , ՚ի ձեռս դատաւորին պարտ է նմա յանձնել զկատարումն ։ Իսկ եթէ վասն փառացն աստուածայնոյ ՚ի նախանձայուզութիւն հատեալ , առանց ինչ ատելութեան և թշնամութեան կրից վարիցի ՚ի փոխարէն չարեացն հատուցմունս , յայնժամ աներևոյթ զօրութիւնն Աստուծոյ յօգնութիւն հասեալ նմին , ինքն համարի դատաւոր յաստուածակոյս կողմանէ կարգեալ , խնդրել զվրէժ փառաց և անուան նորա ։

Արդ քաջ իսկ գիտէր հայր իմ զայս ամենայն , և կատարեալ քաղաքագէտ էր և արդար օրինաց վարիչ ։ Իսկ գործ Շմաւոնի և Ղևեայ՝ էր յանդգնութիւն մեծ և անխոհեմութիւն , ընդ որ բնաւ երբէք չհաճեցաւ հայր իմ ։ մանաւանդ՝ անօրէնութբ դատել զգործ անօրէն , և չար փոխանակ չարի հատուցանել ,

հեռի և հակառակ ուրեմն էր յօժարութեանց իւրոյ. Յաղագս որոյ պաշարեալ 'ի Թախիծ տրտմութեան, ողբայր և լայր առաջի Աստուծոյ, խնդրելով փրկել զնոքն 'ի վշտաց՝ որք կարէին յառաջանալ 'ի քաղաքաւեր և 'ի մարդակոտոր անիրաւութենէ անտի. Քանզի Քանանացիք ազգ մեծ էին, բաց 'ի բնակչացն Սիկիմայ՝ էին և այլ բազում ազգայինք նոցա և համացեղք 'ի շրջակայ բնակութիւնս. որոց 'ի լսել զկործանումն և զկոտորած քաղաքին 'ի սուր սուսերի արանցն ամենեցուն ածեալ յոտարականաց ոմանց պանդխտաց, և զաւարառութիւն ընչից և զգերութիւն՝ վասն անարգանաց կուսի միոյ; իսկ և իսկ ճակատ յարդարեալ, գունդ հատեալ գումարէին զմեօք 'ի մարտ պատերազմի, և զնոյն հարուած՝ զոր մեք նոցա տուաք, դարձուցանէին 'ի գլուխ մեր. Զայս ամենայն զմտաւ ածեալ Հօր իմոյ հասուն խորհրդովք, առաւելապէս իմն 'ի տրտմութիւն խորին Թախծանաց համակէր. և ոչ գտեալ ուստեք հնարս և ձեռն օգնականութեն, յաղօթս ապաստան լինէր առ Աստուած կանխեալ, փրկել զնոքն և զամենայն ընտանիսն 'ի վերահաս վտանգէ և 'ի Թշնամութենէ, որք սպառնային. Վասն որոյ ստէպ ստէպ յանդիմանութիւնս ածէր 'ի գլուխ որդւոց իւրոց, և առաջի արկանէր նոցա հանապազ զանխորհրդաբար գործսն յանդգնութեան, Զի ապաքէն յայսմ երկրի հաստատեալ ունիմք զբնակութիւն մեր, ասէր, և դուք անզգուշութեամբ 'ի վտանգ արկիք զխաղաղութիւն մեր՝ զոր խաղաղացեալն էաք. ցաւօք և հեծութեամբ իջուցանիցէք զանձն իմ 'ի դժոխս. Ել և չուեսցուք յետ այսորիկ, յոր վայր և դադարեսցուք, բռնաւորս և անհանդարտս որոյս զմեզ վարկանիցէն, և ոչ ոք ընկալցի զմեզ յիւրում գաւառի, և տացէ մեզ տեղի՝ ուր

դիցուք զգլուխ մեր. Ամենայն ձեռն թշնամի յարիցէ մեզ, և աջք զինեալք՝ պատուար զգուշութե կանգնիցին առաջի մեր. և որ միանգամ յաղթող իցէ, ոչ պակասեսցի սուր յաղթերէ իւրմէ բուռն լինել մեզ. Աբրահամ հաւն իմ, և հայր իմ Իսահակ բնակեցան 'ի մէջ սոցա իբրև Թագաւոր՝ որ չունիցի ուստեք երկիւղ. իսկ դուք չարաչար յանդգնութեամբ ձեռով ատելի արարէք զիս 'ի մէջ ազգացս այսոցիկ.

Եղբարք իմ Թէպէտ և առաջին պատճառ աղետիցս զՍիկիմացիսն ցուցանէին լինել, զի զքոյր մեր իբրև զբոզ քարշեցին, ասեն. որոյ վասն և մեք բռնադատեցաք 'ի գործ վրէժխնդրութեան. Զի եթէ յորժամ յափշտակէր զայն զմատաղս գաւանց մերոց, զհետ պնդեալ Թափէաք զայնոսիկ յանողորմ ժանեաց նոցին, զխմբդ, անզգայ և խաւարեալ սրտիմնայք Թերևս, և ոչ վրիժուք զանօրէնութիւն որդւոյ իշխանին լուծանէաք. Զայն զայս պնդեալ ասէին, այլ գործք նոցա ոչ էր արդար, և ըստ օրինի. նա զի անգթութիւն ընդ իրաւացի բարկութեանն խառնեալ, յանդգնեցոյց զնոսա մինչև յայն աստիճան բերել խրոխտանօք. Որովհետև հայր մեր դեռ զկենդանութեան շնչէր զօդ, և խոհական դատողութիւն նորա 'ի վեր էր քան զիմաստասիրաց և քան զքրմաց կաճառս. նա մանաւանդ բարեպաշտ, առաքինի և երկիւղած բարք նորա՝ որով փայլէր առաջի Աստուծոյ, խորին իմն մտածութեամբ տայր նմա քննել զամենայն պարագայս, զի մի դուցէ 'ի պատճառս յանցուածոյ իւիք գործելոյ յինքենէ կամ յիւրայնոց՝ իցէ պատճառեալ տարօրինակ այս փորձութիւն. քանզի՝ աջ ամենակալին Աստուծոյ գիտէ քաջ պատուհանել զծառայս իւր, որպէս ցարդ փրկեալ ազատեաց 'ի զանազան վտանգից.

Մ՛իւս եւս , դիցուք թէ օրինաւոր և իրաւացի էր քննախնդրութիւն նոցա , սակայն առանց հրամանի Հօր իւրեանց ձեռնարկելոյ յայնպիսի գործ մեծ , համարին յանդուգն և յանձնապաստան . Օ՛ի թէ ահ և երկիւղ Տեառն չունէր կալ և կապ զՔանանացիս առ սէր Յակոբայ Հօր իմոյ , 'ի հուր և 'ի սուր արդէն մաշեալ սպառէին զմեզ . այլ այնչափ սաստիկ էր ահ ամենազօրին 'ի վերայ նոցա , մինչ անբաւական գոլ մօտաբերել ինչ 'ի չարիս , և հանել ձիկն .

Բայց արդ՝ եկ և տես քաղցրիկ կենակից իմ՛ , քանի՛ չարիք անակնունելիք գումարին 'ի գլուխս իշխանաց , թագաւորաց և ծնողաց սակս անուղղայ գնացից հըպատակաց և զաւակացն . որոց խոհեմութիւն համարեալ յաչս իւրեանց զյանդգնութիւնն , նա՛ առաւել եւս կրիւք ատելութեան կուրացեալ , մխին 'ի գործ անխոհեմաբար . Որք եթէ յաջող ելիւք պսակիցին , համարին արիութիւն ; իսկ եթէ ձախող և չարեաց նախընթաց , գլխարկեալ յայնժամ զթիւր կարծիսն իւրեանց առաջի արկանեն , խոստովանելով՝ ոչ այնպիսի ելից ակն ունելոյ .

Տեսանե՞ս զանհնարին անմտութիւնն . և զի՞նչ արդեօք պատճառ չարեացս . անկրթութիւնն միայն և անմարդութիւն բարուցն , որով ո՛չ կարէ ոք զկիրսն չափաւորել . զի կամ հպարտութբ յոխորտացեալ , առանց կարեւոր խորհրդածութն ձեռներէց գտանին , և կամ գազանացեալ բարկութեամբ եռալով արեան յերակսն , և սիրտ նոցա իբրեւ զհնոց բորբոքեալ 'ի հուր , անբաւական գտանին զուսպ ունել զանձնիշխանութեանն զանձ . Ուստի պարտ և պատշաճ է մարդոյ բանականութեամբ իւրով՝ մինչեւ ձեռն 'ի գործ եդեալ յինչ , խորհել , քննել , շրջահայեաց լինել արթուն մտօք 'ի պարագայս իրացն և վախ-

Ճանփին, յորում միայն նմա կամ զգովեստիցն քաղել զմրգանակ, և կամ անագան ապաշաւանացն հան-դիպիլ ողւոյ դառնութեամբ, և լուտանացն ըն-դունելութեամբ.

ԳԻՇԵՐ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

ԱՍԱՆԵԹ

Ոչ մի ինչ վտանգ աղետալի յայսմ յանդուգն գործոյ նոցին ծագեցաւ. և զհա՞րդ ժուժեալ լռու-կայցին որդիքն Քանանու, լուծանել զվրէժ անքաւ արեան աղջկանցն իւրեանց.

ՅՈՎՍԷՓ

Եթէ ոչ կանխէր հայր իմ առ Աստուած դա-ռըն արտասուօք, ունել զառաջս վտանգին՝ որ ակն յանդիման երեւէր մեզ ամենեցուն, վաղու եւս ար-դեօք ընաջինջ սրէին զարմատս մեր յերկրէ, և զըն-կուլէին զմեզ անյիշատակ Թողուլին. Այլ գութք խը-նամոց Արարչին՝ ըստ անքաւ ողորմութեան իւրում, խանդաղատեցան զմեօք, և փրկեաց զմեզ անվտանգ յամենայն փորձանաց. Քանզի՝ արհաւիրք ահից ան-կեալ յերկնից զնոքօք, ՚ի տագնապ տարակուսանաց տաղտապեալ պաշարեաց զնոսա. վասն որոյ լքեալ

ջիղք բազկաց նոցա , և պակասեալ ոյժ յերակսն , ոչ ինչ զօրացան գործել և ոչ իսկ հանել ձիգն . Իսկ հայր իմ փութացաւ , ժողովեաց զամենայն աւար և զկողոպուտ քաղաքին . և զամենայն անօթ սպասու մեհենիցն , զձուլածու կուռսն յոսկւոյ և յարծաթոյ , զգինդս , զօղամաննեակս , և զպախճաւանդս ոսկեղէնս նուիրեալ յանուն կռոց , որոշեաց եդ ուրոյն 'ի միւս աւարացն և 'ի կահից , և թաղեաց ընդ հողով յեր_ կրին Անկիւնայ , ընդ նովին և զկուռսն Լաբանայ՝ զոր մայր իմ բարձեալ էր ընդ իւր . Եւ զայլ կարասիսն զամենայն հրամայեաց գիզել կուտել առաջի դրան քաղաքին , և զգերիսն արձակել յազատութիւն .

Եւ եղեւ յետ բանիցս այսոցիկ , պատուէր հրա_ մանի ընկալաւ Յակոբ հայր իմ չուել 'ի Բեթէլ , և անդ առնել օթեւանս . Վասն որոյ պատրաստեցաք անդէն մեկնել անտի ամենայն կազմածովք և սպա_ ցուածովք մերովք . Այլ իբրեւ եղեւ մեզ մեկնե_ նալ 'ի Բեթէլ , պատուիրեաց հայր իմ որդւոց , կա_ նանց և ամենայն սպասաւորաց իւրոց , և ասէ . Սրբե_ ցէք 'ի ձէնջ զամենայն աղտեղութիւնս ձեր , և մաք_ րեցարուք ոչ միայն զարտաքին մաքրութիւնն , որ ոչ ինչ բնաւ օգնէ ներքին անմաքրութեան և արատա_ ւորութեան հոգւոյն , այլ սրբեսջիք նախ զմտաց ձեր խիղճ , և մանր քննութեամբ զամեն խորհրդոց սրտիցդ մաղեալ խառնեալ յուզեսջիք , զի մի ինչ չարիք և բիծ յանցանաց հանգոյն օձի դարանեալ կայցէ 'ի թաքստի . Վառեցէք 'ի ձեզ յաշտանակի հոգւոյդ զլուսափայլ ճրագ՝ զսէրն ասեմ առ Աստուած , որով մերկապարանոց ընծայլին ամենայն գործք ձեր հակա_ ռակք աստուածային կամաց , յանդիմանին չարու_ թիւնքն զօղեալ 'ի խորշս սրտից սենեկի . Հեռացա_ րուք իսպառ յամենայն դարշութեանց և յատրպաքարշ_

կրիցէ ։ փախիցէք ընդդէմ նոցա զդուռն զգայութեանց ձերոց, ընդ որ դիւրագոյնս սահեալ սպրդեալ մուտ գտանեն, և բռնեալ դադարեն 'ի յաւիտենական կորուստ անձանց ձերոց ։ Զգաղտն ցանկութիւնն 'ի բաց մերկացարուք 'ի ձէնջ, զվիշապ նախանձն մախանաց սպանէք 'ի ձեզ, և մի՛ տաք բնաւ տեղի օթեվանաց ամեհի բարկութեան ։ զհեզգութիւնն հալածական կացուսջիք 'ի սահմանացդ, և խորհուրդք հեշտականք մի՛ զձեզ յուզեալ ամբոխեսցեն ։ սեղանք բազմախորտիկք և զեղխութիւն ատելի լիցին առաջի ձեր, և մի՛ ագահիցեն աչք ձեր յաւելասացութիւն և յինչս օտարին ։ Իսկ թէ գամ մի գթեալ իցեն ոտք ձեր և անկեալ վարակեալ նովին ախտիւքս, տուք զաչս ձեր աղբերց արտասուաց, որ սրբեն զմեղսդ և զամենայն աղտեղութիւնս հոգւոցդ ։ բեւեռապինդ պըրկեսջիք զսիրտ ձեր 'ի սէրն Աստուծոյ, խնդրելով 'ի նմանէ պահել անսայթաք և անմոլար զոտս ձեր 'ի շաւիղս հետոց ուղղութեան ։ Զի առ ի՞նչ օգտիցեն ջերմեռանդն հայցուածք պաղատանաց, եթէ ոչ առաջադրիցի միաւ 'ի նմին ամենայն զգուշութեամբ, որով միայն հնար է ձեզ կալ անարատ և անտխեղծ յամենայն եպերանաց ։

Զայս ամենայն կատարելով անվրէպ փութով և բաւական զգուշութեամբ, փոխեսջիք և զարտաքին զպատմուճանսդ ։ Քանզի հանդերձիցն մաքրութիւն և աղնուական պերճութիւնն և նորութիւնն խրատս և համարս օգտակարս 'ի ներքս բերէ՝ որոց զայնսիկ զանձամբ զգենուցուն, ըստ մաքրութեան նոցին՝ մաքուր և սուրբ պահել զներքին մարդն, զհոգին ։ Ըստ օրինակի աղնուութեան և պայծառութեան պատմուճանին, պայծառ փայլեսցին և գործք իւրեանց առաջի մարդկան և Աստուծոյ ։ և ըստ նորութեանն՝

նորոգեսցին 'ի նոսա առաքինական բարիք և խոհեմութիւն հանճարոյ, և վարք կենցաղակիրթք. որովք բարձրանան պատիւք և առաւելուն պարծանք. Հուսկ յետոյ քաջիկ իմն 'ի քննութիւն առէք զվայրն, ուր ելանել հանդերձեալ եմք. զի տուն Աստուծոյ է, և անդ է դուռն երկնից, և աթոռ ահեղ ա̃ծութեան նորա. Անդ տեսի զԱստուած բազմեալ 'ի գլուխ աստիճանացն, յաղագս որոյ կոչի Բեթէլ, այն է տուն Աստուծոյ. Անդ անփակ կայր լուսահետ ճանապարհն յերկինս վերելակելոյ, ընդ որ միայ մարդկան շնորհօք նորին ելանել յամպաճեմ և 'ի յաւիտենական փառսն, Առ այս հրաւէր կոչման մարդոյ՝ լուսեղինացն դասք յերկիր իջանէին, առնուլ ընդ ինքեանս 'ի վեր զմարդիկ փայտիւն բարձրացուցման, զորմէ կախեալ կայ հասարակաց մեր կեանք. Օ՜ն ապա, մի և մի իւիք գտցին առ ձեզ խաւարային գործք, զի առ լոյսն դիմեալ մերձենամք, յորմէ յանդիմանին խաւարք, և մի նշաւակեալ ձաղ լինիջիք, և անձանց փրկութեան կամաւ մատն եղիջիք. Ապաշաւեցէք յամենայն սրտէ ձերմէ, զի մի՛ սատակումն ձեզ վասն անմաքրութեանդ հանդիպեսցի, և 'ի հրայրս սրտի ընդ յանդգնութիւնդ լինիջիք.

Արդ՝ իբրև լուաք մեք զսաստիկ պատուէր հօր մերոյ, այնուհետեւ խորանն՝ յորում սովոր էաք զաղօթսն մատուցանել, եղեւ մեզ տեղի ողբոց և վայր արտասուաց. Հաստատեցաք ամենեքին զերեսս մեր մի երբէք հակառակ կալ կամացն Աստուծոյ, 'ի չըհաճոյս նորին ձեռնարկեալ. Եւ ո՛ այն՝ որոյ կարողութիւն 'ի ձեռին կայցէ պատմել զարտասուաց վտակսն զոր արտասուեցին Շմաւօն և Ղեւի, զապաշաւանացն բուռն հարեալ, լալով զյանդգնութիւն գործոյ անօրէնութեան իւրեանց, Հեղեղք ալի և ողորմ

արտասուաց ծորէին յաչաց նոցին, տըխրաբար գը-նալով ընդ յատակս խորանին. և կականք հնչարգել ողբոցն զամենայն ակն ածէր 'ի ջայլ և 'ի լալիս. զծը-ղխ կոծէին և ըղձեմմն կեղեքէին, եղուկս զինքեանս քան զամենեսին համարէին, Չէր անդ լսելի ձայն բարձրագոչ, այլ հեծութիւն 'ի խորոց սրտէ. չհա-մարձակէր ոք զակն 'ի վեր ամբառնալ, այլ յորսայս անկեալ 'ի վերայ երեսաց, զգետնով փարեալ տեսա-նէր և յիշէր զյանցանսն, որ 'ի խղճի իւրում մթե-րեալ՝ տագնապէր զանձն նորա, Ո՛չ հարկ լինէր անդ վկայութիւն մարդկան 'ի յանդիմանութիւն թերու-թեանցն, զի խիղճ մտացն հոգեւորեալ մերկապարա-նոց առնէր զամենայն գործս դսրովանաց. Ո՛չ ինչ հարկ էր անդ ահարկութիւն ներկայութեան դատա-ւորի, առ 'ի յերեւան ածել զուղղութիւն, և սաս-տիւք զճշմարտութիւնն մերկանալ. զի դատաւոր ան-աչառ կացեալ մտացն՝ ցուցանէր զանուղղայ և ըղ-չմարդի գործս նոցին յիրս սխալանաց. Ո՛չ էր կարօտ ատեանն անողորմ դահճաց և անդութ սպասաւորացն դատուց. զի խայթ մտացն խղճի՝ առաւել եւս քան զդահիճս ահափետ առնէր, և 'ի դողի և յերերի ըղ-սիրտս կացուցանէր. և դէզք մեղացն բարդութեան իբրեւ զարբանեակս դատաւորի շուրջ պատեալ ըղ-դիտակցութեամբ հոգւոյ նոցին՝ հնչապատ առնէին. Երկիւղ տանջանարանացն և արհաւիրք բաղարեան ցլուն ոչ այնչափ ահացուցանէին զպատժապարտս, որչափ անշիջանելի բոցավառութիւն սրտիցն իւրա-քանչիւր՝ ընդ երեսս ծաւալեալ հրատս կիզման հա-տանէին. որով և ակն յանդիման տեսանէին ոչ ձը-ղոպրիլ իսպառ յանյագ հրոյ գեհենոյն, եթէ ոչ ան-ցանիցեն ընդ հուր տոչորման սրտիցն զղջմանց՝ մտացն բեւեռմամբ յանդարձ առաջագրութիւն հաստա-

տութեան ուղղութեան. Վասն որոյ ահաւորագոյն եւս բորբոքեալ հրոյն ապաշաւանաց, խարուկէին յօժարութեամբ զկոյտս մեղացն, զտեալ իբրեւ զոսկի ՚ի բովս արտասուաց առաջի Տեառն.

Իսկ ո՞ արդեօք պատճառ սոյն գովելի եռանդեան, և հաճոյական սորջանաց փղձկման արտասուաց. ոչ այլ ոք, բայց միայն կենդանի օրինակ հօր իմոյ, որ անդադար լալեօք անկեալ ՚ի վերայ երեսաց իւրոց, անմռունչ ձայնիւ աղաղակէր ՚ի խորոց սրտէ. Հեկեկանք նորա՝ զորս երբեմն լսէաք յոգւոց հանեալ, զթախիծ տրտմութիւն նորա ցուցանէր. Վասն որոյ և մեք օրինակ մեզ կալեալ զարդարն և զանարատն, զհայր մեր գորովագութ, ընդ երկիր մածեալ՝ ՚ի հաշտութիւն կոչէաք զԱստուած ընդ մեզ, գալ ՚ի համբոյր ըստեղծուածոց իւրոց. մի բառնալ ՚ի մէնջ զգութ և զողորմութիւն իւր վասն մեղաց մերոց, զի մի վրէպ գտեալ ՚ի յատուկ խնամոց իւրոց, առաւելագոյն չարիք գտցեն զանձինս մեր, և ՚ի թշուառութիւն անդարմանելի մեզ առաջնորդեսցեն.

Տեսանես ո՛ սիրելի կենակից իմ Ասանէթ, զհայրն բարի, զառաքինութեան օրինակն, զփոխանորդն Աստուծոյ, և զմիջնորդն հաշտութեան Աստուծոյ ընդ մարդկան. քանզի նա ընդ հայրութեանն և զքահանայութեան կրէր զպատիւ. Այսպէս պարտին ահա լինել ամենայն հարք. տեսեալ զորդիս իւրեանց անկեալ ՚ի մեղս, ոչ միայն զի հարկ ՚ի վերայ կայ նոցա խրատել զնոսա, առաջի կացուցանելով զմեղացն ծանրութիւն, որ բազում վնասս ՚ի հոգին ՚ի ներքս ածէ, այլ և ցուցանել նոցա ազդու բանիւ, զի եթէ ոչ դարձցին ՚ի չար ճանապարհաց իւրեանց և թօթափեսցեն յանձանց զփոշի անիրաւութեան, և զգեցցին զապաշաւանացն զհանդերձ յոլով արտասուօք, պատժիլ

պատժին յարդարութենէն Աստուծոյ. Պարտին խլել ՚ի նոցանէ զբարս խոտանս և զմոլութիւնս վայրենաբարոյս, և թաղել ՚ի ներքոյ երկրի հանդոյն կռոցն Սիկիմացւոց և Թարայի. եղծանել զեղծանել զամենայն բաղձանս մեղանչական կրից, զերկիւղ Տեառն կացուցեալ պահապան սրտից նոցա. ցուցանել նոցին զչարեացն պատահմունս վասն մեղացն իւրեանց լինել, և այնպէս ածել զն̃ս ՚ի համբոյր և ՚ի բարս քաղցունս. Պահագլուխ հանդիսացին նախ ինքեանք ՚ի կրթութիւնս առաքինութեան արդեամբք և գործնական փութովք, ՚ի բաց վտարեալ ՚ի սրտէ նոցա զամենայն ախտալից բարս և զանտոխապատիր բանս մոլորութե̃, և տնկել փոխան նոցա զճշմարտութիւնն անստելի. որով խտիր ՚ի մէջ անկեալ ընդ չարն և ընդ բարին, տեղի տուեալ յառաջնոյն՝ զերկրորդեն բուռն հարցեն ածել ՚ի գործ.

ԳԻՐՔ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Քանի՜ մեծ փառաւորութեամբ եղեւ ներկայանալ ձեր առաջի Աստուծոյ ՚ի Բեթէլ, քանզի այսչափ ջերմեռանդութեամբ և մեծաւ պատրաստութեամբ էր հանդերձանք ձեր յառաջ քան զելանելն,

ՅՈՎՍԷՓ

Ո՛յր, անպատմելի իմն է. զի ո՞ր բերան կարիցէ, ո՞ր լեզու մահկանացու զօրեսցէ 'ի ձեւ արկանել. Ի հասանել մեր անդ՝ զառաջինն մատեաւ հայր իմ կատարել զուխտ իւր, զոր 'ի դիմելն 'ի Խառան, յետ աքանչելի տեսլեանն՝ եդեալ էր ընդ Աստուծոյ, որոյ և 'ի նշան օծեալ էր զվէմն՝ զոր ընդ սնարիւքն ունէր. Ուստի ըստ հայրենի սովորութեան իւրոյ՝ կառոյց սեղան քառակուսի յանտաշ քարանց. եդեն զընտիրս և զպարարտս յամենայն խաշանց, 'ի գառանց և յեզանց, և եհան 'ի վերայ սեղանոյն՝ այրեալ զնոսա 'ի զոհ ողջակիզաց 'ի պատիւ փառաց անուան Աստուծոյ. Ճենճերմունք զոհիցն բարդեալ դիզեալ յերկինս ծառանային, և թանձրութիւն ծխոյն բարդութեան ծածկէր զարփւոյն ճառագայթս. բուրմունք անուշահոտութեանն լնոյր զսիրտ մեր զուարթարարն զմայլմամբ, որում անհնար է ինձ զզուգակցորդն և զհամեմատն ցուցանել քեզ յամենաքաղցր խնկաւորութեանց բուրմանց ծխանելեաց աշխարհիս. նա՛ զանմահութեան տայր մեզ զանուշահոտութիւն, և յերկրի՝ զերկնայինն մեզ 'ի դէմս ածէր զբուրմանց լրութիւն.

Իսկ զի՞նչ ապա և յաղագս եռանդեան ըղձից Ճենճերոյ մնայ ինձ ասել, որ քան զզոհիցն պարարտութեան եղանէր թանձրանայր 'ի սրտէ հօրն իմոյ և մեր գլխովին, այն ինչ ընդ գետին խոնարհեալ անկեալ, արտասուաց ըղխմամբ թանայաք զվայրն սըրբութեան. Կոչումն աղաղակի և ապաշխարութեան ձայնից և զղջմանց մերոց զերկիր դղրդեցուցանէր, և հառաչանք աղերսախառն ողբոց՝ զոր յերկինս 'ի վեր

առաքէաք , վասն անգիտութեան գործոց մեղանաց մերոց , հնչեցուցանէր զարձագանգս լերանց . հնչմունք յոգւոցհանութեանց և հեծեծանք զոր 'ի խորոց հանէաք , ոչ զմարդիկ միայն , այլ և զամենայն արարածս յուզէս և 'ի լաց շարժեալ հրաւիրէին , ձայնակից ընդ մեզ լինել . Չէր անդ ոք ընդվայր թափառկոտ , և ոչ բարձր 'ի գլուխ սիգութեամբ 'ի գոռոզամտութի հատեալ ըստ առաջնոյ օրինակին . այլ ամենեքեանքս կորագլուխ ընկրկեալ և 'ի պատկառանս խոնարհեալ առաջի խորանին վկայութեան՝ զոր հայրն իմ կանգնեաց . Չէր անդ ոք քննիչ և խուզարկու այլոց յանցաւորութեանց , այլ ամենայն ոք ամփոփեալ յիւրում անձին , լայր զմեղս իւր և այրէր 'ի հուր զղջիցն տոչորման , և արտասուօքն լուանայր զպալս վիրաց նոցին . Անդ էր կրթարան խնկանուէր աղօթից , անդ էր արժանաւոր տեղի մաղթանաց . անդ յաճախէին խնդրուածք արժանի մեծվայելչութեան Աստուծոյ . անդ ջնջէին մեղք , և գտանէին շնորհք և ողորմութիւն , որով զօրացեալ՝ ոչ ևս խոտորէին յառաջին գործ չարութեան մեղաց , այլ հաստատէին 'ի գթութիւնն ամենախնամ Արարչին , որ գիտէ պահել զյուսացեալսն անուան իւրում .

Այն ինչ զսոյն օրինակ երկարագոյն նուագս ընդաղօթս հանէաք , և ահա Փեբոս եթերաճեմ փութացուցեալ զքառընթաց կառս իւր՝ խոյս տուեալ ղօղէր 'ի ներքոյ լերանց , և անդէն տիրէր խաւար սևաթոյր համատարած 'ի վերայ բնութեանս . Յայնժամ կնքեալ հօր իմոյ զաղօթս և զպաշտամունս իւր , արձակեաց և զմեզ երթալ 'ի խորան մեր , պատրաստել զսեղան ընթրեաց , և եկաց ինքն միայնակ 'ի լերին անդ . Եւ ահա երեւի նմա Աստուած յամպս լուսաւորս , օրհնէ զնա , և ըստ կանխագոյն խոստման իւրոյ՝ կրկին խոստանայ նմա տալ զերկիրն զայն ամենայն յետ վախ-

ճանի իւրոյ՝ ցորդիս իւր. Հաստատէ 'ի վերայ նորա զաջ իւր. ցուցանէ զանձն պատրաստ յամենայն կարօտութիւնս նորին, բաւական լինել նմա 'ի պիտոյս. զօրացուցանէ աճել և բազմանալ. յարիցեն, ասէ, թագաւորութիւնք 'ի պորտոյ քո և պետք յերանաց քոց, և բազմութիւնք ազգաց և ժողովրդոց ծագեսցին 'ի քէն. Յետ օրհնութեանցս վերանայ Աստուած յաչաց նորին յամպս. դառնայ և հայր իմ 'ի խորանն, լցեալ սիրտ իւր յուսովք մեծամեծ ակնկալութեանց. Այլ ո՜ կարէր հայել յերեսս իւր, յորժամ ճառագայթք իբրու յարփւոյ հատանէին. փայլէր 'ի դէմս նորին լուսափայլ անմեղութիւն, փառաւորութիւն իմն անդր քան զմիտս մարդկան՝ տեսանէր 'ի նմա, շնորհք երկնային ցայտէին 'ի մարմնոյն, և յերկրի՝ իբրև զերկնաւոր ոք ցուցանէր. Զկնի ընթրեացն էառ նա պատմել մեզ զտեսիլն և զօրհնութիւնն Աստուծոյ, և առաջարկեաց 'ի նմին պահու կանգնել արձան մի առ սեղանովն, և օծանել զայն. զի ազգք՝ որ զկնի գալոց են, ծանիցեն, և հռչակ նորին առ ամենեսին տարածեսցի. գիտասցէ ամենայն ոք, եթէ աստուածաբնակ է վայրն, և տուն Աստուծոյ, որ և մինչև ցարդ կոչէ զնոյն անունն Բեթէլ.

Աւասիկ քեզ զհանդէս կատարման ուխտի հօր իմոյ, ո՜ սիրելի իմ Ասանեթ. տեսանես քանի՜ մեծավայելչութեամբ և սքանչելի տեսլեամբք մատուցանի. Մե՜ծ է ինձ այս, և մեծագոյն սքանչանաց արժանի. Քանզի՝ և սիրելի և հաճոյ իսկ էր հայր իմ աչաց Աստուծոյ, որ 'ի հոտ անուշից հոտոտեցաւ և ընկալաւ զպատարագս նորա. Մխիթարեաց եւս զնա, օրհնելով և խոստանալով աճել և զարգացուցանել զծնունդ նորա. որով 'ի բաց արար իսպառ 'ի մտաց մերոց զերկիւղն՝ զոր 'ի Սիկիմացւոց անտի կրէաք,

և զօրացոյց պաշտպանութեամբ իւրով այցելու լի֊նել նմին ․

Աստանօր մի զարմասցիս երբէք, ընդէ՞ր ոչ մինչ մեք ՚ի ներկայութիւն սեղանոյն կայաք ՚ի Բեթել, ե֊րեւեցաւ մեզ Աստուած ․ Մերժելոց ՚ի կատարե֊լութենէ ճշմարիտ կրօնին և ոչ զարգացելոց ՚ի բա֊րեմասնութիւնս հոգւոյ, խնայէ Աստուած զիւրն շը֊նորհ գերընական, որ ՚ի կատարեալս, ՚ի հեզս և ՚ի ցածունս հանգչի միայն ․ Քանզի և մեք, թէպէտ և որդիք նորա, այլ զուրկ գլխովին և անմասն էաք ՚ի նորին քաջամասնութեանց և ՚ի բարեմոյն վարուցն առաքինութեան ․ վասն որոյ տեղի եւս ՚ի մէնջ այն շնորհ աստուածատեսն լինելոյ ․ Զի թէ ոք ոչ սե֊ւեռեալ հաստատպինդ կացցէ ՚ի սէր Աստուծոյ, ոչ արժանի զանձն նորին շնորհացն և գթութեանն կա֊ցուցանէ ․ Ուստի փոյթ ՚ի մէջ բերցուք, ջան դիցուք ունականալ ՚ի գործս բարեաց, և գեղեցիկ ընձիւղս հոգեւոր պտղոց ՚ի մեզ յինքեանս բողբոջել, որով ընդելասցի մեզ սովորոյթս երախտաւորել ամենեցուն, և բարիս փոխանակ չարեաց մաղթել նախատողացս մերոց և ամենայն մարդկան ․ Իսկ դժուարութիւն մեծ առաջի մեր կայ, ուստի՞ մեզ այնպիսի օրինակ նա֊խանձելի հայթայթեսցուք յամբարշտացեալ երկրիս Եգիպտոսի, և յանձին մերում զգովելի ունակու֊թիւնս բերել, և լինել հաճոյ Աստուծոյ ․ բայց միայն ահիւ և դողութեամբ խնդրեսցուք ՚ի նմանէ զամե֊նակալ աջ իւր հովանի ՚ի վերայ մեր առնել, որով և լիցի մեզ անսայթաք ուղղել զգնացս ոտից մերոց ՚ի շաւիղս առաքինութեան ․

ԳԻՇԵՐ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Որչափ ժամանակս եղէք 'ի տեղւոջն յայնմիկ, զոր տուն Աստուծոյ կոչեաց հայր քո:

ՅՈՎՍԷՓ

Ոչ մնացաք անդ ընդ երկար ժամանակ, այլ զկնի կատարման զոհիցն մերոց, մեկնեցաք անտի 'ի բաց: Բանզի և զիա՞րդ հնարաւոր էր բարեպաշտ երկիւղածութեան հօր իմոյ մնալ 'ի սրբազան տեղւոջ յայնմիկ զբազում ժամանակս, հանդերձ բազմութբ որդւոցն և ընտանեաց: Յամենայն նուագս՝ յորս ելանէաք անդ 'ի վեր, ահիւ և դողութեամբ մերձենայաք 'ի տեղին. և զիա՞րդ հաստատել զբնակութիւն, ուր երկրպագութեան և պաշտաման էր միայն վայրն: Ես՝ որ միշտ ընկերակցէի հօր իմում յելանել նորին 'ի Բեթէլ, ոչ տեսի երբէք առանց յորդ արտասուաց մերձիլ 'ի խորանն սրբութեան, այլ նոր 'ի նորոյ զգեցեալ զոգի ջերմեռանդագեղ, բանայր զսիրտ իւր առաջի Տեառն խնդրուածս հայցելով 'ի նմանէ, և մեղացն իւրոց լուծումն: Իսկ հեռանալ նորա անտի, բուռն էր խիքեան և դժուարին, զի կարեօք սիրէր զտեղին:

Այլ քանզի մերձեալ էր ժամանակ երկանց ծընընդեան մօր իմոյ, և մանկաբարձ նորին փոխեալ էր 'ի կենաց յաւուրսն յայնոսիկ, վասն որոյ փութայր երագէր հայր իմ զճանապարհն, հասանել ժամ յա-

ուազ 'ի սահմանս բնակութեան հօր իւրոյ Իսահակայ. Եւ իբրեւ հեռացաք 'ի Բեթելայ զճանապարհ միոյ ժամու, եւ ահա երկունք ծննդականութեան պաշարեցին զմայրն իմ. վասն որոյ պարտաւորեցաք անդ առ տեղեաւն 'ի ճանապարհին Բեթղահեմի օթեւանս առնել, հեռի 'ի քաղաքէն ասպարիզաւ միով. Ընդ բռնացան 'ի վերայ նորա վիշտք երկանց, ճիչք եւ վայումըն նորին յողբս շարժէին զմեզ զամենեսեան. Բնութիւնն բուռն լինէր նմա. ամենայն դեղք եւ դարմանք վրիպէին 'ի նմանէ, զլանային զիւրեանցն օժանդակութիւն. Դառնագին էր աղէտն՝ զոր կրէր, քանզի դառնագոյն էր եւ վճիռն տէրունի առ նախամայրն մեր բարբառեալ. ցաւօք ծնցիս՝ ասէ. Այո՛ ցաւք անհնարինք, ցաւք դժոխըմբերելիք. այլ մայր իմ զի՞նչ. ո՛չ ըստ սաստկութեան եւ մեծութեան ցաւոցն կշռէր եւ զբանս իւր. 'ի հրայրս կայր, այլ գոհութեամբ զԱստուծոյ՝ մեղմէր զվշտացն բռնութիւն. ոչ գտաւ երբէք տրտունջ 'ի բերան նորա. Ամենայն մարմին նորա 'ի դողի եւ յերերի կայր. կափկափէին ատամունք նորա. Ճչէր, մնչէր, ուշաթափ յերկիր անկանէր, յառնէր եւ անդէն կորաքամակ ընդ գետին գայր. Կանայք փորձք եւ ճարտարք՝ որք ընդ մեզ էին, խմբեցան զնովաւ, պաշտէին զնա, զցաւսն մեղմել ջանային. զամենայն օգտակար դեղորայս շռայլաբար վարէին առ նա. հնարք եւ ոչ մի 'ի բաց թողին անտի, այլ զամենայն ընդ օդս թափէին. Պաղջալերկէին, սրտապնդէին զնա քաղցրամոք բանիւք, գողանալ զզգայութիւն ցաւոցն 'ի նմանէ ճգնէին. աւասիկ եւ այս ուստր է քեզ, աւետէին նմա. Իսկ մայր իմ, որ զտառապանօքն անկեալ ցաւոց՝ ծածկէր զամենայն խնդութիւն, զայս պատասխանեաց ընդ ծնանել մանկանն 'ի լոյս. Որդի վշտաց է դա, զի վշտացուցանելով

վշտացոյց զիս առ 'ի մահ. Այս ասաց, և ընդ գալ տղայոյն յաշխարհ, ինքն փոխեցաւ յաշխարհէ, կենացն առեալ վախճան. Դառն և կսկծալի եղեւ արդարեւ ծնունդ սորա ամենեցուն առ հասարակ. այլ յաւէտ ինձ, քանզի մայր էր իմ նա. եղբայր ծնաւ ինձ յաշխարհ, այլ մայր իմ զրկեցաւ յաշխարհէ. Հա՜յր իմ, քանզի տրտմութիւն և սուգ մեծ եղեւ մեզ տարաժամ և տարօրինակ մահ նորա, կոչեաց զանուն մանկան Բենիամին, որ Թարգմանի՝ ծնունդ վշտաց.

Իբրեւ զայս օրինակ յողբս համակեալ յանմխիթար տրտմութիւն զառածէաք, և ահա եկին հասին առ մեզ բազմութիւն կանանց 'ի բնակչաց անտի Բեթղահեմի, առեալ զբօթ մահուան մօրն իմոյ տարաժամ բարձելոյ 'ի կենաց. Ա՛յլ զի՞նչ նոքա. 'ի հիւսցումն անհնարին հատանէին, 'ի վերայ հասեալ պատճառի մահուանն, որ ոչ սովորական ինչ առ նոսա թուէր. Թէպէտ և նոքա ուսեալ անձամբ զերկանցն փորձ, որում և գիտէին զինքեանս վիճակեալ 'ի պատիժ՝ անդարձական վճռաւ Արարչին, տրտմութեամբ ծնանել որդիս. այլ զի՞նչ նոքա առ մեզ բանս մխիթարականս յօդէին. փոխանակ սփոփանս մեզ հայթայթելոյ և 'ի յընդոյր 'ի վշտաց զանձինս մեր հանելոյ, համարձակ ընդ մեզ վարէին բանիւ. զպատճառ անօրինակ մահուան նորա՝ զփափկակեցութիւնն դնէին, զհանգստութեան կեանսն. Եւ կարի իսկ քաջ.

Շնորհեա առ իս փոքր ինչ զլսելութիւն քո, քաղցրիկ կենակից իմ, և ցուցից քեզ զվասն էրն, քանզի ոչ սուտ և անհիմն զհաստատութիւն բանիցն իւրեանց կարկատէին մեզ կանայքն այնոքիկ. Այն սաղմնաւեալ՝ եթէ 'ի յղութեան անդ հանգիստ և փափուկ կեանս վարիցէ, և ոչ 'ի սովորական առտնին աշխատանս զանձն կրթիցէ. զոյն մահ մեռանիցի

բազմիցս. և եթէ ոչ իսկ՝ քան զայն առաւել տագնապեալ տաղտապիցի, և անբուժելի ախտիւք ջերեալ՝ 'ի դրունս մահու հասանիցի. Իսկ որ անդուլ և անդադար աշխատութիւն և վաստակ յանձին տանիցի, զօրութիւն ուժոյ անդամոցն զգեցեալ, պնդին ջիղք նորա, արիանան կենսաբեր զօրութեամբ, ոչ միայն սաղմնաւորիկ կնոջն, այլ և պտղոյ արգանդին 'ի կերպարանս եկելոյ. Քանզի շարժմամբ մարմնոյն՝ շրջան առեալ արեան յերակսն նորին, պնդանան ջիղք, հաստատին մկանունք, մաքրին հիւթք մարմնոյն կանոնաւոր կրթութեամբ, և միշտ յաղթուող զանձն ունի.

Բաց յայսմանէ և որ առաւելն է, յետ որդեծննդեանն, կաթն մօր ծննդականի 'ի շարժողութենէ անտի մարմնոյն՝ մարսեալ կերակրոցն, զտի և մաքրի, և առողջութիւն մեծ մատակարարէ մանկան. որով կրկնակի լինի օգուտ շահեկանութեան, մայրն 'ի վըտանգէ մահուն զանձն թափէ, և տղայն առողջ կեանս և սնունդ հարազատ 'ի ծնողէն գտանէ.

Այս օրինակ բանիւք յանդիմանադրութեան առաւել եւս 'ի սուգ և 'ի տրտմութիւն համակեցին զմեզ կանայքն. Բայց հայր իմ՝ որ խելամուտ էր բնական պատճառացն, թէպէտ և 'ի հաւանութիւն հաճութեան խոնարհէր բանից նոցին, այլ 'ի վերայ այնոցիկ՝ և զայլ իմն պատճառ զօրաւոր 'ի մէջ ածեալ վասն մահուան կնոջ իւրոյ սիրեցելոյ, առնէր մեզ համարձակ. Տեսէք որդեակք իմ և 'ի միտ առէք զցաւալի մահ սիրելի ամուսնոյն իմոյ. քանզի՝ իբր ոչ եթէ 'ի հովասուն և 'ի փափկակեաց կենաց պատճառեցաւ նմա այն ըստ տարապարտ բանից կանանցն, այլ յօրինակ վշտալի և դառնագոյն ձեղ կերպարանեալ պատրաստեցաւ. Ո՛չ նա գողացաւ զկուռս հօրն իւրոյ Լաբանայ, մինչ հանդերձեալ 'ի չու՝ հեռանալ 'ի

նմանէ . ոչ նա 'ի խուզել հօրն զկուռսն , առեալ Թաքոյց ընդ պատատաւ ուղտուն , 'ի գողութիւն անդր յաւելեալ և զստութիւն և զխաբէութիւն . Արդ Թէպէտ և զղջացաւ , Թէպէտ և ընդ խորդ և ընդ մոխիր եկն , և ոչ 'ի պաշտելոյ զնոյն սակս պահեաց առ իւր , զի գիտէր զստութիւն նոցին . սակայն Աստուած 'ի զգուշութիւն և 'ի խրատ մեզ առաքեաց զսոյն պատուհաս մահահամբոյր , որոյ յիշատակն կացցէ տպաւորեալ 'ի միտս ձեր , որպէս զի մի ընաւ ընդ արահետ Ճանապարհն արտաքս զարտուղեալ , 'ի գործս կռապաշտութեան մտեսջիք . Իւ զսոյն պատուէր ծանր 'ի վերայ ձեր կապեմ , ոչ յօժարիլ 'ի նոյն և ոչ իսկ հուպ մատչիլ , քանզի աւասիկ 'ի մէջ կռապաշտից հասանէ մեզ բնակիլ .

Իսկ Ռաքէլ կին իմ , որ զմեղացն իւր բիծ լուաց աղբերբ արտասուաց , և զյոյս իւր հաստատեաց յԱստուած կենդանի , յորմէ հայցէր պահել զինքն ըստ հաճոյս կամաց իւրոց և գթութեան , ոչ արժանացաւ ամփոփիլ 'ի շիրիմս հարցն , այլ աստ ընդ մէջ Ճանապարհին Տանն Աստուծոյ և Բեթղահեմի վիճակեցոյց զնա Տէր նիրհել զքունն յաւիտենական . ուր ակն եդեալ շնորհացն Աստուծոյ՝ սպասէ փրկութեան նորին անցանել 'ի կեանսն անվախճան : Օ՛ն ապա սիրելի որդեակք իմ , 'ի յիշատակ անկորուստ քաղցր անուան և բարեմիտ բարուցն նորին , կանգնեսցուք մահարձան 'ի վերայ տապանի նորա , զի քանիցս անգամ և հասանիցէ մեզ ընդ այս անցանել , տեսեալ զգամբարանս յիշեսցուք զնա , և 'ի միտ ածցուք , եթէ տապար անողորմ մահուն ոչ երբէք խնայէ ումեք , ոչ յառուգութիւն երիտասարդին , ոչ 'ի դեռածաղիկ տիս մանկտւոյն , և ոչ 'ի սպիտակափառ ալիս ծերունւոյն . այլ զամենայն հա-

սակէ անողորմաբար բուռն հարկանէ, և արկեալ տապաստ 'ի ծոց երկրին, զամենեցուն զխրոխտ ընու տրտմութեամբ.

ԳԻՇԵՐ ՅԻՍՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Ո՛վ տէր իմ, քանի՜ ցաւ սրտակեզ ազդեցին յիս բանք քո երիկեան գիշերոյ. Ո՛վ մահ, քանի՜ դառն է յիշատակ քո, յետ այսչափ բազմութեան ամաց 'ի վերայ բարդելոյ, տակաւին նետք ազդեցութեան քո խոցոտեն զմիտս մարդկան. Այլ դու, սիրելի լծակիցդ իմ, ասա ինձ զի՞նչ գործ գործեցիք յետ թաղման մօր քո առ Ճանապարհաւն Բեթղահեմի. մնացիք անդ ընդ երկար, եթէ անդէն ուղղոյ լեալ մեկնեցայք.

ՅՈՎՍԷՓ

Յետ կատարելոյ զհանդէս յուղարկաւորութեն, պարտաւորեցաք չուել անտի. քանզի՝ և տեղին չէր ինչ դիպան բնակութեան, և դաշտորայք և մարդք ոչ ընուին զբաւականութիւն պիտոյականաց մերոց, որք անթիւ էին բազմութեամբ. նա զի՝ և ոչ իսկ յապահովի և յամրի կայաք անդ, զի մօտագոյն յոյժ էր մեզ քաղաքն Բեթղահեմ. Եւ որովհետեւ չէր օրէն նախ քան զլրումն աւուրց սգոյ, գնալ առ Իսաա-

հակ հաւն իմ ՚ի հանդերձս սեւազգեստս, վասն որոյ անցաք յարեւելեան կողմն քաղաքին յընդարձակագոյն դաշտն արտաքոյ Ճանապարհին, և օթեվանեցաք անդ աւուրս քառասուն մինչեւ լրացան աւուրքն տըրտմութեան.

Հայր իմ, քանզի գիտէր ՚ի բարիոք կափուցն արկանել զժամանակն, և անդարմանելի համարէր զկորուստ խուն մի ժամու, ջանայր միշտ օգտեցուցանել մեզ զայն, և բազում շահս անտի հանէր մեզ. վասն որոյ բանայր զբերան իւր յաւուրսն յայնոսիկ, և ուսուցանէր զմեզ գեղեցիկ խրատս քաղցրամոք բանիւք. Իբր այն իսկ էին միտք իւր՝ յանցուցելոցն պատժօք ահ արկանել ՚ի վերայ մեր, և արդարոցն փոխարինութեամբ վարձուց և պաշտպանութեամբ՝ հաճելի ցուցանել զուղիղ վարս և զբարեպաշտութիւնն. Ոչ ի ամենայն մարդոյ բանականի ասէր, առ ՚ի անսայթաք հաստատել և ուղղել զգնացս իւր ՚ի պատուիրանս Աստուծոյ, տուան նմա միտք կառավար և կանոն ընթացից իւրոց. որում եթէ միտ դնիցէ ոք, և դիւրալուր լիցի նմին, սխալի և ոչ բնաւ. Այլ եթէ ընդմիտսն իւր, մինչչեւ արարեալ իցէ ինչ, խորհրդակցիցի, բնաւ և ոչ երբէք արտաքոյ ելանէ կանոնի մտացն հաստատելոյ. դրական օրէնքն ուսուցեն ինքեան անհաճոյ լինել և այլոց՝ որ ինչ անհաճոյ իցէ անձին իւրում, և հետեւապէս արգելուցու զձեռն իւր կրթել ՚ի վնաս և յանհաճոյս ընկերին. Իբր արդ զոր միանգամ ցանկայք զի արասցեն ձեզ մարդիկ, նախ դուք զնոյն առնիջիք նոցա. այս իսկ են բնական օրէնք տարրացեալ տնկեալ անդստին ՚ի բնութեան մարդկան.

Դուք որդեակք իմ, պարտաւոր էք ցուցանել յանձինս օրինակ բարի. լինել այլոց հայելի ընտիր

վարուց. Սէրն՝ որ է կապ յօդաւորիչ և շաղկապ միաւորութեան մարդկային ընկերութեան, և բարեյարդար պատսպարան մարդոյ յերեսաց վայրագն մոլութեան, որ աղարտէ զգեղեցիկ կարգ միաբանութեան, պարտի 'ի ձեզ պանծալ. Սէրն՝ իբրու աշտանակ վառեալ 'ի սիրտս ձեր, լուսաւորեսցէ և զայլս, որոց ակն 'ի ձեզ հաստատեալ կայցէ, պատկառ կալ օրինաց սիրոյն և պատուել զնոյն. Ի սիրոյ յորդորեալ փութասջիք ընձեռել միմեանց զկարեւոր ձեռնտուութիւն. զի յայնժամ տեսեալ 'ի ձեզ և որդւոցդ ձերոց զկատարելութիւն ընկերասիրութեան, շարժեսցին և ինքեանք 'ի նոյն նմանութիւն. Ո՛ի որ չգիտէ ինչ զսիրոյն մեծութիւն և ոչ պատուէ զայն արդեամբք, ոչ եւս կոչի մարդ, այլ գազան մարդակերպ. զի վրիպեալ 'ի սիրոյ՝ 'ի շնորհաց մարդկութեանս, անմարդութեամբն խոցէ զսիրտ ընկերին, զբլանալով նմա զպարտաւորութիւնս իւր. Իսկ որ ճանաչէ զկարգ և զգոյութիւն առաւելութեան սիրոյ, շարժեալ յընտելական բարուցն իւրոց, սիրէ զնմանիս իւր ողջախոհ սիրով. զի տեսանէ 'ի պատկերի նորին զայլ ոմն ինքն, զանձն իւր, և սիրէ զնա կաթոգին՝ անձինն չափ. և զոր ինչ 'ի նմա գեղեցիկ առաքինութիւնք իցեն՝ տեսեալ խնդամիտ, և զթերութիւնս պակասութեանցն նորին փութայ ուղղել բարեմտութեամբ իւրով.

Ապա սիրեցէք զմարդիկ, այլ ոչ զնոցայն մոլութիւն. սիրեցէք զբնութիւնն աստուածաստեղծ՝ զոր 'ի ձեզդ նշմարէք, զբնութիւնն՝ որ քան զամենայն բնութիւնս համատարած՝ գերապանծ և սքանչելին է. և սիրելով զնմանիսդ, զձեզ ինքեանս սիրիցէք. Ի բաց եղերուք և խորշեսջիք միայն 'ի մոլութեանց նոցին, զի նմանին այնք փշոց, որք զգեղեցիկ բեղմնաւորութիւն

բանական անդաստանիս հեղձուցանեն և ապականեն , և զպատուական ընձիւղ սիրոյն խամրեալ գօսացուցանեն . Եղերուք մշակք ժիրք որք զոստասկս փշոց որբեն յանդոցն , և առաւելուն զարգասաւորութիւն . Իսկ դուք եթէ անկարասջիք խլել զխոտան ունակութիւնս և զբարս 'ի մարդկանէ գովելի առաքինութեամբք ձեռովք , հեռացեալ մերժեսջիք 'ի նոցանէ , զի մի գուցէ նոցին մոլութեամբք մեղկասցի արիութիւն առաքինութեան ձերոյ .

Դուք որդեակք իմ սիրելիք , Ձիւղք պանծալիք Աբրահամեան տոհմիս , յիւրաքանչիւր 'ի ձէնջ սերեսցի մէն մի ազգ բազմասերունդ . ակն 'ի վեր ամբարձէք յաստեղազարդ խորանն երկնից , և տեսէք զպարս անհամար լուսափայլ աստեղաց . այնպէս փայլեսցին 'ի ձեզ որդիք՝ և որդիք որդւոց ձերոց . Եւ ուստի՞ այս ամենայն պարգեւ , բայց եթէ յօրհնութեանցն Աստուծոյ , զոր խոստացաւ մեզ անսուտ բերան իւր . որոյ նշանակ , բեղմնաւոր որդեծնութեան ասեմ , առաջի աչաց իմոց ցուցանի , զերկոտասան Ձիւղս ապագայ բազմորդութեանն իմոյ ընձիւղելով յիմոցս երանաց . Պատրաստեսջիք ապա զձեզ լինել արժանաւոր օթեվան օրհնութեանցս . զի թէ արմատն մաքուր և անխառն 'ի դառնութեանց իցէ , և պտուղ նորին մաքուր և անարատ վերընձիւղեսցի . Դուք արմատք էք , և եթէ ոչ 'ի բաց դիջիք զդառնութեան և ըղձասակարութեանն խառնուրդ , երկնչիմ՝ մի գուցէ ընչովին գօսասջիք . զի որ տնկեաց զձեզ Արարիչն բնութեանս , ո՛չ զի արուգ և անպիտան 'ի պտղոյ լինիջիք՝ արար , այլ զի պտղաբերեսջիք զսերմն քաղցրութեան , արժանի իւրում տնկողին . Կրթեսջիք ապա զձեզ 'ի հեզութիւն և 'ի ցածութիւն , զի տիրեսջիք երկրիս այսմիկ օրհնութեամբն Աստուծոյ .

տարրացեալն 'ի ձեզ առաքինական բարեմասնութիւնք, և մի ինչ առ 'ի մոգել զաչս և զմիտս մարդկան ևեթ՝ բարեպաշտս և երկիւղածս զինքեանս ցուցանիցէք, և արդեամբք զնորին հակառակն գործիցէք. Յայնժամ կատարեալ երևելի 'ի ձեզ բարեկիրթ դաստիարակութիւնն, յորժամ յիւրաքանչիւր վայրկենի զձեզ 'ի բուռ խղճի մտացն արկանիցէք երկիւղիւն Աստուծոյ, յորժամ խորհրդակցիցէք ընդ գիտակցութիւն հոգւոյ անաչառ տեսութեամբ, որով կարասջիք տեսանել զամենայն պակասութիւնս ձեր, և քաւեսջիք.

Ուսարուք զհեզութիւն և զբարս համբոյրս նոյն իսկ 'ի գառանցդ, զորս արածէքդ. զի որպէս նոքա ոչ կորուսանեն զշաւիղս հետոց հովուի իւրեանց, և ոչ բաժանին 'ի նմանէ, նոյնպէս և դուք հետեւեցարուք խրատու հօր ձերոյ, և մի երբեք բաժանեսջիք 'ի սիրոյ և 'ի քաղցրութենէ ծնողին ձերոյ. Նոքա 'ի հեռանալ և 'ի բաժանիլն 'ի հօտէն, յափշտակին 'ի գայլոց, նոյն և դուք եթէ զանցանէք զխրատուք իմովք, և դառնայք միւսանգամ 'ի նոյն յանդգնութեան գործ, զոր 'ի Սիկիմ ցուցէք, ոչ ևս պահեսցէ զձեզ Աստուած 'ի գայլոց, իմա 'ի վտանգից՝ որք քան զկատաղութիւն գայլոցն առաւել կեղեքեն զոգիս մարդկան.

Ամենայն մարդ՝ ո՛ որ և իցէ, որ մեղանչական գործովք վարիցի, և 'ի յանցանս անիրաւութեան ջերանիցի, անշուշտ ըստ մեղացն կրեսցէ զարժանաւորն պատուհաս. Յուշ լիցի ձեզ մառախուղն՝ որ եղանէ յերկրէ 'ի կողմանս արեւելից, զիարդ գարշահոտութիւն նողկալի յօդսն պատճառէ, յորժամ յարեւելից հողմն հնչիցէ. Ո՛չ տեղին արդեօք 'ի բնուստ այնպիսում գարշահոտ ապականութեան վիճակեալ իցէ. այլ դրախտ իմն խնկաւէտ և գեղեցկաբոյր էր վայրն,

և քան զամենայն երկիր արգասաւոր և բերրի։ Իսկ բնակիչք տեղւոյն զհետ գարշելեացն պոռնկելով և ՚ի ցանկութիւն մարմնոյն խանձելով անօրինակ ամբարշտութեամբ, զհոտ նեխութեանց մեղաց բուրեցին, որ ընդ մառախլամած ծխովն տակաւին ազդէ ՚ի ռընգունս մարդկան։ Չարութիւն նոցա անհնարին, թէպէտ և բազում ժամանակ ՚ի վերայ բարդեցան, այլ դեռ զպատռնալեացն յինքն կրէ զպատիժ, զոր պատժեցան արդարապէս։ Թէպէտ և ՚ի հուր դատեցան կիզանողական տօչորմամբ, և յաճիւն դարձան, բայց ծուխն երեւի մինչև ցայսօր՝ զարդարութենէ Աստուծոյ քարոզելով, և տեւեսցէ մինչև ցկատարած աշխարհիս, ՚ի զգաստութիւն մարդկան ՚ի հեշտութեանց իւրեանց։

Ի սոյն օրինակ՝ գեղեցիկ և ահարկու խրատաբանութեամբ վարէր ընդ մեզ հայր իմ ընդ այնոսիկ աւուրս։ յորում տիրապէս յայտնէ զխոստմունս Աստուծոյ առ ՚ի ժառանգելոյ որդւոց իւրոց զերկիրս, որով շարժէր զմեզ ՚ի սէր և ՚ի պատուիրանապահութ։ Փութայ նա զանգթութիւնն ՚ի բաց վարել ՚ի սրտից մերոց։ Ջանայ զգոլելն զայն հեզութիւն հաստահիմն արմատացուցանել ՚ի միտս մեր, օրինակ ՚ի մէջ զգառինան ածելով։ Յիշէ զյանցաւորութիւն երկոցունց որդւոց իւրոց վեր ՚ի վերոյ տեսութեամբ, առ ՚ի խարսխել զմիտս նոցա յերկիւղ Տեառն և ՚ի պատկառանս։ Հրահանգէ զմեզ ՚ի կրթութիւն առաքինութեան, և ՚ի մեղաց ՚ի բաց ընթանալ, առաջի դնելով զպատիժն զոր իւրաքանչիւր ոք ըստ չափու մեղացն ունի կրել։ յոյր սակս ուշ ՚ի կուրծս առնելով մեզ և զծուխ գարշութեան՝ նշանակ մեղացն Սոդոմացւոց և Գոմորացւոց, առաւել իմն սարսափ ընդ միտս մեր արկանէր, Եւ ամենայն ոք յայն կողմն դարձուցեալ

զակն իւր , զդողանի հարկանէին . այնչափ Թափ 'ի խորս սրտից մերոց աղդեալ էին բանք հօր իմոյ .

Ըստ այսմ պարտին ահա ամենայն ծնողք խրատել զորդիս իւրեանց , քաղցրութիւն միշտ ընդ բանսն խառնելով , հեռի 'ի յանդիմանելոյ և 'ի կշտամբողական խօսից . չսարտուցանել զսիրտս նոցա և չխոցել զմիտս . չԹողուլ զնոսա կործանիլ 'ի յուսահատութիւն , որով յանդգնեալ երիտասարդաց յառաւելութիւն չարեաց զանձինս մատնեն , և կորնչին զկորուստն յաւիտենից . Ո՛հ , մեծ է ինձ ապաքէն այս , տեսանել զամ հարս , օրինակ զանձինս ընծայեցուցեալ որդւոց իւրեանց . յղկել զանհարԹ և զանպիտան բարս նոցա , առաքինութեան արօրիւ մշակել զսիրտս նոցա , և մարզել յերկիւղն Աստուծոյ , և յեղբայրսիրութիւն . ցուցանել նոցին՝ ուստի՞ այն ամենայն մեղք ծագիցին , ուսուցանելով և զմիջոցսն որով զայնս յանձանց 'ի բաց խլեսցեն .

Իսկ եթէ ծնողք անփոյթ անցանիցեն զամենահարկաւոր պարտաւորութեամբք իւրեանց , չխրատիցեն զնոսա , խնայելով 'ի գաւազանն զի մի՛ տրտմիցին , և ոչ ստէպ զուղղութեան կանոնսն ցուցանիցեն նոցա , գիտասցեն զի պատիժք անհոգութեան իւրեանց պատրաստին 'ի գլուխս իւրեանց , փոխանակ զի ոչ կամեցան դաստիարակել զնոսա . Վայ մնայ նոցա արդարութեանն Աստուծոյ սրտմտութիւն , քամել մինչեւ ցյետին մրուր դառնութեան . Քանզի՝ որք միանգամ յաստուածուստ անտի կարգեալ են տեսուչ , որպիսի են՝ ծնօղք , իշխանք և առաջնորդք , պարտաւորին խրատել զամենեսեան յանձնեալս խնամոց իւրեանց , զանուղղայսն ածել յուղղութիւն , և այն ի՛բրու ոչ բանիւ եւեթ բերանոյն , որ աղդէ ինչ սակաւ , այլ օրինակաւ անձինն և գործովք ուսուցանելով . Պահել

զնոսա անապատն՝ ոչ միայն 'ի խաղաղաւէտ երջանկութեան, այլ յաւէտ յառաքինական ունակութեան. ոչ միայն ընդ պատկառելի ակնածութեամբն սնուցանել զնոսա, այլ առաւել բարերարութեամբն իւրով յանկուցանել յինքն զսիրտս նոցին, և պնդապէս բեւեռել զմիտս նոցա 'ի սէրն աստուածային. Զայս ամենայն աննախանձ ոգւով վճարեալ ծնողացն և առաջնորդաց, անպարտ զանձինս իւրեանց կացուսցեն. իսկ որք անազդակ և անփոյթ խրատուց նոցին մնասցեն, անձանց զպատիժս կուտեսցեն.

Վա՜յ և եղո՛ւկ եմ ես սիրելի Սանէթ. իմաստուն բանից, և խրատուց հօր իմոյ ես իսկ գտայ աւանդապահ, այլ որպէս որ՝ որ զքանքարն ընկալեալ թաքուցանիցէ, այնպէս անվաշխ և անպտուղ մնան յիս խորհեալ այնք. Զի ո՛ր շնորհ ինձ անտի. և դուցէ առաւելապէս ևս վնասեցայց այնու, փրկութեան անձին իմոյ մասն թշնամեոյ լինելով. Կարգեցայ իշխան 'ի վերայ Եգիպտական թագաւորութեանս. բանք հօր իմոյ անջնջելի կան ընդ միտս իմ, և փոխանակ ինձ 'ի շահ դիպելոյ, խայթիչք են մտացս խղճի. Այնատարած է իշխանութեանս սահման, ընդ որով կան բազմութիւնք անհամար մարդկան, յանձն եղեալք ինձ 'ի հովուել, մանաւանդ թէ 'ի փրկել իսկ. վասն որոյ դողամ և սարսափիմ յաններելի դատաստանացն Աստուծոյ. Զի թէպէտ և որքան ջան և փոյթ կայ 'ի ձեռին իմում՝ զհանճարաւորս և զարդարակորովս մտօք ընտրեալ կարգեմ 'ի վերակացութիւն արքունի իրաց և ժողովրդեանն, և նոցա յանձն առնեմ զխնամս մարդկան. այլ ո՛ր շահ և օգուտ քաղիցի յիմաստութենէ, եթէ զճշմարիտ աստուածպաշտութիւնն չունիցի իւր ընծակից. Իսկ ուր աստուածպաշտութիւնն վրէպ իցէ, արդարութեան յոյս ունիցի՞ անտուստ.

և ուր ոչ արդարութիւն կայցէ, անդ ամենայն անիրաւութիւնք խուռն յաճախեն.

Ապա մնայ մեզ միմիայն ստոյգ առհաւատչեայ անդատապարտութեանս մերոյ, հետեւումն զհետ շաւղաց հօր իմոյ, որոյ օրհնութեամբն եւ եթ տեսչութիւն հզօր պետութեանս բարեկարգ ընթանայ, և ոչ իմով ինչ իմաստութեամբ. Երկիցուք ապա հետեւօղք նմին, և օրինակ զմեզ կացուսցուք ամենեցուն բանիւ և արդեամբք. ուսցին 'ի մէնջ զառաքինութիւն և վարս ցածունս. Եւ մեք զսիրտս մեր տարածեսցուք առաջի Աստուծոյ, ցուցանելով ըզհարկաւորութիւն մեր օգնականութեան շնորհաց նորին. որ անշուշտ հասեալ 'ի թիկունս տկարութեանս մերոյ, զօրացուսցէ զմեզ զգենուլ զզրահ պնդութեան պատուիրանաց իւրոց և օրինացն, որովք յառաջոյ զմեզ տուեալ, շարժեսցուք զնոսա յառաքինութիւն և յաստուածպաշտութիւն, զոր ուսոյց մեզ հայրն մեր երջանիկ. Ո՛հ, քաղցրիկ անուն. զիա՞րդ քաղցր հնչէ յունկն իմ. ո՛հ, ո՞ր յիշատակ սիրաշարժ լինի զսիրտ իմ 'ի խանդ գորովոյ. Եղէ՞ց արդեօք միւսանգամ արժանաւոր տեսութեանդ քում համբուրելի . . . արժանաւորեցա՞յց լսել զաստուածազդեցիկ խրատս քո . . . . Վաղիւ ասաց, զեղմունք գորովաղէտ սրտին հատին զբանսն, սկսան կայլակք արտասուացն հոսել ընդ երեսն 'ի վայր, տարածեաց զձեռն առաջի Աստուծոյ, և աղօթէր յանմռունչս.

ԳԻՐՔ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Օ ի՜նչ էր մառախուղն և ծուխն գարշահոտ, զոր տեսեալ ձեր սարսափելիք. և զի՜նչ անօրէնութիւն Սոդոմայեցւոց.

ՅՈՎՍԷՓ

Հետք նշանաց պատուհասին՝ զոր ընկալան փոխարէն անօրինակ չարութեանց բնակիչք քաղաքացն հնգեցունց, յորս գլխաւորք էին Սոդոմ և Գոմոր, որք անօրէնութեամբք իւրեանց 'ի բարկութիւն շարժեցին զԱրարիչն, զբնութիւնն անբարկանալի.

Երկիրն այն է դաշտ լայնածիր, յորում բնակէին բազմութիւնք մարդկան, և է 'ի բացեայ 'ի Բեթղահեմէ իբրեւ հնգետասան ժամ. և զի Բեթղահէմ բարձր դիրս ունի, անտի իբրու 'ի բարձր ինչ դիտանոցէ երեւէր մեզ տեղին 'ի ծագել արփւոյն. Բայց արդ հարթութիւն դաշտին փոխեալ կայ 'ի լիճ յորդայորդ սահանաց ծծմբախառն ջուրց դժոխային կիզանողական բոցոյ. անդ ոչ առուք և վտակք թափին, և ոչ անտի արտաքս տղոսկեալ գնայ գետակ. Լիճ է ծովաքարակ, այլ չիք և չիք 'ի նմա շունչ կենդանի, միայն պատկեր կանխագոյն բարկութեանն Աստուծոյ 'ի նմա նշմարի. Ո՛չ զեռուն գնայուն և ոչ օդականք տեսանին ինչ. և ոչ երբեք մանր ալիքն ծածանեալ շարժին 'ի քաղցրասիւգ օդոյն, քանզի և օդն իսկ ապականեալ և այրեալ է. և ոչ ինչ

անդանօր գլխոյ և զօդոյ, զի երկոքին իսկ տարերքս այս կորուսին զաստուածադիր զօրութիւն իւրեանց. Մառախուղ մթատեւ և մէգ գոլորշեաց պատեալ զնոքօք գտանին. ծառանան 'ի բարձունս, և 'ի շնչել տապախառն հողմոյ՝ այսր անդր ցրուեալ տարուբերին, յոլով վնաս և զեան գործելով կենդանութեան մարդկան. Յարեւելեան և 'ի հարաւային կողմն երկրիս անկանի անապատն աւազուտ, ուր անպակաս է խորշակ ջերմախառն, հիւսիսային հողմոյն ուժգնութեամբ վարեալ զմառախուղն և զհուրն գարշահոտ, և զամենայն զոր ինչ գտանէ՝ խարշէ, խամրէ և խանձողէ. Յաղագս այսր պատճառի և նախահաւն իմ Աբրահամ՝ ոչ կարելով տանիլ հոտոյն գարշութեան, քանզի առ կաղնեաւն Մամբրէի բնակէր, փոխեաց զբնակութիւն իւր, յորմէ կարէր տեսանել զաղետալի տեսարանն արդար բարկութեան Աստուծոյ, և չուեաց 'ի կողմն հարաւոյ, և անտի 'ի Գերարայ.

Այոքիկ վայրքս, որ արդ զծուխ գարշութեան և զհուր ապականարար բուրեն, երկիր արդաւանդ և բեղմնաւոր էին յոյժ, ասէր հայր իմ. և արդասաւորութիւն նոցին՝ յարդիւնս հնձոցն հարիւրաւորս և հազարաւորս մատակարարէին. Ծառատունկք բազումք էին անդ, զորոյ և զհաւաստիսն է տեսանել արդ 'ի շրջակայս նորին. 'ի վերայ բլրոց և ստոց տեսանին ծառք, այլ զկերպարանս միայն ունին զծառոյ, և պտտուղք 'ի նոսա լիք, որք յոլով ակնկալութեամբ լնուն զսիրտ տեսանելեացն՝ անտեղեակք նոցին եղելոց. քանզի և ոչ ինչ զպտղոյ, այլեալ ամենեւին 'ի ծըծմբալի հրոյն անտի, մոխիր և փոշի համակ պարփակեն. Նշանաւոր է անդ և հազուագիւտ պտուղ նռնենւոյն, որ թէպէտ և աճիւնացեալ և խամրեալ, այլ տեսիլ ծառոյն և կերպարանք մեծութեան պըտ-

զոյն լուելեայն հռչակեն զանհամեմատ գեղեցկութիւն, զքաղցրութիւն և զբեղմնաւորութիւնն զառաջին, Դաշտավայրքն համայն ծածկեալ էին պարարտ դալարեօք և կանաչագեղ արօտիւք, մինչ զի Ղովտ` եղբօրորդի Աբրահամու, որ ընդ նմա կայր միշտ անբաժան յորժ ելանելոյ նոցա յերկրէն Խառանու, տեսեալ զպարարտութիւն արգաւանդահող երկրին, զայն ընտրեաց 'ի բնակութիւն իւր և խաշանց իւրոց, որք բազմացեալ էին յոյժ, և բնակեցաւ 'ի մի քաղաքացն որ կոչիւր Սոդոմ. Թէպէտ նա անմասն գլխովին 'ի չարեաց նոցին` կայր 'ի փառս սրբութեան և յաստուածպաշտութեան, և զանձն օրինակ նոցա կացուցանէր, յորդորելով խոյս տալ յամբարիշտ գնացից, և պատուել զպարկեշտութիւն, բայց չէր ոք որ անսայր նմին, իւրաքանչիւր ոք 'ի ցանկութիւն անձին իւրոյ թաւալէր. Ղովտ մեկուսացեալ գլխովին 'ի հաղորդութենէ նոցին, զգուշանայր անձին և ընտանեացն իւրոց, զի մի լկտութիւն նոցա վարակեսցի ինքեանց, և համեստութիւն սուրբ ամուսնութեան իւրեանց յափշտակեսցի. Թէպէտ 'ի յերկրի բնակութիւն նորա, այլ երբեք յերկինս քաղաքավարէր. և ըստ օրինակի Աբրահամու զաստեղատունսն քննեալ, հիանայր ըսքանչանայր ընդ գործ Արարչին, որոյ ամենակարողութեան արգասիք քան զամենայն կողմանս աշխարհի` անդանօր փայլէր. երբեմն դրախտ Աստուծոյ զարդարեալ էին վայրքն. մինչ զի բնակիչք երկրին դոյզն ինչ վաստակովք քրտանց` մեծապէս վայելէին յերկնաձիր բարութիւնս.

Այլ քանզի անշնորհակալուք գլխովին երախտեացն Աստուծոյ կային, ոչ ինչ ամենեւին զմտաւ ածէին զպարգեւսն, կուրութիւն մտացն այնչափ թանձրացեալ կայր 'ի վերայ նոցա. Փութային նոքա

օր քան զօր առաւելուլ զչարութիւնս անձանց, և որ միանգամ գերազանցեալ գտանէր զամենեքումբք ՚ի վատութիւն և ՚ի լկտութիւն, փառս անձին համարէր և յաղթանակ կազմէր։ Չէր անդ ոք կշտամբիչ անբարշտութեանցն. իշխանք առաւել քան զժողովուրդն շամբշէին. ծնողք՝ փոխանակ խրատու զաւակացն լինելոյ, և դարձուցանելոյ զոտս նոցա ՚ի կրրբստական շաւղացն, օրինակաւ անձանց ասպարէզ բանային նոցա անսանձ շահատակել ՚ի լրբութիւնս և ՚ի հեշտութիւնս։ Ծաղկեալ ալիք ծերոցն ոչ ինչ պատկառանս ածէին երիտասարդաց, քանզի անմըտութեան իւրեանց գործք՝ նախատինք էին երեսացն. անօրէն վարք իւրեանց ափ ՚ի բերան առնէր զնոսա, եթէ ՚ի սպիտակափայլ հերացն բռնադատեալ երբեք խրատս ինչ իշխէին տալ մանկանց։ Ամենայն բանք արդարութեան յոչինչ գրեր առ նոսա, և որ միանգամ համարձակէր զգուշութիւն իմն ՚ի վերայ կապել անզուսպ կրից պարմանեաց, անդէն քարկոծէր նախատական բանիւք հայհոյութեանց։

Եւ ո՛ արդեօք զօրեսցէ զմաքրութենէ վարուց նոցին ճառել, եթէ մաքրութի՟ ինչ էր զոր գործէինն. Քանզի ամենեքին տղմաթաւալ շաղախեալ անկեալ ՚ի պղծութիւնս, և ՚ի մծղնէութիւն հատեալ խայտառակութեամբ, իւրաքանչիւր ոք զիւր ցանկութիւն փութայր կատարել գազանաբար վրնջելով ընդդէմ միմեանց, և զամենայն անօրէնութիւն մարդկան լրբաբար զանձամբ շփէին։ Ու՞ր գեղեցիկ այն քօղ ամօթխածութեան, որ զդէմս զարդարէ օրիորդաց. կարմրութեան ոչ ևս ցուցանիւր յերեսս նոցա նիշ, որով սիրելի զինքեանս ընծայեն։ Քանզի՝ վաղու ևս հալածեալ տեղի տուեալ էր ՚ի նոցանէ. մինչև հասեալ երիտասարդաց յարբունս հասակի, ՚ի ծաղկի տիս

իւրեանց դալկանայլին երեսքն, նուաղէին աչքն, վասն զի խենեշաբար զհետ լկտութե̄ միտեալ ընթանային.

Առագաստք և սենկապանք նորեկ հարսանց անփակ կայլին. քանզի՝ և ո՛վ զօրէր զդէմ ունել տուփանացն. ո՛չ սաստ և ո՛չ զօրութիւն ազդէին ինչ բուռն կրից նոցին. Եւ յետ այնորիկ այն ինչ խապառ մըթագնեցան տեսութիւն մտացն 'ի սաստիկ կատաղութենէ, ոչ ինչ խտիր դնէին ընդ այր և ընդ կին, այլ յանյիշելի գործս քարուականաց մոլեգնէին. Անամօթ մծղնէութիւն նոցա՝ և ոչ անգամ 'ի վարազս տեսանէր, որք ընդ էգս միայն գան՝ բնութեան զհետ հետեւելով. իսկ սոքա սոտորաքարշ քան զանբան կենդանիս գտեալ, արտաքս դիմելով քան զմարդկան բնութիւն, քարուակս 'ի հրապարակս կայլին. Եւ ոչ այսչափ միայն, այլ և պարծանս եւս անձանց դնէին, ընդ փծուութիւնսն փքային. Բանք իւրեանց յամենայն ուրեք զվաւաշ ցանկութենէ. քան զամենայն զրոյցս՝ հաճելի և ախորժ էին նոցա զնմանօրինակ բանիւքն գալ.

Եւ ո՞ իսկ բաւական իցէ զայնչափ ոճիրս և զաներասանակ բերումն նոցա 'ի նոյն անպատկառ գործ՝ 'ի համար ածել. վասն զի այնչափ վատթարացան 'ի չարիս, այնչափ խենեշացան 'ի վարս ընդդէմ բնութեան, մինչ զի զնորահնար մեղանչականութիւն գործեալ առ Արարիչն, և ևս ելեւէջս զխմեամբք առնէին գլել 'ի չարիսն քան զընկերսն. Լցաւ, զեղաանօրէնութեանն չափ. և արարածք ամենայն եդին զձայնս իւրեանց յերկինս առ Ստեղծիչն բնութեան, ջնջել, եղծել անօրինակ իմն պատժովք զանօրինակ մեղանչողսն ընդդէմ բնութեանն.

Ա՛ սիրելի կենակից իմ, տեսանես զանսանձ մոլեգնութիւն մարդկան, որով կուրացեալ խապառ

անտես արարին զշնորհօքն Արարչին , որ ոչ ագահեաց ինչ երբէք նոցա ՚ի տուրս բարութեան իւրոյ . բեղնաւորս գործեաց զանդս նոցա , բազմապտուղ արար զորթս գինեբեր այգեաց նոցա , և նոքա ոչ գիտացին գոհութեամբ վայելել յայնս . Աչօք իւրեանց տեսին զանպտղութիւն երկրի սահմանակից ազգացն , և զիւրեանց բարեբերութիւն առաւելեալ յոյժ քան զբազում վայրացն . այլ փոխանակ ՚ի գոհութիւն մատչելոյ , յորպիսի անարգանս և ՚ի վատութիւն զանձինս մատնեցին . Իսկ քանզի ոչ թոյլ տայր նոցա անասնային խենեշութիւնն զմարդկութեանն յանձինս բերել զբանականութիւն , և տապ անօրինակ հրոյն` որ բորբոքեալ վարէր յաւէտ ՚ի խլրտմունս ախտաւոր ցանկութեան , ջեռուցեալ պապակէր զնոսա . որով գրեթէ զգեղեցիկն զայն ձիր անձնիշխան ազատութեան կամացն գերի վարեալ , կուրացաւ մտացն հայեցողութիւն , և մոլեգնէին անխտրաբար և կոյրզկուրայն .

Իսկ արդ` ո՞ր դեղ և սպեղանի այսպիսի խղճխայթեալ վիրացս գտանի , որ օր քան զօր ճարակեալ զամենայն մարմինն կորուսանել սպառնայցէ . ո՞ր դեղ և դարման ցաւոյս գտանիցի , որ անյագուրդ ցանկութեամբ հեշտախտական կրիցն զհամակ մարմինն հիւանդացուցանիցէ . Ոչ ինչ այլ , բայց եթէ որչափ կար ՚ի ձեռն իցէ` չտալ տեղի հեշտութեան . փախչել յամենայն առարկայից և ՚ի հեշտակիր խօսից` որ գիտեն շարժել զախտս , առ որ եթէ յաւելուցու ոք և զժուժկալութիւն պահեցողութեան , անդէն հովացեալ զանձն գտանիցէ ՚ի սաստիկ վայրագն կրից . Մտացն իւր աչք բացեալ` տեսանէ զկռիւ ոտից հաստատեալ ՚ի վախս լպրծուտս , լինել քարավէժ դարահոս յանելանելի անդունդս . շրջէ զոտս իւր ՚ի Ճանապարհն ուղղութեան և անսայթաք ընթացիւք

ժամանել 'ի հանդրուանն սրբութեան բարեկարգեալ վարուց ։

Ո՛ն ապա և մեք, որ բնակեալս եմք 'ի մէջ խառնամբոխ խառնադնաց ժողովրդեան, գուն գործեսցուք 'ի պարկեշտութեան պահել զորդեակս մեր անդստին 'ի մանուկ տիոց, զերկիւղն Աստուծոյ և զպատկառանս մարդոյ անկել 'ի խորս սրտից նոցա, որով յամենայնի բարւոք ընթանալով, արժանաւոր զինքեանս յարդարեսցեն հայրենի ժառանգութեանս ։

ԳԻՐՔ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Զի՞նչ են աղաղակք արարածոց ։

ՅՈՎՍԷՓ

Աղաղակ արարածոց այն իսկ են, յորժամ յանդուգն ինչ գործ ժպրհանաց արտաքոյ կարգի բնութեանս գործիցի 'ի մարդկանէ ընդդէմ Արարչին, և զԱստուած 'ի կարեւոր համբերութեան ժուժեալ տեսանիցեն արարածք համօրէն, յայնժամ ոչ կարացեալ ինչ տոկ ունել հանդուրժել ինքեանց ընդ անըմբերելի եղեռն չարեաց նոցին, Ձիչ բարձեալ գոչիցեն, գուայցեն զարթուցանել զբարկութիւն Տեառն 'ի վերայ չարախոտավատ անօրինաց՝ ըստ արդարութեան նորին ։ Այսպէս աղաղակ բարձին առ

Նստուած ամենայն անզգայ արարածք՝ վասն անտանելի մեղաց Սոդոմայեցւոց և Գոմորացւոց, և ամբաստան եղեն զնորահնար յանցուածոց գործոց պղծութեան նոցին. Քանզի լուսատուն տուընջեան՝ որ իւրով ջերմ զօրութեամբ տայ զաճելութիւն բուսոց և տնկոց, առոգացուցանէ զպտուղս, և գեղեցիկ ակնապարար նշողիւքն գունագեղ լուսաւորէ զբնութիւն համայն, գարշեցաւ 'ի նողկալի պղծութեանցն, սպասէր ակնարկութեան Ստեղծողին իւրոյ, ահագին ջերմութեամբ սրեալ զնետս մուխս՝ դատել զնոսա յաղճիւն, խեթիւ նկատեալ 'ի նոցին ամբարշտութիւն, փոխանակ զի՝ ապականեցին զլոյս պայծառութեան իւրոյ.

Լուսինն՝ որ զՓեբեայ զաղջամուղջ խաւար ցրուեալ՝ գեղափայլ լուսով ջահաւորէ, ոչ երբէք զօրէր ժոյժ ունել անիրաւութեանցն. Քանզի զլոյս իւր՝ որով զգիշերային պահսն զովացուցեալ հանգիստ և բերկրանս իմն մարդկան շնորհէր, նոքա անկուշեալ՝ իւրեանց չարութեանցն գործի առնէին, ըղձութեամբ համակեալ 'ի գործս մծղնէութեան. Վասն որոյ գարշեալ՝ քաշէ իմն 'ի բաց զճառագայթսն իւր առձակեալ յերկինս կոյս գոչէր, և կազմ և պատրաստ զինքն ցուցանէր կամաց Բարձրելոյն, տամկութեամբ և խոնաւութեամբ հատանել զզօրութիւն ջրաց նոցա, որով անկարացեալ 'ի գործս և 'ի խլրտմունս խորհրդոց չարին, իբրև զդի անկենդան գետնամածտացին ընդ երկիր.

Գեղեցկազարդ աստեղացն պարք, որք շողշողուն լուսով իւրեանց սփոփանս իմն հայթայթեն ամենայն արարածոց, և զլոյս 'ի նոսա ողջախոհ մտօք մերձեալ՝ զննիցէ, իմաստասիրապէս հմտացուցանեն և ուսուցանեն զօրինաւոր կարգ ընթացից և շարժմանց իւրեանց, և իբրու մատամբ յայտնելով զբարեկարգ շրջանսն,

յաւելուն զմարդիկ 'ի գիտութիւն և 'ի հիացումն ընդ արարչաստեղծ գործսն. Նոքա հակառակ աստուածադիր հրամանին, արդ պատրաստին Թօթափել կայծակունս հրոյ 'ի վերայ նոցա, զի բարձցին յերկրէ ինքեանք և գործք գարշութեան իւրեանց, փոխանակ զի զվայրօք եկեալ երկրապիշ երկրաքարշ գտան, և 'ի ճահիճս ժահրելի մեղացն պարանոցաթաղ եղեն.

Այն լուսաւոր աստեղացն բոյլք, որ յանուն քաջին Հայկայ շողշողեալ պանծայ, տեսեալ զկատաղեացն զանհնարին մոլորութիւն, և զմեղանչականութիւն չարահնար մոլեգնելոց, ջերաւ հրով վրէժխնդրութեան, 'ի ձեռն էառ զգործին սպանման, լարեաց զիւր զլայնալիճ աղեղն, և նիւթովք այրեցելովք գործեալ զնետս իւր, սպասէր ակնարկութեան Արարչելոյն, տապաստ զնոսա յերկիր կացուցանել ըստ օրինակի ամբարտաւանին Ներբովթայ.

Դասք մոլորակացն հայեցեալ 'ի բազմամոլոր խումբս մարդկան, զարմանան և հիացեալ ապշին ընդ եղեռնալից ախտաւորութիւնս նոցա. զի Թէպէտ և ինքեանք զմոլորականն անուն ընկալան, ոչ զոյգ և հաւասար ընդ հաստատուն աստեղսն ընթանալով, այլ պարբերութիւն և շարժմունք իւրեանց ընդ կանոնաւ և կոպարաւոր սահմանաւ պարփակեալ կայ. Իսկ բանականացս այս կամաւոր մոլորութիւն և մոլութիւն՝ ոչ ըստ կարգի և ըստ սահմանի կայ բնաւ ամենեւին, քանզի նորագոյն է եղեռն և նորահնար գործք չարութեանն.

Հողմն քաղցրասիգ՝ որ հեղիկ հնչմամբն կենդանութիւն և զովացումն տայր բնութեան, և զապականութեանն զնեխութիւն հալածէր 'ի սահմանաց նոցին, սորջացեալ յետս քարշեցաւ յապականեալ վարուց իւրեանց, և 'ի բարձրութիւն երկնից 'ի վեր

սրացեալ վազեալ ժտէր ընդունել զԱրարչին հրա-մանն, հանել 'ի խորոց իւրոց շղթայակերպ զբռնու-թիւն սաստկութեան փոթորկածին հողմոցն, և բնա-ջինջ ջնջել զնոսա յերեսաց երկրին, և կամ տապա-խտուն կիզմամբ խորշակահար արարեալ յածուխ դար-ձուցանել զնոսա.

Երկինք բարձրագլխականք՝ որք երկնաքերձ բարձ-րութեամբ իւրեանց զարդք են երկրի, և ուժգնու-թեան միաստակար շնչման հողմոցն՝ թումբք առողջա-րանք, և զովացուցիչք բարեխառնութեան օդոցն, ա-ճապարեալ փութային անկանել 'ի վերայ նոցա և ծածկել զգարշելի պղծութիւնս, զի մի հոտ նեխեալ գարշութեան մեղաց նոցին յերկինս 'ի վեր բարձրաս-ցի. վասն որոյ փութային սպառսպուռ հիմնայատակ արարեալ՝ անյիշատակ թողուլ զնոսա 'ի վերայ երկրի.

Երկիր՝ որ յարգաւանդաբեր ծոցոյն զարդասալիր պտուղս լիաբուռն շնորհէր, և զդուզնաքեայ քրտունս վաստակոց նոցին ճոխութեամբ վարձատրէր, ստերջ խոպանութեամբ փակեալ զարգանդ բեղմնաւորու-թեան իւրոյ, զլանայր նոցա զհարստութիւնս իւր, և բաղձայր կամ սովալլուկ մահուամբ ստահակաց ա-նել զյիշատակս նոցա յերկրէ, և կամ՝ եթէ հաճեսցին կամք Աստուծոյ, բացցէ զբերան իւր, և կենդանւոյն զնոսա 'ի խորս անդնդոց դժոխոց իջուսցէ.

Ջուրն՝ որ պասքութեան ծարաւելոցն զովարար, և ապականութեան նոցին մաքրիչ և վտարող, այլ ապերախտից այնոցիկ և ապաշնորհաց բարուցն ան-մաքրութիւն և անհնարին պղծագործութիւն՝ գոլով անդր քան զչափն անցեալ զանցեալ, և մեղանացն կոյտ բարդեալ և դիզեալ 'ի վեր քան զգլուխս իւ-րեանց, վասն որոյ սպասէին ակնարկութեանն Աստու-ծոյ, հանել զհոսանս ջուրց բազմութեան, և կամ

ըստ օրինակի Նոյեան դարուն , արձակեալ զսահմանս երկնից , անդնդապատոյտ ջրահեղձ ջրակորոյս ջնջեալ յաշխարհէ , և սրբեալ մաքրեալ զպղծութիւնս , որով ապականեցաւ երկիր .

Այս ամենայն աղաղակք անզգայ արարածոց ելին բարձրացան առաջի Աստուծոյ . Թողում յիշել և զկենդանեացն , զի արծուեաց և անգեղաց և այլոց գիշակեր թռչնոցն երամք , բարձրաթռիչ ճախրէին 'ի վերոյ քան զնոսա . քանզի մեղաց նոցին ժահահոտութիւն տարածեալ ընդ օդս , առեալ ձգէր և գումարէր զնոսա 'ի սահմանս իւրեանց . Նոյնպէս և ջոկք գազանաց խոյս տուեալ յորջէն իւրեանց , եկեալ յարձակէին իբրու նքթեալս և սովաբեկս 'ի բնակութիւնս նոցա , և սրեալ զժանիս իւրեանց՝ բերանաբաց ակընկալեալ սպասէին հրամանաց Բարձրելոյն . Քանզի՝ աւանց աստուածային ակնարկութեան չկարեն և ոչ մազ մի խլել 'ի մարդոյ , այլ միայն խումբք և յարձակմունք նոցին զՍոդոմայեցւոցն ցուցանէր զանօրէնութեանցն զմեծութիւն , եթէ քանի աններելի և անհնարին մեղօք վարակեալ կային .

Արդ իբրեւ եհաս գոչումն աղաղակի սոցա յականջս Տեառն զօրութեանց , զընական մարդասիրութեան իւրոյ զգութ՝ դարձոյց 'ի խստութիւն . փակեցաւ դուռն ողորմութեան նորա . զինեաց զաջ իւր 'ի նետ բարկութեան իւրոյ . երկայնմտութիւն նորա՝ փոխեցաւ 'ի պատիժ արդարացի . քանզի ոչ իմացան և ոչ 'ի միտ առին զհամբերութեան նորին զժամանակն անձանց օգտեցուցանել , որով կոչէր զնոսա յապաշխարութիւն . Վասն որոյ բողոք կալաւ արդարութին՝ որ դարանակալ կայ զաթոռով նորին , ատեան գումարել չափել և կշռել զանօրէնութեան նոցին զչափ , որ գրէր արդարեւ զհամբերութեամբ Արարչին .

Պատրաստեաց կազմեաց զնետս մուխս պատժել ըզ-
նոսա, քանզի ոչ գիտացին զքաղցրութիւն նորին, որ
ոչ կամի երբէք զմահ մեղաւորին, և ոչ զյաւիտենա-
կան կորուստ նորա: Յաղագս այսորիկ կանխեաց ա-
ռաքել առ նոսա քարոզ իւրոյ ողորմութեան զար-
դարն Պօղոս, հրաւիրել զնոսա 'ի զեղջ և յապաշաւ.
առ որ ո՛չ միայն ապախտ գտան, և աստուածահաճոյ
վարուց նորին Թշնամանագիր, այլ և անառակութեամբ
գնացիցն իւրեանց կարեվէր վշտագնէին զնա: Աւասիկ
նախախնամող զօրութիւնն Աստուծոյ, առաքեաց առ
նոսա զերկոսին հրեշտակսն, զմին փրկիչ Պօղոսայ, և
զմիւսն պատժիչ Սոդոմայեցւոցն չարութեան:

Ո՛վ մեծի մարդասիրութե՟ Աստուծոյ: ո՞չ և այս
ողորմութեան էր նորին նշանակ, կանխել առ նոսա
ցուցանել զմօտալուտ վտանգն՝ նախ քան զկորուստ
իւրեանց: որպէս զի տեսեալ զվերահաս օրհաս և
զսատակիչ զաւուրն եկեալ հասեալ, գոնէ զղջասցին,
և զմոխրով և զփոշւով գայցեն 'ի վերջին յայն պահ,
և դարձցին 'ի չարեաց իւրեանց: Իսկ նոքա ոչ այնպիսի
ինչ զմտաւ ածին: զղջացաւ Տէր զի արար զնոսա
մարդ, և նոքա ոչ զղջացան յանօրէնութ՟իս իւրեանց,
այլ եւս քան զեւս չարացան և յաճախեցին 'ի մեղս՝
որ զանցանէ ըստ միտս մարդկան, զոր ես պատկառիմ՝
ասել: Քանզի՝ տեսեալ նոցա զերկոսին հրեշտակսն
'ի կերպարանս երիտասարդաց, մոլեցան զհետ նոցա
տռփանօք: Ո՛հ կուրութեան մտացն և անհնարին ան-
մտութեան: քանի՛ չար են մեղք, և մեղք մահու չափ,
որ զհոգւոյն կուրացուցեալ զաչսն, և զմարմնոյն յան-
տեսութիւն ածէ: Տեսեալ հրեշտակաց և 'ի վերայ
հասեալ մտաց նոցին, եթէ 'ի նոյն հաղբ մոլեկան ախ-
տից և զմբռնեալս մտաբերեն արկանել, 'ի դեղն
պատրեալ երկնային կերպարանացն, նոյն հետայն հարին

զնոսա չարաչար կուրութեամբ , և աչօք բացօք ոչ զոք տեսանէին ։ Իբրև կալեալ զձեռանէ Ղովտայ և զիւրայնոցն , եհան արտաքս 'ի քաղաքէն ։ Իսկ կինն Ղովտայ , քանզի յերկբայս կայր և կանացի հետաքրքրութիւնն շարժէր զնա , յետս կոյս շրջեաց զերեսս իւր ընդդէմ պատուիրանին հրեշտակի և մածաւ յարձան աղի , որ կայ և մնայ արտաքոյ Սոդոմայ մինչև ցվախճան յաւիտենից ։

Հայր իմ՛ ճառ արկեալ մեզ զայն պատիժ տանջանացն՝ զոր պատժեաց Աստուած զհինգ քաղաքանին , ցուցանէր մեզ զմեծութիւն անհնարին ախտիցն գարշութեան՝ յոր թաւալեալ կային նոքա ։ և յորդորէր զմեզ ցանկ յարթմնի և յանձին կալ , և զգոյշ 'ի պատուիրանս Տեառն լինել ։ Տեսանէք , կրկնէր նա , եթէ զիարդ չհանդուրժեալ անխօս արարածոց՝ լեզուս շարժեցին , աղաղակ բարձին զանօրէն գործոցն բողոքելով մարդկան ։ Հեռացէք այս 'ի մեղաց , թօթափեցէք յանձանց զփոշի անիրաւութեան , զցանկութիւն անասնային , զի մի՛ զնոցին ընդունիջիք զբաժին պատուհասիցն ։ Քանզի՝ ցանկութեանցն հեշտութիւն , առ որ անսանձ անձնամատոն լինին մարդիկ և երիտասարդքն տիօք , ոչ միայն ներքին հրով այրէ և տոչորէ զնոսա , այլ և վաղամեռիկ մահուամբ իջուցանէ 'ի յաւիտենական հուր անշիջանելի դժոխոց ։ Պատուեցէք զողջախոհութիւնն ։ մի՛ պղծէք զսուրբ անկողինս ձեր օտար խառնակութեամբք , այլ միով կնաւ եւեթ զովացարուք ։ Յիշեցէք յամենայնի զարդարութիւնն Աստուծոյ ։ 'ի յարգի և 'ի պատուի ունիջիք զմարդկութիւնն , որ գերագոյն ճոխութեամբ բանականութեան պատուեցաւ , յորմէ անմասն են այլ արարածք , զորս 'ի սպասաւորութիւն մարդոյն կարգեաց ։ Իբրև մի՛ ընդդէմ բնութեան անասնաբար

համարձակեալ խիզախեալ թշնամանս բանականութեան շնորհին դիջիք, զի մի և դուք զանօրինակն պատժիջիք 'ի դատապարտութիւն յաւիտենական.

Տեսանե՞ս սիրելի կենակից իմ զհօր իմոյ զառաքինական խրատուցն զհանդէս, զիա՞րդ յաճախութեամբ յոգնաբեղուն բանիցն իմաստութեան զմեզ յղփացուցանէր. քանզի այնու ազդողագոյնս տպաւորէր 'ի միտս մեր զբանս իւր. Ցուցանէր նա մեզ՝ ոչ միայն զգութ առատ ողորմութեանն Աստուծոյ 'ի վերայ ամենայն արարածոց, փրկութեամբն Ղովտայ 'ի ծծմբախառն հրոյն, այլ և զարդարութիւն նորին, որով զապստամբս և զստամբակս իւրոյ պատուիրանին պատժեաց. Քանզի արդար է Տէր, ոչ ինչ ակն առեալ ումեք՝ իւրով արդարութեամբն ածէ զպատուհաս 'ի վերայ անսաստից և ապստամբելոց յիւրոց օրինաց.

Ապա ուրեմն սիրելի իմ փութասցուք և մեք յամենայնի աշալուրջ զգաստութեամբ միտ դնել կամաց Բարձրելոյն. պաշտեսցուք զպատուիրանս նորա երկիւղածութեամբ, և գոհութեամբ վայելեսցուք 'ի բարութիւնս՝ զոր պարգևեաց մեզ Տէր. Զողջախոհութիւնն՝ որ մայր է մաքրութեան և անարատութե վարուց և պատճառ անցաւ և անտրտում առողջութեան մարդկան, տնակից և լծակից մեզ արասցուք, ընդգրկեսցուք զնա յարգութեամբ և 'ի սիրտս մեր բնակեցուսցուք. Մի՛ զանձս տացուք 'ի ձեռս կամաց մերոց, զի անհաստատ են կամք մարդոյ, շրջի յածի յանձնդիւրութիւնս և 'ի հեշտութիւնս մարմնոյ, յորում դարանակալ կծկեալ չարին՝ մատն լինի անձին առողջութեան, և յարդանայ պատուոյ բանականութեան, և զմարդիկ իջուցանէ յանբանից դասս. Այլ և եղուկ որոց ախորժ իմն հաճութեամբ անձ-

նամանտն լինել յանառակ վարս, ապականեն զին-քեանս. որք եթէ զՍոդոմայեցւոցն զպատուհաս ա-ծէին երբէք զմտաւ, ահաբեկեալ յետս նահանջէին ՚ի խաւարային գնացիցն, և զամենայն կեանս իւրեանց ՚ի դող և ՚ի սարսափ անցուցանէին. Իւ զոլացեալ հոլացեալ համբուն ՚ի ցանկութեան բոցոյն, որ ըզ-փորոտիսն իւրեանց մաշէր և զոգիսն կեղեքէր, ապա-ւինէին յողջախոհութեան ամուրան անդ խոյս տուեալ, և շահէին զանձինս իւրեանց և զոգիս.

ԳԻՐՔ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Զի՞նչ էր տարօրինակ պատիժն որով պատ-ժեցան Սոդոմայեցիք.

ՅՈՎՍԷՓ

Քանզի՝ որով օրինակաւ ոք մեղանչէ, նովին օրինակաւ և զմեղացն իւր լուծանէ զվրէժ. նոր էր տարազ յանցանաց աղծապիղծ անօրէնութեան բնակ-չացն Սոդոմայ, նոր էր և վրէժխնդրութեանն օրինակ՝ զոր առ ՚ի յԱստուծոյ ընկալան. Զբնական օրէնսն աստուածադիր, զոր սահմանեաց Արարիչն ըստ ան-հրաժեշտ պահանջման մարդկային բնութեան, որով միայն անսպառելի սերունդ մարդկութեանս, նոքա զնոյնն եղծեալ յանբնականն յեղաշրջեցին. Արուք

ընդ արուս զբնութեանն լնուլին զպէտս. և էգք՝ ո՛ անկշռելի չարեացս, զօրինօք իւրեանց աղախտ արարեալ՝ յորպիսի՞ գարշութիւնս խայտառակէին անբնականաւն վարելով. Ոչ շատացեալ երկոցունց իսկ սեռից միով ամուսնութեամբ զովացուցանել զխանձումն և զջերմութիւն բնութեանն, և քաղցրացուցանել այնու զլծոյն ծանրութիւն, առ բազումս ձըգտէին. Քանզի՝ անդանօր և ոչ ինչ դժուարութիւն էր կախարդել զուշ և զուրուշ որոց միանգամ ըղձանայինն տուփմամբ. իւրաքանչիւր ոք զքօղ ամօթոյն պատառեալ համարձակ 'ի հրապարակամէջս անդ 'ի քարուականս կաքաւէին.

Վասն որոյ և Աստուած՝ որ վրէժխնդիրն է չարեաց, ոչ յապաղեաց, այլ ըստ անօրէնութեան իւրեանց տարօրինակ պատժովք պատուհասակոծ արար զնոսա, որպէս զի ծանիցեն ամենայն ազգքն որ անմասն 'ի գործոյն էին, և որ զկնի յաւելորց էին յաշխարհի, եթէ զմեղացն զոր յանցանէ ոք՝ ընդունի ըզդատաստան. Նոյն և 'ի միտս իւրեանց անեղծ դրոշմեալ զպատիժսն, մեծաւ սասանմամբ փախուստ տայցեն յայնոցիկ մեղաց, որոց յիշատակն անդամ գըրաւէ զխիտ մարդոյ 'ի դողումն.

Բեր աղէ ասասցուք որպիսի՛ ինչ պատիժն էր. անօրինակ էր որպէս ասացաքս. Դատապարտեաց Աստուած այն՛ և զանդջրհեղեղեացն զամբարշտութիւն, այլ ոչ արտաքոյ բնութեան սահմանին էր պատիժն, միայն հրաման ետ անձրեւաց քան զչափն յորդել, միայն զգետոց և զաղբերականց սաստկացոյց զհոսութիւն. Իսկ նշան և ոչ մի ինչ յետ այնորիկ յաշխարհիս մնաց, մինչ զի՝ եթէ ոչ հօր իմոյ և նախահարցն մերոց պատմեալ էր մեզ զայն, և ոչ դուզնաքեայ հաւատարմութիւն իրացն մարթ էր ընծայել.

Այլ աստ ոչ այնպիսի ինչ պատուհասիւ վարեցաւ․ տեղաց յերկնից անձրեւ , այլ ոչ ինչ զանձրեւոյ և զկարկուտ․ տեղաց անձրեւ հրախառն , ոչ առ 'ի շիջուցանել զբորբոքումն նոցին , այլ առ 'ի կիզել և տոչորել զցանկութեան հրով բորբոքեալսն․ Ջուր ոչ առանձին էր , այլ խառն ընդ ծծմբոյ , հուր բորբոքեալ և ծծումբ վառեալ իջանէր․ Ոչ 'ի հասարակ աւուր , և ոչ 'ի տօթագին ջերմութեան արեւու , այլ ընդ մեկնիլ գիշերային մթութեան և ընդ ծագել արշալուսոյ և արեգական։ Այնչափ սաստկութեամբ և յորդութեամբ , զի մինչեւ մօտաբերեալ նոցա 'ի փախուստ , կիզին , տոչորեցին , 'ի հուր և 'ի մոխիր դատեցին զգաւառն ամենայն հանդերձ բնակչօքն․ Փրկեցաւ 'ի նոցանէ և ոչ ոք․ այլ ալք ընդ կանայս , ծերք ընդ մանկունս և երիտասարդք ընդ կուսանացն , և ամենայն կենդանիք այրեցան յանբաւ հնոցին անդ․ Ոչ խնայեաց նա յալիս ծերոց , ոչ 'ի վայելչութիւն գեղոյ երիտասարդաց , և ոչ 'ի գութ մանկանցն ողորմեցաւ , այլ զամենայն հասակ անողորմ ետ Ճարակ բռնութեան հրոյն․ որոյ ծուխ 'ի տես աչաց ամենեցուն ելանէ ցարդ , և մինչ 'ի սպառիլ դարուց և ժամանակաց կացցէ այն , և գարշահոտ նեխութեան նորին ապականութիւն՝ 'ի յիշատակ յաւիտենական ազգաց յազգս․

Ո՞ր լեզու ձեզ երբէք 'ի մտաւացօնս արկանել ըզպատիժն , ասէր մեզ հայր մեր․ գիտասջիք որդեակք իմ , զի ոչ միայն նոքա որ զայն մեղան՝ պատժեցան , այլ և ամենայն մեղաւորք՝ որք 'ի տիղմն գետնաքարշ եկեալ թաւալին , ընդ նովին դատապարտութեամբ անկեալ կան , և ըստ չափու մեղացն կշռի նոցա պատիժն կանուխ և թէ անագան․ Փախերուք ապա 'ի մեղաց , որոյ հոտն նողկալի՝ չարագոյն բուրէ առաջի

Աստուծոյ քան զՍոդոմայեցւոցն գարշութեան. Եթէ յուշի ունիք միշտ՝ պատկերացեալ 'ի միտս ձեր զնո-ցին դառն պատուհաս, արդարութեամբ գնայք յա-մենայնի. Ըղձալի է ինձ մեծապէս տեսանել զձեզ կատարեալս, զբարիոք կեանսն վարելով. զամենայն զսէր ձեր նուիրեալ Աստուծոյ և փոխանակ՝ զնորին երկիւղն 'ի սրտի կրելով. Երկնչին ապաքէն և մեղաւորք յաստուածային բարկութենէն, իսկ արդարք քան զնոսա յաւէտ սասանին 'ի սիրոյն Աստուծոյ. Քանզի՝ համապազօր խոկալով ընդ բարերարութեան նորին հանդէս, անարժան զանձինս իւրեանց վարկանին այնմ. և ակնարկեալ միանգամ ընդ հողազանգուած տկար բնութիւնն մարդկային, ահ և դողումն պաշարէ զմիտս նոցա, և ընդոստուցանէ զնոսա յերկիւղ Տեառն. եթէ ինչ մի հակառակ կամաց նորին մոլաբերիցեն.

Զայս օրինակ կատարելութիւն փափաքելով փա-փաքիմ տեսանել 'ի ձեզ որդեակք իմ սիրասունք. Ո՛հ, քանի՜ոն երջանկութիւն մեծ է մարդոյ զմայլել 'ի սէրն Աստուծոյ, յերկնայինսն խոկալ, առ նա ուղ-ղել զմիտս իւր, և առաջի նորա հոլանել զսիրտ իւր. Ոչ նա ինքն է՝ որ զձեզ հանգուցանիցէ. ոչ նա ինքն զձեր զմտացդ խոկումն լուսաւորեսցէ, ճանաչել ըզ-միակ ճշմարտութիւնն, զոր ոմանք 'ի կուրութեան մը-տացն իւրեանց ընդ վայր թեւակոխեն գտանել, և իբրու թէ գտեալ իցեն՝ այնպէս իմն ճոխացեալ սե-թեւեթին, ցոյցս կամելով առնել իմաստութե՟ մտացն և լուսաւորութեան անձինն, յորմէ վրիպեալս իսկ գտանին. Դուք միայն երիցագոյն ջան յանձին բերէք կոխել զճանապարհ՝ որ զԱստուծոյն է. զայն կըր-թութիւն ցուցէք 'ի ձեզ, և պայծառասցի 'ի ձեզ շնորհք Տեառն, և առաւել քան զամենայն յաղօթս պարապեցարուք. Ընդ ասելն զայս, եւ անդէն հայր

իմ, և գնաց 'ի խորանն աղօթից, որում հետևեցաք և մեք ըստ սովորութեան մերում.

Նոյնպէս հայր իմ գեղեցիկ իմն սովորութիւն ունէր յանձին ստանձնեալ, յետ խրատու և վարժութեամբ զմեզ հրահանգելոյ՝ կանխէր յաղօթս, խնդրել յԱստուծոյ բեղմնաւորել 'ի միտս մեր բարի սերմանս.

Իսկ դու տես քանի զանազանութիւն է ընդ մեղաւորսն և ընդ արդարս. Զի մեղաւորք միշտ տանջին խղճիւ իւրեանց. քանզի գիտեն եթէ ցորչափ երկարիցէ երկայնմտութիւն Աստուծոյ, այլ ոչ իսպառ անտես զնոքօք արասցէ. ուստի թէեւ երկնչին 'ի պատժոց, սակայն չէ ինչ այն հաճոյ Աստուծոյ. Արդարք ընդ հակառակն կան միշտ զահ և զերկիւղ 'ի սրտին ունելով. հանապազ զխիղճ մտացն իւրեանց ընդ քննութեամբ արկանեն, զի մի ընդդէմ արդարութեանն Աստուծոյ գործ ինչ թագուցեալ յինքեանս կայցէ. Զոր օրինակ՝ որք մերձակայք թագաւորին իցեն, երկիւղիւ մեծաւ զսպասաւորութիւն հարկանեն, և աչալրջութեամբ սկեն միշտ, զի մի 'ի թերութիւնս ինչ գտիցեն, և 'ի ծառայութեանն անփութութեամբ զիւիք անցանիցեն. Իսկ եթէ տեսանիցեն յերեսս թագաւորին կնճիռն ծնեալ, և խեթիւ յինքեանս հայիցի, զարհուրեալ անդէն զամենայն զգործս իւրեանց 'ի կշիռ մտաց արկանեն. խարբալեն զամենայն յիշողութիւնս իւրեանց, զի թէ տգիտաբար յինչ մի յանցուցեալ իցեն ընդդէմ թագաւորին հրամանաց, քաղցրացուսցեն զսիրտ նորա, և կամակ բանիւք հաճոյանաց յանկուցանիցեն զմիտսն.

Ի սոյն տիպ նմանութեան՝ դուն գործեն արդարասէր անձինք անվթար զամենայն զգործ սպասահարկութեան իւրեանց ըստ Աստուծոյ կամացն յարդարել.

Իսկ յորժամ սխալիցին մարդկօրէն յանցմանս , իսկ և իսկ 'ի զեղջ և յապաշաւ եկեալ սրբեն զմեղսն , հաշտեցուցանելով զերեսս Աստուծոյ՝ որ Թագաւորն է Թագաւորաց և տիրող ամենայնի .

Ահ այսպէս են և մեղաւորք . միանգամ և երկիցս և այլ եւս բազմիցս Թաւալին 'ի մեղս կամաւ գահավիժեալ , և գիտեն եթէ մեղաւորք են , այլ անհոգութբ յապաղեն 'ի նոյնս . Խիղճ մտաց իւրեանց յանդիմանէ զնոսա , այլ նոցա ունկնախից զօրէն իժի և քարբի , և անզգայութեամբ յափրացեալ՝ առ ոչինչ գրեն . Իսկ թէ կամիցին՝ կարէին արդեօք զընական օրէնսն ունելով ինքեանց կանոն ընթացից , և զամենայն զգործսն աւուր աւուր 'ի քննին առեալ , արտասուաց ջրովն մաքրել և խոստովանութեան ղենջակաւն ջնջել զմեղսն . Եւ քանզի զայն ոչ առնեն , որ քան զօր բարդին կուտին անօրէնութեանն մթերք 'ի վերայ նոցա , հեռանան 'ի Ճշմարտութենէ , զրկին 'ի բարեաց , և հուսկ ապա գտանէ զնոսա նետ բարկութեանն Աստուծոյ վիրաւորել զնոսա առ 'ի մահ ըստ Սոդոմայեցւոցն օրինակի .

Ոն ապա , սիրելի իմ , հետեւեսցուք և մեք սոցին շաւղաց . քաւ և մի երբէք . Սուրբ պահեսցուք ըզխիղճ մտացն մերոց . քանզի ուր և երթիցեմք , ուր և թաքչիցիմք , զայն ընդ մեզ ունիմք . Վկայ է նա անստեր կարգեալ յԱստուծոյ առ մարդիկ , դատել զգործս նոցա . ապա մի՛ զնա խոցեսցուք , զի մի՛ ընդայնր վրէժս տացուք . Այնպէս վարեսցուք , զի համարձակ լիցուք առաջի անսխալ և անաչառ ատենի նորա . և յորժամ զայս առնեմք , ոչ միայն բարւոք ընթեռնումք զընական օրէնսն գրեալս 'ի տախտակի սրտի մերում , այլ և գործով պսակել զնոյն ջանացեալ , մերձենամք առ եւս գերագոյն օրէնս , որ են

շնորհքն Աստուծոյ. Եւ զոյն եթէ բնակակից մեզ առնուցումք, ոչ եւս այնուհետեւ տիրեն մեզ արհաւիրք գիշերային, ոչ հաղբք մահացու կրթութեանց բանսարկուին սասանեն ինչ զմեզ. և ոչ որ յերկրի աստ չարագոյն դէպք իցեն՝ ՚ի վնաս մեզ կրթիցին երբէք.

Ո՜հ, իցէ՞ թէ բնաւ տեսանիցեմք զզաւակունս մեր յայս կատարելութիւն թեւակոխեալ, տպաւորելով ՚ի միտս ծաղկի հասակի նոցա զերկիւղն Աստուծոյ, և զճշմարիտ աստուածպաշտութիւնն, որով առաջնորդեալ նոցին ՚ի սէր պահպանութեան օրինացն Աստուծոյ, առաւելագունի շնորհացն երկնայնոց արժանաւորեսցին, և եղիցին մեզ փառք և պարծանք համօրէն ազգատոհմիս.

ԳԻՐՔ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Ի հնգեակ քաղաքսն յայնոսիկ՝ մի միայն Պողէտ գտաւ արդար, և ոչ այլ ոք.

ՅՈՎՍԷՓ

Այո՛, և զարմանաց են իրքս, մանաւանդ թէ կարեաց և աղետից. որով ցուցանի եթէ ընդհանուր էր ախտս, և զամենայն հասակ գերեալ ունէր ինքեան. Զայն և ես, քանզի յափշութեան կայի ընդ իրան,

որպէս և դուք այժմ, հարցի ցհայր իմ, և նա պատ-
մեաց ինձ և ասէ. Թագաւորք հինգ էին յայնոսիկ
քաղաքսն, անիրաւութեամբ և բռնութեամբ յա-
փշտակեալ զիշխանութեան զսանձսն, և վավաշոտ մո-
լութեամբ անկեալ զհետ տռփական ցանկութեան,
որով ապականեցին զբարս ժողովրդեանն. որոց գրե-
թէ անկեալ 'ի մտաց բանականութենէ, և զանասնա-
կան զբարս զգեցեալ յանհնարին չարիսն մխեցան.
Յետ այնորիկ արձակ համարձակ իւրաքանչիւր ոք
ջանայր հնարել զնորագոյն տարազս մեղանաց. ամօթն
պատկառանաց հալածեալ կայր 'ի սահմանաց իւրեանց.
և այնչափ սաստիկ էր և անըմբերելի չարութիւն նոցին,
մինչ ոչ կարել տանել ապերասան գործոցն՝ սահմա-
նակից ժողովուրդքն. Քանզի տեսեալ եթէ անա-
ռակութիւն նոցա ծանրացաւ 'ի վերայ իւրեանց, կա-
մելով իմն թօթափել յանձանց զլուծն՝ որով վշտա-
գնէինն, գումարեցան չորք թագաւորք տալ մարտ
պատերազմի ընդ հնգեսին թագաւորսն. որոց ոչ
կարելով զդէմ ունել՝ պարտեցան և 'ի գերութիւն
վարեցան 'ի նոցանէ բազումք 'ի ժողովրդոց. Եւ
Ղովտ՝ որ 'ի Սոդոմ հաստատեալ ունէր յայնժամ
զբնակութիւնն, գերեկից գտաւ նոցա.

Լուեալ Աբրահամու զգերեվարութիւն եղբօր-
որդւոյ իւրոյ, շտապ տագնապաւ փութացաւ ժողո-
վեաց խմբեաց զամենայն մարդիկ՝ որ ընդ ձեռամբն
էին, արս հարիւր տասն և ութն, և պնդեցաւ
զկնի նոցա. Եհաս առ նոսա, թափեաց զՂովտ 'ի
ձեռաց, ընդ նմին և զբնակիչսն Սոդոմայ, և զկողո-
պուտն ետ տերանց իւրեանց,

Իսկ Սոդոմայեցւոց տեսեալ զփրկութի̃ իւրեանց.
ոչ գոհացան զԱստուծոյ, և ոչ շնորհս մատուցին
Ղովտայ, որոյ 'ի պատճառս գտին զփրկութիւնն. և

ոչ իսկ զանընկճելի զօրութիւն Աբրահամու ածին երբեք զմտաւ, որ սակաւաձեռն գնդաւ պարտեալ յաղթեաց չորից թագաւորաց, զորոց չկարացին ունել զդէմ անհամար զօրք իւրեանց։ Եւ զի՞նչ զօրութիւնն Աբրահամու՝ որ այնչափ թագաւորացն բռնութեան գտանէր յաղթական. աստուածպաշտութիւնն և արդարութիւն իւր, որով ահարկու հանդիսանայր 'ի մէջ բազմութիւ սպայից և թագաւորաց, և յիշատակ անուան նորա զդողանի հարկանէր զամենեսին։ Քանզի՝ յաստուածուստ էր երկիւղն անկեալ 'ի սիրտս նոցա, վասն սիրելոյ իւրոյ Աբրահամու։ Նմին իրի անվեհեր ոգւով յանդիմանէր զհնգեսին թագաւորսն զթափեալսն 'ի գերութենէ, խոյս տալ 'ի չարեաց և յանօրէնութենէ և յանառակ խառնակեցութենէ.

Նաև այսր պատճառի ծանօթ էր Աբրահամ ամենայն Եգիպտացւոց և այլոց քաղաքաց, և ծանուցեալ իւրեանց Փրկիչ և բարերար։ Որոյ վասն յորժամ առաքեաց Աստուած զհրեշտակսն 'ի Սոդոմ, ծանոյց և Աբրահամու զմտադրութ կործանումն նոցին. զոր իբրեւ լուաւ՝ անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց, և ջերմագին պաղատանօք խնդրէր ներել անօրէնութեան բնակչացն 'ի շնորհուկս արդարոց. Իսկ Աստուած եցոյց նմա՝ եթէ չիք 'ի նոսա արդար բաց 'ի միոջէ միայնոյ, այլ ամենեքեն խոտորեալ թիւրեցան 'ի շաւղաց իւրեանց, ապականեցան, ապականեցին և զերկիրն. որոյ վասն աղաղակ արարածոցն բարձրացաւ առաջի յաւիտենական Աթոռոյն, խնդրել զդատ անիրաւութեանց նոցին և ջնջել յերեսաց երկրիս.

Ոչ միայն Ղովտ գտաւ առ նոսա օրինապահ, և մնեալ 'ի բարի վարս, առ որ առաքեցաւ հրեշտակ Տեառն փրկել զնա, ընդ նմին և զկին և զերկուս

գստերս նորա ։ Տեսեալ արդարոյն զվերահաս կորուստ քաղաքացն , որ պատրաստիւր 'ի ձեռն հրեշտակին , արգահատեաց զնա յապաղել զկործանումն Սեգովրայ , ուր անկեալ պատսպարիցի յերեսաց երկնաւեղաց բոցոյն ։ Լուաւ հրեշտակն աղաչանացն , և պահեաց զնա անդ ։ Իսկ Ղովտ՝ ոչ կարելով տանել գարշահոտութեան հեղձուցիչ ծխոյն , հեռացեալ մեկնեցաւ անտի , և եկն առ Աբրահամ հօրեղբայր իւր ։

Յուշի կալ , ասէր ինձ հայր իմ , եթէ զիա՞րդ 'ի պատճառս արդարոյ միոյ ապրեցաւ քաղաք մի ողջոյն ։ 'Ի միտ առ՝ զի ոչ փոյրապար ինչ եղեւ այն ։ Զե՞ր հնար Աստուծոյ՝ ամենազօր բազկաւն իւրով փրկել զՂովտ առանց պահելոյ զնա 'ի Սեգովր քաղաքի , զոր ապա ուրեմն որպէս զայլ քաղաքսն՝ և զնա 'ի հուր դատեցաւ հանդերձ բնակչօքն ։ Այս իսկ է պատճառն ։ քանզի ապրեցուցանելով զքաղաքն զայն՝ յայտնի լիցի եթէ վասն անօրէնութեան իւրեանց եղև պատիժն այն , և թէ՝ 'ի շնորհս արդարոյ զիջեալ յաղաչանս նոցին՝ յետս կոչէ զաստուածային վճիռ իւր , կամ գէթ յապաղէ 'ի գործ դնել՝ ժամ տուեալ ապաշխարութեան մեղաւորացն ։ Զերծաւ Ղովտ 'ի հրոյն , և եղեւ տեսիլ ամենայն աշխարհի , և ընդ փըրկութիւն նորա սքանչացան ամենեքին ։ լուան ազգք և զարմացան և 'ի մէջս իւրեանց զրջսցան , դարձան և փառաւոր արարին զԱստուած ։

Արդ՝ երկիրն այն , յորում այս ամենայն տեղի կալան , ապականութիւն անդաստանացն , պտուղք ծառոցն 'ի մոխիր դարձեալ , և արձանն աղի կնոջն Ղովտայ , ո՞չ այս ամենայն աստուածային բարկութեանն են նշան , որք դարուց 'ի դարս անբարբառ քարոզ լիցին զարդարութենէ նորին ։ Պահեա զնոսա 'ի միտս

քո որդեակ իմ, կրկներ հայր իմ, յիշեա զխնամս և զգութ Ամենակալին որ առ արդարս, և զբարկու-թիւնն որ առ մեղաւորս, և սկեա անձին քում չտալ բնաւ տեղի չարին.

Ա՛ղնիւ լծակից իմ, տեսանեմ զբարեպաշտ կրթութիւն ծնողին իմոյ, զիա՛րդ պարզ և մեկին ա-ռաջի առնէ զկորուստ մեղաւորացն և զնախանձելի փրկութիւն արդարոյն. Ո՛հ աւուրք բարեբաստիկք, յորս կայաք ընդ խնամովք հայրենի գթոյն, ընդ հո-վանաւորութեամբ ձեռին՝ կրթողին զմեզ ՚ի համբոյր վարս և ՚ի համեստ առաքինութիւն. Երջանիկ են արդարեւ որդիք՝ այսպիսի ունելով ծնող բարեխնամ. Երջանկանայ պայծառացեալ քաղաք և թագաւո-րութիւն, որ այսպիսի այր արդար և իշխան պատուա-կան յինքն ունիցի.

Զի՞նչ ապա և զառատ ողորմութենէ և զմար-դասիրութենէ Աստուծոյ խօսեցայց. Յապաղեաց նա բազում երկայնմտութեամբն իւրով՝ կանխաւ պատ-ժել զարժանաւորսն տանջանաց, որք բազում մա-հուց կացուցին զանձինս գլխապարտ. եւ նոցա զար-դարն Նոյն՝ մինչեւ առաքեալ առ նոսա զգուշա-ցան բարկութեան իւրոյ, օգտիլ ՚ի խրատուց նորին. և դառնալ յանձինս իւրեանց. Բազմացաւ եղեռն անօրէնութեանցն հակառակ ողջախոհին. յայնժամ և սուր արդարութեանն Աստուծոյ ՚ի գործ եդաւ ՚ի վերայ նոցա. Երանի որոց խրատեալ զգաստանայցեն յայլոցն պատուհասից, զի մի՛ համակործան ՚ի կորուստ մատնիցին. նա՛ երանի այնոցիկ՝ որք յամենայն ՚ի կեանս իւրեանց՝ ջանայցեն զճանապարհս իւրեանց ուղղել յարդարութիւն. Ոչ մերձենան, և ոչ հուպ մատչին նոքա ՚ի խորհուրդս անօրինաց, ՚ի գահս ժանտաժուտ արանց ոչ բազմին. Թուեպէտ եւ ոսկեղէն գահոյս

ունիցին, և 'ի փառս պերճութեան գգուիցին, այլ հոտ նոցին ժանտագործութեան ապականեալ մոլորե-ցուցանէ զանզգոյշս.

Բայց ըստ խրատու հօր իմոյ խնդրեսցուք յԱս-տուծոյ պահել զմեզ ընդ ամենաքաղցր ակնարկու-թեամբ իւրով, և ոչ թողուլ զմեզ և զորդեակս մեր ընթանալ 'ի շաւիղս ամբարշտութեան. Զի լաւ էր նոցա արդէն մօտակտուր լինել և անյիշատակ մնալ յաշխարհի, քան յայնպիսի չարիսն շամբշիլ և ժա-ռանգել զյաւիտենական հուրն. Զի յայնժամ և մեզ, եթէ ոչ զգուշանայցեմք կրթութեան նոցին, յանձնելով զնոսա 'ի դաստիարակութիւն բազմա-հանճար և բարեբարոյ ուսուցչաց, կամ անձամբ կրթելով, պատրաստի և մեզ տարտարոսական գեհե-նոյն բոց անշիջանելի. Այլ փոյթ կալցուք զհետ եր-թալ խրատու հօր իմոյ, և 'ի բարիսն վերածել զմիտս և զհոգիս որդւոցն մերոց մինչև՝ ժամանեալ նոցին յարբունս հասակի.

ԳԻՐՔ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ.

ԱՍԱՆԷԹ

Մեծապէս սխրացեալ հիանամ ընդ գեղեցիկ այն կրթութիւն որով զձեզն հրահանգեաց հայր քո. Եւ 'ի քանի՞ ամաց հասակի սկսաւ դաստիարակել զձեզ 'ի բարի վարս և 'ի կարեւոր հմտութիւնս, մա-նաւանդ յաղգական տեղեկութիւնսդ և 'ի վէպս

ազգաց, որք կարեւորագոյն յոյժ են 'ի գիտել, և այլ այլ պարտաւորի ընդ մայրենի կաթինն ստանալ և զազգին իւրոյ զծանօթութիւնս. Եւ ո՞ր այն առաքինութիւն, յորում առաւելապէս փոյթ կալաւ մշակել զմիտս ձեր.

ՅՈՎՍԷՓ

Անդստին 'ի մանուկ հասակէ իմմէ, մինչեւ ընցեալ էին երկոտասան ամք կենաց իմոց, ուսուցանէր ինձ զամենայն հարկաւոր հմտութիւնս և զպարտաւորութիւնս՝ զոր իւրաքանչիւր ոք ունի առ Աստուած, առ անձն իւր և առ ընկերն, յորմէ ծագի աստուածապաշտութիւնն, անձնասիրութիւնն գովելի և ընկերասիրութիւնն. Այսու նախակրթութեամբք յարդարեալ զմիտս իմ, և ուղղեալ զբանականութիւն իմ բարոյականապէս, յետ այնորիկ բանայր առաջի իմ դաշտ ընդարձակ, իբրու 'ի կրթարանի փորձել, և 'ի հանդէս հանել զոյժ մտաց իմոց. Զպատմութիւն ազգին իւրոյ առաջի առնէր ինձ մանրամասն ծանօթութեամբք, սկսեալ անդստին 'ի նախահարցն, զորոց յառաջին գիրս կարգաւ քեզ նախաճառեցի. Ոճ բանից նորա՝ զոր 'ի վար արկանէր, գեղեցիկ իմն էր և բարեկարգ, որով դիւրընտել լինէին ինձ պատմութիւնքն, և առանց մեծ աշխատանաց տպաւորէին յիս.

Զոր ինչ միանգամ ուսուցանէր ինձ ճառօրէն, զնոյն տայր ինձ կրկնել ստէպ, և եթէ մոռանայի ինչ, յուշ ածէր. Ցուցանէր զեղանակն բարւոք բացատրելոյ զիմաստն, գեղեցիկ կարգաւորելոյ զմէն մի գաղափար, որով դիւրըմբռնելի լինէր լսելեաց. Ուշ դնէր նա առաւելապէս՝ մի խառնուրդ ինչ օտարոտի և մոլացածին 'ի ներքս ածել 'ի բանսն, և որ զինչ

միանգամ առ ՚ի սէթեւեթել զձառն ՚ի կիր առնուլ, զայնոսիկ ՚ի բաց յապաւէր, և յամենայնի ուսուցանէր ոչ զանցանել ըստ սահմանն, սիրել զպարզութի̃ ՚ի խօսս. Քանզի սեպհական է մանկանց, եւս և ոմանց ունայնասէր ոգւոյ՝ ընդլայնել զբանսն անօգուտ ճամարտակութեամբ. և եթէ ՚ի պարագայից ինչ ճառեցեալ գողասցեն ՚ի մտաց, փութան կարկատել զայնս յինքեանց՝ անյարիր կցկցմամբ և տաբապարտ բռնազբօսմամբ. Իսկ հայր իմ ոչ ներէր բնաւ խոտորիլ ինձ յայսպիսիս և աւելորդ բանիւք կարկատանս յօդել, և տալ կարծիս սնափառութեան.

Ոչ յայսոսիկ ամփոփէր կրթութիւն հօր իմոյ, այլ ջանայր նա օգտաւէտ իմն դաս կազմել ինձ ըղպատմութիւն իւր. Զոր ինչ դէպս և դիպուածս ՚ի ճառ արկանէր ինձ, թողոյր մտաց իմոց զպատշաճաւոր դատողութիւնն առնել ՚ի վերայ նոցա, և խնդրէր զկարծիս իմ. Այսու ոչ միայն շահ մեծ քաղէի ինձ անտի, այլ և կրթէր բանն իմ, ՚ի տեսականն՝ յաւելեալ և զգործնականն. սրանայր միտք իմ, ուղղէր դատողութիւն իմ, կշռելով զամենայն պարագայս անցիցն, ըստ նախակրթական ուսմանցն յորս վարժեալն էի, խելամուտ լինէի տարբերութեան որ ընդ սուտն և ընդ ճշմարիտն, ընդ չարն և ընդ բարին. Վասն որոյ և հետեւաբար զպարսաւելիսն ՚ի բաց սահմանեալ, որ ինչ ըստ ողջախոհ մտացն էր, զայնմանէ բուռն հարկանէի բերիլ ՚ի պարապումն, և զնմանիսն իմ ՚ի նոյն յորդորեալ.

Հայր իմ մեծապէս թեկն ածէր սիրելի ընծայել ինձ զառաքինութիւնն, ցուցանելով եթէ քանի՞օն հարկաւոր իցէ մարդոյ ոչ զարտուղել յօրինացն սահմանելոց ՚ի նմանէ. Այլ առաւել փոյթ մեծ տանէր ՚ի խորհրդապահութեան կրթել զիս. քանզի յայտ է

քանի՛ մեծ օգուտք լինին անտի, և ընդ հակառակն որ-
չափ վնաս և վտանգ ծագի, յորժամ չգիտեն ծած-
կել զխորհուրդս, յորոց բազում անգամ աւերին
քաղաքք, կործանին պետութիւնք և յառաջեն մե-
ծամեծ վրդովմունք աշխարհաւերք։ Իսկ առ այս՝ գե-
ղեցիկ իմն եղանակ 'ի վար առնոյր, 'ի փորձ արկանե-
լով զիս՝ եթէ գիտիցեմ պահել զայլոց խորհուրդս։
Զգէր նա երբեմն յունկն իմ գաղտնիք ինչ ոչ ինչ
վտանգաւոր, և պատուիրէր պահել զնոյն և չհաղոր-
դել ումեք։ Յետոյ զնոյն գաղտ յինէն ծանուցանէր
եղբարց իմոց, և 'ի ձեռն նոցա փորձէր զիս, եթէ
հաւատարիմ գտանիցիմ 'ի խորհրդեան, ապա թէ
ոչ՝ մատնիչ գաղտնեացն լինիցիմ։ Բայց ես յամենայնի
պատուելով զբարոյական պարտաւորութիւնսն իմ,
ոչ նենգէի խորհրդոց հօրն իմոյ, և ոչ ինչ բնաւ
յայտնէի եղբարց իմոց։ Այլ և ոչ ստութեամբ
ծածկել ջանայի, ոչ երդմամբ հաստատէի նոցա
զայլ ինչ, առ 'ի պահել զհաւաստին, որպէս առնեն
ոմանք 'ի բացասելն կամ 'ի հաստատելն հակառակ
ինչ։ Միայն յարմարագոյն իմն բանիւ և պատասխա-
նաւ յանկուցանէի զհետաքրքիր կամս նոցա, զոր
տեսեալ հօր իմոյ զուարճանայր յանձն իւր, և այնու-
հետեւ վստահացեալ յիս՝ խորհրդակից զիս ինքեան
առնէր։

Յաւուր միում, յորժամ արեւն 'ի մուտս խո-
նարհէր, դարձ արարեալ եղբարց իմոց 'ի դաշտէ ա-
ջակցեալ միմեանց խնդութբ, գային 'ի վրանն լուծա-
նել զծանրութիւն օրական աշխատանաց իւրեանց, և
վայելել 'ի մխիթարութիւն քաղցր խնամոց հօր մերոյ։
Իսկ յորժամ բոլորեալ շուրջ զնովաւ պսակեցաք գե-
ղապար կարգիւ ըստ սովորութեանն մերում, էառ
նա զթել բանից վարդապետութեան իւրոյ, ուսու-

ցանէր զմեզ և հրահանգէր. Իբրև քանզի լցեալ էին սգակիր աւուրք մահուան մօր իմոյ, և պատրաստէր գնալ առ հայր իւր Իսահակ 'ի Քեբրոն, ուստի յետ խրատական բանից իւրոց յաւել հայր իմ և ասէ. " Ահա հասին աւուրք ելանելոյ առաջի հօր իմոյ. վաղիւ ներկայասցուք նմա. գիտասջիք ուրեմն որդեակք իմ, եթէ օրհնութեամբ նորին պարգեւեաց ինձ Աստուած զձեզ. Երանելի համարի զիս աշխարհ, տեսանելով զիս երկոտասան արու որդւովք ճոխացեալ և միով չքնաղ դստերաւ. Իսկ ես երջանիկ յայնժամ զանձն իմ համարէի, յորժամ կատարեալս զձեզ տեսանէի. յայնժամ փառք և պարծանք իմ առաւելուին, յորժամ տեսանէի զձեզ հատանել զփառաց և զպատուոյ շաւիղն, զճանապարհն առաքինութեան դիմելով.

" Ապա որդեակք իմ սիրունք, մինչև երևեալ առաջի հօր իմոյ, 'ի մեզ յինքեանս դարձուսցուք զակն մեր, տեսանել իցեմք արժանաւոր տեսութեան նորին. Զամենայն գործ խակութեան յանձանց 'ի բաց մերժեսցուք. զցածութիւն և զհամեստութիւն 'ի մեզ ցուցցուք. եղբայր ընդ եղբօր զվայելչականն պատիւ ցուցցէ. վառեսցուք զոգիս մեր 'ի սէր եղբայրական, և առաւել ևս 'ի սէրն աստուածային. Յուշ ածէք զսէր հօր իմոյ և զսէր հաւուն իմոյ Աբրահամու, որոյ իսպառ վառեալ նովին սիրով, կամակար անձնամուխ եղև 'ի զոհ հանել զմիակ որդին իւր ըստ պատուիրելոյ Տեառն. Սա է միակ որդին իւր Իսահակ, որ ամենայն հնազանդութեամբ յանձն էառ իբրև որոջ անմռունչ զենուլ 'ի վերայ սեղանոյն Աստուծոյ, զոր տեսէք 'ի Բեթէլ. Սա է որ կապեցաւ կամօք, և ոչ ինչ երկիւղ և ընդդիմութիւն խառնեաց 'ի սէր իւր, ընդ որ հիանային երկինք և երկիր.

Սա է Իսահակ՝ այրն կատարեալ, որ արդ. քսան և հինգ ամք են զրկեալ 'ի տեսութենէ, այլ մնայ միշտ գոհաբանելով զմարդասիրութիւն Աստուծոյ անխռով սրտիւ. Սա է հայր իմ, որ եղեւ յարացոյց անման Գառինն՝ որ յաւուրս յետինս յայտնեսցի 'ի փրկութիւն ազգի մարդկան. Վաղիւ մնայ մեզ տեսանել զնա, յորմէ այս քսան ամք են անջատեալ գտանիմ, այլ օրհնութիւն նորին ընկերակից միշտ գտաւ մեզ. Գիտեմ՝ ուրախասցի նա 'ի տեսանելն զձեզ, և բացցէ զբերան իւր օրհնել զձեզ. այլ դուք արդէն պատրաստեցէք զանձինս ձեր արժանաւոր օթարան լինել օրհնութեանցն. և Տէր հաստատեսցէ զօրհնութիւնսն, և եղիջիք որդիք օրհնութեան „. Զայս ասաց և յարեաւ կալ յաղօթս առ Աստուած, ըստ միշտ սովորութեան իւրում.

Տեսանեմ սիրելի կենակից իմ Ասանէթ, որքան կատարելութեամբ լցեալ էր հայր իմ, որոյ փոյթ խնամոցն առ 'ի բարիոք կրթել զզաւակունս իւր 'ի կարեւոր հրահանգութիւնս, ուսուցանէր նմա անցելոց իրացն յիշատակութեամբ՝ գեղեցիկ դասս համբարել 'ի միտս մեր. Եւ զի՞նչ քան զայս օգտակարագոյն կայցէ համբակաց, բայց եթէ նախահարցն վարուք՝ որ յաշխարհի կեցին, խրատս պիտանիս սեղանաւորել որդեկացն քմաց, 'ի նախանձաւորութիւն շարժելով զնոսա ընդ առաքինութիւնս նոցին, և զօրինակ բարեկրօն վարուցն տնկել 'ի միտս իւրեանց. Եւ մանաւանդ 'ի խորհրդապահութեան վարժել զնոսա, ցուցանելով քանի՛ կենցաղօգուտ բարիք ծագին անտի. Իսկ ընդ հակառակն որքան բազմազան չարիք և դժբաղդութիւնք յածին յաշխարհի, որք են պտուղք անխորհրդապահ սրտի. Քանզի՝ ոմանք զսիրտն 'ի բերանի ունելով, չգիտեն աւանդապահ խորհրդոցն լի-

նել ընկերին, այլ անխիղճ մատնեն աշխարհի զգաղտնիս նորին, յորում կայանայ պատիւ և ամենայն որ ինչ պատուական է նմին. Աստի բազում թագաւորութիւնք և աթոռք կործանեցան, պատիւք և փառք ընդ ստուերամած քօղիւ ծածկեցան. Ապա չիք հարկաւորագոյն և օգտակար 'ի տնտեսական կառավարութիւնս քան զխորհրդապահն լինել.

Որդի կանխաւ վարժեալ յայսմ առաքինութեան՝ պարծանք է հօր իւրոյ, և հիմն հաստատութեան տան նորա. Այլ որպէս դժուարին է հաւատալ ումեք զխորհրդոյն գաղտնիս, նոյն և առաւել ևս դժուարութիւն մեծ է հրահանգել զոք 'ի կատարեալ խորհրդապահութեան. Որ յորդունս երիտասարդութեան ժամանեալ իցէ, ոչ ինչ ազդեն նմա առաքինութեանս այս օրէնք, քանզի 'ի մանկութեան խրատք ծնողացն տնկին 'ի միտս մարդկան. Շաղակրատք ոչ գիտեն պահել զխորհուրդս, մանաւանդ կանայք՝ որոց բնութիւն հեռաքրքիր է և նորասէր, վասն որոյ և յաւէտ զգուշալիք են. Այր՝ որ 'ի գինեմոլութիւն հառեալ իցէ, մանաւանդ և որք զհետ հեշտութեան մոլեալ նկրտին, ոչ ժոյժ ունին բնաւ թաքուցանել զգաղտնիս, քանզի՝ դիւրին է գողանալ զսիրտս նոցա 'ի ձեռն տարփածուաց. Ոչ գիտեն բարկացողք պինտ ունել զբերանն, և սանձահարել զլեզուն 'ի պահու սրտմտութեան իւրեանց, զի կիրք մոլեգին կատաղութեանն շրջեալ զբան նոցա, զամենայն ընդծածկեալսն 'ի սրտի 'ի դուրս ածայ. Հպարտք և գոռոզամիտք անբաւական են հաւատարմութեամբ ընդխորհուրդս ունել, զի առ 'ի պանծալի և մեծ ումն երեւիլ առաջի մարդկան, և իբրու պատիւս կարծելով որսալ, խօսին՝ զոր պարտ էին լռել.

Արդ՝ որպէս յայտ է, որ ուսուցանէ որդւոց

զխորհրդապահութիւն, ուսուցանէ նմա զամենայն առաքինութիւն. Եւ Թագաւոր՝ որ կամիցի հաստատուն զպետութիւն իւր ունել, ընտրեսցէ իւր խորհրդակիցս հաւատարիմս, և այր՝ խնդրեսցէ իւր բարեկամ՝ որոյ հաւատարմութիւն արդէն ընդ փորձ անցեալ իցէ. և գտցէ յայնժամ զտուն իւր շինեալ 'ի հաստատութեան, և փառք տան նորա մի՛ շիջցի յաւիտեան. Յետ այնորիկ ոչ ևս դատաստանատունք, զի ոչ ևս յարիցեն վէճք և խռովութիւնք ընդ այր և ընդ այր. քանզի՝ խորհրդապահութիւնն հիմն 'ի կրթութեան. կրթութիւնն հալածիչ է մոլութեանց. և յորժամ տեղի տան մոլութիւնք, փոխանորդէ առաքինութիւնն. իսկ վասն առաքինեաց ոչ ինչ պիտոյ են երբէք դատաւորք. յայնժամ և աշխարհ բարեկարգ ընթանայ 'ի վախճան իւր՝ յոր հաստատեցաւ.

ԳԻՐՔ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՉՈՐՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Ծանուցեալ էր հայր քո Իսահակայ հօր իրում, զգալուստ իւր 'ի Խառանայ. և զիա՞րդ խանդաղատեցաւ արդեօք գորովախառն փղձկմամբ 'ի տեսիլ որդւոյն, բազմամեայ նժդեհութեամբ օտարացելոյ յինքենէ.

ՅՈՎՍԷՓ

Ոչ ընաւ. քանզի ծանրացեալ անձն նորա ամօք ցաւագին ծերութեանն, ոչ կարէր տանիլ անակնկալ ուրախութեան. Զի թէ լսէր զգալուստ որդւոյ իւրոյ բազմութեամբ զաւակաց և ծառայից, անշուշտ վտանգէր անձն նորա ՚ի չափազանց խնդութենէ սրտին. Թէպէտ և ոչ յոյժ ՚ի բացեայ բնակէաք մեք ՚ի սահմանացն Քեբրոնի, սակայն ոչ ոք կարաց ճանաչել զհայր իմ, և ազդ տանել հաւուն իմոյ Իսահակայ. Քանզի փոփոխութիւն անուանն իւրոյ յԻսրայէլ, յանծանօթս ունէր զնա առ ամենայն մարդիկ. այլ ինքն հայր իմ՝ տեղեկացեալ միշտ յերթեւեկաց զվիճակէ հօր իւրոյ, շատացեալ գոհանայր զԱստուծոյ.

Իբրեւ մերձեցաք ՚ի Քեբրոն, յառաջեաց հայր իմ միայնակ, պատուէր տուեալ մեզ հետեւել ինքեան մեղմընթաց քայլիւ ՚ի յոտս երկնաբերձ կաղնւոյ միոյ, որ էր տեղի գեղեցիկ ՚ի վերայ բարձրաւանդակի միոջ, յորմէ չէր ինչ հեռի խորանն հաւուն իմոյ. քանզի ոչ բնակէր նա ՚ի քաղաքամիջի, այլ արտաքոյ շինին ընդ դոյզն վրանաւն տաղաւարեալ, ըստ օրինակի հօր իւրոյ Աբրահամու. Այն ինչ տեսանէ հայր իմ զԻսահակ հայր իւր, ոչ կարէ ունել զանձուկ սրտին իւրոյ, անկանի յոտս նորա. հակիրճ բանիւ յայտ առնէ նմա զշնորհսն Աստուծոյ, և արտասուօքն թացեալ զոտս նորա, խոստովանէր նմա եթէ հայրենի օրհնութեան իւր արգասիք զօրացուցին զնա, և բազմացուցին որդւովք և ընչիւք.

Տեսեալ Իսահակայ զորդին ՚ի գիրկս իւր, մնայ անշարժ և անբարբառ զբազում ժամս ՚ի սաստիկ

յուզմանց սրտին յանակնկալ ուրախութենէ անտի · Նա արձակեաց կապ լեզուին, օրհնէ զԱստուած, և գոհանայ զնորին բարեխնամ գթութենէն, որ արժանի արար զնա միւսանգամ 'ի գիրկս իւր ընդունիլ զորդին, և մխիթարել զվշտագին աւուրս ծերութեան իւրոյ · Կայր զմայլեալ աստուածարեալ ծերունին ընդ պարգևսն Աստուծոյ · յիշէր նա զանսահման մարդասիրութիւն նորա, և զեղոյր յոգի գորովախառն փղձկմամբ · դարձուցեալ ապա զդէմն իւր առ որդին, որ խոնարհեալ կայր առ ոտս նորա պատկառուն դէմօք, և ասէ · "Որդեակ իմ սիրասուն, տեսանես զողորմութիւն և զերախտիսն Աստուծոյ, զոր լիաձեռն յորդեաց զքեւ · մի միայն զօրավիգն՝ և ընկեր լինել քեզ, յամենայն մահացու արկածից անվտանգ զքեզ արար · Թափեաց 'ի դառն սպառնալեաց եղբօր քո · զօրացոյց և մեծացոյց զքեզ ըստ անսուտ խոստման իւրում · և իմ զկենացն թել երկարեաց, առ 'ի վայելել արդ 'ի նորին շնորհս · Քանզի՝ պարգևք են Աստուծոյ՝ որդիք, որովք զքեզ փարթամացոյց, վասն որոյ գոհանամ զերախտեաց նորին, և փառս մատուցանեմ անուան նորա · Թէպէտ և առ ժամանակ մի անզաւակացոյց զիս, այլ արդ կրկին զքեզ 'ի ծոց իմ ընկալեալ, 'ի քեզ տեսանեմ զխոստումն բազմըդութեան՝ զոր խոստացաւ հօր իմում Աբրահամու · Փառք անպատում մարդասիրութեան քո Տէր · տեսին աչք իմ զառատաձիր պտուղս օրհնութեան քո, զորս բազմապատիկ քան զաստեղս երկնից խոստացար աճեցուցանել · ահա 'ի զաւակի իմում պսակին արդիւնք աստուածեղէն բանից քոց · եղիցին աչք քո Տէր 'ի վերայ սոցա, և պահեա զսոսա ընդ քաղցր հովանաւորութեամբ Աջոյդ քոյ բարձրելոյ" ·

Մինչդեռ նոքա լցեալ ուրախութեամբ զարտօսր

կարօտանաց ցօղէին յաչացն , հասաք և մեք անդր · այլ ոչ համարձակեցաք մտանել 'ի խորանն , ուր բազմեալ կայր ծերունին հաւն մեր 'ի բարձրագահ ուրեք վայրի , և հայր իմ զառաջեաւ նորա 'ի գուճս անկեալ և անմռունչ · Լռէր և հաւն իմ , բարբառ և ոչ մի · քանզի յօդաւորութիւն լեզուին՝ տեղի տայր սաստիկ խնդութեան սրտին · Բազուկ հաւուն իմոյ ունէր զպարանոցաւ որդւոյն , և սակայն համբուրէր զճակատ նորա · միայն ձայն գոհութեան և փառաւորութեան լսելի լինէր ընդ ժամանակս ժամանակս · միայն ձայն համբուրից շրթանց նոցա հատանէր զլռութի՛ բանիցն ·

Իսկ մեր տեսեալ զկերպարանս հաւուն մերոյ , ապշութիւն կալաւ զմեզ · դէմք նորա լուսափայլ և զուարթագին · ակնողէք նորա մեծ և շրջահայեաց , այլ նուաղեալ 'ի տեսութենէ · յօնք նորա կամարագեղ և թաւ առ կախեալ 'ի վերայ արտեւանացն · գիսակք գլխոյն հերապանծ և արծաթափայլ խոպոպաձեւ խառնեալ ընդ ալեացն՝ փառահեղ իմն էր տեսողաց , ընդ որս թափանցանց երեւէր այտերացն կարմրութիւն՝ բոսորագեղ քան զորդան կարմիր · Այլ այս գեղեցկութիւն և վայելչութիւն արտաքին կերպարանացն՝ զներքին գեղ ոգւոյն և զվարուցն մաքրութիւն քաջանկար մեզ առաջի առնէր · Ու ո՞ համարձակէր բնաւ երբէք երեւել ընդ առաջ նորա վստահացեալ , եթէ չէր անդ առ նմին հայր իմ · որոյ լուեալ զտնաձայն գալստեան մերոյ , խնդրեաց 'ի նմանէ հրաման՝ մուծանել զմեզ 'ի ներքս 'ի համբոյր աջոյն , և արժանաւորել օրհնութեան նորին ·

Լուեալ ծերունւոյն անդէն սթափեցաւ , զուարթացաւ 'ի սիրտ իւր , զօրութիւն նոր զգեցաւ , և հրամայեաց ածել զմեզ զառաջեաւ · Ու յանկարծել առ մեզ հօր մերոյ , մերձեցաք 'ի նա ըստ կարգի

երիցութեան , և խոնարհեցաք 'ի համբոյր ոտիցն ։ Տարածեալ ծերոյն զդողդոջեալ բազուկս իւր , ժողովէր զմեզ մէն մի 'ի գիրկս , հարցանէր զանուանս և օրհնէր ։ Յետ ամենեցուն մերձեցայ և ես , այլ ոչ գիտեմ որ այն զօրութիւն , որ 'ի դնելն զձեռն 'ի վերայ գլխոյ իմոյ , մերժեցաւ յինէն երկիւղն , վստահացայ , և թուէր ինձ եթէ փոխեցայ յայր այլ ։ Ապա խնդրեաց հայր իմ հրաման տալ ինքեան՝ երթալ պատրաստել իւր տեղի յարմարաւոր , և կանգնել զխորանն մեր ։ Զօքան և ամենայն եղբարք իմ ընդ նմա , և ես մնացի միայնակ առընթեր հաւուն իմոյ ։ Դժուարին եղեւ ինձ ապաքէն մանկական հասակի իմոյ միայնութիւն ընդ ծերունւոյ միոյ , որոյ փառաւէտ կերպարանքն և ձայնն վսեմախօս՝ պատկառանօք զմիտ իմ լնուին ։ Այլ յաղթեցի տկարութեան տղայամիտ բնութեանս , մտածելով ինձ՝ եթէ որ զակնածութիւն և զպատկառանսն յիս շնչէր , հայր էր ինձ , և հետեւապէս ընտանի ։ Աւստի համարձակեցայ մատչել կրկին առ նա և համբուրել զձեռն ։

Եհարց նա զանուն իմ , և իմացեալ՝ օրհնեաց զիս , և ասէ ։ " Յովսէփ որդեակ իմ , փառք և պարծանք տան իմոյ ․ դու եղիցիս փրկութիւն ազգաց , և կերակրեսցես զսովաբեկն , և զքաղց ընտանեաց քոց դու հարցես ։ Ի քեզ վճատասցի ծերութիւն հօր քո , այլ վիշտք նորա 'ի ցնծութիւն փոխեսցին , և զնշխարս ոսկերաց նորա փառօք իջեցուսցես 'ի շիրիմս հարց ։ Մինչեւ պատրաստիցէն առաջի քո շաւիղք փառաւորութեան քո , և առաքինութիւնն տացէ սուր 'ի ձեռս քո ընդդէմ զինիլ մարմնական ցանկութեան , դու զանձն քո յարդարեսցես 'ի հնազանդութիւն , և հօր քո և եղբարց քոց հլու և հպատակ կացցես , որով և փայլեսցի 'ի գլուխ քո պսակ պանծանաց ։

Գիտասցես որդեակ իմ, զի չիք քան զհնազանդութիւնն՝ պատարագ ընդունելի առաջի Աստուծոյ. Հնազանդութեամբ հաճոյ եղեւ Աբրահամ հայր իմ, և փոխանակ հանելոյ զիս յողջակէզ ՚ի վերայ սեղանոյն, ընկալաւ զխոյն և պատարագեաց նմա։ Քաղցր է հնազանդութիւնն, այլ դու ոչ այժմ վայելեսցես ՚ի նոյն քաղցրութիւն, սակայն ապա գիտասցես և ծանիցես եթէ քանի՜ օգտակար և պտղաբեր եղիցի քեզ. Հնազանդութիւնն գանձ է անկողոպտելի, և սիրտ առն հնազանդի՝ անխոցելի կայ ընդդէմ սրոյ Թագաւորի. բայց քաղցունք զարթուցանեն զխիղճ Թշնամեաց, և ՚ի տանէ բանդի փառօք ՚ի դուրս արձակեսցի այր քաղցրահամբոյր. Վասն որոյ՝ որդեակ իմ սիրելի, զայն պատուիրեմ քեզ կրել իբրեւ զոսկի մանեակ ՚ի պարանոց քո, և խնդրեցից զՏէր տալ քեզ զոգի հնազանդութեան „.

Յետ բանիցս այսոցիկ յարեաւ նա, ունելով ՚ի ներքոյ բազկաց իւրոց զերկուս ՚ի հաւատարիմ սպասաւորացն, որք դիւրէին զքայլս ոտից նորա, և չոքաւ յայլ իմն խորան, որ էր սովորական տեղի աղօթից իւրոց. Հետեւեցի նմին և ես, և մտի ՚ի խորան անդր. Անկաւ նա ՚ի վերայ երեսաց իւրոց անբարբառ և անմռունչ. առուք արտասուաց հեղուին յաչաց նորին. և ՚ի ջերմութենէ եռանդեան սրտին թուէր իմն բոցանման փայլել աչացն կուրութեան. պայծառանային երեսքն, և այնքան ջերմացաւ ՚ի սէր Աստուծոյ, յիշատակելով զանհուն բարերարութիւն նորա, մինչ զի՝ ոչ երեւէր նա յերկրի, այլ յերկինս ընդ անդադար փառաբանիչսն երգելով զհրեշտակային երգսն.

Զկնի հանելոյ անդ յաղօթս հարուստ ժամ մի, կոչեաց և զիս առ իւր՝ ձայնակից լինել ինքեան, և պատուիրեաց եւս մի երբէք յուլանալ յաղօթից,

և ոչ մտանել 'ի քուն մինչև մատուցեալ զսովորական աղօթսն ․

Տեսանեմ սիրելի Ասանէթ , ուստի՞ սկզբնաւորեալ է առաքինութիւն հօր իմոյ . արմատ նորա գըտանեմք հաստատեալ 'ի սիրտ իւրոյ ծնողին , որ ոչ միայն բանիւ բերանոյն դաստիարակեալ է զնա , այլ ինքն իսկ օրինակ լինելով որդւոյն ․ Կատարեալ կըրթութիւնն կայանայ յաստուածպաշտութեան , զոր և ունելով հօր իմոյ անդստին 'ի մանկութենէ , օր քան զօր ջանայր առաւելուլ 'ի նոյն՝ ջերմեռանդն ըղձիւ աստուածային սիրոյ ․ Միտ դնեալ 'ի սէր Աստուծոյ , միշտ յերկնայինսն խորհէր , և 'ի նոյն ձկտէր յարաժամ հասանել , և առ այս զօրաւոր միջոց 'ի վեր արկանէ զանդուլ աղօթսն ․ Աշխարհս՝ ըստ ոռուոմ տուն փորձանաց է և դարան դաղտնի նետիցն բանսարկուին և լի անհամար վտանգիւք , ընդ որ չէ ումեք անցանել անսայթաք և անվնասանդ , ուստի կարօտի աստուածային օգնականութեան և շնորհաց . և իւ մարթ իցէ մեզ գտանել զսոյն , բայց եթէ աղօթիւք և առաքինական գործովք ․ Այլ զոր օրինակ բազում գիտութիւն և հմտութիւն նաւապետի՝ զոր 'ի ծովու ունիցի , ոչ ինչ օգնէ ինքեան և զգուշացուցանէ 'ի ժայռիցն՝ որք ընդ ամէնի ալեօքն դարանեալ կայցեն , եթէ ոչ ծգի 'ի վեր պարզեալ՝ զամենայն քիրտն Թափիցէ 'ի ձեռն հմտութեան իւրոյ գիտել զվտանգն և ազատել զնաւն 'ի նաւաբեկ լինելոյ , և զինքն և զնաւաստիսն 'ի ծովամոյն կորստենէ ․ Սոյնպէս ոչ ինչ բնաւ օգնէ մարդոյ գիտել աղօթս կարեւորս , և ինչ ոչ պարապել 'ի նոյն ․ և կամ՝ որ նոյն է , ասել բերանով , առանց միտ դնելոյ այնմ և իմանալոյ ․ նմանի յայնժամ մարդ ծնծղայի ղօղանջելոյ , որ միայն հանէ զձայն և ինչ ոչ զգայ ինքն ․

Իսկ եթէ ոք կամիցի արդիւնաւորս գործել զա-ղօթս, և հաճոյ գտանիլ առաջի Աստուծոյ, նախ քան զամենայն զվարս իւր սրբեսցէ, որպէս զի աղօթքն համաձայն գործոցն գտանիցին, և ըստ այնմ զհայցելին իւր ընդունիցի։ Ապա թէ ոչ՝ պատահելով նմին վը-տանգաւոր ժայռք կենցաղոյս ծովու, անզգուշաբար իմն ընդհարեալ վտանգի, և լինի ինքն անձին իւրում պատճառ կորստեան, Ի զուր աղօթէ մարդ առ Աստուած, խնդրելով կեցուցանել զանձն իւր, եթէ ինքն անձամբ ոչ հեռանայցէ 'ի մահահամբոյր գործոց․ անընդունելի են ամենեւին այնպիսի աղօթք, յորոց մեծապէս գարշի Աստուած, և իբրեւ աղբ անպիտան համարի։ Ո՛ի որ շնորհս խնդրէ շրթամբք և ինքն արտաքոյ շնորհացն ընթանայցէ անմարդի գործովք իւրովք, զի՞նչ վարձք են նմին։ Նոյն իսկ աղօթքն զանձն իւր դատապարտեսցեն, փոխանակ զի՝ ոչ գի-տաց զվարս իւր ընդ աղօթիցն միաբանել։

Ապա սիրելի ամուսին իմ, ժողովեսցուք և մեք զմիտս մեր 'ի մեզ, և բարւոք կշռեսցուք զբանս աղօ-թից մերոց, համեմատելով ընդ նոսին և զգործս մեր։ Օրինակ առցուք մեզ զխունկսն, որք նախ 'ի վերայ հրոյ ճենճերեալ եփեալ, ապա զանուշից բուրմունսն 'ի վեր յերկինս ուղղեն։ Այս գունակ և մեք, ոչ կա-րեմք զաղօթս մեր ուղղել առ Աստուած, եթէ ոչ նախ զմեզ ինքեանս գեղեցիկ կրթութեամբք համե-մեսցուք յառաքինութիւն, և զերկիւղն Աստուծոյ իբրեւ զհուր բորբոքեալ 'ի սիրտս մեր պահեսցուք անշէջ, և նորին սիրոյն խարուկիցուք։ Ըստ այսմ օրի-նակի բարեկարգելով զվարս մեր, և զորդիսն մեր 'ի նոյն փութասցուք կրթել․ ուսցին և նոքա քաղել պտուղս յաղօթից իւրեանց։

Ո՛չ թէ ամենայն ծնողք զայն կրթարան վարժից

՚ի տունս իւրեանց հաստատեալ ունէին , ինքեանք լինելով վարժապետք որդւոցն . և որպէս համակ փոխեալ գտանէին յայնժամ բարոյական կարգք աշխարհիս . Ուր այնուհետև այր ժանտ , ուր մոլի , ուր բարկացող , ուր կռուասէր , ուր նախանձոտ , ուր անհնազանդ . ոչ գտանէր որք երբէք ՚ի սոյն ախտս վարակեալ . Այլ նոքա գլխովին անփոյթ են զայսմ հոգևոր կրթութենէս ; զկարևորագունեն քան զամենայն , և թողուն ՚ի հոգս մանկածուացն . որք և սոքա ոչ որպէս հարկն է՝ վարժելով զառաջին հասակն մանկութեան յանձնելոյ ՚ի խնամս իւրեանց , մնայ կրթութիւնս այս թերի . Իսկ մեք ոչ այնպէս , այլ զնախահարս մեր յօրինակ մեզ կալեալ , անաչառապէս իմն փութով զորդեակսն մեր կրթեսցուք , և ՚ի մանկութեան հասակին տացուք նոցա ըմբոշխնել զաղօթիցն օգտակարութիւն . որով կատարեալ զհայրենի պարտաւորութիւնս մեր , ակն կալցուք վարձուց յուսով յաւիտենին .

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՍԱՆԻԹ

Ոչ տրտնջէր և ոչ վշտագնէր հաւ .քո ընդ նուազութիւն լուսոյ աչաց իւրոց .

ՅՈՎՍԷՓ

Ոչ երբեք լսելի եղեւ տրտունջ 'ի բերան նորա, այլ մանաւանդ ուրախ եւս էր, և իբրու այն թէ երախտիս մեծ գտեալ Աստուծոյ, այնպէս շնորհս ունէր ընդ նուաղումն աչացն տեսութեան.

Յաւուր միում դէպ եղեւ ինձ գտանիլ առ նմա, որպէս և այլ բազում անգամ, 'ի ժամ աղօթից իւրոց. 'ի ծունր խոնարհեցաւ նա և սկսաւ աղօթել առ Աստուած գոհացողական ձայնիւ և ասէ. « Գոհանամ զքէն Տէր Աստուած, զի խնայեցեր յիս և բարձեր յինէն զլոյս աչաց իմոց, որով և զօրացուցեր զլուսաւորութիւն մտաց իմոց. Այսու լուսով ծանեայ Տէր զգերազանց Ճշմարտութիւն քո. զի ոչ եթէ աչաց մարդկան տեսանիս դու, այլ միայն մտաց իմանիս. Եւ եթէ տկարութիւն մարմնաւոր ականց չզօրէ անքթիթ հայել առ արեգականն լոյս, զիարդ ապա զօրեսցէ ակն արկանել առ արդարութեան արեգակն, որ արարիչն է լուսոյ և խաւարի, առ որ և ոչ իսկ անմարմին գոյացութիւնք և ոգիք հրեղէնք իշխեն մերձենալ անթեւաքօղեալ դիմօք. Գոհանամ զանհուն մարդասիրութենէ քումմէ Աստուած իմ բարեգութ, զի խափանեցեր յինէն նիւթական առարկայից զտեսութիւն, յորոց հեռացեալ իմ, այնչափ առաւել պայծառացաւ յիս միտք իմ և զօրացաւ յիշողութիւն իմ. Սքանչանամ յաւէտ յիշելով անմոռաց զողորմութիւն և զփրկութիւն քո՝ զոր յիս գործեցեր, առաքելով զխոյն երկնաձիր, որ փոխանակեաց զանձին իմոյ զզոհ, որով զիս առ քեզ պատրաստէի բոլորանուէր ընծայել. իսկ դու գթալով ընդ հայրագորով աղիս ծնողին իմոյ,

„ փոխանակ զիս՝ զնա ընկալար պատարագ ՚ի հոտ ա֊
„ նուշից. Օրհնեմ Տէր և փառաւորեմ զանուն սուր֊
„ բո, և կամ միշտ պատրաստական ՚ի ծառայութիւն
„ կամացդ. Գովեմ և օրհնեմ զառատաձիր պարգևս
„ քո, և խնդրեմ կատարել յիս զկամս քո: Զօրացո
„ զիս Տէր գոհութեամբ տանիլ ծանրութեան վշտա֊
„ կիր աւուրց իմոց. ոչ խնդրեմ ՚ի քէն Տէր զամաց
„ լիութիւն և կենաց զերկարութիւն. այլ զի որպէս
„ քաջութեամբ սկսայ տանիլ զբեռն ծերացեալ հա֊
„ սակիս, ՚ի նմին և կատարեցից լի երկնաւոր սիրով:

„ Մի թողուր զիս երբէք ընդդէմ Արարչիդ կա֊
„ մաց մռաբերել ՚ի խորհուրդս չարեաց. իսկ եթէ
„ յանցանօք ինչ ըմբռնեալ վշտացուցից զքեզ, լաւ էր
„ եթէ արդէն իսկ հատանէիր զթել երկարութեան
„ կենաց իմոց, և ՚ի ձեռն հրեշտակի քո հնձել զա֊
„ տոքացեալ հասակն իմ մանգաղաւ մահու:

„ Ոչ բաւեն բանք իմ զարդարութեան կշիռ
„ հատուցանել երախտեաց բարերարիդ, զոր ցուցեր
„ առ իս. քանզի զխոստումն՝ զոր եդիր ընդ Աբրա֊
„ համու հօր իմում, զնոյն կատարեցեր արդեամբք ՚ի
„ ծառայն քո Յակոբ, բազմացուցանելով զորդիս
„ նորա, յորոց իւրաքանչիւր ծագեսցի մեն մի ազգ ՚ի
„ փառաւորութիւն անուանդ քում սրբոյ. Օրհնեա
„ զնոսա Տէր՝ աստուածային քո օրհնութեամբ, ան֊
„ վկանդ դիմել յասպարիզի ճգնութեան ՚ի մարտ
„ աշխարհիս. արիացո զծնող նոցին կրթել զնոսա ՚ի
„ վարս առաքինութեան, գնալ ըստ կամաց քոց բա֊
„ րեսիրաց. Ընկալ և զսիրտ իմ որ լի է բոցով սիրոյ
„ աստուածութեանդ քո, որ յամենայնի ճիգնթափ
„ լինի պատմել զերախտիս քո, այլ պակասին նմա բառք
„ արտայայտիչք անհամար բարերարութեան քո „.

Զայսոսիկ խօսեցաւ նա ՚ի ջեռեալ սրտէ, և ապա

լուեաց. եւ սկսաւ արտօսր արձակել յաչաց իւրոց՝ գոչելով առ Աստուած 'ի ձայն հառաչանաց ողբակիր շրթամբք, մինչ և զիս լուծանել յարտասուս. Իբրեւ այսպէս հարուստ ժամս զլալ հատանէր հեծութեամբ սրտիւ, մատեայ առ նա և հարցի աղէբար զպատճառ թախծագին ողբոցն, և աղաչեցի զնա կասել և մի անչափութեամբ վայից և ջայլից ծնկել և հիւծել զնշխարեալ կեանս իւր, որ պարգեւ օրհնութե՟ էր մեզ յԱստուծոյ. Ընդ այս բարբառ իմ, յանկարծ սթափեալ 'ի լալոյն, զուարթացաւ յանձին, և տեսի և ահա դէմք նորա իբրեւ հրեշտակի, և սքանչացայ ընդ անակնունելի փոփոխումն, քանզի իբրու այն թէ 'ի միում կիտի երկոքին հակասականք ցուցանէին յերեսս նորա, տրտմութիւն և խինդ. Պատասխանի ետ ապա զուարթ ոգւով և ասէ.

„Որդեակ իմ, լալ աչաց իմոց չեն պտուղ թախծանաց սրտիս, այլ յաւէտ զովացուցիչ են ոգւոյս դառնութեան. Արտասուքն պարգեւ մեծ են շնորհեալ ինձ յԱստուծոյ. ապա թէ ոչ՝ բոց հրայրեցութեան ցաւագին սրտիս տոչորէր զիս աղեկիզմամբ. Գոհանամ զառատ պարգեւաց նորին, որով տապ ջերմութեանն փոխի 'ի սիգ քաղցրութեան, մխիթարելով զիս զերկնային մխիթարութիւնն. Որդեակ, խնդրեա և դու 'ի Տեառնէ պարգեւել քեզ զայն շնորհաց ցօղ. զի որպէս գարնանագայր հեղեղն ողողեալ զխոպանացեալ և զփշածին անդս, կակղէ և դալարագեղ զուարճացուցանէ զերկիրն ծարաւուտ 'ի ափոփանս սրտի. այսպէս իմն և դու, եթէ ունիցիս սիրտ ցաւագնեալ և յերեսաց խորշակահար հողմոցն տառապանաց ցամաքեալ և փշովք աղետից հեղձեալ, գտցես քեզ պատրաստական արտասուացն աղբիւր՝ որով ոռոգեալ զսրտի քո զանբարեխառնութիւն բա-

փոփեսցիս և զոլասցիս. Քանզի՝ արտասուաց է աշխարհս հովիտ, և աքսորանաց վայրս. զի զրկեցաք յանմահութեան դրախտէն, պատուիրանազանցութեամբ նախաստեղծիցն, որով անկաք ամենեքեանքս ընդ մահու դատապարտութեամբ. Ուստի միայն քաղցր արտասուաց հեղմամբ, միայն խնդրուածովք և պաղատանօք հնար է մեզ հաշտեցուցանել զԱստուած, առ 'ի փրկել զմեզ յամենայն տաժանելի նեղութեանց.

„Գերմեռանդ լեր աղօթս առ նա. ցոյց նմա սիրտ սուրբ և հոգի ցածուն լցեալ արտասուօք, որպէս զի արժանասցիս վայելել յոգեպարար քաղցրութե̃ նորին, և տեսանել մտօք զանտեսանելին, և լսել զանիմանալին. Քանզի՝ մինչ յորժամ յաղօթս կանխեմք, խօսիմք ընդ Աստուծոյ, և յետ աղօթիցն՝ եթէ ամփոփեալ 'ի ներքս 'ի մեզ խոկամք ընդ երախտիսն նորին լուութեամբ, Աստուած խօսի ընդ մեզ 'ի սիրտս մեր. Տայ մեզ միտս խոհունս և խորախորհուրդս սքանչանալ ընդ ամենակալ էութիւն նորա, ընդ բարերար մարդասիրութիւնն, ընդ անճառելի շնորհսն և ընդ անթիւ պարգևսն, զոր միշտ առատաձեռնէ յարարածս իւր, եթէ ոչ չարաչար 'ի խնդիր մատչիցին առ նա լքեալ դիմօք, որով փոխանակ վարձս ընդունելոյ, պատիժս կուտեն անձանց.

„Այլ դու պնդեա զմիտս քո յանսահման սէր նորա, և մի թուլասցիս 'ի մեղկախորհուրդ զբաղմանց, և զրկիցիս 'ի շնորհացս. Եցոյց ինձ Բարձրեալն Աստուած, և խելամուտ արար ապագայ անցիցն որք ընդ քեզն անցցեն. անկցիս 'ի փորձս բազում վշտաց, վտանգիցի անձն քո ընդ տառապանօք, արիւն քո թշնամի քեզ յարիցէ. այլ դու մի լքանիր, կալ քեզ օգնական զհամբերութիւնն և զերկայնմտութիւն. Քանզի՝ որպէս գոհարք, մինչ 'ի ներքոյ երկրի թա-

ղեալ կան 'ի հանքսն , տձեւ են և անկերպարան , իսկ յորժամ յղկիցին և տաշիցին 'ի հարթ և յարուեստ ածիցին , կռելով և կոփելով , յայնժամ պայծառութիւն լուսոյն 'ի մէն մի հատուածիցն սկսանիցի շողշողել , զաչս տեսողացն մոգիցէ , և առաւելուցու յարգ նորա . Նոյնդունակ և դու պարտիս լինել տոկուն յամենայն վիշտս փորձանաց , ծաղր առնիցես զհարուածովք բաղդին , մինչեւ որք 'ի վերայ յարուցեալ իցեն քո , 'ի համբերութենէ քումմէ ընկճիցին , և պչարեացն իւրեանց տոկոսիս հատուցանիցեն համբուրելով զլուծ հնազանդութեան քո , և կատարեսցի տեսիլն՝ զոր ցուցցէ քեզ Աստուած .

„ Հապա գոտի ընդ մէջ քո ածցես , զգեցջիր զանձամբ զարութիւն քաջութեան . մի խնդրեսցես՝ յորմէ թշնամութիւնն 'ի վերայ քո յարուցեալ իցէ , այլ զայն խնդրիցես յԱստուծոյ՝ զի նմին համբերել կարասցես . մի տագնապ տարակուսանացն 'ի յուսահատութիւն զքեզ կործանեսցեն . եւ ընդդէմ նոցին հաստատութեան զինուն , տարածեաց զլանջս քո ընդդէմ մախանաց նետից թշնամւոյն , և կացջիր անդրդուելի իբրեւ զապառաժ յաղթ՝ որ ծաղր առնիցէ զկատաղութեամբ ամեհի ալեացն ծովու . Միայն 'ի սիրոյն Աստուծոյ մի հովացուսցես զսիրտ քո , միայն զանդադար աղօթիւն բուռն հարցես ջերմ արտասուօք , և զգթութիւն երեսացն Աստուծոյ թիկունք օգնականութե՛ առ դուռն պատրաստ քեզ գտցես „ .

Իբրեւ զայս երկարէր զբանս իւր Իսահակ հաւն իմ , եմուտ 'ի ներքս հայր իմ , և ես կացի յոտին 'ի սպաս ծառայութեան պաշտել զնոսա . Ապա յանկնարկել հօր իմոյ , մեկնեցայ անտի և դարձայ 'ի խորան մեր . Կացի անդ յաղօթս ըստ սովորութեան իմում՝ խնդրելով յԱստուծոյ զօրացուցանել զիս , և մի մեկնել

յինէն զօգնութիւն իւր, պահել զիս անսայթաք յամենայն վտանգս և 'ի փորձութիւնս. Ընկայ 'ի վերայ երեսաց իմոց, և ծուփք խորհրդոց իմոց ծփէին յիս ալեկոծեալ տխրութեամբ, յաղագս չարագուշակ բանից հաւուն իմոյ, և աչք իմ թմբրեալ 'ի ծանրութենէ քնոյն, ընկղմեցայ 'ի նինջ թանձրութեան. Եւ ահա երազք անդոհականք ամբոխէին զմիտս իմ. տեսի և ահա ոչ 'ի կերպարանս մարդոյ, այլ իբրու 'ի պարուց ինչ համբարուաց, յաւէտ զկանացի ունելով յանձին զբնութիւն, եկն և եկաց 'ի սնարից իմոց. Գեղմք նորա ճկոտի, աչք իւր պագշոտեալ հրով վառէր, 'ի ճակատուն հանգչէր հեշտութիւնն, և յամենայն մարմնոյն բուրէր հոտ գարշութե. Մատուցեալ առ իս բուռն հարկանէր զինէն՝ լինել ընդ նմին. յոնիւքն յեղյեղելովք և հոպիտ խաղալեօք զինեւ ճեմելով ճօճելով շրջականս իմն առնէր մոգել զուշ իմ. Մասանեցայ ահիւ ընդ իգացեալ տեսիլ հրեշաւոր կնոջն, և փոքր մի ևս յուշակորոյս անկանէի յերկիր, եթէ ոչ ձեռն ինչ աներեւոյթ կարկառեալ առ իս զօրացուցանէր զիս և սրտապնդէր. Յարեայ անդէն և բուռն հարեալ զողջախոհութե սրոյն, եդի վէրս 'ի վերայ սրտի նորին. Ցնորեալ նորին և 'ի յուսահատութիւն կործանեալ ընդ անմեղկելի սիրտ իմ, խոյս ետ յինէն, արկեալ զիս գահավէժ ընդ վախս ուրեք աղջամղջին, այլ 'ի սաստիկ ահէ իմմէ ընդոստ 'ի քնոյ 'ի վեր վաղեցի, և տեսի և ահա երազք էին.

Ո՛վ խորք մեծութեան Աստուծոյ, զիա՞րդ գիտէ կանխաւ զապագայ չարաթոյն վտանգիցն 'ի դէմս բերել զզեկուցումն, և մինչեւ գործեալ ինչ չարին՝ զգուշութիւն 'ի վերայ ածել, զի մի անփորձութեամբն գթիցիմք, և յանմեղութենէ արտաքս անկանիցիմք. Այս էր նկարագիր աղտման վտանգին՝ զոր 'ի տան

Պետաւրեայ դահճապետին կրեցի, ուր արդարև հզօր աջոյն պաշտպանեալ Անեղին, անարատ պատմուճանաւս իմոյ կուսածին՝ ողջախոհաբար իմն 'ի բաց ուտուցայ. Անկայ բանտարկեալ 'ի մետաղս խաւարին, այլ կրկին պատուով 'ի դուրս ածայ՝ յաթոռն բարձրացեալ իշխանական գաւազանին.

Այլ անցցուք մեք աստէն խօսիլ զԻսահակայ հաւէն իմմէ, քանզի բազում շահս մթերեալ գտանեմ ես 'ի պատմութեան նորին. Եւ արդարեւ երջանկութիւն մեծ է մարդոյ այնպիսւոյ վիճակիլ հաւու. քանզի՝ ծերութիւն ալեզարդ և իմաստութեամբ հնացեալ, փառք են տան, և պարծանք ազգատոհմին. Եւ զի՞նչ, ո՛ սիրասուն կենակից իմ Ասանէթ, զիա՞րդ հրով սիրոյն Աստուծոյ վառեալ էր սիրտ նորա, ո՞րպէս զուարճանայր և խնդամտէր ընդ զրկումն յաչացն տեսութենէ. զի 'ի խափանիլ արտաքին տեսանելեացն՝ աչէր, յաւէտ իմն պայծառացաւ ներքին լուսաւորութիւն մտաց. լաւ համարէր կոյր լինել աչօք՝ քան մտօք. Համբերութիւնն չարակրութեանց՝ բնութիւն իմն էր լեալ նմին. և որչափ ծանրանային 'ի վերայ նորա կարիք և վիշտք, այնչափ առաւել պայծառանայր յառաքինական հանդիսին ընդ ձգնութիւնս բերկրելով.

Ի նոյն ապաքէն և զիս խրախուսեալ, մարգարէական իմն ոգւով նկարագրէր զապագայ վիճակին իմոյ զպայման. ասէ՝ և քեզ մնան տագնապք նեղութեանց. այլ յահարկութիւն բանիցն, քանզի գիտէր եթէ երկիւղիւ ճնոյր զիմ սիրտ դիւրազգած և մատաղ, զմխիթարականն խառնէր զդարձուած բանից՝ օրինակաւ պատուական ականց. Այլ զիս ոչ այնչափ երկիւղն տագնապէր, և ոչ մխիթարութիւնն զուարճացուցանէր, որչափ զապագայ իրողութեանցն նախատեսութիւն զիս յափշութիւն հարկանէր. Քանզի՝ գիտէի

իսկ քաջ խելամուտ լեալ փորձիւ, եթէ ոչ անկանէր 'ի շրթանց նորա բան մի և մնայր անգործ. և յիրաւի, զի ոչ ինքն ինչ էր որ 'ի կամաց իւրոց բարբառէր, այլ Աստուած տայր 'ի ժամուն խօսիլ զխորհրդոց նախախնամութեան իւրոյ. Աղօթք իւր և արտասուացն բըղխումն արժանի զնա շնորհիս կացուցանէին. և զի՞նչ, նոյն իսկ արտասուքն շնորհ ինն է աստուածային պարգեւեալ մարդկան, որ զմեղսն ջնջէ, և զմարդն հըրեշտակ համակ յարդարէ.

Ողջոյն յաւէտ և փափաքելի այսմ շնորհաց հասանել և ես. և լինի այս, յորժամ ընդ մեզ զԱստուած ունիցիմք, որ պարգեւիչ է բարեաց և աղբիւր շնորհաց. և ոչ միայն այսչափ, այլ գերիվերոյ քան զոյնս պարգեւէ մարդկան զմեծամեծ շնորհս. Ապա արիասցուք կրթել զանձինս մեր 'ի ջերմեռանդ աղօթս, և 'ի ցօղումն քաղցր արտասուաց, յոյժ փոյթ տալով կատարել զպատուիրանս Տեառն, որովք զնա առ մեզ մերձեցուցանեմք. Քանզի՛ նա մօտ իսկ 'ի մեզ գտանի առ կուրծս. միայն մեղք մեր անջրպետ 'ի մէջ արկանէ ընդ նա և ընդ մեզ, և զրկէ զանձինս մեր 'ի նորին շնորհաց.

Ջանասցուք ապա սիրեցեալք իմ, զոյն եռանդն աստուածապաշտ ոգւոյ ունել և 'ի սիրտս որդւոց մերոց. յորդորեսցուք զնոսա հետեւիլ առաքինութեան հաւուն իմոյ Իսահակայ. ոչ քրթմնջել, և ոչ յուսաբեկ լքանիլ 'ի վիշտս և 'ի նեղութիւնս, այլ համբերել արիական ոգւով, և յաղօթս միայն ապաւինիլ. Քանզի՛ համբերութեամբ ևեթ կարեմք ստանալ զոգիս մեր, և աղօթիւք փրկիլ 'ի նեղութեանց. Արդ զայսոսիկ առաքինութիւնս տնկեսցուք 'ի սիրտս նոցա 'ի ճիղմ հասակի կենաց նոցին, և զնոսա տացուք օրինակ այլոց մանկանց հասակակցաց իւրեանց, որք առաւել քան 'ի ծնողաց և 'ի դաստիարակաց յընկերակցացն իւրեանց կարեն շահիլ.

ԳԻՇԵՐ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Ո՛հ, տրտմալի եղեն քեզ արդարեւ բանք և գուշակութիւնք հաւուն քո, Թէպէտ և նոքիմբք ջանայր զգուշացուցանել զքեզ կանխաւ յառաջապա վըտանգից, որք դարանակալ զոտիւքդ կային.

ՅՈՎՍԷՓ

Այո՛, հեռի էին ամենեւին ՚ի հաւէն իմմէ և ՚ի հօրէն՝ բանք զուարթարարք, հաճոյականք մտաց և փաղաքշիչք կամաց մանկական հասակին. այլ միայն զօգտակարագոյն բանս ՚ի մէջ առնուին, զխրատուց ևեթ բուռն հարկանէին, զառաքինութեանց ճառէին. Փոյթ նոցա էր՝ ոչ զկամսն հաճել, այլ զմիտսն կրթել, զվարսն ուղղել և զհոգիսն պարարել աստուածեղէն տուռիւք և բարեմասնական ձրիւք. Բանք նոցա պարզ և մեկին, այլ բուռն և յաղթահարիչ. ոչ այնչափ ուժգին թափ անցանէ ՚ի սիրտ՝ ՚ի հզօր ձեռաց արձակեալ նետ, որչափ անպաճոյճ և անզարդ խրատք նոցա. որոց թափանցեալ արդարեւ ՚ի սիրտ և ՚ի միտս իմ, ցարդ հնչեն յունկն իմ. Ոչ մարդկային մտաց էին նոցին բանք, այլ պատգամք Աստուծոյ, որոյ ճ՛մարիտ կամացն՝ փողք էին քաջահնչակ և բարձրագոչ, զապագայիցն մեզ պատմելով. Ծանուցանէին անվրէպ՝ զոր ինչ ազդէր ՚ի միտս նոցա Աստուած.

Այժմ երկնապարգեւ շնորհացս փափաքէի և ես, ունել նախատեսութի՛ զապառնեաց. որում չէ հնար

այլով ինչ հասանել, բայց եթէ առաքինական կըր-
թութեամբք, և անդադար աղօթիւք. Քանզի որպէս
փողն ոչ կարէ առանց ուրուք հնչման հանել զձայն,
նոյն և մարդիկ առանց աստուածային ազդման՝ ան-
կարանան խօսել զապագայից, այլ միայն արձագանգ-
են նոքա երկնային ձայնին. Վասն որոյ ոչ միշտ գու-
շակութեան և կանխագիտութեան էին բանք նոցա,
այլ երբեմն եւս՝ մանաւանդ թէ բազում անգամ՝
զկրթութեամբ և զհրահանգօք դայէն.

Ուսուցանէր ինձ Իսահակ հաւն իմ զկանոնս
կառավարութեան, զարդար դատողութիւնն, զպարտս
դատաւորի, զբարիոք տնտեսութիւն և զկենցաղա-
կրթութիւն այլովքն հանդերձ, զորոց երկարագոյնս
ճառէր ամենայն կարեւոր պարագայիւք, ցուցանելով
ինձ զկարգն արժանապէս 'ի գործ արկանելոյ զայնս.
Եւ առ 'ի հաճելի առնել մանկական տիոց իմոց զու-
սումն կարեւոր, պարգեւատրէր զիս առատ տրօք.
Զոր օրինակ, իբրեւ քաջ 'ի միտ առի զկառավարու-
թեանն եղանակ, և 'ի գործ արկանէի զայն յառտնին
գործս և 'ի մանունս, արար ինձ պատմուճան ծաղկեայ,
որ գեղեցկութեամբ և փառաւոր ճոխութեամբն գե-
րազանցէր քան զանդրանկացն. Եւ զնոյն պատուի-
րեաց հօր իմոյ զայնպիսի յօրինել ինձ հանապազ զա-
գանելիս 'ի նշան օրհնութեան և 'ի սիրոյ իւրոյ. Զոր
տեսեալ եղբարց իմոց՝ ոչ նախանձէին ընդ իս, զի նո-
ցա մէն մի լի և առատ պարգեւս շնորհեաց յիւրոց
խաշանց. իսկ ինձ՝ զնոյն զայս եւեթ պատմուճան.
այլ ես ուրախ էի և զուարթ, քանզի նշանակ օրհ-
նութեան էր ինձ այն, վասն որոյ՝ և քան զնոցայն 'ի
վեր դասէի զիմս զհանդերձիկ.

Եղանակ կրթութեան նորա և բանք խրատուցն
գերազանց էին յոյժ և ազդու. քանզի կատարեալ էր

այն յամենայնի, եթէ յառաքինութեան, և եթէ յիմաստութեան, վարդապետ օրինաց և մատեան ճոխացեալ ամենայն գիտութեամբք՝ 'ի հարիւր և ութսուն ամաց հասակի. Ծերութիւն նորա պարարտացեալ՝ ընդ փորձ անցեալ ամենայն վշտաց և նեղութեանց կենցաղոյս, ընտիր գտեալ էր իբրու ոսկի 'ի բովս քննեալ՝ համբերութեամբն իւրով. Երկնչէր այր, այլ ոչ 'ի փորձութենէ, երկնչէր յօրինազանցութենէ, և 'ի պատուիրանացն Տեառն ապստամբելոյ. դողայր և սասանէր՝ ոչ 'ի թագաւորաց և 'ի բռնակալաց, որք յահէ նորին զդողանի հարկանէին, այլ յամենատես աչացն Աստուծոյ. Անարգեալ և արհամարհեալ էին առաջի նորա ամենայն հարստութիւնք և մեծութիւնք աշխարհիս. Ճշմարիտ մեծութիւն աստուածածանօթութիւնն վարկանէր, և մեծագանձ փարթամութիւն՝ զառաքինութիւնն. վասն որոյ՝ յետ ճառելոյ զերկրաւոր մեծութենէ, անդէն 'ի վեր հանէր զբանն առ երկնայինսն, ցուցանելով եթէ կղկղանք են աշխարհիս ճոխութիւնք առ երկնաւորաւն.

"Մարդիկ, ասէր, զայնոսիկ կոչեն ճոխ և հարուստ, որոց իցեն յոլով դէզք ոսկւոյ և արծաթոյ և ականց պատուականաց. Այլ զի՞ կայ սոցա և ճշմարիտ մեծութեանն. և զիա՞րդ կուրօրէն զերջանկութիւնն մարդոյ 'ի հեշտալիսն դնեն, ուսուցանելով զճանապարհ և զմիջոցսն ստանալոյ զճոխութիւն, որպէս զի հանդիստ զկեանս իւրեանց վարեսցեն յաշխարհի. ուրանան զառաքինութիւն և զկրօնական պարտաւորութիւնն, որ հիմն է ապաքէն ճշմարիտ երջանկութեան. Իսկ եթէ ոսկի և արծաթ և ակունք պատուականք օգնէին ինչ երջանկութեան մարդոյ, ոչ 'ի խորս երկրի արգելօք ծածկէր զնոսա Աստուած. որք ոչ այլ ինչ են, և ոչ յայլ պէտս ինչ արարան, բայց միայն ցու-

ցանել զիմաստութիւնն և զամենակարողութիւնն Աստուծոյ, որ գիտաց և 'ի խորս իսկ երկրի ունել վկայ անբարբառ իւրոյ ճարտարարուեստ հանճարոյն. Ո՛ւխութիւն երջանկացուցիչ մարդոյ՝ աստուածգիտութիւնն է հանդերձ առաքինական արգասեօք.

„Առատութիւն ոսկւոյ և արծաթոյ և ականց ընտրելոց՝ տառապեցուցանեն զմարդիկ և ամբոխեն զանդորրութիւն ոգւոյ նոցին. տանջեն զմիտս կրողացն զնոսա, որք հնարին պահել զայնոսիկ անկողոպտելի և յապահովի յերեսաց աւազակացն և գողոց. Իսկ եթէ կորուսանիցեն զնոսա կամ ականահատք և ասպատակք խլիցեն 'ի ձեռաց, քանի՜ տրտմութիւն և սուգ անմխիթար զանձինս նոցա ունիցի. Իսկ քանի՜ չարիք մեծամեծք անտի յառաջանայցեն, թշնամութիւն անհաշտելի, ատելութիւն դժոխային, և բազմիցս իսկ սպանութիւնք, մահ և արիւնըռուշտ կռիւք և պատերազմունք, որք չո՛ր քան զսլածութիւնն կոտորած 'ի վերայ ածեն քաղաքաց.

„Արդ՝ քննեա ուշի ուշով, մանր հետազօտեա զպատճառսն, և գտանես ոչ այլ ինչ, բայց եթէ չափազանց և անխոհեմ սէր մոլեկան՝ տուեալ առ կորստական և խաբուսիկ հանքսն, որք արդարեւ լիրու բարկութեան ինչ դիպեալ Աստուծոյ, սակս խռովութեանց և երկպառակութեանցն՝ զոր 'ի մարդիկ սերմանեն, ոչ զի միայն 'ի խորս թաղեալ կան երկրի, այլ և՝ առ 'ի անհետ իսկ առնել գլխովին 'ի մարդկային խուզողութեանց, կարկառս լերանց 'ի վերայ նոցա կուտակեալ ծածկէ, զի մի գտանիցին. և մի եկեալ վեր 'ի վայր զաշխարհս շրջիցեն, և բարձցեն յերկրէ զխաղաղութիւն. Այնպէս մարդիկ ագահութեամբ մոլեալ 'ի սէր դիւրեղծանելի գանձուցն, յերեւան հանին զայնոսիկ. որոց փայլուն պայծառու-

թիւն այնչափ բունացաւ, մինչ զի ոչ միայն իշխեաց ատացողացն իւրոց և թագաւորաց իսկ, այլ և զմիրտս նոցին գրաւեաց յինքն, և անխզելի հանգուցիւք կապեալ կաշկանդեաց։ Ոչ յիշեն նոքա ամենեւին ըղ-խաբուսիկ բնաւորութիւնս նորին, զի ծառայեցուցանէ զմարդիկ ցորչափ կենդանի են, և ոչ հրաժարէ առ 'ի նոցանէ՝ մինչեւ հասուցեալ զնոսա յեզերս շիրմին, ուր տայ նոցին զհրաժարական ողջոյնն և խուսէ անտի 'ի բաց, երկուցեալ զի մի վերստին ըմբռնիցի 'ի հաղբս առաջնոյ իւրում կայանի, և կացցէ թաղեալ որպէս զառաջինն։

„Տեսանես, ասէ, որդեակ իմ, զի ախտ զօշաքաղութեան զինչ կուրացուցանէ զաչս մտաց մարդկան, որով զհարկաւոր միջոցսն առաքինութեան զանց արարեալ, վարի բոլորովին գրաւեալ 'ի սէր խաբուսիկ դրամոց և արտաքին բարեաց կորստականաց, որով ոչ միայն 'ի յանդորր կենաց 'ի բաց զատուցեալ տարամերժի, այլ և 'ի գերագոյն շնորհացն Աստուծոյ վրիպէ։ Երջանիկ է այսպէս այր՝ որոյ ունչս արարեալ ամենայն աշխարհական մեծութեան, բաշխեալ մատակարարէ այնու կարօտելոց զկէտս, վասն որոյ և յանհուն բարութեանցն Աստուծոյ բազմապատիկ առաւելու մեծութիւն և հարստութիւն իւր։ զի որ սերմանէ առատութեամբ, առատութեամբ և հնձէ։

„Մի երբէք զօշոտեալ զքեզ պայծառութիւն ոսկւոյ և արծաթոյ և ականցն պատուականաց, 'ի սէր նոցին կապիցէ զմիրտ քո։ զի նոքա ստեղծան առ 'ի յԱստուծոյ՝ յայտ առնել մարդկան զամենակարողութիւն և զամենիմաստութիւն Արարչին, որ գիտէ և 'ի խորս երկրի և 'ի դուզնաքեայ իրս փայլեցուցանել ըզհանճար իւր։ Իսկ որ բանականք են և միօք զարդարեալ, պարտին գեղեցիկ և շահաւոր խրատս քաղել

անտի. Քանզի ոսկին ՚ի բնէ ծաւալական է, երկարի ՚ի թելս ամենանուրբս տեսութեամբ՝ ցոլցալի և ձգտիցի. ընդ կռանաւն միայն անփշրելի և անապական, որով կարեւոր խրատս մեզ մատակարարէ. իբրու զի և մեք ըստ նմին օրինակի պարտիմք ծաւալիլ առ ամենեսեան, ձեռնտու և օգնական լինելով յայլոց վիշտս և ՚ի պէտս բարեսէր յօժարութեամբ. ոչ յուսահատիլ ընդ ծանրութեամբ անկեալ փորձութեանց և տառապանաց, այլ տոկ ունել համբերութեամբ և երկայնմտութեամբ. Շողշողուն է և փայլուն արծաթն, բայց եթէ խառնուրդ ինչ յայլոց մետաղացն յինքն ունիցի, կորուսանէ զպայծառութիւնն և մթագնի. Այսպէս և առաքինութիւնն ՚ի մարդ՝ փայլուն երեւի, այլ եթէ խառնիցին ՚ի նոյն հպարտութիւնն և մոլութիւնք, աղօտանայ և կորնչի. Ակունք պատուականք՝ որք յայլ և այլ գոյնս զպէսպէս գեղեցկութիւն ակնապարար նշուլիցն ցուցանեն, յանդիմանեն զմարդիկ գեղով պայծառութեանն. Քանզի Արարիչն բնութեան ՚ի սկըզբանէ յանմեղութեան և յարդարութեան ստեղծ ըզմարդն, և լուսաւոր մտօք զարդարեաց, իսկ նա յանցաւորութեամբն կորոյս զնոյն և կամաւ խորասուզեաց զինքն ՚ի խաւարի մեղաց. Վասն որոյ խրախոյս տան մեզ սոքա անբեկանելի պնդութեամբն՝ աշխատութեամբ առաքինական գործոց զկորուսեալն անդրէն ՚ի ձեռս բերել. Այս մարթ է մեզ կրկին վայելել ՚ի լոյս երեսաց գթութեան Աստուծոյ, եթէ ջանիւ ուղղեսցուք զընթացս մեր ՚ի Ճանապարհս արդարութեան. Արդ՝ այս ամենայն երկրաւոր գոյացութիւնք խրատեն զմարդիկ, և ցուցանեն մատնանիշ զամենակարողութիւնն Աստուծոյ»։

Տեսանեմ սիրելի իմ Ասանէթ, եթէ զիարդ հաստատեալ կային միտք նորա ՚ի սէրն աստուածային, ո‐

բով ամենայն ինչ՝ որ յաշխարհիս են, անպիտան համա-
րելին յաչս նորա. Իսկ առ ի՛նչ ապա այնչափ մեծու-
թիւն ոսկւոյ և արծաթոյ, զգեստուց և անբաւ անաս-
նոց բազմութիւն, որով քան զամենեսին գեր ճոխու-
թեամբ. Ո՛չ հարուստ էր նա, այլ անընչասէր. վատ-
նէր և բաշխէր կարօտելոց, և յերջանկութիւն ընկերին՝
ոչ ինչ խնայէր ՚ի մեծութիւն իւր, և Աստուած ա-
ռաւել քան զառաւել ճոխացուցանէր զնա.

Ահա այս է ճշմարիտ մեծութի̃, և այս աստուածա-
պաշտութիւն, յորում ամփոփէին ամենայն իղձք նո-
րին. Ջանայր նա և ՚ի մտաց իմոց ՚ի բաց սահմանել
զմեծութեանն սէր, ցուցանելով եթէ բաւականու-
թիւնն է մի միայն օգտակար և անդորրաւէտ ճոխու-
թիւն, որով չափաւորեալ զիղձս իւր, վարէ կեանս
երջանիկս. Այս և մեք ջանասցուք հեռացուցանել ՚ի
մտաց որդւոց մերոց զագահութեան ախտն. մի երբէք
ընդ խաբս անկցին նոքա յարտաքին պայծառութենէ
ոսկւոյն և արծաթոյ, որք գերեալ զսիրտս՝ ընդ բռ-
նութեամբն ունին, այլ միայն իբրև զծառայս ունիցին
զայնոսիկ, և ՚ի կենցաղօգուտ գործս ՚ի կիր առցեն.

ԳԻՇԵՐ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Որպիսի՞ ինչ էր եղանակ կառավարութեան հա-
ւուն քո. քանզի խոհեմութիւն առն՝ ՚ի բարեկարգ-
կառավարութենէ նորին յայտ ցուցանի.

ՅՈՎՍԷՓ

Գիտէր նա քաջ զբարւոք եղանակ կառավարութեանն. Թող զոր 'ի հօրէն իւրմէ ուսեալն էր, 'ի քաջիմաստն Աբրահամէ, այլ առաւել եւս բազմամեայ կենացն փորձառութեամբ՝ խելամուտ էր յայնմ. Թէպէտ ոչ 'ի գաւազան արքունի ճոխանայր, այլ յիմաստութենէ և 'ի քաջ կառավարութենէ նորին պատկառէին Թագաւորք. Գերդաստան նորա բազկանայր 'ի բազմութենէ ծառայից, աղախնեայց և սպասաւորաց. որք այնպէս իմն կամակար յօժարութեամբ կատարէին իւրաքանչիւր զպաշտօն իւրեանց. զի ոչ ինչ բնաւ լսելի լինէր 'ի նոսա տրտունջ և բողոք. Իւրաքանչիւր ոք որոշեալ կարգեալ 'ի գործ սպասու իւրում, մի զմիով եկանէին ժրութեամբ և սիրով 'ի գլուխ տանել զպաշտօնն, և զառաջինն ընդունել զգովեստ Տեառն իւրեանց.

“Օ՛ի զի՞նչ այլ ինչ իցէ Թագաւորութիւնն, ասէր ինձ նա յաւուր միում՝ զկառավարութենէ խօսելով, բայց եթէ գերդաստան մեծ և ընդարձակ, զմի և զնոյն ունելով կառավարութեան ձեւակ. Բանզի հայրն՝ կամ որ գլխաւորն է 'ի գերդաստանին, որում հաւատացեալ իցէ կառավարութիւնն, պարտի աչալուրջ տեսութեամբ հայել ընդ ամենեսին. մի օրինակ խնամ տանել առ ամենայն անհատ. ո՛չ զոմն սիրել և զոմն ատել, այլ զարդարութեանն զկշիռ 'ի ձեռին ունելով՝ հաւասարապէս տարածել 'ի վերայ ամենեցուն զհայրագորով խնամոցն զզգեստ, և միով սիրով սիրել և շահել զսիրտս նոցա. Եթէ ոք 'ի յանցանս գտանիցի, դատել զնա անաչառ քննութեամբ՝ առաջի առնելով նոցին զյանցանսն, թէ եւ

յառաւել մերձաւորաց և 'ի ջերմ սիրելեաց ոք իցէ, և մի երբէք խնայել 'ի նոսա, զի մի ատելութիւնն 'ի նոսա արմատասցի, և կողմնապահութիւնն գլուխ 'ի վեր ամբարձցէ. Այլ անվարձ և անպսակ թողուլ զհաւատարիմս և զառաքինիս, որպէս զի նախանձ 'ի սիրտս այլոց արկցի այնպիսի ոք լինել և ինքեանց. և ոչ գեր 'ի վերոյ քան զարժանն պսակել, զի մի զարտուղեսցին յուղղութենէ, և 'ի հպարտութիւն հատանիցին.

„Չէ պարտ բնաւ հօր կամ թագաւորի յանհոգութեան հանգչել, ոչ զտիւ և ոչ զգիշեր, յորում ամենեքին քաղցր 'ի քուն լինին. Իսկ ինքն աղուեստ քնովն միայն յագեսցի, և մի 'ի խոր խորդայցէ, զի մի 'ի դառնութիւն ինքեան քաղցրութիւնն փոխարկեսցի. Քանզի՝ թէպէտ և տէր է նա, այլ գիտասցէ՝ զի քան զծառայսն ծառայագոյն է. և որպէս նոքա գուն գործեն կատարել զպարտուպատշաճ ծառայութիւն իւրեանց, նոյնպէս և նմա պարտ է անհանգիստ տքնութեամբ հոգալ զկարեւոր պէտս նոցա, յամենայնի բարեբարել, կրթել զանկրթութիւն մտաց նոցին յուսումն գիտութեան, քաղցրացուցանել 'ի քիմս նոցա զառաքինութեանն զճաշակ, և գործով 'ի նոյն պինդ կալով ինքեան.

„Օրինակ կառավարութեանս յայտնի իսկ և 'ի հովուս երեւի. զի որպէս նոքա զհօտս իւրեանց արածեն, նոյն և թագաւորք պարտին ըստ օրինակի նոցին ընդ ժողովուրդս իւրեանց վարիլ. Հովիւք ջանան միշտ գտանել մարմանդս դալարազուարճս և խոտաւէտս, պարարել անդ զխաշինս իւրեանց. զգուշանան մեծապէս, զի մի տապ արեւուն նեղեսցէ զնոսա. հանգուցանեն 'ի միջօրէի 'ի ծմակային ուրեք և 'ի ջրարբի վայրս, ուր և զծարաւ նոցին հատանիցեն. Եւ յետ նոցին զհարկաւոր դարմանսն մատակարարելոյ, թողուն

զնոսա յորոճս իւրեանց. Բայց ինքեանք և ոչ յայնմ ժամու ՚ի հանգստի կան, այլ ելեալ ուրեք ՚ի բարձրաւանդակ տեղւոջ, մինչ զաչս յածեն շուրջ զխաշամբքն և զգուշանան զի մի ՚ի գայլոցն նենգիցին. հնչեցուցանեն և զորինգս հովուական նուագաց, որպէս զի լուեալ գազանացն ծանիցեն՝ եթէ ոչ թափուր կայցեն հօտքն ՚ի հովուէն իւրեանց. Եւ ընդ երեւել գայլոցն և վնասակար կենդանեաց, անձամբ ելանեն հովիւք ախոյեան ընդ առաջ նոցա, ցուպ ՚ի ձեռին յարձակեալ սաստկել զնոսա, կամ ՚ի փախուստ արկանել, որով ազատին հօտք ՚ի կեղեքչաց և յափշտակողաց. Վասն որոյ և նոքա ՚ի ձայն հովուին իւրեանց՝ կամովին մատուցանեն զկաթն և զասրաբոյս բերս իւրեանց.

„Աւասիկ քեզ հովուութեանն գործ և եղանակ, որ ամենեւին մի և նոյն է ընդ թագաւորութեանն ՚ի կառավարութեան մասին. ուստի ՚ի միտ առ, մանր զննեա զհովուական տնտեսութիւնն, և որով օրինակաւ վարին ընդ խաշինս իւրեանց՝ յուշի կալ, և ըստ այնմ վարեսջիր՝ յորժամ կարգեսցէ զքեզ Աստուած իշխան ՚ի վերայ ժողովրդոց. Մի՛ և մի բնաւ ծանրութիւն ՚ի վերայ արտեւանաց քոց տիրեսցէ, և մի՛ զնուիք զանց արասցես, մի՛ անզգուշաբար զհեղգութեան և զանփութութե՟ քնով անկանիցիս. Քանզի՝ որպէս գայլք յանկարծ յապուշակի յարձակին ՚ի փարախս խաշանց ՚ի յափշտակել զգառինս, և ՚ի մտանել նոցին՝ ցրուեալ վտարեն զնոսա այսր անդր. նոյնպէս յանզգոյշ լինել թագաւորաց՝ մոլութիւնք ախտարծարծք նմանեալ քանասար գայլոց, մուտ գտեալ սպրդեալ ՚ի մէջ ժողովրդոց, բառնան ՚ի նոցանէ զբարեմիտ հնազանդութիւնն և փեռեկտեն ՚ի միմեանց, որոյ պատճառն է նախազգուշութեանն պակասութիւն.

„Իբրու մարգագետին դալարագեղ և զուարճալի գործեա զիշխանութեան քո զերկիր, քաղցրահայեաց և սիրալիր դիմօք և բարերար կամօք ընդ նոսա վարելով. Անարժան է արքայական Թագին՝ որ զաւուրս իւր անցուցանէ առանց ումեք բարերարելոյ, որով կարէր գրաւել յինքն զսիրտս ժողովրդոցն. և նոցա զնոյն երախտիս յիշելով միշտ, քաղցրանայ նոցին հնազանդութեանն լուծ, և ինքնակամ մատակարարեն զկարգեալ տուրս իւրեանց.

„Արժանիկ է արդարեւ Թագաւորութիւն, եթէ այսպէս բարեկարգեալ իցէ, և Թագաւոր՝ որ գիտիցէ զօրէնս անձինն սեփականեալ, և ընդ ժողովրդեան իւր հայրաբար գթով և խնամով վարիցի. Քանզի կեանք Թագաւորի ոչ վասն անձինն եւեթ է, այլ առաւել վասն անդորրութեան հպատակացն, որոց ակն հաստատեալ յիրաւունս և 'ի բարեսրտութիւն Թագաւորին, աճին և երկիւղիւ մնան 'ի հլութեան, զգուշանալով միանգամայն յամենայն առթէ յանցանաց և յանօրէնութեանց, զի մի վշտացուսցեն զբարեսիրութիւն Թագաւորին իւրեանց. Այս երկիւղ ոչ ծառայական ինչ է, այլ որդիական, զի հայրական գութք սրտի Թագաւորին՝ որդիացուցանէ ինքեան զամենայն հպատակսն. Նա մանաւանդ՝ արդարակորով օրէնք նորա և բարեսէր կամքն վտարէ 'ի բաց 'ի Թագաւորութե-սահմանացն զամենայն ախտս գաղտնայինս, և զմոլութիւնս վայրենամիտս. և երկիր՝ որ ընդ այսպիսի Թագաւորի քաղցր ողորմածութեամբ և արդարութեամբ կառավարիցի, ծաղկեալ բարգաւաճի բեղմնաւոր անդաստանօք, վաճառականութեամբ, և գեղարուեստիւք. Աստուածային ողորմութեան է նշանակ՝ վիճակիլ երկրի իրիք Թագաւորի իմաստնոյ, առ որով առաքինանան ժողովուրդք, հարստանան աղքատք,

պայծառանման իմաստութեամբ , և յամենայն բարիս ամենեքին առ հասարակ վայելեն . Այս է նշան բարեխնամ այցելութեանն Աստուծոյ , զի ամենայն պարգեւք և տուրք կատարեալք՝ յերկնից 'ի մեզ իջանեն .

„ Ջանա ուրեմն որդեակ իմ բարեսուն , յառաջ քան զամենայն ինչ հետեւել կամացն Աստուծոյ , և յամենայն կեանս քո բոլորապտուղ նուիրել զքեզ 'ի հաճոյս նորին . արիանալ համբերութեամբ յամենայն վիշտս և 'ի տառապանս . և իբրեւ ժամանեսցես յաթոռ իշխանութեան , բարերարութեամբք քովք քաղցրացուսցես զիշխանական զսանձսն առ ամենեսին . ուսցին 'ի քէն ատելիք քո , և պատկառեսցին , և 'ի չարութենէ իւրեանց զգաստացեալ՝ ապաշաւեսցեն . Գանձեա 'ի խորս սրտի քո զբարեպաշտութեան և զհեզութեան սերմունս . մի՛ յօժարիցիս երբէք 'ի վրէժխնդրութիւն անձինդ վնասուց , այլ ներեսջիր զամենեցուն առ քեզ զյանցանս : զի այս է ազնուական վրէժխնդրութիւն . Եւ զայր քաղցրութեան զարդ՝ իմաստունք և հզօրք եւ եթ ճանաչեն . իմաստունք՝ զի քննելով զգործս վնասաւէր մարդկան՝ գիտեն եթէ տգէտք են . և հզօրք՝ զի ոչ կամին ընդ անարիս և ընդ անարգս 'ի պայքար մտանել . Վասն որոյ՝ ծանրութեամբ բարուցն և ներողամտութեամբն ցուցանեն յայտ արարեալ զանձանց առաքինութիւն . քանզի՝ ոչ վարձատրին յարդարադատ դատաւորէն՝ որք չարիս փոխանակ չարեաց հատուցանեն , զորս պարտ էին յանձնել 'ի դատաստանն Աստուծոյ , և ոչ ըստ օրինակի նոցին՝ վրէժխնդրութեամբն 'ի չարիս հատանել .

„ Իսկ դու ոչ այսչափ միայն , այլ և պարտիս 'ի մտաց քոց 'ի բաց որոշել զչարեացն յիշատակ՝ զոր ընդունիս . և այնու սովորեցուցեալ զքեզ յանյիշա-

չարութիւն ; սիրեսցես և զթշնամիս քո , և յաճախեսցես առ նոսա բարերարութեանց քոց զհանդէս „ .

Տեսանե՛ս ո՛ կենակից իմ Նանէթ , զի՛արդ յառաջատես լինէր կանխագիտութեամբն իւրով ապագայից , գուշակելով զբարձրանալն իմ յիշխանութիւն . Յայնժամ ոչ բաւական լինէր միտք իմ , զի՛նչ արդեօք ցուցանիցէ բառդ Իշխան . զի գոլով իմ եղբարք երիցագոյնք քան զիս հասակաւ , 'ի խոնարհութեան միշտ զանձն ունէի , ցանկ զցածութեամբ գայի , և զծառայիցն յանձին բերէի զկերպարան , յամենայնի զկամս նոցա կատարելով . Եւ խնդրէի յԱստուծոյ ուխտիւք՝ հաստատել յիս հոգի խոնարհութեան . քանզի լաւ համարէի տարաժամ մահուամբ 'ի կարգս գերեզմանականաց գրիլ , քան ամբարտաւանութեամբ բարձրանալ յաթոռ իշխանութեան .

Այս էին իմ յայնժամու խորհուրդք , և այսօրիկ պտուղք՝ զոր քաղէի 'ի բանից հաւուն իմոյ . իսկ այժմ քաջ գիտեմ եթէ զի՛նչ կամէր նա ասել ինձ , նկարելով զամենայն հանգամանս վիճակի իմոյ՝ յորում այժմ գտանիմ . Ապա սիրելի իմ , փոյթ 'ի մէջ առցուք և մեք կրթել զորդիս մեր . ուսցին նոքա նախ կառավարել զանձինս իւրեանց , իշխել կրից , պարտել զհպարտութիւնն 'ի ձեռն խոնարհութեան , ուսուցանել անձանց անյիշաչար լինել առ ընկերացն պակասութիւնս , և այսպէս յարդարել զինքեանս 'ի գործ կառավարութեան , և լինել յիւրում ժամանակի պիտանաւոր առ մարդկային ազգն .

Ա՛րբէ , ո՛րքան ծնողք չգիտելով զհանգամանս բարւոք կրթութեան , անպիտանացուցանեն զորդիս իւրեանց . սնուցանեն 'ի սիրտս նոցին զամբարտաւանութիւնն , որով զօրանայ 'ի նոսա անդստին 'ի մանկութեան սնափառութեանն ախտ , Կատարեն յամենայնի

զկամս նոցա, և առնեն զհաճոյս մտաց նոցին. որոց եթէ հանդիպեսցի հասանել իշխանութեան, քանի՛ անմեղ անձինս զոհեսցեն կռոց իւրեանց, և յարիւն նոցին լուասցեն զախտս մոլութեան իւրեանց. տագնապեսցեն զժողովուրդն բռնութեամբ, և ՚ի կամել ՚ի նոցանէ կթել զկաթն, ՚ի սաստիկ ճմլելոյն հոսեսցի արիւն, որով հեռանայ իսպառ ՚ի նոցանէ բարեմտութիւնն, և բռնութեան իշխանացն յաջորդեսցէ անհնազանդութիւն և ընդվզումն ժողովրդոցն. խափանեսցին այնուհետեւ օրէնք, կոխան եղիցին իրաւունք, յորոց ծագեսցի քանդումն քաղաքաց և կործանումն թագաւորութեան.

ԳԻՐՔ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Ի՞նչ են արդար դատողութիւնն, և պարտք դատաւորի.

ՅՈՎՍԷՓ

Ի պատասխանի հարցուածոյդ տաց քեզ ՚ի բանից անուանի հաւուն իմոյ, զորս արտասուագին և յոգւոց հանութեամբ ուսուցանէր ինձ. «Բազմացեալ մարդկան՝ ասէ, ՚ի վերայ երկրի, յետ աքսորանացն ՚ի փափկութեան վայրէն, չարացան, անօրինեցան, զգազանացն ստացան յանձինս զդաժանութիւն, և զմարդկութեանն

մոռացեալ զպատիւ՝ նմանեցան նոցա. և որ քան զոր և դարուց 'ի դարս յաճախեն և առաւելուն թիւք անօրէնութեանցն. Իբրև աղարտեցին նոքա զյարգ բանականութեան իւրեանց, անհնարին եղև յետ այնորիկ 'ի միտ առնուլ զանվայելչութիւն գործոց իւրեանց և զգազանային բարս. Այսոցիկ հետևեցան պատիժքն աստուածային, և համառօտեցան կեանք նոցա, որպէս զի ուսցին գոնէ այնու, և խրատեսցին և եկեսցեն յուղղութիւն՝ մարդկային օրինօքն կենցաղավարելով. Իսկ նոցա թողեալ զայն ճանապարհ, իւրաքանչիւր ոք ջանայր իշխել 'ի վերայ եղբօրն, կեղեքել և յափշտակել զինչս նորին, յաղթահարել զանձնիշխանական կամս մարդկան բուռն բազկաւ և ահեղ զօրութեամբ.

„Մինչ զայս օրինակ այր զարամբ ելանէին իշխել 'ի վերայ միմեանց, յարեան բռնաւորք՝ որք հզօրագոյնք գտեալ քան զայլս, ոչ միայն զանհնազանդսն և զմբոստացեալսն բարձին 'ի կենաց, այլ խիթացեալ և երկուցեալ 'ի հպատակելոցն և յայլոցն բռնութենէ, զկամս իւրեանց հռչակեցին իբրու ընդհանուր օրէնս 'ի շահ և 'ի պահպանութիւն հասարակաց, որք և հաճելի համարեալ իւրաքանչիւր մտաց, հնազանդութեամբ գնային ընդ օրէնսն, և մեծ գրէին զնոսա քան զյատուկ կամս իւրեանց. զորս առաւել ևս բարեկարգեալ և վաւերացուցեալ իմաստնոց առ բարեկարգ թագաւորօք, հրատարակեցին առ ամենեսեան՝ վարել այնու յամենայն գործս իւրեանց. Արդ՝ թէպէտ և օրէնքս այս իրաւացի՝ համաձայն են ուղիղ և բանաւոր մտաց և յարդարութեան վերայ հաստատեալ կան, այլ մեք հանապազօր զընդդէմն տեսանեմք գործիլ 'ի մարդիկ. քանզի՝ դժուարին է յոյժ զարդար վճիռ հատանել և արդարապէս դատել, բազմադիմի արգելք

խափանարարք ընդ առաջ լինելով, եթէ 'ի կողմանէ յանցաւորաց և եթէ 'ի կողմանէ դատաւորին.

„Ի կողմանէ յանցաւորաց յառաջ գան նախ նենգութիւնք և թաքնութիւն, որով փութան ծածկել զյանցանս. և 'ի հաստատութիւն բանից իւրեանց՝ կաշառելով իմն սուտ վկայս 'ի ներքս ձգեն, և գողանան զճշմարտութիւնն բիւրակերպ խարդախութեամբք. Իսկ արդարութիւնն՝ որ 'ի տիրել անիրաւութեան 'ի վերայ երկրի՝ խոյս տուեալ կայ յառաջին բնակութիւն իւր յերկինս ուստի իջեալն էր, բազմեալ 'ի գերագահ աթոռ յաւիտենականութեանն, ակնապիշ դիտէ յայս ատեան, հիացեալ ապշի և սարսափի ընդ հնարս անիրաւութեանն, որք գործին 'ի յանցաւորաց անտի. Զանիրաւութիւնն արդարութեան կերպարանօք 'ի մէջ բերեալ՝ պատրեն զդատաւորն. և զմտացն խիղճ՝ որ ընդդէմ անօրէնութեանն բողոքէ և պաշտպան կայ արդարութեան, ջանան անհետ առնել 'ի մտաց, զի մի զդալկութիւնն յերեսս յանցաւորացն նկարեալ՝ անիրաւութեանն մատնիչ լինիցի. Վկայք՝ որք զանձինս արդարութեան ցուցանեն դոլ պաշտպան, սակայն գործք նոցին՝ եթէ շեղեալ և թիւրեալ իցէ յարդարութենէ, յայտնեն յակամայս զճշմարտութիւնն. զի ահ երկիւղի պաշարէ զմիտս նոցա, կարմրութիւնն տեղի տայ յայտիցն, սիրտ նոցին բաբախեալ դողդոջումն յանդամսն պատճառէ. Եւ ո՞ արդեօք զայսոսիկ 'ի դէմս ածել կարիցէ, եթէ ոչ՝ անաչառ տեսութիւն դատաւորին, որոյ անքթիթ պշուցեալ յերեսս յանցաւորին, իմանայ զնենգութիւնն, և զթաքուն ճշմարտութիւնն 'ի դուրս ածէ յարտաքին նշանաց կրից նոցին.

„Իսկ 'ի կողմանէ դատաւորին առաւելագոյն խոչք և խութք ծագին առ 'ի անաչառ դատումն, Քանզի՝

եթէ կրիւք զգածեալ իցէ դատաւորն, մթագնեալ աչացն ոչ զօրէ տեսանել զուղղութիւնն. Եթէ արծաթսիրութեամբն կաշառակուրծ լեալ իցէ, ոչ ինչ խնայէ յարիւն անմեղաց, և զմեղապարտն արդարացուցանէ. Եթէ յանցաւորն ՚ի կարեւոր սիրելեաց ոք իցէ կամ ՚ի ծանօթից, և կամ աղաչաւորք բազումք իցեն ՚ի կողմանէ յանցաւորին, յայնժամ ՚ի բաց թողեալ զանաչառութիւնն՝ թիւրէ զդատաստանն փոխանակելով զանիրաւութիւնն ընդ իրաւանց.

„Տեսանես որդեակ իմ քանի՜ դժուարին է ՚ի մէջ այսքանեաց նենգութեանց և խարդախանաց յերեւան ածել զուղղութիւնն. Զայս ամենայն քաջիկ իմն կշռելով ՚ի միտս՝ տպաւորեա յանձին քում, զի կայ և քեզ յաւուր միում լինել դատաւոր ՚ի վերայ ժողովրդեան և դատեսցես զազգս բազումս. վասն որոյ գիտեա նախ առաջին, զի ՚ի սկզբանէ ոչ տուաւ մարդկան աթոռ դատողական, այլ Աստուած՝ որ է Ճշմարիտ և արդար դատաւոր, դատի զամենայն ըստ արդարութեան իւրում. Աստի յորժամ հասանիցէ քեզ բազմիլ յաթոռ ՚ի դատաստանի, զմտաւ ած, եթէ փոխանորդ կաս Աստուծոյ, յորմէ խնդրեսցես անդուլ աղօթիւք և ջերմ խնդրուածովք տալ քեզ լուսաւորութիւն մտաց դատել ըստ արդարութեան. Բացցէ Տէր զաչս հոգւոյ քո առ ՚ի Ճանաչել զանիրաւս ՚ի փրկութիւն արդարոց. կալ դու նախ զերկիւղ ՚ի սրտի քում առաւել քան զյանցաւորն. եթէ ոչ ուղղութեամբ հատանիցես զվճիռն, այլ ակն առնուցուս երեսաց, անկցիս ՚ի դատաստանն Աստուծոյ, որոյ սրեալ է արդարութեանն սուր՝ առ ՚ի անաչառապէս պատժել զդատաւորս անիրաւս.

„Իսկ թէ խնդրիցես ազատ լինել ՚ի պատուհասից, զհետ երթ վարդապետութեանս իմում. ընդ

երկար քննութեամբ արկ զյանցանս մեղապարտիցն . այլ և այլ դարձուածովք բանից փոխեալ զկերպարան հարցուածոցդ , մանր կրկտեա զամենայն պարագայս իրին , ջանալով գտանել ինչ լուսաւորութիւն և հետս ճշմարտութեան . Այլ եթէ չիցէ հնար առ օրէն իմանալ զստուգութիւնն , կալ զյանցաւորն առ քեզ 'ի դիպահոջ , և 'ի ձեռն հաւատարիմ սպասաւորաց փորձեա զնա . Զվկայսն՝ որք 'ի հաստատութիւն գործոյն ընդ առաջ մատչին , խեղդիւք չըթանց արկ 'ի պէսպէս հարցուածս . և մի երբէք հաւատասցես միոյ վկայի , այլ երկուց կամ երից անձանց վկայութեամբ հաստատեսցես զամենայն բան , արկեալ և զնոսա մէն մի առանձինն 'ի բովս մանրաքնին խուզողութեան .

„Բաց յայսոցիկ և դու խնդրեա յԱստուծոյ աղօթիւք յայտնել քեզ զճշմարտութիւնն . զի որք կամիցին պաշտպան կալ ճշմարտութեան , ընդունին անշուշտ յԱստուծոյ օգնականութիւն և լուսաւորութիւն մտաց , որով ըստ արդարութեան դատելով վարձատրին արժանապէս յԱստուծոյ .

„Մի երբէք ակն առնուցուս երեսաց հարստի , կամ բարեկամի քո . այլ քննեա անաչառապէս ըզգործս նոցա զոր յանցեան , և ըստ այնմ դատեսջիր . Զվճիռ արդարութեան՝ զոր հանես 'ի բերանոյդ , դրոշմեսջիր 'ի մատենի , որպէս զի՝ և յետագայք քո և յաջորդք քո տեսեալ զճշմարտութիւն և զարդարակորով զդատաստանս քո՝ գովեսցեն զքեզ , և ինքեանք նմին հետևեսցին . Մի երբէք յայտնեսցես զխորհուրդ քո մինչև հատեալ զվճիռ պարտուցն , քանզի նենգամիտք բազում անգամ գիտեն գողանալ այնու զիրաւունս , և փոխեն զդատաստանն . Իսկ եթէ կամիցիս եւս անդատապարտ զանձն քո ունել ,

հարցջիր զգիտակցութիւն հոգւոյդ յառաջ քան ըզվճիռ ՚ի վերայ ածել․ մանաւանդ՝ յորժամ մահուան իցէ վճիռն, որ քան զամենայն դատաստանս սարսափելի է դատաւորաց․ Զայս ամենայն եթէ ՚ի գործ դնիցես՝ ազատ կացուցանես զքեզ ՚ի խղճէդ, և լինիս դատաւոր արդար․

„Նա՛բէ, քանի՜ մեծ երջանկութիւն էր ժողովրդեան քում, ունելով զքեզ կարգեալ դատաւոր ՚ի վերայ իւրեանց՝ իմաստութեամբ կառավարելով, և յաստուածպաշտութեան և յերկիւղածութեան հաստատելով զմիտս քո, և քեզ յաճախէին փառք, և հուչակ բարելաւութեան քո սփռէր ընդ ամենայն երկիր․ Այլ ՚ի միտ առ, վիշտք և տագնապք զանձն քո ունիցին․ զի զոր օրինակ ցորեան, եթէ ոչ կասուցու ընդ կամնասայլն, ոչ որոշի յարդից․ այսպէս և դու ճմլեսցիս ընդ ծանրութեամբ բազում վշտաց և անակնկալ դիպուածոց․ այլ դու մի՛ երբէք խղեսցես բարեյոյս ակնկալութեան քո զսամեռնս․ քանզի անցաւոր են վիշտք, ընդ որս եթէ ոչ անցանիցես իբրև ընդ փորձ, ոչ հասանիցես փառաց․ Կա՛ց ապա և մնացիր անսասանելի յուսով առ Աստուած, որոյ զօրութեամբն իմաստնասցիս և համբերել կարասցես”․

Տեսե՞ր սիրելի կենակից իմ, զեղանակ արդար և անաչառ դատողութեան, զիա՛րդ պարզ և մեկին առաջի արկեալ իմ՝ երկեղուկս տայր մտաց իմոց․ Քանզի դատաւորն գոլով մարդ իբրև զմեզ, ոչ կարէ քննել զսիրտս, ուր ղօղեալ կայ ճշմարտութիւն․ ՚ի վերայ այսր ամենայնի երկիւղալից կայ առաջի նորա յանցաւորն․ իսկ զի՞նչ պարտ է ասել զերկնաւոր դատաւորէն․ քանի՜ ահարկու չիցէ դատաստան նորին, յորմէ չկարէ ինչ մնալ ՚ի թաքստի և ՚ի ծածուկ․ Տեսանեն աչք նորա զամենայն, մերկապարանոց երևին

նմա ծածկեալքն, և իբրու 'ի տունջեան ակն յայտնի փայլին առաջի նորա ամենայն գործք մարդկան. Զունի նա պէտս վկայից, զի խիղճ մտացն 'ի ներքուստ, և գործք յանցանացն արտաքուստ մատնանիշ ցուցանեն զյանցաւորն: Այլ վայ է ինձ և եղուկ եմ ես, զի թէպէտ ըստ խրատու նորին կատարեմ միշտ զպաշտօն դատաւորութեան իմոյ, սակայն երկիւղ անհնարին տագնապէ զիս. վասն որոյ խնդրեսցուք յԱստուծոյ միաբանութեամբ՝ տալ մտաց իմոց զլուսաւորութիւն, դատել զամենեսին արդարութբ, ոչ շահախնդրութբ ինչ շարժեալ 'ի նոյն, այլ 'ի պարտաւորութենէ պաշտօնիս, յոր կարգեաց զիս Աստուած.

Այլ որոց 'ի լսել ինչ զումեքէ՝ եթէ ճշմարիտ և եթէ սուտ, համարձակ մատչին 'ի դատողութիւն, արձակեն զլեզու իւրեանց դատափետ առնել զնա. բամբասեն, չարախօսեն, արհամարհեն, և իբրու փողով հնչեցուցեալ զանուն նորա անարգանօք հասուցանեն 'ի լսելիս ամենեցուն. Ո՛հ կարի է յանդգնութիւնս. եթէ յիրաւի յանցուցեալ իցէ այլն, դատեսցի նա 'ի դատաւորէն կարգելոյ յարքունուստ. իսկ եթէ ընդդէմ Աստուծոյ մեղուցեալ իցէ, ըստ արդարութեանն Աստուծոյ և դատեսցի. Ապա կարկեսցուք մեք զլեզուս մեր, ափ 'ի բերան լիցուք, և մի անխորհրդաբար յառաջ մատիցուք 'ի դատել զընկեր մեր. մի զլեզու մեր զերկրաւ ածցուք. այլ միայն զանձինս մեր և զմեր գործ քննեսցուք, և մի զայլոց, եթէ չէցեմք կարգեալ դատաւոր 'ի վերայ ուրուք. քանզի՝ որով դատաստանաւ որ դատէ, դատեսցի յանաչառ դատաւորէն, որոյ արդարութեանն կշիռ ոչ երբէք վրիպէ.

ԳԻՇԵՐ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Յի՞նչ հիմնէր նա զտնտեսութիւնն .

ՅՈՎՍԷՓ

“ Սեփհական աթոռ տնտեսութեան խոհեմութիւն է , ասէր ինձ հաւն իմ , և քաջինկ իմն արթնութեամբ 'ի ձեռին առեալ զատոնին կառավարութեան զանձսըն , հոգալ խոհեմութեամբ զպէտս ըստ ժամանակին , ըստ հարկաւորութեան և ըստ տեղւոյն :

„ Որդեակ իմ , ասէր ինձ նա , եթէ ոք քաջ ուշ ունիցի կառավարութեան տնտեսական գործոց , կազմէ նա զտուն իւր իբրեւ դրախտ զուարճալի ամենայն բարութեամբք առլցեալ : Որ օրինակ պարտիզպանք ամենայն ջանիւք ընդ քիրտն հարեալ տքնին չթողուլ ինչ բնաւ տեղի խոպանացեալ և մոլաբոյս խոտիւք անտառացեալ , զորս 'ի բաց խլելով յարմատոյն , փութան յարդարել պարսպօք զշրջապատս պարտիզին , և ինքեանք զցայգ և զցերեկ կան 'ի պահպանութիւն նմին , զի մի վնասակար գազանաց և թշնամեաց խրամատեալ մուտ 'ի ներքս տացեն եղծանել և յաղարտ վարել զգեղեցիկ նորատունկսն : Նոյնպէս պարտ է առնել և տնտեսին . եթէ ոք 'ի ծառայից տանն դանդաղ իցէ , և ոչ փոյթ իւրում պաշտօնին ունիցի , պարտի զնա արձակել 'ի բաց , զի մի և յայլսն վարակեսցէ զհեղգասիրութեանն ախտ , և փոխանակ նորա զայլ ոք ածել՝ որ ժիր և փոյթ 'ի գործսն իցէ :

„Իբրեւ պարիսպ ամուր զհայեցուած իւր շուրջ ածեալ զտամբ եւ զպարսաւորօք, լինել զգոյշ զի մի անկարգութիւն ինչ մուտ գտեալ 'ի նոսա վնասուց պատճառ լիցի. Ոչ արժան խիստ եւ ահարկու գլխօք վարիլ ընդ նոսա, այլ հեզութեամբ եւ սիրով, եւ պատկառելի զանձն առ նոսա ունել միշտ. Գործ նորա է զամենայն ինչ մանր քննել եւ իմանալ, եւ նախատեսութեամբ զառաջս առնուլ վտանգին՝ արթուն կալով, քանզի յիմարութիւն մեծ է աւաղել զանձն եւ նստել 'ի ցաւս եւ 'ի սուգ յետ ծագելոյ վտանգին. Յամենայնի զմիջինն ընտրելի է, եւ 'ի չափու կարգել զամենայն ախտս. չտալ երբէք տեղի ագահութեան եւ կծծութեան. եւ զբարկութիւնն գլխովին յանձնէ 'ի բաց մերկանալ, զի մի խանգարիցի մտացն ուղղութիւն, եւ արդարութեանն կշիռ զիւրն կորուսցէ զհաւասարութիւն. Պարտ է յամենայնի զմիջին նպատակն առաջի ունել աչաց, այն է՝ բարւոք տնտեսութիւն, որով իմանի՝ 'ի կարգի զամենայն ինչ ունել. Առ այս մեծապէս նպաստէ ըստ օրինի տնօրինել զգործսն, յատկացուցեալ իւրաքանչիւր ումեք ըստ տանելոյն եւ ըստ արժանաւորութեանն զպաշտօն իւր, որպէս զի յօժարութ͞բ առանց ինչ քրթմնջմանց կատարեսցեն.

„Այսպիսի բարեկարգ եւ աչալուրջ զգուշութեամբ ծաղկեալ բարգաւաճի դերդաստանն՝ իբրու թագաւորութիւն ինչ վիճակեալ խոհեմ եւ իմաստուն թագաւորի. Քանզի՝ եւ զի՞նչ զանազանութիւն կայցէ ընդ թագաւորութիւնն եւ ընդ դերդաստանն. ոչ ինչ ըստ տնտեսութեան կառավարութեանն, բայց միայն ըստ քանակութեան. զի դերդաստանն է տէրութիւն փոքրիկ, եւ թագաւորութիւնն՝ դերդաստան մեծ եւ բազմատարած, յորում տնտես է թագաւորն յեցեալ 'ի գաւազան իշխանութեան իւրոյ.

„Այս ամենայն կրթութիւն և քաջ բարեկարգութիւն անհրաժարելի պարտք են ունել հօր, զոր եթէ չիցէ ուսեալ 'ի մանկութեան, անկարանայ վարել զղեակ տնտեսութեան, և առանց խռովայոյզ ալեաց պահել զտունն 'ի խաղաղութեան. Ուստի հարք պարտին խնամ ունել առ 'ի բարւոք վարժել զորդիս իւրեանց յայսմ տնտեսական գիտութեան, որ թէպէտ և առ աչս չթուիցի ինչ, այլ բազում օգտակարութիւնս յինքն ամփոփէ.

„Բազումք զբաղեալ 'ի գործս արտաքին կառավարութեան, ոչ ձեռնհաս գտանին և ներքին տնտեսութեան, վասն որոյ ընտրեն զոմն իմաստուն և հաւատարիմ՝ տնտեսել զառտնին գործս, որում յանձն առնեն զկառավարութիւնն ծանուցանելով նմա զհարկաւոր մասունս. Այսպէս հայր իմ Աբրահամ՝ որ զամենայն աւուրս իւր պարապէր յաղօթս, և հիւրասիրութեամբ ժողովէր զօտարս և զպանդուխտս, և զամենայն գիշեր ընդ քննութիւն աստեղացն հանէր, դիտելով զշարժմունս նոցին, յանձն արարեալ էր զտնտեսութիւն տանն՝ հաւատարիմ ծառայի իւրում Եղիազարայ, որ յամենայնի ըստ հաճութեան կամաց նորա տնտեսէր և վարէր զտունն. Նոյն և որդի նորա՝ զոր տեսանեսդ, զիա՛րդ բարւոք և խոհեմութեամբ կառավարէ զտուն մեր. Այն գունակ և դու կարգեսցիս յաւուր միում լինել տնտես, ոչ 'ի վերայ միոյ տան, այլ որ եւս է՝ 'ի վերայ անհամար ժողովրդոց. Ուստի աչալուրջ մտադրութեամբ ուշ դիր եղանակի կառավարութեան տնտեսին մերոյ. զիա՛րդ զամենայն ինչ ընդ իւրով ձեռամբն ունի նուաճեալ, և խոհեմութեամբ զայնս տնօրինէ ըստ պիտոյից. Ոչ այնոքիկ իւր ինչ են, այլ քան զիւրսն զգուշանայ 'ի պահպանութիւն նոցին, պաշտպանելով և խնամելով յաւէտ

քան զբիբ աչաց իւրոց։ Իշխան թուի նա լինել տանն, ունելով ՚ի ձեռին զկառավարութեան սանձսն, բայց ծառայ է ամենեցուն, զի ծառայաբար և զնոցին պիտոյսն մատակարարէ։ Օրինակաւ անձին իւրոյ ուսուցանէ նոցա զհաւատարմութիւն. ոչ զտիւ և ոչ զգիշեր ՚ի հանգստութեան զանձն ունի, այլ մշտանուէր ՚ի սպասու կայ իւրոյ պաշտօնին. Թանձրութիւն քնոյ ոչ ծանրացաւ երբէք յարտեւանունս նորին, այլ ծանծաղագոյն զքաղցրութիւն քնոյն հատանէ։ Երջանիկ է տունն՝ որում այս օրինակ հաւատարմութեամբ ծառայէ տնտես, և բարեբաստիկ է քան զթագաւորութիւն հզօր, որոյ թեկն ածեալ պերճագունից փառաց և համբաւոյ, տնտես զբարեկարգութեամբ գահուն արարեալ, դուն գործէ, ջան դնէ յաղթել այլոց թագաւորաց, և գերփմամբ նոցին իշխանութեանն՝ փառաւորել զանուն իւր։ Յաղթութիւն մեծ՝ է ՚ի խաղաղութեան պահել զթագաւորութիւն, և ուսումն կարեւոր՝ բարւոք տնտեսութեամբ կարգաւորել զայն։ Ապա ընդարձակեալ զներքին ականն հայեցուած, վստահանայ ձկտիլ ՚ի փոքուէն ՚ի մեծն։

„Տես ապա, որդեակ իմ, որչափ խոհեմութիւն և ուշադրութիւն հարկաւոր է ունել ՚ի տնտեսութեան, զոր եթէ ոք ոչ քաջ կարգաւորեալ ունիցի, զրկեալ զանձն գտանիցէ յամենայն բարեաց, և չարիք խուռն յորդեալ տիրեսցեն նմա։ Մ՛ի և մի մոռանայցես երբէք զպարտս պաշտօնի քո, և մի պատրեալ երեւակայութեամբ դնիցես ՚ի մտի եթէ իշխիցես ողջոյն տան. այլ յուշի կալ՝ զի ՚ի կարգի ծառայութեան ես. քանզի ամենայն իշխող՝ ծառայ է իշխեցելոց։ Ապա քաջ ՚ի կշիռ արկցես զանձն քո, և ծանիցես զպաշտօնիդ հարկսն, զի առաւել եւս խոհականութեամբ ճոխացեալ՝ փոյթ ընդ փոյթ բարձրասցի աստիճան

իշխանութեանդ, և 'ի մանաւոր տնտեսութենէ ամբարձցիս յընդհանուր կառավարութիւն տէրութեան։ Հայեաց յՄղլիապար, որ իւրով հաւատարիմ ծառայութեամբն քան' մեծամեծ շնորհաց արժանի զինքն արար. զի նա միայն մեծութեամբն փառաւոր և երեւելի համարի արդ 'ի մէջ Բրիտանացւոց։

„Այսոյն գիտութիւն պարտիս և դու յանձին ստանալ, առանց որոյ ոչ տուն 'ի բարեկարգութիւն վերածի, և ոչ թագաւորութիւն համբուրէ զերջանկաւէտ խաղաղութիւնն։ Այլ ծանիր և զայս որդեակ իմ, զի բարիք բազում նախանձոտս և հեռս գիտեն առթել ինքեանց. ամենք ջանան ստուերածս ածել 'ի վերայ անուան և փառաց նոցին, այլք՝ խոչ ընդ ոտն նոցա արկանեն, պարսաւելի կացուցեալ զնոսա յաչս ամենեցուն։ Ապա 'ի մէջ այսքանեաց նենգամիտ և չարակնոտ մարդկան անարատ և անկողոպտելի պահել զբարիսն, գործ է մեծի արթնութեան. կայցես ուրեմն առաջի աչաց քոց զամենայն վիշտս տառապանացս, և լաւ համարեսջիր բազում նեղութեամբք և վշտակրութեամբք մահու զրաւել, քան ընդդէմ պաշտօնի քո անհաւատարմութեամբք մեղանչել, զի ուր անհաւատարմութիւն է, անդ ամ̃ չարեաց սկզբունք խուկին։ Անցանեն աւուրքն վշտակիրք, 'ի մոռացօնս ձգին տառապանք, և եթէ 'ի կալանս բանդի արգելեալ իցէ՝ արձակին շղթայք, այլ անհաւատարմութեանն յիշատակ մնայ անմոռաց, և ձգի ազգաց յազգս"։

Տեսանես ո՛ ազնիւ կենակից բարօրութեան իմոյ, եթէ ո՛րքան սրատես էր յապագայ փորձութիւնս, և ո՛րչափ մեծ էր փորձառութիւն նորա ընդ այլ և այլ գործս աշխարհայինս. որոյ ցանկացեալ կրթել զիս յառաքինութիւն, և պահպանել 'ի բազմօրինակ որոգայթից, այնպէս յայտնի և մերկ առաջի իմ նկարէր

զամենայն վիշտս նեղութեանց, ընդ որս անցի մեծաւ համբերութեամբ ։ Հաւատարմութիւնն նախադաս քան զկեանս իմ եդի, և համբերութեամբ իմոյ զի֊նուն յաղթեցի ամենեցուն. և մի միայն մխիթարութիւն էին ինձ խրատք հաւուն իմոյ, զորս յիշելով արիանայի և քաջալերէի յանձն իմ.

Այս և մեք տպաւորեսցուք զհաւատարմութիւնն ընդ տնտեսական սկզբանց ՚ի միտս որդւոց մերոց. Երանի՛ արդարեւ ծնողաց որք կրթեն զզաւակունս իւրեանց յայսմիկ առաքինութեան անդստին ՚ի խա֊կութեան տիս նոցին, ուսուցանելով զեղանակ տըն֊տեսութեան, որով պիտանի և օգտակար անդամս կացուցանեն զնոսա հասարակութեան.

ԳԻՐՔ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Եղանակ կառավարութեանն և տնտեսութեան, ընդ նմին և դատողութիւնն և պարզ դատաւորին՝ զոր ուսոյց ձեզ Իսահակ հաւն ձեր, կարի իմն հաճելի երեւեցան ինձ. քանզի ամենայն բանք նորին և խոր֊հուրդք հիմնեալ կան ՚ի վերայ արդարութեան. սա֊կայն կամէի իմն գիտել և զայն՝ եթէ զի՞նչ խրատ տայր նա ձեզ առ ՚ի բարեպէս վարիլ ընդ մարդկան, և որպիսի՞ ինչ էր ուսումն կենցաղակրթութեան նորին.

ՅՈՎՍԷՓ

Մեծապէս խնամ ունէր նա ուսուցանել ինձ զընկերական պարտաւորութիւնսն, զոր իւրաքանչիւր անհատ ունի առ ընկերսն, իմա առ ամենայն ազգ-մարդկան, առ նմանիս անձին իւրոյ, և ասէր. "Կենցաղակրթութիւնն՝ որդեակ իմ, է ուսումն հարկաւոր և օգտակար մարդկային ընկերութեան. և ըստ որում բառս այս կենցաղակրթութիւն յերից նշանական ձայնից բաղկացեալ է, այն է՝ կեանք, աղու, կրթութի̃, իւրաքանչիւրն ըստ իւրում զօրութեան՝ բաղում ինչ շահաւոր և գլխաւոր գիտելիս յինքեան բովանդակէ, դնելով պարտաւորութիւնս ՚ի վերայ մարդկան կատարել զայնոսիկ.

„Գիտութիւնս այս ոչ միօրինակ պաշտի յազնուականաց, ՚ի քաղաքականաց և ՚ի ռամկաց. քանզի կրթութիւն կենակցութեան, այն է քաղաքավարութիւն և մարդավարութիւն, զանազանի ըստ վիճակաց և կարգաց մարդկան և ըստ ազգս իւրաքանչիւր. ըստ որում մի և նոյն գործ և ընթացք և սովորութիւն գովելի է յազնուականաց, իսկ ՚ի ռամկաց արհամարհելի. ՚ի միոյ ազգէ ընկալեալ իբրու գործ մարդավայել, իսկ ՚ի միւսոյ հերքեալ իբրև խոտան ինչ և անվայելուչ. Որ օրինակ քիմք մարդկան ոչ զմի և զնոյն ճաշակ գիտեն ախորժել, այլ ըստ զանազանութեան քմացն՝ զանազանին և ճաշակք. այսպէս և գիտութիւնս այս ամենահարկաւոր՝ ըստ տարբեր հաճոյից քաղաքականութեան, ազնուականութեան և ռամկութեան, տարբեր ունի և գործս և սովորութիւնս. Ապա առ ՚ի բարւոք ուսանել զայն գիտութիւն և վարժիլ յայն բարեպէս, հարկ է ուշ ունել բարուց մարդկան,

Զի որպէս տեսցուք՝ յերից բանից կազմի անուանս կենցաղակրթութիւն, որում իմանամք նախ՝ եթէ պարտ է ունել վարժութիւն փոքր ՚ի շատէ յամենայն ուսմունս. իսկ կենցաղ՝ այն է կենաց աղու, այսինքն քաղցրութիւն կենաց, բազում ինչ ընդ իւրեւ պարունակէ իմաստս. Զի որպէս կամք և հաճութիւնք մարդկան տարբեր են ՚ի միմեանց, ոմանք յայս և ոմանք յայն հակեալ գոլով քաղցր զգացմամբ, և ոմանք զնոյն՝ զոր այլք դառն համարեալ ՚ի բաց խորշին, առ քաղցունս ունին. Այսպէս ահա ոչ ամենեքին միօրինակ և միապէս վայելեն ՚ի քաղցրութիւն կենաց. զի բառս աղու՝ ոչ միայն նշանակէ զքաղցրն, այլ ճապաղ է իմաստ իւր յայլ և այլ առմունս. և ցուցանէ՝ քաղցր, անոյշ, մեղմ, ախորժելի, հեզիկ և պատրողական.

„Ըստ այսմ իմն և զանունս կենցաղ, որում իմանամք և զաշխարհս. և չիք բառ նշանակիչ որ այսպէս բացայայտ մեզ առաջի նկարեսցէ զաշխարհիս հանգամանս. Քանզի՝ քաղցր թուի նա աշխարհասիրաց, ընդ աղուական ձայնիւն ծածկեալ ունելով զդառնութիւն իւր. Անոյշ համարին զայն՝ որ անուշքն են մտօք, անմտութեամբ անկեալ զհետ խաբուսիկ և դառնորակ անուշութեանն. Մեղմ կարծեն զնա որք ոչ զչափ առեալ են խստութեանն և անագորոյնութեան աշխարհիս. այլ զի՞նչ ասեմ, իցէ՞ ոք ՚ի մահկանացուաց՝ որ չիցէ փորձեալ զնա գամ մի. ոչ խնայէ նա ումեք, և ոչ ակն ածէ երեսաց թագաւորի, ոչ աղքատի, ոչ մեծի և ոչ փոքու, ոչ քաջառողջ տիոց երիտասարդի, և ոչ մանկադեմ գեղոյ կուսի, այլ զամենայն տապարաւ մահուն հնձեալ արկանէ ՚ի խորս անդնդոց. Ախորժելի երեւի ամենեցուն, զի հեշտեաւ տիրեսցէ նոցին կամաց, այլայլելով զմիտս ըստ իւրաքանչիւր հաճոյից. Հեզիկ ցուցանի իւրով հանդարտութեամբն և դան-

գաղութեամբ․ այլ ծանիր՝ զի քան զհոլովումն անուոյ արագագոյն է ՚ի շարժման, և շուտափոյթ գլորմամբն իւրով ոչ զոք թողու կալ միօրինակ յիւրում վիճակի․ Իսկ պատրանք նորին՝ յայտնի իսկ երևին որոց զփորձ առեալ և ուսեալ իցեն, նոյն և իմաստնոց և խոհեմագունից արանց, որք միանգամ և երկիցս պատրեալ ՚ի բազմահնար նենգութեանցն նորին և իմաստնացեալ, խրատեն և զայլս զի մի խաբիցին ՚ի սիրոյ նորա՝ որ լի է ամենայն դառնութեամբ․

„Արդ՝ զայսոսիկ իմաստս նշանակութեան, զոր պարունակէ անունս կենցաղ, պարտիս ամբարել ՚ի մտի քում, որպէս զի մի երբէք նենգիցիս ՚ի պատրանաց նորին, այլ զսանձ խոհեմութեան ՚ի ձեռին ունելով, մտացն մտրակաւ կայթմամբ վարեսջիր զկենաց ընթացս, գիտելով և քննելով զբարս և զվարս ամենեցուն․ Զանզի՝ այլ իմն է եղանակ որով ընդ ծերս վարիմք, և այլ ընդ երիտասարդս և ընդ մանկունս․ իսկ ընդ կանանց դասս ամենեւին իսկ այլազգ․ Ոչ ամենայն ծերք և ոչ ամենայն երիտասարդք համաբարոյք իցեն, համախոհք և համագնացք, այլ՝ այլ և այլ խառնուածք նոցին՝ այլայլէ զբարս և զվարս․ Վասն այսորիկ պարտիս համաձայն կացուցանել զքեզ կենցաղի նոցին և յարմարիլ բարոյիցն․ Սակայն՝ ոչ եթէ համաձայն գըտանիլ գործոց նոցին չարութեան, զոյն կամիմ ասել քեզ, այլ միաբանիլ ընդ նոսա ՚ի սէր և յեղբայրութիւն, քաղցրութեամբ վարելով, խոյս տուեալ յամենայնէ՝ որ հակառակ է բարուց և կամաց նոցին․ ոչ զմոլեկան վարսն յանձին կերպարանել, այլ որչափ հընար է՝ և յանձանց նոցա զայն ՚ի բաց յապաւել ջանալ․

„Եթէ ազնուական ոք իցէ, ցուցցես զքեզ նմին հաճոյ, յարմարելով իմն զշարժումն և զգնացս քո և զբանից տարազ նմին համաձայն, զգուշացեալ յաւէտ

զի մի արուեստակեալ ձեւով լիցի այն, որով համարիցիս ծանակել զնա. Եթէ քաղաքական իցէ, ըստ այնմ զգնացս քո յարմարեսցես. կրթութեամբ վարեսցիս, կշռելով զբանսդ և զգուշաբար առ նա մատեսցիս. Իսկ եթէ գեղջուկ ոք իցէ, մարդասիրութեամբ գնասցես. մի այպանեսցես զնա և մի զծաղր գայցես զանհարթ և զանմարդ բարուք նորին. այլ սիրով ժողովեսցես զնա, և զվաստակաբեկ կեանս և զաշխատութիւն նորին՝ գովելի քան զամենեցուն ցուցցես. Ազգաւորաց՝ զարքայաշուքն հարցես զպատիւ և զակնածութիւն, և իւրաքանչիւր աւագորերոյ՝ զիւրեանցն մատուցանելով զարժանաւայել յարգանս. միշտ ՚ի զուարթութեան, համակ ՚ի բերկրանս կացցես ընդ ամենեսին. մի պակասեսցին քաղցր ժպիտք յայտից քոց պատկառելոց. տխրութիւն և խոժոռութիւն մի երբէք եղիցեն յերեսս քո. թէ և կրիւք ինչ զգածեալ իցես, մի ցուցցես արտաքուստ, զի մի ատելութիւն գտցէ զանձն քո.

„Իսկ իբրեւ այսու օրինակաւ յարգարեսցես զանձն քո, և համաձայն իւրաքանչիւր բարուց և վարուց զքեզ կացուսցես, սիրելի եղիցիս ամենեցուն, և գտցես զքեզ ՚ի ծայրն հասեալ ուղիղ կենցաղավարութեան.

„Բաց յայսցանէ, որդեակ իմ սիրեցեալ, իմաստութեան թեկն ածեսցես, զի և այն ոչ դոյզն ինչ օգնէ քաջի քաղաքավարութեան, նա մանաւանդ՝ հիմն իսկ է այն քաղաքական կենաց. ուստի զհետ լինիր միշտ նորանոր տեղեկութեամբք և հմտութեամբք զարգարելոյ զմիտս քո. և մի երբէք ասիցես՝ զի՞ պիտոյ է ինձ այս ամենայն, վրանաբնակ գոլով քո, և խաշնարածութեամբ և հողագործութ̃բ զկեանս անցուցանելով. Ո՛չ գիտես՝ զի որ այսպէսն խօսի, չգիտէ նա վասն ոյր ծնեալ իցէ մարդ. քանզի՝ կենցաղակաթութիւնք անուն՝ թէպէտ և լայնաբար զնշանակու-

թիւնն ունի, սակայն այն ամենայն պարունակի 'ի բառդ մարդկութեան. Զի զի՞նչ իցէ մարդկութիւնն, եթէ ոչ՝ միօք բանականութեան վարիլ ընդ մարդկան. ուստի որ չիցէ կիրթ 'ի կենցաղավարութեան, հեռի է 'ի մարդկութենէ, զի մարդն կարօտ է միշտ այլոց օգնականութեան՝ զոր կենցաղականութիւնն ընու, ձեռընտու օգնական լինելով 'ի հարկաւորութեան. և որք ուրանանն զայն, ուրանան զմարդկութիւնն.

„Զհետ լեր ապա որդեակ իմ մարդկային պարտաւորութեանց, և 'ի գործ դիր. զարդարեա զմիտս քո իմաստուն գիտելեօք և անցելոց իրացն տեղեկութեամբք. հետեւեա բարւոյն և խոյս տուր 'ի չարէն, և զնմանիս քո 'ի նոյն յորդորեա. և Աստուած որ վարիչ է տիեզերաց, պսակեսցէ յայսմ աշխարհի. Քանզի նա է իշխող ամենեցուն սրտի, և զարժանաւորսն՝ թէ և 'ի հովուութեան և 'ի գձուձ վիճակի իցէ, բարձրացուցանէ 'ի գահ թագաւորութեան. իսկ զանարժանսն՝ թէ և թագաւոր ոք իցէ, հաւասար ընդ աղքատն զնա կացուցանէ.

„Արդ զայս ամենայն սկզբունս ամբարեա 'ի յիշողութեան քում, և գործով ջանա յանձին ցուցանել զկատարելութիւն. մի՛ բնաւ հեռասցիս յաղօթից, և Տէր տացէ զօրութիւն մտաց քոց. միայն սանձահարեա զմարմին քո, և ոչ յամեսցեն շնորհք և իմաստութիւն պարգեւեալ քեզ յԱստուծոյ „.

Այսչափ էր ահա և իմաստութիւն հաւուն իմոյ, սիրեցելոյ իմ Ասանէթ. այսչափ էր և նախատեսութ̃ի մտաց նորա՝ որով գուշակէր զներկայ իշխանութ̃ի իմ, յորում նախակրթէր զիս պէսպէս օրինակօք և խրատաբանութեամբք. Վասն որոյ գոհութիւն և փառս մատուցուք Աստուծոյ՝ որ պարգեւեաց ինձ իմաստուն նախահայր, նախանձայոյզ որդեկացն առաքինութ̃ե,

ԳԻՐՔ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Որչափ ժամանակս վայելեցեր 'ի շնորհս երկնաձիր կենդանութեան հաւուն քո իմաստնայեղցն Իսահակայ.

ՅՈՎՍԷՓ

Կարի յոյժ սակաւ. քանզի՝ յորժամ եկն առ նա հայր իմ հանդերձ ընտանեօք իւրովք, զկարօտութեան իւրեանց լնուլ զփափաք, եկն անդ և Եսաւ եղբայր նորա, որք մեծապէս ուրախացուցին զսիրտ ցաւագնեալ հօր իւրեանց՝ որ յեցեալ կայր 'ի խոր ծերութիւն, որ և սիրով ընկալաւ զընծայաբերութիւն նոցին. ետես զգութ և զգորովայեղց սէր եղբայրական սրտից նոցա, փոխանակ առաջին ժահրալից ատելութեանն, և ցնծացաւ յոգի իւր. Վասն որոյ՝ մաղթէր միշտ յետ այնորիկ յԱստուծոյ արժանի առնել զնա երկնային տեսութեան՝ արձակելով զհոգին յաղցաւոր մարմնոյն.

Ուստի կոչեաց առ ինքն յաւուր միում զհայր իմ, և աւանդեաց նմա 'ի կտակ զվերջին պատուէրս կամաց իւրոց, և ասէ. "Մի՛ երբէք 'ի մոռացօնս արկցես զբարերարութիւնս Աստուծոյ, որ ճոխացոյց ըզքեզ որդւովք և ամենայն բարութեամբք առատապարգև ընձեռելով. և զանուն քո փոխեաց յԻսրայէլ, կամելով ինձ յայտ առնել եթէ 'ի սերնդոց քոց ոչ երբէք ծածկեսցէ զաստուածեղէն իւր տեսութիւն,

և բազումք արժանացին խօսել ընդ նմա, և յայտնել ժողովրդեան զկամս իւր. Փոյթ տար ապա կրթել զորդեակս քո յերկիւղ նորին, զի մի՛ հակառակ աստուածային կամացն ՚ի գործս խիզախեսցեն, և ՚ի բարկութիւն ածցեն զնա”. Զայս խօսեցաւ ընդ նմա, և օրհնեաց զնա կրկին անգամ՝ եդեալ զձեռն ՚ի վերայ նորին. Կոչեաց ապա և զիս առաջի իւր, և ասէ. “Յո՛վսէփ որդեակ իմ, յուշի կալ զոր ինչ միանգամ խօսեցայ քեզ, զի Աստուած մեծացուսցէ զքեզ և փառաց ՚ի փառս ճոխացուսցէ. բայց նախ մնայ քեզ անցանել ՚ի հանդէս փորձութեան, որով տրտմեցուցես զհայր քո, այլ յետ սակաւուց կրկին ուրախացի քեւ, և ալիք նորա քեւ ցնծասցեն. զի դու ես զաւակ օրհնեալ ՚ի Տեառնէ, որոյ աջն ամենակարող պահեսցէ զքեզ”.

Յետ բանիցս այսոցիկ կոչեաց և զեղբարս իմ, և պատուիրեաց նոցա և ասէ. “Եղբարք որդեակք՝ համամիտք և համակամք. մի՛ տայք տեղի մախանաց, և մի՛ ցամաքեսցի ՚ի ձեզ սէրն եղբայրական, և ատելութիւնն փոխանակ նորա եղջիւր ամբարձցէ ՚ի սիրտս ձեր. Մի՛ երբէք վստահասջիք ՚ի զօրութիւն բազկաց ձերոց, այլ միայն յաստուածային զօրութիւնն դիջիք զայս ձեր, որով զօրացեալ բազմասջիք որդւովք և թոռամբք, և ժառանգեսջիք զխոստացեալն ձեզ զերկիրս զայս, յորում կացջիք գոհութեամբ և աստուածպաշտութեամբ. և տեսեալ մարդկան զանբիծ և զանարատ վարս ձեր՝ ծանիցեն եթէ որդիք էք Աբրահամու սիրելւոյ առն Աստուծոյ”. Զայսոսիկ խօսելով ընդ նոսա՝ արձակեաց, և ետ կոչել հօր իմոյ զեղբայր նորին զԷսաւ. և յետ պատուիրանաց և խրատուց՝ հրամայեաց նմա չմեկնել ՚ի նմանէ մինչեւ ցօր մահուն իւրոյ, և թաղել զնա առընթեր հօր իւրոյ

Աբրահամու .

Յետ աւանդելոյ զամենայն զպատուիրանս իւր , եկաց յաղօթս առ Տէր ըստ սովորութեան , և անմռունչ ձայնիւ և լի արտասուօք գոհանալով զմարդասիրութենէն Աստուծոյ և զանճառ պարգեւաց նորին , խնդրէր պահել զսերունդ իւր ընդ հովանաւորութեամբ ամենազօր աջոյն իւրոյ · Զկնի կատարելոյ աղօթիցն՝ եկն յիւր սեպհական վրանն . և անդ բազմեալ 'ի տեղւոջ իւրում , եկին որդիք իւր երկոքին համբուրել զաջ իւր , և գտին զնա աւանդեալ զհոգին . Իսկ մեք՝ որ զնովաւն կայաք , տեսաք զերեսս նորա զուարթ և կայտառ առաւել քան 'ի կենդանութեան իւրում , և կարմրութիւն տակաւին փայլփայլէր յայտս իւր , և ժպիտ քաղցր յաչս նորին ցուցանէր , և ոչ համարէաք զնա ընդ մեռեալսն , այլ ողջ և կական հօր մերոյ և եղբօրն ստուգեցին մեզ զգաղտնի մահ նորին .

Ընդ այն ձայն գուժից և ողբոց նոցին հատաք և մեք յարտօսր դառնութեան , և ճիչ բարձեալ ողբմագին արտասուէաք · զոր լուեալ շրջակայ բնակչացն՝ եկին և խռնեցան անդ , և կոծ առեալ առաւել քան զմեզ 'ի տխրութիւն համակէին · քանզի զնա առ հայր իւրեանց ունէին , և իբրեւ թագաւոր ոք համարեալ էր 'ի միջի իւրեանց · վասն որոյ տխրէին ընդ զրկումն յայնպիսի մարդոյ , որոյ աստուածպաշտութիւնն և արդարութիւն զհամբաւն հարեալ էր ընդ ամենայն երկիրն : Իսկ կանայք նոցին ըստ սովորութե իւրեանց եղերերգական նուագս առեալ 'ի բերան՝ պարէին 'ի դասս դասս որոշեալ , որք զամենեցուն զսիրտս յողբս հատանէին : Իսկ զի՞նչ ասացից զհովուաց և զսպասաւորաց իւրոց , որոց բարձրագոչ հեկեկանք աղիողորմ հեծութեանն՝ ոչ զմարդիկ միայն , այլ և զանբան

կենդանիսն հրաւիրէին յողբս .

Եւ պատեալ դիազարդաց զմարմին նորա և զըմռեալ խնկօք անուշիւք, կատարեցաք զհանդէս յուղարկաւորութեանն և դիահանութեան օրինակ զայս . Յառաջոյ երթային դաս առ դաս հովիւք և սպասաւորք իւր . զկնի նոցա մատաղօրեայք բարձեալ ՚ի ձեռս տաշտս խնկոց անուշից բուրման՝ որք գնային յառաջոյ դագաղին, զոր առանձնեալ ունէին հայր իմ և եղբայր նորա Եսաւ . որոց հետեւէաք մեք ամենայն եղբարք և հօրեղբօրորդիք մեր՝ համակ սեւազգեստեալք, հեղլով հեղաբար արտասուս մինչեւ հասաք ՚ի տապանն . Ընդ տիրեաց լռութիւն իմն որ քան զողբոցն և քան զարտասուացն հեղումն՝ առաւել ցուցանէր զմեծութիւն տխուր տեսարանին . և այն ինչ իջուցանէին զմարմինն ՚ի գերեզմանի, ամենեքին միաձայն աղօթս մատուցաք առ Աստուած վասն հոգւոյ նորին, խնդրելով այց առնել ՚ի հանդերձեալ կեանսն, և քաղցրացուցանել նմա զգառնութիւն դատապարտութեան կնքոյն, և մի թողուլ զմեզ զուրկ յաստուածային ողորմութենէ իւրմէ .

Յայնժամ խնդրեաց Եսաւ ՚ի հօրէ իմմէ առնել զգամբանական բանախօսութիւնն ըստ անդրանկութեանն օրհնութեան, զոր ընկալաւ ՚ի նմանէ . և հայր իմ անդէն գեղեցիկ իմն համարձակութեամբ ելեալ ՚ի մէջ բազմութեան ՚ի լուր և ՚ի տես ամենեցուն խօսեցաւ զճառ սգակիր հանդիսին, առաջի առնելով զբարեխնամ տեսչութիւնն Աստուծոյ, զոր եցոյց առ Իսահակ հայր իւր, և զկամակատար հնազանդութիւն նորին առ ամենայն հրամայեալսն Աստուծոյ . Յորդորեաց և զբազմութիւնն կերպարանել յանձինս իւրեանց զգովանի վարս նորին, և զհամբերութ՟ի նորա, որով երջանիկ կենաց և վիճակի հանդիպեալ՝ արժա–

նայցին և ինքեանք աստուածայնոյն շնորհաց։ Ծանոյց անդանօր և զխաղաղաւէտ փոխումն նորին յաստեացս քաղցրութեամբ աւանդելով զհոգին, որ էր նշանակ առաքինութեանց իւրոց և աստուածահաճոյ վարուցն, որոյ գուշակելով զժամ մահուան իւրոյ, ուրախ և զուարթ երեսօք պատրաստեաց զանձն ՚ի մահ, յաղատիլ ՚ի տաժանակիր կենաց աշխարհիս, և հասանել յանտրտում վայրն երանեալ հոգւոց։

Տեսեալ Քանանացւոց և այլոց մերձակայ ժողովրդոց զգեղեցիկ հանդիսին փառաւորութիւն, զարմացան ընդ միտս իւրեանց, և գովէին զսովորութիւնս, զի ոչ անխնամ արձակեալ զննջեցեալսն մեր, անտես զնովաւ գնայաք յետ վախճանի նոցին, որպէս նոքա՝ որոց չիցէ յոյս նորոգ յարութեան, այլ և գովեստ յօրինեալ բազմադրուատ բանիւք հռչակէաք զյիշատակ նոցին։ Զայսոսիկ տեսեալ նոցա յորդորէին զմիմեանս նորին վարուցն հետեւել և այնպիսում փափաքել մահուան, յորմէ մեծապէս երկնչէին։ Քանզի՝ որոց միանգամ հեշտանան ընդ վայելչութիւն կենցաղոյս, և ՚ի պէսպէս ցանկութիւնս մարմնականս և ՚ի գեղս պագշոտեալ զօշոտին, այնպիսեաց դառն է յաւէտ բաժանիլ յաստի կենացս. իսկ որք ճշմարիտ աստուածապաշտքն են, քաջ գիտեն զի կեանք իւրեանց վիշտք և նեղութիւնք են յաշխարհի աստ, յորոց ցանկանալով զերծանիլ, որպէս ոք որ ՚ի մետաղս բանդից արգելեալն իցէ, փափաքին ելանել առ ՚ի հասանել յերկնական բարին իւրեանց առ բաղձալին Աստուած, որ է մի միայն յոյս իւրեանց և հանգուցիչ ՚ի դառնութենէ վշտացն։

Այսպիսի իմն էին ահա ո՛ քաղցր կենակից իմ, նախահարցն իմոց առաքինութիւնք, և ըստ այսմ արհամարհ աչօք հայէին յաշխարհս վայելչութիւն, որոյ

մեծութիւնն անարգեալ էր առաջի նոցա, և դառնութիւն սրտի անուանէին զայն և տաղտապալից կենաց. Նարուոք Ճանաչէին և կարի յոյժ տեղեակք էին փորձովք իւրեանց սնոտիապատիր գործոց աշխարհիս, վասն որոյ ընտրէին հովուական կենօքն վարիլ ընդ դոյզն վրանաւ, քան ՚ի յարկս բնակիլ հոյակապ և մեծակառոյց շինուածոց. Արածէին նոքա զհօտս անմեղ խաշանց և գառանց, որպէս զի և ինքեանք զնոյն անմեղութիւն կենաց յանձինս ձգեսցեն. Փափաքելի էր յաչս նոցա մահն, զոր համարէին իբրև միջոց ինչ ՚ի մահուանէ ՚ի կեանս փոխելոյ, և առանց նորա անհնար է հասանել ճշմարիտ փառաց. զոր տացէ և մեզ Աստուած, եթէ ըստ նոցին շաւղացն ընթացեալ և առաքինական գործովք լցեալ փափաքեսցուք այնպիսում մահուան.

ԳԻՇԵՐ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Օ՜րինչ է դամբանական բանախօսութի՜ն, պատմեա՛ ինձ՝ աղաչեմ. զի բանք օգտակարք հոգւոյ և մտաց՝ մեծապէս զուարճութիւն են ինձ, և ոչ խնայեմ երբէք զլսելիսն իմ յունկնդրութիւն օգեշահ բանից.

ՅՈՎՍԷՓ

Եւ ես ոչ խնայեմ զլեզու իմ պատմել՝ որոց սրտառուչ կամօք և յօժարութեամբ մատուցանեն

զլսելութիւն իւրեանց , և շահեալ անտի ՚ի բաց գնան . Արդ դամբանական բանախօսութիւնն է Ճառ ընդարձակ , որով շարժէ զկիրս մարդկան յողբակցութիւն , յիշատակելով զվարս և զձիրս հոգւոյ և մտաց վախճանելոյն , որոյ առաքինութեան և աստուածպաշտութեան օրինակաւն յորդորէ զունկնդիրսն հետևել այնմ . Եւ այսպէս սկիզբն արար Խորայէլ հայր իմ իւրոյ բեմբասացութեան .

“ Դժուարին է ինձ ապաքէն այսօր , բանալ զբերան իմ առ դառնութեան սրտի իմոյ՝ զոր պատճառեաց ցաւալի մահ հօր իմոյ արդարոյն Իսահակայ , յոյր սակս համախմբեալ կայք և դուք ամենեքեանդ ողբակից և կարեկից լինել մեզ . զնոյն դառնութիւն սրտի ցուցանեն և աչք ձեր , զնոյն արտօսր համակիր վշտաց ծորեն և աչք ձեր . քանզի՝ հասարակաց էր նա հայր , զամենեսեան իբրև զորդեակս իւր սիրէր և գգուէր , ՚ի վերայ ամենեցուն միով գթով և միով աղեօք դորովէր .

” Դժուարին է արդարև յիշատակ մահուան , և սարսափ տայ յիշումն նորին սրտի մահկանացուի , յորմէ ամենեքին զանգիտեն , ամենեքեան զարհուրին . և է՝ զի յիշել անգամ զանուն նորին սոսկումն է ինքեան . և չիք ոք չիք ուրեք՝ որ զերծ գտանիցի և չանկանիցի ՚ի ժանիս նորին . Թագաւորք՝ որք հզօր զօրութեամբ իրեանց դողացուցանեն զաշխարհս , ոչ գտանեն ապաստ ՚ի ձեռաց մահու . որք տիրեցինն և բռնացան աշխարհաց բազմաց սրովն իւրեանց , զնոյն եդին առաջի նորա գլխակորեալ և համակ նուաճեալ . զի զյաղթութեամբ մահու՝ չէ ոք ՚ի մահկանացուաց որ գլիցէ . ամենեքին առ հասարակ որք ծնանին ՚ի կեանս , քամեսցեն զբաժակ դառնութեան նորին . վճռեաց Արարիչն , և չէ ոք որ յետս դարձուսցէ զվճիռն .

„Ունկն դիք բանից իմոց, և շնորհեցէք ինձ վայրկ մի զլսողութիւն ձեր, և պատմեցից ձեզ որ 'ի սկզբանէ վիճակեցան բռնութեան մահուն՝ մարդկայինս բնութիւն. Քանզի՝ նախաստեղծ մարդն Ադամ, այն ինչ կողածին ամուսնաւն իւրով կային յարդարութեան յաստուածատունկ դրախտին, ազատք էին 'ի դառնութենէ մահուան, այլ յորժամ ընդդէմ պատուիրանին Աստուծոյ անհնազանդութեամբքն գտան յանցաւորք, ընկալան զվճիռ մահու 'ի պատիժ յանցանացն, դառնալ անդրէն 'ի հող՝ ուստի արարան. Այլ դուք աստանօր ուշ դիք բարւոք մտադրութեամբ, զի թէպէտ 'ի պատիժ օրինազանցութեան նոցին տուաւ վճիռս, սակայն լի է այն ողորմութեամբ և գթութեամբն Աստուծոյ. վասն զի՝ 'ի նուաղիլ կենսական զօրութեան մարդոյ 'ի մարմնի անդ, եթէ չէր նմին մահու մեռանել, յայնժամ առաւելագոյն թշուառութիւն լինէր նմա և ողորմելի՝ կեանք իւր. Զի եռացումն արեան զորտիւն սառուցեալ պաղի, տկարանայ ստամոքս իւր, կերակուրքն մնան անմարս, թուլանան ջիղքն, զօրութիւնն յանդամոց սպառի, ձեռք և ոտք իւր դողդոջան, թափին ատամունքն, ծանրանան լսելիքն, տեսութիւն աչացն վատի, և մարմինն համակ երերեալ կարօտի օգնութեան գաւազանին՝ ուր յենուցու. ցանկայ ուտել, այլ տկարացեալ աղօրեացն՝ ժխտեն նմա զճաշակ կերակրոցն. և այսպէս անկեալ 'ի գեղեցիկ շինուածոյ մարմնոյն, և հնացեալ աւուրբքն մնայ իբրև դի անկենդան լի ցաւօք և ամենայն հիւանդութեամբք վշտացեալ.

„Արդ զի՞նչ պարտ իցէ կոչել զայն տարազ կենաց. և զի՞ եւս կոչեմ կեանս, զի յաւէտ քան զմահ դառնացաւ մարդոյ. քանզի՝ մինչչև լուծեալ 'ի կենդանութենէ, բուրեաց 'ի նմանէ հոտ մահու. Ապա

լաւ եւս է մարդկան սիրով խնդրել յԱստուծոյ զմահ, քան այնպիսի կենօքն տաղտապիլ. Աստուած է Տէր մահու և կենաց, և 'ի կամաց նորա է շնորհել մարդկան զերկարութիւն աւուրց, կամ մինչեւ ծաղկեալ կենացն՝ խամրել զգեղ հասակին. Իսկ կեանքն՝ զոր եկաց Իսահակ հայրն իմ, յատուկ պարգեւ էր Արարչին և թանկագին մեզ, որով կրթեաց զմեզ և զորդիս մեր.

„Օսոյն վիճակս մահու ոչ կրեցին ապաքէն որք հաճոյք էին կամաց Աստուծոյ առաքինի ընթացիւք իւրեանց. Թողում յիշել զհին աւուրցն՝ որք սիրելիքն եղեն նմին. 'ի մէջ բերից միայն զհաւն իմ Աբրահամ զյաւէտ սիրելին Աստուծոյ, որ 'ի չափ հասեալ ամաց հարիւր եօթանասուն և հնգից՝ ոչ կորոյս զկայտառութիւն և զուարթութիւն երեսացն. տկարութիւն հիւանդութեանց ոչ ծնդեաց զմարմին նորա, և ոչ զօրութիւն պակասեաց 'ի զգայարանաց նորա. Կեանք նորա ոչ վասն իւր ինչ էր, այլ նուիրեալ ունէր Աստուծոյն իւրոյ, յորմէ ոչ խնդրէր երկարութիւն կենաց, այլ զօրութիւն առ 'ի կատարել զկամս նորին. Համանման հօրն գտաւ և որդին իւր Իսահակ առաքինութեամբք իւրովք. յայտնի իսկ են ձեզ հանգամանք պայմանի կենացն նորին, որ 'ի մանկութեան անդ հաճոյացեալ Աստուծոյ՝ պատրաստեցաւ 'ի զոհ 'ի լրումն հրամանացն. և թէպէտ փոխանակ նորա ընկալաւ Աստուած զխոյն, այլ ինքն գիտելով եթէ առաւել քան զողջակէզս ընդունելի է նմա սիրտ սուրբ, վասն որոյ անարատ պահէր զայն յաղտոյ մեղաց. Գանձարան իմն էր նա ամենայն առաքինութեանց, և զեղուն ամենայն գործովք բարեաց. Հեռի էր յոյժ 'ի ճանապարհացն մեղաւորաց և յաթոռս ժանտից և անառաքինեաց ոչ ել նա.

„Ամենեքին՝ որք տեսանէին զնա, պատկառէին

յերեսաց նորա․ Աբիմելէք արքայ՝ թէպէտ և հզօր զօրութեամբ և ահարկու սահմանակցաց իւրոց, երկնչէր 'ի սմանէ․ Զի՞նչ լիցեն կեանք հովուի միոյ, և զի՞նչ զօրութիւն նորա, որ և 'ի թագաւորս անգամ ահ արկանէր․ առաքինութիւն և բարի վարք նորին միայն հռչակ հարեալ՝ պատկառեցուցանէր զամենայն դէմս և 'ի խոնարհութիւն կրթէր զմիտս․

„Ձեզ ասեմ Քանանացիք, 'ի միտ ածէք զբարութիւնն յոր վայելեցիք, և զերախտիսն՝ զոր տեսիք 'ի նմանէ․ Քանզի անգամ ցածոյց նա զդժուարին վէճս ծագեալս 'ի միջի ձերում, որ ձգեալ էր զձեզ յերկպառակութիւն․ համոզեաց զձեզ 'ի խաղաղութիւն արդարապէս որոշելով զխնդիր և զկնճիռն ձեր, որով և արգել զարիւնահեղ կռիւս պատերազմաց որ մերձ էին 'ի ծագել․ և թշնամիքն ոխերիմք միմեանց արեան ծարաւիք՝ դարձան 'ի համբոյր հաշտութեան եղբայրական սիրոյ․ Ո՛չ այլ ոք, բայց եթէ աստուածազդեցիկ և համոզական բանք նորա, որ զադամանդսիրտ ձեր կակղէր, և միաձոյլ խառնմամբ միաբանէր զձեզ 'ի խաղաղութիւն․ Ահա այսօր նոյն խաղաղարարն ձեր, բարեխնամ հայր մեր, ահարկուն թագաւորաց, սիրելին և ընտրեալ ծառայն Աստուծոյն բարձրելոյ մեկնեցաւ 'ի մէնջ, զրկեցաք 'ի նմանէ․ բարձաւ քաղցրախօս և բարեաց մեզ խրատտուն․ Ա՜հ դառնագին աւուրս․

„Բայց գիտասջիք և զայս, զի թէպէտ և բնութիւնն՝ որպէս ասացաք, անողորմ է զառամելոց, այլ առաջի սորա տկարացաւ իմն 'ի շնորհս աստուածպաշտութեան, որով զօրանայր միշտ ցորչափ տիրէր նմա հասակին ծանրութիւն․ Մինչ աչք իւր նուաղեալ կային, սակայն ինքն ուրախ էր ընդ այն, զի ընդ պակասել լուսոյ աչացն՝ առաւել լուսաւորեցան՝ աճէր

միտք իմ, որ սրացեալ եւս քան զեւս ոչ զներկայս՝ այլ զապառնիսն տեսանէր յայտնի. Ոչ երբեք բողոք կալաւ նա, և ոչ եւ տրտունջ ընդ բերան նորա, այլ միշտ գոհութեամբ և փառաւորութեամբ շնորհս ունէր զխնամոցն Աստուծոյ. Քաջ իսկ գիտէք դուք որքան անիրաւութեանց համբեր նա, այն ինչ ծառայք Աբիմելէքայ յափշտակէին 'ի ձեռաց նորա զջրհորսն, զորս ինքն տայր փորել. ոչ տրտնջէր նա առ տէրն իրեանց, և ոչ յանդիմանէր զծառայս նորա, այլ յաձախէր բանալ ջրհորս հեռացեալ 'ի սահմանաց նորին. զայս ցուցանել կամելով իւրոցն, եթէ որ ունիցի 'ի ձեռին բաւականութիւն բարերարել այլոց, ոչ է պարտ նմա յետս կասել 'ի գործոյն. Զայս օրինակ խրատէր նա զամենեսեան առանց խտրանաց.

„Օրինակ կալցուք ապա զառաքինութիւնս նորա, զաստուածապաշտ երկիւղածութիւնն և զարդարասէր զբարս և զկենցաղավարութիւնն. յանձնեսցուք զկամս և զհաճոյս սրտից մերոց՝ կամացն Աստուծոյ, որպէս պատուիրէր մեզ հայր մեր. Մի՛ երբեք ելցեն ընդ բերան մեր բանք տրտնջմանաց. հեռասցուք 'ի մեղաց և յամենայն առթէ նորին. հետեւեսցուք գործոց բարեաց, որպէս զի՛ ցուցցուք ոչ միայն բանիւ՝ այլ և արդեամբք, եթէ որդիք եմք առնս աստուածասիրի և առաքինւոյ.

„Հիրիմ նորա և հօր իւրոյ գձուձ և դուզնաքեայ՝ զոր տեսանէք, խրատս օգտակարս մատակարարէ մեզ. Քանզի նոքա ոչ ակն եդին ինչ 'ի ստացուածս երկրի, թէպէտ և ունէին բաւականութիւն և կարողութիւն տիրելոյ ընդարձակագոյն դաշտաց և վայրաց. այլ միայն զտեղի գերեզմանաց իւրեանց ստացան գնով, և այսու ցուցանէին եթէ մահն առ դուրս հասեալ կայցէ մեզ միշտ. և թէ՝ զնոյն շաւիղ մնայ և մեզ

հատանել անպատճառ. Տեսէք և 'ի միտ առէք եթէ որքան փափաքելի էր ինքեանց մահն. Ապա արտասուքն զոր հեղիք դուք 'ի մահուան նորին, իրաւունք ունի միայն ընդ զրկումն մեր 'ի նմանէ. քանզի ինքն ուրախ էր և զուարթ ընդ մահ անձինն. զի յոյս նորա հատեալ յաշխարհէս՝ միացեալ էր ընդ Աստուծոյ. ուստի որ այսու յուսով մեռանի՝ երջանիկ է նորին մահ. Կալցուք և մեք զայն ակնկալութիւն յուսոյ, ուրախալից խնդութեամբ սպասելով մահուան. Ո՜ վերջին իւր խրատ՝ զոր ետ մեզ, յիշեցուցանեմ ձեզ աստանօր, այն է խաղաղութիւն ունել ընդ ամենեսին, և օրինակաւ անձանց մերոց խրատել զանուղղս և զստահակս. խաղաղութիւն և մեք ընդ միմեանս կալցուք և բարութիւն և օրհնութիւն Աստուծոյ բազմասցի 'ի մեզ և յորդիս մեր յամենայն ժամ. ամէն,,.

ԳԻՐՔ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Յետ վախճանի հաւուն քո զո՞ր պաշտօն վարէիր 'ի տան հօր քոյ.

ՅՈՎՍԷՓ

Որովհետեւ հայր իմ 'ի միջոցի սակաւ ամաց բազմօք վշտագնեցաւ տրտմութեամբք, եթէ ընդ մահ մօրն իմոյ Ռաքելայ զոր սիրէր անձկաւ, և եթէ

ընդ մահ հօր իւրոյ, և մանաւանդ ընդ հիւծումն և ընդ լքումն նորածին եղբօր իմոյ Բենիամենի ՚ի մայրենի խնամոց. որոյ անկեալ ՚ի ձեռս ստնտուաց, ոչ իբրև զմայր հարազատ սնուցանէին զնա, վասն որոյ ձմլէին և խորովէին աղէք հօր իմոյ ընդ վիշտս նորին, և նորոգէին վէրք ցաւոց իւրոց։ Զայսոսիկ կրելով նա յանձին, ոչ ՚ի բացեայ առնէր զիս յինքենէ, և մխիթարէր զանձն իւր ինեւ. ուստի յանձնեաց ինձ զտնտեսութիւն տանն. և ես աշալրջութեամբ և անքուն տքնութեամբ հոգայի, զի մի ինչ պակասեսցի ՚ի բարեկարգութեանց տան և ՚ի տնտեսութեան, և ամբոխիցէ անդորրութիւն հօր իմոյ. Վասն որոյ ուրախ էր յիս նա՝ գտեալ մխիթարութիւն ՚ի տրտմութեանն.

Իսկ զի իւրաքանչիւր ումեք եղբարց իմոց յատկացուցեալ ունէր նա զպաշտօն, այլ երբեմն փոխէր նա զծառայութիւն նոցին, որպէս զի փոփոխակի պաշտօնիւ սպասուն՝ կրթեսցին ամենեքին յիւրաքանչիւր գործ օգտակարութեան, եթէ ՚ի վերակացութիւն հովուաց, և եթէ ՚ի վարչութիւն մշակաց, որք աշխատէին ՚ի վարել զերկիր, ՚ի սերմանել և ՚ի մաքրել զմոլաբոյսս ՚ի միջոյ արմտեաց. Իսկ ՚ի ժամանակս հնձոց ամենայն եղբարք իմ գնային միաբան ՚ի հնձել, կապել որայս, և զամենայն ինչ հողային մինչև ՚ի ժողովել զնոսա ՚ի համբարանոցս. քանզի ասէր հայր իմ, ՚ի պարգևսն Աստուծոյ առ հասարակ աշխատելով առ հասարակ ցնծասցուք, և օրհնութեամբ նորին վայելեսցուք. Իսկ յետ ամբարելոյ զամենայն բարիս և զբերս, անկանէր ընդ իմով իշխանութեամբ, և ես տնտեսէի զայնոսիկ ըստ պիտոյից. Թէպէտ և ծանր էր պաշտօն ծառայութեան իմոյ քան զկար իմ, այլ ես ուրախ էի, և սիրով տանէի այնմ. զի ժրութիւն և զգուշութիւն մարմնոյս կրթէր զիս յարիութիւն և

արհամարհել զհեղգութիւնն. Եւ յաւարտել ըզգործս իմ՝ մատչէի առ հայր իմ, և ուսանէի ՚ի նմանէ այլ և այլ հարցմամբ զբազում ինչ օգտակարագոյն, որով պարարէր յիս հոգի իմ, և ուռճանայր միտք իմ։

Պաշտօն տնտեսութեան իմոյ թէպէտ և մեծ և յարգոյ երևէր յաչս իմ, այլ այպանելի էր առաջի տանեցունց եղբարց իմոց, որք առ նախանձու նախատէին զիս, ցուցանելով ինձ եթէ փափկասուն ՚ի տան կեցեալ՝ մեռանիցի յիս ոգին արիութեան, և մեղկութեամբ տկարանայցեմ ՚ի մրցմունս քաջութեան, և լինիցիմ անպիտան յամենայնի։

Ապաքէն ճշմարիտ էին բանք նոցա. քանզի երիտասարդ առոյգ՝ եթէ կայցէ ՚ի տան անգործ զփափկութեան վարելով կեանս, կորուսանիցէ զոյժ իւր և ՚ի դանդաղութիւն հատանիցի. Այլ իմ ոչ այնպէս ինչ էր. թող զծանրութիւն պաշտօնիս՝ որով աշխատ լինէր անձն իմ, և քաջ ՚ի բացեայ էր յինէն ընդարձակասուն կեանք, այլ և միտք իմ զհետ լեալ նորանոր ուսմանց և տեղեկութեանց, հատեալ էր քուն յաչաց իմոց. քանզի զմի մասն գիշերոյն անցուցանէի ընդ հօր իմում ՚ի քննութիւնս աստեղաց. Զհասակ պատանեկութեան իմոյ՝ որում քաղցր է և կամակ պարապել ՚ի խաղս և ՚ի զուարճութիւնս զբօսանաց, ես ընդ հակառակն յառաքինական գործս կրթէի և յաղօթասիրութեան. Ընդ առաւօտս կանխայարոյց լեալ պատրաստէի զպաշարս կերակրոցն հովուաց և եղբարց իմոց, զոր ես անձամբ առեալ տանէի առ նոսա. Եւ յետ այնորիկ պատրաստէի և զայլ ամենայն գործս պաշտօնի իմոյ, զճաշն հանդերձել, և զկաթն գործել պանիր կամ ՚ի պարարտութենէ նորին հանել զկոգի. Զայս ամենայն կատարեալ մեծապէս ժրութեամբ, երագէի անդէն ՚ի վրանն աղօթից, ուր հայր իմ միայնակ ան-

կեալ 'ի վերայ երեսաց իւրոց՝ անմռունչ ձայնիւ աղօթէր առ Աստուած ։ Զնդ զամենայն բեռն աշխատութեան իմոյ 'ի բաց մերկացեալ յանձնէ , և մոռացեալ զվաստակել մարմնոյս , խնդրէի յԱստուծոյ տալ ինձ զօրութիւն և իմաստութիւն՝ պարզերես գտանիլ և անստգիւտ 'ի գործս պաշտաման իմոյ , արհամարհել զփափկակեցութիւն և յաղթել յուլութեան՝ որ յատուկ է մանկութեան ։

Իսկ հայր իմ տեսեալ զիս յաղօթս կանխեալ՝ ուրախանայր ընդ միտս իւր , և յետ աւարտման աղօթիցն՝ խրատէր զիս , և ասէր ․ " Զանա՛ որդեակ իմ ուսանել զամենայն գործ կառավարութեան ․ քանզի իշխանութիւն զնա՛րդ և իցէ , փոքր ինն է՝ ընդ որ անցանէ որք , և յայտնից բնաւորութեան և բուսոյ բարուց մարդկան , որով՝ եթէ ունիցի ինչ յանձին կիրս անզուսպ և սովորութիւնս տարադէպս՝ յերեւան ելանեն , և ակն յայտնի ցուցանեն զվարուց նորին հանգամանս ․ Զոլովագոյնք են 'ի մարդիկ , որք 'ի խոնարհութեան և 'ի հեզութեան զինքեանս ունելով , գովեստս և դրուատանս կորզեն անձանց ․ այլ այն ինչ յաջողէ նոցա բաղդն՝ աթոռս կազմել փառաց և իշխանութեան կանգնել վերելս , 'ի բաց մերկացեալ յանձանց զկեղծ խոնարհութիւնն , յերեւան ածեն զանգոսնելի կիրս հպարտութեան և վիքուռոյց ամբարտաւանութեան , որով անկարացեալ բարիոք և ըստ օրինի վարել զպաշտօնն , ամօթապարտ անարգանօք ատելի կացուցանեն զանձինս յաչս ամենեցուն ,

„ Են և ոմանք որք մինչեւ ժամանեալ 'ի պաշտօն իշխանութեան , իբրու նրբահայեաց տեսութեամբ 'ի քննութիւն արկեալ զգործս և զընթացս այլոց ոմանց պաշտօնակալաց , պարսաւադէտ լինին նոցին , իբրու այն թէ՝ ո՛չ ըստ իրաւանց և արժանապէս ունիցին զիշխա-

նութեանն գաւազան . և յամենայնի ցուցանեն զին-
քեանս սրատես լինել և փոքրագոյն դիւրագայթ ոտ-
նառութեանց գնացից նոցին 'ի թերութիւնս , զորս
ընդվայրած լեզուօք յառակս առնուն առաջի մարդ-
կան . Բայց յորժամ դէպ լինի ինքեանց մտանել 'ի
պաշտօն ինչ , ոչ կարեն դիտել նշմարել զանձանցն պա-
կասութիւնս յորս յոլովագոյնս գթին . քանզի` ծուխ
փառամոլ ամբարտաւանութե՟ն գողանայ զզօրութիւն
տեսութեան նոցին , և զաչս իւրեանց համարին չոր-
հեալ ինքեանց առ 'ի տեսանել և քննել զգործս միայն
այլոց . և ինքեանք քան զկոյրս աչացու և առխարխափ
գնան 'ի գործս իւրեանց , և ընդդէմ արդարութեան
յանցանեն . յոյր սակս յաճախեալ բողոք և աղաղակ
ժողովրդեան ընդդէմ անիրաւութեանցն , անկանին
յիշխանութենէ , զրկին 'ի փառացն , կամ մահուամբ
զկեանսն վճարեն .

„ Արդ որդեակ իմ սիրեցեալ , փոյթ յանձին կալջիր
արդէն կրթել զքեզ յայդմ փոքու պաշտօնի . և ջանա
մեռուցանել 'ի քեզ զկիրս քո` տեղի տալով այլոց յա-
մենայնի . մի ողոքել զկամս քո անձինդ կամակօք , և 'ի
վեր դասել զայն քան զայլոցն . Ընտրեա քեզ կենա-
կից զիմաստութիւնն , և գտցես մեծարանս յամենե-
ցունց . ցոյց քաղցրութիւն յամենայնի , և զգածանու-
թիւն 'ի բաց արա 'ի քէն , և ամենեքին սիրով փարի-
ցին զքեւ , և հլութեամբ կատարեսցեն զհրամանս քո .
Մի՛ ոք արհամարհեսցէ զքեզ վասն թերութեան իրիք
անձինդ . զի որպէս գուշակէր զքէն հայր իմ , մնայ
քեզ անցանել ընդ փորձս բազում վշտաց և նեղու-
թեանց , յորս եթէ ո՛չ դիտասցես 'ի կշիռ ունել զանձն
քո և խոհեմութեամբ վարել , ընդունայն լինի ամենայն
կրթութիւն քո . և յանակնկալ տառապանաց 'ի վերայ
քո հասելոց` հեղձամղձուկ լեալ դլասցիս 'ի շաւղաց

քոյ սրտակտուր անձնաբեկութեամբ. Այլ դու վարժեա զքեզ արդէն յարիութիւն, պնդեա զսիրտ քո իբրու մարզիկ քաջալանջ ընդդէմ նետից Թշնամւոյն փորձութեան, համբերութեան զինուն վարեալ, որով համայն դժուարինքն գործին 'ի դիւրինս. Ընտանեբար գթասիրութեամբ զմէն մի հպատակացդ ժողովեսցես, և լիաձեռն գտցիս առ նոսա բարութեամբ. զի զի՞նչ առաւել ուրախութիւն իշխանաց՝ քան լինել բարերար 'ի վերայ ժողովրդոց. այս առաքինութի̅ հորդէ անձին քում զերջանկութէ̅ ճանապարհն. և ոչ դուզնաքեայ ուրախութի̅ է տեսանելով զհպատակս իւր յղփացեալս կենցաղօգուտ բարեօք և 'ի խաղաղութիւն վայելեալ բերկրալէտ աւուրց. Սասի և նոքա փոխարէն երախտեաց և հայրաբար խնամոց տեառն իւրեանց, կանխեն յաղօթս առ Աստուած և 'ի բարեմաղթութիւն վասն երջանկալէտ կենաց նորին. Փութա ապա որդեակ իմ փարելի, դուն գործեա 'ի տնտեսութեան պաշտօնիդ առնուլ զճաշակ բարեգործութեան. զի Թէ գամ մի քաղցրասցի 'ի քիմս քո առաքինութիւնս այս, ոչ ևս անցուսցես օր մի առանց ումեք բարերարելոյ.

„ Ի քաղցր ճաշակէ սորին երկնաչափ հեռի են բռնաւորք, որք խստասրտութեամբ իւրեանց ջանան կեղեքել և խուել զժողովուրդսն, 'ի բուռն զօրութի̅ իւրեանց ապաւինեալ, և համարին այնու զանձինս զօրաւոր լինել և տիրող, բայց վրիպին յոյժ 'ի կարծեաց. քանզի այնու զքաղցրութի̅ն հալածեալ յարքունեաց իւրեանց, և փոխանակ նորա զահ և զերկիւղ բազում զգուշութեամբ ածելով 'ի վերայ ողորմելի հպատակացն՝ տառապեցուցանեն զնոսա, զրկեն 'ի քաղցր քընոյն, յանդորրութենէ սրտի. և ինքեանք կան միշտ յերկբայութեան, և 'ի կասկածանս. Բարերար մարդասիրութիւն իշխանին միայն գիտէ պահել զմարդիկ 'ի

հնազանդութիւն , և զամենայն դաժանութիւնս իւրեանց ամօթապարտ առաջի նորին կացուցանեն . ոչ խորհին երբեք զապստամբութիւն 'ի սիրտս իւրեանց . այլ պատկառելի ակնածութեամբ զհնազանդութեան լուծն մահուամբ չափ կրեն յանձինս իւրեանց . քանզի 'ի պահանջել հարկին՝ ժողովուրդն , որ 'ի բարեսէր խնամս իշխանին իւրոյ վայելեալն է , 'ի սէր հայրենեացն և 'ի պատիւ տեառն իւրոյ արհամարհէ զարեւ իւր , 'ի կշիռ զանձն եդեալ , և զկեանսն նուիրէ յօժարութեամբ 'ի փրկութիւն նորին . Տեսանես որդեակ իմ . զի՞նչ քաղցրագոյն մարդկան քան զկեանս իւրեանց , և ահա կամակար մատուցանեն զայն 'ի զոհ՝ 'ի պատիւ իշխանին . այս է երջանիկ պտուղ բարերարութեան , որ զանհնարինսն հնարաւոր գործէ ,

„Զի՞ք արդարեւ Թագաւոր զօրաւոր և սիրելի յաչս հնազանդելոց , բայց եթէ առաքինի և բարերար իշխանն . զի այլ է որ իշխէ 'ի վերայ անձանց , և այլ 'ի սրտից . և այսու զանազանին իշխանութիւնք բռնաւորաց և Ճշմարիտ Թագաւորացն բարերարաց . քանզի առաջի շնորհամատոյց ձեռին իշխանի կամակար հաճութեամբ և յօժարութեամբ խոնարհեալ զիջանի սիրտ մարդոյ , որ 'ի ներքս 'ի մարդն գտանի . իսկ պարանոց նորա Թէպէտ և արտաքուստ՝ և բարձր քան զիրան մարդկան ցուցանիցի , այլ խորխտ է և խիստ , զոր ձեռք բռնաւորաց ոչ կարեն խոնարհեցուցանել ընդ դժոխըմբեր լծոյն իւրեանց „ .

Հայեաց և տես ո՛ քաղցրիկ կենակից իմ , յերկնազդեցիկ զօրութիւն խրատուց հօր իմոյ . զիա՞րդ փոքրիկ պաշտօնիւ իմով 'ի մեծագոյն իշխանութիւն կրթէր զիս , դիտելով յայն՝ յոր բարձրացեալս եմ . Երջանիկ էի արդարեւ այնպիսի ունելով իմ հայր գորովական և բարեաց խրատու . որոյ արգասիք

օրհնութեանն կատարեր այժմիկ զիշխանութիւն իմ. քանզի՝ այնչափ 'ի խոր տպաւորեալ կան բանք նորին 'ի միտս իմ, մինչ թուի իմն ինձ լսել տակաւին յունկն իմ զբարբառ նորա. Նոյնպէս և մեք կրթեսցուք ըղձաւակունս մեր, ցուցանելով եթէ քանի՜ գովելի և համբուրելի իցեն խնամք և գթասիրութիւն առ ամենեսին ցուցեալ. որով դաժանութիւն բիրտ բարուց մարդկան ամոքին, և պտուղ զիւրեանց բարեբարութեան և զառաքինութեան քաղեն 'ի սիրտս իւրեանց զերջանկութիւնն. քանզի և մեզ այն է վայելուչ, այնպիսի ունել որդիս.

ԴԻՐՔ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ՉՈՐՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Որչափ ժամանակս վարեցեր զպաշտօն անտէրութեան քո.

ՅՈՎՍԷՓ

Փոքր ինչ աւելի քան զերկուս ամս. քանզի՝ այն ինչ անձեցաւ Բենիամին եղբայր իմ 'ի հասակ, և հատաւ 'ի ստենէ, մխիթարութիւն մեծ էր հօր իմում. մանկական հասակին զուարթութիւն և բանք նորա ծեթեւեթեալ ծեքածուռ և թերի հնչմամբն բերկրանս ինձ զուարճացուցիչս տայր հօր իմում. այլ և յանկատար և 'ի ձիղմ հասակի անգ մանկութեանն՝

զկատարելութեան ցուցանէր միտս. Ապա յետ այնորիկ ոչ եւս ծանրաբեռնէր զիս տնտեսական ծառայութեամբ, այլ մերթ ընդ մերթ կարգէր զիս և յայլ պաշտօն. էր զի ընդ եղբարս իմ գտանէի՝ ուսանելով զնոցայն աշխատութիւն և զգործ, և էր զի զնորածին մատաղ գառինսն յանձնէին ինձ արածել որոշ 'ի հօտէն շուրջ զբնակութեամբ մերով, որք քան զամենեսին սիրելի էին ինձ. զի ոչ միայն յուշ ածէին ինձ զխրատս հաւուն իմոյ, այլ և անմեղութիւն նոցա, և կայթքն ոստոստելով մեծապէս զուարճութիւն տային ինձ.

Զարմանալի իմն է արդարեւ տեսարան նոցին. քանզի 'ի պահուն՝ յորում բաժանին 'ի մարց իւրեանց, սկսանին գորովալի ձայնիւ մայել զկնի նոցին. և յետոյ ապա մոռացեալ զնոսա դիմեն 'ի ձարակ 'ի խոտաւէտ մարմանդս. հրճուին, կայտռեն, վազվազեն, մի քան զմի ելեւելս արարեալ, վազելով ձախրելով խայտան. կայթոտ վազեւք առ միմեանս հասեալ՝ զմիմեամբք փարին. Ոչ վարատին աստ և անդ. ոչ հեռանան 'ի միմեանց. այլ ամենեքին զմիով ձարակաւ գան, 'ի միասին արածին և զմի կայթումն կայտռեն. և յորժամ մակաղիցին՝ ընկերք են յորոձս իւրեանց. մի զմիով կուտեալ ժողովին. Ոչ իք 'ի նոսա դաժանութիւն վայրենական վշտացուցանել զմիմեանս և զրկել. անմեղութիւնն տիրէ 'ի նոսա պարգեւեալ նոցա 'ի բնէ յաստուածուստ. Իբրեւ սաստկանայր արեգականն տօթագին ջերմութիւն, ժողովեալ զնոսա հանգուցանէի 'ի ջրարբի ուրեք և 'ի ծմակային տեղւոջ ընդ կաղնեաւ. և իմ առեալ զեղէգնափողն հնչեցուցանէի. Անդ էր տեսանել զլռութիւն և զունկընդրութիւն նոցա ընդ ներդաշնակաւոր քաղցրութիւն սրնգի իմոյ, որք մոռացեալ գոգցես զորոձս

իւրեանց ունկն դնէին ձայնին. և չէր ոք 'ի նոսա որ 'ի քուն մտանէր.

Յայս տեսիլ խանդաղատանաց Ճշմարտէին իրաւք Խաչակայ հաւուն իմոյ, առաջի աչաց ունելով զկենդանի օրինակ բանիցն իւրոց. որ զթագաւորն՝ հովուի և զժողովուրդն անմեղ հօտից նմանեցուցանէր. Երանէի արդարեւ զայնպիսի թագաւոր՝ տեսանելով իմ զխաղաղութիւն և զմեղմ քաղցրութիւն 'ի խումբս անդ գառանց. Եւ Ճշմարտապէս երջանիկ է՝ որ զօրէնս իւր վասն օգտի ժողովրդեան և բարեկարգութեան նոցա հնչեցուցանէ հանդոյն հովուական սրնգաց. որով ոչ միայն զկամս նոցա, այլ և զսիրտս և զկեանս անդամ գրաւէ. և նոքա յամենայնի նախադաս համարին զկամս թագաւորին քան զկեանս իւրեանց, ունելով ինքեանց պաշտպան բարեխնամ և բարերար, զորոյ արդարութեան և բարեհամբոյր բարուց զհանգամանս քաջիկ իմն նկարեն օրէնքն կարգեալ 'ի նմանէ յօգուտ և 'ի զարգացումն ժողովրդոց.

Այս խորհրդածութիւն իմ այնչափ ազդու գտայիս, և այնչափ ընդարձակեցան միտք իմ, մինչ ոչ կարել զուսպ ունել զարտասուս իմ և զզեղումն սրտիս. և լռեցուցեալ զորինգն իմ՝ յաջորդեցին ձայնք ողբակութեանց իմոց, զոր քաղցր յիշատակ հաւուն իմոյ զարթուցանէր յիս. Եւ ահա, ո՛վ գործակալն տեսարանիս, գառինքն ամենայն յարուցեալ և 'ի վեր վազեալ դիմէին առ իս և 'ի ձայն հեզիկ բառաչանաց իւրեանց և կայթմամբքն թուէր ինձ եթէ յանկուցանել զիս ցանկային յողբոցս և զուարճացուցանել. Եւ որովհետեւ օրն ընդ մուտս իւր խոնարհէր և ստուերք մայրիցն և կաղնեաց երկարէին ընդ տարածութիւն դաշտաց և բլրոց, վասն որոյ ժողովեալ զփոքրիկ նախիր մատաղերամ գառանց իմոց առաջնորդեալ նոցա հան-

դարտաքայլ ածի 'ի փարախ իւրեանց. Ընդ զգացեալ նոցին զտարաժամել աւուրն Թինդս առեալ վազելն փութալով, ունել իւրաքանչիւր զստեանց մօրն իւրոյ և գտանել զքաղցրիկ և զցանկալի սնունդ իւրեանց.

Ո՛հ, քանի՛ գորովաղէտ յիշատակութեամբք լնոյր սիրտ իմ տեսանելով զնոսա. ուշ 'ի կուրծս արկանէին ինձ զմայր իմ, յորմէ որբացեալ էի. քանզի անբան կենդանիք անգամ չգիտեն բնաւ մոռանալ զծնողական սէրն, այլ փութան 'ի գիրկս նոցին. անդ խնդրեն նոքա զհարկաւոր դարմանն. անդ ապաւինին նոքա 'ի ցաւոց նեղեալ. անդ դիմեալ ապաստանին յերեսաց Թշնամւոյն. Քանի՜ն ապա երջանիկք են որդիք 'ի վայելս անդ մայրենի գթոյն և 'ի սէր ծնողին. զի որպէս գառինք՝ նոյն և մարք նոցին որոնեն զորդիս իւրեանց, 'ի վրիպել նոցին յաչաց տեսութենէ. և գտեալ զնոսա զօրութեամբ հոտառութեան, կամ լաւ ևս բնական ազդեցութեամբ, խաղապատին զնոքօք, հոտոտին և գորովին.

Այս քաղցր տեսարան ոչ երբէք հեռանայ յերեւակայութենէ և 'ի մտաց իմոց. երանեմ միշտ զհովիւս խաշնարածս. և որպէս զի քաղցր են կեանք նոցա, և իմ քանի՛ ուրախ և զուարթ էին միտք և սիրտ, մինչդեռ վիճակակից և կենակից նոցին գտանէի. և 'ի բերկրութենէ սրտիս՝ 'ի մտանելն իմ 'ի խորանն աղօթից, արտասուօք լնուի զտեղին, խնդրելով յԱստուծոյ տրպաւորել յիս 'ի մանկութեան հասակի իմում զանմեղութիւնն դառանց, պահել զհայր իմ անփորձ 'ի վըտանգից, որպէս զի ընդ հովանեաւ Թեւոց նորին պատսպարեցայց երբեւ զձագսն ասրաքոյս գեղմնաբարձ կենդանեացն այն.

Յայսոսիկ խորհուրդս ընկղմեալ իմ համակ՝ մտանէի 'ի քուն քաղցր, և վայելէի կեանս անդորրաւէտս.

Այլ լինէր երբեմն զի վերանայր քուն յաչաց իմոց զգի-
շերն ողջոյն՝ երկարելով իմ ՚ի խոկմունս . և երբեմն
իսկ տեսանէի յերազի զայլ և այլ իրս , է՛ զի հաճոյա-
կանս և է՛ զի տրտմալիս , և ելեալ պատմէի եղբարց
իմոց .

Եւ եղեւ դարձեալ ՚ի գիշերի միում տեսանել
ինձ երազ . և այնչափ տպաւորեցաւ տեսիլն ՚ի միտս
իմ , մինչ ՚ի զարթնուլն իմ համարէի զայն ճշմարտա-
պէս կատարեալ . վասն որոյ ՚ի ձայն վարկայ ասել զայն
առաջի եղբարց իմոց ցհայր իմ . Տեսանէի յերազի ի-
մում քաղել հունձս ընդ եղբարսն իմ և կապել որայս .
և ահա անդէն նորանշան տեսիլ զարմանալի երեւէր
ինձ . զի որայքն եղբարց իմոց ՚ի վեր կանգնեալ տային
երկրպագութիւն որայի իմում . Զայս իբրև լուան
եղբարք իմ , ՚ի ցասումն բրդեցան , և ասեն . Միթէ
թագաւորելո՞վ թագաւորեսցես ՚ի վերայ մեր . իսկ
հայր իմ պատասխանեաց և ոչ ինչ . Այլ իմ տեսեալ
զբարկութիւն նոցա՝ անկայ ՚ի տրտմութիւն մեծ .
քանզի որպէս ինձ թուէր անստոյգ լինել երազոց ,
կարծէի ինձ եթէ և նոքա ՚ի նոյն կարծիս իցեն և չը-
հաւատայցեն այնոցիկ . Իսկ զի՞նչ իցեն երազք և
տեսիլք , ասէի ընդ միտս իմ . իբրև ստուերք են՝ զոր
տեսանէ մարդ , դառնայ և ոչ ևս գտանէ տեղի նորա .
իբրև ծուխ՝ որ ելանէ յամպս և ոչ ևս երեւի աչաց .
Այսպէս և երազք . զի ոչ կամաւ ինչ տեսանէ՝ զոր
կամի . այլ երբեմն զոր ինչ ընդ միտս ուրուք յածին
՚ի ցերեկի , զնոյն երազէ ՚ի գիշերի . և երբեմն ևս՝
մանաւանդ եթէ բազմիցս ՚ի խառնուածոյ կերակրոցն
և յանտրամադրութենէ ներքին գործարանացն , հան-
դիպի մարդոյ զայլ և այլ իրս տեսանել յանուրջս .
Այլ իմ և ոչ մի ինչ յայտոցիկ էր . Աստուած էր որ
ցուցանէր ինձ զայն՝ զապագայ տնօրէնութեանց իւրոց

զպատկերին նկարելով առաջի իմ, զոր հանդերձեալ էր գործել 'ի ձեռն իմոյ անարժանիս. Եւ ես անգէտ էի գլխովին նախախնամութեան Արարչին. վասն որոյ յարուցեալ յառաւօտու անխորհրդաբար պատմեցի զայն հօր իմում, ցանկանալով գիտել թէ զի՞նչ նշանակիցէ. Իսկ նա իբրև լուաւ զմեկնութիւնն զոր մեկնեցին եղբարք իմ և զբարկութիւն նոցա, լռեաց. ընդ որ մեծապէս 'ի թախիծ տրտմութիւն սիրտ իմ զառածեալ, անկայ առաջի Աստուծոյ գետնամած, խնդրելով 'ի նմանէ կատարել յիս զամենայն հաճոյս իւր, և ոչ թողուլ զիս գնալ 'ի կամս անձին իմոյ, այլ շնորհօք իւրովք մնալ ընդ հնազանդութեամբ եղբարց իմոց, զոր քան զամենայն մեծութիւնս և զփառս աշխարհի 'ի վեր համարէի. Այս և 'ի սոյն զմիտս իմ հաստատեալ, կատարէի զպաշտօն իմ կամակար հնազանդութեամբ.

Ոչ անցին բազում ժամանակք, և ահա տեսի այլ իմն երազ, որ քան զառաջինն 'ի խոր իմն տպաւորեալ մնաց 'ի միտս իմ. և զի զարմացման էր տեսիլն և 'ի վեր քան զամենայն խորհուրդս մարդկան, ոչ ժուժեցի 'ի ծածուկ ունել զայն 'ի սրտի իմում, մանաւանդ զի և 'ի ներքուստ ազդումն լինէր ինձ պատմել զայն առաջի եղբարց իմոց. վասն որոյ պարզմտութեամբ 'ի ճառարկի նոցա և ասեմ. տեսի յանուրջս և ահա մետասան աստեղք, արեգակն և լուսին խոնարհեալ յերկնից երկրպագութիւն մատուցանէին ինձ. Զայս իբրև պատմեցի նոցա, խոժոռեցան անդէն երեսք իւրեանց և ընդ ականջ հայէին ինձ. և հայր իմ` թէպէտ և ոչ խռովեցաւ ընդ բանս իմ, այլ յանդիմանեաց ցասմամբ, և ասէ. Ես և մայր քո անկեալ երկիրպագանիցեմք քեզ. թող անդր 'ի բաց զշաղփաղփութիւնդ.

Դժուարացեալ յոյժ եղբարց իմոց ընդ կրկին ե-

բաղձն իմ, և զայրացեալ ընդ միտս իւրեանց, ոչ ևս կոչէին զիս յանուանէ, այլ նախատելով իմն անուանէին զիս երազատես. Թէպէտ և բազմիցս խոնարհեալ անկեալ 'ի գուճս առաջի նոցա աղերս պաղատանօք խնդրէի 'ի նոցանէ ներել իմոյ խակամտութեան, և մի լուտանօք վարիլ ընդ իս. մանաւանդ և ցուցանէի իսկ նոցա, եթէ 'ի զուր ուրեմն է բարկութիւն իւրեանց. քանզի իբրու ոչ եթէ զոր կամիցի ոք՝ ըստ քմացն երազիցէ, այլ զոր Աստուած ազդէ յերեւակայութեան՝ զայն տեսանէ. վասն որոյ որ երազատեսն է՝ չէ ինչ բնաւ արժանի բարկութեան. այլ այն է մեղապարտ և արժանի յանդիմանութեան, որ կամաւն գործէ. իսկ նոքա ոչ կամեցան համոզիլ ընդ բանս իմ, և ոչ յետս կացին յերազատեսն կոչելոյ զիս. և օր քան զօր յաւելան 'ի մախանս և 'ի կիրս անճահս.

Տեսանես սիրելի լծակից իմ, զիա՞րդ 'ի դոյզն և 'ի չնչին պատճառաց վառեալ բորբոքի հուր նախանձուն. զոր ոչ խոնարհ պաղատանք իմ, ոչ կամակատար հնազանդութիւն ծառայութեան իմոյ, և ոչ հզօր ազդեցութիւնք բանից հօր իմոյ կարացին ինչ շիջուցանել, և զնստուցանել զկիրս նոցին. այլ առաւել ևս զայրանային նոքա 'ի վերայ իմ. Քանզի յետ այնորիկ անյիշելի մնայր անուն իմ առ նոսա. պատմուճանն իմ ծաղկեայ՝ զոր կտակաւ աւանդեաց հաւն իմ արկանել զանձամբ, իբրեւ փուշ երեւէր յաչս նոցա. վասն որոյ այպանէին զիս և անարգէին, ձաղ առնէին ամենեցուն, իբրու զկանացի զգեցեալ զինև տարազ, և կնատեալ փափկութեամբ, և առ գործս աշխատանաց անարի և անպիտան. և թէ՝ միայն գիտիցեմ երազել ցնորս, որով զհողմս կծիցեմ, և չառնիցեմ ինչ առաւել. Այլ 'ի վերայ այսր ամենայնի՝ ոչ ինչ երբեք խեռայի, և ոչ տրտունջ բառնայի առ հայր իմ. ջան 'ի գործ

արկանէի միայն քերել 'ի մտաց նոցին զայն խորհուրդս կանխակալութեան՝ իմով ցածուն համեստութեամբ. Քանզի ո՛չ երազքն զոր տեսանէի և ոչ ծաղկենկար պատմուճանն էին ինչ ընդ իմով իշխանութեամբ և կամաց. զառաջինն նոյն ինքն Աստուած էր որ պատկերէր յանուրջս իմ ըստ անիմանալի խորհրդոց իւրոց. իսկ երկրորդն էր 'ի կամաց հօր իմոյ, որում անհնարին էր ինձ հակառակ կալ. եթէ ոչ՝ անդէն և անդ 'ի բաց յանձնէ զայն մերկանայի առ 'ի չինել զփրաս եղբարց իմոց. որք եթէ դոյզն ինչ մտաբերեալ քննէին զայն, զգային եթէ անիրաւ էր բարկութիւն իւրեանց. Այլ իսկ բաղդատեալ զմեծութիւն իւրեանց ընդ պատմուճանին իմոյ, տեսանէին յայտնի զառաւելութիւն փառաց իւրեանց անդր ևս քան զիմն. քանզի իւրաքանչիւր ումեք առանձին էր հօտ խաշանց. Թող զհունձս և զկութս, որովք օր քան զօր բազմանային մթերք ընչից իւրեանց.

ԳԻՐՔ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Օ խորդ և որպէս կատաղի մախանօք վառեցան ընդդէմ անձին քում եղբարք քո տասնեքին, ցնորեալ իմն 'ի նորատեսիլ երազոցդ, որք յայտնութիւնք էին յԱստուծոյ ցուցանելով զայժմու իշխանութիւնն և զփառաւորութիւն.

ՑՈՎՍԷՓ

Դառն է ինձ արդարեւ յիշատակ նոցին, և ցարդ եւս զմիտս իմ խոցոտէ. և զիա՞րդ յայտնել քեզ զչար նախանձ նոցին, որով խանձողեալ պարապոյ սպասէին դաւել զկեանս իմ. Գիտէի անշուշտ հանդիպել ինձ փորձութեանց ըստ մարգարէական տեսութեան հաւուն իմոյ, վասն որոյ ապաստան զանձն իմ կացուցանէի ցանկ յաղօթս իմ ամենաբարի կամացն Աստուծոյ. Իսկ թէ յորմէ՞ արդեօք գրգռեալ գործեցին զայս եղբարք իմ, ՚ի տնօրէնութենէ՞ Արարչին, եթէ ՚ի յաչաղանաց իւրեանց. չէ ինձ հարկ քննել աստանօր. Միայն պատմեցից քեզ որպէս զիարդ և եղեւն հակիրճ բանիւք.

Հայր իմ առաքեաց զնոսա ՚ի հեռաւոր տեղիս յարածել զհօտսն. քանզի ոչ եւս գտանէր արօտ բաւական զբնակութեամբ մերով. Անցին աւուրք բազումք առանց գիտելոյ ինչ զնոցանէ եթէ յո՞ր վայր արածիցեն, և թէ զիա՞րդ կայցեն. և հայր իմ ծփայր ՚ի յոյզս մտատանջութեան չունելով ինչ լուր զկենաց նոցին. վասն որոյ արժան դատեցաւ առաքել զիս առ նոսա, և բերել լուր զողջունէ նոցա և զարօտականացն.

Մեկնեալ ՚ի հօրէ հաստատեցի զերեաս իմ փութով կատարել զհրամանն, հասուցանելով առ նա տեղեկութիւնս զանձանց և զվիճակէ եղբարց իմոց. Ուղղեցի զընթացս ոտից ՚ի կողմն Բեթելայ, ՚ի Ճանապարհն արահետ առնուլ լուր ՚ի Ճանապարհորդաց վասն եղբարց իմոց. Հասի ՚ի գերեզման մօր իմոյ. անդ անկեալ ՚ի վերայ տապանի նորա արտասուագին կանձամբ, յիշատակէի զաստուածային ողորմութիւնն

և յանձն արարեալ նմա զկեանս իմ, անկայ անդրէն յուղի և եկի ՚ի Բեթէլ. Ընդ առաջի դիմին՝ զոր անկեալ հայր իմ իւղաթուրմ խնկաւորութեամբ՝ խոնարհեալ յերկրպագութիւն, մատուցի կրկին առ Աստուած զաղաչանս իմ, յիշելով զանչափ բարերարութիւն նորա՝ որով այց արար հօր իմում, խոստանալով պահել զնա յամենայն վտանգից փորձանաց՝ յաճումն սերնդոյն իւրոյ գեղեցիկ յուսով ակնկալութեան. Խնդրեցի ՚ի նմանէ ոչ լքանել զիս յողորմութենէ իւրմէ, և պահել ընդ ամենախնամ աջով իւրով.

Զկնի աղօթիցն շարունակեցի զճանապարհն իմ, հարցանելով զհովիւս և զայցաւորս գեղջից իմոց. այլ ոչ առեալ ՚ի նոցանէ ստոյգ պատասխանի, հատանէի զուղին առանց տալոյ հանգիստ վաստակաբեկ մարմնոյս ՚ի տաժանակիր և յանկոխ շաւիղսն անդ. Քանզի ո՛չ բարձրութիւնք լերանց, ոչ խորութիւնք ձորոց, և ոչ ընդարձակութիւն դաշտաց գիտէին կասեցուցանել զընթացս ոտից իմոց.

Մինչ այս և մինչ այն անձապարեալ վազս առեալ գնայի ընդ լերինս և ընդ բլուրս, հազիւ ուրեմն տեսի զնոսա ՚ի հեռաստանէ յընդարձակատարած դաշտավայրի միում, որք զխաշինսն արածէին. Ի տեսանելն իմ զնոսա բերկրեցաւ սիրտ իմ. մոռացայ զաշխատութիւն ճանապարհին՝ զոր վաստակեալն էի, և զտեղի կալեալ անդ ՚ի վերայ բլրակի միում կլանել սակաւ ինչ շունչ, գոհանալ զՏեառնէ, զի արժանացոյց զիս տեսանել անփորձ զեղբարս իմ. և խնդրէի ՚ի նմանէ տալ մխիթարութիւն և սփոփանս սրտի հօր իմոյ.

Իբրև մերձեցայ առ նոսա սրընթաց արշաւելով, տեսի զնոսա ժողովեալ ակմբեալ ՚ի մի վայր. և լուայ զի ասէին. ահա երազատեսն. ե՛ն արէք հեղցուք զա-

րիւն նորա․ Ընդէն շրջեցաւ գոյն երեսաց իմոց․ լքան ջիղք ոտից իմոց և ծնկեցան ոտիք իմ․ զկերպարանս նոցա տեսի ոչ իբրեւ զերեկն և զեռանդն, այլ լի ցասմամբ․ աչք նոցա արիւնախառն, և դէմք իբրեւ գազանի կորուսելոյ զկորիւնս իւր․ Մատեայ առ նոսա մօտագոյնս․ անկայ յերկրպագութիւն և յարեայ գիրկս արկանել զնոքօք, առանց յայտնելոյ զդողս սրտի իմոյ․ Իսկ մինչեւ բացեալ զբերան իմ հարցանել զողջունէ նոցին, և տալ նոցա նորալուրս ՚ի հօրէն իմմէ, գումարեցան ամենեքին զինև, կալան զիս․ մերկացուցին ՚ի ծաղկեայ պատմուճանէն իմմէ, կապեցին զձեռս իմ յետս, զի մի պաղատեցից զնոսա և մի փարեցայց զանձամբք նոցին․ լեզու իմ միայն անպիրկ և անկապ մնաց ՚ի բերանի իմում․ Այլ ո՞ր շահ և զի՞նչ օգուտ․ զի նոքա քան զվէմս վիմագոյնք գտան սրտիւք, որք փքային մահուամբ և քստմնելի սպառնալեօք․ տեսցուք զինչ այն երազք քո իցեն, ասէին ցիս․

Իսկ իմ այլ ընդ այլոյ լեալ գլխովին յերկիւղէ, աղաչէի և ջանայի յողորմութիւն արկանել զնոսա․ ՚ի ծունկս անկեալ ողորմագինս թախանձէի, զգարշապարօքն գայի, խնայել յիս․ արիւն հարազատ եմ ես՝ գոչէի, եկի խնամալ զողջունէ ձերմէ, և դուք զկեա՞նս իմ բառնայցէք․ Բայց չէր ոք որ լսէր զպաղատանս իմ․ ոչ գտաւ ինձ ոք ցաւակից․ ամենեքին իբրու գահիճ անողորմ, իբրու առիւծ անգառագեղ, այնպէս յարձակեալ կային ՚ի վերայ իմ ձեռն ՚ի սուր ձգեալ․ Ես միայն կապեալ․ ես միայն պարտաւոր գրեալ․ ես միայն յողբս և ՚ի ջայլս հատեալ, և ոչ ոք լսող․ ոչ ինչ ազդեցին արտասուք իմ ամոքել զկարծրութիւն սրտից նոցա․ ոչ զինջան նոքա ՚ի գութ տալոյ հասակիս․ փակեցին զուշս իւրեանց չտեսանել զարեան արտասուս զոր աղբիւրաբար հոսէի․ Զայնք մեղայիցս ապաշաւ-

նաց՝ զոր ՚ի խորոց արձակէի , զարձագանգս լերանց հնչեցուցանէր . այլ սիրտք նոցա վիմեղէն ոչ կակղացաւ . ոչ աղէկէզ լինէին և ոչ ջեռնոյին գութք նոցա . այնչափ վայրենացան , մինչ մոռանալ զբնութեան կիրսն , և զանձինս գլխովին .

Ընդ Ռուբէն եղբայր իմ եկաց ՚ի մէջ նոցա և ասէ . մի մոռանէք յարիւն եղբօր ձերոյ , զի մարմին մեր է . այլ ընկեսցուք զնա ՚ի խորս ջրհորոյ միոյ , և մեռցի անդ ՚ի սովոյ . Զայս լուեալ նոցա՝ հաճեցան ամենեքին . ՚ի բաց կացին ՚ի մարդախանձ անողորմ դիտաւորութենէ իւրեանց , և առեալ ընկեցին ՚ի ջրհոր մի որ անդ մերձ էր . միայն զձեռակապս իմ լուծին . Խոր էր գուբն՝ յոր իջեցուցին զիս և խաւարչուտ . հասի ՚ի յատակս նորին , և լսելի լինէին յականջս իմ ձայնք ուրախութեան և խրախճանութեան եղբարց իմոց , որք նստան անդէն ուտել զհաց , բարձրաձայն գոչելով . կորեաւ երազատեսն , կորեան և երազք նորա , և ՚ի հողմս լուծան .

Յայնժամ մոռացեալ իմ համակ զաղջամուղջ և զարհաւիրս գբոյն , և ձայն խրախանաց եղբարցս զականջսն իմ խլացուցեալ , հարկ յանձին համարեցայ վաւել զմիտս իմ լուսաւոր խորհրդածութեամբք , քննել զչարադէպ պատահարսն որք հասին ՚ի վերայ իմ . զի մի գուցէ յանցանք ինչ գործեալ ընդդէմ նոցա՝ զօղեալ կայցէ յիս . Յածէի զմիտս իմ այսր և անդր . մտի ՚ի խորս սրտի իմոյ և խղճի մտաց իմոց , գտանել ըզպատճառ արիւնախանձ մոլեգին բարկութեան նոցին . Ընդ ՚ի վեր և ՚ի վայր շրջեցուցի զմիտս իմ . ոչ թողի խորշս ՚ի սրտի իմում , ոչ կիրճ յաղիս , ոչ ծոր յերիկամունս և ոչ լայնութիւն ՚ի թաղանթս , ոչ բարձրութիւն լերդից , զորս մանրախուզիւ քննեալ՝ ոչ մի ինչ գտի հակառակ կամաց նոցին գործեալ . միայն զպատ֊

կերս երազոցն գտի անջինջ քանդակեալ յերեւակայ-
ութեան իմում, և այս միայն թուէր ինձ շարժեալ
զնոսա 'ի բարկութիւն, քանզի հաստատութիւն էր
այնմ բառն երազատես զոր կոչէին զիս.

Որպէս այս ամենայն խոկմունք մտաց իմոց յերե-
ւան ածին զպատճառ նախանձուն և բարկութեան
եղբարց իմոց, և ազատ կացուցին զիս 'ի խայթէ խղճի
մտաց, որ ամենեւին սուրբ էր 'ի յանցանաց, անկայ
առաջի Աստուծոյ աղերսախառն արտասուօք հայցե-
լով 'ի նմանէ ներել անխորհրդաբար գործոց նոցին.
և ոչ թողուլ զիս 'ի խնամոց ամենատես աչաց իւրոց.
և գոչէի առ նա անմռունչ ձայնիւ 'ի խորոց սրտէ.
“Դու Տէր պահեցեր զարդարն Նոյ 'ի ջուրցն հեղե-
„ղաց ապականելով զնա 'ի չնչին փայտն, փոխանակ զի՝
„նա միայն գտաւ անարատ 'ի մէջ մարդկան անօրինե-
„լոց և ամբարշտելոց. և կամք բարերարութեան և ար-
„դարութեան քո հաճեցաւ փրկել զնա. Դու Աս-
„տուած փրկեցեր զՂովտ 'ի կիզմանէ հրոյն՝ որ տե-
„ղայր 'ի Սոդոմ, և 'ի ձեռն հրեշտակի քո զերծուցեր
„զնա 'ի վերահաս փորձանաց, փոխանակ զի՝ ոչ խառ-
„նակեցաւ ընդ անօրէնս, և ոչ վարակեցաւ նոցին ախ-
„տիւն. Դու Տէր ապրեցուցեր զԻսահակ հաւն իմ
„շնորհելով նմա զկեանսն, և ընկալար փոխանակ նորա
„զխոյն յողջակէզ, որով ողորմութիւն քո յաւիտեան
„հռչակեալ փառաբանի դարուց 'ի դարս. Սքանչելի
„են գործք քո Տէր, և ոչ զօրէ ոք 'ի համար առնուլ
„զբարերարութիւս քո. դու հովանի եղեր և պաշտպան
„հօր իմում բանակաւ երկնային քո զօրաց, զորս տե-
„սին աչք իմ. դու զօրացուցեր զնա մնալ աներկիւղ
„'ի խարդաւանացն Եսաւայ. Տէր իմ և Աստուած իմ.
„ոչ կարէ լեզու մարդկեղէն պատմել զխնամս որով
„փրկես զմեզ 'ի մեղաց և յամենայն չարեաց. զգործս

„ երեւարց իմոց մի համարիր 'ի մեղս. ներեա անգի-
„ տութեան նոցին. բայց զայս միայն տեսանել զանի-
„ րաւութիւն ընթացից իւրեանց. մերժեա յաչաց նո-
„ ցին զքօղ նախանձուն, որով կուրացեալ ոչ կարա-
„ ցին քննել և 'ի միտ առնուլ զչափ անօրէնութեան.
„ Տուր համբերութիւն հօր իմում Յակոբայ. և ա-
„ ւաքեա առ նա զողորմութիւն քո տէր, զի կեցցէ
„ և մի մեռցի ընդ վիշտս մահուան իմոյ, զոր պատ-
„ ճառիցէ նմա. Ընդարձակեա և զսիրտ իմ, զի կա-
„ րողացայց կալ մնալ աստ, ցորչափ հաճիցեն կամք
„ աստուածութեան քո. Ոչ խնդրեմ 'ի քէն Տէր
„ զազատութիւն 'ի խաւարային մթապատ գբոյս,
„ այլ միայն զպաշտպանութիւն խնամոց քոց, որով
„ յամենայնի պատրաստական գտեալ աստուածային
„ տնօրէնութեան քում, արժանի եղէց և շնորհաց քոց
„ աստ և 'ի հանդերձելում կեանսն „.

Այս օրինակ կացեալ իմ յաղօթս 'ի գբի անդ, լուսաւոր և գեղեցիկ երեւէր ինձ տեղին քան զապարանս արքայապանծս. քանզի յետ արտասուալից պաղատանաց իմոց զօրութիւն իմն կենսատու և դիւրութիւն սրտի զգացի յանձն իմ, որով հալածեցան 'ի մըտաց իմոց խորհուրդքն անյարիրք և ոգետանջք. ոչ ևս համարէի զիս թշուառ, այլ երջանիկ և յանդորրու. վիշտք տագնապիչք ոգւոյս ոչ ևս խռովէին զիս, այլ քաղցր և ամոք յուսադրութեամբ քաջալերէր անձն իմ. Ոչ հարկանէին զլսելիս իմ ձայնք ամբոխիչք մտացս անդորրութեան, այլ ուժգնապէս հնչէին բանք խրատականք և բարեզգեցոյք հաւուն իմոյ, եթէ՝ ոսկի առաւել քան 'ի քարն փորձութեան, փորձի 'ի բովս հրոյ, ուր յամենայն խառնմանց զտեալ մաքրի. Այսպէս և ինձ արժան է համբերել առ 'ի գտանել անարատ և արդար 'ի փորձութեանս յայսմիկ. Զայսոսիկ զմտաւ

ածեալ մխիթարել զանձն իմ ։

Տեսանես ո՛ կենակից իմ, եթէ զիա՞րդ պաշարի մարդ յանակնկալ պահու ՚ի վշտաց. ապա մի՛ ոք երանեսցէ զանձն յաշխարհի աստ ազատ և զերծ համարելով ՚ի փորձանաց. և ո՞ ոք ՚ի մահկանացուաց անմասն ՚ի ցաւոց և ՚ի նեղութեանց կեանս վարեսցէ անդորրականս. Են արդարեւ յաշխարհի ուրախութիւնք և կեանք երջանիկ, այլ ոչ երբէք անխառն ՚ի տրտմութեանց և ՚ի վշտաց ընթանան սորա. քանզի երջանկութիւն մարդոյ՝ ՚ի թշուառութեան յաւէտ պայծառանայ, և զօրութի՟ Աստուծոյ կենդանւոյ ՚ի նեղութեան կատարի ՚ի մեզ. Բարօրութիւն և դժբաղդութիւն՝ սորա երկոքին իբրու ամոլք լծակից թէ և չհամաձայնք, այլ անանջատապէս վարեալ ձգեն զկեանս մարդկան, ՚ի սոսկականացն հասեալ մինչև ՚ի թագաւորս՝ որք տեարք են աշխարհիս, և զսանձս տիեզերական իշխանութեանց ՚ի բուռն ունին, այլ ոչ ազատք գլխովին ՚ի չարեաց և ՚ի կրից են և նոքա ։

Ու՞ր արդեօք մարթ է մեզ գտանել Ճշմարիտ երջանկութիւն և ուրախութիւն անապական, անխառն ՚ի տրտմականաց, ոչ յայլ ուրեք, բայց եթէ յԱստուած, որ աղբիւրն է ամենայն երջանկութեան և մշտատև բերկրութեան, որպէս և ինքն է մշտակայ և յաւիտենական. ուստի որ ստացեալ ունի զԱստուած, ստանայ և զանչափ ուրախութիւն և զերջանկութիւն անփոփոխ. Ապա կանխեսցուք յաղօթս առ Աստուած, և խնդրեսցուք ՚ի նմանէ լինել միշտ ընդ մեզ և ՚ի մեզ. և ոչ ոք ընդ մեզ հակառակիցի յայնժամ, ոչ աշխարհս, ոչ բնութիւնս մեր, և ոչ որ թշնամի բնութեանս է անդստին ՚ի սկզբանէ ։

ԳԻՇԵՐ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Ո՜հ, կարի՛ է արդարեւ անգթութիւն եղբարց քոց, եւ ընդդէմ բնութեան գործք նոցին. եւ զիա՞րդ ոչ գալարեցան աղիք նոցա. եւ զիա՞րդ ոչ ջեռան նոքա 'ի գութ եղբայրական, այլ յանչափս ձգտեալ 'ի խեւութիւն՝ արկին զքեզ 'ի գուբ խաւարչտին. Եւ որչափ ժամանակս մնացեր անդ անսուաղ եւ անջուր. եւ թէ զիա՞րդ եղեւ ազատիլ քեզ անտի.

ՅՈՎԱՍԷՓ

Որչափ հեռի են երկինք 'ի սանդարամետից, այնչափ հեռի են գութք եւ կարեկցութիւնք 'ի սրտից նախանձոտաց. որք կան նախապաշարեալ եւ իբրու կաշկանդեալ ատելութեանն տուամբք, յորմէ չկարելով զերծանիլ, օր ըստ օրէ յաւելուն 'ի պնդութիւն եւ 'ի խստութիւն. Եւ յանհնարին պրկմանէն՝ արիւն սրտիցն չգտեալ զհարկաւոր եւ զկանոնաւոր շրջանն եւ զշարժումն զովարար, մշտանան 'ի նմին. եւ իւրովք ջերմութեամբքն այնքան տապանան, մինչեւ ինքնին վառիլ եւ կիզուլ. Եւ ահա այն ինքն է վառումն եւ բորբոքումն նախանձուն, որ դառնայ 'ի հուր անշէջ ատելութեանն. Քանզի՝ զի՞նչ այլ ինչ իցէ նախանձ, բայց եթէ հրատ կիզողական եւ տագնապիչ սրտի կրողին. զի որ նախանձոտն է, նախ խանձէ զինքն, հրդեհ արկեալ յընդերսն. որոյ ծուխն թանձրամած բարդ 'ի բարդ ելեալ դիզեալ բարձրանայ 'ի վեր,

զտեսութիւն աչացն նախ այլայլէ, որով կորուսանէ զկորովութիւն բբացն և զուղիղ հայեցուածն. Նման որոյ աչք նախանձոտաց զամենայն ինչ ընդ հակառակն նշմարէ 'ի մարդիկ. յորմէ յառաջ գան բանք զկծեցուցիչք և խայթիչք, զոր արձակեն յուժգնութենէ հրոյն ջերացելոյ 'ի սրտին. որպէս լեառն հրաբուղխ որ 'ի բոցակէզ այրմանէ անտի փորոտեացն մեծամեծ և ահագին քարինս 'ի վեր ընդ բերանն ձգեալ 'ի հեռաւոր վայրս պարսաքարէ. Այս գունակ և չարակնեայք՝ այլոց բարութեամբքն զկծեալք՝ արձակեն ըզլեզուս իւրեանց թունալից չարաբանութեամբք. Եւ իբրեւ տեսանեն եթէ օգտին ինչ ոչ առ համբերութեան նախանձելեացն և բարեզգեցից, փոխեն յայնժամ զբանս ընդ գործոց, և զչրթունսն փոխանակեն ընդ սրոյ, 'ի մահ դաւաճանեալ զկեանս նոցա.

Այս հուր մոլեգին չարակնութեան տիրեալ միանգամ սրտի մարդոյ, ոչ եւս թողու նմա զարդարութեան խորհրդովքն գալ. բառնայ 'ի սպառ 'ի նմանէ զգութ և զողորմութիւն, սրբել զարտասուս ապերջանկաց՝ զոր ինքն պատճառիցէ. Ոչ գտանի բնաւ և հետք իսկ կարեկցութեան 'ի սրտի նորա. զի հանդեալ կայ նա յաթոռն ատելութեան. իսկ նախանձ և ատելութիւն յորժամ զուգընթակից միմեանց իցեն, ծնանին զխստասրտութիւն և զանգթութիւն, զկիրս ասեմ՝ գազանայինս՝ որով խանդարի խոհականութիւնն յորոշել զբարին 'ի չարէ. և 'ի գործ դնեն զնոյն անտարբեր որոց և դիպիցին. ոչ զեղբայր, ոչ զսիրելի, ոչ զբարեկամ, և ոչ զորդի կարեն որոշել. Այս իսկ է աւասիկ գործ նախանձուն, որով և եղբարքն իմ վառեալ՝ ոչ կարացին ճանաչել զեղբայր իւրեանց. այլ 'ի բուռն ուժգնութենէ կրիցն մղեալ՝ արարին զոր ոչն էր վայել. վասն որոյ խնդրեցի յԱստուծոյ

վասն նոցա չշիջուցանել զհուր նախանձուն 'ի սրտիցն.

Օտարմանամ և հիացեալ յապշութիւն հարկանիմ, յորժամ զմտաւ ածեմ զանակնկալ փոփոխումն նոցա՝ զոր ցուցին 'ի փոքու միջոցի. Արկին զիս 'ի գուբն մեռանել անդ սովամահ. այլ յաւարտել իմ անդ զաղօթս, լուայ զձայն նոցա՝ որք կոչէին զիս 'ի վերուստ. և ընդ ձայնի բարբառոյն կախեցին 'ի վայր զառասան ինչ, զորոյ կալեալ զառասանոյն՝ ելի 'ի վեր. և տեսեալ զարեգակն, գոհացայ զՏեառնէ. Գտի անդ առ ջրհորովն զերկուս միայն յեղբարց իմոց, որք առեալ տարան զիս 'ի կարաւան ուղեւորաց, ուր էին և միւս եղբարք իմ, և վաճառեցին զիս քսան դահեկանի իբրեւ սորուկ անտէրունջ վաճառականաց Իսմայելացւոց, որք բազում գերիս գնեալ 'ի կողմանց Ասորեստանի և Դամասկոսի, տանէին յԵգիպտոս առ 'ի վաճառել. Ես հանեալ զիս 'ի վերայ ուղտու միոյ, հասաք 'ի քաղաքս յայս, ուր և վաճառեցին զիս այլոց.

Տես ինձ արդ՝ սիրելի իմ Ասանէթ, զի ոչ վաճառականք՝ որոց հարկ էր քննել և իմանալ զհանդամանս գերութեան իմոյ, հարց և փորձ ինչ արարին զինէն. և ոչ ես՝ որ անիրաւութեամբ վաճառեցայ իբրեւ գերի, խօսեցայ ինչ առ վաճառականս և առ եղբարսն իմ՝ 'ի վեր հանելով զատութիւն և զանօրէնութիւն սոցա. այլ կայի համակ անմռունչ, իբրեւ մարդ՝ որոյ ոչ իցէ լեզու և բան, այնպէս կայի յանձն արարեալ զանձն իմ կամացն Աստուծոյ. Քանզի վկայութիւն մտաց իմոց ցուցանէր ինձ եթէ լաւ էր ինձ երթալ յԵգիպտոս թէեւ 'ի գերութեան վիճակի, և ոչ բնաւ երկնչել. զի Աստուած՝ որ յայնմ փոքու միջոցի փոխեաց զվիճակ իմ 'ի մահուանէ 'ի կեանս ածանցեալ, կարէ և 'ի գերութենէ փրկել

զիս · յայս ակնկալութիւն հաստատեալ իմ՝ կայի անդորր և խաղաղ մտօք ·

Եւ ո՞ւր էր յայնժամ տագնապն՝ որով աղաչէի, փարէի զոտիւք եղբարց իմոց ներողամիտ գտանիլ առ իս · Ո՞ւր էր վիշտն կապանաց, որով զձեռս պրկեցին յետս, հոլանեալ զիս 'ի ծաղկեայ պատմուճանէս · Ո՞ւր էր դաժանական հայեցուածքն, որով զիս ահաբեկեալ իջուցին 'ի գուբն խաւար անջրդի · Ո՞ւր էր ուրախութիւնն եղբարց իմոց, որով՝ իբրու 'ի յաղթանակ ինչ քաջագործութեան պանծացեալ ընդ գործս իւրեանց, խնջոյս կազմեցին, խրախճանս յօրինեցին · Ո՞ւր էր գետօրէն արտասուք իմ, որով 'ի յատակս գբոյն խաղացուցանէի · ո՞ւր տրտմութիւնն և գուբն խաւար՝ ահացուցիչ սրտի իմոյ, յորում անմխիթար ողբայի զանմտութիւն եղբարց իմոց · Անցին այս ամենայն 'ի մէջ եօթնեակ ժամուց · և մահն իմ՝ որ առ կուրծս հասեալ կայր, դարձաւ 'ի գերութիւն · յորում ազդեցմունք լինէին մտաց իմոց յաներեւոյթ զօրութենէ, եթէ և այս փութով անցանիցէ, և եղիցի որպէս երազ զարթուցելոց · այլ համբերութեան էր ժամանակն · 'ի նոյն համբերութիւն և իմ կրթեալ, քաղցրացուցանէի զլուծ գերութեան իմոյ դիւրատար առնելով · Նա՛ զի՛ գիտացի իսկ քաջ եթէ մատն Աստուծոյ էր ինձ առաջնորդ, որ ոչ մեկնեալ բնաւ յինէն, զօրացուցանէր և խրախուսէր զիս արհամարհել զանհնարին վիշտս տառապանացն, որք հասանէին ինձ ·

Ո՛չ միայն ցաւ և կսկիծ սրտի իմոյ՝ որով տագնապէի, էր գութն հայրենի յորմէ վրիպեցայ · Ո՜հ, զիա՞րդ դառնութեամբ ընդոյր միտք իմ այն ինչ զմտաւ ածէի զհայրն իմ գորովագութ · որչափ առաւել խորհէի, այնչափ առաւել սաստկագոյն յիս սիրելութիւնն լինէր ·

Զիա՞րդ տոկ ունիցի նա. որպէս հանդուրժեսցէ 'ի լսել իւր զգերութիւն իմ, որ ոչ ինչ ընդհատ 'ի մահուանէ էր. զիա՞րդ տանիցեն աղէք նորա առաւելութեան վշտացն, զորս ոչ կարիցէ ոք մխիթարել, ոչ եղբարք իմ, որք բօթաբերք դուժկանք լինիցին և անհնարին սգոյն պատճառք. ոչ կանայք իւր, որք ոչ կարիցեն նմա տալ յոյս որդեծնութեան որ գիտիցէ գերել զսիրտ և զսէր նորին հայրական՝ որպէս եսս. զի յոյժ սիրէր նա զիս. պարծանք և պսակ անուանէր զիս որդւոց իւրոց տանեցունց. Վասն որոյ և պաղպաջուն ծաղկեղէն զգեստուն վայելչութեամբն զիս զգդէր և զգուէր. Արարիչդ իմ բարեխնամ, գոչէի առ Տէր, որ 'ի խորոց դժոխատիպ անդնդոց հանելով զիս առ տարս ամենաբաւական քով աջովդ՝ մխիթարեցեր յուսով կենաց. մխիթարեա՛ և զհայրն իմ 'ի ծերութեան իւրում, զի մի՛ տրտմութիւն տարապայման ցաւոց իջուսցէ զնա 'ի հող մահու. քանզի հաւատամ յամենակարող բազուկ քո, որով գործես զանճառելիս անհաս մտաց մարդկան.

Ընդ այս հակիրճ պաղատանս ողբանուէր սրտիս, լոյս ինձ աստուածային ծագեաց 'ի միտս իմ. դիւրեցան անձկութիւնք ոգւոյս. բերկրեցայ զուարճացայ, և զօրութիւն ինչ նոր զգեցայ յանձին. Յայնժամ պահու հասեալ կարաւանն յիջեւանս, կոչեաց զիս առ ինքն վաճառականն՝ որ գնեացն զիս, և յանձնեաց ինձ ըզտնտեսութիւն, հոգ տանել ամենայն պիտոյից իւրոցն և գերեկցաց իմոց. վասն զի՛ տեսեալ զշուտափոյթ ընթացս իմ և զկամակար հպատակութիւնն, հաճեցաւ ընդ իս, և սիրեաց որդեբար, ուստի և առեալ կացոյց զիս հրամանատար ամենայն գործոցն.

Ահա և այս շնորհ է ողորմութեանն Աստուծոյ, զոր եցոյց ինձ. վասն որոյ՝ ոչ ևս համարէի զիս 'ի գե-

րութեան , որոյ լուծն ոչ ծանրացաւ բնաւ 'ի վերայ իմ . Քանզի՝ ոչ եթէ 'ի յօժարութենէ եղբարց իմոց եղեւ վաճառումն իմ և գալ յԵգիպտոս , այլ Աս-տուած էր որ ներգործէր և տնօրինէր զամենայն , և յա-ջողէր առաջի իմ զամենայն ճանապարհս . Զայս գի-տելով իմ հաւաստի՝ յամենայնի ուրախ էի , յամենայնի զուարթ և խոհեմ աչալրջութեամբ կատարէի զպաշ-տօն իմ առանց ինչ սոգտանաց . որոյ վասն և տէրն իմ սիրէր զիս ոգւով չափ՝ առաւել քան զգերեկիցսն իմ , որք ակամայ և տրտնջանօք ծառայէին նմա , ու-տի և ոչ պակասէին 'ի թիկանց նոցին հարուածք գա-նից . Պոտհանայի հանապազ զմարդասիրութենէ Արար-չին , որ գութ արկեալ 'ի սիրտ վաճառականին՝ խնա-մէր զիս . և իմ այնչափ առաւելուին շնորհապարտ երախտագիտութիւնք եթէ առ տէրն իմ , և եթէ առ Աստուած .

ԳԻՐՔ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Ի հասանել ձեր 'ի մայրաքաղաքս , ո՞վ գնեաց զքեզ . և որպիսի՞ էր վիճակն ձեր . զի յոյժ ցան-կամ գիտել , և խորովի յիս սիրտ իմ ընդ աղէտս և ընդ գերութիւն քո .

ՅՈՎՍԷՓ

Ոչ անցեալ բազում ժամանակս յետ հասանելոյ մեր աստ, գնեաց զիս Պետափրէս դահճապետն, որ մեռաւ յանցելում ամի ինքն և կին իւր, որ և էր սպարապետ արքունի զօրացն Փարաւոնի.

Տեսեալ սորա զանձնանուէր ծառայութիւն իմ, և զհաւատարմութիւն, յանձնեաց ինձ 'ի սուղ ժամանակի զտնտեսութիւն տան իւրոյ. և հետզհետէ ամենայն խումբք ծառայիցն և աղախնեաց, և ամենայն որ ինչ նորա էր 'ի տան, անկան ընդ իմով իշխանութեամբ. Եւ ես ըստ կարգի զամենայն ինչ յարդարէի, և իւրաքանչիւր ումեք տնօրինէի զպարտուպատշաճ գործս 'ի ծառայութիւն. Մինչև մտեալ իմ 'ի տուն նորա, էր տեսանել զայն՝ ասպարէզ իմն լինել խուժադուժ մոլութեանց և անկարգութեանց. քանզի բազմութիւն ծառայից խանգարումն է տան, եթէ չիցէ ոք նոցա գլխաւոր և հրամանատար, որ զնոսա շահիցէ. մանաւանդ եթէ տէր տանն զբաղեալ իցէ բազմօք 'ի պաշտօնի իւրում, որպիսի էր Պետափրէս տէրն իմ. Յաղագս որոյ 'ի յանձնել ինձ զվերակացութիւնն, կարգադրեցի զամենայն ծառայս 'ի յատկացեալ սպասու իւրեանց. և ըստ խրատու հաւուն իմոյ՝ բարեվայելուչ յարդարեցի զտուն նորա, ուր փայլէր բարեկարգութիւն և անդորրութիւն. Եւ յետ այնորիկ ոչ եւս հոգայր ինչ տէր իմ զապարանիցն իւրոց և զընչից, և ոչ իսկ գիտէր թէ զինչ 'ի տան իւրում կայցէ, բայց միայն զհացն զոր ուտէր, և վայելէր 'ի հանգստութիւն և յուրախութիւն.

Եւ արդ այսպէս ահա փոխեցաւ փոյթ ընդ փոյթ վիճակ իմ. զի թէպէտ և գերի էի և իբրև գերի վա-

Ճառեցայ, այլ իշխանութեամբն՝ զոր հաւատացաւ ինձ տէր իմ, ոչ միայն ազատ էի, այլ և իշխող. ամենայն ինչք և ստացուածք տեառն իմոյ կային ընդ իմով ձեռամբ. ծառայքն համօրէն պատրաստ էին ամենայն ակնարկութեան իմում. Մեծ էր շնորհս յոր վայելէի յերեսաց տեառն իմոյ. այլ ոչ եթէ յանձնէ նորա ինչ էր այն, այլ պարգեւ էր Արարչին իմոյ, որ հովանի ունելով զաջ իւր 'ի վերայ իմ, ետ ինձ գտանել շնորհս առաջի տեառն իմոյ, և կացուցանել զիս 'ի վերայ ամենայն ծառայից և ընչից իւրոց.

Տեսանեմ զիարդ մեծ զանազանութիւն է ընդ գերին և ընդ իշխանն. կապեալ կայի 'ի գերութեան, և արձակեալ անդէն համբարձայ 'ի պատիւ հրամանատարութեան. Եւ այս անակնկալ դիպուածք բարօրութեան՝ ոչ գոյզն պտուղ իսկ էր և օրհնութեան հաւուն իմոյ, զոր Աստուած արդիւնաւորեալ զամենայն ինչ յաջողէր 'ի ձեռս իմ. Քանզի Իսահակ հաւն իմ խրատելով զիս անդստին 'ի մանկութեան, տպաւորեաց 'ի միտս իմ զսկզբունս աստուածպաշտութեան և ջերմեռանդն աղօթասիրութեան, որով ամենայն դժուարինքն լինէին ինձ 'ի դիւրինս. Եւ զայն ճշգրտագոյնս փորձեալ 'ի վերայ հասի, և վկայեմ՝ եթէ չիք ոք 'ի մարդիկ ազատ քան զճշմարիտ աստուածապաշտն, և որ զամենայն հոգս իւր թողու յԱստուած՝ ապաւինեալ յողորմութիւն և յիմաստութիւն նորին. Եւ չիք ոք երջանիկ յաշխարհիս քան զայն՝ որ զվիշտս իւր ամենայն սիրով և համբերութեամբ ընկալեալ, համարի զայնս պարգեւք Աստուծոյ, տուեալ ոչ 'ի պատիժ, այլ 'ի խրատ և 'ի զգուշութիւն. քանզի 'ի նմին իսկ նեղութեան, գտանէ կից և զզօրութիւն վշտամբերութեան. Իսկ ընդ հակառակն ճշմարտապէս գերի այն է, որ 'ի յըմբոստ կրից իւրոց գերեալն է և մեղաց

ծառայեալ. արդարև այնպիսիք քան զամենայն մարդկան վարեալ գերիսն ստրկագոյնք են և կարեկցութեան արժանաւորք. Այլ մեծ է ողորմութիւնն Աստուծոյ, և գթութեան նորա չիք սահման. և որ դառնայ առ ինքն՝ ոչ թողու անօգնական, և ոչ լքանէ զառ նա յուսացեալսն. փրկէ յամենայն որոգայթից թշնամւոյն և յանդորր հանէ զհոգի նորա.

Բարւոք մտախոհ լեր սիրեցեալդ իմ Ասանէթ, և քաջ կշռեա 'ի միտի քում զամենայն հանգամանս վիճակին իմոյ, և սքանչացեալ հիացիր. զի ապշութեան են իրքս, և ոչ դուզնաքեայ ինչ. Այլ ես համառօտագոյնս անցանեմ բանիւ, զի մի ձանձրաբեռնեցից զլսողութիւն քո. Թողում ասել զշնորհակալիսն տեառն իմոյ, զոր գոհութեամբ իմն մատուցանէր առ Աստուած իւր. զի օրհնեաց զտուն իւր՝ ասէր, և լցոյց ամենայն բարութեամբ. Թողում դարձեալ 'ի մէջ բերել զծառայից տեառն իմոյ զնախանձ, մանաւանդ պարմանեացն Եգիպտացւոց՝ զոր տանէին ընդ վիճակն իմ. և արդարև նախանձելի իսկ էր այն և բազմաց ըղձալի, որ մեծաւ գովասանութեամբ յիշէր և յածէր յամենեցուն բերանս. Երանէին զտէրն իմ վասն ունելոյ զիս զգերեալս՝ յիւրում սպասու. զարմացեալ 'ի սքանչացումն կրթէին ընդ բարեկարգութիւն տանն. քանզի գիտէին ամենեքին՝ յորպիսի վիճակի և 'ի կարգի գտանէր յառաջագոյն. Եւ ստոյգ այնպիսի իսկ էր զոր խօսէինն. այլ ես յահի և յերկիւղի մեծի կայի, կասկածելով ընդ գովեստսն զոր տային ինձ, և ընդ պատիւ յարգանացն զոր ընդունէի յամենեցունց. Քանզի յայնժամ առաւելագոյն զգուշութեան պէտք էին ինձ ունել յիմում պաշտօնի և մեծագոյն փութոյ, չտալ տեղի անհոգութեան և պէսպէս մոլեկան գնացից. Ո՜ի թէ գամ մի մոռա֊

ցեալ զչափ անձին իմոյ գթէի 'ի հեշտալիսն, և 'ի հաս-տատութենէ բարեկարգ ընթացից սայթաքեալ թիւրէի, անդէն 'ի վայր զառածեալ ամենամանր փշրմամբ խորտակէի անդարմանելի վէրս ընկալեալ ընդ պատիւ և ընդ համարումն անձին իմոյ. Յոյր սակս կանխէի միշտ յաղօթս առ մարդասէրն Աստուած, խնդրելով 'ի նմանէ մի թողուլ զիս անկանել 'ի վտանգս փորձութեանց, և ձաղ կացուցանել զիս առաջի մարդկան.

Եւ ո՞չ արդեօք իրաւունս ունէի զսոյն աղաչանս մատուցանել առ Բարձրեալն. և կարի իսկ քաջ. այլ և ամենայն ումեք պարտք իմն անհրաժարելի է առնել զսոյն. ոչ միայն յաւուր նեղութեան, այլ և յորժամ զբարեկեցիկ և զհանգստեան կեանս վարէ, յորժամ յանդորրութեան և յուրախութեան կայցէ, յորժամ քաղցրաժպիտ յերեսս նորա ծիծաղիցէ բաղդն, և յապահովի ամենայն ուստեք կայցէ. Ստոյգ իմն է և այս՝ եթէ վիշտք և նեղութիւնք աղօթասէրս գործեն զմարդ և ջերմեռանդս առ 'ի զերծանիլ 'ի վշտացն. Իսկ որք կատարեալքն են 'ի մարդիկ բանիւ և փորձիւ, առաւել ջերմ են առ Աստուած 'ի բարեկենդանութեան և յանդորրութեան իւրեանց, գիտելով եթէ ոչ կայուն և հաստատուն ինչ է մարդկան վիճակ, և դժբաղդութիւնն մերձ առ դուրս կայ, ոչ եթէ յարտաքին փորձութեանց, այլ որ առաւելն է 'ի մարմնական հեշտութեանց. որում եթէ ոք հաւատայցէ զանձն իւր, անձինն պատրաստէ զկորուստ.

Ապա աղօթեսցուք առ Աստուած յայսմ իշխանական ճոխութեանս մերում, 'ի հաստի և անսասանելի պահել զոտս մեր յամենայն արկածից փորձանաց. և յաւուրս բարեկեցութեան մերում եթէ հաշտ առնիցեմք մեզ զԱստուած, յաւուր նեղութեան վաղվաղէ լսել ձայնի աղաչանաց մերոց, և փրկէ զմեզ.

ԳԻՐՔ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Ե՞ր ոչ խնդրեցեր յԱստուծոյ ազատիլ 'ի գերութենէդ, որ դառն է արդարեւ և կոչումն իսկ նորին, և քան զամենայն անարգութիւնս և զփորձութիւնս անարգագոյն և դժնդակ. և զի՞նչ առաւել մեծագոյն դժբաղդութիւն կայցէ մարդոյ քան զգերութիւնն. զի թէեւ հանդիստ իցէ և յանդորր, և իշխող 'ի վերայ այլոց, այլ մի միայն անուն ստրկութեանն և գերութեան՝ ծանր է լսելեաց.

ՅՈՎՍԷՓ

Ստոյգ այնպէսի իմն է գերութիւնն, խոտելի յաչս մարդկան, և հակառակ ազատածին բնութեան մարդոյ, որ անձնիշխան և ազատ ստեղծաւ յԱստուծոյ 'ի սկզբան, և գերութեամբ բարձաւ ազատութիւնս այս 'ի նմանէ. այլ զոր օրինակ ասացի քեզ, համբերութեան էր ժամանակն, յորում եթէ աղաչէի զԱստուած վասն ազատութեան իմոյ, ծանրութ̃ի վշտաց թուէր ինձ, և տրտունջ ոչ այլ օգտէր ինձ, բայց եթէ ծանրացուցանել զլուծ պաշտօնի իմոյ. և յայնժամ լինէր ինձ դժնդակ գերութիւն իմ. Այլ ես կամովին մատուցեալ զանձն իմ 'ի նախասահմանեալ պատահարս ամենայն վշտաց, և արկեալ զիս մտադիւր ընդ լծով մարդկան իմոց նմանեաց, ազատ համարէի զանձն իմ. և իբրեւ պարգեւ ինչ աստուածային՝ այնպէս ըղձութեամբ համբուրիւ յանձն իմ ընկալայ

զգերութիւն. յորում գտի զմեծ ողորմութիւն Արար-չին՝ պաշտօնատար իւրոյ խնկանուէր կամեցն զիս կա-ցուցեալ. Վասն որոյ մի միայն մնայր ինձ հայցել 'ի նմանէ պահել զիս յերկրաւոր փորձութեանց, և ան-արատ կացուցանել զպատիւ և զանուն իմ յիմում պաշտօնիս.

Քանզի փորձութիւնն որոգայթ է բանսարկուին, ուր անհուն ակամբն գուն գործէ արկանել զհաւա-տարիմ ծառայս Աստուծոյ. Իսկ տեսակք այլ և այլ են Թակարդից և բիւրակերպ, յոր գթեցուցեալ յերկնակոխ շաւղաց՝ կապտէ զմեզ գլխովին 'ի շնորհաց Արարչին. Թակարդք էին ինձ գովեստքն, իշխանութին, վարկումնն, նախանձն ծառայորերոյն, մանաւանդ ա-ռոյգ հասակ պատանեկութեան իմոյ. քանզի դեռա-դեռ այն ինչ ցցուեալ էին մուրուացն իմ տէգք և փափկիկ հերովք այտքն իմ փաղփաղեալ, և բոսորագեղ կարմրութիւն Թակարդիչ երեսացն իմոց կենդանա-ցայտ շողշողեալ, որ զնիրս 'ի սրտին գրգռէ. Արդ այսչափ և այսքան որոգայթք պաշարեալ զիս ունէին, կարօտ էի օգնականութեան Աստուծոյ, առանց որոյ յանհնարինս է մարդոյ անսայթաք կալ մնալ 'ի կենցա-ղումս, և անարատ պահել զանմեղութեան պատմու-ճանն 'ի փորձութեանց և 'ի մեղաց. Վասն որոյ՝ ստէպ խնդրէի յԱստուծոյ չմատնել զիս 'ի փորձանս.

Լուաւ Տէր իմոցս աղաչանաց և փրկեաց զիս, և ոչ եթող ընկճիլ 'ի կրից և համբուրել զկորուստն ան-վախճան՝ փորձութեամբ աշխարհիս, որ վառեաց բոր-բոքեաց զհուր մոլեկան՝ այրել և սպառել զիս. Եւ զոր հաղբս որոգայթից լարեալ սատանայ հնարեցաւ դնել զանձն իմ. լուր և պատմեցից քեզ 'ի կարճոյ, զի մի զքո ողջախոհ և պարկեշտ լսելիսդ արատաւորեցից յայտնա-բանել կամելով՝ զոր ծածկելն խոհեմութեան է գործ.

Ըստ որում հարկ պաշտօնին իմոյ պարտաւորէր զիս շրջել ընդ ամենայն կողմ և ընդ սենեակս տան տեառն իմոյ, հոգալ զհարկաւոր ծառայութիւնս, դէպ եղեւ ինձ յաւուր միում յածել շրջել միայնակ առանձինն 'ի վերնայարկս տան. տիկին տեառն իմոյ. որ զգնայրն և նա 'ի մենութեան յընդարձակ սրահին, մօտեցաւ առ իս իբրու բան ինչ ասել ցիս, և բուռն եհար զինէն մեղմաբար, և բռնադատէր զիս անպատկառաբար լինել ընդ նմա. Սասանեցաւ անձն իմ և դողումն կալաւ զամենայն անդամս իմ. դարձայ և յանդիմանեցի զնա քաղցրութեամբ պատկառ կալ իւրում տիկնութեան և պատուոյ առն իւրում. Ջեռացաւ յինէն զայն նուագ, ոչ իսպառ զգաստացեալ յանձին, այլ առաւել եւս սրել զցանկութիւն իւր, և ածել զիս զկամօք իւրովք.

Այլ ես խորհելով ընդ միտս իմ ընդ դժպատեհ դէպսն, ընդ որ երբէք ակն ոչ ունէի, սասանէի յիս ինքն. Նա՛ զի՛ և աչօք իսկ տեսեալ իմ զծուխ հրոյն անօրինացն Սոդոմացւոց, որք այսու վաւաշոտ ախտիւս բորբոքեալ, նախ զամօթ և զպատկառանս երեսացն իւրեանց ապականեցին. մերժեցին 'ի մտաց իւրեանց զբանականութեանն շնորհ, և իբրեւ վարազ և կինձն վայրենի զամենայն զկեանս իւրեանց 'ի նոյն կատաղութիւն անցուցանէին 'ի չար ախտս ցանկութեան խանձողեալ. Եւ իբրեւ իսպառ արտաքս զեղան 'ի մտաց, մոռացան զմարդկութիւնն, և համարէին եթէ վասն պղծութեան և անառակ ախտից կեայցեն յաշխարհի. Այս հուր տոփանաց, որ այրեալ տոչորէ զներքինս մարդկան և վառէ զմիտսն 'ի խնդիր Ճարակոյ, ոչ գիտէ երբէք զովանալ և շիջանիլ, և ոչ իսկ յագուրդ առնու՝ ցորչափ և պարանոցաթաղ 'ի նմին կայցէ. զի հանդոյն դժոխոց ոչ բնաւ լնու, և ոչ երբէք շիջանի.

և իբրեւ մահուամբ ակամայ հեռացի անտի, անկանի անդէն յանշիջանելի հուրն դժոխոց.

Արդ՝ զայս ամենայն քաջ գիտելով իմ, մերժեցի զնա, և խրատեցի եւս զդատաստանաւ յանհամեստու-թենէ անտի, և մի մատնել զպարկեշտ անկողնոյն զա-մուսնութիւն և խոցել զպատիւ տան իւրոյ. Ամօթն դոյզն ինչ ազդեցաւ նմին և չիկնեցոյց զերեսս նորա. և ՚ի բաց եկաց յինէն. Իսկ քանզի անակնկալ այս հուր փորձութեան ՚ի նմին իսկ ՚ի տան կայր յորում եմն բնակեալ, և յորմէ անհնար էր ինձ հեռանալ, ըստ որում ՚ի գերութեան կայի, եւս և հարկ պաշտօնի իմոյ ստիպէր զիս յամենայն աւուր ընդ ամենայն տե-ղիս տանն շրջել, տնտեսել և հոգալ զպակասութիւնս, եղեւ օր մի, և զգնայի ըստ սովորութեան իմում, ետես զիս դարձեալ միայնակ, և մերձեցեալ բուռն եհար ուժգին զվերարկուէն իմմէ, և բռնութեամբ խոնարհեցուցանել զիս հնարէր իւրոյն լրբենի կամաց. յորմէ չկայր ինձ այլ հնարս զերծանելոյ, բայց միայն փախստեամբ. Ուստի թողեալ զվերարկուն իմ ՚ի ձեռս նորա, աճապարեցի անդէն սրընթաց վաղվաղ արտաքս քան զդուռնն խոյս տալ, և ազատիլ. Գոչէր նա սաստիկ. Ճիչ բառնայր բարձրաձայն. ձայնէր զամենայն ընտանեակսն և զծառայս. ցուցանէր նոցա զզգեստն իմ, և բողոքէր զնոսա ՚ի վկայութիւն առա-ջի տեառն իմոյ, զինեւ չփելով զյանցանս բռնաբարե-լոյ զնա ՚ի գործս աղտեղիս.

Տեսանես սիրելի իմ Ասանէթ, զփորձութեան որոգայթն, ուր փութացաւ զիս արկանել ամենաչարն սատանայ ՚ի ձեռն այրատ և անպատկառ կնոջ. Այլ նոյն ինքն Աստուած՝ որ իւրով ողորմութեամբ ոչ ե-թող զիս զմահ չարաչար համբուրել յեղբարց իմոց և կորնչիլ անսուաղ ՚ի գբի անդ, նոյնն դարձեալ ազա-

տեաց զիս և 'ի բաց կորզեաց 'ի մահուանէ, որ քան զամենայն մահուն դժնդակագոյն է. զի ոչ միայն պատճառ կորստեան մարմնոյն լինէր, այլ և հոգւոյն. Երջանիկ էր ինձ զմահ գտանել 'ի խաւար գբին, քան զայսպիսի եղեռն գործել առաջի Տեառն, և անհաւատարիմ գտանել.

Ո՛հ, քանի՜ գարշելի է ախտս այս վաւաշոտութեան, մանաւանդ եթէ 'ի կանայս. այլ մի ինչ ծանր թուիցին քեզ բանք իմ համեստասուն լծակցդ իմ, զի ոչ 'ի համարի սոցա ունիմ ինչ զքեզ. Յոլովագոյնք են 'ի կանանց սեռի, որք գործի և թակարդ լինելով բանսարկուին, զբազումս յերիտասարդաց ձգեն անդր, և լինին կորստեան նոցին պատճառ. Իսկ ոչ միայն այսչափ, այլ անթիւ և անհամար անկարգութիւնք ծագին 'ի նոցանէ. անհաւատարմութիւն 'ի մէջ ամուսնական պարտաւորութեանց, սպանութիւնք զաւակաց անօրէնութեամբ յղացելոց. ատելութիւն առ օրինաւոր ամուսինս, քանդումն դերդաստանաց և վատնումն ընչից, և այլ պէսպէս չարիք ծագին 'ի նոցանէ. Ապա ցանկալիդ իմ, 'ի պարկեշտութեան և 'ի համեստութեան կրթեսցուք զմիակ դուստրն մեր, ատելի ցուցանելով յաչս նորա և զխորհուրդս իսկ գարշելիս. և զպատիժ Սոդոմացւոցն ստէպ ստէպ յիշատակելով առաջի նորա, բևեռեսցուք 'ի սրտի նորին զերկիւղ Տեառն.

ԳԻՐՔ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Զար է ապաքէն ցանկութեան ախտն , այլ չարագոյն եւս է արամբելոյն , որ ընդդէմ ամուսնական հաւատարմութեանն՝ առ օտարսն և ողջախոհ պարմանիսն ախտանայ մոլեգնաբար շամբշելով . Եւ զի՞նչ , զերծա՞ր արդեօք ՚ի ձեռաց բորբորիտոնին այնմիկ փախստեամբ քով .

ՅՈՎՍԷՓ

Այո՛ , և կարի իսկ քաջ . զերծայ ՚ի դժոխային փորձութենէն և ազատեցայ ՚ի յաւիտենական մահուանէն , զոր նիւթեաց ինձ կինն անամօթ . Այլ բաբէ , ունելով նա ՚ի ձեռին զվերարկուն իմ իբր փաստ հաստատուն և զօրաւոր , դուն գործեաց այնու վրէժխնդիր լինել ինձ , փոխանակելով ընդ կատաղութեան զկիրս ցանկութեանն . Վասն որոյ՝ յորժամ եկն այր նորա ՚ի տուն , անկաւ լալագին դիմօք առաջի նորա . ձեռն զօձիւք արկեալ , զծղխն կոծելով , զհերսն փետելով , ցուցանէր նմա զվերարկուն իմ . զի՛նչ , ասէր , ածեր բերեր այսր մանուկ Եբրայեցի խաղ առնել զիս և ծանակ կացուցանել . այս քանի՛ցս անգամ փորձէ զիս , և մատնել զքո անկողինդ հնարի . ահա և յայս նուագ , այն ինչ անկանէր ընդ իս , և զպատիւ իմ ջանայր կորզել յինէն , ձայն ետու ծառայից տանն , և խոյս տուեալ նորա յահէ՝ եթող ՚ի ձեռս իմ զվերարկուն իւր . Զայս ասէր և զպասաւորսն ամենայն

վկայ կացուցանէր, և արտասուօք աչացն ջանայր հա֊ ւատարիմ առնել զբանն.

Իսկ տէր իմ՝ դատապարտեալ ընդ անիրաւ զրպարտու֊ թեամբ կնոջն, և հաւատացեալ առանց ինչ տեղեկա֊ նալոյ լինելն և քննելոյ զիրսն, սաստիկ բարկութեամբ հրաման ետ արկանել զիս ՚ի ներքին բանտն, ուր տե֊ ղի մահապարտացն էր. Կատարեցաւ անդէն հրամանն. և առեալ ծառայից, որք և նոքա նախանձու վառեալ էին ընդ երջանկութիւն իմ, եդին զիս ՚ի կոճեղս բան֊ տի ՚ի ներքնումն.

Այլ ես ուրախ էի յոյժ յարգելմանս անդ. վասն զի լաւ համարէի մեռանել ՚ի խաւարչտին տեղւոջ ՚ի բանդի մաքուր ՚ի մեղաց, քան կալ մեղօք ՚ի սրահս ար֊ քունեաց. Մանաւանդ զի և առաջին վիշտք և նե֊ ղութիւնք իմ և անհաստատ փոփոխութիւնք նոցին՝ անբաւ մխիթարութիւն տային ինձ. որոյ յիշատակն և սքանչելի փրկութիւնն Աստուծոյ՝ զոր գործեաց ՚ի վերայ իմ, քաղցրանայր հանապազ ՚ի քիմս մտացն իմոց. Տրտմութիւն և սեւամաղձութիւն՝ զոր սովոր է տե֊ սանել ՚ի բանտարկեալսն, ոչ մերձեցան առ իս, և ոչ վշտացուցին զսիրտ իմ. քանզի վկայէր ինձ ՚ի ներքուստ խիղճ իմ զանմեղութենէ իմմէ, և ոչ մի ինչ ըստ֊ գտանս գտանէի ՚ի գործս իմ. վասն որոյ անկասկած ուրախութեամբ լնոյր անձն իմ. Մթութիւն խաւա֊ րային տեղւոյն՝ լուսաւորէր զերկկամունս իմ, և տե֊ սանէի զիս ամենեւին ազատ ՚ի մեղաց. վասն որոյ՝ քան զառաջինն կայտառ էի և զուարթ. դիմէի կալ յա֊ ղօթս առ Աստուած գոհանալով զնորին փրկութենէ. զի եթէ ոչ ձեռն Տեառն օգնեալ էր ինձ, փոքր մի ևս յաձիւն դարձեալ ամենայն ոսկերաց իմոց՝ բնա֊ կէի ՚ի դժոխս. Այլ շնորհ նորա կանխեաց ՚ի վերայ իմ, որով զօրացայ ՚ի գերութեան անդ և յաստարութե

ատել զմեղս և յաղթող ելանել 'ի կռուարանէն պար-տեալ ամօթապարտ զչար Թշնամին. Եւ անկեալ 'ի վերայ երեսաց իմոց՝ մաղթէի յԱստուծոյ չթողուլ զիս զհետ կամաց մարմնոյս ընթանալ. այլ պահել զիս 'ի ձեռն հրեշտակի իւրոյ յամենայն գործոց մեղաց.

Իբրև այսպիսի բարեմաղթութեամբ մխիթարեալ կամակար կայի 'ի համբերութեան, և այցելութեան Տեառն ակն եդեալ սպասէի, սպասաւորք բանդա-պետին ձայն ետուն ինձ 'ի հեռուստ գիտել եթէ ծծիցեմ արդեօք տակաւին զօդ կենդանութեան 'ի յապականեալ և 'ի չարահոտ տեղւոջն՝ ուր կայի, և տացեն ինձ զօրապահիկ կերակուրն իմ, որ էր սակա-ւինչ ոսպնաթան ընդ չորաբեկ հացի, որ և հազիւ հազ բաւական լինէր պահել զիս 'ի վշտակիր կենդանութ̅ե իմում. Պատասխանի ետու նոցա խնդրութեամբ իմն՝ ցուցանելով զկայտառութիւն դիմացս և զանձնաս առողջութիւն իմ՝ յոր վայելէի զօրութեամբ Արար-չին իմոյ. Կոչեաց զիս բանդապետն առ լոյս՝ տեսա-նել զիս, և ետ ինձ Տէր շնորհս առաջի նորա. սիրեաց զիս և մխիթարեաց և շղթայաղերծ կացոյց զոտս իմ 'ի կապից. և ապա կարգեաց զիս փոխանակ իւր վե-րակացու լինել բանդարկելոց.

Զուարթացեալ անձն իմ՝ փառս ետու երկնա-ւոր այցելուին իմոյ, որ ոչ երբէք բաժանեցաւ յինէն, այլ յամենայն նեղութիւնս իմ մխիթարիչ եղեւ ինձ և փրկիչ. և սկսայ ամենայն սիրով և աչալրջութեամբ կատարել զպաշտօն իմ, հաւատարմութեամբ ծա-ռայելով, և մարդասիրական գթարկութեամբ խնամէի և հոգայի զպէտս կալանաւորացն. որոց մոռացեալ զվիշտս իւրեանց՝ համբերատար ոգւով սպասեալ մնային այցելութ̅ե Տեառն. Քանզի զմիոյ միոյ ցաւոցն և վիրաց զկարեւոր սպեղանիսն մատուցեալ սփոփէի, և յոր-

գործէի զնոսա 'ի զեղջ և յապաշաւ, և լալ զմեղս իւրեանց, ոյք վասն արկեալ էին 'ի բանդ.

Տեսանեմ ո՛վ սրտակից ամուսին իմ, եթէ որքան հաճոյ է Աստուծոյ ողջախոհ մաքրութիւն սրտի. ըզմտաւ ած միանգամ, զի իբրև մանկապարտ եդին զիս 'ի բանտի, շղթայակապ զոտս իմ պրկեցին. խնայեցին յինէն զարեգականն զլոյս՝ փակելով 'ի խաւարային տեղւոջ, ուր անտանելի էր ապականութիւն օդոյն վասն գիճութեան ստորերկրեայ գետնափորին. յաղտաղտին մօրս և 'ի թանձր ճահիճս ընկղմեալ կայի 'ի քուն՝ իբր 'ի մահիճս հանգստեան գիշերոյ. անդ և արտասուք իմ գետօրէն հոսեալ խառնէին ընդ խոնաւութեան երկրին. այլ ոչ յուսահատութեան էին ինձ արտասուքն, այլ մխիթարութեան, և խորին զգացողութեան ըստ ողորմութեն Արարչին. Բանզի այնպէս ապաւինեալ կայի 'ի յոյսն վերին և 'ի գութն արարչական՝ որում պարտաւորիմ զկեանս և զառողջութիւն իմ, մինչեւ համարել եթէ յարքունի ապարանսն կայցեմ. խորհէի միշտ յերկնային ողորմութիւնն, որով խաւար աղջամուղջ բանտին, թուէր ինձ լոյս արփիածագ. զի միտք իմ քան զնշոյլ արեգին լուսաւորագոյն էին, և տեսանէի ոչ միայն որ շուրջ զինեւ կային զմթապատ առարկայս, այլ զոր արտաքոյ քան զմիտսն իմ էին՝ զօրէի նշմարել, որչափ ինչ ազդէր յիս զօրութիւնն վերնական առ 'ի սփոփանս տխրութեան և ցաւոց իմոց. Յաւանդագին ջերմութիւն ոգւոյս՝ զոր աղօթանուէր հայցուածովք 'ի վեր առաքէի, ցամաքեցուցանէր զտամկութիւն մօրին ապականութեցն, և փոխարկէր ինձ 'ի սիգ քաղցրութեան օդոյ առ պահպանութիւն կենդանութեան իմոյ. Ագեշահ և գեղեցիկ ազդմունս շնորհէին ինձ կապանք շղթայից ոտից իմոց, որք շռնչելով իմն յամենայն քայլափոխի՝

մխիթարութեանն ինձ զԱստուծոյն բարերարութիւն, որպէս և կարողութիւն ուստի հօր իմոյ շնորհեցաւ նմա յաստուածուստ ՚ի միջատակ երկնային տեսլեանն. վասն որոյ պարգեւ իմն համարէի ես զայնոսիկ, և զմօտալուտ փրկութիւն Արարչին գուշակելով մխիթարէի. Բանդին և լուսագոյն իսկ վարկանէի ունակայիւք մնալ յարգելանս բանտի և խոկալ ՚ի շնորհս Տեառն, քան արձակ ընթացիւք գնալ ՚ի մեղս, և անձամբ անձին պատրաստել զանլուծանելի կապանս մշտապատ և մշտագլէր բանտին խաւարասէր լչնանին. Այլ ոչ իսպառ անտես արար զինեւ Աստուած. առաքեաց զբարերար աջ իւր, եհան յանդորր զանձն իմ, և առեալ կացոյց զիս ՚ի վերակացութիւն բանտարկելոց, որ յայտնի նշանակ էր և առհաւատչեայ ապագայ փրկութեան և իշխանութեան իմոյ.

ԳԻՐՔ ՅԻՍՆԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Որչափ ժամանակս կացեր բանտարկեալ.

ՅՈՎՍԷՓ

Ամս երկուս. քանզի յետ արկանելոյ իմ ՚ի բանտ, արկաւ ՚ի նոյն և երկոքին գործակալքն փարաւոնի, տակառապետն և մատակարարն, և էին անդ ընդ

մերակցութեամբ լծոյն ՚ի բանսն անդ. մխիթարէի զնոսա և սփոփէի զայն և այլ օրինակս ՚ի մէջ բերելով առաջի նոցա, և խրատէի սիրով զգուշալ ընդ գործս չարութեան և յանցանաց. զի թէ աւելի չարիս ինչ գործեալ իցէ ձեր ընդդէմ արքունի հրամանին, յիրաւունս ձեզ դիւրագոյն ներողութիւնք և մեղմոյք բանտարգելութեանս. իսկ թէ թշնամութիւն այլոց և անախանձու մատնեցայք ՚ի կոճեղս ոտից, և կամ ոչ կամօք ինչ և գիտութեամբ գթեցայք ՚ի մեղս, զղջումն և ապաշխարութիւն յանձին բերելով արտասուաթոր աչօք կացջիք յաղօթս առ Ճշմարիտն Աստուած, որ գիտէ փրկել զյուսացեալս իւր. Օրինակ զայս հանգուցանէի զոգիս նոցա ՚ի տառապանաց, և մխիթարէի յուսով երկնաւորին.

Մատուցեալ և ստէպ առ նոսա տեղեկանայի հարցմամբ զգործոց և զհանգամանացն արքունեաց. ըստ որում մերձակայ պաշտօնեայք էին սոքա արքային Փարսաման, ուստի և հմուտք ներքին գործոցն. Նաև բազում այն է զի ոչ խափան մերկանայլն ինձ զգաղտնիսն իւրեանց. և էր տեսանել անդ զփոփոխակի կիրսն զոր ցուցանէին յանձինս. էր զի ՚ի թշուառութեան մերձակի անդ ծածկել ջանային յինէն զհպարտութիւն որ սովոր է դնել զբոյն իւր ՚ի սիրտս նուաստամիտ ազատականաց և որք էին պաշտօնատարք, և ՚ի քաղաքական կենացն կրթութեամբ քաղաքավարեալ ազնուականութիւն յանձինս բերելով ցածուն և համեստ զինքեանս ցուցանել նոյնպէս. և էր երբեմն զի յոչ ինչ դնելով զհարստութիւն իւր և զնախնական մեծութիւն իւր, անզգուշութեամբ լիով ՚ի յայտ ածէին զանզգուշալ կիրս ամբարտաւանութեան իւրեանց, մեծամեծս վշտալից և իշխանաբար ընդ իս վարելով. Ո՛վ արդարև չար է ախտս այս. յորժամ մուտ գտանէ ՚ի մարդ, անդրանկանէ կրիւքն

փոխարկէ զնա 'ի դաժան բնութիւն . և թուի ինձ նմա այնուհետեւ եթէ ամենայն ոք պարտաւորիցի յարգել և մեծարել զերեսս նորա , մանաւանդ եթէ յարքունեաց ոք իցէ և յոստանիկ տանէ , 'ի փաղաքշանս սընեալ և 'ի շողոքորթութեան .

Իբրեւ եղեւ ինձ յաւուր միում կանխեալ առ նոսա ընդ արշալուրշն ընդ առաւօտն , գտի զնոսա տըրտմեալս յոյժ . Հարցի ցնոսա զպատճառ թախծանացն , եթէ զինչ պատահեաց նոցա . Ասեն երկոքին միաբերան , երազովք երազեցաք յայսմ գիշերի , և չէ ոք որ յայտնեսցէ . Եղեն ինձ անդ ազդմունք մտաց իմոց իմանալ զերազս նոցին և տալ զմեկնութիւնն իւրաքանչիւր . Յառաջ մատեաւ տակառապետն պատմել զերազ իւր . Թուէր ինձ , ասէ , տեսանել զորթ մի առաջի իմ , և 'ի վերայ որթոյն էին ուռք երեք կանաչագեղք յոյժ . և կրէին իւրաքանչիւր մէն մի ողկոյզ , զոր առեալ ճմլէի 'ի բաժակին փարաւոնի՝ որ էր 'ի ձեռին իմում , և մատուցանէի արքային . Պատասխանի ետու նմա մեկնելով զերազն , եթէ՝ երեք ուռքն ցուցանեն զերիս աւուրս . զի յետ երից աւուրց կացցես դու 'ի նմին տակառապետութեան և կատարեսցես զպաշտօն քո , մատուցանելով արքային զբաժակն . Աստուածն երկնի և երկրի՝ յորմէ չիք այլ Աստուած բաց 'ի նմանէ , եցոյց քեզ զողորմութիւնն իւր ծանուցանելով որ ինչ յապառնիսն լինելոցն է . որպէս և շնորհեաց ինձ բան մեկնել քեզ զերազն քո , և ըստ մեկնութեան իմում անվրէպ կատարեսցի . Ուրախացաւ ընդ այս տակառապետն զուարճութիւն մեծ , և խոստանայր ինձ պարգեւել ոսկի և արծաթ յոյժ . այլ ես ցուցի նմա եթէ ոչ ինչ կարօտութիւն է իմ ոսկւոյ և արծաթոյ և երկրաւոր մեծութեան . միայն 'ի հասանել քո յառաջին պաշտօնն , յիշեսցես զիս առաջի

արքային փարաւոնի , հանել զիս 'ի տանէ բանդիս . քանզի գողանալով գողացան զիս 'ի գրկաց հօր իմոյ և ածին այսր , և առանց ինչ գտանելոյ յիս յանցանս՝ արկին 'ի բանտ .

Իբրև ետես մատակարարն եթէ ուրախութեան եղև գուշակ երազն տակառապետի , խնդութեամբ իմն մատեաւ և ինքն մերկանալ առաջի իմ զերազն իւր , և ասէ . տեսանէի յերազի իմում , զի էին 'ի վերայ գլխոյ իմոյ երեք խանք նաշհւոյ , և 'ի վերին խանին էին լցեալք պէսպէս քաղցր համադամ կարկանդակօք և խորտկօք ազնուօք , զոր սովոր է ուտել փարաւոն արքայն . այլ թռչունք երկնից իջեալ 'ի վերայ նորա կերակրէին . Զայս պատմելով մատակարարին սպասէր յաջող պատասխանւոյ՝ ելանել կրկին յիւր պաշտօն որպէս զընկեր իւր . Այլ ես յայտնապէս ծանուցի նմա զմեկնութիւն երազոյն , ասեմ՝ այց արար և քեզ Աստուած կանխելով ցուցանել զոր ինչ մնայ քեզ հասանել յայս երրեակ աւուրս . զի երեք խանքն նշանակք են երից աւուրց , որոյ 'ի կատարելն՝ բարձցեն զգլուխ քո 'ի մարմնոյդ , և թռչունք երկնից կերիցեն զմարմին քո՝ կախեալ զփայտէ . Ապա զղջացիր ընդ մեղս քո և ընդ գործս անիրաւութեան՝ վասն որոյ դատապարտեցար , և արտասուօք փութա հաշտեցուցանել ընդ քեզ զԱստուած , որ ունի իշխանութիւն ոչ միայն 'ի վերայ երազոց , այլ և սրտից թագաւորաց . Իսկ նա՝ ըստ իւրում դաժանութեանն՝ ընդ լսելն զմեկնութիւն երազոյն իւրոյ , խռովեցաւ , և 'ի դառնութենէ սրտին խոժոռեցան երեսք նորա , անկաւ 'ի ծովածփանս մտացն խորհրդոց , և ցնորեալ իմն խորհէր մերթ երթեալ ըզսրով անձինն առնել 'ի կատաղութենէն , մերթ յարձակեալ 'ի վերայ իմ՝ փորձէր զսրոյն վերս ածել յանձն իմ , այլ շղթայք ոտիցն արգելուին զնա . Պար-

ձայն և ասեմ ցնա․ զի՞նչ կայ իմ և քո Եգիպտացիդ անօրէն․ զի ոչ եթէ ընդ քոյոց ինչ կարկառեմ յինէն եբաղդ մեկնութիւնս, այլ զոր միանգամ ազդէ յիս Աստուածն իմ՝ անաչառապէս առաջի արկանեմ․

Արդարեւ ըստ մեկնութեան բանիցս կատարեցան երազքն երկոքեան․ միոյն հասանել յերախանոս Թելանն առաջին և միւսոյն կախել զփայտէ զկառամանն․ Այսպէս հասանել տակառապետին ՚ի պաշտօն իւր, մոռացաւ զիս խաղաղ, և ոչ երբէք յիշատակեաց զաւուրսն զորս եկաց ՚ի բանտի․ յորում մնացի և ես, մինչեւ տեսանել Փարաւոնի զերկեսին երազսն․ և ոչ զոք գտեալ ՚ի քաւդէից և յըղձապատրում գուշակաց մեկնել զնոսա, հանին զիս, և մեկնեալ ազդեցութեամբն Աստուծոյ ազատեցայ ՚ի բանտէ․

Տեսանես սիրեցեալդ իմ Ասանէթ, զխափանման զոր վրիպեցայ անհամբերութեամբ իմով, խնդրելով ՚ի տակառապետէն յիշել զիս առաջի Փարաւոնի արքային և ազատել ՚ի բանտէ․ Այլ արդարեւ մոլորեցայ, և այնու յանցաւոր գտայ առ Աստուծոյ իմ․ զի ոչ յուսացայ առ նա եթէ ցորդ բաղդին և աջ նորա հոգանի և պահապան էր ՚ի վերայ իմ, որով փրկեաց զիս ՚ի այլսպէս վտանգից․ մինչ ոչ կարանայր ինչ ձեռն նորա հանել ՚ի բանտէ և ազատել, որպէս և արարն իսկ յետ ժամանակաց․ Այլ զի՞նչ շահ եղեւ ինձ ՚ի յուսալոյս իմոյ յիշխանսն․ ոչ մի ինչ այլ՝ բայց միայն յամեցոյց զիս մնալ ՚ի բանտի ՚ի նմին ծառայութեան ժամանակս ինչ․ Այլ արդարեւ այնպիսի իսկ եղեւ․ զոր ակնէի եւ ցուցանէր ինձ միտք իմ և բնութիւն իմ, որով յուզէի յամենայն գիշերի մինչեւ մտեալ իմ ՚ի քուն․ «Քանզի և յաւուրսն յայնոսիկ, իբրեւ խելամուտ այսմ եղէ և ծանեայ սուղ զապէս զպատճառ յամեցմանն իմոյ, կորեաւ յինէն ուրախութի՛ իմ, որով ճշմարտէր

սիրտ իմ, տրտմութիւն շուրջ պատեաց զինեւ սեւաթոյր իւր թեւօքն. և անդէն բուռն հարի զապաշխարութենէ, և զղջացեալ ընդ գործն իմ, ջերմ պաղատանօք խնդրեցի յԱստուծոյ ներել յանցանաց իմոց. Ոչ յապաղեաց նա քաջալերել զսիրտ իմ, և ոչ իսպառ բարձի թողի արար զիս. այլ ողորմութեամբ իւրով այց արար ինձ, և ազատեաց 'ի բանտէ.

Քանզի՛ դէպ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ տեսանել Փարաւոնի երազ, որ եղեւ ինձ առիթ փրկութեան, զոր եցոյց Աստուած՝ փառաւորապէս բարձրացուցեալ զիս յայս իշխանութիւն, զոր աւելորդ համարիմ կրկնել քեզ. քանզի՛ թող զԵգիպտոս, այլ և ամենայն աշխարհի ծանօթ է. և ամենայն լեզու բանաւոր հռչակ համբաւաւ մեծ առնեն զայն իբրու աստուածային հրաշ՝ զարմանալով ընդ գործս ողորմութեան Արարչին, խոստովանելով յայտնապէս եթէ մատն նորին էր տնօրինիչ մեծի փոփոխութեանս. Որ և Պետափրէս հայր քո, որ քրմապետն է Փարաւոնի, դրոշմեաց յարձանագրութիւնս մեհենեաց, և զհիանալի մեկնութիւն երազոցն.

Արդ՝ պարտ է և մեզ ո՛ քաղցրիկ ամուսին, յիշատակել զերախտիս տեառն մերոյ արքայի, և մանաւանդ առաւել եւս շնորհ ունել զմեծ բարերարութենէ աստուածագութ խնամոց Բարձրելոյն. Եւ մի լիցի մեզ երբէք լինել երախտամոռաց որպէս տակառապետն այն, որում գուշակելով զապագայ բարօրութիւն և զվերականգնումն իւր յառաջին պաշտօն, նա փոխանակ՝ անփոյթ եղեւ զթախանձանօք իմովք. վասն որոյ զամօթի հարեալ արդ առաջի իմ, չիշխէ ամբառնալ զաչսն 'ի վեր. Այլ մեք ջանասցուք ոչ ապախտ առնել զշնորհօք՝ եթէ գտանիցեմք յերեսաց ուրուք. թէեւ կարի փոքր ինչ իցէ այն, մի նուաղ

գրեսցուք մեք . քանզի ասէ առածն . որ զփոքրն արհամարհէ , փոքր փոքր և կործանեսցի .

ԳԻՐՔ ՅԻՍՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Զարմանամ տէր իմ, զի այս երեք աւուրք են տեսանեմ զերեսս քո ՚ի տրտմութեան , և զաչս քո յարտասուս , և ոչ համարձակեմ հարցանել՝ զի մի զթել պատմութեանդ ընդմիջեցից . և զի՞նչ արդեօք իցէ պատճառն . գուցէ յիշատակութիւն անցիցն անցելոց զարթոյց ՚ի քեզ զկիրս տրտմականս . Յի՛ս տէր իմ, պատմեա ինձ աղախնոյ քում . և եթէ ոչ սպեղանի վիրացդ կարացից գտանել , գոնէ հաղորդակից այնմ եղէց և ես , և այնու մխիթարեսցուք . քանզի ոչ փոքր թեթեւութիւն է վշտաց՝ հեղուլ զնոսա ՚ի ծոց համակիր իւրոյ բարեկամին և սիրելւոյն .

ՅՈՎՍԷՓ

Զարմացիր և դու ընդ առատ բարութիւն Տեառն, որ յամենայնի առատապէս շնորհէ ինձ զողորմութիւն իւր . և զօրհանապազ նորոգ ապացոյցս տալով իւրոյ զօրութեանն և գթութեան , հիացեալ սքանչանամ ընդ անհաս մեծութիւն և ընդ իմաստութիւն իւր . Ո՛հ , որպէ՛ս զի սքանչելի է անուն նորա և զօրութեան նորա չիք սահման , որով ՚ի բաց

ձգեալ զիս 'ի խաւարային յանարգ վիճակէ իմմէ, բարձրացոյց յայս պաշտօն մեծութեան, իշխան կացուցեալ 'ի վերայ ամենայն Եգիպտոսի. Չիք ոք որ հակառակ ինձ եղջիւր ապստամբութեան ամբարձցէ, կոխել զհրաման արքային փարաւոնի, որ միայն աթոռովն իւրով 'ի վեր է քան զիս. Արդ յայսոսիկ աստուածային շնորհս և 'ի բարութիւնս վայելելով իմ, ոչ կարացի ժոյժ ունել զեղման ոգւոյ իմոյ ընդ անհուն գթութիւն նորին, զոր անդստին 'ի մանկութեան իմում մինչդեռ էի 'ի ծոց ծնողին իմոյ ծանոյց ինձ 'ի ձեռն երազոյն. Թէպէտ և բարկացան ընդ այն եղբարք իմ բարկութիւն մեծ, և շաղփաղփութիւնս համարէին զայնոսիկ, այլ և ոչ բան մի վրիպեցաւ յամենայն բանից երազոյն իմոց, որ ոչ կատարեցաւ յայսոսիկ երրեակ աւուրս.

Օ՜ի որք առէինն զիս եղբարքն իմ և ասէին. միթէ թագաւորելով թագաւորեսցես 'ի վերայ մեր, նոքին եկին հասին եռանդ գնել իւրեանց ցորեան, և անկեալ երկիրպագին առաջի իմ. զոր տեսեալ իմ ոչ կարացի, և ոչ իսկ բնաւ կարեմ ունել ժոյժ. Արտօսր զոր տեսանես յաչս իմ՝ ոչ արգասիք տրտմութեան է, այլ անչափ բերկրութեան. որով յիշատակեալ զբարեխնամ գործս Արարչին, ոչ գիտեմ սանձել զբռնութիւն յորդութեան արտասուացս. Միտք իմ յափշտակեալ համակ 'ի գերազանց մարդասիրութիւն նորին՝ անկարանամ յօդել զբարբառ և յայտնել զհանդէս բարերարութեանն. Օ՜ ողորմութիւն իւր՝ որ ոչ 'ի բացեայ երբէք արար յինէն, եցոյց և առ հայր իմ՝ պահելով զնա կենդանի յետ այնչափ անհնարին տրտմութեանն.

Նեղեալ նորա յերեսաց մեծի սովոյն, առաքեալ է աստ զտասնեսին որդիս իւր՝ զեղբարսն իմ, առնուլ

ցորեան ։ Զմանեայ զնոսա անդէն ընդ տեսանելն իմ․ և նոքա ոչ ծանեան զիս․ յիշեցի զերազն իմ և զան֊մրեալ կատարումն նորին․ և կեղծելով չգիտել զեղբու֊նոցա, կացուցի զումն Թարգմանն ՚ի հաւատարիմ սպա֊սաւորաց, և ՚ի ձեռն նորա զբազում ինչ գաղտնիս գո֊ղացայ ՚ի սրտից նոցին, և զկենդանութիւն եղբօրն իմոյ Բենիամենի, որ գոլով ինձ համամայր՝ առաւել սիրելի էր․ Արգելի զնոսա ՚ի դիպահոջ պատճառելով եթէ լրտեսք իցէք․ զի թէ վասն հարկաւորութեան ցորենոյ եկիք այսր, ասեմ ցնոսա, բաւական էին երկուք միայն ՚ի ձէնջ․ դուք ամենեքին արք զօրաւորք և հզօրագոյնք բազկաւ, չէք առանց խռովութեան և որոման․ ասա֊ցէք ինձ զճշմարիտն և արձակեցից զձեզ․ Պատասխանի ետուն միաբան ամենեքին և ասեն․ չեմք մեք լրտեսք, այլ արք խաղաղութեան եմք և որդիք առն երկիւղածի․ երկոտասան եղբարք եմք․ կրտսերն է առ հօր մերում, իսկ միւսն չէ ՚ի միջի ։

Ով մեծի սքանչելեացս և անակնունելի դիպուա֊ծոյս․ և ո՞ր ադամանդ սիրտ ժուժկալեսցէ այսմ․ զի զորմէ ասէին եթէ չէ ՚ի միջի, զնա ներկայ առաջի աչաց ունէին ։

Յորժամ հեռացեալ մեկուսացայ ՚ի նոցանէ, պա֊տուէր ետու հաւատարիմ Թարգմանին իմոյ ՚ի գիր անցուցանել զամենայն զոր միանգամ լսէ խօսել ՚ի նոսա ։ Ընդ Ռուբէն անդրանիկ եղբայրն իմ, որ փրկեաց զիս ՚ի սովամահ կորստենէն հանելով ՚ի ջրհորոյն, իրաւունս ունելով ՚ի վերայ միւս եղբարց ի֊մոց, յանդիմանէր զնոսա և ասէ․ „Ոչ խօսեցայ ընդ ձեզ չմեղանչել մանկանն, և մի՛ չար ինչ ընդ նա ան֊ցուցանել․ և դուք ոչ կամեցայք լսել ինձ, այլ խը֊ցեալ զականջս իբրեւ զքարբի ընդդէմ ձայնի բնու֊թեանն՝ անողորմ զնա վաճառեցիք Իսմայելացւոց․ ահա արիւն նորա խնդրի այժմ ՚ի մէնջ․ Ոչ ապաքէն

նոյն իշխան է այս, որ ամենայն Քանանացւոց եկեղց առ ՚ի գնել զցորեան, պատիւ և յարգութիւն եցոյց, և փութով զխնդիր նոցա կատարեաց. Ո՞ր են ծառայք Աբիմելեքայ եկեալք առ ՚ի պէտս արմտեաց պարենի. ո՞չ և նոքա բազումք էին թուով և տանապատիկ քան զմեզ, և ամենեքին արք զօրութեան, և զգեցեալք ըստ օրինի արքունի սպասաւորաց. Արդ՝ ընդէ՞ր և նոցա զայն հարցուածս չարար. է՞ր և ընդ նոսա որպէս ընդ մեզն՝ ոչ վարեցաւ. հիմ ոչ խնդրեաց գրգռել իմանալ զախտս նոցին, որք առաւել քան զմեզ կասկածելիք էին, և ոչ զրպարտեաց զնոսա ըղ-լրտեսութեան սուտ բարբանս. Իսկ մեք արք հողագործք և խաշնարածք, կերպարանք մեր վկայեն զորպիսութենէ վարուց և պայմանի կենաց մերոց. և ընդէ՞ր արդեօք եկին հասին ժամանեցին այս ամենայն չարիք ՚ի գլուխ մեր. եթէ զարդարն խոստովանիցիմք, որպէս և խիղճ մեր կենդանի ձայնիւ մտաց զնոյն բողոքէ, ո՛չ վասն այլոց իրաց, այլ միայն վասն կորըստեան մանկանն արդարոյ հարազատին մերոյ Յովսեփայ, զորոյ արիւնն պահանջիմք յԱստուծոյ ՚ի ձեռն բարերար իշխանիս այսորիկ. Քանզի սա առ ամենեսին բարերար և առ ամենեսեան առատաձեռն գտաւ. և առ մե՞զ միայն ժլատ, առ մե՞զ միայն գտաւ խստասիրտ, առ մե՞զ եւեթ զրպարտիչ. ո՞ւր գովեստք մարդկան, որք զգորովասիրտ խնամոց և զմարդասիրութենէ նորին յօդէին, զիմաստութիւն նորա հռչակէին, զբարեկարգ կառավարութիւնն գովութեամբ ցուցանէին. Եւ զի՞նչ, ո՞չ արդեօք այս ամենայն ձիրք ողջոյն ՚ի վերայ առնս այսորիկ գտանիցին. և զի՞արդ, առ մե՞զ վրէժխնդիր կարգեալ յերկնուստ երեւի. այո և կարի յոյժ. քանզի ճշմարիտ են դատաստանք Տեառն, որ թէ կանուխ և անագան դատէ անաչառապէս զամենայն պարտաւորեալսն ,,.

Մինչդեռ նա զայս օրինակ խօսէր ընդ եղբարսն՝ հաւի և ես անդր, և տեղեկացեալ ՚ի Պենտասայ ամենայն բանիցս այսոցիկ, և թէ վրէժխնդիր զիս համարէին նոքեանց, առ ՚ի փարատել ՚ի մտաց նոցա զայն անիրաւ կարծիսն, հրամանս ետու անդէն՝ զի մին ՚ի նոցանէ մնացեալ այսր ՚ի պատանդ, երթիցեն այլքն բերել զեղբայր իւրեանց զկրսեր, զոր թողեալ են առ հօրն իւրեանց, որպէս զի յայտնի լիցի եթէ արք խաղաղութեան իցեն և ոչ լրտեսք. Երրորդում յաւուրն արքայի՝ ասեմ ցնոսա, եթէ թողում զձեզ երանել մեկնել աստի, մինչեւ ածիք այսր զեղբայրն ձեր զԲենիամին, ՚ի հաւատարմութիւն բանից ձերոց. Իսկ անդէն հրամանս ետու խստութեամբ իմն, թէպէտ սիրտ իմ եռայր գորովով ՚ի փորի իմում, այլ զի մի մատն եղէց անձին իմոյ ծանօթս տալով զինէն, խստիւ վարեալ ընդ նոսա, հրամայեցի զՇմաւոն զեղբայր իմ կապել առաջի նոցա, և լուալ զքուրձս նոցին ցորենով, եդեալ զարծաթն իւրաքանչիւր ՚ի բերան քրձին. և արձակեցի զնոսա խաղաղութեամբ երթալ առ հայր իւրեանց, Այլ և զՇմաւոն ոչ թողի մնալ ՚ի կապանս, այլ յետ արձակման նոցին, լուծի ՚ի կապանացն և թողի ընդ զգուշութեամբ հաւատարիմ ծառայից իմոց, վարիլ ընդ նմա քաղցրութեամբ. Աւասիկ որ ինչ անցք անցին ընդ իս յայս երրեակ աւուրս. և այս իսկ է պատճառ արտասուաց իմոց, զոր ՚ի փղձկմանէ սրտի իմոյ հեղում, և չեն այնք ՚ի տրտմութենէ.

Այլ դու եկ և զարմացիր աստանօր ընդ անբաւ գթութիւն և ընդ անսահման զօրութիւնն աստուածային. որ ոչ միայն իմաստութեամբ յարդիւնս էած զտեսիլն զոր եցոյց ինձ յերազի, այլ և կրկին անգամ խոնարհեցոյց զնոսա յերկրպագութիւն ոտից իմոց, աղաչել զիս արձակել զնոքեանս ՚ի խաղաղութիւն.

Քանզի՝ յառաջնում անդ աւուր սպառնայի նոցա զա-մենեսին կապել աստ, և զմին և եթ ՚ի նոցանէ առա-քել առ Հայր իւրեանց բերել զԲենիամին. Իսկ յայժմ աւուր առ չժուժալ սրտի իմոյ և ՚ի շնորհուկս Հօր իմոյ ծերունւոյ, զմին ՚ի նոցունց պահեալ առ իս՝ զայլսն ամենայն արձակեցի. Եւ ոչ եթէ վրէժխնդիր ինչ լի-նել անօրէնութեան նոցին, ՚ի սոյն փորձութիւն արկի զնոսա, այլ միայն առ ի իմանալ զհանգամանս կենաց նո-ցին, զկենդանութիւն Հօր և եղբօրն իմոյ Բենիամենի. Քանզի՝ ոչ տեսեալ զնա յառաջնում աւուր ընդ եղ-բարսն իմ, երկեայ՝ մի գուցէ զնոյն անցս որպէս ընդ իս՝ և ընդ նա անցուցեալ իցեն եղբարքն. որովհետեւ և նա յաչս էր Հօր իւրում և դիւր սրտի նորա. Ուրախ եմ արդ ընդ կենդանութիւն նոցին, և ակն ունիմ զի այսու ճարտարութեամբ իմով ՚ի մօտոյ տեսից զերկո-սին եւս, և վայելեցից ՚ի սէր եղբայրական և ՚ի գու-թըն Հայրենի.

ԳԻՐՔ ՅԻՍՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Ուրախակից եմ ընդ քեզ ո՛ ամենասիրելի ամու-սինդ իմ և տէր. այդ անակնկալ խնդութիւն կարի յոյժ թափանցեաց ընդ հոգի իմ. մանաւանդ լուր կենդանութեան Հօր քո և ցանկալի եղբօր քո Բենիա-մենի, զորոյ զյիշատակն և զանունն ոչ երբէք թողուիր ՚ի շրթանց քոց. Այլ զարմանամ մեծապէս ընդ ժու-

ժեղ սրտի քո. զխմորդ կարացեր թաքուն ունել 'ի նոցանէ զանձն քո, և ոչ ծանուցեր զքեզ նոցա.

ՅՈՎՍԷՓ

Երկեայ տալ նոցա ծանօթս զանձնէ իմմէ, զի մի՛ յահէ իշխանութեան իմոյ խիթացեալ՝ ցիր և ցան վարատեսցին 'ի տար աշխարհ. որով և հայր իմ, որ ցարդ ազայ տակաւին ընդ կորուստ իմ, սուգ առեալ 'ի ծերութեան իւրում՝ յողբս և 'ի ջայլ համակեսցի և դառնութեամբ սրտի իջցէ 'ի գերեզման. Վասն որոյ՝ ոչ էր ժամանակն 'ի ճահ յայտնելոյ նոցա զանձն իմ. և ոչ իսկ յետ մեկնելոյ եղբարց իմոց իննեցունց՝ ծանուցի զիս Շմաւոնի. այլ սպասեմ մինչև եկեսցեն նոքա համագերձ Բենիամենիւ համամայր սիրելի եղբարբ իմով, և յայտնեցից նոցա զիս. Այլ բարէ և զխմորդ թողուցու զնա հայր իմ հեռանալ յինքենէ. և ո՛ յետ այնորիկ մխիթարեսցէ զցաւագին հասակ ծերութեն. Բենիամին ոչ միայն զիւրն մատուցանէ նմա զփոփանս, այլ և զինքն. նովաւ և զկարօտութիւն զոր կրէ առ իս՝ լնու հայր իմ. և 'ի դէմս նորին տեսեալ զպատկեր իմ՝ մոռանայ զվիշտսն, և այնու գտանէ դիւր սրտի իւրում.

Այլ եկեսցուք մեք յեղբարսն իմ Շմաւոն՝ զոր արգելի աստանօր: Օ՛կնի եկանելոյ եղբարց իմոց 'ի ճանապարհ, 'ի հոծ տրտմութեան կայր համակեալ, և անյոյս բնաւին 'ի կենաց իւրոց՝ վարանեալ և տատանեալ մտօքն լինէր. Իսկ ես ոչ թողի զնա յայնմ վիճակի. պատուիրեցի հաւատարիմ ծառայից իմոց լնուլ զամենայն զպէտս նորին, և մի՛ թողուլ զնա կարօտեալ իմիք. մի՛ տրտմեցուցանել զնա, այլ զամենայն ինչ որ խնդրիցէ պատրաստ ունիցի.

Ընդ այս կարի ինձ 'ի հիացումն եկեալ նորա, և զարմացեալ մտօքն ընդ պատիւն և ընդ յարգանս մեծարանացն զոր ընդունէր, քանզի ամենեքին օտար էին 'ի մտաց և յակնկալութենէ իւրմէ, 'ի սոյն ձեւ բանից յայտնէր զզարմանս իւր յառանձնութեան անդ, որպէս պատմեն սպասաւորք կարգեալք 'ի ծառայութիւն նորին. « Ո՛հ, և զի՞նչ այս պատիւ. առ իմէ՞ այսչափ մեծարանք և սէր. և զի՞նչ այս տեղի համգրստեան. Ո՛չ 'ի բանդ արգելոյ աստանօր դատապարտեալ 'ի յանցանս լրտեսութեան, և որպիսի՞ փոփոխութիւն, որ և ոչ ընդ միտս իմ հարկանէր. Ի մեկնել աստի եղբարց իմոց, բերին զիս յայս պատեղ արքունի. սեննակս վայելչազարդս յօրինեցին ինձ. յարգութիւն անդր քան զարժանն մատուցանեն. ամենայն կարեւորք կենաց անթիւք և անհամարք. ընթրիք զընթրեօք անցանեն. բազմութիւնք սպասաւորաց ոչ այնչափ 'ի զգուշութիւն անձին՝ որչափ 'ի ծառայութիւն տքնեն զցայգ և զցերեկ. Ոմք յիշխանաւորաց և յաղատաց՝ յոր վայելեմն ես՝ վայելէ երբէք. բնակեմ 'ի բուրաստան արքունական՝ 'ի մէջ գեղեցիկ պատշգամբի. Կամ ընդ անուամբ կալանաւորի. չիք հրաման եւեթ ելանելոյ արտաքս, այլ վայելչութիւն տեղւոյս, և պտղաւէտ ծառաստնկոցն միաչափ և զուգահաւասար կարգս վարդից և շուշանաց և պէսպէս ծաղկանցն բուրմունք, ոչ միայն զուարճութիւն և զանմահութէ մատուցանեն ինձ անուշահոտութ̃ի, այլ և 'ի մոռացօնս արկանեն զտարամութիւն իմ. Ո՛ր թողից և զխրալի դայլայլիկ գեղգեղումն թռչնոցն, զջրացայտ աւազանին զցօղումն և զորսկումն, որ կարի ինձ զովութիւն տայ անձին 'ի ջերմին ժամանակս տուընջեան. Ո՜ խորդվիպեցից և զլինուածոցն վայելչագեղ պայծառութիւն, ոսկենկար երանգօք ծաղկազարդեալ զդարկսն,

տամալիս զուարճութեան 'ի ճեմս յօրինեալ 'ի վերայ համակ բնակարանին . զառաստաղաց և զվանդակացն քանդակածոյ վայելչակերտութիւնք՝ գործ ճարտարի. Ո՜ իթէ 'ի սենեակս կայցեմ, լի են զուարճութեամբք և զբօսանօք ուրախութեամբ, իսկ թէ 'ի պարտիզի իջեալ ճեմ առնուցում, բուրմունք բուրակերպեան ծաղկանց գրաւեն զզգացումն իմ ողջոյն, և եթէ յուշ ածեալ քննիցեմ զշնորհս իշխանիս, հիացումն յիս 'ի ներքս ընթանայ, և ոչ գիտեմ կայանս տալ խորհրդոց իմոց և յանկուցանել զմիտս իմ.

„Ա՛ անզուգական շնորհիս և անհամեմատ պատուոյս. և ո՛ իցեմ ես. փոքր մի ես և մոռացայց զիս. Ո՛նայ ընդ վրանաւ, և ընդ հօտս խաշանց հօր իմոյ ընկալեալ զսնունդ իմ. և ուստի՞ է ինձ այս պատիւ արքայապանծ, Քաջածանօթ է ինձ Աբիմելէք արքայն, որ ստէպ կամէր առ ծնողն իմ խորհրդակից լինել ընդ նմա, և զդժուարին իրաց գտանել զելս. այլ ո՞ր համեմատութիւն է ընդ փառս և ընդ պատիւ նորին և ընդ այնմ՝ յոր վայելեմն. և ո՛չ մի. նա և ոչ յերազի իւրում ետես երբէք զայսօրիկ, թող թէ անձամբ վայելեալ. նա թագաւոր անփառունակ, իսկ ես հովիւ փառաւոր.

„Այլ 'ի մէջ այսչափ և այսգունակ երջանկութեանս, ո՞ր ձեռն անողորմ զօրացեալ 'ի վերայ սրտի իմոյ ծանրագոյնս զիս տանջէ. և ո՞ր տագնապ խղճի նեղեալ անհնարինս զիս վշտացուցանէ, մաղկուինչ երբէք 'ի դուռն մահու հասուցեալ 'ի սաստիկ տանջանաց մնացս. որով և ամենայն վայելչութիւնք վայրիս՝ 'ի դառնութի՛ն ինձ փոխարկին և 'ի խոշտանգանս սրտի, Զակաւիկ մի եւս հեղձամղձուկ լինեալ 'ի ցաւոցս՝ զմահուն տագնապ տագնապէի, եթէ ոչ հանապազօրեայ այցելուի բարեսէր իշխանիս մխիթարէր զիս,

Յաճախէ նա առ իս. հարցանէ ինձ զառաջին կենաց իմոց զհանգամանս. մանր հարցուածով զհօրէ և զեղբարց իմոց խուզէ ուսանել. երբեմն 'ի կասկածանս և 'ի կարծիս զիս արկանէ ահեղ կերպարանօքն և անաչառ դիմօքն. երբեմն յուսով և վստահութեամբ լնու զիս քաղցրութեամբ ընդ իս վարելով և գորովով զիս լցեալ. և երբեմն իսկ փորձէ ահաւոր և սպառնալեօք զինքն երեւեցուցանել, այլ խանդաղատանք հայեցուածոյն՝ մատնէ զսրտին պարզութիւն. և բազմիցս իսկ մանր գնտակք արտասուաց 'ի խաժագոյն աչացն ճնշեալ՝ անդէն խոյս տայ յինէն. Ո՛վ յոյս, զիա՞րդ խոցոտես զսիրտ իմ կարեվէր, 'ի մատուցանել քո անդ զքաղցրութի և զբերկրութի խաղաղաւէտ.

„Ահ ոք վշտացուցանէ զիս յաղագս լռեսութն. ոչ ձեռակապք և ոչ ոտնակապք են իմ խոչտանգիչք. չեք ուստեք ինձ խոյս և արգել. և ուր միանգամ զիս կամք իմ առաջնորդեն 'ի պարտիզիս, արձակ և համարձակ զգնամ. իբրև մի ոմն 'ի պալատականաց՝ պատուիմ յամենեցուն. և զի՞նչ երջանիկ իցէ Փարաւոն քան զիս յամենայն փառս իւր. այր մի խաշնարած՝ և կամ բազմեալ 'ի նորին բուրաստան արքունի. Իսկ զի՞նչ պատճառ ներքին տրտմութեանս իցէ, որով անմխիթար մաշի կեանք իմ. զարմանամ մեծապէս վարկպարազի խուզեալ զամենայն սիրտ իմ, և ոչ գըտեալ ինչ տեղի թախծութեան. Այլ բաւէ, և զի՞ այսչափ տգիտանամ. հի՞մ կուրացեալ աչօք մտաց ընդվայր տատանիմ 'ի խորհուրդս. փո՞քր ինչ յանդիմանութիւն է ինձ պաղատանք եղբօրն իմոյ՝ անմեղին Յովսեփայ, որ անկեալ փարէր զոտիւք իմովք արտասուաթոր աչօք աղերսելով խնայել 'ի կեանս նորին, և ոչ կամեցայ անսալ նմին. այլ անգթութեամբ բուռըն հարեալ զնմանէ՝ արկաք 'ի գուբն խորափիտ.

Այս էր՝ որ բռնութեամբ մերկացուցի զնա 'ի ծաղկեայ պատմուճանէն , և թաթախեալ զայն յարեան ուլուն խողխողելոյ՝ տարայք առ հայր մեր , պատրել զնա եթէ գազան չար եկեր զորդի քո : Այս էր քան զամենայն եղբարս իմ ծարաւի անմեղ արեան նորին . ես էր՝ որ կոչէի զնա երազատես և յանդիմանէի վասն երազոցն . ես էր՝ որ զառաջինն 'ի վերայ յարձակեցայ նորին մինչդեռ բերէր առ մեզ կերակուր : Իսկ արդ կարի յերաւուոնս եկն եհաս 'ի վերայ իմ նետ բարկութեան արդար Արարչին , որ կարեւէր կսկծեցուցանէ զիս 'ի ներքուստ . և խաւարային միգաւ մթագնեալ զաչացն իմ տեսութիւն , չկարեմ առնուլ զճաշակ այսչափ գերազանց բարութեանս՝ շնորհեալ ինձ յԱստուծոյ 'ի ձեռն բարերար իշխանիս : Անհամեմատ յարգանքն և պատիւ՝ զոր ցուցանէ ինձ աւուր աւուր , ամօթապարտ կորացուցանեն զիս առաջի նորա : Ոչ համարձակիմ բնաւ ուղղել զակն իմ յերեսս նորա , որոյ կայտառութիւնն կերպարանին , և կամարագեղ յօնիցն միակից գեղեցկութիւն և խայտակն աչք իւր՝ խռովեցուցանէ զիս : Իսկ զի՞նչ արարից . ուստի՞ հայթայթեցից ինձ սփոփանս ընդարձակել զանձկութիւն սըրտիս , և զխղճին իմոյ ամոքել զտագնապալից խստութիւն . ոչ շուրջանակի առարկայք գիտեն զիմ զցաւսն բուժել . այլ միայն յԱստուած ապաւինեցայց , և զբարեպաշտ կրթութիւն ծնողին իմոյ բերեալ յանձին՝ կանխեցից առ նա յաղօթս . յորմէ ակն ունիմ ընդունել թեթեւութիւն վշտաց իմոց , և լուսաւորութիւն մտաց իմոց , գիտել զյանցանս իմ , որով բարկացուցի զանբարկանալի բնութիւնն » . Զայս ասացեալ անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց , և սկսաւ աղօթել անմռունչ ձայնիւ :

Տեսանեմ ով սիրելի կենակից իմ , զի որչափ հնանան

յանցանք , ժամանակք բազում ՚ի վերայ անցեալ, այնչափ առաւել տանջեն զխիղճն . և եթէ ոք խորհիցի զյանցանսն՝ զորոց լուծանէ զվրէժ պատժոցն , անշուշտ գտանէ նա ազդումն ՚ի ներքուստ , և ՚ի վերայ հասանէ յանցուածոցն , վասն որոյ չարչարի . Քանզի՝ եթէ բազում ժամանակ անցանիցեն ՚ի վերայ չարեացն , և յամեսցի պատիժն , բայց ոչ երբէք մոռացեալ լինին յանցանքն . Իսկ եթէ յանմեղս արկցի ՚ի բանտ կամ ՚ի վիշտս , ազդ առնէ նմա խիղճն՝ որ ճշմարտութեան է յայտնիչ , ոչ ըստ արժանեաց և իրաւանց կրել զայնս . Այս շնորհ յաստուածուստ մեզ պարգևեալ է , առ ՚ի սրբել զմեզ ՚ի մեղաց և գտանել զթողութիւն ՚ի ձեռն ապաշխարութեան և զղջման . բայց անզգամք և անօրէնք ունակացեալ ՚ի չարիս և յամառեալ ՚ի նոյն , խստանայ սիրտ նոցա , և ոչ զգայ խիղճ մտացն , վասն որոյ և ոչ կարեն քննել զանձինս , ապաշխարել և փրկիլ .

Գոհանամ զՏեառնէ և ցնծամ յաւէտ բերկրանօք տեսեալ զդիւրազգածութիւն սրտի եղբօր իմոյ , և զխիղճ նորին տակաւին կենդանի յանձին իւրում , որով ոչ միայն սրբէ զմեղսն՝ գործեալ ընդդէմ ծնողին իմոյ և իմ , այլ և ակն ունիմ զի ՚ի յարատեւել նորին ՚ի նոյն , հանդիպեսցի շնորհացն Աստուծոյ և գտցէ զողորմութիւն .

ԳԻՐՔ ՅԻՍՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

ԱՍԱՆԵԹ

Օ՜ինչ էին աղօթական բանք նորա՝ զոր մատուցանէր առ Աստուած ՚ի յոյզս անդ չարժութեան ոգւոյն.

ՅՈՎՍԷՓ

Ի սկզբան անդ աղօթիցն՝ անմռունչ հեծութիւնք սրտի միայն լսելի լեալ են, որպէս պատմէ Փենտաս՝ որ կայ ՚ի սպասու նորին և ՚ի զգուշութիւն. որոյ և թագուցեալ յառընթերակայ սենեակս, լսէ զամենայն զբանս աղօթիցն և ՚ի գիր անցուցեալ տայ ինձ. զոր ընթեռնում ահա ՚ի լուր սիրելութեան քում.

Զկնի աղի և ողորմ հեկեկանացն՝ գոչեաց նա ՚ի խորոց սրտէ. "Մեղայ Տէր և անօրինեցայ. մեղայ
„ընդդէմ արդարութեան և մատնեցի զսէր եղբայ-
„րական առ նախանձու սրտիս. ոչ ածի երբէք զմը-
„տաւ զԿայենին դատակնիք պատժոցն հատուցման,
„որ զեօթնեակ վրիժուցն ընկալաւ զլուծումն վասն
„եղբայրասպանութեանն. Խցան, խլացան ականջք
„մեր. կուրացան միտք մեր. և կամք մեր դարձաւ ՚ի
„չարիս. հրակէզ բորբոքեցաւ ՚ի մեզ նախանձն չա-
„րախանձ և գազանային, ատելութեամբ վարեալ
„ընդդէմ եղբօր մերոյ գեղեցկին Յովսեփայ, որ ան-
„մեղ էր և արդար, որ յոչինչ յանցեաւ առ մեզ.
„Ա՛հ, զիա՞րդ անտեսեցաք զկողկողագին պաղատանօք
„նորին. զիա՞րդ չարաչար հատուցաք զծառայութիւն

„ նորա , որով վաստակերն վասն մեր . որպէս անգութ
„ խստութբ՟ յանդիմանեալ զհեզահամբոյր գառնն ,
„ արհամարհեցաք զառաքինութեամբն , զիմաստու-
„ թեամբն և զկամակար հնազանդութեամբ նորա .
„ Ի՞ր ոչ յիշեցաք մեք զպարտաւորիչ կտակ խրատուց
„ Իսահակայ հաւուն մերոյ , որ յորդորէր զմեզ յեղ-
„ բայրսիրութիւն . այլ մեք ոչ միայն անտես արարաք
„ զպատուիրանաւ նորին , այլ և նախ քան զբոլորիւ-
„ տալոյ փախչանի նորա , ձեռներէց գտաք յանօրի-
„ նակ չարիսն . Թէպէտ և Ռուբէն կարծեաց զձեռս
„ մեր ʼի սպանութենէ , այլ այնու զի՞նչ . չար քան
„ զսպանումն առաջարկեաց մեզ արկանել զնա ʼի
„ գուբ անջրդի , և յամր մահուամբ չարաչար լու-
„ ծանել ʼի կենացն .

„ Ո՛վ Յուդա՝ մատնիչ արեան արդարոյն , դու-
„ առաւելապէս գտար արծարծիչ նախանձու և մա-
„ խանաց մերոց , և առաջադրեցեր վաճառել զնա
„ անարգ գնով քսան արծաթոյ . Ո՜չ քննեցաք զոր
„ գործեցաքն . զի եղբայր մեր էր , զոր արկաք ʼի գուբ
„ խաւարին . եղբայր մեր էր , զոր գազանաբար մեր-
„ կացուցաք ʼի ծաղկեայ պատմուճանէն , որ էր պար-
„ գեւ հաւուն մերոյ Իսահակայ . եղբայր մեր էր ,
„ զոր անարգ քան զգերի վաճառեալ՝ փոխանակեցաք
„ ընդ չնչին արծաթոյն . Եղբայր մեր էր , զոր յուրաստ
„ եկեալ յեղբայրութենէ մերմէ , յանդգնեցաք յղել
„ զպատմուճանն առ հայր մեր յախուռն պատգամօք ,
„ եթէ ծանիր՝ որդւո՞յ քո իցէ զգեստդ . Ո՛վ լրբենի
„ համարձակութեան . զի՞նչ քան զայս անօրէնութիւն
„ յաշխարհի գտանիցի . քանզի որդի էր նա հօր մերոյ ,
„ և եղբայր մեր . այլ ո՞րպէս , ամբարտաւան միտք մեր
„ ներէ՞ր մեզ կոչել զնա եղբայր . զի ʼի վերայ երա-
„ զոցն՝ զոր ետես , ջնջեալ էաք զանուն նորա ʼի շրթանց

„ մերոց . այլ նախատանօք իմն կոչելով զնա երազատես ,
„ վշտացուցանէաք զսիրտ անմեղ եղբօրն մերոյ Յով-
„ սեփայ . որոյ գեղաղէշ դէմքն , ամենաքաղցր բնու-
„ թիւնն , և հանճարեղ միտքն մէն մի փուշ խայթիչք
„ էին յաչս մեր . Այլ զնորին կատարելութիւն տե-
„ սեալ յայն հասակ մանկութեան՝ գովէին . մեք ընդ-
„ հակառակն խնդրէաք զարիւն նորա . զոր և կատա-
„ րեցաք իսկ՝ վաճառելով զնա 'ի գերութիւն .

„ Ահա այս ամենայն մեղք և յանցանք մեր , զորս
„ գործեցաք հաճութեամբ կամաց առաջի ամենատես
„ աչաց քոց , ո՛վ Աստուած իմ և Տէր . ներեա անօ-
„ րէնութեանց մերոց և գաղանաբար մեղանացս . Ո՛հ
„ անհնարին աղէտիցս , և աններելի յանցուածոյս . . .
„ մեղաք Տէր և անօրինեցաք , ապստամբք եղաք յար-
„ դար օրինաց քոց . մի դատեսցես զմեզ անաչառ քո
„ գաւազանաւդ , այլ ողորմուբ̄ գթասցիս 'ի մեզ . . . „ .
Ընդ այս փղձկեալ 'ի շարժումն կրից՝ անկաւ դարձեալ
'ի վերայ երեսաց իւրոց յերկիր , արտասուք ոչ եւս
ծորէին յաչացն 'ի սաստիկ բորբոքմանէ եռանդեան
սրտին . հուսկ ուրեմն սթափեալ 'ի յուզմանց ոգւոյն՝
շարունակեաց զբանս պաղատանաց , և ասէ . " Ընդէ՞ր
„ ոչ յիշատակեմք առաջի ամենագէտ աստուածութե̄
„ զանպատկառ գործ մեր , զոր լրբենի համարձակու-
„ թեամբ ժպրհեցաք առնել առ հայր մեր , համբաւ-
„ չար բերելով առ նա զեղբօրէն մերմէ , գազանակուր
„ լինել նմա 'ի ճանապարհի . Եւ նորա ծանուցեալ
„ զպատմուճանն արիւնաներկ , հարցանէր մէն մի զմեզ .
„ ո՞ր գազան եկեր զնա . որպիսի՞ կենդանի անողորմ
„ պատառեաց զորդեակն իմ զսիրելի . Եւ ո՞ւր է՝ զի
„ ոչ յօշուումն գազանի 'ի հանդերձիկդ նշմարեմ . գի-
„ տեմ քաջ զարիւնախանձ կենդանեացդ զբնութիւն ,
„ 'ի ծուէնս անդէն բաժանել զպատմուճանն՝ մինչեւ

„ անկեալ ՚ի լափ գիշատեալ մարմնոյն. Իսկ ՚ի պատ-
„ մուճանդ Յովսեփայ՝ և ոչ մի ինչ նշան ճիրանաց և
„ ժանեաց գտանեմ. չունի նա պատառուածս. չիք ՚ի
„ նմա տպաւորեալ ծակոտիք կեռեացն գազանաց.
„ Արդ ասացէք ինձ ո՞ր բնութիւն կենդանւոյդ իցէ.
„ և միայն Յովսեփայ՞ իմոյ պատահեաց այդ. միայն սի-
„ րելւո՞յ իմոյ հոգւոյս հատորի. միայն անմեղ գառին
„ իմոյ. միայն իմաստուն որդւոյս.... Զայս օրինակ
„ բարբառէր նա ցաւած սրտիւն, և ՚ի սոյն ձեւ բա-
„ նից զողբսն իւր յարդարէր. Իսկ մեք միահողոյն
„ ընդհատեալ զբանս նորին, պատ ՚ի պատ զրուցիւք
„ կարկատէաք զնենգութիւն մեր. ծածկէաք զանօրէ-
„ նութիւնս մեր, և վիրօք և արեամբ զսիրտ նորին
„ լնուաք, խիստս և տմարդութեամբ պատասխանի
„ արարեալ, եթէ՝ զայդ գտաք ՚ի ճանապարհի. և
„ չէ ինչ մեզ ծանօթ եթէ Յովսեփուն իցէ պատ-
„ մուճանդ.

„ Ա՛հ անզգամութեանս. դուզնաքեայ ի՞նչ իցէ
„ յանցուածս. և չիցէ՞ հայհոյութիւն դառն այս պա-
„ տասխանի և յանդուգն. և չիցեմք արժանի պատ-
„ ժոց ջրհեղեղին և սոդոմական բոցակէզ հրոյն. Եւ
„ ՚ի վերայ այսքանեաց անօրէնութեանց՝ երբ և յորում
„ ժամու սփոփանս մատուցաք երբէք ծերունի հօր
„ մերում. երբ փութացաք սրբել զշիթս արտա-
„ սուաց ՚ի ծնօտից նորա. Ոչ ինչ բնաւ ազդէր ՚ի
„ մեզ սուգ նորա վշտահար և կսկիծն անդարմանելի.
„ Ընչի՞ն ինչ յանցանք իցեն մեզ այս, զորով ան-
„ զգայապէս իմն զանց առնէաք, անզեղջ կալով ՚ի
„ չարիսն, զոր և ոչ իսկ առ մեզս ունէաք ցարդ.

„ Ահա այս իսկ են ո՛վ Տէր իմ և Արարիչ, զ-
„ գացմունք սրտի իմոյ. այս են խայթք խղճի իմոյ՝
„ որով տառապիմս. այս են մեղք իմ ծածկեալ ՚ի

„ խորս երիկամանց իմոց ․ զորս առաջի ամենատես ա֊
„ չացդ հեղում արդ ․ Ներեա իմոյ անզգամութեանս ,
„ և շնորհեա աններելի մեղաց իմոց զթողութիւն ան֊
„ հուն ողորմութեամբ քով ․ ․ ․ ․ Ա՛հ գազանային
„ անգթութեանս ․ զիա՞րդ փոխարկեցաք յանկարծ ՚ի
„ վայրագն բնութիւն , զանտառասուն եղեոցն զգե֊
„ ցեալ զանձամբ զբարս ․ զիա՞րդ անկաւ ՚ի մտաց ի֊
„ մոց անդրանկութեանն պարտաւորութիւն ․ քանզի
„ յետ Ռուբենի՝ երկրորդ էի ըստ կարգի ծննդեան ․
„ ինձ հարկ և վայելուչ էր , մանաւանդ թէ պարտք՝
„ ունել գութ առ եղբայրն մեր ․ Իսկ իմ գլխովին
„ դարձեալ ՚ի դաժանութիւն յանհնարինսն և յան֊
„ իշխելիսն գտայ ձեռներէց ․ Ո՞չ սոյն այս գազա֊
„ նային բարք յանդգնեցոյց զիս ՚ի սուր սուսերի մա֊
„ հել զանհամար բնակիչս Սիկիմայ ՚ի պատճառս քեռն
„ իմոյ Դինայի ․ Այլ ըստ որում յայտնի և մերկ իմն
„ էին անդ անօրէնութեան գործք՝ առաջի հօր մերոյ ․
„ վասն որոյ ոչ միայն մեղացն իմոց եցոյց ինձ նա զծան֊
„ րութիւն , այլ և անաչառութեամբ իւր յանդիմա֊
„ նեալ խրատեաց եւս , ցուցանելով զապաշխարութե
„ ճանապարհն ․ վասն որոյ դառն արտասուօք , հեծու֊
„ թեամբ ոգւոյ անկայ առաջի Աստուծոյ ՚ի Բեթէլ
„ քաւել զմեղս իմ ․ Այնչափ արդ անշէջ բորբոքմամբ
„ սիրտ իմ տոչորի ․ հրդեհեալ վառին և այրին երի֊
„ կամունք իմ , և աղբիւրք արտասուաց իմոց ցամա֊
„ քեալ՝ խնայեն լինել զզովարար ցօղն ՚ի սփոփանս և
„ ՚ի դիւրութիւն սրտի իմոյ ․ Այլ դու Տէր մի՛ հեռի
„ առներ զգթութիւն քո ․ բաց առաջի իմ զգանձս
„ ողորմութեան քո , և ջնջեա զմուրհակ պարտուցս
„ անօրէնութեան ․ տուր լուսաւորութիւն մտաց իմոց ․
„ որով քննեալ և խուզեալ զսիրտ իմ և զերիկամունս
„ իմ , փութացայց սրբել զմեղս իմ ցօղով ապաշխա֊

„ րութեան . . . . Այլ որպէս . զիարդ քաղեցին եղ-
„ բարսպանութեանն մեղք . քանզի և ոչ իսկ ընդ-
„ հատ 'ի սպանութենէ է վաճառել զազատութիւն
„ ուրուք ընդ չնչին արծաթոյ , և այն՝ եղբօր իւրոյ հա-
„ րազատի , եղբօր՝ որ ոչ ինչ յանցեաւ . . . . Մի՛ անօրէ-
„ նութիւն անօրինակ , ով անգութ դաժանութի . . . „.
Զայս բան՝ անկաւ կրկին 'ի վերայ երեսաց իւրոց , և
ոչ եւս լսելի եղեն բանք նորա .

Այս բանք են ահա Ղենտասայ մտերմի իմոյ ,
զոր լուեալ 'ի բերանոյ եղբօր իմոյ Շմաւոնի՝ ընդ գը-
րով արկեալ էած առ իս . Եւ յարէ նա , թէ այն ինչ
անկեալ կայր նա անմռունչ 'ի գետին , լուր եհաս
գալստեան եղբարցն հանդերձ Բենիամենիւ .

Իսկ դու եկ և ուշ դիր աղօթական բանիցն նորա ,
և տես եթէ քանի՜ օգտակարագոյն են որդւոց՝ ծնո-
ղացն առաքինական կրթութիւնք , օրինակ բարի ընծե-
ռելով նոցա . Զի թէպէտ և բնաւորութիւն և բարք
որդւոց կարի իսկ դժնեայ և խիստ իցեն , այլ հուսկ
ապա դայ ժամանակ , և յիշելով զհարցն զառաքինու-
թիւնս և զբարեպաշտական սովորութիւնս , գան յուղ-
ղութիւն , վերածին 'ի բարւոք կափուլն , և ապաշխա-
րանօք քերեն յանձանց զառաջին զանհարթ և զան-
մարդի վարս իւրեանց . Ի միտ առ և զայն 'ի բանից
անտի եղբօրն իմոյ , եթէ զիարդ 'ի խաբս արկեալ են
զհայրն իմ՝ ընդ անցս դիպուածոց իմոց . և այս մեծ
և անհնարին ստութիւն և պատրանք մինչ փոքու իւիք
հնարագիտութեամբ ծածկիցի , և զիարդ հնար իցէ
մնալ ընդ վարագուրաւ 'ի մէջ տասնեցունց եղբարց
իմոց . այլ և ոչ իսկ տասներքին նոքա էին միայն , այլ
և բազմութիւն էր անդ հովուաց և վարձկանաց , ուր
այս ամենայն գործեցան ընդ իս . Արդարև գործ զար-
մանաքանչ , որ և թուի ինձ՝ ոչ առանց տնօրէնու-

թեան Աստուծոյ լինել այսմ.

Հայեաց և 'ի միւս խոստովանութիւն Հմաւոնի, զի ցարդ և ոչ իսկ մեզս համարեալ է 'ի նոսա հեռուն, ատելութիւնն և չարութիւնն՝ զոր գործեցին առ իս և առ ծնողն իմ. Այլ մի ինչ զարմասցիս ընդ այս ո՛ կենակից իմ. քանզի՝ այս կիրք նախանձու չարութեան՝ միանգամ տիրեալ սրտի մարդոյ, ոչ եւս թողու զնա զերծ լինելոյ չարաթոյն ազդեցութեց, այլ կաշկանդեալ կալեալ զնա 'ի նմին. բառնայ 'ի նմանէ զխոհականութիւն և զկարողութիւն ընտրելոյ զբարին 'ի չարէն, և գործէ՝ զոր ոչն գիտէ. կիրք իւր առաջնորդեն կամացն և մտաց և գործոց իւրոց, և առեալ ձգէ զնա 'ի սորաքարշ ցանկութիւնս և պատրաստէ զճանապարհս նորա մերձ 'ի կորուստն յաւիտենական.

ԳԻՐՔ ՅԻՍՆԵՐՈՐԴ ՉՈՐՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Ո՛ն արի պատմեա ինձ սիրելի այր իմ զժամանակին ողջամբ՝ ցանկալի եղբօր քո Բենիամենի, որում սպասեալ եմ 'ի տես՝ որպէս զքեզ. Արդ խօսեաց ինձ, տեսե՞ր զնա, խօսեցա՞ր ընդ նմա. այո՛ այո, անուշակ ժպիտ երեսացդ՝ զարդի քո զցնծութիւն յայտ առնէ, որոյ զօրութիւն և յիս ազդեալ, և զիս գրաւեն 'ի խնդութիւնն համակէ սրտապատառ.

ՅՈՎՍԷՓ

Յարուցեալ յառաւօտու վաղ քան զընդ արշալուրջն, բաժանեալ 'ի քէն՝ չոքայ ուղղակի յատեանն. և կոչեալ զնոսա, կացին ամենեքին հանդերձ Բենիամենիւ առաջի իմ. Ընդ տեսանելն իմ զնա՝ անդէն լըցան լիճք լուսոյ իմոյ քաղցր ցօղով արտասուաց. սիրտ իմ թունդ առեալ յառաջէր քան զիս դրկախառնել ընդ նորայն. ո՜վ սէր եղբայրական, ո՜վ գորով ոգւոյ հարազատի. Զսպեալ անդէն զսաստկութիւն կրից խանդաղատանաց, և դաղտագողի իմն ջնջեալ զարտասուսն իմ, հազիւ հազ զօրէին շրթունք իմ հարցանել զնոսա՝ եթէ դո՞ է եղբայր ձեր կրսեր. Ա՛հ կարացի ընդ երկար ժոյժ ունել գորովագեղ եռացման սրտիս, այլ առանձնացեալ առ ժամայն 'ի ներքին դահլիճն իմ, լացի հարուստ ժամս՝ արտօսր ուրախութեան հեղլով յաչաց իմոց, և գոհանալով զՏեառնէ զի արժանի արար զիս տեսանել զամենայն եղբարս իմ, տեսանել զԲենիամին՝ որ միակ առարկայ էր սիրոյ և հանապազօրեայ խորհրդոյն իմոց.

Բայց որովհետեւ արդարացան նոքա 'ի յանցանացն իւրեանց լրտեսութենէ, կամելով իմն պատուել և մեծարել զնոսա, առաքեցի զամենեսին 'ի նոյն արքունական պալատն, ուր կայ Շմաւոն 'ի պահեստի. և հրամանն ետու պատրաստել սեղան ամենալից, լուանալ զոտս նոցա, և լուծանել զվաստակ երկարութեան ճանապարհին. որպէս զի մարթասցայց գիտել 'ի նոցանէ եթէ զիա՞րդ կորզեալ զԲենիամին զեղբայր իմ 'ի գըրկաց հօրն իմոյ, ածին ընդ ինքեանս. Քանզի՝ որպէս ծանեայք 'ի բանից անտի աղօթիցն Շմաւոնի, հայր իմ յանմխիթար սուգ հարեալ արտասուէ ցարդ ընդ կո-

րուստ անձին իմոյ. և թէ՝ ոչ ինչ փոյթ է եղբարց իմոց սփոփել զնա և հանգուցանել զոգի նորա ՚ի վշտաց իւրոց.

Ընդ բերել մատուցին ինձ զընծայս հօր իմոյ, զպատարուագոյնս ՚ի բերոց Քանանացւոց, զռետին, զմեղր, զստաշխն, զբեւեկն և զնշոյղ, զորս ընկալայ իբրեւ յաստուածուստ ընծայեալ ինձ պարգեւ, և ՚ի նշան օրհնութեան ծնողին իմոյ. Յուսայ զկենդանութիւն նորա և ուրախացայ. մանաւանդ զեղբայրն իմ ցանկալի տեսեալ առաջի աչաց իմոց, ոչ կարէի ունել զարտասուս իմ ՚ի սաստիկ խնդութենէ սրտիս. Եւ այն ինչ խօսել կամելով ընդ նմա, բանայի զբերան իմ յօդել բանս, և ահա արտօսր անդէն ճնշեալ յաչաց՝ խոյս ետու միւսանգամ ՚ի նոցանէ, զի մի ինչ կարծիս տաց նոցա զանձնէ իմմէ.

Իսկ եղբարք իմ գլխովին օտար ՚ի մտաց իմոց և անգէտ իմոցս կրից, պարանեալ յերկիւղ և ՚ի տարակուսանս, մատչէին աղերսախառն առ հազարապետ տան մերոյ, ծանուցանելով նմա վասն արծաթոյն՝ զոր գտին իւրաքանչիւր յամանի իւրում, և դարձուցանէին հատուցանել կրկին զնոյն. իսկ նա պատասխանի ետ նոցա եթէ՝ լիով ստացայք զառաջին արծաթն, և չիք մեր պահանջք անտի.

Եւ ՚ի ժամ ընթրեաց ետու պատրաստել կրկին սեղան, ՚ի միումն նստայ ես հանդերձ աւագանւոյն. իսկ ՚ի միւսումն բազմեցուցի զնմ̃ եղբարս իմ ըստ կարգի երիցութեան իւրեանց. և ըստ սովորութեան մերում ցանկալով առաւել իմն մեծարանս առնել երեսաց նոցա, ես անձամբ մատակարարէի զկերակուրն, մատուցանելով մէն մի նոցա ՚ի սեղանոյ մերմէ բաժինս հաւասար. Իսկ Բենիամենի զպարարտ մասունս խորտկացն առ ոքէի և հնգապատիկ առաւել

քան զնոյն. Այսու կամէի գրգռել զնոսա 'ի խորհուրդս միայն և սրտի, եթէ նախանձիցին արդեօք և մախայցեն ընդ եղբայրն իւրեանց. Յետ ընթերցման լցուցեալ զքուրձս նոցա ցորենովք՝ որչափ ինչ մարթ էր բառնալ գրաստուցն, և զարծաթս իւրեանց եդեալ գաղտ իւրաքանչիւր 'ի բերան ամանոյն, արձակեցի զնոսա երթալ յերկիրն իւրեանց հայրենի.

Արդ՝ եկեսցուք մեք սիրելի իմ Ասանէթ, 'ի գեղեցիկ ընծայս հօր իմոյ առաքեալս ինձ. ո՜հ, զիարդ քաղցր յիշատակութիւնս զարթուցանեն այնք 'ի միտս իմ. Տես զքաղցրախորժ անուշութիւն մեղուն և ըզձիւնափայլ գեղեցկութիւնն, որ սեփական իմն է երկրիս մերում. և հոտ նորա քաղցրաբոյր զիարդ հեշտալի զգայ, յորմէ յայտ է թէ քանի առատութիւն է անդ բիւրազգի ինքնաբոյս ծաղկանց և թփոց. Ոչ միայն այս բեր հրաշալի ակներեւ իմն ցուցանէ զպարարտութիւն և զբեղմնաւորութիւն երկրին Քանանացւոց. որ թէպէտ և լեռնային, թէպէտ և ապառաժուտ, այլ է երկիր ընտրեալ յԱստուծոյ, և օրհնութեամբն նորին աճեալ 'ի բարեբերութիւն. Եւ այս է երկիր՝ զոր խոստացաւ Աստուած պարգեւել հաւուն իմոյ Աբրահամու և որդւոյ նորին Իսահակայ և հօր իմոյ Յակովբայ, որ կայ արդ բնակեալ 'ի նմա. Սակայն ոչ կարեմ հասու լինել մտօք եթէ ուստի՞ պատճառեցաւ և անդ սով. քանզի՝ ոչ որպէս երկիրս Եգիպտացւոց՝ ճոխէ և ագահէ անդ երկիրն յարդիւնս բերոցն. այլ հարիւրապատիկ և առաւելագոյն եւս ընձեռնէ երբեք զսերմանիս իւր. Այո և գիտեմ իսկ հաւաստի՝ ոչ առանց աստուածային անօրէնութեան լինել, որոյ անքննելի են գործք, և 'ի վեր քան զմիտս մարդոյ.

Գոհանամ և փառս մատուցանեմ՝ երախտապարտ

շրթամբք զամենաբաւ խնամոց Արարչին, որ խորով գթութեամբն պահեաց ցարդ կենդանի զհայր իմ 'ի լի և 'ի պարարտ ծերութեան իւրում. որ թէպէտ և չիցէ ինչ տեղեակ կենդանութեան իմում և իշխանական պերճութեան, և լայ տակաւին 'ի սուգ անմխիթար՝ համարելով զիս գազանակուր լեալ, սակայն մերձ է ժամանակն փոխել յուրախութիւն՝ տրտմութիւն նորին բազմամեայ. Արդ՝ ով ամենախնամ Տէր, որ պահե֊ցեր զիս կենդանի և անվտանգ ընդ բովս անցեալ պէսպէս փորձութեանց, պահեա՝ աղաչեմ և զհայրն իմ ցանկալի. և արա զիս արժանի միւսանգամ տեսա֊նել զնա մարմնաւոր աչօք, և համբուրել զբազմերախտ ձեռս նորին.

ԳԻՐՔ ՅԻՍՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Ո՞չ կարացին ինչ եղբարք քո գոյզն նշոյլ ծա֊նօթութեան ստանալ զքէն, և 'ի կարծիս անկանել ընդ այնչափ յարգանս մեծարանաց, մանաւանդ ընդ գծագրութիւն դիմաց քոց. Եւ ո՞ւր են արդ. առեալ զալմոխն մեկնեցա՞ն անդէն յերկիր իւրեանց.

ՅՈՎՍԷՓ

Լցեալ զամանս նոցին ցորենովք և պաշարովք առ 'ի պէտս ճանապարհին, անկան ընդ երեկս կոյս

յուղի. այլ թէ զինչ անցք անցին ընդ նոսա իմովս իսկ գիտութեամբ և հնարիւք մինչեւ հեռացեալ կարի իմն 'ի քաղաքէս, պատմեցից քեզ. Բայց նախ ցուցից թէ զիարդ ոչ կարացին ճանաչել զիս. Երեք ինչ թուի ինձ պատճառ չգիտելոյ զիս նոցա. նախ՝ փոփոխութիւն անուան իմոյ. երկրորդ՝ կեղծելն իմ չլեմանալ զլեզուս նոցին, ընդ որս թարգմանաւ խօսէի. թէպէտ և եղեւ ուրեք ընդ Բենիամենի յօդել ինձ 'ի լեզու իւրեանց ձայնս կիսահագագս և անոճն՝ վասն օրհնութեանց հօր իմոյ, դիտմամբ գործելով իմ զայն. Երրորդ՝ քանզի գիտէն քաջ եթէ 'ի գերութիւն վաճառեցին զեղբայր իւրեանց, և զիարդ լինիցի նա իշխան և տէր Եգիպտոսի. այլ և զի զանազանութիւն մեծ է և վիհ անսպառ ընդ գերին և ընդ իշխանն. և ոչ իսկ իշխէ ոք յուսալ և հաւատալ երբեք 'ի ստրկութենէ բարձրանալ մարդոյ յայս աստիճան փառաց և պատուոյ. որ անհնարին իմն համարի 'ի մարդկանէ, սակայն և ոչ յամենակարող Արարչէն, որ 'ի լրումն նախասահմանեալ երազոյն՝ հասոյց զիս յայս իշխանութիւն մեծափառ, ընդունել երկրպագութիւն յեղբարց իմոց.

Ի վերայ այսր ամենայնի՝ կայր առաջի նոցա բաւական նիւթ մոլախոհ լինելոյ և կասկածանաց, յերկբայս անկանել ընդ առաւելութիւն կերակրոցն՝ զոր մատուցանէի Բենիամենի, և բազմեցուցանելն իմ ըզնոսա 'ի սեղան ըստ երիցութեան կարգին. այլ նոքա ոչ ինչ իմացան և ոչ զմտաւ ածին եթէ ուստի՞ է ինձ գիտել զկարգ պատուոյ եղբայրութեանն. Վասն որոյ այլ իմն հնարս խորհեցայ 'ի յայտ ածել զիս, դնելով զարծաթի ըմպանակն իմ 'ի քուրձս Բենիամենի, և այնու որսալ զնոսա 'ի ծանօթութիւն ինձ. Իբրեւ եկին նոքա 'ի ճանապարհ, փութացան հետամուտք

զհետ նոցա, հետաղօտել զբաժակն իմ 'ի մէջ բեռանց նոցա, և յանդիմանել զգողութիւնն. Իսկ նոքա լուեալ զայս՝ բացէ 'ի բաց ուրաստ գան, և գոչեն 'ի ձայն բարձր. քա՛ւ լիցի մեզ առնել զայդ բան. Եւ յապացոյց անմեղութեան իւրեանց՝ մատուցեալ առ հաղորդապետն ասեն. «Ահա զարծաթն՝ զոր գտաք 'ի քուրձս մեր, դարձուցաք անդրէն առ ձեզ. և աղաչէաք ես զձեզ ընդունել. դուք ոչ կամեցայք ասելով՝ եթէ լիով ստացաք մեք զայն յառաջնում նուագի անդ. Եւ արդ՝ զիա՞րդ մարթ է մեզ մատն լինել հաւատարմութեանս, այսու գողութեամբ զոր զրպարտէքդ զմէնջ. մանաւանդ զի բարերարութիւն իշխանիս մեծ եղեւ 'ի վերայ մեր. քանզի՝ ոչ միայն զԱմաւոն, զոր 'ի ներկայութեան մերում կապեալ հրամայեաց արկանել 'ի բանդ, յետ մեկնելոյ մերոյ՝ արձակեալ պատուով մեծաւ բնակեցոյց յարքունի պալատիցին, այլ և զմեզ՝ որք խաշնարածք և փառապէլք և անարժան երեւելոյ առաջի արքայապատւոյ մեծի իշխանիս, նա իւրով ընդաբոյս մարդասիրութեամբն բազմեցուցեալ զմեզ յիւր սեղան հոյակապ և արքայավայելս, յետ տալոյ լուացումն ոտից մերոց՝ ըստ սովորութեան երկրի մերում, փութով զմեզ արձակեաց յայս նուագ, լցուցեալ զամանս մեր ամենայն բարեօք. Ա՛յ զի՞ և փոխարէն դուզնաքեայ անձանց ընծայիցս հօր մերոյ, առատաձիր ըստ իւրում մեծութեանն նուիրեաց պարգեւս. Արդ՝ յայսչափ և յառաքել քան զոյնս վայելեալ մեր 'ի մեծագոյն բարիս, տակաւին ապա՞խտ առնիցեմք զշնորհօք իշխանիս. և ապերախտութիւն փոխանակ շնորհակալեաց ցուցանիցեմք՝ խորել զնորին ըմպանակն. Քա՛ւ լիցի մեզ այդ. վկայ են երկինք, վկայ է Ճշմարտութեանս մերում Աստուածն մեր երկնի և երկրի. Վասն որոյ՝

ահա երդնումք ձեզ առաջի Աստուծոյ մերոյ և առաջի ձեր, զի առ որով և գտցի ըմպանակն, մեռցի այրն այն. և մեք ծառայ լիցուք Տեառն մերում յաւիտեան „.

Զայս մտիւ կնքեալ հաստատութեամբ, ընդդէմն եւս միաբան ամենայն աղաղակաւ, գիտելով անպարտ զոլ զանձինս ՚ի վայրապար զրպարտութենէն. Սկսանի ՚ի վայր իջուցեալ արանցն զամենայն բեռինս գրաստուց, սկսան մի առ մի խուզել որոնել զքուրձս նոցին կարգաւ, և գտին զըմպանակն իմ ՚ի քրձի Բենիամենի. Զահի զամօթի հարեալ ընդ այն ամենեքեան, ցամաքեցաւ արիւն յերակս նոցին. հատաւ գոյն երեսացն. լքան կործանեցան ՚ի յուսահատութիւն. սկսան հող զգլխովն ածել. զհերսն փետել, զայտսն ցեռել և զհանդերձս իւրեանց փեռեկտել. Կցեցան լեզուք ՚ի քիմս իւրեանց և ափ ՚ի բերան եդին. քանզի ամօթապարտ գտաւ Բենիամին և մահու պարտական. Ստահ են ընդ անմեղութիւն նորա և գիտեն քաջ զբարս բարուցն, որ լաւ համարի ընդունել զմահուն տապար՝ քան զգողունի պատուել. Այլ ոչ ինչ օգտիցեն վարք նորա և անմեղութիւն. գողօնն՝ որ առաջի կայ՝ յանդիմանէ զնա. Վճիռն՝ որ համաձայնութեամբ երկուց կողմանցն հաստատեցաւ, պարտաւորէ զԲենիամին ՚ի դատապարտութիւն մահու. և զեղբարս նորա ՚ի ծառայութիւն յաւիտենական. Ոչ թէ և Բենիամին միայն դատապարտեալ, այլ ընամենեքին յազատութիւն արձակիցին երթալ ՚ի հայրենիսն, Յուդա կացցէ ընդ անիծիւք և յանցաւոր առաջի հօր իւրոյ մինչև ցելս շնչոյ իւրոյ.

Զայսոսիկ ամենայն զմտաւ ածեալ՝ յապուշ կըրթեցան, ոչ մնաց բան ՚ի բերանս նոցա, և չգիտեն զինչ պատասխանի տանել. Անմարթ էր նոցա ՚ի բաց

խուսափել. զի հասեալ կան 'ի վերայ արք զօրութեան. և յանցանք իւրեանց իբրև զլոյս արեգական՝ այնպէս մեկին և յայտնի ցուցանի. խայթ խղճին 'ի ներքուստ տագնապէ. միտք նորա շուարեալ. ձեռքն 'ի թնդւոջ, ոտիցն ջիղք պնդութեան թուլացեալ, և համակ մարմինն լուծեալ յուժոյ զօրութեան. Իսկ զՅուդայի զմտին հուրն բոցակէզ ո՛վ զօրեսցէ առնուլ 'ի վէպ. այն ինչ զմտաւ ածէր զհեռանալ Բենիամենի 'ի գրկաց հօրն, և յիշէ զլալ նորին՝ որ դառնագին սրտիւ գոչէր. ես որպէս անզաւակեցայ, անզաւակեցայ. հոսէին աղբիւրաբար արտասուք յաչացն Յուդայի, և անյօդ և անկերպարան բանիցն արտասանութեամբ երբեմն զայս և երբեմն զայն կակազէր դանդաչանօք, և չգտանէր հնարս ազատութեան և 'ի բաց քերելոյ յանձանց զտարապարտ յանցանս գողութեան.

Զօրացաւ անդէն Շմաւոն, և խօսել սկսաւ 'ի սոյն տարազ բանից. "Զի՞ կայք շուարեալ և ապշեալ. մեք իսկ եմք յանցաւոր. մեք իսկ զվճիռ մահու հատաք անխորհրդաբար. ո՛չ ոք մեզ զրպարտիչ, ո՛չ ոք անիրաւօղ. Դարձցուք եղբա՛րք, դարձցուք առ իշխանն ողորմած և բարերար, որոյ մեծ են գութք, անպատմելի խնամքն, անչափ բարերարութիւնքն և անզուգական շնորհն. Խոստովանեսցուք նմա ուղղութեամբ սրտի, գետնամած անկեալ առաջի նորա՝ դառն արտասուօք յողորմուկս ածցուք զնա. պատմեսցուք նմա եթէ զիա՛րդ անմեկնելի սիրով շաղկապեալ կայցէ սիրտ հօրն մերոյ ընդ Բենիամենի. և ակն ունիմ յողորմութիւնն Աստուծոյ, զի գութ արկցէ 'ի սիրտ նորա, որով կամ ներեսցէ մեզ զյանցանս մեր և կամ կացեալ նորին մեք 'ի ծառայութիւն, ազատեմք զԲենիամին, և առաքեմք անփորձ և անվնաս առ հայրն մեր". Հաճեցան ընդ այս ամենե-

քեան, և անագան ուրեմն դարձան յետս ՚ի քաղաքս հանդերձ հետամուտ զօրօքն. Բայց որովհետեւ մերձեալ էր սեւաթոյր գիշերն արկանել զհորիզոնաւ ըղքօղն մթազգեստ, վասն որոյ հրամանս ետուն օթեւանել զնոսա յընդարձակագոյն ուրեք վայրի մինչեւ ցառաւօտ, կացուցեալ ՚ի վերայ նոցա զԱենտաս ընդ այլոց ումանց՝ առնուլ ՚ի մատենի զգիշերային խորհուրդս և զանցս նոցին.

Տեսանեմ արդ սիրասուն կենակից իմ՝ զանխորհըրդաբար վճիռ նոցա, յո՛ր տագնապ տարակուսանաց առեալ ձգեաց զնոսա. փոխանակ զի՝ պարտ էին հասուն մտօք խորհել, ընդաճել ՚ի միտս, և խնդրել ժամանակ խորհրդոյ. և յետ քննելոյ իւրաքանչիւր ումեք զմիտս և զդիտաւորութիւն, ապա փութալ յորոշումն. Որով կամ յայտնի լինէր զըպարտութեանն հանդամանք, և կամ պատրաստէին պատասխանի արժանաւոր. Չէր հարկ ամենեւին հատանել վճիռ, և այն՝ առ ՚ի մահ, որ վերջին յուսահատութեան է գործ, և քան զամենայն ահարկուսն՝ ահաւորագոյն. և կամ ՚ի գերութիւն, որ է դժնդակագոյն մահ հանապազօրեայ՝ յետին թշուառութեամբ լցեալ.

Բայց մի՛ զարմանար դու, զի որք չեն կրթեալք ՚ի գիտութիւն մտացն և բանի, և ՚ի բարւոք կիրառութիւն մարդկային խորհրդոց, յամենայնի սխալին, և ոչ երբէք գան յուղղութիւն. Երջանիկ է նա՝ որ միանգամ գթմամբն յանձին եկեալ բարեկարգէ զընթացս իւր. և եւս երջանիկ է՝ որ զայլոց սխալանս և զպակասութիւնս օրինակ առաջի ունելով իւրեան, միշտ ՚ի կշիռ և ՚ի չափու ունի զանձն, ոչ սայթաքի և ոչ զառածի ՚ի նմանօրինակ գայթս մտաց, այլ նոցին վնասուքն զանձն խրատէ և միշտ յուղղութեան ունի. Ապա ուսուսցուք որդւոց մերոց մատաղագունիցն դեռ ՚ի միտս

և 'ի տիս. յոչինչ երբեք լինել ձեռնամուխ 'ի գործս և 'ի բանս. մինչչեւ քաջ կշռեալ զայնս 'ի միտս իւրեանց. և ըստ բաւականին 'ի քննութիւն առեալ, զոր առ 'ի նոցանէ ծագիցի օգուտ կամ վնաս.

ԴԻՂԵՐ ՅԻՍՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Զ՛ինչ խորհուրդք էին նոցա 'ի գիշերիս.

ՅՈՎՍԷՓ

Բազմադիմի, զորս 'ի գիր անցուցեալ աշալուրջն մեր Մենտոս, էած առ իս. զոր աՀա ընթեռնում. և ունի օրինակ զայս.

“Իբրեւ եկին յիջեւանս անդ՝ զոր պատրաստեալ
„ էին նոցա, եդաւ առաջի նոցա կերակուր. բայց ոչ
„ ոք կամէր ճաշակել ինչ առ անհնարին տրտմութեան
„ դիպուածոյն. Իսկ Ռուբէն սփոփեաց զնոսա առ-
„ նուլ սակաւ ինչ կերակուր 'ի կազդուրումն սրտին.
„ զի ո՛ գիտէ, ասէ, զինչ ծնանիցի մեզ վաղիւ. ապա
„ եկայք մատիցուք 'ի սեղան միաբանութեամբ և յայս
„ վերջին նուագ, և վայելեսցուք յաստուածային պար-
„ գեւսն. այլ ոչ իբրեւ 'ի սերկեան աւուրս, ուր ա-
„ ռանց սովորական աղօթից մերոց յանդգնեցաք մատ-
„ չել առ սեղանն. քանզի՝ ակնածելով յաՀարկութենէ
„ իշխանին, զանց արարաք զաղօթիւք գոՀանալ զպար-

„ գեւողէն Աստուծոյ ։ Սակայն առաւելապէս ի մե
„ ամօթապարտ գտայք յայնժամ, յորում իշխանն այն
„ փառաւոր յետ բազմեցուցանելոյ զմեզ 'ի սեղան,
„ կանգուն կացեալ և ամփոփ յանձին իւրում ցնծային
„ շրթունք նորա 'ի մրմունջս, որով ցուցանէր զլուելեայն
„ գոհաբանութիւնս իւր ։ նոյնպէս արար և զկնի սե-
„ ղանոյն ։ Արդ՝ եթէ յարքունիսն Փարաւոնի՝ որ ոչ
„ ճանաչէ զԱստուածն մեր ճշմարիտ, գուցէ այսպիսի
„ այր ջերմեռանդ և աղօթասէր, մեզ որչափ նախա-
„ տինք և մեղք չիցեն ։ մեզ՝ որ ազգ եմք աստուածըն-
„ տիր և ժողովուրդ սեփական ։ մեզ՝ որ սնեալ և
„ կրթեալս եմք 'ի տիս մանկութեան 'ի ծնողաց մե-
„ րոց ։ բայց զմարդկային ամօթն նախադաս ունելով
„ քան զԱստուծոյն երկիւղ՝ անգոհացող շրթամբք
„ մատեաք 'ի ճաշակ կերակրոյն ։

„ Զայս խօսեցեալ նորա, մատեան ամենեքին միա-
„ բան 'ի սեղան, և իւրաքանչիւր յոտին կացեալ գո-
„ հութեամբ մատուցին զաղօթս իւրեանց ։ և էր նոյնն՝
„ զոր մատուցանէ Տէրն մեր ըստ սովորութեան իւրում ։
„ Յետ ընթրեացն յորդորեցին զԲենիամին երթալ և
„ հանգչել յանկողնի իւրում, խրախոյս տալով նմա՝
„ ոչ ինչ տրտմականս 'ի միտս իւր ածել և տառապել
„ ընդ վայր զանձն իւր ։ այլ յուսալ 'ի Տէր, ասէին, և
„ խնդրեա 'ի նմանէ զփրկութիւն՝ այց առնել մեզ
„ ամենեցուն, որոյ ողորմութեան չիք սահման ։ Թէ-
„ պէտ և յօժարագոյնք եմք մեք և պատրաստք զմահ
„ յանձն առնուլ, և փրկել զքեզ յայսմ անակնկալ
„ փորձութենէս և յանհնարին զրպարտութենէս ։ քանզի
„ անմեղ ես ամենեւին յանցանաց, և նենգութեանն
„ թակարդ եհաս քեզ ։ Աչք Բենիամենի ծանրացեալ
„ արդէն 'ի գառն արտասուաց՝ պարապոյ սպասէր
„ զեղուլ 'ի դուրս, վասն որոյ զլալ հատեալ անդէն"

„ ողորմագինս՝ եբաց զբերան իւր և ասէ ցնոսա ·
„ — Օ՜ որ ՚ի սրտիս ունէի մթերեալ զդառնութի՜ աղէ֊
„ տիցս , աւասիկ մերկանամ արդ առաջի ձեր · և զի՞նչ
„ այն իցէ · և ո՞րք պատճառ տարաբաղդութեանս՝ որ
„ յանկարծուստ զմեզ պաշարեաց · զիա՞րդ յառաջ
„ խաղացից բանիւս · զի թէ սաստկութիւն աղէտիցս
„ կալ և կայ ունի զլեզու իմ , այլ ճշմարտութիւնն
„ և եղբայրական համարձակութիւնն բուռն լինին ինձ
„ խոստովանել անկեղծաբար · Ոչ ապաքէն դուք
„ իսկ էք սկզբնապատճառ աղետաբեր դիպուածոյս ·
„ ո՞չ հարկ և պէտք էին ձեզ զամենայն արթնութիւն
„ յանձին ունել · զգուշանալ յամենայն առթից , և
„ ոչ յանդուգն լինել ՚ի բանս՝ մինչեւ քաջ կշռեալ
„ ՚ի միտս · Օ՜ իա՞րդ փութանակի ՚ի մոռացօնս եղեն
„ ձեզ տրտմութիւնք և խորհուրդք , զոր վասն ազա֊
„ տութեան Շմաւոնի առնէիք , և զամենայն հնարս
„ հնարել՝ առ ՚ի անվտանգ և անվնաս դարձուցանել
„ զիս անդրէն վերստին ՚ի գիրկ ծնողին իմոյ · Այլ
„ դուք իբրեւ հասիք այսր , և տեսիք զՇմաւոն
„ յարձակուրդս և ազատ յիւրոցն շղթայից , և ըզ֊
„ ձեզ պատուով հրաւիրեալ բազմակից լինել յընթ֊
„ րիս մեծի փոխարքայիս , թուլացեալ անդէն , մեղկա֊
„ ցայք ՚ի քաջախորհուրդ մտացդ հաստատութենէ ·
„ Եւ արդ զի՞նչ · խոհեմութիւն ի՞նչ էր , ասացէք
„ ինձ , զի զկնի ճաշուն , իբրեւ լցին զքուրձս ձեր
„ ցորենով , փութացայք անդէն անկանել ՚ի ճանա֊
„ պարհ · թէպէտ և անխորհուրդ ձեր այս խուճա֊
„ պանք ոչ առանց ինչ գովութեան էր , զի փու֊
„ թալով փութայիք առ ՚ի հասանել միով աւուրբ
„ յառաջ առ հայր մեր , սակայն մարթ էր մեզ
„ և հարկ իսկ՝ քաջընթաց զոմն առաքել նախ քան
„ զմեզ , որպէս և պատուիրեալ էր հայր մեր ·

„Իսկ արդ ասացէք ինձ աղաչեմ, եթէ ըմպա-
„նակն՝ որ գտաւ ՚ի քուրձս իմ, ի՞նձ միայն ամօթ
„և անարգանս պատճառեաց. ո՞չ ապաքէն և դուք
„կորագլուխ և ամօթապարտ գտայք, մանաւանդ
„յորժամ ՚ի յայտ եկին և յամանոց ձերոց արծաթքն՝
„զոր բերայք ՚ի գին ցորենոյն. Ե՞ր ոչ արթնութեամբ
„վարեցայք ՚ի ճուլ անդ զքուրձս ձեր. ո՞չ պարտ և
„արժան էր ձեզ ներկայ գտանիլ և դիտել. և ոչ իսկ
„մատամբ ձերով կամեցայք զփորձ առնուլ, մինչև
„բարձին զբեռինսն ՚ի վերայ գրաստուց. Եւ ՚ի վերայ
„այսր ամենայնի՝ ո՞ր վստահութիւն էր ձեր. ո՞ր գո-
„չումն աղաղակի, և զի՞նչ վճիռ անխորհուրդ, զոր
„գոռացիք և կնքեցիք առանց քննութեան, յորմէ
„անհնար է խուսափել. մինչև՝ ո՜վ անհնարին թշուա-
„ռութեանս և յանդգնութեան մտացս, մինչև հա-
„մարձակեցայք վայրապար անձինն վստահութեամբ
„վկայ կոչել անմեղութեան զԱստուածն երկնից.
„Ոչ գիտէք և ոչ ՚ի միտ առնուք զծանրութիւն
„յանցուածոյս՝ զոր յանցեայքդ. Իբրու թէ թէև և
„դուզնաքեայ ինչ համարեալ յամենայն անձնէ դո-
„չէիք. ո՜հ, զիա՞րդ խոցեաց զմիտս իմ. դեռ լսեմ
„յունկն իմ զայն ժամու երդումն՝ զոր երդուայք,
„և ցարդ քստմնին հերք իմ.

„Մի՛ թուեսցին ինչ ձեզ բանք իմ թելադրեալ
„՚ի յուզեալ կրից իմոց՝ վասն ըմպանակին, որ մահա-
„պարտ կացուցանէ զանձն իմ. քա՛ւ, և մի՛ լիցի ինձ
„այս, և ոչ իսկ զմտաւ ածել. զի չեմ ինչ վատասիրտ.
„չեմ ինչ օտար յարենէ հօր իմոյ և նախահարց իմոց
„արեաց. ոչ ինչ մեղկութիւն և երկչոտութիւն
„լքուցանէ զսիրտ իմ. ոչ ՚ի գերութենէ զանգիտեմ,
„և ոչ ՚ի մահուանէ երկնչիմ վատաբար. պատրաստ
„կամ աւասիկ ՚ի մահ, և ոչ իսկ յանձն առնում

„փոխանակել զիմ մահ ընդ գերութեան ձերոյ. զի
„լաւ է մեռանել միում, քան զյաւիտենական ըստըր-
„կութիւն տանեցուց. Այլ այս միայն է ինձ ցաւ
„և անբուժելի վիշտ սրտի իմում, զի անխորհրդաբար
„անկայք 'ի վտանգ, և գահավէժ բերմամբ եղեայք
„անձնամատն. Մոռացայք խրատու զոր 'ի Ճանապարհի
„խորհէիքդ և ասէիք. սակաւախօս լիցուք, կարճես-
„ցուք զբեզուս մեր յերկարաձիգ բանից. մի ամենայն
„հարցուածոց տացուք պատասխանի առանց խորհըր-
„դոյ, զի աւելորդ և անզգոյշ բանք մեր պատճառս
„եղեն բանդարգելութեանն Հմայոնի. և այլ բա-
„զում ինչ այսպիսի. Իսկ դուք ամենեքին 'ի մոռացօնս
„դարձուցեալ զայս ամենայն, անզգուշաբար մնեցայք
„'ի կեր և 'ի յումպ, մոռացեալ զչափ անձանց ձե-
„րոց. ոչ քննեցիք ընաւ զպատճառ բռնադատու-
„թեան իշխանին զբաժակն, մինչեւ անձամբ ուսայք
„զփորձ իրին. Փակեցան դրունք մտաց ձերոց, և ոչ
„յիշեցիք զիմաստուն խրատ հօր մերոյ, որ ասէր. որ
„ինչ միանգամ առաջի դնիցի ձեզ 'ի տան հզօրաց,
„մի ձեռն 'ի նոյն անդէն մխիցէք, մինչեւ քաջ խնա-
„ցեալ զայն, Եւ զի՞նչ ապաքէն, ունելիք տալ նմա
„փոխարէն, և մատուցանել ընթրիս փոխանակ ընթ-
„րեացն, կամ պատասխանի ճաշուցն առնել. այլ դուք
„յանչափս անձնամուխ եղէք 'ի կեր և 'ի յումպ նորին,
„առանց իսկ իմանալոյ թէ յո՞ր միտս զայն առնիցէ.
„'ի շնո՞րհս արդեօք՝ եթէ 'ի պատրանս.

„Արդ՝ աղաչեմ զձեզ եղբարք իմ, քննել գամ մի
„զգործսն զոր գործեցիք, և յիշել զարտասուագին
„բացագանչումս հօր մերոյ, որ ասէր. ո՞րպէս անզգա-
„ւակեցայ. և թէ՝ ո՞րպէս անորդի արարիք զիս. Ընդ
„այս երկնչիմ մեծապէս՝ զի մի՛ ճշմարտեսցին բանք
„նորա. ոչ ինչ երբէք խիթամ և դողամ ընդ անխոր-

„հուրդ վճիռ ձեր . որ թէպէտ և օտարացուցանէ
„զիս 'ի ծնողէն իմմէ , և մատնէ 'ի մահ կամ 'ի գե-
„րութիւն , այլ սարսափիմ յաւէտ մեծաւ երկիւղիւ ,
„զի դուք ոչ եւս կարելով երեւել առաջի երեսաց
„Հօր մերոյ , ցան և ցիր վարատեսջիք աստ և անդ . ո-
„րով և անզաւակեցուցեալ զծերութիւն նորա՝ տրտ-
„մութեամբ իջուսջիք 'ի դժոխս . Արդ՝ զայս ամենայն
„թակարդս չարանենգս տեսեալ առաջի իմ , և ան-
„շուշտ գիտելով եթէ չիք փրկութիւն յերկրածնաց ,
„մի միայն յԱստուած ապաւինիմ , որ ամենակարողն է
„և յամենայն անհնարելիսն զելս փրկութեան գտանէ .
„նա արասցէ և տնտեսեսցէ որ ինչ հաճոյ է կամաց
„իւրոց .

„Այսչափ ինչ պարտ յանձին վարկայ յուշ ա-
„ծել ձեզ . զի հասեալ կամք ահա 'ի վերջին կէտ և
„'ի վերջին վայրկեան վիճակի կենաց մերոց . և ո՛ գիտէ՝
„վարատեսցի՞ արդեօք խաւարային այս թախծութիւն
„ոգեսպառ տրտմութեանս , ընդ վարատել խաւար
„գիշերոյս յամենասփիւռ ճառագայթից ականն ա-
„րեւու — . Զայս լըրեւ ասաց , մեկնեցաւ յեղբարց
„իւրոց բարեմաղթելով նոցա ազատութի յանակնկալ
„վտանգէս , և առանձնացաւ յայլ խմն սենեակ . անկաւ
„անդ 'ի վերայ երեսաց իւրոց , և ապա եկաց անմռունչ
„յաղօթս արտասուալից պաղատանօք , և անկաւ 'ի
„քուն „ .

Տեսանե՞ս ո՛ կենակիցդ իմ նազելի զգեղեցիկ
իմաստս խորհրդոցն Բենիամենի , զորս 'ի ձեւ յան-
դիմանական առաջի արկեալ եղբարց իւրոց , զամօթի
եհար զնոսա . Ո՜վ գովանի մտացս և զօրութեան
բանիցս . զիա՞րդ բուռն ազդեցութեամբ իմաստա-
ցեալ յաղթահարէր զնոցին միտս . Այլ դու մի՛ զար-
մանար , եթէ մանուկ դեռահաս վստահացի յան-

դիմանել զհաստունացեալսն մտօք. Քանզի անխոհեմ գործք կատարեալ կարծեցելոյն հաստատուն և բանիւ, արդար իրաւամբք դատին յանփորձ պատանւոյ. Ու քանի՞ անմտութիւն մեծ է՝ առանց ստուգիւ ճանաչելոյ զգլխարդն իւրն, և կամ յայտնապէս խօսելով՝ զինչ ինչ յամանսն անդ կայցեն, հատանել զվճիռ, որ է գործ անխոհեմութեամբ անձինն ապաւինելոյ և զուր պարծանաց. ուր փոխանակ՝ կարէին զայլ ինչ զօրաւոր փաստ յառաջ բերել, և այնու քերել յանձանց զգողութիւնն, ասելով, եթէ՝ չեմք ինչ մեք տեղեակ՝ զինչ ՚ի քուրձս մեր կայցեն, զի դուք լցուցէք զնոսա և դուք՝ բարձէք ՚ի վերայ գրաստուցն. և զինչ անդր իցեն՝ մեք ինչ ոչ գիտեմք. որպէս լցիքդ անձամբ, անձամբ առանձինն և քննեսջիք. Զսոյն բարբառ եթէ ՚ի վար արկեալ էր նոցա, կամ կարճէին արքն զձեռս իւրեանց ՚ի խուզելոյ զամանսն, և կամ՝ եթէ խուզէին եւս, ինքեանք միայն անմեղ և առանց յանցանաց. Յայնժամ և ոչ եւս լինէր իրաւունս բռնաբարելոյ զնոսա. ոչ զվճիռ առ ՚ի մահ հատանէին. ոչ վիշտք և տագնապք ոգւոյ գտանէր զանձն նոցա. և ոչ անուանն գերութեան սրտաբեկ և սրտապախ կացուցանէր զնոսա. Սակայն յանձնապաստան յանդգնութիւն իւրեանց ոչ եթող զնոսա արժանապէս խորհել և հնարել փաստս զօրաւորս. վասն այնորիկ տագնապին անհնարին ՚ի տագնապս ոգւոյ.

ԳԻՂԵՐ ՅԻՍ՛ՆԵՐՈՐԴ ԵՕԹ՛ՆԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Եւ զինչ յետ մեռանելոյ Բենիամենի ՚ի քուն՝ եղէն խորհուրդք ՚ի մէջ եղբարցն. պատմեա ինձ և զայն՝ աղաչեմ, զոր յանցելումն գիշերի ոչ ժամանեցեր ՚ի ձեռն առնուլ, վասն տարաժամ քնոյն ՚ի վերայ հասանելոյ.

ՅՈՎՍԷՓ

Խորհուրդք բազմադիմի յուզեալ ծփէին զկնի առանձնանալոյ Բենիամենի՝ ՚ի մէջ եղբարց իմոց, ատեան ահեղ կազմելով ՚ի նոսա. յորում կայր արձանացեալ անաչառ դատաւոր գիտակցութիւն հոգւոյն, զարթուցեալ ՚ի բանից անտի եղբօրն իմոյ. Պատախաղք կային խայթք խղճին, յիշատակելով և ցուցանելով զյանցանսն իւրեանց. Պահիճք էին նոյն իսկ յանցանքն, որք որչափ հնանան, նոյնչափ առաւել դաժանատեսիլ կերպարանօք և ահարկութեամբ շուրջ պատեն զմարդկամբ. Վկայք էին պատգամքն՝ զոր յղեալ էին առ հայրն իմ յանդուգն ժպրհութեամբ. Պատակնիք՝ անքաւելի մեղքն, յորս ցարդ մնացեալ էին անապաշաւ և առանց ապաշխարութեան. Տեղի տանջանաց՝ հուր սրտին և բորբոքն երիկամանց. որք թէպէտ և մինչև ցայժմ անկեզ մնային, այլ սակաւ ինչ հողմն ՚ի ներքս ՚ի սիրտսն նոցին սողոսկեալ շընչեալ, իսկ և իսկ հրդեհեաց. Զոր օրինակ՝ եթէ կայծ ինչ անկեալ ՚ի ներքս շտեմարանի հատահեղոյս

փակելոյ յամենայն կուսէ, զի մի՛ օդ ՚ի նմա խաղայցէ, կայծն այն կայ անդ անշէջ, և ոչ վառ առնու. այլ եթէ ծերպս ինչ նմա բացցի, ընդ որ հողմն ՚ի ներքս շարժիցէ, անդէն և անդ կայծն այն գաղաղացեալ կատաղի և բորբոքեալ սաստիկս հրդեհի, մինչև յաճխուն դարձուցանել զամենայն՝ որ ՚ի շտեմարանին իցեն և զորս շուրջ զնովաւ. Ի սոյն տիպ նմանութեան՝ և ընդ սիրտս եղբարց իմոց օդախաղաց ներգործութիւն հրացայտ բանիցն Բենիամենի խրամս հատեալ, տոչորեալ կիզեաց զամենայն զներքինս նոցա, և զսիրտս նոցին վառեալ բորբոքեաց. Զմտաւ ածեն զյանցանս իւրեանց, և փութան զապաշաւանաց բուռն հարկանել, միայն թէ մարթասցեն զՅովսէփ գտանել. քանզի իւրաքանչիւր ոք կշռեալ ընդ միտսն զբանս Բենիամենի՝ յայլ և այլ խորհուրդս վարանին. որպէս ցուցանէ զայս ամենայն՝ միւս գրուածն Քենտասայ, զոր ահա ընթեռնում.

« Զառաջինն տիրեաց ՚ի նոսա լռութիւն հարուստ ժամս. ոչ ոք կարէր բանս յօդել կարգաւորեալ. այլ կիսահագագ և ընդհատեալ իմն էին բանք նոցա և անկցորդք յիմաստս. Երբեմն գոչէր ոմն ՚ի խորոց սրտէ. Իրաւ և ճշմարիտք են բանք նորա. Այլ ոմն. յոյժ իրաւացի, և գրեա թէ յաստուածուստ իմն խօսեցեալ. Միւս ոմն. աւա՜ղ, ո՞րպէս անկաք մերատին յանազատելի յայս յորձանս վտանգից. Իսկ միւս ոմն հարկանէր ձեռօք զկուրծս և գոչէր ուժգին. մեղա՜ք, յանդգնեցաք. մոռացաք զշահ անձանց մերոց. և ո՞ր յանդգնութիւն էր մեր բազմել ՚ի սեղան ընդ առն իշխանաւորի. զի՞արդ ոչ յիշեցաք զառաջին բանդարկութիւնն մեր. քանզի՝ նոյն իշխան է այս, որ հետաքրքիր բանիւք հարց և փորձ արարեալ մեզ, անզգուշաբար պատմեցաք նմա

լինել մեր երկոտասան եղբարք. Եւ ո՞ր հարկ բռնադատեաց ստիպեաց զմեզ մինչեւ զգազանակուր լինել եղբօր մերոյ, կամ թէ ասել՝ չէ 'ի միջի. և զի՞նչ անմտութիւն՝ ծանուցանել նմա և վասն Բենիամենի. Այլ միւս ոմն. չգիտեմ ո՞ր բուռն հարկ գրգիռ եղեւ մեզ գալ աստ առ 'ի պետս կերակրոյ. և այն՝ տասնեքին եղբարքս 'ի միասին. Ո՛վ երկիրդ Եգիպտոսի, ո՞ր զօրութիւն ձգողական 'ի քեզ տեսանի. զի՞արդ բուռն ուժգնութեամբ քարշեալ ձգեցեր զմեզ առ քեզ այս երկիցս անգամ. և միշտ վտանգէ 'ի վտանգ զմեզ արկեալ՝ յառաջս քեզ կացուցեր. Զարմանամ՝ հիացեալ, զի՞արդ և հայր մեր՝ որ լայնախորհուրդն է մտօք և յամենայնի մանրակրկիտ, ոչ ինչ երբեք խոյս և խափան եղեւ գալստեան մերոյ, այլ ինքն անձամբ ճեպէր զմեզ. Ընդէ՞ր ոչ հետեւեցաք և մեք օրինակին Աբիմելեքայ, որ զծառայս իւր յղեաց. և ահաւասիկ այս չորրորդ նուագ է, որք առանց ինչ արգելանաց բարձեալ զկերակուր ածեն առ տէր իւրեանց. Իսկ մեք թողեալ զամենայն զհօտս խաշանց մերոց 'ի ձեռս ծառայից և հովուաց, եկաք տասն եղբարք, և ըզԲենիամին արկաք 'ի մեծի վտանգի.

„Յարեաւ անդէն Ռուբէն և ասէ. Ունկն դի՛ք ինձ եղբա՛րք. բայց նախ տեսցուք եթէ 'ի քուն իցէ և ննջիցէ՞ Բենիամին. և կարգեսցուք զոմանս 'ի ըսպասաւորաց դիտել զնա և ազդել մեզ եթէ երբեք զարթիցէ 'ի քնոյն. քանզի կամիմ իսկ յայտնապէս յերեւան ածել զմեղս մեր, զոր գործեցաք ընդդէմ եղբօրն մերոյ Յովսեփայ. Ես առաջէն խօսեցայ ընդ ձեզ զնմանէ և աղաչեցի չմեղանչել նմա, և ոչ կամեցայք լսել ինձ. ահա արիւն նորա արդար պահանջի այսօր 'ի մէնջ. զայսմանէ և յառաջնում

կալանս մեր յիշեցի ձեզ. այլ դուք զանց արարիք քննել և խորհել, և ապաշաւ վասն այսորիկ յանձին բերել. Եւ զի՞նչ. զարմացման են իրքս, զի յորէ անտի և այսր՝ անցին բազում ամք, և ոչ այլ ուրեք տանջէ զմեզ խիղճ մեր, բայց միայն յԵգիպտոս, միայն առաջի իշխանիս այսորիկ.

„ՇՄԱՒՈՆ. Յոյժ արդար են բանքն Ռուբենի. քանզի յետ մեկնելոյ ձեր աստի, և բնակեցուցանելոյ զիս իշխանիս յայնմ պարտիզի, եկն ՚ի վերայ անձին իմոյ ծանրութիւն ինչ անտանելի և տրտմութիւն անփարատելի, զորոյ պատճառն զբազում աւուրս խոկալով իմ, գտի զմեղսն զոր մեղաք, նախանձու չարութեան վառեալ ընդդէմ Յովսեփայ եղբօր մերոյ. Այո՛ խոստովանիմ՝ և կարի իսկ քաջ առաջի ձեր, զոր օրինակ խոստովանեցայ առաջի Աստուծոյ. Բայց զի՞նչ. տոչորիմ հրով անծախելի ՚ի հոգի իմ, յորժամ զմտաւ ածեմ արդ. զի իբրև եկիք դուք մեղսակիցք իմ եղբարքդ, մոռացայ իսպառ. և ոչ յաւելի գալ զզղջմամբ իմով զառաջնով, և ցուցանել յիս զնոյն եռանդն ջերմ ոգւոյ. այլ կամ արդ ՚ի սովորական ամբարշտութեան իմում և յանզգամ միտս և անզեղջ. Քանզի՝ եթէ ոք ըզմեղս իւր գիտիցէ, և ոչ փութասցի սրբել զայն արտասուօք և զղջմամբ, չար եւս է քան զամենայն անօրէնս, և իբրև խոզ տղմասէր, որ ոչ սիրէ բնաւ թողուլ զմօրացեալ տիղմն գարշութեան, ուր կայ միշտ թաւալեալ.

„ՂԵՒԻ. Միայն զնախա՞նձն համարիք ՚ի մեղս. ո՞չ ապաքէն առաւելագոյն եւս մեղք են զոր գործեցաք, վաճառելով զնա իբրև զգերի, որ և չար քան զսպանումն է և զմահ. Քանզի զմահ՝ միանգամ եւեթ ընդունի ոք, և ազատի ՚ի թշուառելի

տարաբաղդութենէս․ իսկ գերութիւնն է մահ հանապազօրեայ և տանջանք չարաչար, զոր յականայս ունի նա կրել յանձին, ցորչափ շունչն 'ի մարմնի իւրում է․

„ՅՈՒԴԱՍ․ Իմ իսկ են մեծագոյն յանցանք․ զի ես ինքն առաջարկեցի վաճառել զնա, և դուք հաւան գըտայք ընդ այն։ Բայց ոչ գոհ եղեն միտք մեր մինչև ցաստ, այլ և դժնդակագոյնս յաւելաք 'ի մեղսն, համբաւ չար հասուցանելով զնմանէ առ հայր մեր, հանդերձ պատմուճանաւն իւրով․ քանզի՝ պարտ և արժան էր մեզ խորհել և քննել գէթ զերկոսին զայսոսիկ․ նախ՝ թէ ո՞յր էր պատմուճանն․ երկրորդ՝ թէ առ ո՞ յղէաք․ Զի թէ անծանօթ ինչ էին մեզ պատմուճան եղբօրն մերոյ, ընդէ՞ր առաքեցաք զայն առ հայր մեր․ վշտացուցանե՞լ ինչ զնա արդեօք, և խոցել զհայրական գութ նորին․

„ԻՍԱՔԱՐ․ Ընդէ՞ր ոչ յիշատակեմք զանօրէն ընչաքաղցութիւն մեր, որով զարծաթն՝ զոր առաք 'ի գին եղբօր մերոյ, ծախեցաք գնել ուլս, և յարիւն նորին շաղախել զծաղկեայ պատմուճան Յովսեփայ, ագահելով իմն 'ի մերն․ Այլ զի՝ և յետ հաճելոյ զագահութեան կիրսն մեր, ոչ ևս արժանի վարկաք կրել զարծաթն 'ի մեզ, զի գին արեան եղբօր մերոյ էր․ վասն որոյ արհամարհելով իմն զայն՝ փոխանակեցաք ընդ ուլուն, մանաւանդ եթէ ընդ անարգ արեան կենդանւոյ, առ 'ի վշտագին ևս կացուցանել զյիշատակ նորին, և յաւիտենական խայթ խղճի մերոյ․

„ԶԱԲՈՒՂՈՆ․ Զարմանամ և յապշութիւն կրթիմ, զիա՞րդ ոչ յուշ լինին ձեզ ուրացումն եղբայրութեան նորա․ քանզի՝ և որպիսի՞ պատգամ յղեցաք առ հայր մեր․ ո՞չ ապաքէն ժխտելով զնա, եթէ՝ ծանիր որդւո՞յ քո իցէ պատմուճանդ․ Ո՞վ անհնարին ուրացութեանս, և անողորմ բարբառոյս․ որով ոչ

միայն զաւելորդութիւնն, զնախանձն և զոխերիմ թշնամութիւն և զայլ ամենայն անարգ կիրսն մեր յայտնեցաք ընդդէմ Յովսեփայ, այլ և յուրաստ եղաք զնա իսպառ յեղբայրութենէ մերմէ. ընդ նմին ուրացաք և զհայրութիւն ծնողին մերոյ. զի հայր անուանելով զնա Յովսեփայ մերժելոյն յեղբայրութենէ մերմէ, հարկաւ զհետ գայ և ուրացումն հօր.

„ԴԱՆ. Ասա՛ց. զիա՛րդ ոչ խոստովանիմք անկեղծաբար և զստութիւն մեր, որով զինեալ միաբան ամենայն եղբարքս, իբր սայրասուր սրով վէրս եդաք սրտի հօր մերոյ, կսկիծ և ցաւ անբուժելի պատճառելով նմին. որոյ 'ի սուգ և յողբս հատեալ անմխիթար, և դժուարացեալ 'ի հաւատս զիջանել դառնակուր լինելոյ սիրեցելոյն իւրոյ, քանզի և այնպիսի իսկ հանդիպի մարդոյ՝ ոչ ախորժել հաւատալ ընդ մահ կարեւոր ուրուք անձին, վասն որոյ հարցանէր մեզ մի զմեզ, կամելով զճշմարիտն իմանալ զորդւոյ իւրոյ ցանկալւոյ.

„ՆԵՓԹԱՂԻՄ. Ո՛չ թէ ստութեամբն եւեթ բաւականացեալ՝ ոչ անդր եւս անցանէաք ժպրհութեամբ և յանդգնութեամբ բանից մերոց 'ի խոր խոցել զնա, ասելով. միթէ գիտէ՞ք եթէ Յովսեփ այդ եկեալ իցէ յայնոսիկ կողմանս. Ո՛հ, և զի՞նչ քան զայս առաւել անիրաւութիւն կայցէ. ո՞չ նոյն անպատկառ պատասխանին իցէ և այս Կայենի՝ որ առնէր Արարչին յասել իւր. միթէ պահապա՞ն իցեմ եղբօր իմում. Իսկ թէ ժխտեցաք լի՛նչ զգալուստ նորա առ մեզ, զիա՞րդ և զխիղճն մեր սրբեսցուք. զիա՞րդ հանդարտեցուսցուք զխայթ նորին որով խոցիմքս. զի 'ի գալ մերձենալ նորա 'ի տաղաւար մեր, գազանաբար յարձակեցաք 'ի վերայ նորա. ոմն զպատմուճանն հանէր, միւսն զբերանն ունէր. այլ ոմն զձեռսն կապէր, և

այլ միւս ոմն երազատես կոչելով զմատաղ սիրտ նորա վիրաւորէր ։ Ոմն ուրախ սրտիւ և խնծղագին դիմօք իջուցանէր զնա 'ի գուբն անդրդի ։ Իսկ յետ այսքա‐նեաց անգթութեանց ոչ յիշէք և զայն ։ զի իբրու յաղթանակ ինչ կանգնեալ մերոցս քաջագործու‐թեանց և արիական յաղթութեանց , նստաք անդէն ուտել զհաց , զոր նա ինքն էած առ մեզ ։

,, ԴԱԴ ։ Աղաչեմ 'ի միտ ածել եթէ որպիսի՞ չա‐րիս յաւելաք 'ի գազանային դաժանութիւնն մեր , լնուլ կամելով զչափ մեղաց մերոց ։ Քանզի՝ ո՞ր վասն այնչափ պարգևատրութիւնք և արծաթք , զորս հեղաք 'ի ծոց սպասաւորաց և ծառայից մերոց , որպէս զի մի զգայցանս մեր թափիցեն յունկն հօր մերոյ ։ որով այն‐չափ խեռացան և երկարեցան լեզուք նոցա 'ի վերայ մեր , մինչև ուր ուրեմն ամբքանօք և քաղցրութեամբ իշխել յետ այնորիկ 'ի վերայ նոցա ։ Իսկ ուստի՞ հա‐տուցան նոցա այնչափ պարգևքն արծաթի ։ ոչ ապա‐քէն զառ 'ի հաւէն մերմէ Իսահակայ պարգևեալ զոչխարսն և զխաշինսն յանուն Յովսեփայ , վաճառե‐ցաք և 'ի գնոյ նոցին հատուցաք զանիրաւ ընծայսն ։ Եթէ մեղք են և գողութիւն զայլոց իրս բառնալ ծածկապէս , ապա չար ևս քան զգողութիւն է զոր գործեցաքս և անիրաւութիւն դժոխային ։

,, ԱՍԵՐ ։ Անմեղութիւն եղբօր մերոյ քան զլուսա‐փայլ ճառագայթս արեւու յայտնի իսկ էր ։ և որ‐պիսի՞ յանցանօք դատապարտեցաք զնա մեք ։ ոչ այլով իւիք , բայց միայն յաղագս երազոցն՝ զոր ետես ։ և թողեալ զգեղեցիկ և զիմաստալի անուն նորա՝ որ ցու‐ցանէր զբարձումն նախատանաց , զոր եբարձ Աստուած յերեսաց մօր նորա Ռաքելի , ստէպ ստէպ վշտացու‐ցանէաք զսիրտ նորին՝ կոչելով զնա երազատես ։ Ո՛վ յիմարութեանս ։ զանմտութեան արբեալ զբաժակ

ստուգապէս մոլորեցաք. Եւ զի՞նչ. Երազք էին պատմութիւնք նորա, և ոչ խկութիւն, զոր թողեալ մեր ՚ի բաց, զհետ ստուերին ընթացաք հանգոյն առակաւոր շան. Եւ ոչ այսչափ միայն. այլ առաւել քան զայն չարութեամբ մոխացաք, մինչեւ զյղացեալ անիրաւութիւնն մեր ծնաք՝ անողորմաբար մատուցեալ զնմանէ առ ՚ի մահ. Յիշեցէք, աղաչեմ, զիմաստութիւն և զանյիշաչարութիւն Յովսեփայ, և որ մեծն է՝ զհամբերութիւն նորին. զի թէ ծանուցեալ էր նորա Իսմայելացւոց՝ լինել որդի մեծահամբաւ և բարեպաշտօն առն Աստուծոյ Յակոբայ, և եղբայր մեր, որչափ ամօթ և նախատինք ունէին զմեզ յամենայն ժամ. Եւ գուցէ խնայեալ նոցա զայն, փութային հասուցանել զՅովսէփ ՚ի ծոց հօր մերոյ, և հարիւրապատիկ ընդունէին վարձս ՚ի նմանէ. Եւ որպիսի՞ կերպարանօք մնայր մեզ յետ այնորիկ երեւել առաջի նորա. և զո՞ր օրհնութիւն ընդունէաք անտի. ո՞ր ժառանգութեան աւէն ունէաք առ ՚ի նմանէ. անէծքն Քանանու գտանէին զմեզ. նախատինք և ամօթ շուրջ պաշարէին զանձինս մեր. Ահա այսչափ մեղօք լցեալ կամք եղբարք, և զի՞նչ արասցուք առ ՚ի բժշկել.

„ՇՄԱՒՈՆ. Զի՞նչ մեզ բժշկութիւն և փրկութիւն յախտից մեղաց, մինչեւ արժանասցուք տեսանել զեղբայրն մեր զՅովսէփ, և խնդրեսցուք ՚ի նմանէ ներել անզգամութեանս և բազմադիմի անօրէնութեանս, զոր կամաւ գործեցաք, և ապաշաւ վասն այնր յանձինս բերցուք.

„ՅՈՒԴԱՅ. Զարմանամ արդարեւ ընդ բանս քո. զի թէ ունէիր ՚ի քեզ զայն ապաշաւ գովելի, և հաստատեալ էին միտք քո ՚ի ձեռն զղջման և ապաշխարութեան գտանել զՅովսէփ, ընդէ՞ր ապա ոչ ՚ի խոյզ և ՚ի խնդիր նորին վաստակեցեր յայս հնգեակ ամիս՝

զորս կացեր առ, կալով ընդ պաշտպանութեամբ իշխանիս, յորում պարծանօք իմն խօսիս փառաւորագոյն ևս լինել քան զԱբիմելէք արքայն. Արդ պարտ էր քեզ հետախոյզ քննութեամբ 'ի հարց և 'ի փորձ ելանել նմին, և գիտել եթէ կենդանի՞ իցէ տակաւին, յորմէ և մեզ մարթ էր գտանել զթողութիւն և ազատիլ.... Ընդ այս վերջին բան նորա ձայն ետուն ապաստաւորքն եթէ զարթեաւ Բենիամին. լռեցին ամենեքին, և ոչ ևս կարացին շարունակել զխորհուրդս իւրեանց. Եւ որովհետև գիշերն ընդ միջէր, և ծանրացեալ էին աչք նոցա 'ի քնոյ և առաւել ևս թախիծ տրտմութեանցն վաստակաբեկ լեալ, անկան անդէն 'ի քուն. և Բենիամին ևս դարձաւ կրկին 'ի հանգիստ իւր ».

Տեսանեմ ո՛ կենակից իմ Մանէթ, զիա՞րդ յանկարծ կենդանացաւ խիղճ մտաց նոցին, որ կայր մեռեալ յանդգնութեան և 'ի յամառութեան, մինչև քննել զամենայն ազգի ազգի զմեղս իւրեանց՝ զոր մեղան առ հայրն իմ և առ իս. յորմէ մակաբերեմ և իբրև յայտնի իսկ տեսանեմ զծագումն շնորհացն Աստուծոյ 'ի սիրտս նոցա. Այս ժամ է պատառել զվարագոյրն յաչաց նոցին և ծանօթս տալ զանձնէ իմմէ, որպէս զի եղիցի զղջումն նոցա կատարեալ, և ծանիցեն զմեծվայելչութիւն և զողորմութիւն Տեառն. մանաւանդ հայր իմ ցնծասցէ հոգւով և մարմնով, և օրհնեսցէ զմեզ զամենեսին.

ԳԻՐՔ ՅԻՍՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Ուրդ եկ փութա սիրելի ամուսինդ իմ, զի ըղձակաթ եմ 'ի լուր պատմութեանդ. ասա ինձ զիարդ ծանուցեր զքեզ եղբարց քոց.

ՅՈՎՍԷՓ

Յարուցեալ ընդ առաւօտն կանխեցի յատեան. անդ ներկայացան առաջի իմ եղբարք իմ. հետամուտ զօրքն հանդերձ հազարապետաւն բերին 'ի մէջ զարծաթի սկիհն իմ, ցուցանելով զԲենիամին՝ առ որում գտեալ էին զայն, Աղատմեցին և զվճիռ դաշանցն՝ զոր համահաւանութեամբ երկոցունց կողմանցն կընքեալ էին, մտանել 'ի ծառայութիւն յաւիտենական այնմ՝ առ որում և գտանիցի բաժակն. Թէպէտ և եղբարք իմ քան զայն խիստ և անխոհեմութեամբ վճռեալ էին 'ի մահ դատել այնմ որ զգողօնն ունիցի, իսկ այլոց կալ յանվախճան ստրկութեան.

Իբրեւ կազմեցաւ ատեանն, հրաման ետու Ղենտայ 'ի գիր անցուցանել զամենայն հարցմունս իմ և զպատասխանիսն նոցա. քանզի լցեալ էր սիրտ իմ 'ի գորովոյ, Ճմլէին և գալարէին աղիք իմ, վասն որոյ և ոչ կարէի ունել 'ի մտի զմասնաւոր պարագայս դատին. Եւ ահա գրութիւն նորա՝ զոր ընթեռնում 'ի լսելիս քո՝ նոյն իսկ 'ի դիմաց իմոց.

“Ո՞չ ինչ են իրքդ զոր արարէք. և ո՞ր ապերախտութիւն՝ յետ այսչափ շնորհաց և երախտեաց իմոց,

գողանալ զսկիհն իմ՝ որով հմայելով հմայէի „ . Յա-ռաջ մատեաւ Յուդայ , անկաւ ՚ի վերայ երեսաց իւ-րոց , և խնդրեաց համարձակութիւն ՚ի խօսել . զոր ըն-կալեալ՝ եբաց անդէն զբերան իւր լալագին դիմօք և ասէ . “Զի՞ իւիք տացուք պատասխանի տեառնդ մե-րոյ . կամ որո՞վ իրաւամբ փութասցուք ցուցանել զան-մեղութիւն մեր . քանզի և ոչ մի ինչ ապացոյց կարեմք առաջի արկանել վեհափառութեան ձերում՝ առ ՚ի չքմեղս լինել յանցանաց մերոց . ամենակարողն Աս-տուած մատնեաց զմեզ ՚ի ձեռս ձեր վասն առաջին յանցանաց մերոց . ահա կամք ամենեքեանքս իբրև ըս-տրուկ անձնանուէր առաջի ձեր „ . Պատասխանի ետու նոցա . “Քա՛ւ լիցի ինձ առնել զբանդ . այլ առ ո-րում գտաւ սկիհն իմ , նա միայն եղիցի ինձ ծառայ . և դուք ելէք ողջամբ առ հայր ձեր „ .

Ընդ այս բան իմ՝ կարեվէր հարան ամենեքին ՚ի սիրտ , մանաւանդ Յուդայ . որոյ գոյն երեսացն ան-դէն հատաւ . աչք նորա դարձան ՚ի բոցավառ հրատս կայծակնացայտ . լեզուն մնաց ընդարմացեալ ՚ի բերան նորա , և սկսաւ բեկբեկելով յօդել զբանս իւր . ոտքն դողդոջային . Այլ քանզի եռայր սիրտ իւր ՚ի փորի իւրում , և ոչ կարէր հանդուրժել աղետաւոր դէ-պուածոյն , յառաջ մատեաւ կրկին , և սկսաւ գոչել ՚ի ձայն խանդաղատանաց . “Յիս տէր իմ . աղաչեմ լուր ծառայի քում . մի՛ շարժեսցի սրտմտութիւն քո ՚ի վե-րայ ծառայի քո . քանզի արիւն իմ խռովէ զիս ՚ի ներքուստ , և քաղէն ոգիք իմ . այլ ՚ի վերայ այսր ա-մենայնի՝ փութամ պատմել առաջի տեառն իմոյ ըղ-ճշմարիտն . Ո՛ի ըստ որում մեծութեան քում չիք զուգական , նոյն և կարեկից և բնաբոյս ողորմածու-թեան քում չիք զուգահաւասար . Դու ես յետ փա-րաւոնի՝ տէր ընդարձակ մեծի թագաւորութեանս .

և բիւրք բիւրուց ծառայեն քեզ, և չես ինչ կարօտ երբեք զմեզ սոսկ փանաքի ծառայից. Եւ ոչ այս չափ միայն, այլ և բազմութիւն հեռաւոր աշխարհաց և թագաւորաց յօժարափոյթ են արկանել զանձինս ընդ լծով քաղցր բազկի քո, որ լի է ամենայն բարութեամբք, և իշխէ ամենեցուն բարերար գթով հայրութեան, նըլով զամենայն դարմանս պիտոյից նոցա. Չիք 'ի վերայ ամենայն երկրի՝ որ նմանիցի քեզ. և խոստովանիմ շնորհաւութեամբ՝ զի այն ամենակարող Արարչին երկնի և երկրի յարոյց զքեզ փրկիչ աշխարհի. և հաստատեաց զքեզ 'ի ծայր գաւազանիդ, լինել օրինակ ամենայն պանծալի առաքինութեանց. Արդ՝ դու տէր խոնարհեալ 'ի բարձրագահ աթոռոյդ՝ հարցեր զծառայս քո, և ասացեր եթէ՝ կայցէ՞ ձեր հայր և եղբայր. և մեք ոչ կամեցաք ծածկել ինչ 'ի քէն, այլ հաւատարմութեամբ ուղղորդն խոստովանեցաք և ասեմք. կայ մեր հայր ծերացեալ և եղբայր մի կրտսեր, որդի ծերութեան նորա, և եղբայր նորին համամայր մեռաւ. Եւ հրամայեցեր ցծառայս քո և ասացեր, եթէ ոչ իջանիցէ եղբայր ձեր կրտսեր ընդ ձեզ, մի՛ յաւելուցուք տեսանել զերեսս իմ. Վասն եղեւ մեզ յոյժ հրամանդ այդ, զոր երբեւ պատմեցաք հօր մերում, դառնութեամբ սրտի սկսաւ և նա լալ և ասել. գիտէք և դուք զի երկուս եւեթ ծնաւ ինձ կին իմ. զմին կորուսի տարաժամ, և ասացէք՝ եթէ գազան չար եկեր զնա. արդ եթէ զսա եւս բառնայցէք յերեսաց իմոց, և պատահիցէ սմա հիւանդութիւն 'ի ճանապարհի, իջուցանիցէք զծերութիւն իմ դառնութեամբ հանդերձ 'ի դժոխս. Արդ՝ տէր իմ 'ի միտ առ զծանրութիւն դժբաղդութեանս և մեծի աղէտիցս. քանզի՝ 'ի միոյ կողմանէ սովն չարատանջ սպառնայր մեզ ահագինս, և ստիպէր իջանել կրկին

յԵգիպտոս, խնդրել կերակուր. ՚ի միւս կողմանէ՝ չէր մեզ հնար ներկայանալ առաջի տեառնդ մերոյ առանց այդր եղբօր մերոյ կրտսերոյ. այլ և տրտմութիւն հօր մերոյ երիցագոյն վիշտ էր մեզ. Արդ՝ յայսոսիկ տարակուսանս ըմբռնեալ մեր և շուարեալ, ոչ գիտէաք զի՞նչ շաւիղ ունել մեզ, և զիա՞րդ հնարս գտանել մեծի նեղութեանս. Յուսկ ուրեմն մատեայ առ հայր իմ, և խնդրեցի զմանուկդ, և խոստացայ ընդ պարտիք դատապարտութեան և ասեմ. եթէ ոչ դարձուցից զդա և կացուցից առաջի քո, յանցաւոր եղէց զամենայն աւուրս կենաց իմոց. Իսկ արդ՝ ծառայ քո փոխանակ մանկանդ կացից ստրուկ տեառն իմոյ, և պատանեակդ ելցէ ընդ եղբարսն առ հայր իւր. Քանզի՝ զիա՞րդ մարթ է ինձ երեւել առաջի հօր իմոյ. և ո՞րպէս վստահացայց տեսանել զերեսս նորա՝ եթէ պատանեակդ չիցէ ընդ մեզ. Գիտես քաջ տէր իմ, զգութ և զգորով ծնողական, զիա՞րդ գորովի ընդ ջերմ աղխս իւր. քանզի՝ է երբէք և քո որդիս. ոչ ինչ զանխուլ են ՚ի քէն հայրական սիրոյն սաստկութի. Վասն բանիցս՝ վկայ են երկինք և երկիր, եթէ գուցէ ստութիւն ՚ի բանս իմ. զի աղէխորով սիրտ իմ՝ ոչ երբէք գիտէ հեռանալ մազ մի ՚ի Ճշմարտութենէ. ահա կեանք մեր ամենեցունցս՝ ՚ի ձեռին քո է. և ամենեքին մեք ծառայք եմք տէրութեան քում. միայն աղաչեմ զերեսս քո խոնարհ երկրպագութեամբ ՚ի սէր Աստուծոյն զոր պաշտես, չտալ ինձ տեսանել զչարիսն՝ որք գտանիցեն զհայր իմ „.

Մինչեւ ցայս վայր հազիւ ժուժեալ սիրտ իմ, անդէն շարժեցաւ հեղձամղձուկ լեալ. և որպէս լեառն Էտնա՝ որ ՚ի սաստկութենէ անտի մղման համբարեալ հրատոչոր դիւրավառ մթերիցն ձայթիւնս գործեալ յեղակարծումն, ՚ի դուրս զգայսէ ընդ

լայնածիր ապառուածս գագաթանն հուր և բոց ծա֊ւալական՝ խառն ընդ աղտաղտին հեղանիւթս ընդ լայ֊նութիւն դաշտաց և ձորոց. այսպէս և սիրտ իմ՝ վա֊ռեալ բոցակէզ բորբոքմամբ ՚ի բանից անտի Յու֊դայի, և ՚ի համակրական սիրելութենէ եղբայրութե֊, հորդան տուեալ անդէն յորդ արտասուաց յերկոցունց աչաց իմոց, իբր առուս ՚ի կրկին աղբերականց հոսեալ ծորէին ընդ ծնօտս իմ. և հուր սիրոյ զամենայն անձն իմ ջեռուցեալ՝ յայլ իմն էութիւն փոխարկեցին զիս. քաղեցան ոգիք իմ. գալարեցան երիկամունք իմ. խը֊ռովեցաւ սիրտ իմ. հատաւ համբերութիւն իմ. և բոլորովին այլ ընդ այլոյ, հրաման ետու ՚ի դուրս ե֊լանել ամենայն Եգիպտացւոց. Լուծաւ անդէն ա֊տեանն. ՚ի բաց կացին սպասաւորք. փակեցաւ դուռն. Մնացին միայն եղբարք իմ. Յայնժամ համակ յարտա֊սուս հատեալ իմ՝ աղաղակեցի առ նոսա. “Ես եմ Յովսէփ եղբայր ձեր. ես եմ եղբայր ձեր Յովսէփ. արդարեւ կենդանի՞ է հայր իմ. մատերուք առ իս, և համբուրեցից զձեզ. մի՛ տրտմիք, մի՛ երկնչիք, և մի՛ ինչ խիստ թուեսցի ձեզ, զի վաճառեցիք զիս այսր. Ոչ ըստ կամաց ձերոց ինչ եղեւ այս, այլ Աստուած ՚ի փրկութիւն առաքեաց զիս առաջի ձեր. և արար զիս հայր Փարաւոնի, և տէր ամենայն տան նորա, և իշխան համօրէն երկրիս Եգիպտացւոց„.

Ընդ ասելն իմ զայս, յարեաւ Բենիամին և մօ֊տագոյնս եկաց առ իս՝ լսել զի՛նչ զարմանք իցեն այս. Եւ ՚ի մերձենալ նորա՝ անկայ անդէն զպարանոցաւն, եդի զձեռակատ նորին ջերմ համբուրիւք և ասեմ. “Եղ֊բայր իմ Բենիամին, Բենիամին եղբայր իմ. դու իմ եղբայր համամայր. դու իմ եղբայր սիրելի. . . . Գոհանամ զքէն Տէր, զի պահեցեր ցարդ զեղբայրն իմ կենդանի, զոր ես ՚ի ձիւմ և ՚ի ծաղկի հասակի

Թողի. արդ տեսանեմ զնա պատանի կայտառ . . . . Նա՛ ինձ եղբայր իմ հարազատ, կենդանի՞ է հայր իմ. կենդանի է հայրն մեր, որոյ օրհնութեանն արգասիք պահեաց զիս կենդանի և զերծ յամենայն փորձանաց„.

Ի գործական բանից իմոց և 'ի սերտ գրկախառնութենէ իմմէ, իսկոյն վառեցաւ բոց սիրոյ սրտին Բենիամենի. ջերաւ ոգի նորա. գիրկս արկ զինեւ, և ասէ խանդակաթ ձայնիւ. "Ո՜հ եղբայր իմ Յովսէփ. պարգևէ ողորմութեանն Աստուծոյ. արդ եհան Աստուած զնախատինս իմ յինէն. վասն որոյ գոհութիւն 'ի բարձունս վերառաքեմ առ նա, որոյ անչափ են խնամք գթութեան. Եւ զի՞նչ այս նորօրինակ փոփոխումն. և ո՞ հեղինակ սքանչելեացս, եթէ ոչ մատն Աստուծոյ կենդանւոյ. զի նա միայն կարող է զայսպիսիս գործել 'ի փրկութիւն իւրոց ծառայից. Չեւ ևս են տակաւին երկու վայրկեանք, կայի մահապարտ, 'ի յուսահատութիւն կործանեալ. դող և ապիրատ համարեալ, և անկեալ 'ի յետին տագնապ. ամօթ զանձն իմ ունէր. Արտասուք եղբարց իմոց և աղեխորով կսկիծք սրտից նոցին գուշակէին զմօտալուտ մահն իմ. և մնայի ժամ առ ժամ տեսանել երբ երեւիցի ինձ շողումն արիւնախանձ սրոյն. երբ հանդիպիցի ինձ ձեռըն դաժանաբարոյ դահճաց տալ վախճան կենաց իմոց, և խաւարել զարև պատանեկութեան իմոյ՝ դեռ այն ինչ ծագեալ. Ոչ գոյր ինձ հնար փրկութեան. ատեանն արդարակորով ոչ ինչ վրիպէր տալ զվճիռ մահուան իմոյ ըստ դաւանց եղբարց իմոց. Գողօնն՝ որ առաջի կայր, կարծեալ ունէր զամենեցուն մեր զլեզուս. ապշութիւն և խռովք սրտի եղբարց իմոց տագնապեալ զմիտս նոցա ոչ թողոյր փաստս բանաւորս 'ի մէջ ածել առ 'ի անմեղադիր առնել զանձինս. Իսկ արդ զի՞նչ. որպիսի՞ փոփոխումն անկարծելի.

բա՛րբէ բերկրութեանս. փարեալ կամ գիրկ ընդ խա-ւըն զպարանոցաւ հարազատին իմոյ Յովսեփայ. համ-բոյրք զհամբոյրս փոխանակեն 'ի սիրանից շրթունս մի-մեանց. ունկն իմ լսէ զքաղցրիկ ձայն նորա, հեշտա-լուր քան զաւաչ սոխակին. աչք իմ տեսանեն զչքնա-ղատիպ պատկեր դիմացն, և զփառաւահեղ իշխանութիւն. Ո՜հ, ո՛ տայր ինձ թեւս երկնասլաց և արագաթռիչ քան զարծուին, յարձակիլ, խոյանալ, հասանել առ ծնողն իմ, և տալ նմա աւետիս բերկրական. տանել նմա զլոյց զկենաց որդւոյ իւրոյ սիրելւոյ և իմ հա-րազատի. Ասացից նմա՝ եթէ կենդանի է որդի քո և փոխարքայ Եգիպտոսի. Այլ զի՞նչ արդեօք, աւան-ցանեմ ինչ. գուցէ երեւակայութիւն իմ պատրէ՞ զիս. կամ երազք և ցնորք գիշերայինք պաշարեալ ունին, առ 'ի ձգել զիս 'ի վերջին տագնապ. Ո՛ն, 'ի բաց տար. զիա՞րդ հնարաւոր է երեւակայութեան ածել զմարդ յայն աստիճան բերկրութեան, որ գեր 'ի վերոյ է քան զմիտս և խորհուրդս մարդկան. Գիտեմ քաջ, զի ոչ երեւակայութիւն և ոչ իսկ երազք զայսպիսիս ինչ գիտեն պատկերել աչաց մարդոյ. Զիա՞րդ պշու-ցեալ կան եղբարք իմ ընդ երեսս նորա, ակնկառոյց և յապուշ կրթեալ. և ո՞րքան առաւել ուրախութիւն է սրտի եղբօր իմոյ Յովսեփայ, որ զմէն մի կոչեալ առ ինքն՝ համբուրէ զնոսա, անկանի զպարանոցաւ նոցին. և փոխանակ մատնութեան եղբարցն՝ բարիս խոստանայ, ազնուական ներողութիւն՝ փոխանակ արդար վրէժխնդրութեան.

Հա՛նյա զարթիք և դուք ո՛ եղբարք իմ, սթափե-ցարուք յանհնարին թմբրութենէդ. զի՞ կայք պշու-ցեալ. Է՞ր ոչ շարժին լեզուք ձեր. գիտեմ զձեզ զօդ-կենդանութեան հնչել, բայց անզգայացեալ գլխովին՝ զապշութիւն մնացդ յայտ առնէք. մինդ յառեալ կայ

յերեսս Յովսեփայ. մինչ բերանաբաց՝ 'ի հիացումն կայ զարմացեալ. այլ ոմն ակնկոր յերկիր պշնու ամօթապարտ պակուցեալ. և երեւի ինձ եթէ սառնացեալ իցէ ջերմութիւն արեան յերակս ձեր. Քանզի գոյն երեսաց ձերոց մեռելատիպ, և թնդումն սրտիցդ յայտ յանդիման ցուցանեն զերկիւղն ձեր ահագին. Այլ մի դուք խպառ լքանիջիք, և մնոտի կարծիք զձեզ պաշարեալ ունիցին. արիք, ժրացարուք, եթէ յանցանք ձեր չնէրէ ձեզ անկանել զպարանոցաւ եղբօրն ձերոյ, գէթ յոտս նորին անկերուք, և լացէք զմեղս ձեր. զի ահա վերացաւ արդ առագաստն. յայտնեցան գաղտնիք. մերկացան ամենայն քողարկութիւնք. այլ 'ի վերայ այսր ամի՝ տեսէք և զարմացարուք ընդ անյիշաչարութիւն եղբօր մերոյ. քաղցր է նա, ներող և երկայնամիտ. Աստահ լերուք ընդ մարդասիրութիւն նորին. զի թէ կամէր ինչ, ամօթապարտ կացուցանէր զձեզ և յանարգութիւնս վատթարէր. քանզի և կարող իսկ է. այլ չկամի ինչ և չախորժէ չար փոխանակ չարի հատուցանել. բարիս խնդրէ ատելեաց իւրոց. և այնպէս ազնուական ինձ վրէժխնդրութեամբ տեղի տայ ամենայն չարեաց հատուցման. Լուարուք զինչ ասէ նա. Ոչ եթէ դուք առաքեցիք զիս յԵգիպտոս վաճառելով Իսմայելացւոց, այլ Աստուած 'ի փրկութիւն առաջնորդեաց զիս ձեզ. քանզի՝ այլ եւս հինգ ամ տիրեսցէ, ասէ՝ սովն ընդ ամենայն երկիրս. Արի՛ Ռուբէն. յառաջ մատիր Շմաւոն. զօրացարուք, արիացարուք դուք ամենեքեան. մերձեցարուք առ եղբայրն մեր Յովսէփ. զի ահա կայ և պատրաստ է գիրկս արկանել ձեզ, համբուրել զձեզ. Աչք ձեր դեռ այն ինչ սկսանին ճանաչել զնա. բայց նա յառաջնում նուագի անդ ծանեաւ զձեզ, և գալարէին միշտ աղիքն 'ի վերայ ձեր,

յայտնել ձեզ զանբիծ և զհարազատ սէր իւր. Ո՜վ երջանիկ վայրկենիս. քանի՜ բարեբաստիկ ուրախութեամբ լնուս զսիրտ մեր. զի յետ ամաց քսան և երից՝ զմեռեալ եղբայրն մեր գտաք կենդանի. զոր համարեաքն գազանակուր լեալ, տեսանեմք կերակրիչ ամենայն երկրիս. չէր 'ի միջի երբեմն, և այժմ կայ 'ի միջի մերում՝ բազմեալ ընդ եղբարս „.

Ընդ այս խրախոյս քաջալերութեան Բենիամենի զօրացան եղբարքն իմ, յառաջ մատեան, կամէին համբուրել զոտս իմ. այլ ես ոչ թողի զնոսա. փարեցայ արտասուագին զպարանոցաւ նոցին. Ընդ ոչ լսելի լինէին ձայնք, զի ոչ կարէին լեզուք մեր յօդել բանս. այլ միայն կաթիլք քաղցր արտասուաց ծորէին յաչաց մերոց. Հուսկ ուրեմն արձակեալ կապ լեզուի մերոյ, սկսաք բարձր բարբառով՝ գոռովալիր աղաղակաւ ձայն բառնալ, գրկել զմիմեանս, և համբոյր տալ միմեանց. մինչեւ լուեալ որք արտաքոյ կային, և տեսեալ զգորովաշարժ տեսարանն եղբայրական սիրոյ, փութացան աւետիս տալ Փարաւոնի, և ծանուցանել նմա զգալուստ եղբարց իմոց և զկենդանութիւն հօր իմոյ. Եւ որովհետև աւուրք խրախճանաց են վասն տարեդարձի ծննդեանն Փարաւոնի, և մնան տակաւին տասն աւուրք 'ի լրումն հանդիսին, հրամայեաց արքայն այլ ևս եօթն աւուրս յաւելուլ 'ի նոյն՝ վասն գալստեան եղբարց իմոց. Նաեւ ինքն իսկ ձեռամբ գրեաց առ իս՝ ցուցանելով ինձ զուրախութիւնն, և պատուէր զիս փութով տալ ածել այսր զհայր իմ. որում պարգևեաց և զարգաւանդահող զերկիրն Գեսեմ. Վասն որոյ առաքեցաք յարքունուստ զամենայն հարկաւորսն, հանդերձ արքունի սպասաւորօք մերովք. պատուիրելով և եղբարց իմոց մի ինչ զայրանալ զճանապարհայն, այլ հաւատարիմ կալ 'ի սէր եղբայրու-

թեան, և փութալ ածել զհայրն իմ ամենայն պատրաստութեամբ աղխիցն և ստացուածոց.

Ահա այսպէս ծանօթս եսու եղբարց իմոց, ո՛ սիրելի կենակից իմ Ասանեթ. Հայեա՛ց արդ աւադ աչօք մտաց քոց յաստուածային անբաւ գթութիւնն. զիա՛րդ ընդ այսչափ ժամանակս ծածկեալ մնաց այս գործ, որ մի միայն նախախնամութեանն Աստուծոյ է, ցուցանել յապագայս խորհուրդս իւր անքննին զօրութեան իւրում. Բայց մի՛ ինչ թուիցի քեզ եթէ եղբարք իմ գործակիցք գտան աստուածային անհաս անօրէնութեանն. քա՛ւ լիցի. զի նոքա 'ի չար նախանձուէ իւրեանց շարժեալ բերան յայն գործ, և անգիտութեամբ արարին. Վասն որոյ և 'ի սմին աւուր՝ ապշութեամբ զարմացեալ կային, և ակն ունէին ընդունել պատիժս ըստ արժանաւորութեան յանցանաց իւրեանց. Այլ ես ոչ այնպիսի ինչ վարեցայ ընդ նոսա իբրու դատաւոր անաչառ. ներեցի ամենայն յանցանացն և թաղեցի 'ի խորս մոռացութեան. Իսկ դու քաջ միտ դիր և զարմացիր ընդ անվրէպ կատարումն երազոց իմոց, զոր եցոյց ինձ Աստուած. Եւ ակն ունիմ մեծաւ փափաքանօք, զի և հայր իմ ընդ փոյթ եկեսցէ յերկիրս յայս, և տեսցէ զիշխանութիւն իմ.

Արդ՝ զայսչափ գերագոյն շնորհս և անհամեմատ բարիսն ընկալեալ 'ի Տեառնէ, ժամ է այժմ կրկին գոհութեամբ և շնորհակալութեամբ կալ յաղօթս առ նա, զի անպակաս արասցէ 'ի մէնջ զխնամս իւր.

ԳԻՐՔ ՅԻՍՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Ընդէ՞ր այսչափ փութով արձակեցեր զեղբարս քո 'ի հայրենիսն, և ոչ պահեցեր գոնէ աւուրս ինչ առ քեզ, ունել յագուրդ անձուկ կարօտի նոցա․

ՅՈՎՍԷՓ

Այո՛, պարտ և արժան էր ինձ պահել զնոսա առ մեզ, և կազմել խնճոյս խրախճանութեան և հանդէս բերկրութեան յօրինել․ այլ պատկառանք նոցա ոչ ներէր ընդ երկար մնալ առաջի իմ․ քանզի կային միշտ զամօթի հարեալ և պատկառ՝ իշխանապանծ գաւազանին իմոյ, զոր և ոչ իսկ յերազի իւրեանց տեսեալ էին․ և ոչ համարձակէին զաչս 'ի վեր համբառնալ․ Իսկ 'ի յառաջարկել իմում երթալ և ածել վաղ զհայրն իմ առ իս, հոգի առեալ փութացան յանձինս իւրեանց․ վասն որոյ և ես արժան վարկայ ընդ փոյթ հանել զնոսա 'ի ճանապարհ, զի գալստեամբ հօր իմոյ առաւելապէս սրտապնդեալ քաջալերեսցին, և 'ի բաց զկասկած երկիւղի յանձանց փարատեսցեն․ որ և ցանկալի իսկ է ինձ և յաւէտ ըղձալի, տեսանել զնոսա ընդարձակասիրտս և յընդոյր միտս․ Այլ սակայն կասկածիմ եթէ հաւատայցէ՞ արդեօք հայր իմ կենդանութեան որդւոյ իւրոյ և իշխանութեանն․ քանզի այս օրինակ դէպք դուն ուրեք պատահին յաշխարհիս․ վասն որոյ և անհաւատալի իսկ են մարդկան․ և ընդհակառակն համբաւ ձախո֊

ղակի դիպուածոց, արկածք մահագոյժք փութով հասանեն 'ի լսելիս մարդկան, որք երջանկութեան սիրելեաց դժուարահաւատք են, իսկ ձախորդ պատահարացն դիւրահաւան. Իբր առ այս չէ մեզ հարկ 'ի հեռուստ ածել օրինակս 'ի մէջ 'ի հաստատութիւն. բաւական ուրեմն է որ ինչ ընդ իս անցին անցք. Տես զիարդ վաղ եհաս 'ի լսելիս հօր իմոյ գաղտնաբեկ լինելն իմ. քանզի գոյժ մահուան է, մանաւանդ թէ և 'ի Ճշմարտութենէ անմասն. որոյ վասն և դիւրահաւատս ընծայեաց այնմ՝ ողբայ ցարդ զկորուստ իմ. և երկարաձիգ միջոց քսան և երից ամաց ժամանակի՝ ոչ զօրեցին սրբել յաչաց նորին զդառն արտասուսն, և մոռացօնս առնել վշտացն և սրտակեղ աղէտից. Այլ արդ՝ տասն ամք են յորմէհետէ կարգեցայ իշխան Եգիպտացւոց, և սանձ կառավարութե̄ն տուաւ 'ի ձեռս իմ. բազումք եկին 'ի Քանանացւոց անտի՝ բառնալ աստի ցորեան. տեսի զնոսա և ծանեայ, նոյնպէս և զծառայսն Աբիմելէքայ՝ որք ստէպ յաճախէին առ հայր իմ. ամենեքին եկին 'ի ծանօթութիւն իմ. սակայն ոչ ոք 'ի նոցանէ ծանեաւ զիս, և ոչ իսկ գուշակել ինչ կարացին. վասն որոյ՝ մինչեւ ցայժմ համբաւ բարեկենդանութեան իմոյ յապաղեաց հասանել յականջս հօր իմոյ.

Գոհանամ զՏեառնէ միշտ, որ իւրով անճառելի տնօրէնութեամբն պահեաց կենդանի զհայրն իմ և զեղբարս համօրէն. Ապա եթէ կամք իցեն նմա տալ ինձ վայելել 'ի բազմաբաղձ տեսութիւն հօր իմոյ և լնուլ զբազմամեայ կարօտութիւն իմ, ազդէ 'ի միտս նորա զաստուածային կամս իւր, ըստ կանխելոյ նորին ցանկ յաղօթս յամենայն դէպս իմանալ զյայտնութիւն կամաց Արարչին, իջանել յԵգիպտոս՝ կամ մնալ յերկրի անդ իւրում. Զի թէ փոխադրութիւն նորին

յայս երկիր՝ համաձայն իցէ աստուածային ազդեցութեանն, ոչ յապաղէ ընդ երկար զշնորհաբեր եկաւորութիւն իւր. Յուսամ զի 'ի սակաւ աւուրս ժամանեն անդր եղբարք իմ ընդ կարճոյ ճանապարհ, և մատուցեալ հօր իմում զինքնագիր խոնարհ գրութիւն իմ կնքեալ իմով մատամնեաւ, անդէն պատրաստի անկանել 'ի ջուր. զորոյ լուեալ զմերձիլն յիւրոցն քաջընթացից ըստ պատուիրելոյ իմոյ, փութացայց և ես ընդառաջել նմին սրընթաց կառօք և վաչիւք, և փառօք զնա ժողովեցից առ իս. Ո՛վ օր բարեբաստիկ. ո՛վ ժամ երջանիկ, մի՛ յապաղեր գալ՝ և լնուլ զիղձս սրտի իմոյ և զբազմաժամանակեայ բաղձանս իմ. տեսանել զհայր իմ գորովագութ՝ և մատուցանել համբոյր սիրալիր՝ աջոյ նորին.

ԳԻՇԵՐ ՎԱԹՍՈՒՆԵՐՈՐԴ

ԱՍԱՆԷԹ

Ընդ աւետաւոր լուր մօտալուտ գալստեան Հօր քո և համօրէն գերդաստանի նորին այսր, զուարճացեալ բերկրիմ, զի որ աղետից և վշտաց սիրեցելոյն բաժանորդ իցէ, նոյն և քաղցր և քաջաբաստիկ երջանկութեանն նորին գտանի հաղորդ և ուրախակից. Նա զի՝ և զոր մինչեւ ցայսօր կարդաւ զամենայն անցս դիպուածոցդ 'ի մատաղ տիոցդ սկսեալ մինչեւ ցայդ հասակ երիտասարդութեան՝ պատմեցեր ինձ, հեշտալեացն և ուրախալեաց գտայ և ես բերկրակից. և վշտալեացն՝ վշտակից և յաւէտ 'ի գութ նոցին ջեռեալ. Մեծ եղեւ ինձ և որ ինչ արտաքոյ կարգի բանիցդ՝ զառաքինութեան և զաստուածպաշտութեան ածեր 'ի մէջ զօրինակս, որով առաջնորդեցեր ինձ յընտիր և 'ի բարեկիր գնացս վարուց, և որ առաւելն է՝ յաստուածանգիտութենէ և 'ի հեթանոսական գարշելեացն 'ի բաց կորզեալ ածեր զիս 'ի գիտութիւն Ճշմարիտ Աստուծոյն. Եւ զորդեակն մեր 'ի նոյն շաւիղ առաքինական և աստուածպաշտութեան կրթեալ և վարժեալ, 'ի դեռաբուսիկ հասակէ նոցին ջանացար պատրաստել յաջորդս քեզ եթէ իշխանական պատուոյդ և եթէ բարեմասնական ձրիցդ՝ բարեյարդար վարուք իւրեանց. Արդ ոչ այլ ինչ եւս մնայ 'ի լրումն բաղձանացս, բայց եթէ գիտել և զպատճէն գրոյդ, զոր առաքեցեր առ հայր քո 'ի հրաւիրել զնա այսր.

ՅՈՎՍԷՓ

Ոճ և եղանակ գրութեանս ոչ ըստ ճարտարութեան արուեստին է յօրինեալ, ճախարակեալս և ընդելուզեալս իմն ունելով զդարձուածս բանիցն. այլ զի միայն զնա առ իս իջուցանել ջանացայց այնու յորդորական բանիւ. որ ունի պատճէն օրինակ զայս.

Յովսէփ երկրորդ Փարաւոնի, կոչեցեալ Փսոմփթոմփանէ. Իսրայէլի հօր իմոյ սիրեցելոյն յԱստուծոյ, բազմասցի ողջոյն շատ կարօտակէզ.

Անքնին խնամքն Աստուծոյ, զոր մտանուէր և երկնաթռիչ աղօթիցդ քոց օժանդակութեամբ ունէի յամենայնի ինձ զօրավիգն, պահեաց զիս ցարդ կենդանի. Թէպէտ և ըստ մարգարէական տեսութեան հաւուն իմոյ Իսահակայ ճշմարիտ ծառային Աստուծոյ, ՚ի բուռն բազմադիմի փորձանաց և վշտաց մուտ և ել արարի, և այն ՚ի միջոցի ամաց իբրեւ երեքտասանից, սակայն օգնութիւն արագահաս աղօթից ընտրելոյդ և նշխարք օրհնութեան քո՝ ընդ անբաւ խնամոցն Արարչին փոյթ հասին ինձ ՚ի թիկունս կարեաց՝ փրկել, զերծուցանել և կենդանի պահել զիս. Եւ ոչ այսչափ միայն, այլ և արդ տասն ամք են՝ յորմէհետէ կամ երկրորդ Փարաւոնի, և տէր ամենայն տան նորա և իշխան ՚ի վերայ համօրէն երկրին Եգիպտացւոց.

Իբրեւ հաստատեցայ յայս աստիճան փոխարքայութեան, և փոփոխութիւնք աշխարհիս ոչ ևս սպառնային ինձ անակնկալ գիպուածովք նեղութեանց հալածել զիս, խորհէի զցայգ և զցերեկ, և մարանէի ընդ միտս իմ գտանել ինչ հնարս հասուցանել առ

քեզ զլուր կենդանութեան իմոյ . բայց միշտ նորանոր զբաղմունք և բազմադէմ խորհուրդք իմ խոչընդոտ լինէին ինձ 'ի կատար ածել զոր խորհէի . Մինչ այս՝ մինչ այն խորհուրդք և դէպք բազմօրինակք մի զմիով բարդեալ կուտէին յիս , ահա երեւեցան տասնեքին եղբարք իմ զառաջին նուագ գնել զկերակուր . Իբրեւ տեսի զնոսա՝ ծանեայ անդէն , և ընդ բազում աւուրս խիթեալ գրգռեցի զմիտս նոցա՝ զարթուցանել զնոսա 'ի ծանօթութիւն իմ, բայց ոչ կարացին ճանաչել . Լուեալ առ 'ի նոցանէ զլուր կենդանութեան հօրդ իմոյ և Բենիամենի եղբօր իմոյ , անչափ բերկրութեամբ լցայ . ուստի և հնարս հնարեցի ածել առ իս զԲենիամին , որ և նա ոչ ծանեաւ զիս . ապա հարկ եղեւ անձամբ զանձն իմ յայտնել նոցին . քանզի և զիա՞րդ ոչ գորովիցի ոք և ճմլիցին աղիք իւր , մօտ առ կուրծս ունել զեղբարս և կալ Թաքուն 'ի նոցունց . Իբրեւ հնչեաց յականջս Փարաւոնի լուր գալստեան նոցա , ուրախացաւ յոյժ , մանաւանդ ընդ կենդանութիւն ծնողիդ իմոյ . և պարգեւ յաւեժական ընծայեաց քեզ և եղբարց իմոց՝ երկիր մի քաջաբեղուն առ 'ի բնակութիւն .

Արդ՝ ո՛ հայր իմ սիրելի , աղաչեմ լուր և անսա պաղատանաց որդւոյ քո , և էջ առ իս ընդ փոյթ և մի՛ հեղգար . Բնակեսցիս յերկրին Գեսեմ յԱրաբիա , և եղիցիս մօտ առ իս , դու և որդիք քո , և որդիք որդւոց քոց , և հօտք արօտականաց քոց , և որ ինչ միանգամ քո իցէ . և կերակրեցից զքեզ աստ , զի այլ եւս հինգ ամ տեւեսցէ սովս . Ներեսջիր հայր իմ բարեգութ , եթէ յանդգնագոյնս ինչ բարբառիմ , քանզի՝ ճշմարիտ կերակրիչ նոյն ինքն Աստուած է , որ իւրով քաղցրութեամբ կամօքն կերակրէ զամենեսին . Իսկ զի հրամանն արքունի

հարկ 'ի վերայ իմ կացուցանէ ըստ տէրութեան ոճոյ հրովարտակի գրել առ ձեզ. վասն որոյ զոյն ձեւ բանից ստիպեցայ 'ի վար արկանել. վասն որոյ կանխեմ ծանուցանել ձեզ և զայս՝ ոչ ագահել աչաց ձերոց 'ի կահ և 'ի կարասիս ձեր, այլ փութալ ճեպել 'ի չու, 'ի հասանել անդէն եղբարց իմոց. քանզի բարութիւնք ամենայն երկրիս Եգիպտացւոց ձեզ լիցի 'ի վայելս.

Հաճեսջիր հայր իմ ընդունել զպատրաստութիւն հանդերձանաց զորս առաքեցի 'ի պաշար ուղւոյ, և իբրեւ առհաւատչեայ բազմառատ և ճոխ պատրաստութեան պարենի, զոր մարդասէր գութ խնամոց Թագաւորին մերոյ խոստանայ ընծեռել յոտին ձերում. ողջ լերուք.